Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ—ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑ
1997

ԳՄԴ 63.3(2Հ) 7
Ա 719

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ավետիսյան Հ.

Ա 719 Հայկական հարցը 1918 թվականին
Եր., Բարձրագույն դպրոց, 1997, 436 էջ։

Աշխատության մեջ Հայաստանի, Մոսկվայի, Վիեննայի, Բուդապեշտի արխիվներում պահպանվող նորահայտ վավերագրերի և նյութերի հիման վրա բացահայտվում են Հայկական հարցի արծարծումը և «լուծումը» Բրեստ-Լիտովսկի, Տրապիզոնի, Բաթումի բանակցությունների ժամանակաշրջանում, Հայոց Ազգային խորհրդի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների գործունեությունը Բեռլինում, Կոստանդնուպոլսում, Վիեննայում, Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի կառավարությունների մոտեցումները Հայաստանին և Հայկական հարցին։ Ժամանակաշրջանի քաղաքական հարաբերությունների հենքի վրա վերլուծության են ենթարկվում թուրքական իշխանությունների և երիտթուրքերի պանթուրքական զավթողական նկրտումները, հայերի Մայիսյան հերոսամարտերը, Հայաստանի Հանրապետության ծննդի իրողությունները։

Նախատեսվում է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար։

Ա 0503020913 / 721(02) 97 — 97

ԳՄԴ 63.3(2Հ) 7

© Ավետիսյան Հ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՌԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19-րդ դարի կեսերին սուլթանական բռնապետության դեմ ազգային ազատագրական պայքարի դրոշ էին պարզել սերբերը, բուլղարները, հույները, Սիրիայի արաբները, ընդվզում էին Օսմանյան կայսրության լծի տակ հեծող ազատասեր ժողովուրդները։ Դաժանորեն ճնշելով այդ ազատագրական շարժումները, թուրքական իշխանություններն ավելի խորացրեցին ազգային և սոցիալական հալածանքները Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում, ըմբոստ Սասունում ու Զեյթունում։ Ժողովուրդը գալարվում էր թուրքական հարստահարիչների սանձարձակ կեղեքումների լծի տակ։ Դրան ի պատասխան, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաբնակ շրջաններում ծայր առան ինքնապաշտպանական ելույթներ, որոնց գագաթնակետը դարձավ Զեյթունի 1862 թ. ապստամբությունը։

Սուլթանական բռնապետության հակահայկական ճնշումներին, ազգային խտրականությանը, հայերի ֆիզիկական գոյությանը վերջ տալու փորձերին զինված պայքարով վճռականապես դիմակայեցին Մուշի, Վանի, Դերսիմի հայերը, նրանք արյան գնով պաշտպանեցին իրենց պատիվն ու իրավունքները, հերոսական պայքարով փրկեցին հազարավոր կյանքեր[1]։

Սակայն հայերի բնաջնջման մոլուցքը գնալով վերածվում էր պետական ծրագրի։ Այն կազմում էր թուրքահպատակ բոլոր ոչ թուրք ժողովուրդների ջարդերի շղթայի մի օղակը։ Թե ինչու, դրա պատասխանը տալիս է սուլթան Սելիմ 3-րդը, ըստ որի, կայսրության մեջ տիրապետողը ոչ թե թուրքերն են, այլ հպատակները։ Անգլիացի պատմաբան Վ. Հուտլիքի բնորոշմամբ, թուրքերը «նախանձում էին հայերին՝ եռանդուն, մշակութային և տնտեսական առումով իրենցից ուժեղ այդ ժողովրդին»[2]։ Պետք էր ազատվել հայերից, կատարելապես տիրել զենքի ուժով ու կոտորածներով, ավերումներով զավթած երկիրը։

Հետևողականորեն արմատավորվեց օսմանիզմի գաղափարախոսությունը՝ ազգակից ժողովուրդներին Ջիբրալթարից մինչև Ջինջոտան Օսմանյան կայսրության մեջ միավորելու ձգտումը։ Հնչեց սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդի «Հայաստանն առանց հայերի» դիվային կոչը։ Մարմարա և էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափերը և դրանից այն կողմ, մոտ 2,5 հազար կիլոմետրի վրա տարածվող

մուսուլմանական ծովի մեջ Հայաստանն այն կղզին էր, որն իր քրիստոնյա բնակչությամբ ճեղքում էր իսլամ ական զանգվածը, երկու մասի բաժանում այն։ Թուրքերը մեծամասնություն էին կազմում միայն կայսրության արևմտյան շրջանում, արևելյան շրջանում մեծամասնություն էին կազմում հայերը։ Օսմանյան կայսրության մեջ թուրքերը կազմում էին բնակչության միայն մեկ երրորդ մասը։ Քրիստոնյա այլ ժողովուրդների հետ Հարավային Կովկասում և Արևմտյան Հայաստանում գերակշռում էին հայերը, Հյուսիսային Կովկասում՝ ռուսները։ Այս հանգամանքը խանգարում էր օսմանիզմի գաղափարախոսության իրականացմանը, Կովկասում բնակվող մուսուլմանների հետ անմիջական շփմանը, ազդեցիկ ուժ ներկայացնող համատարած զանգվածի ստեղծմանը, ազգային համաթուրանական պետության ստեղծման գաղափարի իրագործմանը։ Մշակվում էր հայկական կենդանի «պատնեշի» վերացման պետական ծրագիր։

Հակահայկական պետական ծրագիրը խորացավ բեռլինյան 1878 թ. վեհաժողովից հետո, մեծ վեզիր Քյամիլ փաշայի հրապարակած հրահանգով։ «Երբ Եւրոպիոյ մասին մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նոյն հիմարութիւնն ընենք Ասիական Տաճկաստանի մեջ։ Խելոքութիւնը՝ չնչել, վերացնելն է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նոյն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնածութեան առիթ և գործիք լինել։ Հիմա, այսօր, գոնե Անգլիոյ շահերը կպահանջեն, որ Փոքր Ասիա (մենք և Անգլիա Հայաստան ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ հնչող կզակները պետք է ջախջախենք) մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութեան ամեն առիթներէն, ուստի սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կպահանջե, որ որևիցէ կասկածելի տարր անհետ ընելու ենք և այդ ի գլուխ հանելու համար բան չի պակասիր մեզ. ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատաւոր, հարկահաւաք, ոստիկան, վերջապես ամեն ինչ։ Կրօնական պատերազմ կը հայտարարենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինուորութիւն և ոչ պաշտպան։ Երբ, ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինուորութիւն էլ և աշխարհիս ամենէ մեծ տերութեանց մեկը և ամենէն հարուստը մեզ զինակից է և Ասիական աշխարհին երաշխավոր և եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնեայ Եւրոպա կրոնակից մը փնտռե և չի գտնի Տաճկական Ասիոյ մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կ՚զբաղինք ներքին գործերով»[3]։

Օսմանության գաղափարախոսությանը զուգընթաց, Ղրիմում Իսմայիլ Գասպրինսկին առաջ քաշեց թուրք-թաթարական 14 միլիոնանոց զանգվածի միասնական օրգանիզմի գաղափարը՝ Կովկասյան և Ուրալյան լեռնաշղթաներով, Մերձվոլգյան և Ղազախստանյան տափաստաններով, միջինասիական անապատներով ու օազիսներով, Սև և Կասպից ծովերի վրայով տարածվող մուսուլմանների կոչը ներկայացնելով որպես կեղեքվող, իրար հասկացող ժողովուրդներին միավորելու կանչ։ Պնդելով, թե «Ղրիմի և Կովկասի մուսուլմանությունը գտնվում է օսմանյան և արաբական

կրոնի և հայացքների ազդեցության տակ», նա «հաստատում էր», որ հայերը, բուլղարները, սերբերը, հույները «թուրքական քրիստոնյաներ են»[4]։

Առաջնորդվելով Օսմանյան կայսրության տարածքի «թուրքացման» մղումով, կառավարությունը հետևողականորեն իրականացնում էր իր ծրագիրը՝ ազատասեր ու անկախության ձգտող, թուրքանալ չցանկացող ժողովուրդների արյունով ներկել յուրաքանչյուր թիզ հողը։ Եվ ամեն անգամ արևմտահայությունը զենքը ձեռքին ոտքի էր ելնում «սրբազան պատերազմ» իրականացնող բռնապետների դեմ։ Դա ժողովրդի զինված բողոքն էր բռնատիրության և բարբարոսության դեմ։ Դա ժողովրդի արդար ցասումն էր, ինքնաբուխ շարժումը, կործանումից փրկության գրավականը։

Սակայն, զարգացում ապրող պանթուրքիզմն ու պանթուրանիզմը ձգտում էին մաքրել իրենց ճանապարհը։ Մինչև վերջիններիս երևան գալը, հայերի «մաքրագործման» ուղղությամբ շատ գործ արդեն արել էին նրանց նախորդները։ Սելջուկ թուրքերի նվաճումներից հետո նպատակամղված բռնությունների հետևանքով 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրությունում հայերի թիվը նվազել էր և հասել մոտ 3 միլիոնի։ Նրանցից 2 միլիոնը բնակվում էր Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Կեսարիայի շրջանում, 600 հազարը Կիլիկիայում, Փոքր Ասիայում։ Պապենական հողերում հայերի թիվը գնալով ավելի էր նվազում[5]։

Կոստանդնուպոլսի, Անատոլիայի, Կովկասի, Անդրկասպյան երկրների թուրանականների միջև կապ հաստատելու՝ Թրակիայից մինչև Կենտրոնական Ասիա՝ Կոստանդնուպոլիս մայրաքաղաքով պետության հիմնադրման նպատակն էր հետապնդում 1914 թ. ստեղծված «Ենի Թուրան» («Նոր Թուրան») ընկերությունը՝ էնվեր փաշայի գլխավորությամբ։ Երիտասարդ թուրքերը հասկացան, գրել է Գերմանիայում Ամերիկայի Միացյալ Նահանգների նախկին դեսպան Ջեյմս Վ. Ջերարդը 1919 թ., որ թուրքական կայսրության մոտավորապես հինգ միլիոն թուրքերը չեն կարող իշխել իսլամական աշխարհի սրտի և մտքի վրա։ «Այսպիսով, մտածեցին նրանք, առաջին բանը, որ պետք է արվի՝ իրենց արյունակիցների միջև կապ ստեղծելն է, թաթարների, թուրքմենների, բաշկիրների, ուզբեկների, սարտերի և կիրղիզների, որոնք ապրում են Կովկասում, Կասպիականից այն կողմ, քանի որ բոլոր այս ցեղերն ու ժողովուրդները, ինչպես իրենք, ունեն թուրանական ծագում։ Նրանց կարծիքով, եթե դա իրենց հաջողվի, ապա կստեղծվի 24 միլիոնանոց միատարր թուրանական միավորում, որից հետո միայն հնարավոր կլինի իրականացնել Աբդուլ Համիդի պանիսլամական քաղաքականությունը։ Բայց Անատոլիայի թուրքերը բաժանված էին իրենց կովկասյան և անդրկովկասյան ազգակիցներից՝ հայերով։ Դրա համար էլ անհրաժեշտ էր ազատվել հայերից, որպես առաջին քայլ պանթուրանիզմի քաղաքականությունն իրագործելու ճանապարհին»։ Նա շեշտում էր և երիտթուրքերի պատերազմի մեջ մտնելու նպատակը՝ կապ հաստատել Կովկասի ու Անդրկասպյան երկրների թաթարների և մյուս թուրանցիների միջև, ստեղծել

Թուրանական կայսրություն, որը Ոսկեղջյուրից պետք է տարածվեր մինչև Կենտրոնական Ասիա[6]։

1908 թվականից իշխանության գլուխ անցած երիտասարդ թուրքերը չէին էլ մտածում թաքցնել իրենց իսկական մտադրությունները, որոնց էությունը հանգում էր Հայաստանի հայաթափմանը, «Հայաստանն առանց հայերի» աբդուլհամիդյան կոչի իրականացմանը[7]։ Դա հաստատվեց և Սալոնիկի համագումարում (1911 թ.)։ Նախապատրաստվում էր ժողովուրդների պատմության մեջ առաջին ցեղասպանությունը։

Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու կապակցությամբ երիտթուրքերի կուսակցության գլխավոր վարչությունը հայտարարեց. «Թուրքիան իր ազգային ծրագիրը մշտնջենապես ապահովելու համար պետք է սահմանները տարածի մինչև Կովկասյան լեռնաշղթան և տիրի Դերբենդի անցքին։ Առանց այդ սահմանների, Թուրքիան միշտ ենթակա կլինի մոսկովյան ոտնձգություններին»։ Երիտասարդ թուրքերի կուսակցության կենտրոնական վարչության 1914 թ. նոյեմբերի 12-ին հրապարակած շրջաբերականում ասված էր. «Մեր ժողովրդի և մեր երկրի ազգային իդեալը մեզանից պահանջում է մոսկովյան թշնամու ոչնչացումը, այն բանի համար, որպեսզի դրանով հասնենք մեր բնական սահմաններին, որոնք կընդգրկեն և կմիացնեն մեր բոլոր ազգակիցներին։ Մեր կրոնական զգացմունքները թելադրում են մեզ ազատել իսլամական աշխարհը անհավատների տիրապետությունից»[8]։

«Մենք սկզբից կփրկենք և կընդունենք մեր քաղաքական սահմանների մեջ թուրքերին՝ կրոնով և լեզվով եղբայրներին, որոնք գտնվում են ռուսների ճնշման տակ։ Մենք ռուսներից սկզբում կգրավենք Կովկասը, ապա կշարժվենք դեպի Թուրքեստան, որը հանդիսանում է մեր հայրենիքը և որտեղ ապրում են 50 միլիոնից ավել մուսուլման» - գրում էր համաթրքության գաղափարախոս Օմար Սեյֆէդդինը 1914 թ. նոյեմբերի 11-ին։ Կովկասը գրավելով, երազում էր նա, «մենք 14 միլիոնանոց Օսմանյան պետության ազգային հզորությունը կկրկնապատկենք, իսկ քաղաքական սահմանները հասցնելով մինչև Պամիր և Սիբիր, կստեղծենք Թուրանական մեծ պետություն»[9]։

«Մեծ Թուրանի» հալյունցինացիան հանգիստ չէր տալիս համաթրքության ջատագովներին. Թեքին Ալփը, որպես թուրքական իրրեդենտիզմի (չվերամիավորված տարածքների գաղափարի) օբյեկտ, թվարկում էր Սիբիրը, Կովկասը, Ղրիմը, Ավղանստանը, Վոլգայի և Կամայի ափերը։ «Թուրքերի երկիրը Թուրքիան չի, ոչ էլ Թուրքեստանը։ Այն մեծ ու հավիտենական երկիր է՝ Թուրանը» - հայտարարում էր թուրքական ազգային շարժման ջատագով Զիյա Գյոք Ալփը[10]։ Իսկ դեպի Թուրան տանող ճանապարհը Կովկասն է։ «Գրավենք շատ այդ Կովկասը»[11], կոչ էր անում մեկ այլ հայտնի համաթուրք, երիտասարդ թուրքերի կուսակցության կենտկոմի անդամ Բեհաէդդին Շաքիրը։ «Ադրբեջանը պետք է դառնա ամրոց՝ ամբողջ մեծ հայրենիքի՝ մեծ և հզոր Թուրանի մասը»,— ընդգծում էին համաթրքության մունետիկները։ Առաջ քաշելով իսլամական աշխարհի միասնական ճակատի գաղափարը, Թեքին Ալփը (Լևի Գյոհան) գրում էր. «Միավորված թուրքերը պետք է կազմավորեն ձգողության կենտրոն ամբողջ իսլամական աշխարհի համար. թուրքերը հասկանում են, որ կապրեն, եթե դառնան թուրք ըստ էության»[12]։

Համաթրքության քաղաքական և համաիսլամական կրոնական գաղափարախոսությունների համակցումը վերածվում էր թուրքական իմպերիալիզմի գաղափարախոսության բնորոշ գործոնի։ «Կովկասյան իսլամական մարզերը ազատագրելու, Դերբենդը նվաճելու համար» Կովկասյան ճակատ շտապեց Էնվեր փաշան։ 1914 թ. հոկտեմբերի 31-ին Էնվերը հրամայեց երրորդ բանակի հրամանատար Իզզեթ փաշային իր հեծյալ դիվիզիաներով անհապաղ արշավել Ղարաբաղի, Բաքվի, Դաղըստանի վրա, «քարը քարին չթողնել, ոտքի հանել ամբողջ բնակչությանը»։ Էնվերը առաջնահերթ խնդիր էր համարում և Կովկասի հարստության թալանը։ «Դուք չունեք մթերք։ Կովկասի քաղաքները ձեր ոտքի տակ են։ Դուք միայն արագ իրականացրեք նրա գրավումը»[13], հորդորում էր նա զորքին։

Թուրքերին նեցուկ հանդիսացան Մերձավոր Արևելքում համագերմանիզմի շահերը։ Վերջինիս ծրագրով Թուրքիան դիտվում էր որպես փորձադաշտ, հումքի աղբյուր և շուկամարան, Արևելքի հետ հաղորդակցության ազդակ։ Հիմնական զարկերակը պետք է լիներ Հայաստանով անցնող Բաղդադյան երկաթուղին։ Համագերմանիզմի տեսաբանները, ինչպես և համաթրքության մունետիկները, գտնում էին, որ Թուրքիան ամեն կերպ պետք է մոտենա Կովկասում ապրող իրենց ազգակից մուսուլմաններին, կազմի համատարած ազգային զանգված. այդ պլանի իրագործմանը խոչընդոտող հայերին պետք է դուրս մղել իրենց բնակավայրերից, տեղափոխել Միջագետք՝ Բաղդադյան երկաթուղու կառուցում որպես էժան բանվորական ուժ օգտագործելու համար։ Նախատեսվում էր Հայաստան՝ հայերի բնակավայրեր տեղափոխել մահմեդական-ներ արաբական երկրներից, Թրակիայից և Ռուսաստանից։ Այսպես ծնվեց Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում) «կոմպակտ մուսուլմանական մեծամասնության» գաղափարը, այսինքն՝ Հայաստանի հայաթափման, հայերի տեղահանման և բնաջնջման գաղափարը։

Պատերազմի նախօրյակին գրած «Պատերազմը և գերմանական քաղաքականությունը» գրքույկում առաջ քաշելով «Ի՞նչ կլինի, եթե Անտանտի պետությունները միմյանց մեջ բաժանեն մի կողմից Բոսֆորի և Պարսից ծոցի, մյուս կողմից՝ Սուեզի ջրանցքից մինչև Արարատի միջև ընկած տարածքը» հարցը, Պաուլ Ռոհրբախը պատասխանում է. «Դա կլինի Գերմանիայի վախճանը, որպես համաշխարհային տերություն, առաջնակարգ տերությունների շարքից Գերմանիայի դուրս մղում, քանզի Գերմանիայի ապագան Անատոլիայում է, Փոքր Ասիայում, Սիրիայում, Միջագետքում, Պաղեստինում»։ Այդ պատճառով, շարունակում է պանգերմանիզմի տեսաբանը, պետք էր տիրել Հայաստանին, որն իր աշխարհագրական դիրքով և կառուցվածքով Անատոլիայի նկատմամբ

գերիշխանություն տվող դիրքի բանալին է, չպետք է թույլ տրվեր, որ նա անցնի Ռուսաստանի ձեռքը։ Տիրելով Հայաստանին, Ռուսաստանը միաժամանակ գերիշխող կլիներ ամբողջ Փոքր Ասիայի նկատմամբ՝ Պարսից ծոցից մինչև Միջերկրական ծով, կլիներ հզոր ուժ ամբողջ Փոքր Ասիայի նկատմամբ՝ իր ձեռքում միավորելով Անդրկովկասը, Հյուսիսային Պարսկաստանը և Հայաստանը։ «Եվ քանի որ քաղաքական անհրաժեշտությունից ելնելով մենք պետք է պահպանենք Թուրքիան, մինչև վերջին ծայրահեղություն, ապա մենք չպետք է թույլ տանք, որպեսզի Հայաստանը անցնի Ռուսաստանին»[14]։

Համագերմանական և համթուրքական ծրագրի մասն էր կազմում և Գերմանիայի արտաքին գործերի նախարար Յհմերմանի 1914 թ. սկզբներին արած հայտարարությունը. «Ըստ էության, հայերը Գերմանիայի հարկավոր չեն։ Հայերով բնակեցված Հայաստանը վնասակար է նրա շահերին, քանի որ հայ ժողովուրդը հանդիսանում է Թուրքիայի համար թուլության աղբյուր։ Թուրքիայի ամբողջականությանը սպառնացող վտանգից խուսափելու համար, Գերմանիան, ըստ էության, պետք է հայերին լրիվ թողնի Թուրքիայի տրամադրության տակ»[15]։

«Գերմանիան երբեք թույլ չի տա Ռուսաստանին ճնշում գործադրել Թուրքիայի վրա։ Այդ մասին միամտություն կլինի նույնիսկ մտածել։ Ոչ այժմ, ոչ ապագայում, մենք ոչ մեկին թույլ չենք տա իր ձեռքը դնել Անատոլիայի վրա»[16]։ Այս վճռական հայտարարության հեղինակը Թուրքիայում գերմանական դեսպան Վանհենհայմն է, որի մասնակցությամբ 1914 թ. օգոստոսի 2-ին և 6-ին Ստամբուլում կնքած պայմանագրով և համաձայնագրով Գերմանիան պարտավորվում էր Արևելքում հասնել Օսմանյան կայսրության սահմանների այնպիսի ուղղման, որը նրան հնարավորություն կտար անմիջական կապ հաստատել մուսուլմանական տարրերի հետ Ռուսաստանում։ Գերմանական կողմը պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում դաշնակցի շահերը պաշտպանել զենքով[17]։

Երիտասարդ թուրքերը խնդիր դրեցին առաջադրված հարցերը լուծել, թուրքանալ չցանկացող ազգերի ֆիզիկական ոչնչացումով։ Եվ բնաջնջվեց ու տեղահանվեց հայ ժողովրդի երկու երրորդը[18]։ «Հայկական հարցը այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր չկան»,— չարախնդաց ջարդարար Թալեաթը։ Հայ ժողովրդին հասած աղետը ավելի մեծ էր, քան համաշխարհային պատերազմի չորս տարիների ընթացքում պատերազմող շատ երկրների կորուստը։ Պատերազմի ընթացքում Ավստրո-Հունգարիան կորցրեց 1 միլիոն 542 հազար, Ֆրանսիան՝ 1 միլիոն 400 հազար, Իտալիան՝ 750 հազար, Անգլիան՝ 744 հազար, Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ 68 հազար մարդ[19]։ Սեփական տանը և ոչ թե ռազմի դաշտում բնաջնջվեց այնքան հայ, որքան կազմում էր պատերազմի տարբեր թատերաբեմերում Անգլիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի մարդկային կորուստը։

Հայերի բնաջնջումը, աղետի չափը անշուշտ կլիներ ավելի մեծ, եթե չլինեին ազգային ազատագրական և կամավորական շարժումները, չլիներ ժողովրդի զինված դիմադրությունը, եթե թուրքերը դրանց պատճառով

չկրեին հսկայական կորուստներ, եթե չլիներ զեյթունցիների, սասունցիների, մուսալեռցիների, ուրֆացիների, վանեցիների, կարահիսարցիների պայքարի բացառիկ օրինակը։ Միայն ազգային ազատագրական շարժումների շնորհիվ էր, որ փրկվեց արևմտահայության մոտ մեկ երրորդը։ Հայերի ցեղասպանությունը Թուրքիայում օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության ծրագրի իրականացում էր։ Նրանք «ոչնչացրին կամ ցրեցին թուրքահայերի մեծ մասին»[20]— գրել է Ջեյմս Ջերարդը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին։

Չնայած Կովկասյան ճակատում կրած պարտություններին և ռուսական բանակի առաջխաղացմանը Արևմտյան Հայաստանում, Կովկասը թուրքական «կալվածքի» վերածելու գաղափարը գերմանա-թուրքական գաղափարական խոհանոցում ստանում էր նոր զարգացում։ 1915 թ. վերջերին Բարձր դռան և մի քանի կովկասցի մուսուլմանների կողմից Ստամբուլում առաջ քաշվեց Թուրքիայի հովանավորությամբ իբր «անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասի» ստեղծման գաղափարը[21]։

Կովկասյան ֆեդերացիայի գաղափարը կոնկրետ ձևակերպում ստացավ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ Յյուրիխում, 1916 թվականին գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով հրատարակված, ազգությամբ վրացու վերագրվող «Վրաստանը և պատերազմը» գրքում։

Այստեղ անցկացվում էր այն միտքը, որ իրենց ծրագիրն իրականացնելու համար վրացիներն ունեն մեկ ելք՝ ձեռք մեկնել Թուրքիային, միանալ նրա կովկասյան թուրք ցեղակիցների հետ, տկարացնել և թուլացնել հայ տարրը, աջակցել Կովկասում օսմանյան տիրապետության հաստատմանը, հասնել Վրաստանի ինքնավարության ճանաչմանը։

«Կովկասյան բոլոր ժողովուրդները թուրքերի հետ պետք է ուսանեին վտարեն իրենց երկրից» թեզը հաստատելուց հետո, ծրագրի հեղինակները նախատեսվող ֆեդերացիայի մեջ մտնող ժողովուրդներին բաժանում էին չորս խմբի՝ վրացիներ, լեզգիներ, թաթարներ, հայեր։ Թուրքիային իրավունք էր վերապահվում բռնազավթում անել Հայաստանի հաշվին։ Նրան պետք է անցներ Երևանի նահանգի և Կարսի մարզի մի մասը՝ «որպես թուրքերով բնակեցված հողեր»։ Վրաստանը վերակազմավորվելու էր որպես պետություն, որի սահմաններում ներառվում էր նաև Հյուսիսային Հայաստանը։ Թաթարներին և հայերին իրավունք էր տրվելու ստեղծել թաթարա-հայկական խառը գավառներ՝ հարևաններից կամ եվրոպացիներից կազմված միջնորդ խորհրդի հսկողությամբ, լեռնական ժողովուրդները՝ չերքեզները, չեչենները՝ Դաղստանով հանդերձ, պետք է միավորվեին մեկ ֆեդերացիայում։ Ամբողջ Կովկասը պետք է դրվեր Թուրքիայի տիրապետության տակ[22]։

Այսպիսով, Անդրկովկասում ևս դրվում էր Հայաստանի վերացման հարցը։ Հայերը լուծվելու էին մյուս պետական միավորների մեջ։

Այդ նույն ժամանակ Հայկական տարածքների հարցը քննարկվում էր Անտանտի երկրների դիվանագիտական շրջանակներում։

1916 թ. ապրիլի 13(26)-ին Պետրոգրադում և օգոստոսի 19 (սեպտեմբերի 1)-ին Լոնդոնում՝ Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի ներկայացուցիչների ստորագրած համաձայնագրերի հիման վրա (միացավ նաև Իտալիան) Ռուսաստանը գրավելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Բաղեշի շրջանները դեպի Սև ծով ելքով, Վանից և Բիթլիսից հարավ ընկած շրջանը։ Ռուսական բանակի գերագույն գլխավոր շտաբի 1916 թ. հունիսի 5-ի հրամանագրով հաստատվեց Տաճկահայաստանի՝ պատերազմի օրենքներով գրավված մարզերի վարչության ժամանակավոր կանոնադրությունը։ Համաձայն հրամանագրի, պատերազմի օրենքներով ռուսական զորքերի գրաված մարզերում հաստատվում էր ժամանակավոր զինվորական ընդհանուր նահանգապետություն՝ զինվորական ընդհանուր նահանգապետի գլխավորությամբ։

Նահանգապետության նպատակն էր գրավված մարզերի սահմաններում գտնվող զորական թիկունքային մարմինները միացնել, այնտեղ մտցնելով վարչական կառավարման մարմիններ, վարչության ենթակայության մեջ մտնում էր գրավված բոլոր մարզերի տարածքը, ներառյալ Տաճկաստանի հետ ունեցած պետական սահմանը։ Ընդհանուր նահանգապետության տարածքը ստորաբաժանվում էր մարզերի ու շրջանների, որոնց կառավարումը հանձնվում էր մարզերի զինվորական նահանգապետերին ու շրջանների պետերին։ Նպատակն էր՝ պաշտպանել անդորրն ու կարգը, բնակչության կյանքը, պատիվն ու գույքը, կրոնական, քաղաքացիական ազատությունը՝ Ռուսաստանի իշխանությունը հնազանդվելու պայմանով[23]։

Անդրադառնալով դաշնակիցների համաձայնությանը՝ Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան 1916 թ. դեկտեմբերի 14-ին Փարիզից գրում էր Թիֆլիս, Ռուսաստանի պետական խորհրդի անդամ Միքայել Պապաջանյանին. «Ասիական Թուրքիայի նկատմամբ դաշնակիցների միջև կա մի համաձայնություն, դուք, անշուշտ, գիտեք այդ մասին, որը կարգավորում է բաժանվող հողամասերի խնդիրը։ Թեև մեզ հայտնի չեն այս համաձայնության բոլոր պայմանները, բայց մենք գիտենք, որ վեց վիլայեթները և Կիլիկիան չեն կազմելու մի ամբողջական հողամաս և նրանց մի մասը տրվելու է Ռուսաստանին, իսկ մյուսը, որ սահմանափակվել է Կիլիկիայով, տրվելու է Ֆրանսիային։ Հետևաբար, միայն այս մասի նկատմամբ են ինձ տրված հավաստիացումներ և մենք կարող ենք հուսալ, որ Ֆրանսիայի հովանավորության տակ դրված տեղական ինքնավարության շնորհումով այնտեղ կիրագործվեն մեր բաղձանքները։ Պարզվում է, որ Ֆրանսիան, մնալով հավատարիմ ազատության սկզբունքներին և մեծահոգի ավանդույթներին, ճնշված հայերին ազատելուց հետո հնարավորություն կտա նրանց վերականգնելու իրենց ազգային դեմքը և գրավելու այն դիրքը, որ պատկանում է նրանց քաղաքակիրթ աշխարհում, շնորհիվ իրենց ընդունակությունների»։

Չթաքցնելով իր ֆրանսամետությունը՝ Պողոս Նուբարը հիշեցնում էր. «Հիրավի, մենք չպետք է մոռանանք, որ Թուրքիայի ամբողջ հայ բնակչությունը, իրոք իսկական պատանդ, դեռևս գտնվում է Թուրքիայի ձեռքին և որ միշտ ենթակա է ամենակատաղի դեմադրության՝ նրա կողմից»[24]։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Հայկական հարցը նորից հրապարակ եկավ Ռուսաստանում 1917 թ. Փետրվարյան հեղափոխությամբ հռչակված ազգերի ինքնորոշման հիման վրա հաշտության հասնելու ժամանակավոր կառավարության հայտարարությամբ[25]։ Հեղափոխության առաջին նվաճումներից էր ժամանակավոր կառավարության 1917 թ. մարտի 4(17)-ի «Խղճի ազատության և ազգային սահմանափակումների վերացման մասին» որոշումը[26]։ 1917 թ. մարտի 27-ի հռչակագրով հավաստելով ցարական կառավարության կնքած միջազգային պայմանագրերի պահպանումը, ժամանակավոր կառավարությունը հերթական խնդիրներից մեկը համարեց Ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը։ Իսկ Ասիական Թուրքիայի ոչ թուրք ազգաբնակչության զգալի մասը հայեր էին։

Նաև այդ հանգամանքը նկատի ուներ Արշակ Ջոպանյանը, որը Վալերի Բրյուսովին Փարիզից մարտի 29-ին գրած նամակում ցարիզմի տապալումը և «ազատության մուտքը Ռուսաստան» գնահատում էր որպես «Ֆրանսիական հեղափոխությունից հետո պատմության ամենամեծ և երջանիկ իրողություն»[27]։

Հայ ազգային շարժումը իր շրջապտույտի մեջ առավ ոչ միայն ռուսահայերին, այլև թուրքական արյունալի սպանդից մազապուրծ արևմտահայերին, գոյություն ունեցող և կազմակերպվող քաղաքական կուսակցություններին, երիտասարդությանը, մտավորականությանը, հայ Առաքելական եկեղեցուն։

Գևորգ V Ամենայն Հայոց կաթողիկոսը 1917 թ. մարտի 23-ին ժամանակավոր կառավարությանը հղած հեռագրում հույս հայտնելով, որ «վերանորոգված Ռուսաստանը, քաջարի դաշնակիցների համաձայնությամբ, կստեղծի նախկին տաճկական վիլայեթների վրա ազատ Հայաստան», խնդրում էր նոր իշխանություններից՝ 1. թույլատրել Թուրքահայաստանից փախածներին անարգել և առանց բռնությունների վերադառնալ իրենց հարազատ վայրերը, 2. թույլատրել հայերին մշակել գրավված հողը, 3. ցարական իշխանության ջատագով հին իշխանավորներին փոխարինել նոր, դեմոկրատ պաշտոնյաներով, 4. ազատել Սիբիրում գտնվող թուրքական բանակի հայ ռազմագերիներին, 5. փախստականներին հատկացնել դրամական միջոցներ իրենց ավերված գույքերը վերականգնելու համար»[28]։

Արևմտահայության ցավը ամբողջ հայության ցավն էր, նրա մտահոգություններ։ Հայկական հարցը այդ օրերին, բացի միջազգային հարցից, դարձել էր նաև հայոց ներքին հարց։ Ժողովներում, հանրահավաքներում, ուսուցչական, կանանց, ուսանողական, եկեղեցական, գյուղացիական համագումարներում օրակարգի գլխավոր հարցերը Անտանտի երկրների համար շարունակվող պատերազմում և Կովկասյան ճակատում ռուսական զենքի ուժի առկայության պայմաններում Արևմտյան Հայաստանի ինքնավարության, հանրապետական, դեմոկրատական կարգերի հաստատման, հայկական ոստիկանության ստեղծման, հին պաշտոնյաներին պաշտոնանկ անելու, մուսուլմանական հրոսակների զինաթափման, գաղթականության տունդարձի, արևմտահայության ընդհանուր շահերի զուգակցման, միասնական ազգային գաղափարախոսության ձևավորման հիմնահարցերն էին։

Արևմտյան Հայաստանի խնդրին էր նվիրված Հայոց Ազգային բյուրոյի մարտի 26-ի նիստը։ Քննարկվեցին Արևմտյան Հայաստանի համար կենտրոնական մարմնի ստեղծման, կազմակերպվելիք քաղաքական իշխանության ենթակայության և ղեկավարման, հարևանների հետ հարաբերությունների հարցերը։ Առաջ էր քաշվում պանիսլամության, կովկասյան թաթարների և թուրքերի կապի, տարածքային առումով թուրքիային հայկական հողերի բռնակցման վտանգի հարցը։ Ազգային բյուրոն ընդունեց Ալ. Խատիսյանի առաջարկած բանաձևը. 1. Արևմտյան Հայաստանի նոր վարչակարգի ստեղծման գործը նպատակահարմար է կապել Պետրոգրադի և ոչ թե Օզակոմի հետ, 2. ընդհանուր նահանգապետ Ռոմանովսկի-Ռոմանկոյի փոխարեն նշանակել հայերի վերաբերյալ հրահանգներ ստացող մի հատուկ մարդ, 3. աշխատել, որպեսզի գործի մեջ չմտնեն վրացիներն ու թուրքերը, և 4. կերենսկու մոտ գործուղել Հ. Ջավրիյանին»[29]։

Հայոց Կենտրոնական Ազգային բյուրոն ընդունեց մեկ այլ որոշում. հատուկ առաքելությամբ Ամերիկա էր ուղարկվում թուրքահայ հայտնի գործիչ և օսմանյան պառլամենտի նախկին անդամ Գարեգին Բաստրմաջյանը (Արմեն Գարո)՝ «ամերիկյան թե կառավարական, և թե հասարակական շրջաններում Հայկական դատը պրոպագանդելու և կազմակերպելու համար»։

Տեղեկացնելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V Սուրենյանին Բաստրմաջյանի առաքելության մասին, Ազգային բյուրոյի նախագահի տեղակալ Ալ. Խատիսյանը և քարտուղար Հակոբ Քոչարյանը 1917 թ. ապրիլի 8-ի նամակով խոնարհաբար խնդրում էին Վեհափառին Բաստրմաջյանի անունով տալ մի հատուկ գրություն կամ կոնդակ, «որի շնորհիվ նա հնարավորություն ունենա հաջողությամբ կատարել իր նպատակի համար անհրաժեշտ դիմումները»[30]։

1917 թ. ապրիլի 9-ին, ի պաշտպանություն Ազգային բյուրոյի խնդրանքի, Վեհափառին դիմեց նաև նորաստեղծ ժողովրդական կուսակցության նախագահ Սամսոն Հարությունյանը։ «Ձեզ հայտնի է, որ

թե Ռուսաստանի մեր բարեկամ քաղաքական գործիչները, և թե Անգլիայի ու Ֆրանսիայի, միշտ մեզ նախատել են նրանով, որ մենք՝ հայերս, քիչ ենք պարապում մեր ցավոտ ազգային խնդիրներով և քիչ ենք զբաղեցնում այն շրջանները, որոնց կարծիքը վճռական նշանակություն ունի՝ լինի հարցը գաղթականների մասին, թե Հայաստանի ապագա վիճակի մասին»։ Հայտնելով, որ Բաստրմաջյանը Պետրոգրադում է և այնտեղից պիտի գնա Ամերիկա՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության «գիտությամբ և աջակցությամբ», Ս. Հարությունյանը գրում էր. «պ. Բաստրմաջյանը շատ ազնիվ, խելացի, քաղաքագետ և հմուտ անձնավորություն է, վայելում է մեծ համակրանք»[31]։

Վեհափառի պատասխանը չհապաղեց։ 1917 թ. ապրիլի 27-ի գրությամբ Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի դիվանի պետը վկայում էր, որ «գրությունը ներկայացնող անձն է պ. Գարեգին Բաստրմաջեան, որին Ն. սրբութեան կողմից յանձնարարուած է անցնել Ամերիկա՝ այնտեղ Ամերիկայի քաղաքական այլ և այլ շրջանների և պետական բարձր դիրք ունեցող անձերին ի մօտոյ ծանօթացնելու Հայկական դատի էութեան հետ, ինչպես էլ նոցա համակրութիւնը, աջակցութիւնը վաստակելու, հասարակական մտքերը յօգուտ մեր դատի նախապատրաստելու և այս բոլորի մասին զեկուցանելու Ն. Ս. Օծութեան և ում կարևոր կհամարէ նա, որոշ հրահանգներ ունենալու համար Նորին վեհափառութիւնից»։ Վեհափառի հանձնարարականները տրվեցին նույն ապրիլի 27-ին Գ. Բաստրմաջյանին և Պողոս Նուբար փաշային՝ առանձին նամակներով[32]։

Երկու նամակներում էլ պատվիրակության Ամերիկա ուղարկելը պատճառաբանվում էր եվրոպական մեծ պատերազմում Ամերիկայի հանդես գալով, ինչպես նաև «Ռուսաստանի ներքին, խաղաղ մեծ հեղափոխությամբ», որը «նոր, և ինչպես ենթադրելի է, նպաստավոր հանգամանքներ է ստեղծում Հայկական դատի և հարցի լուծման համար»։ Մատնանշվում էր նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վիլսոնի հայտարարությունը՝ ճնշված և փոքր ազգերի քաղաքական իրավունքների սատարման մասին։ Հայտնվում էր Պողոս Նուբար փաշային, որ Բաստրմաջյանին հրահանգված է սերտ կապ պահել Փարիզի Ազգային պատվիրակության հետ, որ նա գտնվելով Պետրոգրադում ու «մտիկից ծանոթանալով կենտրոնական կառավարության հայացքին և տրամադրություններին, համագործակցելով Ջավրիյանի հետ, կուղևորվի Ամերիկա՝ Սիբիրի ճանապարհով»[33]։

Հավաստելով Վեհափառին հանձնարարագիրը ստանալու մասին և տեղեկացնելով, որ մայիսի 30-ին մեկնում է Ամերիկա՝ Սիբիրի վրայով, Բաստրմաջյանը զեկուցում էր պետրոգրադյան իր հանդիպումների, արտաքին գործերի նախարար Տերեշչենկոյից և մյուս բարձրաստիճան անձերից ստացած տպավորությունների և ռուսական կառավարության դիրքորոշման մասին։ Նրանք «շատ նպատակահարմար գտան իմ ճամփորդությունը, համաձայնելով մեզ հետ, որ Ամերիկայի կարծիքը և բոնելիք

դիրքը մեր հարցի նկատմամբ մեծ կշիռ է ունենալու ապագայում»։ Արտաքին գործոց նախարարության կարծիքով միայն Ամերիկայի Միացյալ Նահանգներն են, որ «պիտի կարողանան չեզոքացնել ֆրանսիական ծրագրերը Կիլիկիայի նկատմամբ»,— հայտնում էր Քաստրմաջյանը Վեհափառին։

Հայտնվում էր և Հայկական հարցի նպատակահարմար ու հնարավոր լուծման ռուսական կառավարության կարծիքը. «Ռուն Հայաստանը (վեց վիլայեթները) և Կիլիկիան միասին կազմելու են մի ինքնավար քաղաքական միություն, որը կդրվի, բոլոր պետությունների համաձայնության համար, ռուսական պաշտպանության տակ»։ Հայկական հարցի այս ձևի լուծումը հնարավորություն պետք է տար Ռուսաստանին տնտեսական անմիջական կապ ստեղծել Միջերկրականի հետ, որով Պոլսի և նեղուցների հարցը կորցնելու է «իր հրամայողական նշանակությունը»[34]։

1917 թ. ապրիլի 6-ին ժամանակավոր կառավարությունը ընդունել էր արտաքին գործոց նախարարության առաջարկությունը Արևմտյան Հայաստանի պատերազմի օրենքներով գրավված մարզերի կառավարման մասին, կովկասյան բանակի շտաբի հերթապահ գեներալ Եվգենի Վիշինսկու վրա դնելով Հայաստանի կառավարման հատուկ լիազորություններ[35]։ Գեներալ Ռոմանովսկին հետ էր կանչվել ընդհանուր նահանգապետի պաշտոնից։

Ժամանակավոր կառավարության ապրիլի 25 (մայիսի 6)-ի որոշմամբ Թուրքահայաստանի համար, մինչև հաշտության դաշնագրով այդ մարզերի վիճակի վերջնական լուծումը, հաստատվել էր նոր կարգավիճակ.

1. Ռուսաստանի զորքերի գրաված Թուրքահայաստանի տարածքը քաղաքացիական կառավարման տեսակետից հանվում է կովկասյան մարզերի կառավարումից, ինչպես և հավասարապես կովկասյան բանակատի զինվորական իշխանությունների տնօրինությունից և անմիջապես ենթարկվում է ժամանակավոր կառավարության։

2. Թուրքահայաստանի շրջանների կառավարման 1916 թ. հունիսի 5-ի ժամանակավոր օրենքով այս շրջանների ընդհանուր նահանգապետին հանձնված իրավունքների իրագործումը ժամանակավոր կառավարության կողմից վստահվում է իր նշանակած Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարին։

3. Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսարին կից քաղաքացիական հարցերի գծով օգնականը։

4. Ընդհանուր կոմիսարը քաղաքացիական հարցերի գծով իր օգնականի զեկուցագրով ժամանակավոր կառավարությանը ներկայացնում է առաջարկություններ 1916 թ. հունիսի 5-ի ժամանակավոր կանոնադրության մեջ ցանկալի փոփոխություններ կատարելու համար[36]։

Ժամանակավոր կառավարության նախարարների խորհրդի նախագահ իշխան Ե. Լվովի և արտաքին գործերի նախարար Պ. Միլյուկովի ստորագրած «Թուրքահայաստանի մասին» որոշման մեջ, որը հրապարակվեց 1917 թ. ապրիլի 26 (մայիսի 7)-ին, առաջ քաշված հարցերը իրենց

արմատական զարգացումն ստացան կառավարության հետագա գործունեության ընթացքում։ Կովկասյան ճակատի համբարակային ծառայության պետ գեներալ-լեյտենանտ Ավերյանովը մայիսի 15-ին նշանակվեց Թուրքահայաստանի ընդհանուր կոմիսար։ Քաղաքացիական հարցերի գծով կոմիսարի տեղակալը Հայտնի հասարակական ազգային գործիչ բժիշկ Հակոբ Զավրիյանն էր։ Պետրոգրադում Կովկասի հարցերի գծով լիազոր Վ. Նոբոկովի վրա դրվեցին ժամանակավոր կառավարության և Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարի միջև անմիջական հարաբերությունների կարգավորման պարտականությունները[37]։

1917 թ. մայիսի 15-ին ժամանակավոր կառավարությունը Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարին տվեց հետևյալ ցուցումները.

1. Չկանխորոշելով Հայաստանի ապագա աշխարհագրական-քաղաքական սահմանները, Ասիական Թուրքիայի պատերազմի օրենքներով գրավված մարզերից կառավարությունը զուտ հայկական է համարում Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները։

2. Ելնելով երկրի տնտեսության բարձրացման, ինչպես նաև հանուն արդարության և թուրքերի կողմից կոտորածներով ու աքսորներով հայերի ոտնահարված իրավունքների վերականգնման շահերից, անհրաժեշտ է այժմ իսկ միջոցներ ձեռք առնել այդ մարզերը Ռուսաստան գաղթած հայերով նորից բնակեցնելու ուղղությամբ։ Հավասարապես արգելք չպետք է հարուցվի այդ մարզերում բնակեցման նպատակով վերադառնալ ցանկացող նախկին թուրքահպատակ հայերի դեմ՝ հայկական կազմակերպությունների նախօրոք մշակած պլանի համաձայն։

3. Ինչ վերաբերում է թուրքերին, քրդերին և լազերին, ապա նպատակ չունենալով առաջացնել որևէ բարդություն տեղում մնացածների նկատմամբ, բայց և այնպես, թիկունքի ռազմական ապահովության նպատակով և ազգամիջյան հնարավոր բարդությունները կանխելու համար, չթույլատրել մինչև հատուկ կարգադրություն, նրանց վերադարձը, ովքեր գնացել են թուրքական զորքերի հետ[38]։ Կառավարության ընդունած այս ծրագրի հեղինակը արտաքին գործերի նախարար Մ. Տերեշչենկոն էր։

Այդպիսով, Արևմտյան Հայաստանը ոչ միայն ուղղակիորեն ենթարկվեց ռուսական պետությանը և նրա կենտրոնական կառավարությանը, այլև ստեղծելով Արևմտյան Հայաստանի ընդհանուր կոմիսարություն՝ իր քաղաքացիական իշխանություններով, ժամանակավոր կառավարությունը առաջնահերթ էր համարում արևմտահայության ֆիզիկական գոյության, երկրից ուժով դուրս քշված հայության տուն վերադարձի հարցը։

Թուրքահայաստանի մարզերում ընդհանուր կոմիսար Ավերյանովի հրամանով կազմվեց երեք շրջան. 1. Էրզրումի՝ Էրզրում, Դերջան (Մամախաթուն) Աշկալա, Մանսուր, Հասան-Կալա, 2. Խնուսի՝ Ալաշկերտ,

Ղարաքիլիսա, Դիադին, Խնուս, Մանազկերտ, Բայազետ, Յ. Վանի՝ Բերկրի, Արճեշ, Սարայ, Բաշկալա, Խոշաբ, Վան գավառներով։ Էրզրումի շրջանի կոմիսար նշանակվեց Յա. Գյուտովը, Վանինը՝ Կ. Համբարձումյանը, Խնուսինը՝ Ն. Նիկոլենկոն, իրենց հայ օգնականներով։ Նման բաժանումը բխում էր Անտանտի երկրների գաղտնի համաձայնագրերից, մասնավորապես Սայքս-Պիկո պակտից, որոնցով պատմական Հայաստանի Խարբերդի, Սեբաստիայի, Դիարբեքիրի վիլայեթները պետք է անցնեին ֆրանսիական հովանավորության տակ[39]։ Ընդհանուր կոմիսարությունում ստեղծվեց նաև Պոնտական մարզը՝ հույն բնակչության համար։ 1917 թ. հաստատված պետական սահմանը Ռուսաստանի և Թուրքիայի միջև Արևմտյան Հայաստանով անցնում էր Սյուրմենե, Բաբերդ, Դերջան (Մամախաթուն), Վերին Արաքս, Խնուս, Մանազկերտ, Արճեշ, Բերկրի, Սարայ գծով[40]։

Հույսեր էին բացվում «Ամենամեծ սգավոր և ամենաշատ վտանգված» Հայաստանի համար, ինչպես ռուսահայերը սովորաբար անվանում էին Տաճկահայաստանը, ազգապահպանության, ազգային գոյատևման և վերածննդի համար։ «Նույնիսկ Արարատյան կամ Շիրակի դաշտերից Տաճկահայաստան գնացողն էլ ասում է. Հայաստան է գնում։ Եվ ահա, էս պատերազմի ընթացքում, դեպքը բերեց և ես երկու անգամ գնացի Հայաստան։ Մի անգամ Ալաշկերտի հովիտը, մյուս անգամ՝ Վան։ Ծանոթանալով Հայաստանի շատ մտավորականների հետ, մոտիկից տեսա Հայաստանի ժողովուրդը, մի ահագին ցավ ծանրացավ իմ սրտին, թե ես ինչքան քիչ տեղեկություն եմ ունեցել կենդանի Հայաստանից։ Ես, որ համարվում եմ նրա ճանաչողներից մինը, ես, որ միշտ կարծիք եմ հայտնել և շատ թե քիչ գործել եմ նրա համար»,— գրել է Հովհաննես Թումանյանը 1917 թ. ապրիլի 16-ին, ազգային հերոս Անդրանիկի հրատարակած «Հայաստան» թերթում։

Ազգային շահը հրամայաբար պահանջում էր, որ տարաբախտ հայը ունենա մեկ միասնական հայրենիք, մեկ երկիր, երաշխավորված և ապահովված մեծ տերությունների «պատվո վստահությամբ»։ Նա պետք է ունենար իր տարածքի, ժողովրդի պատվի և կյանքի ապահովման երաշխիք, օգտվեր ազգային ինքնորոշման և ինքնավարության իրավունքից։ Հայ ժողովրդի իրավունքների հիմքը ազգի համար կարևոր առկա պայմաններն էին. հայրենիքը՝ պատմական Հայաստանը, լեզուն, պատմությունը, հավաքական կենսագրը, մշակույթը, տնտեսությունը։ Այդ ամենով դարերի խորքից եկող հայ ժողովուրդը քայլել է համաշխարհային քաղաքակրթության առաջին շարքերում, արժանացել անշողոքորթ ճանաչման։

Թուրքահայաստանի վերաշինության, դպրոցական, կրթական, պետական, տնտեսական, մշակութային, հուշարձանների պահպանության, բռնագաղթածների երկիր վերադարձի հարցերը լայնորեն քննարկվեցին մայիսի 2—11-ին Երևանում կայացած Արևմտահայերի առաջին համագումարում[41]։ Համագումարը, որի աշխատանքներին մասնակցում

էին 69 պատվիրակ, 400-ից ավել հյուրեր, նախապատրաստվել էր Անդրանիկի, Արամ Մանուկյանի, Վահան Փափազյանի, Զապել Եսայանի, Լևոն Շանթի, Փանոս Թերլեմեզյանի և այլ երախտավորների ջանքերով։ Համագումարի պատվավոր նախագահը Անդրանիկն էր, որը տոգորված Հայրենիքը ազատ տեսնելու մտահոգությամբ, հանդես եկավ համերաշխության ու միասնության կոչով։ «Ես լավ համերաշխության և հավաքական ուժի կողմնակից եմ և կհավատամ, որ մենք պետք է կարողանանք մեր ցեղի բեկորները պահել ու պաշտպանել, մեր օջախները վերականգնել, մեր ապագայի վրա հույս դնել միայն այն ժամանակ, երբ իրար հասկանանք ու համերաշխենք»։ Համագումարը հույս էր հայտնում, որ ազատ Ռուսաստանի դեմոկրատական կառավարությունը կպաշտպանի իր հռչակած մեծ նշանաբանը՝ փոքր ազգերի ինքնորոշման իրավունքը, այդ թվում և «հայ ժողովրդի դատը քաղաքակիրթ աշխարհի առաջ»։

Հայ դատի արդար լուծման գործում արևմտահայությունը մեծ հույսեր էր կապում նաև Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի կառավարությունների և քաղաքական գործիչների հետ։ Այդ հույսերով էլ համագումարը ընդունեց մի շարք որոշումներ։ Գերիշխողը Հայրենիքի վերաշինության, ազգի պահպանման և գոյատևման, թուրքական արհավիրքների պատճառով ցրված հայությանը իր պատմական մայր Հայրենիք վերադարձնելու, այնտեղ կենտրոնացնելու, երկիրը վերաշինելու մտահոգությունն էր։

Հաստատելով, որ չնայած թուրքերի ձեռնարկած դիվային ծրագրին՝ հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությանը, «հայ ժողովուրդը կա և պետք է ապրի իր ազգային քաղաքական տենչանքները» իրագործելու համար, համագումարը ընդգծեց, որ վերաշինությունը պետք է հասկացվի որպես գերազանցապես ազգային քաղաքական գործ, մեր ժողովրդի նոր վերածննդի կարևոր միջոցներից մեկը. վերաշինությունը նպատակ պետք է ունենա վերադարձնել հալածանքի և այլ պատճառներով ցրված հայությունը իր պատմական քաղաքական ակնկալումների Մայր Հայրենիքը, այն համարելով ազգի պահպանության գրավականը, վարչական վերակառուցման հետ զարկ տա տնտեսական վերաշինությանը՝ հայ ժողովրդին հնարավորություն տալով, որ նա կարողանա իր իսկ սեփական միջոցներով ապրելու, արդյունավորելու և ստեղծագործելու, վերաշինությունը գործադրել պատերազմի տևողության ընթացքում և պատերազմից հետո։ Անհրաժեշտ խնդիր էր համարվում պատերազմից հետո երկիր տեղափոխել Կովկաս ապաստանած թուրքահայ փախստականներին, որոնց թիվը հասնում էր 300 հազարի, Հայրենիք վերադարձնել Միջագետք և այլուր ար տորված, քրդերի ու արաբների մեջ ցրված, Ամերիկայի, Արևմտյան Եվրոպայի, Բալկանյան երկրներում գտնվող հայերին։ Երկրի վերաշինության և ազգապահպանության հիմնական երաշխիքը հավաքական և համերաշխ ջանքերի հանդես բերումն էր, ուժերի միասնությունը, հայ ազգի համբավավոր տոկունությունը։ Հավաքական կեցվածքով նա ապացուցում էր, որ Եղեռնի դաժան հարվածը կրելուց հետո էլ հայը եղծված չէ, կանգուն է, աշխատող, ստեղծագործող։ Անվանի

գրող Զապել Եսայանը արևմտահայերի համագումարում խորհում էր, որ ազգային հարցերը պետք է լուծվեն ազգովին, առանց քեռի և ոխի, միմիայն մղված ավելի լավը անելու մտահոգությամբ։ Տիրապետողը պետք է լինի լրջությունը, հաշտ տրամադրությունը, մանավանդ ոգևորությունը՝ վերցնել այդ ծանր բեռը, որը դրել է պատմությունը սերունդների ուսերի վրա։ Եվ այդ կատարել կարենալու համար մենք պետք է լիննենք միասնական։ «Ազգովի պետք է որոշվի, թե ինչ միջոցների կարող ենք դիմել, ինչ արտակարգ կորով ու եռանդ կարող ենք ի հայտ բերել բեկորները հավաքելու, զանոնք խնամելու և նրանցով վերականգնելու համար մեր քանդված Հայրենիքը»,— ասում էր մեծ հայրենասերը[42]։ Արևմտահայությանը սատար կանգնեց նաև հոգևորականությունը։ «Ամեն ջանք պետք է գործադրել, որպեսզի տաճկահայերը վերադառնան իրենց Հայրենիքը՝ ռուսահայերը պետք է օգնեն նրանց բարոյապես և տնտեսապես»։ Այդպիսին էր հունիսի 22—23-ը էջմիածնում կայացած ռուսահայ հոգևորականության համագումարի որոշումը[43]։

Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցը, ընդհանրապես հայկական հարցը լայնորեն քննարկվում էր Ռուսաստանի և եվրոպական շատ երկրների պետական մարմիններում, հասարակական-քաղաքական կազմակերպություններում, դիվանագիտական ոլորտներում։ Հայաստանի ինքնորոշման իրավունքի պաշտպանության հայտարարություններով հանդես եկան Լլոյդ Ջորջը, Վուդրո Վիլսոնը, Ռիբոն, Հենդերսոնը և այլ քաղաքական գործիչներ։ Հայկական հարցը կրկին դարձավ միջազգային հարց։ Պաշտպանելով հայ ժողովրդի ինքնորոշման, ազատ զարգացման, անկախության իրավունքը՝ Վ. Ի. Լենինը այն կապում էր Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերման հետ։ Գտնելով, որ Ռուսաստանում բնակվող բոլոր այլազգիներին պետք է տալ լիակատար ազատություն, ընդհուպ մինչև անջատում, բոլշևիկների առաջնորդը Բանվորների և Զինվորների պատգամավորների խորհուրդների Համառուսական առաջին համագումարի 1917 թ. հունիսի 9-ի նիստում խոսում էր և «անկախ հայկական հանրապետության» և այնտեղից ռուսական զորքերի դուրս բերման մասին[44]։

Նեղոն ապրած ժողովրդի համար զորքերն առանց երաշխիքի հանելը հղի էր Արևմտյան Հայաստանի կորստի, հայերի բնաջնջման վտանգներով, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները։ Նույն նիստում հանդես եկած ռազմական և ծովային նախարար Ա. Ֆ. Կերենսկին արտահայտվեց ռուսական զորքերը Հայաստանում թողնելու օգտին։ «Մենք չենք կարող հեռանալ Հայաստանից, որովհետև այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա,— ասաց Կերենսկին,— նա կկորչի քրդերի ու թուրքերի հրի ու սրի տակ»[45]։ Գ. վ. Պլեխանովը գտնում էր, որ ռուսական զորքերի Թուրքահայաստանում թողնելը անեքսիա չէ, այլ անհրաժեշտություն։ Այս տեսակետը պաշտպանում էր և միջազգային սոցիալ-դեմոկրատիան[46]։

Այդ նույն ժամանակ ժամանակավոր կառավարության որոշումով սկսվեց բանակի ազգայնացման գործընթացը։ Ունենալով Ա. Ֆ. Կերենսկու 1917 թ. հունիսի 7-ի կարգադրությունը Հայկական հրաձգային վեց գումարտակները գնդերի վերածելու և դիվիզիաներ կազմելու մասին, ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար Կոռնիլովը 1917 թ. հուլիսի 28-ին հրաման արձակեց հայկական զինվորական միավորում՝ բանակային կորպուս կազմակերպելու մասին[47]։ Ամենուր կազմակերպվեցին հայկական զինվորական հանձնաժողովներ. նպատակը հայ զինվորականներին Կովկասյան ռազմաճակատ տեղափոխելն էր։ Պետրոգրադում ստեղծված կոմիսարիատը ղեկավարում էր Պետրոգրադի ռազմական օկրուգի գլխավոր շտաբի պետ գեներալ Հակոբ Բագրատունին։ Հանձնաժողովի կազմում էին գեներալ-մայոր Լևոն Տիգրանյանը, փոխգնդապետ Մելիք-Փարսադանյանը, փաստաբան Կ. Զավրիյանը։ Հակոբ Բագրատունին ռուսական բանակի ճանաչված հրամանատարներից էր. ոսկե մեդալով ավարտել էր Թիֆլիսի գիմնազիան, առաջին կարգի դիպլոմով՝ Կիևի զինվորական դպրոցը, որպես համար առաջին ուսանող, գրանցվել էր մարմարյա տախտակին, առաջին կարգի դիպլոմով՝ գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան։ Ռուս-ճապոնական պատերազմում և առաջին աշխարհամարտում աչքի ընկած ռազմական գործողությունների և անձնական սխրանքի համար պարգևատրվել է 11 շքանշանով և 6 մեդալով[48]։ 1912 թ. լինելով Թուրքեստանյան ռազմական օկրուգի հետախուզության բաժանմունքի պետ, բացահայտել է պանթուրքիզմի գործակալների քայքայիչ աշխատանքները մուսուլմանների շրջանում[49]։ 1917 թ. հոկտեմբերի 25-ին ժամանակավոր կառավարության պետրոգրադյան լիազորի կողմից Բագրատունին նշանակվել է Պետրոգրադի զինվորական օկրուգի զորքերի գլխավոր հրամանատար[50]։ Բանակի ազգայնացման հիմնական դրույթները, ժամանակավոր կառավարության հրապարակած օրենքը, սակայն, համընդհանուր հավանություն չգտան։ «Ազգային զորքը չէ, որ անվտանգ պետք է պահի Կովկասը։ Այդ պաշտոնը վերապահվում է ուժեղ Ռուսաստանին։ Ամեն մի հայ պետք է իմաստություն ունենա դատելու, որ իր անվտանգությունը պայմանավորված է Ռուսաստանի ամբողջական անվտանգ գոյությամբ»[51] — գրել է Դավիթ Անանունը 1917 թ. հունիսին։

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Քաղաքական նման իրավիճակում Թուրքահայաստանը լցվում էր ազգային գաղափարներով տոգորված հայ պաշտոնյաներով։ Կոմիսարիատի զանազան բաժանմունքներում ներգրավվեցին կարող ուժեր, մտավորականներ, զինվորականներ, մասնագետներ, երիտասարդություն։ Ամբողջ երկրով մեկ բացվեցին կոմիսարիատի վարչաքաղաքացիական

հաստատություններ, կազմակերպվեցին գպրոցներ, որբանոցներ, ծրկիր վերադարձավ 140 հազար հայ, Թուրքիայից ազատագրված հայոց տարածքում ապրում էր 367 հազար հայ[52]։ Այս հանգամանքը դուր չէր գալիս Կովկասի մահմեդական ղեկավարներին և վրացական մենշևիզմի պարագլուխներին։ «Գրավված մարզերը, միևնույնն է, կանցնեն Թուրքիային, ուստի հարկ չկա այդ մարզերի կառավարումը կազմակերպելու նպատակով հսկայական միջոցներ ծախսել»[53] — գրում էր Ն. Ժորդանիան։

Մահմեդական ղեկավար տարրի և նրանց ձայնակցողների բանսարկությունների և բացահայտ «ընդհանուր աղմուկի, շփոթի և անբարյացակամ վերաբերմունքի մեջ Կոմիսարիատը կարողացավ պահել ինքն իրեն և ցարդ Հայաստանի իշխանությունն է, որը օրեցօր ավելի կկազմակերպվի, զգալիորեն կհասունանա և կմտնի իր իսկական դերի ու պարտականությունների մեջ»,— գրել է Ս. Վրացյանը, նկատելով, որ Հայաստանը ունեցավ իր առաջին իշխանությունը՝ Հայաստանի կոմիսարիատը, որին ժամանակավոր կառավարությունը լիազորեց իր առանձին իրավունքներով[54]։

Կոմիսարիատի դրական դերը առանձնացրել է և Ալ. Խատիսյանը. «ազգային հորձանքը, որ Փետրվարյան հեղափոխությունից առաջ գետնի տակ կհոսեր, աննկատելի շատերի համար, հանկարծ հրապարակ եկավ իր ուժգնությամբ»[55],— գրել է Հայաստանի Հանրապետության հերթականությամբ երկրորդ վարչապետը։

Ուժերի համախմբման փորձ կատարեց 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին Թիֆլիսում կայացած Արևելահայերի համագումարը։ Ընտրվեց Ազգային խորհուրդ, որը ղեկավարում էր Ավետիս Ահարոնյանը (մինչ այդ ընտրված Արևմտահայերի Ազգային խորհրդի նախագահը Վահան Փափազյանն էր)։ Արևելահայերի ազգային խորհրդին իրավունք էր վերապահված հանդես գալ որպես Անդրկովկասի հայության լիազոր ներկայացուցիչ՝ օժտված կառավարական ֆունկցիաներով։ Նա ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականական, դրպրոցական, բժշկական[56]։

1917 թ. հոկտեմբերին Թիֆլիսում կայացած Հայ Հեղափոխական Դաշնակցության կովկասյան երկրային ժողովը «Թուրքահայաստանի կոմիսարիատի մասին» որոշման մեջ գտավ «միանգամայն անհրաժեշտ կոմիսարիատի առաջնությունը և անմիջական կապը կենտրոնական կառավարության հետ»։ Համագումարը որոշեց նաև տարածքային հարց. մասնավորապես պահանջվում էր Էրզրումի վիլայեթի մասը կազմող Տրապիզոնին ենթարկված Ճորոխի հովիտը, Բաբերդը՝ Սպիր, Խոտորջուր հատվածով նորից միավորել Էրզրումի շրջանին։ Համագումարը հայտնեց վճռականություն՝ պայքարել «Թուրքահայաստանը վարչապես Կովկասին միացնելու դիտավորությունների դեմ, որը նկատվում էր կովկասյան պետական շրջաններում»[57]։

Հայ Հեղափոխական Դաշնակցության կովկասյան երկրային ժողովը առաջարկում էր նաև Անդրկովկասի վարչական նոր բաժանում և պետական կառուցվածք։ Համագումարի կարծիքով, Ռուսաստանը պետք է վերածվեր դաշնակցային (ֆեդերատիվ) ռամկավար հանրապետության, որի մեջ մտնելու էր Անդրկովկասի դաշնությունը՝ վրացական, հայկական, թաթարական կանտոններով (գավառներ), իրենց օրենսդրությամբ։ Կանտոնների սահմանները որոշելիս հաշվի էին առնվելու ազգագրական, տնտեսական և տեղագրական գործոնները։ Այդ առումով Հայկական կանտոնը ընդգրկելու էր Հայկական բարձրավանդակը, ա) Երևանի նահանգը, բ) Գանձակի նահանգի լեռնային՝ Հայկական մասը, գ) Թիֆլիսի նահանգից Ախալքալաքի գավառը, Բորչալուի գավառի հայկական մասը, դ) Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի գավառները։ Հատուկ նշվում էր, որ հայկական և խառը վարչական կանտոնների միջև ընկած տարածքում ապրող ազգաբնակչությունը ինքն է որոշում իր քաղաքական վիճակը[58]։ Առաջարկվող Գանձակի, Ալեքսանդրապոլի, Երևանի նահանգներում բնակվում էր 2147 հազար բնակիչ, որից 1315 հազարը հայ (61 տոկոս), 610 հազար մուսուլման (20 տոկոս), 222 հազար ռուսներ և այլ ազգեր (11 տոկոս)[59]։ Նախատեսվում էր ներքին հետևյալ բաժանումը՝ Գանձակի նահանգ՝ Քարվանսարայի, Գանձակի, Շուշիի, Ջանգեզուրի գավառներով, Երևանի նահանգ՝ Նոր Բայազետի, Նախիջևանի, Շարուրի, Էջմիածնի, Երևանի գավառներով. Ալեքսանդրապոլի նահանգ՝ Ալեքսանդրապոլի, Քուլպայի (Կողբ), Կարսի, Կաղզվանի, Լոռվա, Ախալքալաքի գավառներով։

Տարածքային հարցերում միասնական հողի վրա էին կանգնած վրացական բոլոր կուսակցությունները։ Նրանք իրենց սահմաններում տեսնում էին Լոռին, Ախալքալաքը, Բորչալուն, Արդվինը, Օլթին[60]։ Համախմբվելով մուսուլմանական մեծամասնության հետ՝ Անդրկովկասի կոմիսարիատում հողային բաժանման իրագործումը վրացական կողմը տապալեց։ Վիճելի հողեր համարվեցին Երևանի նահանգը ամբողջությամբ, Ելիզավետպոլի նահանգը (բացի Արեշի և Նուխիի գավառներից), Կարսի և Կաղզվանի օկրուգները, Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառները[61]։ Նրանք հանդես եկան Հայկական կանտոնի ստեղծման դեմ։ Մուսուլմանների նպատակը Թուրքիայի և Ատրպատականի միջև հայկական «ամբարտակի» վերացումն էր։

Մուսուլման գործիչները հակահայկական գործունեություն ծավալում էին ոչ միայն Անդրկովկասյան իրականության, այլև Թուրքահայաստանի հարցում։ Պետրոգրադ հղած դիմումներում և հեռագրերում նրանք խեղաթյուրելով փաստերը, դնում էին պատերազմի օրենքներով գրավված մարզերում մահմեդական ղեկավար նշանակելու հարցը։ Համատեղ էին հանդես գալիս Անդրկովկասի մուսուլմանական կոմիտեն և Դաղստանի մուսուլմանական խորհուրդը, Արևմտյան Հայաստանում վխտացող թուրք գործակալները[62]։

«Անդրկովկասի թաթարները զինվում են բացահայտ ու հաջող։ Զինումը գնում էր բոլոր գավառներում, ինչը անհանգստացնում է հայերին և ռուսներին։ Թաթարները որոշել են հասնել ինքնավար մուսուլմանական մարզի կազմակերպմանը, որի մեջ պետք է մտնեն Անդրկովկասը, ինչպես նաև Դաղստանը, Պարսկական Ադրբեջանը և Անդրկասպյան երկրամասը։ Կովկասի մուսուլմանները չեն կարող ակտիվ մասնակցել Թուրքիայի հայկական վիլայեթների կառուցմանը, թաթարները պահանջել են մուսուլմանների վերադարձը հայերի թողած հողեր»[63] — ասված է ժամանակավոր կառավարության ուշադրությանը հանձնված փաստաթղթում։

1917 թ. մայիսի 11-ին Մոսկվայում կայացած մուսուլմանների համագումարը, պաշտպանելով մինչ այդ Կազանում կայացած համագումարի դիմումը «Կովկասի իրավիճակի մասին», Արևմտյան Հայաստանի, Կարսի, Բաթումի, Անդրկովկասի մուսուլմաններին պաշտպանելու պատրվակով որոշեց Թիֆլիսում ունենալ մշտական մուսուլմանական զինվորական պատվիրակություն՝ տեղական քաղաքացիական կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկումով. հեռացնել Ավերյանովին և Զավրիյանին Թուրքահայաստանի կառավարումից, ցույց տալ պետական օգնություն Թուրքիայի գրավված մարզերի մուսուլմաններին, ստեղծել տեղական քաղաքացիական կազմակերպություններ, կովկասյան զինվորական օկրուգում կազմակերպել մուսուլմանական զինվորական կոմիտեներ, քրդերի համար նշանակել մուսուլման կոմիսարներ, ընդգրկելով նաև ներկայացուցիչներ Մերձվոլգյան մուսուլմաններից և զինվորականներից[64]։ Ազգային զարթոնքին տալով համաթրքության և համիսլամության բնույթ, Թուրքիայի և Կովկասի մահմեդականների ղեկավար շրջաններում վախեցած էին, թե պատերազմը ռուսական հաղթանակով ավարտվելու դեպքում թուրքերը կկորցնեն «ամբողջ հայկական նահանգները, թերևս ամբողջ Փոքր Ասիան»[65]։

«Անհավատների» դեմ ազգակից ժողովուրդների համախմբման գաղափարը հնչեցրեց մուսավաթ կուսակցության միավորիչ համագումարը՝ 1917 թ. հոկտեմբերին ընդունած ծրագրում[66]։ Այն «արյան կանչ» էր ուղղված բոլոր մուսուլմաններին՝ «իսլամի երբեմնի ազնվածին ժողովրդին», «աշխարհի այնպիսի մասերի, ինչպիսիք են Ասիան, Եվրոպան, Աֆրիկան տիրողներին», «մուսուլմանական աշխարհի բոլոր անջատված ուժերին՝ «անկախ ազգություններից և կրոնական տարբերություններից», «միավորվել, պաշտպանելու մուսուլմանների ազգային ու մարդկային շահերը, նրան վերադարձնել այն փառքը և կրոնը, որ նա քարոզում է»։

«Մի քանի հարյուրամյակների ընթացքում թուրք ժողովուրդը խավարի մեջ և առանց ճանապարհի ենթարկվել է ցնցման և ցնցումը նրան արթնացրել է։ Թուրք ժողովրդի նպատակը հանդիսանում է առաջադիմությունը և ձգտումը, որպեսզի մարդկության ծաղկած այգում ծաղկի թուրքական բուրավետ ծաղիկը, և այդ ծաղիկը մուսուլմանական ինտերնացիոնալի մեջ գտնվող մյուս խմբերի հետ կազմի մի ընդհանուր փունջ»։

Ակնարկելով միասնական թուրքական պետության ստեղծման մասին՝ Մահմեդ Էմին Ռասուլ Զադեն հասկացնում է, որ միասնական թուրքական պետությունը պետք է հասնի դաշինքի մյուս մուսուլմանական պետությունների հետ։ Նա ձգտում էր համաձայնեցնել համաթուրքական և համիսլամական գաղափարախոսությունները։ «Թրքության գաղափարը չի հանդիսանում ոտնձգություն ուրիշների նկատմամբ և ոչ էլ իսլամի ժխտում, թուրքերը հանդիսանում են մեկ ընդհանուր ազգ»[67] — հայտարարեց Ռասուլ Զադեն։

Մուսավաթի համագումարը որդեգրեց ֆեդերատիվ կառուցվածքի գաղափարը՝ նրա մեջ տեսնելով Ղրիմը, Կովկասը, Դաղստանը, Թուրքեստանը, Բաշկիրիան։ Դրվեց Ատրպատականի տարածքային ինքնավարության իրականացման հարցը, Ատրպատական ասելով հասկանալով ոչ թե Արաքսից հարավ գտնվող պարսկական երկրամասը, այլ Բաքվի, Գանձակի, Երևանի նահանգները, ընդհանրապես արևելյան և հարավային Կովկասը, ընդհուպ մինչև Կարս և Արդահան։ Ձեռք առնվեցին նաև գործնական քայլեր։ Նոր կազմավորվող մուսուլմանական կորպուսում զինվորագրվեցին չեչեններ, չերքեզներ, կաբարդիններ, թաթարներ, դաղստանցիներ, օսեր, ինգուշներ, որոնցից կազմավորվեց 9 զինվորական ստորաբաժանում[68]։

1917 թ. աշնանը զգացվում էր պատերազմի ավարտին հասնելու, հաշտություն կնքելու շունչը։ Պատմության դատից խուսափելու, ոճրագործությունը թաքցնելու և «մաքուր» դուրս գալու նպատակով երիտասարդ թուրքերի ղեկավարները փորձում էին մոլորեցնել հասարակական կարծիքը, ոճրագործության պատճառ հրամցնելով ազատագրական շարժումների և դրսից նրանց հրահրումների տեսքով։ 1917 թ. սեպտեմբերի 24-ին «Միություն և առաջադիմություն» կուսակցության համագումարում արտասանած ճառում անդրադառնալով Հայկական հարցին, Թալեաթ փաշան կեղծելով եղելությունը, կոտորածները բացատրում էր հայերի անհնազանդությամբ, ռուսական կողմնորոշմամբ, արտասահմանից եկած հորդորանքներով ու քաջալերումներով, ֆիդայական շարժումներով։ Ջեկուցման հիմնական շարադրանքը տպագրվեց նաև գերմանական ազդեցիկ թերթերում։

Թալեաթ փաշայի անհեթեթություններին հիմնավորված պատասխան տրվեց եվրոպական քաղաքակրթության կողմից, նույնիսկ իր դաշնակից Գերմանիայում։ Բերենք դրանցից միայն մեկը՝ քահանա Էվալդ Շտիրի 1917 թ. նոյեմբերի 14-ին հրապարակած «Հայկական հարցի առթիվ» հոդվածը։

Թալեաթ փաշայի «փաստարկումները» համարելով «հասարակական կարծիքը մոլորեցնող», Շտիրը անհերքելի փաստերով ապացուցում էր, որ հայ ֆիդայիները ստիպված էին պաշտպանել շարունակ վտանգված ժողովրդին, որովհետև թուրքական կառավարությունը իր վրա վերցրած

պարտավորությունները չէր կատարում, մինչդեռ ոչ մի ժողովուրդ պարտավոր չէ առանց դիմադրելու իրեն կոտորել տալ, որպեսզի կառավարությանը «դժվարություններ չպատճառի»։ Շտիրը նշում էր. «Այդ անցքերը շատ լավ հայտնի են թե թուրքական պառլամենտին, և թե երիտասարդ թուրքերի կառավարությանը, որի կազմի մեջ Թալեաթը քանիցս նշանավոր դիրքեր է գրավել, հետևապես, զարմանալի է, որ մեծ վեզիրը այդ մասին չգիտե»։ «Մեծ վեզիրը մեղադրում է հայերին, թե նրանք ազատության կռվի դիմակի տակ հետամտում են իրենց սեփական նպատակները»։ Այդ սեփական ձգտումները ոչ այլ ինչ են, եթե ոչ իրենց ազգակիցներին ապահովելու սպանություններից, կոտորածներից, կանանց բռնաբարություններից, ինչպես և բռնի իսլամացումից, գործողություններ, որ երիտասարդ թուրքերի իշխանության ժամանակ ևս չեն դադարել կատարվելուց»։ Մեծ վեզիրը մոռանում է հիշատակել այն անդադար հարձակումները, որոնց ենթարկվել են հայ գյուղերը քուրդ գնդերից, և որոնց մասին «ճշգրիտ փաստերով մանրամասն հուշագիր է հանձնված եղել նաև գերմանական արտաքին գործերի նախարարությանը»։ «Միայն այն ժամանակ, երբ թուրք կառավարությունը, ինչպես միշտ եղել է մինչև այժմ, սկսեց հերքել և այդ դեպքերը, հայերը դիմեցին ինքնապաշտպանության։ Եթե այդ պայմաններում նրանք հայացք ձգեցին ռուսների վրա, որոնց շարքերում կռվում էին ռուսահայերը, դա, իհարկե, հասկանալի էր»,— գրում էր Շտիրը։

Շեշտելով, որ Վանի և Զեյթունի ապստամբությունները եղել են լոկ ինքնապաշտպանական միջոցներ, Շտիրը ժխտել է նաև Թալեաթ փաշայի վարկածը հայերի տեղահանումները պատերազմի տրամաբանությամբ կատարված լինելու մասին։ Տեղահանումները սկսվել են Կիլիկիայում, որը պատերազմական թատերաբեմ ամենևին չի եղել, տեղահանումների և նրա հետևանքների մեղքը ամբողջովին ընկնում է Թուրքիայի կենտրոնական կառավարության վրա։ «Արևելյան վիլայեթներում, որոնք ենթարկվում են անմիջապես Պոլսի կառավարությանը և, մասնավորապես, Թալեաթ փաշային, տեղահանումների ժամանակ բարի կամքը բացակայում էր»։

Մերկացնելով երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը և բացահայտելով նրանց պատճառաբանությունների սնանկությունը՝ Շտիրը հարցնում է. «Բայց ինչով կարելի է բացատրել, որ թուրք կառավարությունը, որը չէր ցանկանում կամ չէր կարող հայերի անսահման տառապանքները թեթևացնել, մինչև այսօր արգելում է ցույցաբերել նրանց որևէ օգնություն, նույնիսկ իր դաշնակից Գերմանիայի կողմից, չնայած որ այդ օգնությունը պիտի կատարվեր իր իսկ պաշտոնական ներկայացուցչի ձեռքով։ Ինչպե՞ս կարող է նա խուսափել այս փաստից բխող եզրակացություններից, որոնք արվում են ոչ միայն թշնամական ճամբարում։ Չեզոք արտասահմանը համբերաշխ է Հայաստանում կատարված անցքերի վերաբերմամբ և դաշնակից երկրները կմիանան նրան, եթե հատկապես այս խնդրում չափազանց խիստ գրաքննությունը

հնարավորություն տա ճշմարտությունը պարզել և եթե Թալեաթի այսօրինակ մեկնաբանությունները կրկին չշարունակեն հասարակական կարծիքը մոլորեցնել»[69]։

Թուրքական պատմագրությունը և քաղաքագետներն այսօր էլ փոխառնելով երիտթուրքական քարոզչական մեքենայի վարկածները, խեղաթյուրելով և կեղծելով փաստերը, հրեշավոր ոճրագործությունը՝ Մեծ եղեռնը մատուցում են որպես հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժումների հետևանք։ Չլինեին այդ շարժումները, չէին լինի կոտորածները։ Այսօր քարոզվում է այն միտքը, որ լինելով Արևելքի երկիր, Հայաստանը փարվում է Եվրոպային ու Ռուսաստանին, փոխանակ խորհելու Թուրքիայի հետ բարի հարևանության, համագործակցության մասին։ «Խորհուրդ» է տրվում ազգովին սթափվել, որպեսզի պատմությունը չկրկնվի, դարը չավարտվի այնպես, ինչպես սկսվել է։ Առանձնացվում է այն «պատմական առաքելությունը», որը Թուրքիան ունի Կովկասում և Միջին Արևելքում, որտեղ ըստ Ռուսաստանի դաշնությունում Թուրքիայի նախկին դեսպան Վոլքան Վուրալի պնդման, «Թուրքիան հատուկ պարտավորություններ ունի նաև»։ Նույն դեսպանը մարդկության նկատմամբ դրսևորված ամենահրեշավոր ոճրագործությունը առնելով կասկածի տակ, 1993 թ. մարտին բացականչում է. «իսկ եղե՞լ է արդյոք ցեղասպանություն», ավելացնելով, թե «Հայկական կողմը ծայրահեղ միակողմանի բացատրություն է տալիս 1915 թ. կատարվածին», որը «արդարացի չէ և անթույլատրելի է»[70]։ Այդ ոգով էլ տարվում է քարոզչությունը Եվրոպայում և Ամերիկայում, տարածվում են մտացածին հորինվածքներ։

Թուրքական շատ քաղաքական գործիչներ և թուրքամետներ խորհուրդ են տալիս հայերին մոռանալ անցյալը։ Իսկ մոռանալ անցյալը, հրաժարվել, զրկվել պատմական հիշողությունից, նշանակում է կորցնել հավատը արդարի նկատմամբ։ Պետք է մենք հստակորեն ասենք, որ հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում եղել են օսմանիզմի, համաթուրքիզմի, երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության հետևանք, որ ֆիդայական և կամավորական շարժումները հայ ժողովրդի պատմական տենչերի ու ազգային ազատագրական ձգտումների, բռնության դեմ ցասման ինքնաբուխ արտահայտությունն են, քաղաքական և սոցիալական ազատագրության ազդակ։

Մերժելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը դրսից ներմուծված լինելու առասպելը, որը այսօր ևս հնչում է առանձին դեպքերում, Հովհաննես Թումանյանը իրավացիորեն գրել է. «Սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թէ էս ամենը (թուրքական բռնությունները— Հ. Ա.) կարող էին անցնել առանց ծայրահեղ դժգոհության ու բռնկումի, առանց հեղափոխության։ Այլև սխալ են նրանք, որոնք կարծում են, որ հեղափոխությունը ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»[71]։ Դա է ճշմարտությունը։

Այդ ճշմարտությունը դեռևս 1891 թ. նշել է «Ռուսսկիե վեդոմոստի» հրատարակիչ և խմբագիր Գրիգոր Ջանշյանը «Հայկական հարցը Թուրքիայում» աշխատության մեջ։ Արձանագրելով օսմանյան կառավարության հայահալած քաղաքականությունը, նա գրել է, որ այս բոլորից հետո «հարց է առաջանում, թե այլևս ի՞նչ արտաքին դրդում է հարկավոր, որպեսզի ամբողջ հայ ազգը տենդագին հուզմունքով ջանք գործեր փոփոխել իր անտանելի կացությունը... ինչ կարիք կա՝ զարմանալու, որ այդ տենդագին հուզմունքը պահպանվում և սաստկանում է Թուրքաց կառավարության հետզհետե սաստկացրած հալածանքների պատճառով՝ համատարած բորբոքում և խռովություններ է առաջացնում»[72]։

Օսմանյան կայսրության և երիտթուրքերի հակահայկական քաղաքականության, 20-րդ դարի աննախադեպ ոճրագործության՝ ժողովուրդների պատմության մեջ առաջին ցեղասպանության, Հայկական հարցի և թուրքական բռնատիրության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի ուսումնասիրումը և գիտական լուսաբանումը հայ պատմագրության առանցքային հիմնախնդիրներից է։ Այն գրավել է հայ և օտարազգի շատ պատմաբանների ուշադրությունը։ Արժեքավոր աշխատություններ են հրատարակվել Հայաստանում, արտասահմանում և հայկական Սփյուռքում։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող «Հայկական հարցը 1918 թվականին», սույն աշխատությունը ներառում է Բրեստ-Լիտովսկի, Տրապիզոնի, Բաթումի կոնֆերանսներում Հայաստանին և Հայկական հարցին վերաբերող հիմնախնդիրները, Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում Հայոց Ազգային խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության պատվիրակությունների գործունեությունը, հայ-գերմանական, հայ-ավստրո-հունգարական, հայ-թուրքական և հայ-ռուսական հարաբերությունները, հայերի Մայիսյան հերոսամարտերը, Հայաստանի Հանրապետության ծնունդը, Բաքվի պաշտպանությունում հայերի դերը արտացոլող հիմնահարցերը։

Հիմնահարցը լուսաբանվել է Երևանի, Մոսկվայի, Բուդապեշտի, Վիեննայի ս րիիվներում պահպս նվող փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրման և վերլուծության հիման վրա։ Փաստաթղթերի ճնշող մասը հայտնաբերվել է հեղինակի կողմից և շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։ Աշխատության մեջ լայնորեն օգտագործվել են նաև գիտական ու հուշագրային գրականություն, փաստաթղթերի ժողովածուներ, ժամանակի մամուլը։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Հռչակելով «Ամբողջ իշխանությունը խորհուրդներին» և «Հաշտություն՝ առանց հողագրավումների և ռազմատուգանքների» կարգախոսները, Ռուսաստանի խորհրդային իշխանությունը 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը, որով սահմանվում էր. «1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունը և սուվերենությունը։ 2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ մինչև անջատում և ինքնուրույն պետությունների կազմում։ 3. Բոլոր ազգերի և ազգային-կրոնական արտոնությունների և սահմանափակումների վերացումը։ 4. Ռուսաստանի տարածքում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների և էթնիկական խմբերի ազատ զարգացումը»[1]։

Նոյեմբերի 8 (21)-ին Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը հատուկ հուշագրով ծանուցեց, որ խորհրդային իշխանության հաշտության մասին հռչակագիրը հանդիսանում է բոլոր ճակատներում անմիջապես վինադադար կնքելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկություն։

Անտանտի երկրների կառավարությունները խորհրդային Ռուսաստանի առաջարկությունները չընդունեցին։ Դրանից հետո խորհրդային կառավարությունը դիմեց աշխարհի «բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին» կոչով, որով իր վրա վերցրեց հաշտության բանակցության համար պատասխանատվությունը, սկսեց Անտանտի երկրների դիվանագիտական գաղտնի փաստաթղթերի հրապարակումը։

1917 թ. նոյեմբերի 14 (27)-ին Դվինսկում կայացավ խորհրդային կառավարության ներկայացուցիչներ՝ Գերագույն գլխավոր հրամանատար Կրիլենկոյի և Ռուսաստանի կենագործկոմի անդամ Ա. Իոֆֆեի հանդիպումը գերմանական հրամանատարության ներկայացուցիչների հետ։ Նոյեմբերի 19 (դեկտեմբերի 2)-ին Բրեստ-Լիտովսկում տեղի ունեցավ երկու կողմերի ներկայացուցիչների առաջին նիստը՝ նվիրված ամ-

բողջ ճակատով զինադադարի հարցերին։ Այն ընդգրկում էր և Կովկասյան ճակատը։ Խորհրդային պատվիրակությունը գլխավորում էր Ա. Իոֆֆեն։ Պատվիրակության կազմում էին Լ. Բ. Կամենևը, Գ. Յու. Սոկոլնիկովը, Մ. Ն. Պոկրովսկին, տիկին Բիցենկոն, մեկական բանվոր, գյուղացի, զինվոր, նավաստի։ Գերմանական պատվիրակության ղեկավարն էր գեներալ Հոֆմանը՝ Արևելյան ճակատի շտաբի պետը։ Նոյեմբերի 22 (դեկտեմբերի 5)-ին ստորագրվեց պատերազմի 10 օրով դադարեցման համաձայնագիրը[2]։

Դեկտեմբերի 2 (15)-ին ստորագրված պայմանագրով ռազմական գործողությունները դադարեցվեցին ևս 28 օրով։ Այդ զինադադարը պարտադիր էր բոլոր ռազմաճակատների համար, ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում, ուժի մեջ էր մտնում միաժամանակ և Ասիայում՝ ռուս-թուրքական ռազմական թատերաբեմում, պարտադիր էր բոլոր զորատեսակների և զինված ուժերի համար[3]։

Հանձնարարվում էր Ասիայի ռազմական գործողությունների՝ ռուս-թուրքական ճակատի ռուսական և թուրքական կողմերի գլխավոր հրամանատարների փոխադարձ համաձայնությամբ ստեղծել հանձնաժողով՝ զինադադարի բանակցություններ վարելու և սահմանագծային հարցեր լուծելու համար։ Ելնելով չեզոք Պարսկաստանի «ազատության, անկախության և տարածքային ամբողջականության սկզբունքներից», ռուսական և թուրքական գլխավոր հրամանատարություններին առաջարկվում էր իրենց զորքերը հանել Պարսկաստանից։ Ռուսական կողմից փաստաթուղթը ստորագրել են Ա. Իոֆֆեն, Լ. Կամենևը, Ա. Բիցենկոն, թուրքական կողմից՝ գեներալ Զեքի փաշան, Գերմանիայի կողմից՝ գեներալ Հոֆմանը։ Այսպիսով, զինադադարը վերաբերում էր և Կովկասյան ռազմաճակատին, որտեղ, ինչպես և ամբողջ Անդրկովկասում, տեղի էր ունենում քաղաքական-հասարակական ուժերի նոր վերադասավորում։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի լուրը Անդրկովկասում ընդունվեց ոչ միանշանակ։ «Պետրոգրադի անցքերի» և «Հոկտեմբերյան հեղաշրջման» մասին Անդրկովկասի հատուկ կոմիտեի նախագահ Ե. Գեգեչկորու հաղորդումից և բոլշևիկների, մենշևիկների, սոցիալիստ-հեղափոխականների ներկայացուցիչների ելույթներից հետո, Թիֆլիսի Բանվորների և զինվորների պատգամավորների խորհրդի գործկոմի և խորհրդի հոկտեմբերի 25-ի համատեղ նիստում ընդունվեց մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների առաջարկած բանաձևը՝ «խաղաղ ճանապարհով հեղափոխությանը վերջ տալու» և ամբողջ հեղափոխական դեմոկրատիայի համաձայնության հիման վրա դեմոկրատական իշխանություն ստեղծելու մասին։ Հիմնական խնդիրը համարվում էր սահմանված ժամկետում Սահմանադիր ժողովի հրավիրման հարցը[4]։ Համանման որոշում ընդունվեց և հոկտեմբերի 26 (նոյեմբերի 8)-ին հրավիրված Բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների երկրային խորհրդի նիստում։ Մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների առաջարկած բանաձևը ստացավ 145 ձայն։ Դեմ քվեարկեց 13 պատգամավոր, ձեռնպահ՝ 9։ Բոլշևիկյան բանաձևը, որը առաջադրում էր «արտահայտել լրիվ սատարում, ինչպես միջազգային, այնպես էլ սեփական իմպերիալիստական և հակահեղափոխական բուրժուազիայի ճնշումից, ռուսաստանյան հեղափոխության պաշտպանության գլուխ կանգնած Պետրոգրադի Բանվորների և զինվորների պատգամավորների խորհրդին և նրա հեղափոխական կոմիտեին», ստացավ 16 ձայն, դեմ քվեարկեց 147 պատգամավոր, ձեռնպահ՝ 5։ Հակաբոլշևիկյան որոշում ընդունեց նաև Կովկասյան բանակի բանակային կոմիտեն էրզրումում, 1917 թ. հոկտեմբերի 26-ին[5]։

Տարբեր քաղաքական ուժերի կարծիքները բախվեցին նոյեմբերի 9-ին հրավիրված բանակի երկրային խորհրդի արտահերթ նիստում, որը կայացավ երկրային կենտրոնի, Թիֆլիսի ինքնակառավարման և կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ։ Ակնհայտորեն դրսևորվում էր Անդրկովկասում երկրային նոր իշխանության կազմակերպման, կենտրոնից անկախ գործելու միտումը։ Անդրկովկասյան իշխանության կազմակերպման հիմքը դրվեց Թիֆլիսում նոյեմբերի 11 (24)-ին Հանրային ապահովության կոմիտեի և Բանվորների, զինվորների պատգամավորների խորհրդի կենտրոնի կողմից հրավիրված խորհրդակցությունում, որին մասնակցում էին նաև բանակի շտաբին առընթեր անգլիական և ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները, ԱՄՆ-ի հյուպատոսը։

«Հաշվի առնելով համընդհանուր ճանաչում գտած կենտրոնական իշխանության բացակայությունը և երկրում ծավալվող անիշխանությունը, որը կարող է տարածվել և Անդրկովկասի վրա», խորհրդակցությունը որոշեց մինչև Կովկասից և Կովկասյան ճակատից Սահմանադիր ժողովի պատվիրակների ընտրությունների ավարտը՝ երկրամասի կառավարումը հանձնել Հանրային ապահովության երկրային կոմիտեին՝ կազմված Անդրկովկասի բոլոր հեղափոխական-դեմոկրատական, հասարակական և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից։ Հանձնարարվում էր կոմիտեին «վարել տեղական քաղաքականություն՝ կապ պահպանելով համառուսական դեմոկրատիայի հետ»[6]։

Երկրային կենտրոնը դիմեց «Անդրկովկասի ողջ բնակչությանը» կոչով՝ պաշտպանել նորաստեղծ Հանրային ապահովության կոմիտեն, չգնալ Պետրոգրադի բոլշևիկների հետևից, որոնց գործունեության պատճառով «Ռուսաստանը և հեղափոխությունը ապրում են ճգնաժամային պահ»[7]։

Կենտրոնից անկախ անդրկովկասյան նոր իշխանության կազմակերպման վերաբերյալ որոշումների նկատմամբ երկրամասի բոլշևիկները բռնեցին բացասական դիրք։ Նոյեմբերի 11 (24)-ին ՌՍԴ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն հանդես եկավ հայտարարությամբ՝ պատգամավորների խորհրդի երկրային կենտրոնի ձեռնարկումների դեմ։ ՌՍԴ(բ)Կ երկրային կոմիտեն և նրա մեջ մտնող տեղական կազմա-

կերպությունները, ասված է հայտարարությունում, ամբողջապես կանգնած են Խորհուրդների համառուսական 2-րդ համագումարի և նրա ընտրած լիազոր ժողովրդական կոմիսարների խորհրդի դիրքորոշման վրա[8]։

Անդրկովկասում իշխանության կազմակերպման հարցը վերստին քննարկվեց Գեգեչկորու նախագահությամբ նոյեմբերի 12-ին կայացած Հանրային ապահովության կոմիտեի նիստում, որի աշխատանքներին մասնակցում էին նաև թաթար պատվիրակներ՝ Բաքվից, և Թերեք-Դաղստանյան երկրամասի կառավարության ներկայացուցիչը։

Որոշվեց կառավարության՝ կոմիսարիատի և նրա ազգային կազմը։ Հիմքում դրվեց քաղաքական-ազգային իրական ուժերի համեմատական ներկայացուցչական սկզբունքը։ Այդ ուժերի իրական կշիռը ակնառու դրսևորվել էր 1917 թ. հոկտեմբերին, Անդրկովկասում անցկացված քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ։ Վրացական շրջաններում ընտրվածների մեծամասնությունը մենշևիկներ էին, հայաբնակ վայրերում գերակշիռ մասը դաշնակներ էին։ Թուրքական շրջաններում իրավասուների թվում շատ էին բեգերը, աղալարները, հողատերերը։ Բաթումում, Բաքվում, Կարսում, Ախալցխայում տեղակայված զինվորականները իրավասու էին ընտրել սոցիալիստ-հեղափոխականներին։

Թիֆլիսում, Երևանում, Գանձակում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ախալքալաքում, Ախալցխայում, Նոր-Բայազետում, Գորիսում, Արդվինում, Բաքվում, Բաթումում, Շուշիում, Թելավում, Գորիում, Իգդիրում ընտրվել էր 251 դաշնակցական իրավասու՝ 780 ընդհանուր թվից, Հայ ժողովրդական կուսակցությունից՝ 32 իրավասու։ Երևանում, Ալեքսանդրապոլում, Թիֆլիսում, Ախալցխայում, Նոր-Բայազետում դաշնակցության ներկայացուցիչները ընտրվել էին քաղաքագլուխ և Դումայի նախագահ։

Սոցիալիստ-հեղափոխականները նշված քաղաքներում ստացել էին 124 տեղ, սոցիալ-դեմոկրատ մենշևիկները՝ 204, բոլշևիկները՝ 41։ Քաղաքային դումաներում ընտրվել էին նաև հնչակյան, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների, վրացական ազգային դեմոկրատական կուսակցության, մուսավաթի և այլ կուսակցությունների ներկայացուցիչներ[9]։

«Բազմացեղ Անդրկովկասում» փորձը ցույց էր տվել, որ ազգային գործոնը «արտահայտվում է համարյա բոլոր հարցերում և նույնիսկ ինտերնացիոնալիստական պատմուճան հագած կուսակցությունները մեծ չափով համակված են ազգային ոգով»,— գրում էր «Հորիզոնը»։ Իբրև պերճախոս օրինակ, խմբագրական հոդվածում բերվում էր զեմստվոյի շուրջ հոկտեմբերի 14—15-ին ծավալված պայքարը, որի ժամանակ «բոլոր վրացիները՝ բոլշևիկ, մենշևիկ, սոցիալ-ֆեդերալիստ, նացիոնալ-դեմոկրատ, պրոլետար և իշխան, միացած ձայն տվին ընդդեմ

բոլոր հայ ներկայացուցիչների՝ նույնպես առանց կուսակցական իտրականության»[10]։

Ելնելով իրական վիճակից, Խորհուրդների երկրային կենտրոնի համաձայնությամբ, Հանրային ապահովության կոմիտեն իր հերթական նիստում, նոյեմբերի 15 (28)-ին Թիֆլիսում ստեղծեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասի կոմիսարիատ՝ Պետական Դումայի նախկին անդամ, մենշևիկ Եվգենի Գեգեչկորու գլխավորությամբ, որը միաժամանակ աշխատանքի և արտաքին հարաբերությունների կոմիսարն էր։ Կոմիսարների կազմում հաստատվեցին մենշևիկ Ակակի Ջիբնադզեն՝ ներքին գործերի կոմիսար, սոցիալիստ-հեղափոխականներ Դ. Դ. Դոնսկոյը՝ ռազմածովային գործերի կոմիսար, Ա. Վ. Ներուչևը՝ հոդագործության կոմիսար, դաշնակցություն կուսակցության անդամներ Խաչատուր Կարճիկյանը՝ ֆինանսների կոմիսար, Համո Օհանջանյանը՝ խնամատարության կոմիսար, Գևորգ Տեր-Ղազարյանը՝ պարենավորման գործերի կոմիսար, մուսավաթականներ Խ. Բ. Խասամամեդովը՝ պետական վերահսկողության կոմիսար, Խ. Բ. Մելիք-Ասլանովը՝ հաղորդակցության գործերի կոմիսար, Մահմեդ Ջաֆարովը՝ առևտրի և արդյունաբերության գործերի կոմիսար, վրացական սոցիալ-ֆեդերալիստ Շալվա Ալեքսնե-Մնևսիևը՝ ժողովրդական լուսավորության և արդարադատության գործերի կոմիսար[11]։

Այսպիսով, Անդրկովկասի քաղաքական կուսակցությունները՝ մենշևիկները, սոցիալիստ-հեղափոխականները, կադետները (ժողովրդական կուսակցությո ն), վրացական ֆեդերալիստները, վրացական ազգային դեմոկրատները, դաշնակները, մուսավաթականները, չճանաչելով ժողովրդական կոմիսարների իշխանությունը և կառավարությունը, ստեղծեցին անդրկովկասյան իշխանություն՝ Կոմիսարիատը, որը գործելով կենտրոնից անկախ, իր վրա վերցրեց կառավարական պարտականությունները ամբողջ Անդրկովկասում, մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը և կենտրոնական իշխանության վերջնական ձևավորումը։ Դրանով դրվեց Ռուսաստանից Անդրկովկասի անջատման հիմքը[12]։

1917 թ. նոյեմբերի 18 (դեկտեմբերի 1)-ին «Անդրկովկասի ժողովուրդներին» ուղղված հռչակագրում Անդրկովկասի կոմիսարիատը իշխանությունը իր ձեռքը վերցնելը բացատրում էր նրանով, որ «Լենինի և Տրոցկու գլխավորությամբ ստեղծված ժողովրդական կոմիսարների խորհուրդը» չի ճանաչվել «Ռուսաստանի ժողովուրդների, ինչպես նաև արևմտյան տերությունների կողմից»։ Կոմիսարիատը կազմավորվել է ժամանակավորապես, մինչև Համառուսական Սահմանադիր ժողովի հրավիրումը, կամ ռուսական հանրապետության կենտրոնական, բոլորի կողմից ճանաչված միատարր դեմոկրատական իշխանության ստեղծումը։ Հավաստիացվում էր, որ «իշխանությունը պետք է իրականացվի՝ մշտապես պահպանելով համառուսական ճակատի միավորումը և

հենվելով ժողովրդական մասսաների վստահության և սատարման վրա»[13]։

Կոմիսարիատը խոստանում էր մոտ ապագայում լուծել ֆինանսական, բանվորական, ժողովրդի պարենավորման, հաղորդակցության միջոցների ու արանսպորտի, աշխատանքի ու կապիտալի հարաբերության, հանրային ապահովության, հողային, ազգային, Թուրքիայի հետ անմիջական ուղղակի հաշտության և այլ հրատապ հարցեր։

Հայտարարվում էր, որ հռչակագրին հակառակ ամեն մի գործողություն կդիտվի որպես «ակնհայտ հանցափորձ Անդրկովկասի ժողովուրդների կենսական շահերի նկատմամբ»։ Ջգուշացվում էր. նման ամեն մի քայլ կկանխվի իր իսկ բնում[14]։

1917 թ. սեպտեմբերի 24-ից Թիֆլիսում լույս տեսնող «Ազատամարտ» թերթը Կոմիսարիատի քայլերի մեջ տեսնելով «Կովկասը Ռուսաստանից անջատելու ձգտում», գրում էր. «Այս լարի վրա մուսուլմանական տարրերը շատ ողբերգական եղանակներ կարող են նվագել»[15]։

Հանդես գալով որպես ամբողջ Անդրկովկասի իշխանության մարմին՝ Կոմիսարիատը հաշվի չէր առնում քաղաքական իրադրությունը ամբողջ երկրամասում, մասնավորապես այն հանգամանքը, որ Բաքվում նոյեմբերի 2 (17)-ին Ստեփան Շահումյանի գլխավորությամբ ստեղծվել էր Բանվորների և զինվորների պատգամավորների խորհրդի գործադիր կոմիտե, որը սկսել էր ամբողջ ճակատով պայքար՝ խաղաղ ճանապարհով իշխանությունը նվաճելու համար[16]։

Նման բանաձև ընդունվել էր և Բաքվի խորհրդի 1917 թ. հոկտեմբերի 31-ի նիստում՝ 288 ձայնով, ընդդեմ 78-ի, ձեռնպահ՝ 21։ Բանաձևում ասված էր. «Մնալով խորհուրդների իշխանության անհրաժեշտության և կոալիցիոն կառավարության անվստահության մասին նախկին որոշման դիրքերում, Բաքվի շրջանի Բանվորների և զինվորների պատգամավորների ընդլայնված խորհուրդը Պետրոգրադում և ամբողջ Ռուսաստանում տեղի ունեցող պայքարում որոշակի կանգնում է նոր ժողովրդական իշխանության դիրքերում։ Ի հակակշիռ բուրժուազիայի և կալեդինականների, պաշտպանելով համառուսական մասշտաբով ծնվող նոր կառավարությունը, ընդլայնված նիստը անհրաժեշտ է գտնում իր առաջ դնել խորհուրդների իշխանության տարածման խնդիրը և Բաքվի շրջանում»[17]։ Բաքվի խորհրդի գործկոմը Սաեփան Շահումյանին միաձայն հայտնեց վստահություն և նրան նորից ընտրեց խորհրդի նախագահ։ Եվ դա առավել ևս վկայում է Շահումյանի հեղինակության մասին, քանի որ Բաքվի խորհրդում մեծ ուժ էին կազմում սոցիալիստ-հեղափոխականները, դաշնակները, մուսավաթականները[18]։ Ջհամաձայնելով իշխանությունը Բաքվի խորհրդին հանձնելուն, մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները և սոցիալիստ-հեղափոխականները ստեղծեցին «Հանրային անվտանգության հեղափոխական կոմիտե», որը ղեկավարում էր Թիֆլիսի կենտրոնը[19]։

ՋԻՆԱԴԱՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱԿԱՍՏՈՒՄ. ԹՈՒՐՔ–ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային Ռուսաստանից անջատ գործելու մասին Անդրկոմկաստի կոմիսարիատի հայտարարությունից երկու օր հետո Կովկասյան ճակատի թուրքական զորքերի հրամանատարությունը հանդես եկավ զինադադարի առաջարկությամբ։ 1917 թ. նոյեմբերի 17 (30)-ին Կովկասյան ճակատի ռուսական զորքերի հրամանատար գեներալ Պրժևալսկին ստացավ Կովկասյան ճակատում գործող թուրքական 3-րդ բանակի հրամանատար Ֆերիք Մահմեդ Վեհիբ փաշայի հեռագիրը՝ Անդրկովկասի կառավարության հետ զինադադարի բանակցություններ սկսելու մասին[20]։

Վեհիբ փաշայի հեռագիրը նոյեմբերի 21 (դեկտեմբերի 4)-ին քննարկվեց Անդրկովկասի կոմիսարիատի նիստում, որին մասնակցում էին նաև կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Պրժևալսկին և ճակատի շտաբի պետ գեներալ Լեբեդինսկին։ Կոմիսարիատը անհրաժեշտ գտավ ընդունել թուրքական հրամանատարության առաջարկությունը և դադարեցնել ռազմական գործողությունները ամբողջ Կովկասյան ճակատում։ Հաշտության վերջնական պայմանների ընդունումը Կոմիսարիատը կապում էր Սահմանադիր ժողովի հրավիրման հետ։

Հանձնարարվեց գեներալ Պրժևալսկուն պատասխան հեռագրում շեշտել, որպես անհրաժեշտ պայման, որ թուրքական բանակը չփորձ է անցկացնի զորքերի ռազմավարական վերախմբավորումներ Կովկասյան ճակատում տեղաբաշխված զորքերի հաշվին, որոնք կարող են վտանգել Միջագետքում գտնվող անգլիական բանակը[21]։

Կոմիսարիատը հանդես եկավ «Կովկասի բնակչությանը և բանակին» ուղղված կոչով՝ ստորագրված կառավարության բոլոր անդամների կողմից, ստեղծված իրավիճակի մասին տեղյակ պահեց Թիֆլիսում գտնվող արտասահմանյան երկրների հյուպատոսներին և Միջագետքում գործող անգլիական բանակի հրամանատարությանը[22]։

Անդրկովկասի կոմիսարիատի գործունեությանը հավանություն տվեց խորհուրդների երկրային կենտրոնը, նույն օրը՝ դեկտեմբերի 4-ին Ն. Ժորդանիայի ղեկավարությամբ տեղի ունեցած նիստում։ Սակայն Անդրկովկասի կոմիսարիատի ձեռնարկած քայլերին միաչանակ չէր քաղաքական կուսակցությունների և խմբերի, զինվորականության մոտեցումը։ Դեպքերի ականատես և մասնակից, դաշնակցություն կուսակցության ճանաչված գործիչ Արշակ Ջամալյանը գրում է. Թուրքերի «առաջարկը լուրջ քաղաքական մտավախություն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին հարաբերությունների մեջ մտնելու վտանգը։ Սակայն Անդրկովկասի կոմիսարիատը որոշեց զինադադար կնքել (1917 թ. նոյեմբերի 21-ին) և մենք համակերպվեցինք նրան, այն միտումով, թե անհրաժեշտ է հարևան ժողովուրդների հետ ընթանալ»[23]։

Հաշտության գաղափարը պաշտպանում էին Կովկասյան առանձին բանակային կորպուսի կոմիտեն, Երզնկայի շրջանի զինվորների պատգամավորների խորհրդի, զորագնդային կոմիտեների, բոլշևիկների, մենշևիկների, սոցիալիստ-հեղափոխականների միացյալ ժողովը։ Բանակային կոմիտեին և կենտրոնական խորհրդին հղած հեռագրում արձանագրվում էր, որ զորքը կանգնած է «առանց բռնագրավումների և ռազմատուգանքների, ժողովուրդների ինքնորոշման իրավունքներով հաշտության շեմին»։ Ժողովի մասնակիցները կոչ էին անում չդավաճանել «Հայրենիքի շահերին և ամբողջ ժողովրդի իրավունքին ու բախտին», «չթողնել ռազմական դիրքը՝ մինչև վերջնական հաշտություն»[24]։

Քննարկելով Կոմիսարիատի կոչը՝ թուրքերի հետ անջատ զինադադար կնքելու մասին, 1917 թ. նոյեմբերի 20-ին Երևանում կայացած Հայ զինվորների համառուսական առաջին համագումարը գտավ, որ «մինչև հաշտության կնքումը Հայաստանը չպետք է դատարկվի մեր զորքերից, որովհետև գրավված գավառների պարպումը այն հետևանքը կունենա, որ մեր ժողովրդի մնացորդները կբնաջնջվեն և նրա ազատագրության հարցը վերջնականապես կթաղվի»[25]։

Անդրկովկասի կոմիսարիատին Երևանից հղած հեռագրում համագումարի նախագահությունը շեշտում էր. «Թուրքիայի դարավոր ստրկության տակ գտնվող հայ ժողովուրդը, որ քանիցս իր արյունով փորձել է ազատ գոյության իրավունքներ ձեռք բերել, այսօր կարող է ազատություն ձեռք բերել ռուսական հեղափոխության շնորհիվ»[26]։

Համագումարը հավաստում էր, որ «ազատ Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիան, որ իր ձեռքն է առել հաշտության գործը, ազատության փշոտ ճանապարհն իր հարյուր հազարավոր լավագույն զավակներով ծածկած հայ ժողովրդի բեկորներին չի հանձնի միապետական Թուրքիայի հոշոտմանը և հաշտության լավագույն պայմաններից մեկը կլինի Տաճկահայաստանի լիակատար ինքնորոշումը, թուրքական լծից նրա լիակատար ազատագրումը»[27]։

Հայտնելով մտավախություն, թե ինչպիսի հաշտություն էլ որ լինի՝ անջատ, թե ընդհանուր «արյունաթաթախ Տաճկահայաստանը» կենթարկվի նոր ծանր փորձությունների, «Հորիզոնը», այսուհանդերձ, ողջունում էր զինադադարը և գալիք հաշտությունը՝ «որովհետև քաղքայման դուռը հասած Ռուսաստանի համար երկու չարյաց փոքրագույնը մնացել է հաշտությունը»[28]։ Այլ կարծիքի էին Թիֆլիսի կադետների «Նարոդնայա սվոբոդա» թերթը և նրանց պարագլուխ Ի. Սեմյոնովը։ Նրանց կարծիքով Անդրկովկասի կոմիսարիատը իրագործում էր «Լենինի և Տրոցկու ծրագիրը»։ Հաշտությունը համարելով դավաճանություն, թերթը գրում էր. «Ինչու բոլշևիկներն իրենք կատարեն այդ սև աշխատանքը, քանի որ Ռուսաստանի հանձնարարությամբ այդ դավաճանությունը նրանց փոխարեն կարող են անել մենշևիկները, էսեռներն ու դաշնակցականները»[29]։

Զինադադարի բանակցությունները սկսվեցին 1917 թ. դեկտեմբերի 2 (15)-ին, Երզնկայում։ Զինադադարի պայմանները ստորագրվեցին դեկտեմբերի 5 (18)-ին։ Կովկասյան-թուրքական ճակատում գործող ռուսական բանակի կողմից զինադադարը ստորագրեցին գեներալ-մայոր Ե. Վիշինսկին, զինվոր Ա. Սմիրնովը, պրիվատ-դոցենտ Վ. Թևզայան, 156-րդ Ելիզավետպոլյան գնդի հրամանատարը։ Թուրքական բանակի կողմից՝ 3-րդ բանակի շտաբի պետ գնդապետ Օմար բեյը և շտաբի կապի բաժնի պետը։ Կովկասյան ճակատի համար պարտադիր էին համարվում Խորհրդային Ռուսաստանի և Քառյակ դաշինքի երկրների պատվիրակությունների կնքած զինադադարի պայմանների բոլոր կետերը։ Դեկտեմբերի 5-ից իսկ դադարեցվեցին մարտական գործողությունները ոչ միայն Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափի շրջանները տեղադրված զորքերի միջև, այլև Կովկասյան-պարսկական ճակատում և Սև ծովի վրա։

Պայմաններում նախատեսվում էր հայերի վրա մահմեդականների հարձակումներից ապահովման երաշխիք։ Պայմանների 11-րդ կետում ասված էր. «Թուրքական հրամանատարությունը իր վրա պարտավորություն է վերցնում ձեռք առնել ամեն ջանքեր, որպեսզի ստիպի քրդերին կատարել զինադադարի պայմանները։ Քրդերի քշնամական գործողությունների դեպքում ռուսական զորքերը իրենց սահմանագծում նրանց հանդեպ կվարվեն որպես իշխանությունը չճանաչող ավազակների»։ Պայմաններում նաև ասված էր. «Ռուսական հանրապետության և կենտրոնական տերությունների միջև ընդհանուր զինադադարի կնքման դեպքում նրա բոլոր կետերը կլինեն պարտադիր Կովկասյան ճակատի համար»[30]։

Զինադադարը զինադադար, սակայն Թուրքահայաստանից ստացված լուրերը վկայում էին, որ Հայաստանը և Անդրկովկասը ապրում են ահավոր անակնկալների նախօրյակ։ Մի կողմից ցրտաշունչ ձմեռն ու սովը, մյուս կողմից թուրք-քրդական ավազակախմբերի հարձակումները խաղաղ ժողովրդի, զորապահակների և պարենակիր խմբերի վրա, ռուսական զորքի կողմից մերկացող ու թուլացող ճակատը, թուրքական կառավարող շրջանների դիվանագիտական խաղերը գուշակում էին մոայլ ապագա։

Չհայտարարված պատերազմի վիճակում էին գտնվում նաև Արեշը, Զանգեզուրը, Նոր Բայազետը, Գանձակը և Անդրկովկասի հայաբնակ գյուղերի մեծ մասը։ Այդ շրջանները դարձել էին զինված ավազակախմբերի թալանի, կողոպուտի, անգեն մարդկանց սպանության վայր։ «Ահավոր աղետի առջև» խմբագրական հոդվածում, արդեն դեկտեմբերի 12-ին, «Հորիզոնը» սթափ գրում էր. «Ճիշտ է, հայտարարված է զինադադար և պատերազմական գործողություններ չեն սպասվում, բայց նախ՝ զինադադարը վերջանում է հունվարի 1-ին, և թշնամին մինչև այդ ուժերը հավաքած ու կազդուրված, կարող է անմիջական հարձակման դիմել, եթե իր պահանջները չընդունվեն։ Երկրորդ՝ տաճկական խոսքի ու

խոստումի արժեքը հանրածանոթ է, դեռ բոլորի հիշողության մեջ է, որ Բալկանյան պատերազմի զինադադարի միջոցին, էնվեր փաշան դրժելով իր խոստումը՝ գրավեց անպաշտպան մնացած Ադրիանուպոլիսը. Ի՞նչ երաշխիք, որ վաղը նույնը չի կրկնվի և մեր ճակատում։ Ո՞վ է ապահովում, որ թուրքերը, հանկարծ, օգտվելով մեր ժամանակավոր տկարությունից՝ հարձակման չեն դիմի ու չեն փորձի խլել մեզանից Երզնկան ու Կարինը»։ Պատրվակներ միշտ կարելի է հնարել, շարունակում էր «Հորիզոնը», արդեն խոսում են, որ տաճիկները իբրև հաշտության պայման պահանջում են, որ Կարսը, Ալեքսանդրապոլը, Արդահանը ու Բաթումը իրենց հանձնեն։ Անհավանական չէ, որ զինադադարի ժամանակը լրանալուց առաջ, թե հետո էնվեր-Թալեաթյան կառավարությունը կփորձի օգտվել կացությունից և իր ուժերը հավաքելով՝ գրոհ տա Հայաստանի վրա, որպեսզի ոչ միայն Տաճկահայաստանը ետ խլեն, այլև տեր դառնան Ռուսաստանի և Վրաստանի մեկ կարևոր մասի։

«Վերին աստիճանի խանգարված մտքի տեր պետք է լինել այս ամենը չնկատելու համար և, դժբախտաբար, մենք այդ չենք նկատում կամ ավելի ճիշտ, թուլամորթորեն փակում ենք մեր աչքերը գալիք ահավոր վտանգի առջև», գրում էր «Հորիզոնը», ընդգծելով՝ «Մեր քաղաքիս կամքը թուլացած է, և չենք զգում, թե ինչ զարհուրելի աղետի առջև ենք կանգնած։ Չենք ըմբռնում, որ վաղը Կովկասին էլ բաժին է ընկնելու Տաճկահայաստանի չարաղետ ճակատագիրը և մեր երկիրը ոտքի կոխան է դառնալու բարբարոս ու մարդկային կերպարը կորցրած հորդաների»[31]։ Կովկաս հասած հավաստի լուրերից ակնհայտ էր դառնում, որ Թուրքիան, իբրև հաշտության պայման, պահանջում է ռուս-թուրքական սահմանը գծել մինչ 1878 թ. պատերազմի վիճակով։ Դա նշանակում է, որ Ռուսաստանը պետք է Թուրքիային վերադարձներ ոչ միայն Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթները, այլև Կարսը, Արդահանը, Ալեքսանդրապոլը, Բաթումը, Թուրքիային կցվեր Ռուսահայաստանի և Վրաստանի մի մասը։ Էնվեր-Թալեաթ-Ջեմալ եռյակի քաղաքական տենչանքների մեջ մտնում էին ռուս-թուրքական նոր սահմանները անցկացնել Ալեքսանդրապոլ-Արդահան-Բաթում գծով։ Եվ այդ այն դեպքում, երբ Տաճկահայաստանի կեսից ավելին գրավված էր ռուսական զորքի կողմից։ Սակայն Ռուսաստանը թուրքերի համար համարվում էր պարտված կողմ։ Ինչպես գրում է Ս. Վրացյանը, «ոչ առանց հիմքերի կմտածեն, որ Ռուսաստանը անուժ կլինի դիմադրելու և ստիպված կհանձնե թուրքերին ոչ միայն Երևանի, Կարսի և Բաթումի նահանգների մի մասը, այլ դեռ անդին»։ Բացահայտելով թուրքական հավակնությունները, Վրացյանը շարունակում է. «պատերազմի ընթացքին և դեռ առաջ, թուրք պետական գործիչներն առանց կասկածի տեղ թողնելու ցույց տվին, որ իրենք ձգտած են վերացնել մեջտեղից այն քրիստոնյա ազգաբնակչությունը, որ կղզիացել է Օսմանյան կայսրության մահմեդական ծովի մեջ։ Տաճկահայ ժողովրդի գաղափարային բնա-

ջնջումը այդ քաղաքականության հետևանքն էր. Նույն քաղաքականությունը կրանեցնեն թուրքերը և նորանվաճ Ռուսահայաստանում և Վրաստանում, որպեսզի ավելի ամուր թելերով կապվեն ասիական մահմեդական զանգվածների հետ։ Համիսլամությունը, որ հետևորդներ ունի ոչ միայն էնվեր-Թալեաթի երկրում, կբերի հավաքական կամ անհատական բնաջնջում և այլ քրիստոնյաների համար, որոնք կանցնեն տաճիկների ձեռքը։ Առանց տատանվելու կարելի է ասել, որ եթե Կարսն ու Բաթումը անցնեն թուրքերին, այդ շրջաններում ապրող ամբողջ քրիստոնյա ազգաբնակչությունը ստիպված կլինի տեղահան լինել ու հեռանալ։ Հայկական սարսափներից հետո և ոչ մի հայ չի մնա տաճկական անարգ ու արյունոտ լծի տակ»։ Կառավարության և ժողովրդի առաջ դրվում էր հրատապ հարց. «ամրապնդել ռազմաճակատը և զենքով պաշտպանել մեր երկիրը»[32]։

Կառավարությանը և ժողովրդին նախազգուշացնող մեկ փաստ ևս. «Տաճիկները կձգտեն Կովկասում ներքին բարդություններ առաջ բերելով հաշտություն կնքել, իրենց համար ձեռնտու պայմաններ ստեղծել։ Բնավ տարօրինակ չէ, ուրեմն, և այն ենթադրությունը, որ տաճիկ գործակալներն աշխատում են պղտորել դյուրահավատ մասսայի մտքերը և խրախանացնել ավազակային շարժումները՝ ծառայեցնելով նրանց իրենց օգտին։ Եվ, անշուշտ, նրանք կանգ չեն առնի ամեն հրեշավոր ոճիրների առաջ, անգամ թե՛ գրգռելով ժողովուրդը, թե՛ հորինելով ու տարածելով սարսափելի լուրեր, ինչպես Ջաքաթալայում, ուր բաց էր թողված Երևանում թուրքական կոտորածի ստահոդ լուրը»[33]։

Ճակատից ռուսական բանակի հետ քաշվելու հետևանքով թուրքական հակահայկական գործունեության ակտիվությունը, տաճկահայության մարտիրոսացումը պերճախոս փաստերով վեր հանվեցին Թիֆլիսում կայացած Կովկասյան բանակային համագումարում։ Երզնկայից նոր վերադարձած Ա. Ջամալյանը բացահայտեց տաճկական կառավարության տնտեսական, կրոնական, քաղաքական սոսկալի հալածանքներն ու բռնությունները, այն խաղերը, որ խաղացել է տաճկահայության ճակատագրում միջազգային դիվանագիտությունը։ «Սկսել են լուրեր շրջել հասարակության մեջ, թե Ռուսաստանում մտադիր են հաշտություն կնքել կենտրոնական պետությունների հետ, առանց ապահովելու տաճկահայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, մի իրավունք, որ սրբագրված է ռուսական հեղափոխության առաջին իսկ օրվանից։ Թե այդ լուրերը ինչքան մտատանջություն պետք է պատճառեն տաճկահայերին, այդ հասկանալի է նրանց ցավին տեղյակ մարդու համար»,— ասաց Ջամալյանը։

Հանդես գալով համագումարի 1917 թ. դեկտեմբերի 23-ի նիստում՝ Շահումյանը հայտնեց այն միտքը, թե Կովկասի բոլշևիկները խորապես համոզված են, որ ժողովրդական կոմիսարների խորհուրդը ոչ մի պարագայում չի դավաճանի ոչ մի փոքր ժողովրդի, և նմանապես

բազմատանջ տաճկահայ ժողովրդի շահերը։ Նա համոզված ասում էր. ազգային ինքնորոշման սկզբունքը մեկն է այն նվիրական սկզբունքներից, որոնցից ռուսական հեղափոխությունը չի կարող հրաժարվել՝ առանց իրեն ժխտելու։ Անդրադառնալով ռուսական զորքի նահանջի հետևանքով տաճկահայերին սպառնացող վտանգին, Շահումյանը գտնում էր. բանակային խորհուրդը պետք է ձեռնարկի ամեն միջոց՝ թուրքահայերի ապահովության համար։ Համագումարը միաձայն ընդունեց բոլշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների առաջադրած բանաձևը, որում հայտնում էր իր համակրանքը բազմատանջ հայ ժողովրդին և արտահայտում խորին համոզում, որ «Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիան չի հրաժարվի իր հիմնական սկզբունքներից մեկից՝ ազգերի ինքնորոշման իրավունքից և մասնավորապես չի թույլ տա, որ տաճկահայերի իրավունքը ոտնահարվի»։ Սրա հետ միասին, համագումարը կոչ է անում բանակային խորհրդին՝ «դիմել զորքին, որ նա չմերկացնի ճակատը, քանի դեռ հաշտություն չի կնքված և իսկույն ձեռք առնել գործնական միջոցներ, որպեսզի այս վտանգավոր և հուզումնալից ժամանակաշրջանում Տաճկահայաստանի ժողովուրդը նոր բնաջնջման չենթարկվի»։ Համագումարը գտավ, որ «Պատերազմող պետությունների համաշխարհային խորհրդաժողովում պետք է ներկա լինեն և հայ դեմոկրատիայի ներկայացուցիչները»[34]։ Իր խոսքն ասաց և Հայոց Ազգային խորհուրդը։ Խորհրդի մտքերն ու խոհերը արտահայտված էին Փարիզ՝ Պողոս Նուբարին 1917 թ. դեկտեմբերի 25-ին գրված նամակում։ Այն ստորագրել էին խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը և խորհրդի անդամ, քարտուղար Ն. Ադբալյանը։

Տեղեկացվում էր Ազգային պատվիրակությանը, որ 1) Ռուսական բանակի կողմից Կովկասյան ճակատի լման պայմաններում, Ազգային խորհուրդը դիմում է արտակարգ միջոցների՝ պաշտպանելու համար հայկական երեք ազատագրված գավառները, ինչպես և Կովկասը, 2) Ազգային խորհուրդը արդեն կազմակերպում է ազգային զորաբանակ՝ գեներալ Նազարբեկյանի հրամանատարությամբ. թուրքահայերը կազմում են առանձին զորամասեր, մի քանի հազար մարդուց բաղկացած ոստիկանություն է կազմակերպվում Հայաստանում՝ պաշտպանելու համար տեղական ազգաբնակչությանը, 3) Վրացիների հետ սկսվել են լուրջ բանակցություններ իրական և հիմնարար համաձայնություն ստեղծելու Կովկասյան ճակատի միաբան պաշտպանության համար, հայը և վրացին հավասարապես ներշնչված են լավագույն իղձերով։ Ազգային «ընկճված ոգին բարձրացնելու համար անհրաժեշտ է ճանաչել Հայաստանի լիակատար ինքնավարությունը դիվանագիտության որոշումով, որ պիտի ստորագրեն և անմիջապես հռչակեն Համաձայնության պետությունները և կառավարությունները, քանի որ Ռուսիան արդեն պաշտոնապես ճանաչել է ազգերի ինքնորոշման իրաւունքը»։

Ձեռնարկված միջոցների իրականացման համար Ազգային խորհուրդը դնում էր նաև Անտանտի երկրներից նյութական և զինվորական օգնություն ստանալու անհրաժեշտության հարցը, նկատի ունենալով, որ «Հայ ազգը, ջարդված և ավերված պատերազմից, ի վիճակի չէ մենմենակ կրելու բոլոր ծախսերը»[35]։

Դաշնակիցների կարծիքը արդեն հայտնի էր։ Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարիատի խորհրդի 1917 թ. նոյեմբերի 9-ի որոշմամբ հաստատված պատվիրակությունը, որի կազմում էին կոմիսարի պաշտոնակատար գեներալ Լ. Տիգրանյանը (կոմիսար գեներալ Հակոբ Բագրատունին բանտարկված էր ռազմա-հեղափոխական կոմիտեի կողմից և ժողովրդական կոմիսար Անտոնովի հրամանով ազատված Պետրոգրադի զինվորական օկրուգի գլխավոր հրամանատարի պաշտոնից)[36], փոխգնդապետ Ն. Մելիք-Փարսադանյանը, ժամանակավոր կառավարությունում Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Հակոբ Զավրիյանը, նոյեմբերի 10-ին և 11-ին ոչ հուսադրող հանդիպումներ էր ունեցել Ռուսաստանում Ֆրանսիայի դեսպան Նուլանսի, Պետրոգրադում Ֆրանսիական, անգլիական, ամերիկյան զինվորական առաքելությունների ղեկավարներ, գեներալներ Նիսսելի, Քնոքսի, Ջյուջսոնի հետ։

Պատվիրակության այցելությունների նպատակն էր դաշնակից երկրների ներկայացուցիչների հետ պարզել, կարելի՞ է հուսալ կարեկցական վերաբերմունք Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի կառավարությունների կողմից հայկական զինվորական միավորներ կազմավորելու գործում. կարեկցական վերաբերմունքի դեպքում կգա՞ն, արդյոք, դաշնակիցները հայերին օգնության. ինչու՞ կարող է արտահայտվել օգնությունը. կարելի՞ է արդյոք հուսալ օգնություն՝ դրամով, հաշվի առնելով Ռուսաստանի իրավիճակը և հայկական զորամիավորումների կազմավորման համար ռուսական գանձարանից անհրաժեշտ վարկ ստանալու հնարավորության բացակայությունը։

Ֆրանսիական դեսպանի պատասխանի էությունը հետևյալն է. ներկայումս Ռուսաստանի վիճակը այնքան անհուսալի է, որ հայերը պետք է հույս դնեն բացառապես իրենց սեփական ուժերի վրա, հակառակ դեպքում նրանց «սպասում է վերջնական կործանում. Ֆրանսիան միշտ պատրաստ է պաշտպանել հայերին այդ գործում, քանզի անկախ Հայաստանի ստեղծումը մտնում է նրա ցանկությունների շրջանակների մեջ։ Ֆրանսիան կարող է ցույց տալ ինչպես բարոյական, այնպես էլ նյութական օգնություն, բայց դրա համար հարկավոր է, որպեսզի հայերի մոտ կազմակերպվի ազգի վստահությունը վայելող և Հայկական կառավարության պարտականությունները իրականացնող ինչ-որ պատասխանատու մարմին, որպեսզի իմանանք, ում հետ պետք է խոսել և պայմանավորվել»։

Դրամը չի կարող տրվել ավելի վաղ, քան Անգլիայի կառավարությունը կխորհի բոլոր հարցերի մասին. այդպիսին էր անգլիական գե-

ներալ Քնոքսի պատասխանի էությունը։ «Գեներալը բավականին կտրուկ պատասխանեց, որ չի կարող գրպանից հանել միլիոնավոր ռուբլի, ռազմամթերք և բաժանել։ Նա ձգտում էր լինել սիրալիր, սակայն չէր կարող չնկատել, որ պատվիրակության առաջարկությունները գնահատում էր անբավարար՝ դաշնակիցների շահի առումով և որ, ըստ երևույթին, կարող էր խոսել ավելի որոշակի, եթե առկա լիներ լավ կազմակերպված գործ։ Երևում էր, որ նա կասկածում էր պատվիրակության քայլերում՝ ստանալ մեծ փողեր, առանց երաշխիքի հասցնել գործը մինչև բավարար ավարտի»,— ասված է 1917 թ. նոյեմբերի 20-ին կազմված հուշագրում՝ ստորագրված պատվիրակության բոլոր անդամների կողմից։

Առավել կոնկրետ էր ամերիկյան զինվորական առաքելության ղեկավար գեներալ Ջյուջսոնի պատասխանը։ Նա կարծում էր, որ ոչինչ ձեռնարկել չի կարելի մինչև ռուսական կառավարական իշխանության կարգավորման հարցի լուծումը։ Հայերը միայն իրենց ուժերով չեն կարող դիմադրել, եթե ռուսական զորքերը թողնեն թուրքական ճակատը։ Ռուսաստանի տարածքով հայերի մատակարարումը անհնարին է և երկաթուղային հաղորդակցության խանգարման պատճառով, Հնդկաստանի և Պարսկաստանի վրայով հեռավորության պատճառով, և այն պատճառով, որ Միջագետքում անգլիացիները ունեն ընդամենը 150 հազարանոց զորք։

Այսպիսով ակնհայտ էին Անտանտի երկրների վերացական խոստումները, կոնկրետ օգնության բացակայությունը, Հայաստանի՝ Ռուսաստանից անջատման մղումը[37]։

Իրենց մոտեցումներն ունեին հայ քաղաքագետները։ Նրանք կանգնած էին Կիլիկիայի և հայկական վեց նահանգների միացումով անկախ Հայաստան ստեղծելու տեսակետի վրա՝ Միջերկրական ծովի Ալեքսանդրետ, Սվաս, մինչև Մերսին տարածվող նավահանգստով։ Նոր Հայաստանը պետք է լինի ինքնավարման հիման վրա, անկախ պետություն, Շվեյցարիայի նման հավիտենական չեզոքությամբ։ Արտահայտելով այս միտքը Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության խորհրդի նիստում, 1917 թ. հոկտեմբերի 22-ին, հայկական խմբի ներկայացուցիչ Ջիվելեգովը հայտարարեց. «Ռուսաստանը հիմք չունի կասկածելու Հայաստանի կողմից բանսարկությունների, որովհետև հայ ժողովուրդը կհուսա, որ եթե ռուսական դեմոկրատիան կասի, թե Տաճկահայաստանը պետք է ազատ լինի, այդժամ այդ բանը իր հզոր ձայնով ընդմիշտ կամրապնդի բարոյական կապը Տաճկահայաստանի և Ռուսահայաստանի հետ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ իր և ռուսական ժողովրդավարական հանրապետության հետ»[38]։

Հայկական հարցի քննարկումը շարունակվում էր տարբեր ոլորտներում. այն արծարծվեց նաև Բրեստ-Լիտովսկում սկսված հաշտության բանակցություններում։

ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

Հաշտության բանակցությունները մի կողմից խորհրդային Ռուսաստանի, մյուս կողմից Քառյակ դաշինքի երկրների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի միջև՝ գերմանական զորքերի կողմից գրավված Բրեստ-Լիտովսկում, սկսվեցին 1917 թ. դեկտեմբերի 9 (22)-ին և անցնելով 3 փուլ, ավարտվեցին 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ին։

Ընդունելով Ռուսաստանի համար Բրեստի պայմանագրի պարտադրվածությունը և պայմանների ստորացուցիչ լինելը, խորհրդային պատմագրությունը գլխավոր ուշադրությունը դարձրել է հաշտության քաղաքական գնահատականի վրա, բնորոշելով այն որպես իմպերիալիզմից խլված անհրաժեշտ դադարի անհրաժեշտ պահ՝ նորաստեղծ խորհրդային իշխանության ամրապնդման համար։ Պատմագրությունը չի անդրադարձել մի շարք խնդիրների, որոնք հետագայում ճակատագրական եղան առանձին ժողովուրդների կյանքում։

Մասնավորապես, կենտրոնում հրատարակված աշխատություններում հետազոտողները շրջանցել են Հայաստանին և Անդրկովկասին վերաբերող փաստաթղթերն ու նյութերը, «մոռացության» տվել Բրեստում քննարկման առարկա դարձած Հայկական հարցը, որի «լուծումը» խաղաց չարաղետ դեր հայ ժողովրդի ճակատագրում։ «Արևելա-անատոլիական գավառներ» ձևակերպմամբ և Գերմանիայի ճնշմամբ, հոգևարքի հասած Օսմանյան կայսրությանը «վերադարձվեցին» Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի օրենքներով Թուրքիայից ազատագրված հայկական վաղնջական հողերը, զորքերը դուրս հանվեցին նաև ռուսական կայսրության մաս կազմող Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերից, հայկական տարածքը բռնակցվեց Թուրքիային։ Դա Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլյացիան էր ոչ միայն գերմանական իմպերիալիզմի, այլև պանթուրքիզմի առաջ։ Դրանով հայ ժողովուրդը անօգնական մնաց թուրքական բիրտ ուժի դեմ՝ մեն-մենակ։ Հետազոտություններում չեն քննարկվել խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի դիվանագիտական հարաբերությունները, չեն հիշատակվել խորհրդային և թուրքական պատվիրակությունների (տարբեր փուլերում ղեկավարել են Ա. Ա. Իոֆֆեն, Լ. Դ. Տրոցկին, Գ. Յու. Սոկոլնիկովը (խորհրդային Ռուսաստան), Թալեաթ փաշան, Նեսիմի բեյը, Հաքքը փաշան (Թուրքիա)) համատեղ նիստերն ու հարցադրումները, նրանց վավերագրերը, հպանցիկ են արծարծվել թուրքական թալանչիական նկրտումները և գերմանական սատարումը, խորհրդային հանրապետության կառավարության զիջումները։ Արձանագրվել է միայն վերջնական արդյունքը. 1918 թ. մարտի 3-ին մի

կողմից Խորհրդային Ռուսաստանի, մյուս կողմից Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի միջև կնքված պայմանագրերով Թուրքիային անցան Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերը։

Փաստի արձանագրումով են բավարարվել նաև Բրեստի հաշտության պատմության առաջին վերջին հետազոտողները՝ մոսկվացի պատմաբաններ Ա. Վ. Պանցովը, Ի. Ն. Քսենոֆոնտովը։ Անվերապահորեն վստահելով հաշտության բանակցությունների առաջին և երկրորդ փուլերում ռուսական պատվիրակության անդամ Լ. Բ. Կամենևի՝ կենտրոնական գործադիր կոմիտեի, բանակի զորացրման համառուսական հանձնաժողովի և Պետրոգրադի խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 19-ի համատեղ նիստում հրապարակված տեղեկություններին և հապճեպ եզրակացություններին, Պանցովը «Վոպրոսի իստորիի» ամսագրում հրապարակած ծավալուն հոդվածում բերել է Կամենևի զեկույցի հետևյալ տողերը. «Եթե Գերմանիան դեռ բոլորովին չի կորցրել իր ժողովրդին նոր ռազմական արկածախնդրության տանելու հույսի հնարավորությունը, ապա Թուրքիան և մյուս պետությունները վերջնականապես հրաժարվել են այդ մտքից»[39]։

Ա. Պանցովը գրել է. «Մարտի 1-ին խորհրդային պատվիրակությանը հանձնվեց հաշտության պայմանագրի պայմանների վերջնական տեքստը, ավելի ծանր, քան պարունակում էր փետրվարի 22-ի հուշագիրը. նրանում ավելացված էր Ռուսաստանի Արդահան, Կարս և Բաթում օկրուգների՝ Թուրքիային բռնակցման պահանջ։ Մարտի 3-ին հաշտության պայմանագիրը ստորագրվեց։ Միայն դրանից հետո Գերմանիայի գլխավոր հրամանատարությունը հրաման արձակեց Ռուսաստանում ռազմական գործողությունների դադարեցման մասին»[40]։ Իսկ որ Կովկասյան ճակատում, Թուրքերը անում էին հակառակը, Թուրքական հրամանատարությունը արձակեց հարձակման հրաման, զորքերը շարժեց դեպի Արևելք, այդ մասին ոչ մի խոսք։

Բրեստում ռուսական և թուրքական հանձնաժողովների աշխատանքի մասին հպանցիկ նշումից այն կողմ չի անցել Ի. Քսենոֆոնտովը։ Նշելով, որ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրի պատմագրությունը պարունակում է «սպիտակ բծեր», այն լուսաբանվել է պարզունակ, նախօրոք գծագրված սխեմայով, 1991 թ. հրապարակած «Հաշտություն, որը ցանկանում էինք և որը ատում ենք» աշխատությունում Քսենոֆոնտովը տալիս է շատ խոստումներ, մասնավորապես, հավաստելով ընթերցողներին բացահայտել Բրեստ-Լիտովսկի բռնագավթումային պայմանագրի կնքման և վավերացման համար բոլշևիկների պայքարի դրամատիզմը։ Ավելին, նա հավաստում է, որ «սուր իրադրությունների լուսաբանման ժամանակ» նյութերը շարադրվում են «ժամ առ ժամ, նույնիսկ րոպեներով»[41]։

Հայաստանը և Անդրկովկասը, սակայն, դուրս են մնացել հեղինակի տեսադաշտից, ըստ երևույթին, Քսենոֆոնտովի համար դրանք չէին մտնում «սուր իրադրությունների» շրջանակների մեջ։ Դրանց մասին չի

հիշատակվում ոչ միայն «ժամ առ ժամ ու րոպե առ րոպե», այլև ընդհանրապես։ Իսկ Քսենոֆոնտովին չէր կարող հայտնի չլինել, որ Թուրքիային բռնակցված հայկական տարածքների ոչ հեռավոր անցյալում, ընդամենը մի քանի ամիս առաջ, պատկանում էին Ռուսական կայսրությանը. ժամանակավոր կառավարության որոշումով այնտեղ ստեղծվել էր ընդհանուր նահանգապետություն, 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունվել էր Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի հրովարտակը «Թուրքահայաստանի մասին»։

Խորհրդային պատմաբանները անվերապահորեն հավատացել են նաև բանակցությունների առաջին փուլում խորհրդային պատվիրակության ղեկավար Ա. Իոֆֆեի տեղեկություններին և հապճեպ, անհիմն եզրակացություններին, հենվել նրա մտքերի վրա, կրկնելով դրանք։

Իոֆֆեն հավաստում էր, որ Բուլղարիան և Թուրքիան Բրեստ-Լիտովսկում գրեթե ոչ մի դեր չեն խաղացել։ Նրա կարծիքով, չնայած բանակցությունները ընթանում էին Ռուսաստանի, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի, Ռուսաստանի և Բուլղարիայի, Ռուսաստանի և Թուրքիայի միջև, «քաղաքական նշանակություն ունեին առաջինները»[42]։ Եվ պատահական չէ, որ Լ. Դ. Տրոցկու առաջաբանով և Ա. Իոֆֆեի վերջաբանով ու ծանոթագրություններով 1920 թ. հրապարակված «Հաշտության բանակցությունները Բրեստ-Լիտովսկում» սղագրված հաշվետվությունը ընդգրկում է միայն բոլոր պատվիրակությունների մասնակցությամբ կայացած լիագումար նիստերի և Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի պատվիրակությունների մասնակցությամբ կայացած քաղաքական հանձնաժողովի նիստերի սղագրությունները։ Դրանում տեղ չի գտել ռուս-թուրքական հանձնաժողովների բանակցությունների չորս նիստերի ոչ մի փաստաթուղթ, ինչպես նաև հաշտության պայմանագրի թուրքական պայմանների նախագիծը և 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ին կնքված ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագիրը։

Ա. Իոֆֆեն գրում է. «Մենք չենք տեղադրել սույն հաշվետվության մեջ Բուլղարիայի և Թուրքիայի հետ արձանագրությունները այն պատճառով, որ քաղաքական առումով դրանք կարևոր նշանակություն չունեն»[43]։

Բրեստում թուրքական գործոնի, խորհրդա-թուրքական հարաբերությունների նման գնահատականը դիվանագետի կողմից ոչ միայն անհեթեթ է, այլև պատմական ճշմարտության կեղծիք, նահանջ պատմականությունից, հրաժարում պատմության անաչառ շարադրանքից։

Միանգամայն հակառակն են հաստատում Կամենևի՝ վերոհիշյալ «Հայտնագործությունից» 5 օր առաջ ռուս-թուրքական պատվիրակությունների բանակցությունների առաջին նիստում՝ 1917 թ. դեկտեմբերի 15 (28)-ին ռուսական պատվիրակությանը, ի դեմս Իոֆֆեի ու Պոկրովսկու, հանձնված հաշտության թուրքական պայմանները, որոնք տպագրվել

են Կենտգործկոմի «Իզվեստիա» և ոչ պետական «Ռուսսկիե վեդոմոստի» թերթերում[44]։

Աննախադեպ հանդգնությամբ հագեցած նախագիծը՝ «Օսմանյան և ռուսական կառավարությունների համաձայնությունը, որի հետևանքը հանդիսանալու է հաշտությունը և հավերժ եղբայրությունը», պարունակում էր թալանչիական ամբարտավան բնույթի մի քանի կոնկրետ կետեր։ Ստորև բերվում են հիմնական պայմանները.

Ռուսական բանակը էվակուացվում է և Օսմանյան կայսրության քաղաքացիական ու զինվորական իշխանություններին վերադարձնում պատերազմի ժամանակ ռուսների գրաված Օսմանյան կայսրությանը պատկանող Ասիական բոլոր գավառները։

Ելնելով դրանից՝ Ռուսաստանը պարտավորվում է մինչև պատերազմը գոյություն ունեցած սահմանից հանել նշված շրջաններում գտնվող բոլոր զորքերը և քաղաքացիական հիմնարկները՝ սույն պայմանագրի ստորագրման պահից 6—8 շաբաթվա ընթացքում։

150 կամ ավելի կիլոմետր երկայնքով սահմանը պաշտպանելու համար Ռուսաստանը պահում է մեկ դիվիզիա, զորացրում է բանակը և այն ուղարկում երկրի խորքը։

Ռուսաստանը պարտավորվում է գլխովին ցրել ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Օսմանյան գրավված շրջաններում գտնվող ռուսահայերից և թուրքահպատակ հայերից բաղկացած զինված ջոկատները։

Ռուսաստանը չի անցկացնում մեկ դիվիզիայից ավելի քանակով իր զորքերի կենտրոնացում ոչ սահմանի շրջակայքում, ոչ Անդրկովկասում, նույնիսկ վարժությունների համար, մինչև համընդհանուր հաշտության կնքումը։ Նման կենտրոնացման անհրաժեշտության դեպքում՝ ներքին անվտանգության խախտման առումով, անհրաժեշտ է Քառյակ միությանը զգուշացնել ժամանակին։ Հակառակը, իր մյուս հակառակորդների դեմ պատերազմը ստիպված շարունակող Թուրքիան պետք է իր բանակը պահի ռազմական վիճակում։ Ռուսական նավատորմիղը Սև ծովում պետք է զորացրվի։

Պատերազմում փաստորեն պարտված, բայց գերմանական հովանու տակ գլուխ բարձրացրած Թուրքիայի թելադրող «Պայմանները» ռուսական պատվիրակության կողմից հակահարված չստացան։ Դրանք նույնիսկ չքննարկվեցին։ Տպագրելով թուրքական պայմանները, Կենտգործկոմի պաշտոնաթերթ «Իզվեստիան» բավարարվեց տողատակում նշելով. այդ «Պայմանները» ռուսական պատվիրակությունը չի քննարկել և այն կցվել է նյութերին»։

Դրան հակառակ, թուրքական «Պայմանները» առաջացրին ռուսական հասարակայնության զայրույթը և վրդովմունքը։ «Ռուսսկիե վեդոմոստի» թերթը գրում էր. «Ռուսաստանի համար ստորացուցիչ և կործանարար են Գերմանիայի առաջադրած անջատ հաշտության պայմանները։ Սակայն նույնիսկ դրանց անամոթությունը խամրում է այն առաջարկությունների համեմատ, որոնք արվել են Ա. Իոֆֆեին և ընկ. Պոկ-

րովսկուն թուրքական պատվիրակների կողմից։ Պատերազմում պարտված Թուրքիան պահպանում է իր բանակը ռազմական վիճակում և հնարավորություն է ստանում լայնարձակ Ռուսաստանից նվաճել այն ամենը, ինչ ցանկալի է էնվերին և նրա համախոհներին»։ Եվ ապա. «Հանուն ազատ ինքնորոշման, ռուսները պետք է հանեն իրենց բոլոր ռազմական ուժերը Հայաստանից և Պարսկաստանից, սակայն ազատ ինքնորոշված հայկական ջոկատները պետք է անհապաղ զորացրվեն, նրա համար, որպեսզի Թուրքահայաստանի սպանդից մազապուրծ ամբողջ հայ բնակչությունը անդիմադիր հանձնվի պատվազրկման և բնաջնջման իրենց նախկին պարոնայք բռնապետներին։ Դա խելագարի զառանցանք չէ։ Դա պաշտոնական փաստաթուղթ է հանձնված ընկ. Իոֆֆեին և ընկ. Պոկրովսկուն և ծայրաստիճան դժվար է ենթադրել, որ թուրքերը այստեղ գործել են առանց գերմանացիների իմացության։ Ամենայն հավանականությամբ Քյուլմանը և Չերնինը օգնություն են խոստացել «ծեծված թուրքերին»[45]։

Ռուսական պատվիրակության անդամների բարեհոգության պատճառը, ըստ երևույթին, հանդիսացել էին բանակցությունների առաջին լիագումար նիստի (1917 թ. դեկտեմբերի 9(22) նախագահողի պատվին արժանացած Բեռլինում Թուրքիայի դեսպան Հակկը փաշայի դրվատանքի խոսքերը՝ ռուսական կառավարության հասցեին, որը «արիություն ունեցավ ամբողջ աշխարհին հայտարարելու մարդասիրության սկզբունքները»[46]։ Նրանք շոյված էին նաև ընդհանուր բանակցությունների առաջին փուլում և ռուս-թուրքական պատվիրակությունների 1917 թ. դեկտեմբերի 15 (28)-ին կայացած առաջին համատեղ նիստում խորհրդային պատվիրակների գործունեությանը տված Հակկը փաշայի շողոքորթ գնահատականով։ Փաշան ասել է. «Ես իմ պարտքն եմ համարում շնորհակալություն հայտնել ռուսական պատվիրակությանը, որը հանդես բերեց անկեղծություն և մեծ գործնական իմաստ։ Ռուսական պատվիրակները ցույց տվեցին, որ լինելով դեմոկրատներ, նրանք միաժամանակ հանդիսանում են հիանալի դիվանագետներ ու փորձված պետական գործիչներ»[47]։

Վերլուծելով բանակցությունների առաջին փուլի արդյունքները, «Ռուսսկիե վեդոմոստին» Հակկը փաշայի ճառը բնորոշեց որպես «շողոքորթ հաճոյախոսությունների հեղեղ» «Իոֆֆեի և նրա բազմերանգ կամպանիայի ինքնասիրության համար»[48]։

Մինչդեռ, Գերմանիայի արտաքին գործերի նախարար, Բրեստ-Լիտովսկում գերմանական պատվիրակության ղեկավար բարոն Քյուլմանը, Տրոցկու վկայությամբ, չէր կասկածում ռուսական պատվիրակության «դիվանագիտական անօգնականությանը»[49]։ Նույն Քյուլմանի բնորոշմամբ, Հակկը փաշան «Եվրոպայի լավագույն դիվանագետն էր»[50], իսկ պատվիրակության անդամ, գեներալ Հոֆմանի վկայությամբ՝ «Ոչ սովորական, ճարպիկ և բնածին դիվանագետ»[51]։

Իոֆֆեի բնորոշմամբ Հագգը փաշան աչքի էր ընկնում նրանով, որ «իսկական կինոդերասանների նման կարող էր լացել իսկական արցունքներով, եթե ցանկանար»[52]: Ահա և Թալեաթի բնութագիրը. «Մեծ վեզիր Թալեաթ փաշան ձգտում էր շահել մեր համակրանքը, հիշեցնելով, որ ինքը ևս հեղափոխական է»[53]:

Դեպի Բրեստ Թուրքիան եկել էր մեթոդապես պատրաստված, դաշնակիցներին «մշակելով», նոր համախոհներ գտնելու ձեռնարկումներով: Ռուսաստանում ինքնակալության տապալումից անմիջապես հետո, «Թանին» թերթի խմբագրի հետ ունեցած հարցազրույցում «կողմնորոշվելով», Թալեաթն ասել է. «Եթե ռուս ժողովուրդը հրաժարվի նվաճողական պահանջներից, որին հետամուտ էր ցարական իշխանությունը, այն ժամանակ արևելքի ժողովուրդների համար կբացվի զարգացման և առաջընթացի նոր դարաշրջան»: Սակայն «Միլյուկովը խոսելով պատվավոր հաշտության մասին, առաջ է քաշում Թուրքահայ հարցի լուծումը հօգուտ Ռուսաստանի: Ջգիտենք, թե արդյոք համամիտ են Ռուսաստանի ազատամիտ շրջանները ագրեսիվ քաղաքականության այդ տարօրինակ վարպետություններին և եթե ռուս ժողովուրդը պետք է ղեկավարվի իր գործողություններում ցարական իշխանության այդ կորստաբեր ժառանգությամբ, այն ժամանակ անտեղի կլիներ խոսել հաշտության մասին»:

Խեղաթյուրելով փաստերը, Թալեաթը շարունակում է. «Մենք երբեք ագրեսիվ դիտավորություններ չունենք որևէ երկրի նկատմամբ, Թուրք ժողովուրդը երկու և կես տարվա ընթացքում անխնա թափել է իր արյունը և ուստի հարցը կարող է լուծվել հօգուտ Թուրքերի»: «Թուրքիան և Ռուսաստանը դարերի ընթացքում մահացու թշնամիներ են եղել և թշնամության պատճառը գտնվում է բացառապես Ռուսաստանի նպատակների մեջ՝ գրավել մեր երկիրը»[54],— հայտարարում է մեծ վեզիրը: Այդպես էլ թուրքական դիվանագետները ներկայացնում էին ամբողջ աշխարհին:

Ավստրո-գերմանական սատարման երաշխիքը Թուրքիան ապահովել էր Քյուլմանի և Գերմանիայում Օսմանյան կայսրության դեսպան Հագգը փաշայի, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմիի Բեռլինում կայացած նախաբրեստյան բանակցությունների, բանավեճերի, տեսակետների ճշտման ժամանակ: Իբրահիմ Հագգը փաշան, արդեն 1917 թ. դեկտեմբերի 10-ին, Բրեստի հաշտության բանակցությունները սկսելուց 12 օր առաջ, Կոստանդնուպոլիս՝ արտաքին գործերի նախարարությանը ուղղված հեռագրով տեղեկացնում էր Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆոն Քյուլմանի դիրքորոշումը՝ Քառյակ դաշինքի տերությունների՝ Ռուսաստանի հետ առանձին բանակցություններով հաշտություն կնքելու մասին: «Երբ բոլորս մեր պահանջներին տիրապետենք, այն ժամանակ բոլորի մասնակցությամբ պետք է ստորագրվի հաշտության պայմանագիր,— հայտնում էր Հագգը փաշան,— բնականաբար, պետք է հարգվեն մեր միջև գոյություն ունեցող համաձայնագրերը»:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմիի 1917 թ. դեկտեմբերի 12-ի հեռագրով Հագգը փաշային տրվում էր նոր հրահանգավորում. «Առանձին բանակցություններ վարելը խիստ անընդունելի է. 1) Մեր թշնամիների և մեր դաշնակիցների հետ առանձին-առանձին բանակցությունների մեջ մտնելու եղանակը խիստ կդժվարացնի շահի և վնասի հատուցման լուծումը և բազմաթիվ բարդություններ ծագման պատճառ կդառնա: 2) Երբ նկատի ունենանք հողային կացությունը, կտեսնենք, որ Օսմանյան պետությունը միակն է, որի երկրի մի կարևոր մասը (Հիջազ, Իրաք, Պաղեստին, Արևելյան նահանգներ) գտնվում է թշնամու ձեռքին: 3) Բացի սրանից, միայն օսմանցիներն են, որ հարկադրված են լուծել նեղուցների և կապիտուլյացիաների հարցերը»:

Նեսիմիի հարցադրումները գերմանական և ավստրիական կողմի հետ քննարկելուց հետո Հագգը փաշան դաշնակիցների կարծիքը հայտնում է բարձր դռանը: Դրանից հետևում է, որ, որպեսզի Քյուլմանի առաջ քաշած սկզբունքը «ռուսական հարցում օսմանյան պետությանը չվնասի, որոշեցինք հետևյալ պարագաները՝ Գերմանիան ստանձնում է պետության հողի ամբողջականությունը և սուլթանության բոլոր իրավունքների պաշտպանությունը: Ռուսական հարցում, օսմանյան պետության վնասից խուսափելու համար, ստանձնած լինելով մեր հանդեպ պարտականություններ, Գերմանիան և Ավստրիան պետք է պաշտպանեն մեր շահերը: Եթե արծարծվի նեղուցների հարցը, Գերմանիան պետք է այն նկատի թե՛ իրեն, թե՛ Ավստրիային շահագրգռող հարց: Այս հարցերի վերաբերյալ բանակցություններին Գերմանիայի և Ավստրիայի պատվիրակները ևս պետք է մասնակցեն: Բոլոր հարցերը լուծված, ոչ մեկը անջատ հաշտություն չպետք է կնքի»:

Հարցերը ավելի հստակեցվեցին Բեռլին ժամանած Ահմեդ Նեսիմիի և Քյուլմանի միջև կայացած բանակցությունների ժամանակ: Դեկտեմբերի 20-ին Նեսիմին Բարձր դռանը գոհունակությամբ հայտնում էր. Քյուլմանը գտնում է, որ «Ռուսների կողմից գրավված հողերի պարպումի և կապիտուլյացիայի վերաբերյալ բանակցություններին Գերմանիայի և Ավստրիայի պատվիրակները կմասնակցեն: Նշանակում է, որ Գերմանիան ընդունում է մեր հողամասերի պարպումի, կապիտուլյացիայի, համաձայնությունների, հանձնառությունների և բացարձակ իշխանության վերաբերյալ հարցերը: Քյուլմանի հետ խոսեցի այն հողերի մասին, որոնք նախկին օսմանյան-ռուսական պատերազմում (1877—1878— Հ. Ա.) իբրև ռազմական հատուցում հանձնվեցին ռուսներին: Ասաց, թե շատ գոհ կլինենք եթե կարողանանք այդ կորզել: Բայց շատ դժվար է»:

Հագգը փաշայի դեկտեմբերի 15-ի և Ահմեդ Նեսիմի բեյի դեկտեմբերի 20-ի հեռագրերը Թուրքիայի նախարարների խորհրդում քննարկելուց հետո արտաքին գործերի նախարարի տեղակալ Հալիլ բեյը (Մեն-

(Բեռլի) դեկտեմբերի 22-ին հեռագրեց Բեռլին՝ կայսրության դիրքորոշման մասին։ Թուրքերը պնդավոր հարց էին համարում «Գերմանիայի և Ավստրիայի ձեռքում գտնվող հողերի պարպումից առաջ ապահովել ռուսների ձեռքում գտնվող հողերի պարպումը»[58]։

Թուրքերը օգտագործում էին բոլոր միջոցները, այդ թվում և անձնական կապերը։ «Հենց հիմա ինձ մոտ եկավ Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթ փաշան։ Նա մտադրված է Գերմանիայի հետ միջադեպի դեպքում առաջ մղել ինձ, իսկ ինքը՝ մնա հետին պլանի վրա»[86]։— գրել է օրագրում Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Օտտոկար Չերնինը։ Մեկ այլ ոչ աննշան «մանրուքի» մասին գրում է գեներալ Էրիխ Լյուդենդորֆը. «Գերմանիայում զինվորական լիազոր, գեներալ-լեյտենանտ Զեքի փաշան՝ անվանի Թուրքը և Հոֆմանի մերձավոր ընկերը, արտակարգ տակտով և համոզիչ պաշտպանում էր իր բանակի շահերը։ Կոստանդնուպոլսում գերմանական ներկայացուցիչ Ֆոն Լոսսովը՝ էնվերի անձնական բարեկամը, հատկապես քաջ ծանոթ էր Թուրքական կարգուկանոնին։ Մենք, բնական է, հաճախ դիմում էինք նրանց»[87]։

Թուրքիայում գերմանական զինվորական առաքելության ղեկավար գեներալ (Թուրքական մարշալ) Լիման ֆոն Սանդերսի համհարզ Կարլ Մյուհլմանը հավաստում է, որ 1917 թ. դեկտեմբերին Ռուսաստանի հետ զինադադար կնքելուց հետո Թուրքական պետական գործիչները որոշեցին, որ հասել է դաշնակից Գերմանիայի առջև իրենց քաղաքական պահանջների առաջ քաշման, բանակցությունների մեջ գերմանական պետք էր զինվորական հրամանատարությանը ներգրավելու պահը։ Այդ պահանջները արտահայտված էին նաև Թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ, գերմանական գեներալ Սեկտի՝ Բեռլին հղած փաստաթղթում, որտեղ էնվեր փաշայի հանձնարարությամբ։ «Թուրքիան Բրեստում իր ներկայացուցիչներին հանձնարարել է հաշտության բանակցություններ ժամանակ առաջ քաշել հետևյալ պահանջները. 1. Որպես ռազմական ծախսերի փոխհատուցման վճար՝ ժամանակին Ռուսաստանին տրված Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի վերադարձ։ 2. Կովկասյան ինքնուրույն պետության ճանաչում։ 3. Ներքին գործերի մեջ ամեն տեսի խառնվելուց հրաժարում։ Ռուսաստանը, իր նոր կառավարության հռչակած ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին համապատասխան, պետք է ճանաչի այդ իրավունքը նաև կայսրության մուսուլման ժողովուրդների համար։ Ընդ որում, նկատի է առնվում և Կազանը, Օրենբուրգը, Թուրքեստանը, Բուխարան»։ Գեներալ Մեկտը խնդրում էր «պաշտպանել Թուրքական այդ ցանկությունները հաշտության բանակցություններում»[88]։

Թուրքական կողմի պահանջը գերմանական գերագույն զինվորական հրամանատարությունը և արտաքին գործերի գերատեչությունը օգտագործեցին Բրեստ-Լիտովսկում ընթացող բանակցություններում ռուսական կողմի վրա ճնշում գործադրելու համար։ Գեներալ Մեկտին հղած հեռագրում գեներալ Լյուդենդորֆը գրում էր. «Ես կողմնակից, ըստ

հնարավորության, նաև ուժեղ ճնշում քաղաքական առումով»[59]։ Մի ուրիշ անգամ նա գրում էր. «Թուրքիան պահանջում էր Բաթումը և Կարսը, քանի որ երկու քաղաքն էլ երկար ժամանակ եղել են թուրքական կայսրության կազմում։ Մեզ համար այդ ցանկությունը ուներ երկրորդական նշանակություն, սակայն նրանց սատարումը համապատասխանում էր դաշինքի պայմաններին»[60]։

Գեներալ Հոֆմանը, ռայխսկանցլեր Հերտլինգի մոտ գումարված խորհրդակցությունում, 1917 թ. դեկտեմբերի 7-ին, այն միտքն է հայտնում, որ «Գերմանիան պետք է ռուսներին սեղմի Ասիայում»[61]։ Վիլհելմ 2-րդը իր հերթին գտնում էր, որ պետք է Թուրքերին օգնել Հայաստանում[62]։

Նման նախապատրաստական աշխատանքից հետո Թուրքերի առջև բացված էր «կանաչ ճանապարհ»։ Այդպես եկան նրանք բանակցությունների առաջին նիստին։

Բանակցությունների այս փուլում խորհրդային պատվիրակության կազմում էին Ա. Ա. Իոֆֆեն (նախագահ), Լ. Բ. Կամենևը, Ա. Ա. Բիցենկոն, Մ. Ի. Պոկրովսկին, Լ. Մ. Կարախանը (քարտուղար)։ Մ. Վ. Պավլովիչը (Վելմանն) պատվիրակության քաղաքական խորհրդականն էր։

Գերմանական պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործերի նախարար — պետական բարտուղար Ֆոն Քյուլմանը, որը մինչ այդ Գերմանիայի դեսպանն էր Թուրքիայում։ Տրոցկու բնորոշմամբ, նա դաստիարակվել էր «պրուսական-բիսմարկյան դիվանագիտական դպրոցում և քանի որ կասկած չուներ ռուսական դիվանագիտության անօգնականության մեջ, պատրաստել էր իրավաբանական և քաղաքական հարմար բանաձևեր իմպերիալիզմի համաշխարհային քաղաքականության առաջ պրոլետարական հեղափոխության կապիտուլյացիայի համար»[63]։ Պատվիրակության կազմում էին արևելյան ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Հոֆմանը, դեսպանորդ Ֆոն Ռոզենբերգը, իրավունքի դեպարտամենտի տնօրեն Կրիգեն։ Ավստրո-Հունգարական պատվիրակությունը ղեկավարում էր արտաքին գործերի նախարար կոմս Օտտոկար Չերնինը, բուլղարականը՝ արդարադատության նախարար Պոպովը։ Թուրքական պատվիրակության ղեկավարը մեծ վեզիր Թալեաթ փաշան էր։ Պատվիրակության կազմում էին արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմի բեյը, նախկին մեծ վեզիր, այդ ժամանակ սենատոր և Բեռլինում Թուրքիայի դեսպան Հագգը փաշան։

Բանակցությունների առաջին նիստը բացեց գեներալ-ֆելդմարշալ արքայազն Լեոպոլդ Բավարացին, որը նիստի ղեկավարությունը հանձնելով «ավագ» հորջորջված Հագգը փաշային, հեռացավ դահլիճից։ Վերջինս արևելյան ղիվանագիտության զինանոցից քաղած շողոքորթությամբ ռուսական պատվիրակներին ողջունելուց հետո լիագումար նիստի նախագահությունը հանձնեց Քյուլմանին։

Արդեն առաջին լիագումար նիստում, աշխատակարգի քննարկման ժամանակ, բարոն ֆոն Քյուլմանի հոգածությամբ հաղթեց Թուրքական կողմի ցանկությունը՝ բանակցությունների հրապարակայնությունը

սահմանափակելու վերաբերյալ։ Պատրվակը՝ «ամենօրյա բաց վեճի չենթարկել բանակցությունների առանձին հիմնավորումներ և դարձվածքներ», քանզի Հագգը փաշայի արտահայտությամբ, «բաց փողոցում նման քննարկումը բանակցությունների հաջողությունները կդարձներ կասկածելի»[64]։

Ռուսական, գերմանական և ավստրո-հունգարական պատվիրակությունների (քաղաքական հանձնաժողով) առաջին նիստում, դեկտեմբերի 9 (22)-ին Իոֆֆեն հրապարակեց խորհրդային պատվիրակության հիմնադրույթները՝ հաշտության պայմանների մասին։ Ըստ նրա, չի թույլատրվում պատերազմի ժամանակ գրավված տարածքի բռնակցում, այդ տարածքները գրաված զորքերը այդ տեղից դուրս են հանվում կարճ ժամկետում, լրիվ վերականգնվում է պատերազմի ժամանակ ինքնուրույնությունը կորցրած ժողովուրդների քաղաքական ինքնորոշումը։ Մինչև պատերազմը քաղաքական ինքնուրույնությունից չօգտվող ազգային խմբերին տրվում է այս կամ այն պետությանը պատկանելու կամ հանրաքվեի միջոցով իր պետական իշխանությունը ազատ որոշելու հնարավորություն։ Հանրաքվեն պետք է կազմակերպվի այնպես, որպեսզի ապահովվի տվյալ տարածքի ամբողջ բնակչության լրիվ ազատ քվեարկությունը՝ չբացառելով վտարանդիներին։ Մի քանի ազգություններով բնակեցված տարածքում փոքրամասնության կուլտուր-ազգային ինքնուրույնության իրավունքի ապահովում՝ ընդհուպ մինչև վարչական ինքնուրույնության հատուկ օրենքով պաշտպանություն, առավել ուժեղ ազգերի կողմից թույլ ազգերի անուղղակի ճնշման, այդ թվում և տնտեսական շրջափակման արգելում։

Դեկտեմբերի 14 (27)-ի նիստում հրապարակված պայմանագրի ռուսական պայմաններում աներկբայորեն ասված էր. «Ռուսաստանը հանում է իր զորքերը Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Պարսկաստանի իր գրաված մարզերից, իսկ Քառյակ դաշինքի տերությունները՝ Լեհաստանից, Լիտվայից, Կուրլանդիայից»[65]։ Արևմտյան Հայաստանից ռուսական զորքերի դուրս բերելը, առանց Օսմանյան կառավարության կողմից թուրքահայերի ազգային ինքնորոշման ճանաչման և իրականացման, նշանակում էր հայ ժողովրդի կենսական շահերի զոհաբերում, հայերի նոր սպանդ։

Խորհրդային պատվիրակության հարցադրումը բխում էր առանց բռնազավթումների հաշտություն կնքելու, գրաված շրջաններից զորքերի դուրս բերման լենինյան դրույթներից[66], որոնք առաջ էին քաշվել 1917 թ. սկզբներից մինչև հոկտեմբեր արտասանած ճառերում, զեկուցումներում, հրապարակած հոդվածներում։ Լենինը ընդգծում էր, որ «վելիկոռուսները բռնության չեն պահի ոչ Լեհաստանը, ոչ Կուրլանդիան, ոչ Ավստրիան, ոչ Ֆինլանդիան, ոչ Հայաստանը, ընդհանրապես ոչ մի ժողովրդի»[67]։ Հաշտության պայմաններ առաջադրելով, գտնում էր Լենինը, բոլշևիկները պարտավոր են «իսկույն ևեթ բավարարել ուկրաինացիների և ֆինլանդացիների պահանջները, ապահովել նրանց, ինչպես

և բոլոր այլ ցեղերին Ռուսաստանում լիակատար ազատություն, ընդհուպ մինչև անջատվելու ազատությունը, այդ նույնը կիրառել ամբողջ Հայաստանի նկատմամբ, պարտավորվել Հայաստանից և մեր գրաված թուրքական հողերից դուրս բերել զորքերը և այլն»[68]։

Իշխանությունը գրավելուց հետո, գրում էր Վ. Ի. Լենինը, խորհուրդները պետք է ասեն. «Գերմանիա, դուրս քշիր զորքերդ Լեհաստանից, Ռուսաստան, դուրս քշիր զորքերդ Հայաստանից, այլ կերպ վարվելը կլինի խաբեությամբ զբաղվել»[69]։ Մի կողմից, ստացվում էր հայ ժողովրդի ինքնորոշման, ինքնուրույն զարգացման իրավունքի պաշտպանում, մյուս կողմից, թուրքական ճակատից և Հայաստանից ռուսական զորքերի հեռացումով Ասիայի ժողովուրդներին ապացուցվում, որ «ռուս ժողովուրդը ոչ միայն խոսքով է հայտարարում հաշտություն առանց անեքսիաների՝ ազգությունների ինքնորոշման հիման վրա, այլ որ ռուս բանվորն ու գյուղացին գործով կանգնում են բոլոր ճնշված ժողովուրդների գլուխ, որ նրա համար իմպերիալիզմի դեմ պայքարը դատարկ ցանկություն չէ, և ոչ էլ հանդիսավոր ֆիլիստերական ֆրազ, այլ հեղափոխության կենսական շահը»[70]։

Լենինի մտքերը հավաքական արտահայտություն ստացան 1917 թ. նոյեմբերի 27 (դեկտեմբերի 10)-ին գրած «Հաշտության վերաբերյալ բանակցությունների ծրագրի կոնսպեկտում»[71]։

1) Տվյալ պատերազմող երկրի կազմի մեջ մտնող յուրաքանչյուր (ոչ տիրապետող) ազգի համար ազատ ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատման և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ճանաչում։
2) Ինքնորոշման իրավունքը իրագործվում է ինքնորոշվող մարզի ամբողջ բնակչության հանրաքվեի միջոցով։
3) Ինքնորոշվող մարզի աշխարհագրական սահմանները որոշվում են այդ և սահմանակից մարզերի դեմոկրատորեն ընտրված ներկայացուցիչների կողմից։
4) Ազգի ազատ ինքնորոշման իրականացումը երաշխավորող նախնական պայմաններն են.
   ա) զորքերի դուրս բերումը ինքնորոշվող մարզի սահմաններից.
   բ) գաղթականների, ինչպես նաև պատերազմի սկզբից՝ իշխանության կողմից մարզից վտարված բնակիչների տեղավորում այդ մարզում.
   գ) ինքնորոշվող ազգի դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչներից տվյալ մարզում ժամանակավոր վարչության ստեղծումը՝ բ կետը կյանքում կիրառելու իրավունքով (ի միջի այլոց).
   դ) բանակցող կողմերի ժամանակավոր վարչությանն առընթեր հանձնաժողովների ստեղծումով՝ փոխադարձ վերահսկողության իրավունքով։

Ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքներից բխող նման մոտեցումը կարող էր առարկայական ուժ ստանալ միայն միջազգային

իրավունքի պաշտպանության առկայությամբ։ Սակայն Թուրքիան ժողովուրդների ազգային ինքնորոշման հարցը դիտում էր որպես իր պետության ներքին գործ, ժխտելով ազգային հարցի գոյությունը ընդհանրապես։

Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը Թալեաթ և Էնվեր փաշաների նման միակողմանի էին ընկալում նաև Քյուլմանն ու Չերնինը։ Քյուլմանի 1917 թ. դեկտեմբերի 12 (25)-ի հայտարարությունից երևում է, որ «Քաղաքական ինքնուրույնություն չունեցող ազգերի այս կամ այն պետություններին պատկանելության հարցը չի կարող վճռվել միջազգայնորեն»։ Քյուլմանի և Չերնինի կարծիքով այն յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է վճռվեր պետության կողմից, ժողովուրդների հետ, սահմանադրությամբ նախատեսված ճանապարհով[72]։

Վերլուծելով այդ հայտարարությունը, «Ռուսսկիե վեդոմոստին» նկատել էր դրա հեռահար նպատակը. «Քանի թուրքական, ավստրո-հունգարական և գերմանական կայսրությունների սահմանադրությունները չեն ճանաչում ճնշված ժողովուրդների անջատման, թեկուզ և ինչ-որ չափով լայն ինքնավարության իրավունքը, ապա հայերը, արաբները, հույները... և այլ ազգություններ պետք է մնան այն վիճակում, որում եղել են պատերազմից առաջ»[73]։

Ավստրո-հունգարական բանաձևի դեմ հանդես էր գալիս և ռուսական «Դեն» թերթը։ Նա հաղորդում էր. «Հ.Հ. Դաշնակցությունը ծայր աստիճան դժգոհ է, որ ռուսաց պատվիրակությունը հաշտության մասին բանակցություններ է վարում ճնշված ազգերի վիճակը կարգավորելու համար պաշտոնական Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությամբ, այն Թուրքիայի, որի ճակատին խայտառակության կնիք դրոշմվեց հայ ժողովրդի նկատմամբ իր կատարած ոճիրների համար։ Կուսակցությունը վճռապես բողոքում է գերմանական պատվիրակության այն տեսակետի դեմ, որով նա ցարդ մերժում է ազգային խնդիրների լուծման միջազգային եղանակը և մատնանշում սովորական «սահմանագրական ուղին»։ Կուսակցությունը պնդում է, որպեսզի ճնշված ազգերի, մասնավորապես հայ ժողովրդի, ինքնորոշման հնարավորությունը ապահովվի նախքան հաշտության բանակցությունների ավարտը։ «Հակառակ պարագային,— ասված էր հաղորդագրության մեջ,— հաշտության նախնական պայմանները, զորքերի հանումը և մասնակի զորացրումը սպառնում են ոչ միայն ոչնչացնելու հայերի ինքնորոշման իրավունքը, այլև վերջնական կործանման հասցնելու նրանց»[74]։

Ազգային կուսակցությունների, «Ռուսսկիե վեդոմոստի» և «Դեն» թերթերի մտահոգությունը անտեղի չէր։ Դա ցույց է տալիս այն իրարանցումը, որ առաջացել էր Քառյակ տերությունների պատվիրակությունների շրջանում ռուսական պատվիրակության առաջարկության առիթով, մասնավորապես Ահմեդ Նեսիմիի 1917 թ. դեկտեմբերի 26-ի հեռագիրը Բարձր Դռանը, ռուսական առաջարկությունների նրա մեկնաբանությունը, թուրք-գերմանական համաձայնեցված գործողությունները։ Մեկնաբանելով ռուսական պատվիրակության ծրագիրը, Նեսիմին տեղյակ է պահում Բարձր Դռանը, որ «բանակցությունների ընթացքում ռուսները առաջարկում են հանրաքվե անցկացնել Արևելյան Անատոլիայում, որը նրանք Հայաստան են անվանում։ Նրանց պատասխան է տրվում, թե օսմանյան պետությունում այդպիսի հարց գոյություն չունի, ներքին հարցերն էլ լուծվում են բստ սահմանադրության»[75]։

Դեկտեմբերի 14 (27)-ի և 15 (28)-ի քաղաքական հանձնաժողովի նիստերում Քյուլմանը հրապարակեց հաշտության պայմանագրի նախագծի գերմանական պայմանները։ Դրանցում դեռևս շրջանառության մեջ չէր դրվել գերմանական գլխավոր հրամանատարության առաջ'ն գործերի գերատեսչության ներկայացուցիչ Լերսների 1917 թ. դեկտեմբերի 16-ի հեռագիրը՝ արտաքին գործերի գերատեսչությանը, որում խոսվում էր Բուխլինում՝ ռայխսկանցլեր Հերտլինգի մոտ դեկտեմբերի 6—7-ին կայացած խորհրդակցությունից հետո[76] գեներալ Լյուդենդորֆի դիրքորոշման մասին։ Լյուդենդորֆը արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը հրահանգավորել էր հաշտության բանակցություններ վարելիս առաջ քաշել «ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչումը, Ռուսաստանի կողմից Ֆինլանդիայի, Էստոնիայի, Լիֆլանդիայի՝ Արևելյան Գալիցիայի և Հայաստանի պարպումը»[77]։ Գերմանական պայմանները ուսումնասիրելու համար Իոֆֆեի առաջարկությամբ բանակցությունները 10 օրով ընդհատվեցին։

Ամփոփելով բանակցությունների առաջին փուլի արդյունքները, Իոֆֆեն գրել է. «Առաջին շրջանում հաշտության բանակցությունները կրում էին խաղաղասեր և արտաքնապես նույնիսկ բարեկամական բնույթ։ Խորհրդային պատվիրակությունը ենթադրում էր, որ հանուն ընդհանուր դեմոկրատական հաշտության իր պայքարը կհեշտանա ստնջատ բանակցություններով, քանի որ նրա առաջ քաշած և հռչակած հաշտության սկզբունքները հավասարապես ընդունելի և հավասարապես համակրելի էին ամբողջ աշխարհի աշխատավորների համար։

Խորհրդային կառավարությունը, նույն ժամանակ, իհարկե, առանձնապես նկատի ուներ, որ երկու աշխարհայացքների միջև Բրեստ-Լիտովսկում ծավալված պայքարը հեղափոխական ներգործություն կունենար ամբողջ աշխարհի և, առաջին հերթին Միջին Եվրոպայի պետությունների վրա»[78]։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանակցությունների առաջին փուլի արդյունքները 1917 թ. դեկտեմբերի 26 (1918 թ. հունվարի 7)-ին քննարկվեցին Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի նիստում։ Զեկուցողը Լ. Տրոցկին էր։ Նա էլ

նշանակվեց երկրորդ փուլում բանակցությունները վարող ռուսական պատվիրակության նախագահ։ Խոսելով խաղաղության հարցում Ժողկոմխորհում և ՌՍԴ(բ)Կ Կենտկոմում եղած տարաձայնությունների մասին, Տրոցկին, 1919 թ. գրում էր. «Տարաձայնությունները սկսվեցին «ինչպես վարվել վերջնագրի դեպքում» հարցից։ Ընկ. Լենինը հարցը դնում էր կոնկրետ։ Ոչ մի դեպքում բանակցությունները չհասցնել մինչև խրզման, քանի որ մենք չենք կարող շարունակել պատերազմը, ապա թույլատրելի չէ խաղալ պատերազմի հետ։ Կուսակցության փոքրամասնությունը, հակառակը, բանակցությունների խզումը համարում էր պարտադիր, կողմնակից էր հարձակմանը պարտիզանական պատերազմով պատասխանելուն։ Վերջապես, կար հոսանք, որը համարում էր ռազմական դիմադրությունը անհնար, միաժամանակ գտնում էր, որ պետք է բանակցությունները հասցնել բացահայտ խզման մինչև գերմանացիների նոր հարձակումը և դրանով իսկ պոկել ինսինուացիայի և կասկածների ուղի տակի հողը, իբր բանակցությունները հանդիսանում են արդեն կատարված գործարքի պարտակում։ Այդ ագիտացիոն փաստարկը թվում էր վճռական սուն տողերի հեղինակի համար»[79]։

Բանակցությունների երկրորդ փուլը սկսվեց 1917 թ. դեկտեմբերի 27-ին (1918 թ. հունվարի 9-ին) և շարունակվեց մինչև 1918 թ. հունվարի 28-ը (փետրվարի 10)։ Առաջին փուլի պատվիրակության անդամներից բացի, խորհրդային պատվիրակության կազմում մտնում էին նաև ազգային հարցերի գծով խորհրդականներ Կ. Ռադեկը, Պ. Ստուչկան, Վ. Միցկևիչ-Կապսուկաս, Ս. Բորիսևիչը։ Որպես խորհրդական, Լենինի ստորագրությամբ մանդատ ստացել էր և Վահան Տերյանը։ Պատրաստվեցին նյութեր «Հայկական հարցի» վերաբերյալ՝ բանակցությունների ընթացքում ներկայացնելու համար[80]։

Գերմանական, ավստրո-հունգարական և բուլղարական պատվիրակությունների կազմում փոփոխություն չկար։ Թուրքական պատվիրակության կազմում մտցվել էին նաև հեծելազորի գեներալ Ահմեդ Իզզեթ փաշան, կապիտան Հուսեին Ռաուֆ բեյը։ Բանակցություններին մասնակցում էին Ուկրաինայի պատվիրակությունը՝ Վ. Շախրայ, Ի. Մեդվեդև, Ուկրաինական կենտրոնական ռադայի պատվիրակությունը՝ պետական քարտուղար Գոլուբովիչի գլխավորությամբ։

Երկրորդ փուլի առաջին նիստը բացեց Թալեաթ փաշան, նախագահություն հանձնելով Քյուլմանին։

Այդ փուլում շոշափվեց և Հայկական հարցը, մասնավորապես Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերի պատկանելության հարցը, քննարկվեցին ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները և գերմանական պայմանները։ Մինչ այդ, գերմանացիների առաջարկած 16 կետերից 14-ը ընդունվել էին։ Չէին ընդունվել առաջին և երկրորդ կետերը, որոնք վերաբերում էին տարածքային և բանակի գորացրման հարցերին։ Առաջին իսկ լիագումար նիստում ռուսական պատվիրակության ղեկավար, Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Լ. Տրոցկին հավաստեց Խորհրդային կառավարության հետևողականությունը ազգերի ինքնորոշման իրավունքի պաշտպանության հարցում[81]։

«Խաղաղությանը անկեղծ ձգտում է նա, ով պատրաստ է անել անհրաժեշտը ազգային ինքնորոշման իրավունքի իրագործման գծով»,— հայտարարեց Տրոցկին, արձանագրելով, որ Ռուսաստանը իր վերաբերմունքը գործին ցույց է տվել Ֆինլանդիայի, Հայաստանի և Ուկրաինայի մասին հրովարտակներում[82]։ Պատվիրակության պարտքը Տրոցկին համարեց «լմանալ պարզ և հստակ» միավորված 4 պետությունների հետ հաշտության հնարավորությունը՝ առանց բռնության լեհերի, լիտվացիների, էստոնացիների, հայերի և մյուս ժողովուրդների նկատմամբ, որոնց ռուսական հեղափոխությունը իր կողմից ապահովում է «լրիվ ինքնորոշման իրավունք, առանց որևէ սահմանափակումների և առանց որևէ հետին մտքի» և որոնց ճակատագրի հարցում բանակցությունների ժամանակ դրսևորվեցին «խոր տարաձայնություններ երկու կողմերի միջև[83]»։

1917 թ. դեկտեմբերի 28 (1918 թ. հունվարի 10)-ի երեկոյան նիստում առարկելով Քյուլմանին, որն առաջարկում էր աշխատանքները սկսել տնտեսական հարցերի քննարկումից, Լև Տրոցկին հայտարարեց. բանի չեն քննարկվել և լուծվել ազգային ինքնորոշման և տարածքային հարցերը, մասնավորապես «Լեհաստանի, Լիտվայի, Կուրլանդիայի և Հայաստանի ճակատագրի հարցը», նպատակահարմար չէ քննարկել տնտեսական հարցեր[84]։

Տրոցկու հարցադրումից հետո անմիջապես դրսևորվեց Գերմանիայի և նրա դաշնակիցների գործունեության մեխանիզմը, Քյուլմանի դիվանագիտական արվեստը։ Քյուլմանը առաջինը առարկեց Հայկական հարցը, որպես այդպիսին, քննարկման առարկա դարձնելուն։ «Ռուսական պատվիրակության պարոն նախագահը մտցված հարցերի թվում, որը նա համարեց ազգային, նշեց նաև Հայկական հարցը, որը որքան ես հիշում եմ, և որքան երևում է արձանագրություններից, վերջին նիստերի ժամանակ դեր չի խաղացել։ Այդ պատճառով ես առաջարկում եմ հանձնաժողովի աշխատանքներից այդ հարցը առայժմ բացառել։ Ընդ որում, ես անհրաժեշտ եմ համարում ասել, որ մենք Հայկական հարցը կարող ենք հարց համարել միայն այն ժամանակ, երբ կիմանանք՝ ինչպես է այն ձևակերպում ռուսական պատվիրակությունը»։

Այս խոսքերից հետո Քյուլմանը բազմանշանակ ակնարկեց, եթե «հաջողվի հասնել համաձայնության մնացած հարցերում, բանակցությունների խզումը Հայկական հարցի պատճառով ինձ թվում է քիչ հավանական»[85]։

Տրոցկին իր պարտքը համարեց գերմանական պատվիրակության պարոն նախագահի՝ Հայաստանին վերաբերող հարցի կապակցությամբ հիշեցնել. «այդ հարցը նոր չէ բանակցությունների ներկա փուլում, քանի որ մինչև Մննդյան տոների ընդմիջումը, բանակցությունները տարվում էին և Թուրքիայի պատվիրակության հետ. այդ բանակցու-

թյուններում Հայկական հարցը խաղացել է խոշորագույն դեր»։ Նա շեշտեց, որ Հայաստանի կապակցությամբ Ռուսաստանի կողմից առաջ են քաշված այն սկզբունքները, որոնք վերաբերում են և ներկա պատերազմից տուժած ռուսական պետության մարզերին[86]։

Հարցի քննարկումը շարունակվեց նիստերի կարճ ընդմիջումից հետո։ 1918 թ. հունվարի 5 (18)-ին քաղաքական հանձնաժողովի նիստում Քյուլմանի առաջին իսկ հարցադրումները ցույց են տալիս, որ նա անտեղի չէր առաջարկել հետաձգել բանակցությունները։ Այդ ընդմիջումը Գերմանիայի արտաքին գործերի նախարարը օգտագործել էր և կովկասյան, մասնավորապես, Հայկական հարցում խորհրդակցելու, տեսակետները ճշտելու, թուրքական զինանոցից զինվելու համար։ Կովկասին վերաբերող Քյուլմանի առաջին հարցը, որի պատասխանը նա ցանկանում էր լսել Տրոցկուց, երկրամասում գործերի և բանակի կարգավիճակի, մասնավորապես նրա՝ պետրոգրադյան կառավարության անմիջական ազդեցության տակ գտնվելու հարցի պարզումն էր[87]։

Տրոցկու պատասխանը միանշանակ էր. «Կովկասյան բանակը ամբողջապես գտնվում է ժողովրդական կոմիսարների խորհրդի ենթակա իշխանությունների հրամանատարության տակ, և դա երկու շաբաթ առաջ հաստատվել է Կովկասյան ճակատի պատգամավորների ընդհանուր համագումարում»[88]։

Բանակցությունների երեկոյան նիստում Քառյակ տերությունների պատվիրակությունները վերջնագրի ձևով խորհրդային պատվիրակությանը ներկայացրին Ռուսաստանի հետ անջատ պայմանագրի պայմանները։ Դրանք ավելի վատթար էին, քան դեկտեմբերի 15 (28)-ի պայմանները։ Ներկայացվեց և սահմանագծային քարտեզ։ Պահանջվում էր Ռուսաստանից անջատել ոչ միայն Լեհաստանը, Լիտվան, Կուրլանդիան, Էստլանդիայի և Լիֆլանդիայի մի մասը, այլև Բելոռուսիայի զգալի մասը։ Տրոցկու առաջարկությամբ բանակցությունները ընդհատվեցին։

Տրոցկու Պետրոգրադ մեկնելուց առաջ կայացավ ռուսական և թուրքական պատվիրակությունների քաղաքական հանձնաժողովների երկրորդ նիստը[89]։ «Իզվեստիա» թերթի 1918 թ. հունվարի 13-ի համարում արդեն տպագրվել էր «Թուրքահայաստանի մասին» ժողկոմխորհի հրամանագիրը։ Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Լև Տրոցկու և Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմիի միջև հունվարի 5 (18) ին կայացած բանակցությունների մասին Թալեաթ փաշայի հունվարի 6(19)-ին Բարձր Դռանը հայտնած տեղեկություններից երևում է, որ բանակցությունների ընթացքում նրանց միջև ժողկոմխորհի հրովարտակի առնչությամբ տեղի է ունեցել «մի երկար վիճաբանություն»։ Այդ վիճաբանության արձանագրությունը, լուրջ կրճատումներով՝ «ընդհանուր գծերով» հրապարակել է թուրք պատմաբան Հիքմեթ Բայուրը.

«Ահմեդ Նեսիմի— երբ հայերը զինվեն, այդ մարզերում պետք է իշխեն և պետք է կոտորեն մեծամասնություն կազմող մուսուլմաններին։ Դրա պատասխանատվությունը ուղղակի պետք է վերաբերի այժմյան ռուսական հանրապետության կառավարությանը։ Ռուսական հեղափոխության այստեղ հայտարարված սկզբունքներին էլ հարմար չէ, որ Ռուսաստանը իրեն չպատկանող մի որևէ երկրի ժողովրդին զինելով անկախության մղի, նույնիսկ ստիպի։ ...Մինչև պատերազմի ավարտը Քառյակ տերությունները մի ամբողջություն են համարվում և պատերազմի ընթացքում գրավված վայրերից յուրաքանչյուրի պարպումը կապված է մյուսների հետ։ Եթե ռուսները այլ ճանապարհ ընտրեն՝ թշնամաբար վարված և հաշտությունը դժվարեցրած, նույնիսկ վտանգած կլինեն։ Այն, ինչ որ ուզում եք որպես կատարված ունենալ, կարող է առաջ բերել չափազանց ցավալի դեպքեր։

Տրոցկի— Հայերին զինեցինք, որպեսզի կարողանան իրենք իրենց պաշտպանել զինված քրդերի դեմ։ Այսպիսով, քրդերը հասկանալով, որ չեն կարող նրանց վնաս պատճառել՝ պետք է ստիպված նրանց հետ հաշտ ապրեն։ Շնորհակալ եմ, որ ինձ զգուշացրիք, թե հայերը կոտորում են մուսուլմաններին։

Ահմեդ Նեսիմի՝— Այդ վայրերում կացությունը փոխված է։ Քրդերը հայերին ոչ միայն վնաս չեն պատճառի, կառավարությունն էլ լավ զգացումներով տոգորված մի քաղաքականություն պետք է վարի նրանց հանդեպ։

Տրոցկի— Ամենից առաջ ես մերժեցի ցարական կառավարության կողմից Ստամբուլի վերաբերյալ կնքված պայմանագրերը։ Բարեկամ եմ Թուրքիային, միայն թե չեմ կարող հրաժարվել որոշ սկզբունքներից... Թեպետև Կովկասում մի շարք կառավարություններ են հիմնվում, բայց ոչ մեկին էլ չպետք է ճանաչենք... Կովկասյան բանակը ենթակա է մեր հրամանին»։

Թալեաթ փաշան, իր կողմից ավելացնում է. «ռուսները հայերին զինելուց հետո պետք է հետ քաշվեն, պետք է ըստ այնմ պատրաստվենք»[90]։ Դա նշանակում է, որ թուրքական բանակը պետք է պատրաստվեր հարձակման։ Այսպիսով, բերելով վերոհիշյալ փաստաթուղթը, թուրք պատմաբանը նպատակ ունի հայերի կոտորածները վերագրել քրդերին։ Հայտնի է, սակայն, որ հաճախ թուրքական հրոսակը հանդես էր գալիս քրդական տարազով։

Գերմանական վերջնագրի և տարածքային նոր պահանջների առաջադրման ընթացքում, Տրոցկու Պետրոգրադ մեկնելուց հետո, իրենց հակահայկական գործողություններն աշխուժացրին թուրքական պատվիրակները։ Զեքի փաշային փոխարինած զինվորական պատվիրակ, հեծելազորի գեներալ Իզզեթ փաշան 1918 թ. հունվարի 7 (20)-ին «իր կառավարության հատուկ հանձնարարությամբ» հայերի նկատմամբ մտացածին մեղադրանքներով դիմեց ռուսական պատվիրակության ղեկավարներին[91]։

Բողոքը հանգում էր հետևյալին. ռուսական զորքերի կողմից գրավված օսմանյան տարածքում հայերը, վրացիների համաձայնությամբ, կատարում են իրենց դաժանությամբ չտեսնված բռնություններ մուսուլմանական խաղաղ բնակչության նկատմամբ, որոնք զինադադարի պահից մնացել են իրենց տեղերում, վստահելով ռուսների և նրանց բանակի պատիվ ու արդարության սկզբունքներին։

Գտնելով, որ գրավված տարածքում խաղաղ բնակչության «կյանքի, պատվի և գույքի պահպանության պատասխանատվությունը» ընկնում է Ռուսաստանի վրա, մոռանալով թուրքերի իրականացրած ցեղասպանությունը, Իզզեթ փաշան փարիսեցիորեն գրում է. դա «անպայման մարդասիրության պարտքն է, պարտադիր՝ յուրաքանչյուր քաղաքակիրթ ազգի և յուրաքանչյուր արդարացի և անկողմնակալ կառավարության համար»[92]։ Վկայակոչելով Քառյակ դաշինքի երկրների և ռուսական բանակների բարձր հրամանատարության ներկայացուցիչների մ.թ.ա. Բրեստ-Լիտովսկում և Օսմանյան երրորդ բանակի ու Կովկասյան ռազմաճակատի ռուսական բանակների հրամանատարության լիազորների կողմից երզնկայում կնքված զինադադարի պայմանները[93], զինված խմբերի կազմավորումը նա դիտում է որպես «պայմանների ակընհայտ խախտում»։ Միաժամանակ, Իզզեթ փաշան գտնում էր, որ հայերից և վրացիներից բաղկացած զինված խմբերի կազմավորումը «օսմանյան բանակին զրկում է հնարավորություններից պաշտպանել մուսուլմանական բնակչությանը՝ նրանց ոչնչացման նպատակով կատարվող ոտնձգություններից և խանգարել վերոհիշյալ հրոսակախմբերի կազմավորմանը»։ Թուրքական կողմը հույս էր հայտնում, որ ռուսական իշխանությունները կձեռնարկեն շտապ միջոցներ «ինչպես հայերի և վրացիների հարձակումներից մուսուլման բնակչության պաշտպանության, այնպես էլ վերջիններիս կողմից զինված հրոսակախմբերի կազմավորման դեմ, հավասարապես և արդեն գոյություն ունեցող հրոսակախմբերը զինաթափելու և ցրելու համար»[94]։

Ստացված բողոքի մասին Ա. Իոֆֆեն հունվարի 8 (21)-ին տեղյակ պահեց Լ. Տրոցկուն՝ Պետրոգրադ, կասկածի տակ վերցնելով հայկական և վրացական «ելուզակների» «անլուր բռնությունները» մուսուլմանական բնակչության նկատմամբ։ Տրոցկուն տեղեկացվում էր, որ բողոքը ուղարկվել է գլխավոր հրամանատարության շտաբի պետին, որի մասին հայտնվել է և Իզզեթ փաշային։ Իզզեթ փաշային հայտնել եմ, գրում էր Իոֆֆեն, որ «իմ կարծիքով նշված խմբերի կազմավորումը հանդիսանում է Կովկասյան բանակից առանձնացվող հայկական զորամասերի աղգայնացում»[95]։

Տրոցկին Պետրոգրադից Բրեստ-Լիտովսկ վերադարձավ հունվարի 17 (30)-ին։ Հունվարի 21 (փետրվարի 3)-ին և հունվարի 26 (փետրվարի 8)-ին շարունակվեցին ռուսական և թուրքական պատվիրակությունների բանակցությունները։ Նիստերում նախագահում էր Թալեաթ փաշան։ Լայնորեն քննարկվեցին Ուկրաինային, Կովկասին, Թուրքահայաստանին վերաբերող, մասնավորապես թուրքական կառավարության հայտարարության մեջ նշված հարցերը։ Թուրքական կառավարության ներկայացուցիչները գույները ավելի խտացրած նոր հայտարարությամբ հանդես եկան բանակցությունների նիստի հենց սկզբում։ Նրանք բերեցին իրենց «ճշմարտությունը» հաստատող նոր «փաստարկները»։ Կովկասի զանազան կենտրոններում կազմակերպվում և ռազմաճակատ են ուղարկվում հայկական ջոկատներ՝ երկու հայկական դիվիզիա, երկու հետևակային գունդ, հեծելազորային էսկադրոն, Թիֆլիսում կազմակերպվել է վրացական հրետանային բրիգադ՝ «Օսմանյան մարզեր նախապատրաստվող արշավանքի համար»[96]։

Թուրքական պատվիրակության ղեկավարը բողոքում էր, որ ռուսական բանակը հեռանում է ռազմական գործողությունների թատերաբեմից, նրա կողմից պարպված տարածքը գրավվում է «զինված հայերից և վրացիներից կազմված ելուզակների կողմից», «որոնց լրիվ կազմը մենք չգիտենք, բայց իրենց բնույթով, բնականաբար, իրենց մեջ պետք է պարունակեն անհանգիստ տարրեր, որոնք իրենց թույլ են տալիս ամենահնարավոր չարաշահումներ և սարսափներ»։

Արևմտյան Հայաստանի տարածքը թուրքիային հանձնելը համարելով արդեն կատարված փաստ և թուրքական կողմի ներկայացրած պայմանների նախագիծը՝ արդեն ընդունված փաստաթուղթ, Թուրքիայի ներկայացուցիչը գտնում էր. գավառները Ռուսաստանի կողմից թուրքիային պետք է վերադարձվեն այն վիճակում, որում գտնվել են մինչև գրավումը։ Ընդ որում, «ոչ մեկը իրավունք չունի հանձնել տարածքը ուրիշի ձեռքերը, քան այն, որոնցում նա գտնվել է՝ այսինքն՝ թուրքական ձեռքերը»։ Մինչդեռ, դժգոհում էր թուրք պատվիրակը, «ռուսական զորքերը հեռացել են տարածքը հանձնելով ձեռքերի, որոնք այդ տարածքի նկատմամբ ունեն հավակնություններ, չնայած թուրքերի իրավունքին»[97], այսինքն՝ հայերին։

Վերլուծելով ուկրաինա-թուրքական հարաբերությունները Բրեստ-Լիտովսկում, Տրոցկին, կանգ առավ Կովկասյան հարցերի վրա, մասնավորապես Անդրկովկասյան կառավարության հետ բանակցություններ վարելու օսմանյան կողմի փորձերի վրա։ Հավաստելով, որ Խորհրդային կառավարությունը չի բողոքում նման փորձերի դեմ, Տրոցկին նկատեց. «մենք սիրով հնարավորություն ենք տալիս յուրաքանչյուր արտաքսմանյան կառավարության փորձով համոզվել՝ ում հետ վարել բանակցությունները։ Եթե կհաստատվի հաղորդումը այն մասին, որ օսմանյան պատվիրակությունը վարում է բանակցություններ Կովկասյան կառավարության հետ, մենք ստիպված կլինենք սպասել այդ բանակցությունների արդյունքներին»[98]։

Ընդունելով գործից անտեղյակ մարդու կեցվածք, Հագգը փաշան անվրդով, իր խոսքերով արտահայտած՝ «ավելի վճռական» պատասխանեց. «Մեզ ոչինչ հայտնի չէ այն մասին, որ օսմանյան կառավարությունը ցանկություն ունենար կնքել ինչ-որ պայմանագիր կովկասյան

ժողովուրդների հետ և մենք չենք կարծում, որ այդ լուրը ճիշտ է»: Նրա ասելով, Թուրքիային շատ հետաքրքիր կլիներ իմանալ՝ ում է պատկանում Կովկասը, քանզի նրանք կարծում էին, որ «Կովկասը պատկանում է Ռուսաստանին և երբեք չեն փորձել, մտադիր չեն եղել և հնարավորություն չեն ունեցել անել ինչ-որ այլ փորձեր»: Հակառակ դեպքում, ասում է Հագգր փաշան, օսմանյան կառավարությունը հայտարարությամբ կդիմեր Կովկասի անկախ կառավարությանը և ոչ թե ռուսական կառավարությանը՝ «կատարել իր պարտականությունները՝ նրա զորքերի կողմից գրավված տարածքում»:

Օգտագործելով դիվանագիտական դարձվածք, Թուրք պատվիրակը Կովկասի անկախության փաստը փորձեց բացատրել Տրոցկու հիմնավորումով: «Բայց եթե պ. Տրոցկին ցանկանում է մեզ ասել, որ Կովկասում գոյություն ունի անկախ կառավարություն, և որ այդ կառավարությունը չի լսում ռուսական կառավարությանը, ապա այդ դեպքում ստեղծվում է նոր վիճակ, որի առիթով մենք պետք է մտածենք»[99]:

Հայտնելով բավականություն ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ռուսական սկզբունքների՝ օսմանյան կառավարության կողմից «հեղինակավոր ճանաչման համար», Տրոցկին ցանկություն հայտնեց, որպեսզի այդ ճանաչումը ամբողջացվի փաստերով, չլինի լոկ հայտարարություն: Ռուսական պատվիրակության անունից արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը բավարարվածությամբ արձանագրեց, որ «Օսմանյան կառավարությունը չի վարել, չի վարում և չի նախատեսում վարել ինքնուրույն բանակցություններ Կովկասում գոյություն ունեցող մարմինների հետ»: Այն հարցին, թե ում է պատկանում Կովկասը, Տրոցկին պատասխանեց, որ Ռուսաստանը չի կարող այդ հարցը դիտել այնպես, թե Կովկասը իրենից ներկայացնում է ոչ մեկին չպատկանող մարզ: «Կովկասը առաջին հերթին պատկանում է կովկասյան ժողովուրդներին, իր անցյալով նա կապված է Ռուսաստանի հետ և մինչդեռ Կովկասի ժողովուրդները չեն հայտնել Ռուսաստանից անջատվելու մասին իրենց ցանկությունը, նա մնում է Ռուսաստանի դաշնակցային հանրապետության մաս»[100]:

Արձանագրելով, որ թուրքական կողմը չի ընդունում ժողովուրդների ինքնորոշման հարցում «բոլշևիկյան բոլոր սկզբունքները» և վկայակոչելով ալանդյաններն ու թուրքերի՝ որպես հին ժողովրդի՝ «անցյալին ավելի մեծ նշանակություն տալը», Հագգր փաշան այլաբանորեն ասաց. «Մենք չենք կարծում, որ երկրագնդի կեղևը կարող է միանգամից փոխվել, որ չարերը կարող են միանգամից դառնալ հրեշտակներ: Այդ հարաբերություններում մենք հաշվի ենք նստում նախորդ պատմական ընթացքում ստեղծվածի հետ, և այդտեղ ևս պետք է նկատեմ, որ ես բավականությամբ նշել եմ, որ ռուսական պատվիրակության ղեկավարը ևս պատմական անցյալին տալիս է պատշաճ նշանակություն, երբ նկատում է, որ Կովկասը առաջին հերթին պատկանում է կովկասյան ժողովուրդներին, ապա, նոր, այդ Կովկասը իր անցյալով կապված է

ռուսական հանրապետության հետ»: Նա կրկին շեշտեց, որ Օսմանյան կայսրությունը բանակցություններ է վարում Ժողովրդական կոմիսարների խորհրդի կառավարության հետ զորքերի դուրս բերման և ազգակախմբերի դեմ պայքարի մասին, «և եթե վիճակը չփոխվի, մենք այդպես էլ կշարունակենք ապագայում»:

Տրոցկին իր հերթին նկատեց, որ ռուսական կառավարությունը տածում է հարգանք նախորդ բանակցությունների ժամանակ ձեռք բերված արդյունքների նկատմամբ և «Բրեստյան անջատ բանակցությունների անցյալում կարևոր նշանակություն ունեցող տարեթվի՝ դեկտեմբերի 25-ի նկատմամբ: Այդ օրը ժողովուրդների ինքնորոշման որոշ սկզբունքներ ընդունվեցին և օսմանյան պատվիրակության կողմից»: «Մենք մեր ամբողջ երիտասարդությամբ, ամենևին այդպես միամիտ չենք, որպեսզի մեր անմիջական խնդիրը համարենք՝ չարը վերածել բարու: Մենք այդ գործը կթողնենք կրոնին,— ասաց Տրոցկին,— մենք մեր խնդիրն ենք համարում այնպիսի կառուցվածքների ստեղծում, որոնք կխանգարեն չարի ավելի չաքանալուն»[101]:

Այստեղ արդեն Հագգր փաշան «չարի և բարու» մասին փիլիսոփայելուց անցավ մարքերի ավելի հստակեցման, իբրև չար ներկայացնելով հայերին: «Ռուսական սկզբունքները, գուցե և շատ լավն են,— ասաց նա՝ դիմելով Տրոցկուն,— բայց դուք զինում եք բնակչության մի մասին մյուսի դեմ, իսկ դա միշտ վտանգավոր գործ է և այդ պատճառով ուշադրություն դարձրեք ձեր սեփական սկզբունքներին և աշխատեք արգելակել չարին՝ անել չարիք»[102]: Ավելի հստակ արտահայտվեց Տրոցկին՝ իրերը անվանելով իրենց անունով. «անկասկած, պետք է խանգարել չարին՝ անել չարիք, բայց այդ սկզբունքը միշտ չէ, որ կիրառվել է. օրինակ՝ քրդերի վերաբերյալ: Քանի որ առաջ է քաշվում մեղադրանք հայերի նկատմամբ, այդպես ընդհանուր ձևով, ապա ես համարում եմ անհրաժեշտ ամբողջ պարզությամբ և վճռականությամբ ասելու, որ մեզանից յուրաքանչյուրը բավականաչափ լավ գիտի Թուրքիայի պատմությունը, որպեսզի իրավունք ունենա հաստատել, որ քրդերը զինված են, որ օսմանյան կառավարությունը բնավ պարտավորություն չի վերցրել նրանց զինաթափել, և որ իրենց զենքի օգնությամբ նրանք միշտ չէ, որ արել են բարություն: Մեզանից փորձով ավելի հարուստ մարդու տված խորհուրդը, անկասկած, հեղինակավոր է, բայց կարծում եմ, որ դա կլիներ ավելի հեղինակավոր, եթե օսմանյան կառավարությունը ասեր, տեսեք, մեզ մոտ կան զինված քրդեր, որոնք գործում են չարիք, բայց մենք ժամանակին զինաթափեցինք և չարիքին վերջ տրվեց»[103]:

Հագգր փաշան գործի դրեց թուրքական դիվանագիտության հին զենքը՝ հայերի նկատմամբ սիրո խոստովանությունը և շողոքորթությունը. նա հավաստեց իր և իր հոր բարեկամական վերաբերմունքը և վստահությունը հայերի նկատմամբ, շատ հայերի հյուրընկալությունը իրենց ընտանիքում՝ Կոստանդնուպոլսում, կրկնելով օսմանյան և երիտթուրքական գաղափարախոսության հորինվածքը. «Դժբախտությունը

եկավ այն ժամանակվանից, երբ ստեղծվեց Հայկական հարցը»։ Մեղքը գցելով «նրանց վրա», ովքեր ստեղծել են Հայկական հարցը, հայերին պատճառելով մեծ վնաս, Հագգը փաշան, մոռանալով պատմությունը, հայտարարեց, որ «եթե չլիներ Հայկական քաղաքական հարցը, հայերը Թուրքիայում կլինեին լրիվ երջանիկ և կվարեին բարեկեցիկ կյանք»։ Մյուս կողմից, ազգամիջյան հարաբերությունների լարվածության մեղքը նա դրեց հայերի վրա։ «Եթե տարվի վիճակագրություն, ապա հնարավոր է, որ դա ցույց տա, որ քրդերի մեղքը ավելի քիչ է, քան մյուս կողմինը»։ Այդ պատճառով էլ Հայկական հարցը չպետք է մեծացվի և դարձվի ռուսների կողմից քաղաքական հարց և ռուսները չպետք է զինեն հայ բնակչությանը։ Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ճանաչման մասին, Հագգը փաշան պարզաբանեց, որ թուրքական կողմը նկատի ունի «փոքրամասնության իրավունքի երաշխիքը, սակայն, այն ժողովուրդների կապակցությամբ, որոնք մտնում են այդ պետությունների կազմի մեջ»։ Եվ ապա. «Մենք մերժել ենք այդ գործերի մեջ խառնվելու իրավունքը և առանձին ժողովուրդների ճակատագրի մասին հարցը դիտել ենք որպես ներքին կառավարման հարց»[104]։ Սակայն նա չասաց, որ այն լուծել են հրով ու սրով, կոտորածներով ու տեղահանումներով։ Միջամտելով Տրոցկու և Հագգը փաշայի բանավեճին, մեծ վեզիր Թալեաթ փաշան ավելացնում է. «Օսմանյան կառավարությունը քրդերին չի զինել, և եթե ռուսների կողմից գրաված տարածքում կան զինված քրդեր, ապա թող ռուսները բարի լինեն զինաթափել և հայերին և քրդերին՝ այսինքն, նրանց բոլորին, ովքեր կարող են անել չարիք»[105]։ Այսպիսով Թալեաթ փաշան ուզում էր լուծել և հայկական, և քրդական հարցերը, ավելի արձակել թուրք հրոսակի ձեռքերը։

Տրոցկին հետևողականորեն զարգացնում էր դեկտեմբերի 25-ին ընդունված սկզբունքները՝ բոլոր ժողովուրդների նկատմամբ ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքով առաջնորդվելու պարտադրությունը, անհրաժեշտությունը։ Նա մատնանշեց, որ ի պատասխան դրան, Քառյակ միության պատվիրակությունները սահմանափակվում են այդ սկզբունքի կիրառումով միայն գրավված մարզերում։ «Այժմ մենք ստանում ենք այն տպավորությունը, որ օսմանյան պատվիրակությունը նկատի ուներ այդ սկզբունքի կիրառումը միայն կենտրոնական տերությունների կողմից Ռուսաստանից գրավված տարածքների նկատմամբ», հայտարարեց Տրոցկին[106]։

Թուրքական պատվիրակության հաշտության պայմանների նոր տեքստը Տրոցկուն հանձնվելուց հետո ռուս-թուրքական պատվիրակությունների հունվարի 21 (փետրվարի 3)-ի նիստը ավարտեց իր աշխատանքները։

Ռուս-թուրքական պատվիրակությունների քաղաքական հանձնաժողովի չորրորդ նիստը կայացավ հունվարի 26 (փետրվարի 8)-ին[107]։ Թալեաթ փաշան նիստը սկսեց խնդրանքով Տրոցկուն՝ տալ պատասխան

նախորդ նիստում թուրքական կողմի հայտարարության, մասնավորապես հայկական զինված ջոկատների գործողությունների մասին բողոքի կապակցությամբ։ Հենվելով ռուսական զորակայանից ստացված պաշտոնական պատասխանի վրա, Տրոցկին հայտարարեց. զորակայանի գրավոր պատասխանը վճռապես ժխտում է այնպիսի փաստերի առկայությունը, որոնք կարող են գնահատվել որպես զինադադարի խախտում։ Ամեն ինչ կատարվել է ռուսական կառավարության կողմից հրուչակված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքի հիման վրա, որը նրա կողմից լրիվ ընթացքով իրականացվում է երկրի ներքին քաղաքականության մեջ։ «Ազգությունների ինքնորոշման սկզբունքը կյանքում կիրառելը ռուսական կառավարությանը հնարավորություն է տվել անհրաժեշտության՝ միավորել գոյություն ունեցող զորամասերում նույն ազգության մարդկանց, բնավ չավելացնելով այդ զորամասերի թվաքանակը և կազմը, չխախտելով պայմանագրով իր վրա վերցրած պարտավորությունները», պարզաբանեց Տրոցկին։ Կասկածի տակ վերցնելով ռուսական զորքերի կողմից գրավված տարածքում «մուսուլմանական բնակչությանը ճնշելը», Տրոցկին առաջ քաշեց թուրքական ելուզակների ավազակային գործունեության հարցը։ «Մենք ստացել ենք բազմաթիվ բողոքներ այն մասին, որ թուրքական ելուզակախմբերը թալանում են Սև ծովի փոքրասիական ափերը— ասաց Տրոցկին,— մենք մեզ իրավունք ենք վերապահում Օսմանյան պատվիրակությանը ներկայացնել այդ կապակցությամբ ավելի մանրակրկիտ, հիմնավորված բողոք[108]։

Համաձայնվելով, որ Ռուսաստանը Կովկասյան ճակատում չի ավելացրել իր ուժերը, Հագգը փաշան, այնուամենայնիվ, գտնում էր, որ այդ ուժերը կրճատվել են այնպես, որ դրանով փոփոխվել է զինագրաված բանակի բնույթը։ «Այն փոփոխությունները, որ կատարվել են ռուսական զորքերի բնույթում, ներկայումս սահմանի վրա այդպիսիք չեն, որպեսզի հանգստացնեն, քանի որ, իսկապես ռուսական տարրերը, որոնք ոչ մի կարիք, ոչ մի ցանկություն չունեն հարձակման համար, փոխարինված են տարրերով, որոնք ունեն այդպիսի մղում, և ձգտում են անել չարաշահումներ՝ մուսուլմանական բնակչության քանակը պակասեցնելու համար»։ Ապա, ավելի հստակ. «բոլոր այդ երևույթները, պարզ է, որ ռուսական զինվորները, որոնք հեռացան, նկատի չունեին, իսկ հայ զինվորները, որոնք մնացին, այդ նկատի ունեն»։

Զորամասերի ազգայնացման մասին ռուսական գերագույն հրամանատարության պատասխանը Հագգը փաշան դիտեց, մի կողմից, որպես թուրքական կողմի բողոքի ճանաչում, մյուս կողմից՝ մուսուլմանական բնակչության իրավունքի ոտնահարում։ Նրա կարծիքով, «Ռուսաստանը, որպես միակ տեղական բնակիչներ, տեսել է այդտեղի բնակչության փոքրամասնությանը, այդ բնակչության մեծ մասը՝ մուսուլմանները, հաշվի չեն առնվել որպես տեղական բնակիչներ։ Այդ պատճառով տարածքը գրաված բանակի բնույթը փոխվել է»[109]։

Երկխոսությանը միջամտած Թալեաթ փաշան հարկ համարեց շեշ-

տել, որ Օսմանյան կայսրությունը հավատարիմ է «Թուրքիայի ամբողջության ու անկախության սկզբունքին։ Այդ պատճառով մենք մտանք այս պատերազմի մեջ և դրա համար էլ այն շարունակում ենք»[110]։ Անհանգստություն հայտնելով Ռուսաստանի կողմից գրավված մարզերում ստեղծված խմբերի իբր կատարած «չարաշահումների ու դաժանությունների» կապակցությամբ, Հագգը փաշան «անտեղյակություն» դրսևորեց Տրոցկու հիշատակած թուրք ելուզակների ոճրագործությունների հարցում։ «Մենք չգիտենք, ինչ ազգության ավազակների մասին է խոսքը և ինչ են նրանք արել», հարցադրումից հետո, Հագգը փաշան ստեղծված վիճակի համար մեղքը գցեց ռուսական կողմի վրա։ «Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ գրավված մարզերում ռուսական կառավարության բռնած դիրքը, հավանաբար, վատ օրինակ է այդ մարզերի ամբողջ բնակչության համար»,— ասաց նա, խնդրելով Տրոցկուն տալ լրացուցիչ տեղեկություններ[111]։

Վճռապես մերժելով Օսմանյան կայսրության պատվիրակության ներկայացուցչի քմահաճ բացատրությունները, Տրոցկին կրկին հիմնավորեց ռուսական բանակի ազգայնացման օրինաչափությունը, հայերի գործադրած բռնությունների հորինված լինելը, քանզի «դրանց մասին մենք ոչինչ չգիտենք։ Օսմանյան պատվիրակությունը չի բերել ոչ մի փաստ»[112]։

Թալեաթ փաշային և Հագգը փաշային օգնության եկած գեներալ Իզզեթ փաշան փորձեց բացատրել զինադադարի պայմանները, և ապացուցել թուրքական պահանջների օրինականությունը։ Ռուսական զորքերի հայկական անձնակազմով փոխարինելը նա համարեց «ամբողջ զորամասի ֆիզիոնոմիայի փոփոխություն»[113]։ Հենվելով Իզզեթ փաշայի «հիմնավորումների» վրա, Հագգը փաշան նորից բողոքեց, որ ռուսական կառավարությունը արձակելով ռուս զինվորներին, նրանց տեղը թողնում է միայն հայերին, ռուսական զորքը հեռանում է, այն փոխարինվում է հայերով, որը Տրոցկին համարում է «ազգայնացում»։ Հագգը փաշան հռետորաբար ասաց. «Մեր զբաղեցրած գավառների պահպանությունը այժմ գտնվում է ռուսական կառավարության ձեռքերում, ռուսական կառավարությունը իրավունք չունի նրանցում կարգադրություններ անել, ինչ կարգով էլ ուզում է այն լինի։ Հաշտության պայմանագրով, ռուսական կառավարությունը պետք է մեզ հանձնի այդ երկրները այն վիճակով, որում նրանք եղել են»[114]։

Թուրքական մերկապարանոց պնդումների դեմ, ռազմական տեսակետից հիմնավորված, հանդես եկավ խորհրդային պատվիրակության զինվորական խորհրդական փոխծովակալ Ալտֆատերը[115]։

Նկատի ունենալով թուրքական պատվիրակության երկդիմի խաղը, Տրոցկին ափսոսանք հայտնեց, որ իր հայացքների զարգացման մեջ այդքան աչալուրջ՝ օսմանյան պատվիրակությունը օգտագործում է տարբեր սկզբունքներ, տարբեր երկրների գրավված մասերի վերաբերյալ։ Մինչդեռ, ռուսական կողմը իր զորքերի գրավված և իրենից

գրավված մարզերի համար չունի «երկու սկզբունք, երկու մեթոդ և երկու փիլիսոփայություն»։ Ռուսական կողմը պահանջում է կենտրոնական պետությունների կառավարություններից «տեղական միլիցիայի ստեղծում՝ նրանց կողմից գրավված բոլոր մարզերում»։ Պատասխանելով Հագգը փաշայի ճամարտակությանը, իբր թուրքական ավազակները «ենթարկվել են ռուսական զորքերի հիմար ազդեցությանը և հիմար օրինակին», Տրոցկին ծաղրանքով պատասխանեց. «Մենք մինչև հիմա չգիտեինք, որ թուրքական ելուզակները աչքի են ընկնում այդքան բարձր բարոյականությամբ և ավազակային հարձակումների համար նրանք հիմար օրինակների կարիք ունեն»[116]։

Առարկելով Տրոցկու և փոխծովակալ Ալտֆատերի պնդումներին՝ զորքերի ազգայնացման մասին, Հագգը փաշան այն համարեց ռուսական ներքին հարց, որը ռուսների գրաված տարածքում չպետք է տարածել։ Նա առարկեց նաև այդ մարզերում հանրաքվե անցկացնելու դեմ, քանզի, նրա խոսքերով, այդ ապացուցում է Օսմանյան կայսրության յոթդարյա պատմությունը. «Այդ նույն պետությունն է և նույն կազմակերպությունը։ Օսմանյան կայսրությունում չի եղել այդպիսի նշանակալից փոփոխություն, որը այժմ տեղի է ունեցել Ռուսաստանյան հանրապետությունում։ Օսմանյան կառավարությունը չունի ոչ մի հիմք իր վիճակի փոփոխման համար։ Այդ պատճառով ռուսական պատվիրակությունը չի կարող մեզ վրա պարտականություն դնել հետևել նրա սկզբունքին և պահանջել մեր գրաված մարզերում կիրառել այն սկզբունքը, որի՝ գրավված մարզերում կիրառման համար նա համաձայն է մեր դաշնակիցների հետ։ Մենք չունենք, ինչպես պնդում է պ. Տրոցկին, երկու սկզբունք, մենք ունենք միայն մեկ սկզբունք և դա մենք գրել ենք դեկտեմբերի 25-ի ընդհանուր սկզբունքի մեջ»[117]։

Ակնարկելով Օսմանյան կայսրության պատմության արյունոտ էջերը, Տրոցկին հարկ չհամարեց «վերադառնալ Թուրքիայի պատմությանը, քանի որ, ինչպես միանգամայն ճիշտ նշեց Հագգը փաշան, խոսքը գնում է յոթ դարի մասին։ Դա մեզանից կխլեր շատ ժամանակ և մենք պետք է որ քննարկենք հարց՝ ինչ չափով է Թուրքիայի պատմությունը հանդիսանում պետության միասնության հիմնավորում»։ Նա կրկին հավաստեց ռուսական պատվիրակության վճռականությունը ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի գործնական կիրառման և քննարկված հարցերի սատարման գործում։ Հագգը փաշան հայտնեց շնորհակալություն Տրոցկուն՝ «նրա սիրալիր կամ ոչ սիրալիր գործողությունների համար»[118]։ Որոշվեց հաջորդ նիստում քննարկել հաշտության մասին թուրքական նախագիծը՝ կետ առ կետ։

Տրոցկու նման հետևողականությունը հաստատում է, որ ազգերի ինքնորոշման բոլշևիկյան սկզբունքը Բրեստ-Լիտովսկում արդեն դառնում էր գերմանա-թուրքական թալանչիական ուժերին հակադրվող քաղաքական ուժ։

սակցության կենտկոմի և ձախ սոցիալիստ-հեղափոխականների կենտկոմի 1918 թ. հունվարի 13 (26)-ի համատեղ նիստի որոշումը[122]։ Նիստում հավանություն էր ստացել իր իսկ ներկայացրած բանաձևը. «մենք պատերազմը դադարեցնում ենք, հաշտություն չենք կնքում, բանակը զորացրում ենք»[123]։

Տրոցկու վերոհիշյալ հայտարարության մասին Թալեաթ փաշան հունվարի 28 (փետրվարի 11)-ին հեռագրով հայտնել էր Կոստանդնուպոլիս՝ Բարձր դռանը, ավելացնելով «Օսմանյան պատվիրակներին թելադրանացի հաղորդումով, թե Արևելյան Անատոլիան էլ պետք է պարպվի։ Լիազորություններս վերջացան, մեկնում եմ։ Ասում է ու մեկնում»[124]։

Բրեստ-Լիտովսկի բանակցություններում հետևողականորեն հասնելով իրենց նպատակներին, երիտթուրքերը շարունակում են դիվանագիտական քայլերի ձեռնարկումները Անդրկովկասում։

1918 թ. հունվարի 1 (14)-ին թուրքական բանակի գլխավոր հրամանատար էնվեր փաշայի հանձնարարությամբ հաշտության մասին վերջնական պայմանագիր կնքելու առաջարկությամբ հեռագրով դիմեց Օսմանյան բանակի Կովկասյան ճակատի հրամանատար Վեհիբ փաշան։ Անդրկովկասի կոմիսարիատը դիտելով որպես անկախ կառավարություն, Վեհիբ փաշան նրանից խնդրում էր տեղեկացնել, թե ինչ ճանապարհով է հնարավոր վերականգնել փոխհարաբերությունները Կովկասյան անկախ կառավարության հետ՝ երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ սահմանելու համար։

Նշելով, որ «Երզնկայում բանակցությունների ժամանակ հանձնաժողովի անդամ գեներալ Վիշինսկին հայտնեց, թե Կովկասյան բանակը բանակցությունների մեջ է մտնում անկախ Կովկասյան կառավարության անունից, Վեհիբ փաշան գրում էր. «Այդ պատճառով նորին գերազանցությունը (էնվեր փաշան— Հ. Ա.) առաջարկում է ինձ այդ բարի նպատակներով անկախ Կովկասյան հանրապետության մայրաքաղաք ուղարկել պատվիրակների, ցանկալի արդարացի խաղաղության արագ վերականգնման տեսանկյունով»։ Վեհիբ փաշան խնդրում էր Օդիշելիձեին՝ թուրքական կողմի այդ առաջարկությունը ներկայացնել «Կովկասի անկախ կառավարությանը»[125]։

Բերելով այս փաստաթուղթը, Ա. Խատիսյանը գրում է. «Առանձնապես կհրավիրեմ ընթերցողի ուշադրությունը երկու անգամ կրկնված անկախ բառի վրա, որով տաճիկները կուզեին ներշնչել կովկասյան իշխանության, թե իրենք կկամենան գործ ունենալ միայն անկախ կառավարության մը հետ։ Տաճիկների համար անկախ Կովկաս մը բաղձալի պատնեշ մըն էր Թուրքիո և Ռուսիո միջև։ Թիֆլիսի մեջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզեր բացահայտորեն խոսելու Ռուսիայեն անջատվելու մասին։ Համենայն դեպս, ուշադրության արժանի է, որ անկախության գաղափարը և այդ գաղափարի հրահրումը եկավ Թուրքիայեն»[126]։

Ռուս-թուրքական պատվիրակությունների նիստում թուրքերի կողմից արծարծված հարցերը Քյուլմանի կողմից բարձրացվեցին հունվարի 27 (փետրվարի 9)-ին վերսկսված քաղաքական հանձնաժողովի նիստում։ Նիստի հենց սկզբում Քյուլմանը անդրադարձավ տարածքային հարցերին, որտեղ դրսևորվեց նրա շահախնդիր մոտեցումը Թուրքիայի առաջադրած պայմանների պաշտպանության հարցում, թուրքական հարցադրումների ստերեոտիպը։ Նա ընդգծեց, որ Քառյակ տերությունների համար հաշտության պայմանագիրը կլիներ անընդունելի, «եթե նրա մեջ չլինեին դիվանագիտական երաշխիքներ, որ մեր դաշնակիցների գրաված մարզերում գտնվող զորքերը ենթարկվում են Պետրոգրադի կառավարության կարգադրություններին»[119]։

Այստեղ էր, որ Տրոցկին հստակորեն նշեց, որ այդ տարածքները հայկական են և չի կարելի հավասարության նշան դնել այդ և Ռուսաստանի արևմտյան մարզերի միջև։ «Մենք ունենք բավականաչափ ծանրակշիռ սկզբունքային նկատառումներ, որոնք մեզ թույլ չեն տալիս հայկական տարածքների պարպումը դիտել որպես ռուսական տարածքի այս կամ այն մասը պարպելու դիմաց փոխանակում,— ասաց Տրոցկին,— ինչպես մեր զորքերը այժմ հանում ենք Պարսկաստանից, նմանապես այդպես էլ նրանց կհանենք, և արդեն իսկ մենք այդ ձեռնարկել ենք Հայաստանից։ Ինքնին հասկանալի է, որ մենք այդ մասին կհայտարարենք ամենահստակ և պարզ ձևով Թուրքիայի հետ մեր պայմանագրում, եթե միայն մենք նրա հետ կնքենք հաշտության պայմանագիր»[120]։

Հունվարի 27 (փետրվարի 9)-ի նիստում գերմանա-ավստրիական կողմը ռուսական պատվիրակությունից վերջնագրի ձևով պահանջեց իր առաջադրած պայմանների պատասխանը։ Մինչ այդ, ուկրաինական պատվիրակության հետ կնքված համաձայնագրով Ուկրաինան գրավվում էր գերմանա-ավստրիական զորքերի կողմից։

Քաղաքական հանձնաժողովի փետրվարի 10-ի նիստում, որպես ամպրոպի որոտ հնչեց Տրոցկու հետևյալ հայտարարությունը. «Մենք հրաման ենք արձակում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի և Բուլղարիայի դեմ այժմ կանգնած մեր բանակների լրիվ զորացրման մասին... Մենք դուրս ենք գալիս պատերազմից, բայց մենք ստիպված ենք հրաժարվել հաշտության պայմանագրի ստորագրումից»։ Ժողկոմխորհի անունից ներկայացված փաստաթղթում ասված էր. «Հրաժարվելով բռնանվաճողական պայմանագիրը ստորագրելուց, Ռուսաստանը հայտարարում է Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի հետ պատերազմի վիճակը դադարեցված։ Ռուսական զորքերին միաժամանակ հրաման է տրվել ամբողջ ճակատով լրիվ զորացրման մասին»։ Հայտարարությունը ստորագրել էին ռուսական պատվիրակության բոլոր անդամները, բացի Լևոն Կարախանից[121]։

Հանդես գալով խորհրդային կառավարության անունից, Տրոցկին կատարեց Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկների) կու-

Թուրքական հրամանատարությունից ստացած առաջարկության մասին «Կավկազսկոյե սլովո» թերթը իր ընթերցողներին հայտնեց 1918 թ. հունվարի 3-ին, «Հորիզոնը»՝ հունվարի 4-ին։ Նրանք, միաժամանակ, հաղորդեցին, որ Անդրկովկասի կոմիսարիատի անդամների շրջանում գերակշռում է թուրքերի առաջարկությունը Սահմանադիր ժողովի քննարկմանը հանձնելու տեսակետը։ Հունվարի 5-ին «Կավկազսկոյե սլովոն» ավելի որոշակի գրեց, որ Թուրքիան առաջարկել է անջատ հաշտություն «Անդրկովկասի անկախ և ինքնուրույն կառավարությանը» և որոշել է Թիֆլիս՝ «անկախ և ինքնուրույն հանրապետության» մայրաքաղաք ուղարկել պատվիրակություն՝ հաշտության բանակցությունների համար։ Գտնելով, որ նոր պայմաններում, երբ համաշխարհային պատերազմը մտել է այնպիսի փուլ, երբ «երկու կողմերի բանակները առանց հաշտության պայմանագիր կնքելու արագ տեմպով հետ են քաշվում իրարից, ոչ միայն հետ են քաշվում, այլև քայքայվում են», հաշտության մասին առաջարկությունը հրապուրիչ է և հնարավոր շահեկան պայմաններով հաշտություն կնքելու, և ուժերը ներքին կարգ ու կանոն հաստատելուն ուղղելու համար, թերթը գրում էր. «Սակայն ցավը նրանումն է, որ այդ առաջարկության մեջ կա ահավոր վտանգ։ Թուրքիան դիմում է Անդրկովկասի անկախ պետությանը։ Այդպիսի պետություն չկա։ Երկրամասում ոչ մի ժողովուրդ, ոչ մի կուսակցություն Անդրկովկասը չի համարում ինքնուրույն և անկախ պետություն։ Անդրկովկասի բոլոր քաղաքացիների համար մեր երկրամասը հանդիսանում է ամբողջական Ռուսաստանի անբաժան մասը։ Անդրկովկասի կոմիսարիատի ստեղծումը ժամանակավոր և ստիպողական քայլ է։ Մենք պետք է լարենք մեր ուժերը, որպեսզի թեթևացնենք Ռուսական ֆեդերացիայի ստեղծումը և ոչ թե քայքայենք պետությունը։ Ինքնուրույն խաղաղություն կնքելը հենց կտանի դեպի քայքայում»։ Կրկնելով, որ «Թուրքերի առաջարկությունը գուցե և հրապուրիչ է», «Կավկազսկոյե սլովո» թերթը բերում է Սուրբ գրքից հետևյալ տողերը. «Շատ հրապուրիչ էր թվում և ոսպի ապուրը, որի համար Եսավը ծախեց անդրանկությունը»[127]։

Մեկ օր առաջ, հունվարի 4-ին (17)-ին, Օդիշելիձեին վեհիբ փաշայի հղած հեռագրի բովանդակության մասին Ե. Գեգեչկորին տեղյակ էր պահել Կոմիսարիատի անդամներին և այն հանձնել Բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների երկրային կենտրոնին։ Պատգամավորներին ակնհայտ էր դարձել Թուրքերի մտադրությունը՝ նրանք Անդրկովկասը դիտում էին որպես ինքնուրույն պետական միավորում, լիազորված բանակցություններ վարելու համար[128]։ «Կովկասի անկախ կառավարության» անունով էնվեր փաշայից ստացված հեռագիրը Գեգեչկորին հրապարակեց նաև Ժորդանիայի ղեկավարությամբ կայացած Բանվորների, զինվորների ու գյուղացիների պատգամավորների խորհուրդների երկրային կենտրոնի 1918 թ. հունվարի 4 (17)-ի նիստում։ Սոցիալ-դեմոկրատներ Սմիրնովը, Ջուղելին, սոցիա-

լիստ-հեղափոխականներ Թումանյանը, Չեմոդանովը, Թարխանյանը, դաշնակներ Արզումանյանը, Ջամալյանը և ուրիշներ արտահայտեցին այն տեսակետը, որ Անդրկովկասը անկախ պետություն չէ, և որպես Ռուսաստանի անբաժան մաս, չի կարող անջատ հաշտություն կնքել։ Սոցիալ-դեմոկրատ Ռամիշվիլին, այդ տեսակետը ընդունելով հանդերձ, պնդում էր, որ պայմանները կարող են ստիպել թուրքական առաջարկությանը ընդառաջ գնալ։

Երկրային կենտրոնը ընդունեց Ն. Ժորդանիայի առաջարկած բանաձևը։ Թուրքական հրամանատարությանը ուղղված նամակում ասված է. «Կամենալով կնքել հաշտություն այնպիսի հիմքերով, որ ընդունելի լինի ռուսական դեմոկրատիայի համար, հարկ ենք համարում հաղորդել Ձեզ, որ մենք ներկայացնելով ռուսական հանրապետության բաղկացուցիչ մեկ մասը, կարող ենք հաշտության բանակցություններ սկսել միայն նորերս հավաքված Սահմանադիր ժողովից համապատասխան լիազորություններ ստանալուց հետո։ Սահմանադիր ժողով գնացած մեր պատգամավորները մեր կողմից լիազորված են Ձեր առաջարկած հաշտության հարցը դնել առաջին հերթին և պատասխանը Ձեզ կհայտնվի անհապաղ»։ Երկրային կենտրոնը առաջարկում էր Կոմիսարիատին բանակցություններ վարել «Ռուսաստանի բոլոր կառավարությունների հետ, ներառյալ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը»[129]։

Թուրքերի հաշտության մասին առաջարկության հարցը և Երկրային կենտրոնի բանաձևը քննարկվեց Անդրկովկասյան կոմիսարիատի հունվարի 5 (18)-ի նիստում։ Որոշվեց հարցի վերջնական որոշման համար հրավիրել ազգային խորհուրդների, Երկրային կենտրոնի, ազգամիջյան ռազմական խորհրդի ներկայացուցիչներին, Ճակատի գլխավոր հրամանատարին, շտաբի պետին։ Հունվարի 15 (28)-ի նիստում որոշվեց փետրվարի 1-ին Թիֆլիսում հրավիրել կոնֆերանս՝ Ուկրաինայի և Հարավ-արևելյան միության ներկայացուցիչների մասնակցությամբ, որի մասին հայտնվեց և Թուրքական հրամանատարությանը։

Թուրքերի առաջարկությունը համարելով ոչ անսպասելի քայլ, այլ գերմանական քաղաքականության կրկնություն, «Հորիզոնը» բացատրում էր, որ Օսմանյան կայսրությունը օգտվելով Ռուսաստանի Թուլությունից, կարծում է, թե նա «դադարել է գոյություն ունենալ որպես մեկ ամբողջություն» և կարելի է պայմանագիր կնքել նրա առանձին մասերի հետ։ Թերթը գրում էր. «Պոլսի դիվանագետները նվագում են նույն եղանակները, ինչ որ Բեռլինից են լսել։ Էնվերն ու Թալեաթը կապկորեն ընդօրինակում են իրենց ուսուցիչների բոլոր շարժումները»։ Եվ ապա. «Տաճիկները, սակայն, այս անգամ էլ սխալվում են։ Ներքին քայքայումն որքան և ուժեղ լինի Ռուսաստանում, այնուամենայնիվ պետական ամբողջության գաղափարը դեռ ամուր է բոլորի մեջ, և մեզանում ոչ ոք չի մտածում Անդրկովկասի անկախության, ուրեմն և անջատ հաշտության մասին։ Կովկասի բոլոր ազգերը մեկից ավելի անգամներ հայտարարել

են, որ իրենք կանգնած են պետական ամբողջության հողի վրա և Կովկասը չեն ձգտում բաժանել Ռուսաստանից։ Նույն միտքը առանց տատանվելու կրկնել են բոլոր դեմոկրատական ու հեղափոխական կազմակերպություններն, ինչպես նաև Անդրկովկասի Հատուկ կոմիտեն և նրան հաջորդած Անդրկովկասյան կոմիսարիատը։ Այդ բոլոր մարմինները մշտապես պնդել են, որ հաշտությունը հնարավոր է միայն համառուսական մասշտաբով»։

Թերթը չէր կասկածում, որ այդ ծանր օրերին էլ Կովկասի ժողովուրդները և դեմոկրատական կազմակերպությունները նույն կարծիքին են։ Նրանք չեն կարող անջատ, կենտրոնից անկախ, Սահմանադիր ժողովի նախօրյակին սկսել հաշտության բանակցություններ։ Հույսը կապելով Անդրկովկասի կոմիսարիատի խոհեմ քայլերի և նրա անդամների բանականության հետ, «Հորիզոնը» գրում էր. «Մենք վստահ ենք, որ Անդրկովկասի կոմիսարիատը համախորհուրդ հեղափոխական բոլոր կազմակերպությունների հետ, հետ կմղի տաճիկ կառավարության անտեղի առաջարկը և ցույց կտա էնվերներին և թալեաթներին Սահմանադիր ժողովի հասցեն։ Ուրիշ միջոց մենք չենք երևակայում»[130]։

Այնուհանդերձ, թուրքերը ուժեղացնում էին ճնշումը Անդրկովկասի կոմիսարիատի վրա, պահանջելով նրանից անհապաղ կնքել հաշտությունն անջատ պայմանագիր։ Դա արտացոլվում էր թուրքական հրամանատարության բազմաթիվ գրություններում, հեռագրերում, նամակներում։

Թուրքիայի հետ հաշտության հարցին Անդրկովկասյան կոմիսարիատը անդրադարձավ 1918 թ. հունվարի 14 (27)-ի և 15 (28)-ի նիստերում։ Հունվարի 15-ի նիստում, որին բացի Կոմիսարիատի անդամներից մասնակցում էին նաև գլխավոր հրամանատար Լեբեդինսկին, ռուսական, հայկական, վրացական ազգային խորհուրդների, երկրային կենտրոնի ներկայացուցիչները, «Թուրքական առաջարկության և Անդրկովկասյան կոմիսարիատի որոշման նախագծի մասին» հաղորդումով հանդես եկած Ե. Գեգեչկորին հայտնեց, որ նիստի նպատակն է պարզել Ռուսաստանի ինքնավար կառավարությունների շրջանակները, որոնք պետք է հրավիրվեն Թուրքերի հետ Անդրկովկասյան հաշտության բանակցություններին։ Այս հարցում Կոմիսարիատում կային տարբեր կարծիքներ։ Մի խումբը գտնում էր, որ բանակցություններին պետք է մասնակցեն միայն Կուբանի և Թերեք-Դաղստանյան կառավարությունները, մյուս կողմը գտնում էր՝ պետք է հրավիրել նաև Ուկրաինայի կենտրոնական ռադայի և Հարավ-արևելյան միության ներկայացուցիչներին։ Կարծիքների նման բախում եղավ և նիստի ժամանակ, որտեղ հարցի քննարկմանը մասնակցեցին Խ. Կարճիկյանը, Ս. Ջավալիշինը, Ն. Ժորդանիան, Գ. Տեր-Ղազարյանը, Ա. Չխենկելին, Շ. Ալեքսեև-Մեսխիևը, Մ. Պապաջանյանը, Տ. Բեկզադյանը, Խ. Մելիք-Ասլանովը։ Հաղթեց Ուկրաինայի և Հարավ-արևելյան միության ներկայացուցիչների մասնակցությամբ բանակցություններ վարելու տեսակետը[131]։

Հունվարի 15 (28)-ին Անդրկովկասյան կոմիսարիատը Վեհիբ փաշային գրած նամակում համերաշխություն հայտնելով էնվեր փաշայի հաշտություն կնքելու առաջարկությանը, որոշակիորեն արձանագրում էր, որ Անդրկովկասը թեև չի ճանաչում կենտրոնական կառավարությանը, այնուհանդերձ, հանդիսանում է ռուսական հանրապետության անբաժանելի տարածքներից մեկը։ Այդ իսկ պատճառով, գրում էր Գեգեչկորին, «Անդրկովկասյան կառավարությունը չի կարող ձեզանից թաքցնել, պարոն գեներալ, պատերազմի վերացման վերաբերյալ իր ելույթների համաձայնեցման անհրաժեշտությունը ռուսական հանրապետության տարածքային միավոր մյուս ինքնավար կառավարությունների կարծիքների և հայացքների հետ, որոնք Անդրկովկասի կառավարության հետ հավասարապես շահագրգռված են հաշտություն կնքելու մեջ։ Այդ ուղղությամբ Անդրկովկասի կառավարությունը նախաձեռնել է հայտնի քայլեր և ընդհանուր որոշման ընդունումից անմիջապես հետո այն կհայտնի Ձեզ ի գիտություն»։ Այդ խորհրդակցությունների համար Անդրկովկասի կոմիսարիատը պահանջում էր երեք շաբաթ ժամանակ[132]։

Ընդունված որոշման մասին Անդրկովկասի կոմիսարիատը հունվարի 16 (29)-ին հայտնեց Ուկրաինայի կենտրոնական ռադային՝ Կիև, և Հարավ-արևելյան միությունն՝ Եկատերինոդար[133]։ Հարավ-արևելյան միության ղեկավարությունն, իր հերթին, Անդրկովկասի կոմիսարիատի որոշումը հղեց Դոնի, Կուբանի, Թերեք-Դաղստանյան, Աստրախանի, Ուրալի և Օրենբուրգի կառավարություններին[134]։

Թուրք-անդրկովկասյան հարաբերությունների, Վեհիբ փաշայի և Անդրկովկասյան կառավարության նամակագրության մասին, թուրքական առաջարկության և Կոմիսարիատի ընդունած որոշումների շարադրությամբ հունվարի 17 (30)-ին Գեգեչկորին հայտնեց Կովկասում արտասահմանյան երկրների հյուպատոսների ավագին՝ իտալական հյուպատոս Լորենցո Վալետին[135]։

Դրանից հետո էլ իրենց հեռագրերով և քաղցրածոր խոսքերով հանգստացնելով Անդրկովկասյան իշխանություններին, թուրքերը շարունակում էին պնդել, որ 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կրնքելով զինադադար, Անդրկովկասյան կոմիսարիատը արդեն հանդես էր եկել Խորհրդային Ռուսաստանից անկախ, ինքնուրույն պետության դերում. նրանք մոռանում էին մինչ այդ Բրեստ-Լիտովսկում կնքված զինադադարի պայմանները։ Եվ պատահական չէ, որ էնվեր փաշան իր քաղաքական խաղերը ձեռնարկում էր Անդրկովկասյան կոմիսարիատի հետ, այդպիսով, ինչպես և Կոմիսարիատը, չճանաչելով Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 16 (19)-ի որոշումով Կովկասյան գործերի ժամանակավոր և արտակարգ կոմիսար նշանակված Ստեփան Շահումյանի լիազորությունները և Ռուսաստանի Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին»

հրովարտակը։ Թուրքիայի կառավարողները «պաշտպանվում» էին նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի դեկավարների նոր հայտարարություններից։

«ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ԺՈՂՈՎՄԽՈՐՀԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ։ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Հայկական հարցի լուծման և ազատ ու անկախ պետականության վերահաստատման հայ ժողովրդի փայփայած գաղափարի իրականացման դժվարին ճանապարհին նոր քայլ հանդիսացավ Խորհրդային Ռուսաստանի Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 29-ի՝ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը, որի մշակմանը մասնակցել էին Ստ. Շահումյանը, Վ. Տերյանը, Վ. Ավանեսովը, Ի. Ստալինը, սոցիալիստ-հեղափոխական Պ. Պողոսյանը, Հայ Հեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչ Ստ. Ջորյանը (Ռոստոմ) և ուրիշներ[136]։

Ստ. Շահումյանի՝ Վ. Ի. Լենինին ներկայացրած նախագծի հետ թիֆլիսում ծանոթացել էին Ալեքսանդր Խատիսյանը և Հակոբ Ջավրիյանը։

Այդ առիթով Խատիսյանը գրել է. «Պետք է ըսել, որ այդ ատենները ամեն տեղ կարելի էր տեսնել բոլշևիկները, որոնք թեև շատ սակավաթիվ էին, բայց կգործին շատ եռանդուն կերպով և մանավանդ հավատ մը ունեին դեպի իրենց հաղթանակը։ Ամենեն սոսկալի հիշողությանս մեջ դրոշմված է Ստեփան Շահումյանի պատկերը, որ Լենինի ամենասիրելի ընկերն էր և մոլեռանդ հավատացյալ ու առաքյալ մը բոլշևիկյան գաղափարներուն»[137]։

Թուրքահայաստանի հարցին Շահումյանը անդրադարձել էր մինչ այդ ևս, 1917 թ. հոկտեմբերի 6-ին ՌՍԴ(բ)Կ Կովկասյան երկրային համագումարում արտասանած ճառում։ «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է Թուրքահայաստանի հարցը։ Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք այդ մարզի բնակչությանը, նրանց, որոնք պետք է որոշեն իրենց բախտը՝ Ռուսաստանի՛ն միանալու որոշման դեպքում նրանք պետք է միացվեն հայերին»։ Շահումյանը առաջարկում էր անցկացնել Անդրկովկասի վարչական միավորների վերակազմություն, գտնելով, որ երկրամասը հարկավոր է բաժանել երեք մարզերի. 1) Արևմտյան Անդրկովկաս՝ Քութայիսի, Բաթումի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը, 2) Արևելյան Անդրկովկաս՝ Երևանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները և Թիֆլիսի նահանգի մասը, 3) Բաքվի՝ Բաքվի շրջանը, Ելիզավետպոլի մի մասը և Դաղստանի մարզը։ Հիմքում դրվում էր ազգային պատմական հատկանիշը[138]։

«Թուրքահայաստանի մասին» ընդունված հրովարտակում խորհրդային կառավարությունը հայտնում էր, որ «պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։ Այդ

իրավունքի կենսագործման համար Ժողկոմխորհը առաջին հերթին անհրաժեշտ է համարում. «զորքի դուրս բերումը Թուրքահայաստանից» և հայկական ժողովրդական ոստիկանության անհապաղ կազմակերպումը՝ Թուրքահայաստանի բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունը ապահովելու նպատակով։ Անարգել վերադարձը Տաճկահայաստանից՝ պատերազմի ընթացքում թուրքական իշխանությունների կողմից երկրի խորքերը տեղահանված հայերի, որի վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը պիտի պնդի տաճիկ իշխանությունների հետ բանակցելիս։

Կազմվելու էր Տաճկահայաստանի ժամանակավոր ժողովրդական կառավարություն՝ հայ ժողովրդի պատգամավորների խորհրդի ձևով, ընտրված դեմոկրատական սկզբունքով։

Ժողկոմխորհը գտնում էր, որ «Թուրքահայաստանի սահմանագրական սահմանները որոշվելու էին հայ ժողովրդի դեմոկրատորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլն) օկրուգների դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասյան գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի հետ միասին»։ Շահումյանին հանձնարարվում էր Թուրքահայաստանի ժողովրդին ցույց տալ ամեն տեսակ օգնություն հրովարտակի կատարման համար, ձեռնարկել խառն հանձնախմբի ստեղծմանը՝ որոշելու համար այն ժամանակամիջոցն ու եղանակը, որով դուրս պիտի հանվեն զորքերը Տաճկահայաստանի սահմաններից[139]։

Հրովարտակի ընդունումը փաստորեն 1915 թ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական ոճրագործների իրականացրած հայերի հրեշավոր ցեղասպանության դատապարտում էր։ Խորհրդային Ռուսաստանը հայտնում էր իր կամքը՝ օգնել հայրենի տնից բռնի ուժով տեղահանված և աքսորված հայ ժողովրդի տառապյալ բեկորներին վերադառնալ երկիր, ստեղծել անկախ ժողովրդավարական հայկական պետականություն։

Այդ օրերին Հայկական հարցը բարձրացվեց նաև Լոնդոնում ու Վաշինգտոնում։ Այն իր արտահայտությունը գտավ 1918 թ. հունվարի 8-ին կոնգրեսում, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի «Համընդհանուր հաշտության մասին» ճառում և Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի համաշնքների պատատում ունեցած ելույթում։ «Պետք է ճանաչվի Արարիայի, Հայաստանի և Միջագետքի ազգային անկախությունը»— հայտարարեց Լլոյդ Ջորջը։

Վիլսոնի մերձավորներից մեկի՝ գնդապետ Հաուզի վկայությամբ, պրեզիդենտի սկզբունքները թելադրված էին նրանով, որ «բոլշևիկները արդեն վարում էին բանակցություններ անջատ հաշտության մասին և հնարավոր չէր նրանց պահանջներին չտալ յուրօրինակ պատասխան՝ հիմնավորված հայտարարություն, թե ինչու պետք է շարունակել պատերազմը»[140]։ Դրան կողմնակից էին Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը։ Պրե-

պրեզիդենտը հաշված «14 կետերով» առաջ էր քաշում գաղտնի համաձայնագրերի ոչնչացում և դրանք բաց պայմանագրերով փոխարինում, բոլոր պետությունների անկախության, տարածքային ամբողջականության, կայուն խաղաղության երաշխիք, Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների հետ առնչվող բոլոր հարցերի, այդ թվում և «սեփական քաղաքական զարգացման և ազգային քաղաքականության անկախ որոշման ապահովում»։ Նախատեսվում էր Ավստրո-Հունգարական կայսրությունում և Օսմանյան Թուրքիայում բնակվող ժողովուրդների ինքնավարություն։ «Օսմանյան կայսրության տաճկական մասերը, իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և հաստատուն ինքնիշխանություն, սակայն ներկայիս թուրքերի իշխանության ներքո գտնվող մյուս ազգությունները պետք է ստանան իրենց գոյության աներկբա երաշխիք և ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխախտելի պայմաններ»[141]։ Այդ թեզը վերաբերում էր և Հայաստանին։ Այդ երևում էր գնդապետ Հաուզի օրագրի գրառումներից. «Թուրքերի մասին կետը գրելուց հետո Վիլսոնը կարծիք հայտնեց, որ կետը կարելի է դարձնել ավելի որոշակի և որ Հայաստանը, Միջագետքը, Արաբիան և ուրիշ մասեր կարող են կոչվել անվանապես։ Ես չհամաձայնեցի դրան, խորհելով, որ ասվածը առանց այն էլ բավականաչափ որոշակի է և այդ կետը մնաց անփոփոխ»[142]։

Գնդապետ Հաուզը բացահայտում է և Վիլսոնի դիրքորոշման փոփոխությունը Թուրքիայի հանդեպ։ Մինչև Վիլսոնի ելույթը, 1917 թ. դեկտեմբերի 17-ին «Մանչեստր գարդիան» թերթում հրապարակվել էին Անտանտի երկրների գաղտնի պայմանագրերի տեքստերը, որոնք կնքվել էին 1916 թ. և վերաբերում էին Թուրքիայի բաժան-բաժան անելուն[143]։ Այն հրապարակվել էր և Կովկասի գրեթե բոլոր թերթերում։ Վիլսոնի հետ ունեցած զրույցից հետո Հաուզը գրում էր. «Պրեզիդենտի կարծիքով, Թուրքիան պետք է ջնջվի որպես պետություն և նրա բախտի տնօրինումը պետք է դրվի խաղաղության կոնֆերանսի վրա։ Ես պահանջեցի սահմանել, որ Թուրքիան չպետք է մասնատվի պատերազմի մասնակիցների միջև, այլ նրա տարբեր մասերը պետք է վերածվեն ինքնավարության, համաձայն ռասսայական պատկանելության։ Նա դրան համաձայնվեց»։ Ակնհայտորեն նա փոխեց իր կարծիքը Թուրքիայի ոչնչացման մասին և իր զեկուցման լուսանցքում գրեց. «Ժամանակակից Թուրքիայի կայսրության թուրքական մասը պետք է ունենա ապահովված ինքնուրույնության երաշխիք, մյուս ազգերին, որոնք այժմ գտնվում են թուրքական կառավարման տակ, պետք է ապահովվի լրիվ հնարավորություն բարեբեր զարգացման համար»[144]։

Գնդապետ Հաուզը, պրեզիդենտի ճառը համարելով «քարոզչության հիասքանչ գործիք», գտնում էր, որ նրա կետերը «պիտանի չէին որպես խաղաղության ծրագիր ծառայելու»[145]։ Հայտարարելով փոքր ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, Վիլսոնը այն չամրապնդեց գործնական քայլերով։ «14 կետերը» մնացին որպես քարոզչական փաստաթուղթ,

իսկ Թուրքիայում բնակվող ազգությունների ինքնավարության մասին հայտարարությունը՝ հայտարարություն։ Մտնելով պատերազմի մեջ, ԱՄՆ-ը Թուրքիայի հանդեպ մինչև պատերազմի վերջը պահպանեց չեզոքություն։ Թուրքիայի նկատմամբ չեզոքությունից օգտվեցին երիտթուրքերը, որը խաղաց իր չարաղետ դերը Հայկական հարցում։

Ժողկոմխորհի «Թուրքահայաստանի մասին» հրովարտակին, ԱՄՆ-ի պրեզիդենտի «14 կետերին», Լլոյդ Ջորջի ելույթին Անդրկովկասի հասարակայնության, քաղաքական կուսակցությունների, թուրքահայության մոտեցումը միանշանակ չէր։ Ոմանք Վիլսոնի «14 կետերը» ընդունում էին անվերապահորեն և մեծ հույսերով, ոմանք՝ մերժումով, քիչ չէին և «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի կողմնակիցները՝ այն դիտելով ավելի իրատեսական։ Միանշանակ չէր վերաբերմունքը և Լլոյդ Ջորջի ելույթի նկատմամբ։

Վուդրո Վիլսոնի և Լլոյդ Ջորջի ճառերը ըստ էության, նույն տեսակետներն են պարզաբանում, գրում էր «Հորիզոնը». «Անգլիական վարչապետը թանձրացնում ու շոշափելի է դարձնում այն մտքերը, որ ամերիկյան նախագահի ճառի մեջ մշուշապատ ձևով և ընդհանուր խոսքով են արծարծվում»։ «Հորիզոնը» նկատում է, որ եթե անգլիական դիվանագետներն առաջ խոսում էին ընդհանուր դարձվածքներով, առանց իրենց մտքերին կոնկրետ ձևակերպումներ տալու, ապա Լլոյդ Ջորջը իր ճառում կասկածների տեղիք չի թողնում և հարցերին տալիս է հստակ պատասխան։ Որպես նոր երևույթ, նշվում էր «վերաբերմունքը դեպի Թուրքիան»։ «Ամենքը հիշում են, որ Անգլիան առաջինն էր, որ Ասքվիթի բերանով Թուրքիայի բաժանման և վերաբաժանման խնդիրը դրեց. մինչդեռ այսօր Լլոյդ Ջորջը հավաստիացնում է, թե մենք վիճելի չենք համարում թուրքական կայսրության պահպանումը» և «պետք է ճանաչվի Արաբիայի, Հայաստանի և Միջագետքի ազգային անկախությունը»։ Վերլուծելով Վիլսոնի և Լլոյդ Ջորջի ճառերը, «Հորիզոնը» հանգում էր եզրակացության, որ դրանք նոր պատրվակ են պատերազմը շարունակելու համար և անգլիական վարչապետի ճառը «ընավ չի վերացնում այն ստորջրյա ժայռերը, որոնք արգելում են կռվող կողմերի նավերին իրար մոտենալ»[146]։

Վիլսոնի և Լլոյդ Ջորջի ճառերի լրիվ տեքստերը Վաշինգտոնից հեռախոսով հայտնվեցին Թիֆլիս՝ ԱՄՆ-ի դիվանագիտական ներկայացուցչություն, տպագրվեցին «Կավկազսկոյե սլովո», «Հորիզոն» և այլ թերթերում։

Ժողկոմխորհի հրովարտակը ամբողջությամբ, կառավարության նախագահ Վ. Լենինի, ազգությունների գծով ժողկոմ Ի. Ջուղաշվիլու (Ստալին), Ժողկոմխորհի գործերի կառավարիչ Բոնչ-Բրուևիչի և Ժողկոմխորհի քարտուղար Գորբունովի ստորագրությամբ տպագրվեց Անդրկովկասի մամուլի տարբեր օրգաններում՝ կոմունիստական, դաշնակցական, սոցիալ-դեմոկրատական, մենշևիկյան, հնչակյան, սոցիալիստ-հեղափոխականների և այլ քաղաքական ուղղությունների,

իրենց չեզոք համարող թերթերում։ Արտատպվեց նաև Ստալինի «Թուրքահայաստանի մասին դեկրետը» հոդվածը։

Հրովարտակը «Հորիզոնում» տպագրվեց հունվարի 24-ին, Ստալինի հոդվածը՝ հունվարի 28-ին, Ստալինի հոդվածի կապակցությամբ տպագրվեց և խմբագրական խոսքը։ «Կարդալով Ազգային գործերի կոմիսարի հոդվածը, մարդ չի կարող չապշել այն միամտության վրա, որ ցույց է տալիս բոլշևիկյան կառավարությունը։ Մենք հարց ենք տալիս, շատ լավ, տաճիկ-գերմանական գիշատիչ իմպերիալիստներն ուզում են գրավել Տաճկահայաստանը, այդ մասին ոչ ոք չի վիճում, բայց ինչով եք ուզում դուք՝ բոլշևիկներդ, ապահովել տաճկահայ ժողովրդի ազատությունը։ Չէ՞ որ տաճիկ գիշատիչներից հայերին պաշտպանելու համար հարկավոր է զորք մինչև վերջնական հաշտություն մնա իր տեղում, իսկ դուք արագ քաշով աշխատում եք պարպել դիրքերը, միթե՞ թշնամու առջև ֆրոնտ վերկացնելով և քրդական ավազակախմբերի շահատակություններին ազատություն տալով եք ուզում տաճկահայերին փրկել կոտորածից և նույնիսկ քաղաքական անկախություն շնորհել»։ Թերթը գտնում էր, որ տաճկահայերի ինքնորոշումը պետք է լինի ոչ թե թուրքական զորքերի և քրդական ավազակախմբերի հարվածների տակ, այլ ռուսական զորքերի դիրքերում մնալու պայմաններում[147]։

Անդրանիկի հրատարակած «Հայաստան» թերթում հրովարտակը հրապարակվեց հունվարի 30-ին, Ստալինի հոդվածը՝ հունվարի 31-ին։ Փետրվարի 1-ին հրապարակվեց Անդրանիկի հոդվածը՝ «Բոլշևիզմը Հայաստանում»։ Այդ հոդվածում ժողկոմխորհի հրովարտակը բնորոշվում էր որպես «արդարության և քաղաքական անկեղծության մեծագույն արտահայտություն»։ Խմբագրությունը հակադրվում էր «Ազատամարտ» թերթին և լրատվության այլ մարմիններին, որոնք գովերգում են Վիլսոնի և Լլոյդ Ջորջի «ուռուցիկ բառերն և այն կնկատեն իբրև մեծ գրավականներ Հայաստանի ապագային»։

Համաձայնվելով ժողկոմխորհի հրովարտակի բովանդակությանը, Անդրանիկը նրա իրագործման մեծագույն գրավականը տեսնում էր ռուս բանակի գիշեր ընդ մնացորդի մնալու մեջ՝ մինչև հայերը լայնորեն կկազմակերպվեն և ընդունակ կլինեն ինքնորոշվելու։ «Հայաստանի շուրջը եղած բոլոր պաշտոնական հայտարարությունների մեջ բոլշևիզմի դեկրետը ամենից անկեղծն է, և թերևս վաղը-մյուս օրը դառնա ամենից խոշոր փաստը»[148]— գրում էր Զորավարը։

Ժողկոմխորհի հրովարտակը, սակայն, բոլորի սրտովը չէր։ «Էրթոբայի» խմբագրությունն անմիջապես այն առավ կրակի տակ։ «Բոլշևիկների՝ Տաճկահայաստանին անկախություն շնորհող դեկրետի մեջ, ինչպես և նրանց մյուս գործունեությունում, չի նկատվում խորը մտածմունքի նշան,— գրում է թերթը,— նկատվում է, որ բոլշևիկները ձեռաց կազմած փաստաթղթերով որոշել են մի որևէ կերպ շահել հայ դաշնակցական կուսակցության սիրտը»։

«Էրթոբան» հիմնական հարվածը ուղղելով Շահումյանի դեմ, գրում է. «Հայաստանի անկախության իրականացման հոգսը հանձնարարված է Շահումյանին, որը իրեն Կովկասյան կառավարություն է հռչակում, և միաժամանակ հայտնի չէ, թե որտեղ է թաքնվում» և նա իրական ուժ չունի։ Վերլուծելով հրովարտակը, «Էրթոբան» հայտնում էր մտավախություն, որ Տաճկահայաստանում հայ ժողովրդական ոստիկանության կազմակերպումը և միաժամանակ ռուսական զորքերի անհապաղ հեռացումը «այնտեղ, որտեղ հայերի հետ խառն ապրում են նաև թուրքեր և հատկապես քրդեր, առաջ կբերի այդ ազգերի միջև կոտորած և առավել այն պատճառով, որ բոլշևիկները ռուսական զորքի հեռացումն են պահանջում»։ Ապակողմնորոշելով հասարակայնությանը, «Էրթոբան» պնդում էր. «Շահումյանը, կամենում է հայերին ու թուրքերին միմյանց հետ կռվացնել և հետո պղտորված ջրում բոլշևիկյան ձկներ որսալ»։

Արտատպելով «Էրթոբայի» այս հոդվածը, ժողկոմխորհի հրովարտակի առթիվ «Հորիզոնը» խմբագրության կողմից գրում էր. «Շահումյանի պաշտպաններից չենք, բայց «Էրթոբայի» այս ակնարկը համարում ենք անպատվաբեր ու պրովոկացիոն, որովհետև թեև բոլշևիկները շատ մեղք ունեն, բայց մեղադրել նրանց այն բանում, որ ուզում են հայերին ու թուրքերին կռվացնել, առնվազն չարամտություն է»[149]։

Ժորդանիայի, Ռամիշվիլու, Գեգեչկորու և այլոց՝ Շահումյանի նկատմամբ վերաբերմունքը արտահայտվեց Թիֆլիսից նրա արտաքսման մասին կառավարական որոշման մեջ, «Սաքարթվելո», «Էրթոբա», «Չվենի ռեսպուբլիկա», «Սախալխո Սաքմե» և այլ թերթերում տպագրված «քերականական բոլոր հոլովներով» հագեցած բազմաթիվ հոդվածներում։ Վերնագիրը հայերեն տառերով գրված «Պարոն Շահումյան» հոդվածում, անդրադառնալով «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի և Շահումյանին Արտակարգ կոմիսար նշանակվելու հարցին, «Սաքարթվելոն» ժողկոմխորհի հրովարտակը բնորոշում էր որպես «Սազոնովի և Միլյուկովի գաղափարներից վար իջեցված գրվածք», հանդես էր գալիս հայերի՝ դեպի Ռուսաստանի կենտրոնական իշխանություններն ունեցած կողմնորոշման դեմ։ «Մենք աստծո առաջ հայտնում ենք, որ մենք ամենևին վատ բան չենք ցանկանում հայերին ներկայում և ապագայում։ Կցանկանայինք, նույնիսկ, որ Տաճկահայաստանը դրախտի վերածվեր և բոլոր հայերն էլ այստեղ ապաստան գտնեին,— գրում էր «Սաքարթվելոն»,— սակայն մեզ համար միևնույնը չէ, թե մեր հարևանները ինչ միջոցներով կկամենան իրենց նպատակները իրագործել։ Կհենվե՞ն արդյոք նրանք այնպիսի մի ուժի, որ ձգտում է ռուսական կենտրոնական իշխանության վերականգնմանը, թե՞ համաձայնություն կկայացնեն իրենց այն հարևանների հետ, որոնք իրենց սեփական ազգի կյանքի հաստատմանն են ձեռնարկել»։ Այս հարցադրումից հետո «Սաքարթվելոն» իր ընթերցողներին նորից ներկայացնում էր Շահումյանին, ասելով. «շատերը մտածում են,

որ Շահումյանն ավելի դաշնակցական է, քան բոլշևիկ»[150] և «ծայրահեղ շովինիստները Շահումյանի հետ միասին երևի հրապում են ստեղծել «Մեծ Հայաստան»։ «Մեծ Հայաստանը» «Սաքարթվելոն» գրել էր հայերին[151]։

Հանդես գալով Շահումյանի նկատմամբ Անդրկովկասյան կոմիսարիատի բռնության փորձերի դեմ, «Աշխատավոր» թերթը գրում էր. «Մենք բողոքում ենք այն փաստի դեմ, որ Անդրկովկասյան կոմիսարիատը փորձել է աքսորել կամ ձերբակալել բոլշևիկյան իշխանության կողմից Անդրկովկասի հսմար կոմիսար նշանակված Ստ. Շահումյանին։ Մենք զարմանում ենք, որ այս քայլը անում է այն իշխանությունը, որը բնավ չվրդովվեց, երբ իր կազմի բեկ անդամները չընդունեցին հողային դեկրետը և շարունակեցին մնալ իշխանության մեջ, իրեն ակնհայտ հակահեղափոխականներ»։ Թերթը հարցնում էր Կոմիսարիատին՝ «Մի՞թե մի բոլշևիկ Շահումյանը ավելի վտանգավոր է, քան իշխանության քղամիդ հագած հակահեղափոխական բեկն ու խանը» և պատասխանում՝ «ոչ. այս արդեն անթույլատրելի է, մեր «հեղափոխական» իշխանությունը կազում է»[152]։

Մեղադրելով հայերին, թե նրանք ձգտում են, «հավնել երջանկության ուրիշների դժբախտության վրա», «Չվենի ռեսպուբլիկան» (նո. 45) կշտամբում էր սոցիալ-դեմոկրատական (մենշևիկյան), կուսակցության ղեկավարներին, որ լինելով, «Անդրկովկասի ընդհանուր պլատֆորմի խիստ պաշտպան, մոռանում էին, որ հայերի Թուրքիայում սկսած անջատման քաղաքականությունը դեռևս վերջացած չէ և նրա վերջանալը Անդրկովկասում պետք է տեղի ունենա»։

Թիֆլիսի վրայով Ռուսաստան գնացող ռուս զորքի զինաթափման դեմ արտահայտված դաշնակցության մոտեցումը ևս հանդիպեց «Չվենի ռեսպուբլիկայի» վրդովմունքին. «Հայոց դաշնակցական կուսակցությունը ավելի համարձակ դարձավ, տոգորվեց դավաճանական զգացումով և իր երեսը դարձրեց դեպի Անդրկովկասի ընդհանուր թշնամին»[153]։ Այդպիսին էր Թերթի գնահատականը։

«Չվենի ռեսպուբլիկան» դժգոհում էր նաև Անդրկովկասի կառավարության գործունեությունից, կշտամբելով նրան Թուրքերի հետ հաշտության կնքումը ձգձգելու մեջ։ Նա առաջարկում էր ստեղծել վրացական սեփական կառավարություն և կնքել անջատ հաշտություն։

Կշտամբելով հայերին «Տաճկահայաստանի ազատության տենչի», առանց անդրկովկասյան ազգերի դեմոկրատիայի հետ ձեռք-ձեռքի գնալու ձգտումների մեջ, «Սախալխո Սաքմանն» (նո. 162), այնուհանդերձ, գրում էր, որ դժվար է հրաժարվել հայ ազգի՝ ազատագրության հասնելու ձգտումից։ «Մենք շատ լավ գիտենք, որ հայերը չեն կարող հրաժարվել Թուրքահայերի ազատություն ձեռք բերելու մտքից։ Մենք այդ չենք պահանջում նրանցից»[154]։ Մյուս կողմից, Թերթը մատնանշում էր՝ «հայոց տենչանքներում» չի երևում «դեմոկրատական քաղաքականություն» և նրանք «ապակենտրոնացման սկզբունքի փոխարեն կենտրոնացում են

պահանջում; մի բան, որ Ռուսաստանի հին կարգի վերականգնման և պաշտպանության ձգտում է արտացոլում»։ Թերթը հանդես էր գալիս ինքնուրույն գործելու նշանաբանով, գտնելով որ, «ժամանակն է, որ ազգերն իրենց հույսը իրենց վրա դնեն, ձեռք քաշեն դիվանագիտություններից, խորհրդավոր խորշեր որոնելուց» և «ազգային գործերը կարգավորեն ընդհանուր համերաշխության սկզբունքների համաձայն»[155]։

Մեղադրելով հայերին պառակտիչ գործողությունների մեջ, «Չվենի ռեսպուբլիկան» այն միտքն էր հայտում, որ Վրաստանի ազգային խորհուրդը պետք է ստեղծի ազգային կառավարություն «Երկիրը ներքին և արտաքին ճգնաժամից դուրս բերելու համար»։ Դավաճանություն էր համարվում և «Պայքար» թերթի հայտնած միտքը, թե Անդրկովկասի կոմիսարիատը պարտավոր է կապ պահպանել Պետրոգրադի կառավարության՝ ժողովրդական կոմիսարների խորհրդի հետ[156]։

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակին իրենց բացատրությունն են տալիս թուրքական քաղաքագետները։ Այդ կարծիքը Հիքմեթ Բայուրը ներկայացրել է հետևյալ շարադրանքով.

Հրովարտակի հեղինակներ Լենինի և Ստալինի նպատակը «շատ հավանական կարող է լինել մի կողմից սիրաշահել հայերին, որոնք Կովկասի ամենահեղափոխական ազգն են, Արևելյան Անատոլիան էլ գրավել են, և նրանց վրա հենվելով այդ շրջաններում նորից ազդեցության տեր դառնան, նամանավանդ, նորից իշխեն Հարավային Կովկասում, մյուս կողմից՝ ձևացնելով, թե պաշտպանում են հայերին, արևմտյան աշխարհում գերմանացիների դեմ բարեկամներ շ ունեն։ Բացահայտ է, որ այս գործում գաղտնի, բայց ամենակարևոր նպատակն է Կովկասյան Հայաստանին կցել Արևելյան Անատոլիան և հետո բոլորը կլանելով, Տիգրանակերտից էլ հարավ, գործադրել դեպի Միջերկրական ծով ծավալվելու քաղաքականությունը»։ Սվ նորից. «Բոլշևիկյան կառավարության ցանկությունը ամփոփ կերպով հետևյալն է. Կովկասյան Հայաստանին՝ ուր հայերը մեծամասնություն են կազմում, կցել Արևելյան Անատոլիան»։

Հայկական կառավարության և հայկական ոստիկանության կազմավորման մասին ժողկոմխորհի որոշումը նրանք համարում էին անօրեն, «հակադեմոկրատական», ռուսական հեղափոխության կողմից առաջ քաշված ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին հակասող որոշում։ Զքաղեցրած դիրքերից թուրքական զորքերի հետքաշման պահանջը Օսմանյան կայսրության կառավարության պատվիրակության կողմից դիտվում էր որպես «իրեն Հայաստան անվանող երկրում մեծամասնություն կազմող մուսուլմանական բնակչության՝ հայերի կողմից ավելի նպատակասլաց և անարգել բնաջնջման նպատակ ունեցող ակտ»[157]։ Այդպես էլ ներկայացնում էին իրենց դաշնակիցներին, նրանց զինում իրենց հորինվածքներով։ Այդ զգացվում էր թե՛ Բրեստում և թե՛ Անդրկովկասում։

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԱՐԴԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Փետրվարի 5 (18)-ին վերսկսելով պատերազմական գո-[illegible]ղությունները՝ գերմանացիները հարձակման անցան ամբողջ ռուսական ճակատով։ Փետրվարի 8 (21)-ին գերմանա-ավստրո-հունգարական կողմը ներկայացրեց 10 կետից բաղկացած նոր վերջնագիր, որի պայմանները արտակարգ ծանր էին։ Վերջնագրի 5-րդ կետում պաշտպանվում էին Թուրքական պատվիրակության առաջադրած պայմանները, ավելի հքստակեցվում դրանք։ «Ռուսաստանը իր տրամադրության տակ ունեցած բոլոր միջոցներով պետք է նպաստի Թուրքիային՝ նրա անատոլիական գավառների ավելի արագ ու պլանաչափ վերադարձմանը և ճանաչում է Թուրքական կապիտուլյացիաների վերացումը։ Ռուսական բանակների լրիվ զորացրումը, ներառյալ և ներկա կառավարության կողմից ստեղծված զորամասերինը, պետք է իրագործվի անհապաղ»[158]։

Այստեղ էր, որ գործադրվեց 1914 թ. օգոստոսի 2-ին Ստամբուլում կնքված գերմանա-թուրքական դաշինքի ուժը, գործել սկսեց գերմանացիների խոստումը Թուրքերի նվաճողական պլանների պաշտպանության, Օսմանյան կայսրության «արևելյան սահմանների շտկման» և Ռուսաստանում բնակվող մուսուլմանական տարրերի հետ «անմիջական շփման» հարցերում։ Ինչպես վկայում է Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար գեներալ Օտտո Լիման ֆոն Սանդերսը, Թուրքերը ամբողջ պատերազմի ընթացքում վկայակոչում էին այդ դաշնագիրը և պահանջում գերմանական խոստումների կատարում[159]։ Եվ Թուրքիան պահը բաց չթողեց։ Եվ դա հենց այն ժամանակ, երբ Ֆելդմարշալ Հինդենբուրգի վկայությամբ, Հայաստանում «ռուսական ուժը արդեն նոսրացել էր, զորքերի մի մասը բացարձակապես հալվել էր, Թուրքերին դիմադրողները» միայն հայկական խմբերն էին[160]։

Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Բերնսդորֆը Ռուսաստանին հղվելիք վերջնագրի տեքստը Բարձր դռանը հաղորդեց փետրվարի 20-ին։ Օսմանյան կառավարությունը այդ թալանչիական պահանջները համարեց քիչ։ Փետրվարի 25-ին Հալիլ բեյը (Մենթեշի) Հագգը փաշային տեղեկացրեց «1. Հինգերորդ հոդվածը թույլ է. պետք է ավելի վճռական լինել։ 2. Կարսի, Արդահանի և Բաթումի համար հարկ է, որ գրվի բանաձև՝ նման երրորդ հոդվածին, որը վերաբերում է Լիվադեային և Էստոնիային՝ պետք է պարպել այն երեք սանջակները, որոնց Ռուսաստանը տիրել է 1877—1878 թթ. պատերազմի ռազմատուգանքի մի մասի փոխարեն։ 4. Հարկ է պահանջել նաև Պարսկաստանի պարպումը»[161]։

Թուրքական ավարատենչ գործողությունների սանձազերծման մեջ իր դերը խաղաց Հագգը փաշային Քյուլմանի՝ 1918 թ. փետրվարի 21-ին գրած նամակը. «Ռուս պատվիրակների Բրեստ-Լիտովսկից հեռանալը և Ռուսաստանի ներքին խառնաշփոթությունները անհնարին են դարձրել,

որ Թուրքիան դիվանագիտական բանակցություններով վերստանա ասիական նահանգները, որոնք գտնվում են ռուսական իշխանության տակ։ Այն պարագան, որ ռուսների կողմից այդ վայրերը լքվել են և Թողնվել հայ ասպատակների կամքին՝ անհրաժեշտություն են դարձնում Թուրքական ռազմական միջամտությունը»։ Այդ հարցում Քյուլմանը խոստանում էր Գերմանիայի աջակցությունը[162]։

Օսմանյան կառավարությունը ճիշտ ընկալեց Քյուլմանի ակնարկը. «Արևելյան Անատոլիայի ազատագրման համար կատարվող աշխուժացումը» նա համարեց «հայերի դեմ ուղղված մի գործողություն»[163]։

Առանց զինադադարը վերացված հայտարարելու, Թուրքերը Հունվարի 30 (փետրվարի 13)-ին հանկարծակի գրոհով արդեն գրավել էին Երզնկան, փետրվարի 4-ին Բաբերդը, 8-ին Մամախաթունը։ Ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկին 1918 թ. Հունվարի 24 (փետրվարի 5)-ին Թուրքական կովկասյան ճակատի մասին Օտտակար Ջերնինին հայտնում էր. «Հայաստան. Մամախաթունը գրավված է Թուրքական կովկասյան կորպուսի առաջապահ զորքերի, Ախլաթը՝ չորրորդ կորպուսի Թուրքական զորքերի առաջապահ ուժերի կողմից»[164]։

Այդ հարձակողական գործողություններին Թուրքերը պատրաստվում էին, օգտագործելով զինադադարը։ «Կովկասյան ճակատում բանակային կորպուսները վերածվեցին 2 բանակի,— գրում է Կարաբեքիրը,— 4-րդ բանակային կորպուսը հրաման ստացավ շարժվել Վան-Բայազետի ուղղությամբ, առաջին կովկասյան բանակային կորպուսը (իմ կորպուսը)՝ Էրզինջան-Էրզրում և 2-րդ կովկասյան բանակային կորպուսը (Շևքի փաշա)՝ Բաբերդ-Տրապիզոն ուղղությամբ։ Գործողությունները սկսվեցին փետրվարի 12-ին։ 14-ին գրավեցինք Էրզինջանը»[165]։

Օգտվելով ռուսական զորքերի բարոյալքումից և քայքայվածությունից, Կովկասյան ճակատի փլուզումից, Թուրքական զորքերն ամբողջ ճակատով անցան հարձակման։ Վեհիր փաշան հայտարարեց, որ հարձակողական գործողությունները կշարունակվեն մինչև ռուսական զորքերին հանդիպելը։ Նա լավ գիտեր, որ այդ զորքերը այլևս չկային, ներանք անկազմակերպ, զանգվածաբար լքում էին ճակատը, զինվորները շտապում էին տուն՝ խաղաղ կյանքի, հեղափոխության խոստացած գործարաններին ու հողին տիրելու համար։ Նրանց տեղը զբաղեցնում էին նոր կազմակերպվող հայկական կորպուսի գնդերը, կամավորական ջոկատները, խմբերը։ Նրանք տվեցին մի քանի մարտեր Թուրքական կանոնավոր զորքերի դեմ, պատճառելով կենդանի ուժի մեծ կորուստներ։

1918 թ. Հունվարի վերջին, փետրվարին Բաթումի և Ճորոխի հովիտը, Արդվինը պաշտպանում էր գեներալ Արջիվանիձեի ղեկավարած վրացական ջոկատը, Երզնկայի ուղղությամբ կանգնած էր գնդապետ Կարո Հասանփաշյանի գլխավորած Երզնկայի գունդը, գնդապետ Մորելի ջոկատը, Էրզրումում՝ Էրզրումի գունդը, Անդրանիկի հատուկ զորամասը, Հայկական դիվիզիայի առաջին և երրորդ գնդերը՝ գնդապետ Բեժանբեկի ղեկավարությամբ (ընդհանուր հրամանատար էր նշանակվել Անդրա-

նիկը), Խնուսից մինչև Վան՝ Խնուսի և Վանի գնդերը, Վանից հարավ՝ Հայկական 5-րդ գունդը, առաջին և երկրորդ գումարտակները, Վանի գումարտակը, Վանից արևելք՝ Մակուի գունդը։ Այդ տարածքում կովում էին Մուրադի, Սևպուհի, Պանդուխտի, Թորգոմի, Տեր-Ղևոնդյանի, բժիշկ Պողոսյանի, Սասունցի Մանուկի և այլ կամավորական ջոկատներ, գեներալ Ղորղանյանի վկայությամբ «տարր մը, որ լեցուն էր ատելությամբ դեպի թշնամին, հիանալիորեն ծանոթ էր երկրին և ռազմաբեմի պայմաններին»[166]։

Գերմանական, ավստրո-հունգարական, ռուսական, հայկական, վրացական աղբյուրները, թուրքական հրամանատարության հեռագրերը, Անդրկովկասի մամուլում ժամանակին տպագրված փաստաթղթերն ու հաղորդումները վկայում են, որ էնվեր և Թալեաթ փաշաները, զորքերի հրամանատար Վեհիբ փաշան, Հալիլ փաշան, թուրքական զավթողական պլանները քողարկում էին ռուսական զորքերի կողմից գրավված տարածքում «Հայկական բարբարոսություններին վերջ տալու», «քաղաքակրթությունը և թուրք ազգաբնակչությանը պաշտպանելու» կեղծ մարդասիրական պատրվակով։ Հայկական «բանդաների» կողմից մահմեդականների հալածման հոգևբանական-քարոզչական աշխատանքը թուրքերը ծավալում էին ամենուր, այդ թվում և իրենց դաշնակից պետությունների դեսպանների, հյուպատոսների շրջանում[167]։

1918 թ. հունվարի 16-ին Սամսունից ավստրո-հունգարական հյուպատոսը Վիեննա՝ արտաքին գործերի նախարար Օտտոկար Չերնինին «Ռուսները Տրապիզոնի վիլայեթում, հայկական բանդաները» վերտառությամբ հեռագրում հայտնում էր Տրապիզոնի մոտ գտնվող Տրիպոլիի տեղամասի հրամանատար Հաջի Համզի բեյից ստացած տեղեկությունները՝ «Ռուսական կայազորերը արդեն հետ են քաշվել, զորամասերը Տրապիզոնից տեղափոխվում են Օդեսա։ Ռուսներից հետո երևում են հայկական բանդաները, որոնք Հայաստանի անկախությունից հուսախաբ, ընդունել են ռուսների նկատմամբ թշնամական կեցվածք և պատրաստվում են ցույց տալ դիմադրություն թուրքական աշխուժացմանը։ Եթե վերջին հաղորդումը արդարացվի, այդ դեպքում դեռևս շարունակվող հայկական ատելության առկայությամբ անհրաժեշտ է զգուշանալ Թուրքիայում մնացած հայերի նկատմամբ վրեժի ցասումից»[168]։

Համանման հաղորդում ուղարկվել է և Կոստանդնուպոլիս՝ ավստրո-հունգարական դեսպանություն[169]։ Նույն օրը հայտնվում էր նաև Հաջի Համզիի մեկ այլ հաղորդման մասին. «Ռուսների ուժերով մինչև հիմա գրավված մարզերում հայերի կողմից սպասվում է թուրքերի առաջ շարժմանը դիմադրություն»[170]։ Փետրվարի 3-ի «Երաշխավորվող հեռագրում» մարկգրաֆ Պալավիչինին հայտնում էր. «Ինչպես ես իմացա, այստեղի կառավարական շրջաններում չափազանց անհանգստացած են Կովկասյան ճակատից ստացած հաղորդագրումներից։ Ռուսական զինվորական ստորաբաժանումները, որոնց հետ կնքվել է զինադադար, հեռացել են և նրանց փոխարեն եկել են հայերից և վրացիներից կազմված բանդաներ։ Նրանց թվում է, թե սրանք դուրս կգան տեղական մուսուլմանական բնակչության դեմ»[171]։

Նման քարոզչական գործունեության հետևանք է և Պալավիչինիի հեռագիրը Կոստանդնուպոլսից Վիեննա. «Փետրվարի 4-ին, զրույցի ժամանակ Հալիլ բեյը խոսում էր հայկական գավառներում հրոսակախմբերի ավազակության մասին, որոնք Երզնկայի և Էրզրումի միջև ընկած տարածքում թուրք բնակչությանը վերաբերվում են կատաղի բարբարոսությամբ»[172]։

Նույն Պալավիչինիի Կոստանդնուպոլիս՝ 1918 թ. փետրվարի 9-ին հղած հեռագրից արդեն երևում են թուրքական զավթողական պլանները. «Հավաստի աղբյուրներից տեղեկացա, որ Էնվեր փաշան հրահանգավորել է Վեհիբ փաշային՝ մտնել ռուսների կողմից մինչև հիմա գրավված մարզերը»[173]։

Բադենից 1918 թ. հունվարի 4-ին հղած հեռագրում՝ ուղղված կոմս Չերնինին, բանակի գլխավոր հրամանատարությանն առընթեր արտաքին գործերի մինիստրության ներկայացուցիչը հայտնում էր Կովկասը ռուսներից ազատագրելու համար երկրամասում «մուսուլմանների ապստամբական շարժման նախապատրաստման» պլանների մասին[174]։

Հայերի «վայրագությունների» մասին մտացածին փաստաթղթերով թուրքերը ոմբակոծում էին և Կովկասյան ռուսական բանակի շտաբը, Անդրկովկասյան կոմիսարիատը, այլ մարմիններ։ Դրանցից առաջինը Թիֆլիսում ստացվեց 1918 թ. հունվարի 18 (31)-ին։ Դա Վեհիբ փաշայի նամակն էր ռուսական Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեին՝ «Մուսուլմանական ազգաբնակչության նկատմամբ հայերի բռնության մասին»[175]։ Փաստերին և իրականությանը հակառակ, թուրք փաշան գրում էր. «Հայերի դաժանությունը և բռնությունը մուսուլմանական ազգաբնակչության նկատմամբ ռուսական զորքերի կողմից գրավված թուրքական գավառներում, որը նկատվում էր այդ գավառների գրավման առաջին իսկ օրից, Երզնկայում և շրջակա գյուղերում ավելի լայն չափեր են ընդունել՝ Երզնկայից Էրզրում Կովկասյան առաջին կորպուսի տեղափոխման կապակցությամբ»։ Փաշան խնդրում էր ձեռք առնել միջոցներ «Օսմանյան մուսուլմանական բնակչության պատվի, կյանքի և գույքի ապահովման համար, հանուն մարդասիրության և քաղաքակրթության»։ Նույն օրը, Կովկասյան ճակատի հրամանատար գեներալ Պրժևալսկուն հղած նամակում, նորից խեղաթյուրելով փաստերը, Վեհիբ փաշան գրում էր հայերի բարբարոսության, նրանց կողմից թուրքական ազգաբնակչության նկատմամբ բռնությունների մասին։

Վեհիբ փաշայի մտացածին մեղադրանքների ժխտման ապացույց են նույնիսկ ոչ հայամետ գեներալ Օդիշելիձեի Հունվարի 30 (փետրվարի 12)-ի հեռագրում բերված փաստերը։ «Բռնություններին վերաբերող բոլոր տեղեկությունները Ձերդ գերազանցությանն են հասել շատ և շատ

չափազանցրած ձևով։ Ռուսական զորքերի գրաված մարզերում թուրքական բնակչության հալածման փաստերը բացարձակապես չեն կարող համապատասխանել իրական վիճակին»։

Գեներալ Պրժևալսկուն հղած մերկապարանոց հայտարարությամբ հեռագրում կրկին վկայակոչելով սահմանային գծի մյուս կողմը գտնվող տարածքից ռուսական զորքերի հեռանալուց հետո Թուրքահայաստանի մուսուլման բնակչության նկատմամբ հայկական կամայականությունները ու բռնությունները, Վեհիբ փաշան գրում էր. «Հայկական հին ռազմական խմբերի ղեկավար Սվազցի Մուրադի 25 տարվա ավազակությունը Էրզրումի, Վանի և հատկապես Բիթլիսի վիլայեթներում, հայերի թուրքաջինջ գործունեությունը Երզնկայում և շրջակայքում», ներառնց «սահմանն անցած» հակաթուրքական գործունեությունը «ստեղծել են այնպիսի իրադրություն, որ ես ի վիճակի չեմ այլևս պահել իմ զորքերը լուսկյաց վկաների դերում, որոնք լսում են ու գիտակցում, որ իրենց ծնողներն ու երեխաները, կանայք ու հարազատները պատապարտված են ոչնչացման»։ Հենվելով իր սարքած կեղծիքի վրա, Վեհիբ փաշան թուրքերի հարձակումը համարում էր «հումանիզմի և քաղաքակրթության անհրաժեշտ պարտք», որը «բնավ չի հանդիսանում թշնամական գործողություն ռուսական բանակի դեմ»։

«Բարեկամաբար և սրտանց» նա հավաստում էր, որ «Երզնկայի ժամանակավոր պայմանագիրը պահպանում է իր ուժը», որ հանձնարարված է զորքերի հրամանատարին «ոչ մի ընդհարում թույլ չտալ ռուսական զորքերի հետ»[176]։ Թուրք հրամանատարները լավ գիտեին, որ ստում են, որ նոր կազմակերպվող հայկական կորպուսը ռուսական բանակի ազգայնացված զորամիավորում է, այդ ժամանակ լինելով ռուսական բանակի մասը։

Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Լեբեդինսկին (Պրժևալսկին հունվարի 5 (18)-ին տվել էր հրաժարական) փետրվարի 1 (14)-ին Վեհիբ փաշային հղած հեռագրում ցույց է տալիս թուրքական կողմի փաստարկների սնանկությունը և զինադադարի խախտման ու օսմանյան բանակի հարձակման հիմնավորման անհեթեթությունը։ «Ստուգված տվյալներով, մուսուլմանական բնակչության նկատմամբ բռնությունների վերաբերյալ տեղեկությունները Ձեզ հասել են շատ չափազանցված ձևով։ Ընդ որում, իրոք տեղի ունեցած բոլոր գործողությունները եղել են ստիպողական գործողություններ, ինչպես անհատ անձանց, այնպես էլ ոչ մեծ խմբերի վրա քրդերի, ինչպես և մյուս մուսուլմանական տարրերի անընդմեջ գործողությունների պատճառով։ Այնպես որ տեղի ունեցած իրադարձությունների մարդասիրության, հումանիզմի տեսանկյունով ամենաարդար գնահատման դեպքում, ես չեմ կարող ընդունել իրական անհրաժեշտությունը զինադադարը խախտելու և զորքերը առաջ շարժելու համար»։ Նա նախազգուշացնում էր Վեհիբ փաշային, որ թուրքերի ձեռնարկած զինադադարի վերացումը կծառայի գրավված տարածքում ազգամիջյան կո-

տորածներին, և ռուսական հրամանատարության համար դժվար կլինի պայքարել հնարավոր ելույթների դեմ։ Առաջարկելով վերջ տալ գինադադարի խախտմանը, Լեբեդինսկին հայտնում էր. «Ռուսական բանակի ազգային սկզբունքով վերակազմավորման կապակցությամբ, բոլոր զորամասերը, որ ազգին էլ որ նրանք պատկանեն, պետք է դիտվեն իբրև ռուսական հանրապետության լիիրավ զինվորական մաս»[177]։

Թուրքական զորքերի առաջխաղացման պայմաններում, միաժամանակ, շարունակվում էին թուրքական հրամանատարության դիվանագիտական խաղերը։ 1918 թ. փետրվարի 1-ին (14) Թիֆլիսում ստացվեց Վեհիբ փաշայի հեռագիրը, որով նա տեղեկացնում էր Անդրկովկասի կառավարությանը Բրեստ-Լիտովսկում խաղաղության կոնֆերանսին երկրամասի պատվիրակությանը մասնակից դարձնելու կենտրոնական տերությունների մտադրությունների մասին։ «Բրեստ-Լիտովսկում կենտրոնական տերությունների հավաքված պատվիրակությունները պատրաստ են ներկայացնել իրենց ամբողջ ձգտումները Անդրկովկասի կառավարության անկախության ճանաչման համար, որը հավատացած իր լիակատար հաջողություններ, կարող է Բրեստ-Լիտովսկ ուղարկել իր լիազորված պատվիրակությունը»— գրում էր փաշան[178]։

Այս հեռագրի մասին Գեգեչկորին նույն օրը տեղյակ պահեց Անդրկովկասի կոմիսարիատին, որի նիստին մասնակցում էին նաև Երկրային խորհրդի նախագահության անդամները, գյուղացիական կենտրոնի ներկայացուցիչները, զորքերի հրամանատար Լեբեդինսկին, շտաբի պետը։

Բացելով նիստը, Գեգեչկորին հիշեցրեց Վեհիբ փաշային ուղղված Կոմիսարիատի պատասխանի մասին, հրապարակեց գնդապետ Շատիլովի 1918 թ. հունվարի 31-ի օպերատիվ հաղորդագրությունը Երզնկայի շրջանում իրավիճակի մասին, հայտնեց Վեհիբ փաշայի հունվարի 31-ի ռադիոհեռագրի մասին։ Գեներալ Լեբեդինսկին հանդես եկավ հաղորդումով թուրքական զորքերի կողմից զինադադարի խախտման, ամբողջ ճակատով հարձակման անցնելու, ռազմաճակատի վիճակի մասին, հերքեց թուրքական հրամանատարության զրպարտանքը, թե իբր, առաջխաղացման նպատակը թուրք խաղաղ բնակչությանը հայերի ահաբեկումից պաշտպանելն է։ «Հայերի ելույթները, որոնք չափազանցված են թուրքերի կողմից, պատասխան են քրդերի կողմից քրիստոնյա բնակչության նկատմամբ մշտական ահաբեկչության և թալանի»,— ասաց Լեբեդինսկին։ Թուրքական հրամանատարությանը Լեբեդինսկին հայտնում էր, որ Սև ծովի ափին գտնվող Ռիզե քաղաքը այրվել ու թալանվել է ոչ թե հայերի, ինչպես պնդում էին թուրքերը, այլ քաղաքից հեռացող ռուսական զորամասի զինվորների կողմից[179]։

Թուրքական առաջարկները և երկրամասի ռազմական ու քաղաքական իրավիճակի հարցերը բազմակողմանի քննարկելուց հետո Անդրկովկասի կոմիսարիատը որոշեց [illegible]

ու պայմանների, պատվիրակության կազմի և բանակցությունների վայրի հարցերի լուծումը թողնել նոր կազմավորվող Սեյմին, որի բացումը նշանակվել էր փետրվարի 10 (23)-ին։ Թուրքերի հետ բանակցությունների և հաշտության պայմանների սկզբունքների մշակման հանձնաժողովի նախագահ հաստատվեց Ե. Գեգեչկորին։ Կոմիսարիատի ընդունած որոշումների մասին փետրվարի 6 (19)-ին տեղյակ պահվեց գեներալ Վեհիբին[180]։

Սակայն օսմանյան հրամանատարությունը հետևողական էր իր ձգտումներում։ Հաշվի չառնելով Անդրկովկասյան կառավարության առաջարկները, թուրքական զորքերը շարունակում էին իրենց առաջխաղացումը։ Այդ մասին փետրվարի 9 (22)-ին գեներալ Լեբեդինսկուն հեռագրով հայտնեց գեներալ Օդիշելիձեն։ Հեռագրում ասված էր. «Վեհիբ փաշան միանգամայն որոշակի հայտնեց, որ պատերազմի օրենքներով մեր կողմից գրավված թուրքական մարզերում մուսուլմանական բնակչության փրկության նպատակով նա պետք է թուրքական զորքերը առաջ մղի մինչև ռուսական զորքերին հանդիպելը, որպիսին նա հայկական ազգային զորամասերը չի համարում։ Այդ պատճառով խնդրում ենք Ձեր կարգադրությունը՝ էրզրում ուղարկել ռուսական կորպուսի թիկուզ մի քանի գումարտակ, որպես առաջապահ, առաջ մղելու և էրզրումի վրա թուրքական հետագա հարձակումը կասեցնելու համար։ Առանց այդ միջոցի, հայկական զորքերի կողմից էրզրումը գրավելու դեպքում, այն անխուսափելիորեն կգրավվի թուրքերի կողմից»[181]։ Օդիշելիձեի այս տեղեկությունը հրապարակվեց Անդրկովկասի կոմիսարիատի անդամների մասնակցությամբ բացված Սեյմի առաջին նիստում՝ 1918 թ. փետրվարի 10 (23)-ին։ Անդրկովկասի Սեյմի կազմում ընտրվել էին 116 պատգամավորներ, որոնցից 32-ը մենշեվիկյան, 30-ը՝ մուսավաթական, 27-ը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության, 14-ը՝ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության անդամներ էին։ Քվեարկությանը Անդրկովկասի տարածքում մասնակցել էր 2458274 ընտրող[182]։

Սեյմի առաջին նիստում քննարկվեց Վեհիբ փաշայի հեռագիրը Անդրկովկասի կոմիսարիատին՝ բանակցությունների վայր ընտրելու, «Անդրկովկասյան կառավարության ճանաչման» և «հաշտության պայմանագիր ստորագրելու համար թուրքական կառավարության պատվիրակություն Թիֆլիս ուղարկելու մասին»[183]։

Անդրկովկասի արտաքին հարաբերությունների և քաղաքականության հարցերը լայնորեն քննարկվեցին Սեյմի երկրորդ նիստում, փետրվարի 13 (26)-ին, որտեղ զեկուցումով հանդես եկավ Հաշտության պայմանների հիմնական սկզբունքների մշակման հանձնաժողովի նախագահ Ե. Գեգեչկորին։ Նկարագրելով քաղաքական-հասարակական վիճակը Անդրկովկասում, Ռուսաստանում և Եվրոպայում, Գեգեչկորին մասնավորապես կանգ առավ Բրեստ-Լիտովսկում հաշտության բանակ-

ցությունների ընթացքի վրա, այն բնորոշելով որպես Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիայի բոլոր իդեալների և սպասումների լրիվ փլուզում։ Գեգեչկորու կարծիքով, Անդրկովկասի կոմիսարիատն ու Սեյմն էին, որ պետք է փրկեին վիճակը, «եթե ոչ ամբողջ Ռուսաստանում, գոնե նրա մի մասում», քանի որ Անդրկովկասը «Ռուսաստանի միայն մի մասն է»[184]։

Թուրքիայի առաջարկությունը հոեստրների մեջ առաջ բերեց տարբեր մտորումներ և խոհեր, հանգեցրեց իրարամերժ եզրակացությունների։ Մի կողմից առաջ էր բաշվում Անդրկովկասի բաղաքական անկախության թեզը, մյուս կողմից բերվում էին մերժման կովանները։ Ժորդանիան գտնում էր. գերմանական հարձակումը սկսվելուց հետո թուրքական գլխավոր հրամանատարի հեռագիրը պիտի ամրապնդի Անդրկովկասյան կառավարության տեսակետը հաշտության բանակցությունները սկսելու վաղուց ընդունված որոշման մեջ։ Նրա կարծիքով, Թուրքիայի հետ խաղաղության կնքումը, որը առաջարկվել է վերջինիս կողմից, շահեկան է և Անդրկովկասի և Ռուսաստանի համար։ Այն Ռուսաստանին ազատում է «Կովկասի ռազմաճակատի պաշտպանության անհրաժեշտությունից»։ «Թուրքիայի համառ պահանջը հաշտություն կնքելու մասին», Սեմյոնովը դիտում էր որպես դիվանագիտական քայլ։ Նրա կարծիքով, Անդրկովկասյան կառավարությունը պետք է դործեր Ռուսաստանի դաշնակիցներ Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի հետ համերաշխ, քանի որ «Թուրքիան բանակցությունները կվարի իր դաշնակիցների հետ համաձայնեցված»։

Վրացական ազգային դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Գ. Գվազավան գտնում էր, որ «երկրամասը և ժողովրդին» փրկելու համար «Անդրկովկասը պետք է լինի բաղաքականապես ազատ»[185]։

Թուրքիայի հետ խաղաղության պայմանագիրը պետք է կնքվի ռուսական դեմոկրատիայի առաջ քաշած սկզբունքների հիման վրա, պետք է ստեղծվի Թուրքահայաստանի ինքնավարություն։ Այդպիսին էր Դաշնակցության կուսակցության կարծիքը, որով Սեյմի փետրվարի 15 (28)-ի նիստում հանդես եկավ Հովհաննես Քաջազնունին։ Քաջազնունին, Աղաևը, Ժորդանիան այդ նիստում հանդես եկան Անդրկովկասի անկախության օգտին[185]։ Ժորդանիան հանդես գալով Բրեստի հաշտության պայմանների դեմ, հայտարարեց. «Մենք այդպիսի պայմանագիր չենք կնքի, մենք գտնում ենք, որ ավելի լավ է մեռնել պոստում, քան խայտառակվել և մեզ հանձնել սերունդների անեծքին»[187]։

Սեյմի 4-րդ նիստում Ա. Խատիսյանի ելույթից երևում է և Ռուսաստանից անջատվել ձգտող հոսանքների դիրքորոշման հիմնական պատճառը։ Դա հակաբոլշևիզմն էր։ «Թող ռուսական բաղաքացիները տապալեն բոլշևիզմը, թող ռուս ժողովուրդը թափ տա իրենից գերմանական այդ լուծը և ո՛չ մուսուլմանները, ո՛չ վրացիները, ո՛չ հայերը չեն փնտրի այլ կողմնորոշում»[188]— գտնում էր Խատիսյանը։

Սեյմի նիստերին զուգընթաց, Թուրքիայի հետ հաշտության սկզբունքները քննարկվում էին Սեյմի և Կոմիսարիատի հաշտության հանձնաժողովների համատեղ նիստերում։

Փետրվարի 13—15 (26—28)-ը կայացած նիստերում առաջ քաշվեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման և ինքնավարության հարցը։ Ա. Զուրաբյանի, Ա. Խատիսյանի, Հ. Քաջազնունու, Ս. Տիգրանյանի այդ հարցադրմանը հակառակ, Խան-Խոյսկին առաջ քաշեց ոչ միայն հայերի, այլև Ռուսաստանի սահմաններում բոլոր ազգությունների ինքնորոշման հարցը՝ նկատի ունենալով առաջին հերթին մուսուլմաններին։ Գանիևը գտնում էր, որ ինքնորոշում կպահանջի և Թուրքիան, այդ դեպքում «նրանք կանցնեն Կազբեկն ու Էլբրուսը»։ Հաջինսկին Արևմտյան Հայաստանի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հարցը համարում էր վաղաժամ. «Դժվար կլինի այն ստանալ Թուրքիայից, քանի ինքներս մեզ մոտ չենք հասել»— պնդում էր նա։ Ն. Ռամիշվիլին մոլորվում էր, մտածելով, որ «Թուրքիան ինքը շահագրգռված է Թուրքահայաստանում բարվոք վիճակ ստեղծելու մեջ», տալով այնպիսի պայմաններ, որ «Թուրքիայի ժողովուրդները չձգտեն նրանից անջատվել»[189]։ Ասորիների Ազգային խորհրդի նախագահ Բիտ Աբրամը գտնում էր, որ Թուրքիայի հաշտությունը կլինի վերջնական, եթե հաշվի առնվեն և բավարարվեն հայերի և ասորիների պահանջները։ Մուսուլմանական կուսակցությունների խմբակցության կողմից հանդես եկած Հաջինսկին հայտարարեց, թե «մուսուլմանները որոշել են չառարկել Թուրքիայում Հայկական հարցի լուծմանը՝ համաձայն հայերի ցանկության»։ Նա գտնում էր, որ դա կարևոր է հենց Թուրքիայի և թուրքերի շահերի համար և Կովկասի համար ունի իր նշանակությունը։ Այդ հարցի լուծումից կախված են հայերի և թաթարների փոխհարաբերությունները։ Հավաստվում էր, թե այս տեսակետը մուսուլմանական կուսակցությունները կանցկացնեն հաշտության բանակցությունների ժամանակ։

Ջնայած Հաջինսկու հայտարարությանը և հանձնաժողովի որոշմանը, որ կովկասյան ժողովուրդները իրավասու են վճռել իրենց ճակատագիրը, Ուսուբեկովն ուզեց պարզաբանում ստանալ, թե «ի՞նչ է նշանակում ինքնորոշում հարցը»։ «Ինքնորոշումը կարելի է ձևակերպել այսպես. մենք ցանկանում ենք որոշակի սահմաններ, ցանկանում ենք այնպիսի պայմաններ, որ մենք կարողանանք պաշտպանել մեր իրավունքները»,— պատասխանեց Խատիսյանը։ Սոցիալիստ-հեղափոխական Ա. Ջիկալինը և «Մուսուլմանները Ռուսաստանում» կուսակցության ներկայացուցիչ Գանիևը նկատեցին, որ Թուրքիան այնքան ինքնուրույն չէ, որպեսզի հայերի պահանջները բավարարի։ Ուսուբեկովը առաջ քաշեց նոր հարց. ինչպե՞ս պետք է խոսել թուրքերի հետ, որպես հաղթողնե՞ր, թե՞ հավասարներ։ «Մուսուլմանների խոսքը Թուրքիայում, իհարկե, ունի հսկայական նշանակություն, սակայն որպեսզի ուժ ունենանք, անհրաժեշտ է նախապես հասնել համաձայնության, պատ-

րաստ որոշումով ներկայանալու համար։ Մինչդեռ բոլորը չեն հավասար վիճակում։ Մեկը ունի մի ամբողջ բանակ, մյուսը՝ ոչ մի զենք։ Մուսուլմանները, օրինակ, Շամխորից հետո ոչինչ չեն ստանում»[190],— ավարտեց իր խոսքը Ուսուբեկովը։

Հանձնաժողովի փետրվարի 15-ի նիստում Ա. Խատիսյանը հանդես եկավ ընդարձակ զեկուցումով «Թուրքահայաստանի ինքնավարության մասին»։ Նա անդրադարձավ սահմանների, տարածքի, բռնագաղթածների վերաբնակեցման, ոստիկանության կազմակերպման հարցերին, բերեց վիճակագրական տեղեկություններ, թվեր, փաստեր։ Նշելով, որ Հայաստանը բաժանված է երեք մասի՝ ռուսական, թուրքական, պարսկական, և որ այդ երեք մասերը հավանաբար կձգտեն միաձուլման, Գանիևը առաջ քաշեց Հայաստանի կողմնորոշման հարցը, ինչպիսի՞ն կլինի այն՝ ռուսակա՞ն, թե՞ թուրքական։ Ուսուբեկովին հետաքրքրում էր հայերի՝ իրենց բնակավայրեր վերադառնալու դեպքում թուրքերին և քրդերին ցուցաբերվելիք վերաբերմունքի հարցը, չե՞ն ոտնահարվի, արդյոք, նրանց իրավունքները։ Հաջինսկուն հետաքրքրում էր՝ ինչ հիմունքներով են գծվելու ինքնավար Հայաստանի սահմանները, հարկավոր չէ՞, արդյոք, այդ կապակցությամբ ունենալ բնակչության կարծիքը, 1914 թ. սահմանները չե՞ն գծվել, արդյոք, մեծ տերությունների ճնշմամբ, քանի՞ տոկոս են կազմում հայերն այդ սահմաններում։

Խատիսյանի պատասխանն էր. քանի որ Կովկասը անջատվել է Ռուսաստանից, ապա հավանական է, որ հայերը կընտրեն իրենց համար թուրքական կողմնորոշում, եթե, իհարկե, դա կգտնեն իրենց համար շահեկան։ Սահմանները որոշվելու են 1914 թ. համեմատ, բնակչության կարծիքը վաղուց հայտնի է. տերությունների կողմից ճնշում գուցե և եղել է, սակայն այդպես ծնվում են բոլոր ռեֆորմները, ինչ վերաբերում է հայերի թվաքանակին, այդ մասին տեղեկություններ կան Լեփսիուսի մոտ[191] և Դեղին գրքում[192]. քրդերը, եթե նրանք ցանկանան վերադառնալ, իրավունք կստանան[193]։

Նույն օրը՝ փետրվարի 15 (26)-ին կայացած չորրորդ նիստում հաշտության հանձնաժողովը ընդունեց հետևյալ հիմնադրույթները. 1. ստեղծված իրավիճակում Անդրկովկասյան Սեյմը իրավասու է կնքել հաշտություն Թուրքիայի հետ, 2. սկսելով բանակցություններ, Անդրկովկասը խնդիր է դնում Թուրքիայի հետ կնքել վերջնական հաշտություն, 3. կնքվող հաշտության պայմանների հիմքում պետք է դրվի Ռուսաստանի և Թուրքիայի միջև 1914 թ. պատերազմ հայտարարելու պահին եղած պետական սահմանների վերականգնումը, 4. պատվիրակությունը ձգտում է Արևելյան Անատոլիայի ինքնորոշման իրավունքի, մասնավորապես Թուրքահայաստանի ինքնորոշմանը՝ թուրքական պետականության շրջանակներում[194]։

Հիմնադրույթները հաստատվեցին Սեյմի փետրվարի 16 (մարտի 1)-ի նիստում, որտեղ «Հաշտության մասին» զեկուցումով հանդես եկավ հանձնաժողովի նախագահ Ն. Ռամիշվիլին։ Զեկուցողը հանձնաժողովի

անունից հիմնավորեց 1914 թ. ռուս-թուրքական սահմանների պահպանման անհրաժեշտությունը։ Հակառակ դեպքում, ասում էր նա, «պետական սահմանների ամեն մի խախտում կարող է հասցնել այնպիսի բարդությունների, որոնց հետևանքները իրենց զգացնել կտան երկար տարիներ և դրական կլինեն ինչպես մեզ համար, այնպես էլ, երևի, թուրքերի համար»։

Հանդես գալով բռնագրավումների և ռազմական տուգանքների դեմ, հանձնաժողովը վճռականորեն պաշտպանում էր Արևմտյան Հայաստանում բնակվող բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, ժողովուրդներ, որոնք տասնյակ ու հարյուրավոր տարիներ պայքարել են իրենց ազատության և անկախության համար։ «Եվ առաջին հարցը, որ կանգնելու է Սեյմի առաջ՝ դա Տաճկահայաստանի կարգավիճակի կարգավորման հարցն է։ Հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը ամրապնդված է նրա բազմադարյան պայքարով ընդդեմ այն հարստահարման, որին այդ ժողովուրդը ենթարկված է եղել Օսմանյան կայսրության սահմաններում և մենք պարտավոր ենք ասել, որ Տաճկահայաստանի հարցը մի հարց է, որի լուծումով շահագրգռված է ոչ միայն թուրքական կայսրությունը միակողմանիորեն, այլ անպայման այդ հարցի լուծումով ոչ նվազ չափով շահագրգռված են նույնպես Անդրկովկասի ժողովուրդները»։ Հանձնաժողովը գտնում էր, որ հայերը և ասորիները թուրքական պետության շրջանակներում պետք է ունենան ինքնորոշման իրավունք և ինքնավարություն և միայն այդ հարցի վերջնական լուծման դեպքում «Օսմանյան կայսրության և Անդրկովկասի միջև կսահմանվեն բարիդրացիական հարաբերություններ»[195]։

Հաստատվեց Տրապիզոն մեկնող հաշտության պատվիրակության կազմը, որի մեջ մտան մենշևիկ Ա. Չխենկելին (նախագահ), վրացի մահմեդական Գ. Աբաշիձեն, վրացական ազգային դեմոկրատ Գ. Գվազավան, սոցիալ-ֆեդերալիստ Գ. Լասխիշվիլին, Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամներ Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը, մուսավաթի, հումեթի, «մուսուլմանական սոցիալիստական բլոկի», «Ռուսաստանի մուսուլմանների» ներկայացուցիչներ Մ. Հաջինսկին, Խ. Խասմամեդովը, Մ. Մեհտիևը, Ա. Շեյխ-ուլ Իսլամովը, Հ. Հայդարովը[196]։

Սեյմում ներկայացված բոլոր մուսուլմանական խմբակցությունների ներկայացուցիչներին պատվիրակության կազմում ընդգրկելու վրա վճռականորեն պնդեց Հաջինսկին, պատճառաբանելով, որ մուսավաթը չի կարող իր վրա վերցնել հարցերի լուծման ամբողջ պատասխանատվությունը, «ներկայացուցչությունը հանդիսանում է ազգային և այդ պատճառով չափազանց կարևոր է, որպեսզի մուսուլմանները ներկայացվեն ամբողջությամբ։ Մուսավաթի միակ նպատակն է բանակցություններում հասնել առավել հաջող արդյունքի»։ Նման հայտարարությունից հետո Հաջինսկին շարունակեց. «Անդրկովկասում բնակվող և հաշտություն կնքող երեք ազգություններ Թուրքիայում ունեն իրենց ազգակիցները,

բայց դա ձևական տեսակետ է, որ պետք է դեն նետել։ Մուսուլմաններին տրվում է պատասխանատու դեր և դրա համար առաջարկվում է ուղարկել մուսավաթի և «սոցիալիստական բլոկի» ներկայացուցիչներին։ Իզուր են մտածում, թե մենք տարաձայնություններ ունենք հաշտության հարցում։ Այդպիսիք չկան։ Սակայն մի բան է համաձայնություն այստեղ, այլ բան է մեզ ուղարկող մասսաների տրամադրությունը, որպեսզի և այդ մասսաները ձուլվեն մեկ ամբողջության մեջ, հարկավոր է, որ նրանք իմանան, որ զրկված չեն ձայնից»։ Հաջինսկուն պաշտպանեց Ա. Պեպինովը, ներկայացնելով մուսուլմանական բոլոր խմբակցությունների պահանջը իրենց ներկայացուցիչներին Տրապիզոն ուղարկելու մասին[197]։

Տրապիզոն մեկնող Անդրկովկասյան Սեյմի հաշտության պատվիրակության կազմում մուսուլմանական մեծամասնության ձգտելու միտումների դրդապատճառները բացահայտվեցին Սեյմի և Կոմիսարիատի հաշտության հանձնաժողովների համատեղ նիստում՝ փետրվարի 17 (մարտի 2)-ին, երբ քննարկվում էր Բրեստ-Լիտովսկում Խորհրդային պատվիրակության քարտուղար Լևոն Կարախանից (Կարախանյան) ստացված հեռագիրը՝ փետրվարի 18 (մարտի 3)-ին Բրեստում կնքվելիք պայմանագրի մասին։ Հայտնի դարձավ Արևմտյան Հայաստանի՝ պատերազմի օրենքներով Թուրքիայից գրավված «արևելահանատոլիական գավառներ» ձևակերպումով հայկական պապենական հողերը հոգևարքի հասած Օսմանյան կայսրությանը հանձնելու, Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերից ռուսական զորքերը դուրս բերելու պայմանավորվածության մասին։ «Փետրվարի 21-ի վերջնագրի հետ համեմատած, այս վերջնագիրը պարունակում է պայմանաժամ։ Այդ նկատառումով, ինչպես նաև հաշվի առնելով գերմանացիների մերժումը՝ դադարեցնել ռազմական գործողությունները հաշտություն կնքելուց առաջ, մենք որոշեցինք ստորագրել հաշտության դաշնագիր՝ առանց այն քննելու և անմիջապես մեկնել։ Փետրվարի 21-ի պայմանների ամենալուրջ վատթարացումը Ռուսաստանից ինքնորոշման պատրվակով Արդահանի, Կարսի և Բաթումի անջատումն է»,— ասված էր Խորհրդային պատվիրակության քարտուղար Լևոն Կարախանի՝ Ե. Գեգեչկորուն հղած հեռագրում[198]։

Դա փաստորեն Կովկասյան ճակատում հաղթանակի հասած Ռուսաստանի կապիտուլյացիան էր ոչ միայն գերմանական իմպերիալիզմի, այլև թուրքական օսմանիզմի առաջ։ Դրանով հայ ժողովուրդը անօգնական կանգնում էր թուրքական բիրտ ուժի դեմ ճակատ առ ճակատ, կորցնում իր պապենական հողերը։

Սեյմի մուսուլման անդամները անմիջապես դրեցին Անդրկովկասը ազատ և անկախ հայտարարելու հարցը։ «Մինչև արմատական հարցը՝ մեր պատկանելիության հարցը չվճռվի, մենք ոչ մի արդյունքի չենք հասնի[199],— հայտարարեց Խասմամեդովը։ Խ. Բ. Մելիք-Ասլանովի կարծիքն էր. «Այսօր պետք է որոշել անջատման հարցը և անջատվելով,

այդ ժամանակ մենք կհրաժարվենք ճանաչել Բրեստի պայմանագիրը»[200]։ «Ռուսաստանից մենք հեռանալ չէինք ցանկանա, սակայն իրադրությունը պահանջում է դնել անկախության հարցը։ Մուսուլմանների կողմից երաշխիքի հարցը ավելի լուրջ է՝ մենք հայերի տրամադրությունները գիտենք, բայց վերջնականապես ասել, ինչպես ազգը կմտածի, չենք կարող։ Մեր հասարակայնությունը թույլ է զարգացած, տարբեր ազգությունների միջև միություն չի ստեղծված և մասսաների համար երաշխավորել չենք կարող»[201], հայտարարեց Հայդարովը։ Շեյխ-ուլ Իսլամովը գտնում էր, որ Բրեստի պայմանները պետք է դիտել որպես Թուրքիայի՝ մեր պատվիրակությանը արած առաջարկություն։ Պատվիրակությունը պետք է մեկնի Տրապիզոն՝ «դրանով ընդգծելով, որ մենք վաղուց նրանց հետ բանակցությունների մեջ ենք»[202]։

Հաջինսկին առաջարկեց հայտնել Թուրքիային Անդրկովկասի Սեյմի կողմից Բրեստի հաշտությունը չընդունելու և Անդրկովկասը անկախ հայտարարելու մասին, հռչակել այդ անկախությունը և հետո բանակցությունների մեջ մտնել։ Հայկական հողերի բռնակցումը Թուրքիային և Անդրկովկասի անկախությունը համարելով արդեն կատարված փաստ, մուսավաթի ներկայացուցիչը հանդես եկավ երիտասարդ թուրքերի մտքերը հաղորդողի դերում։ «Այսօրվա ընթացքում տեղի է ունեցել հսկայական կարևորություն ունեցող իրադարձություն. դեռ երեկ Արդահանը, Բաթումը և Կարսը մեր ձեռքերում էր, այսօր թուրքերն ունեն նրանց նկատմամբ հսկայական իրավունքներ։ Երեկ մենք պետք է խոսեինք մեկ լեզվով, այսօր ուրիշ լեզվով, երեկ կարող էր խոսք լինել մեկ փոխհատուցումների մասին, այսօր՝ ուրիշ։ Ո՞վ կարող է հաստատել, որ թուրքերը կհրաժարվեն ձեռք բերածից։ Ոչ մի հիմք չկա մտածելու, որ թուրքերը կամովին կհրաժարվեն նրանից, ինչ ստացել են Բրեստ-Լիտովսկի պայմաններով»։ Նրա կարծիքով, որպեսզի թուրքերը հրաժարվեն իրենց իրավունքներից, պետք է ինչ-որ բան ստանան, և Անդրկովկասի անկախության պաշտոնական հռչակումը թուրքերի համար կհանդիսանար շահեկան փոխհատուցում. այն ժամանակ Թուրքիան կլիներ հարևան ոչ թե Ռուսաստանի, այլ Անդրկովկասի հետ, իսկ դրանք տարբեր բաներ են։ Մեկ հանգամանք ևս. թաթարներին ազգակից Թուրքիան պայմանագրով ստանում է Կարսը, Արդահանը, Բաթումը և Կոմիսարիատում նստած թաթարական ներկայացուցիչները չեն կարող գնալ հակառակ թուրքական պլաններին, դա չի բավարարի մասսաներին։ Եվ եթե մուսուլմաններին ոչինչ չտված, նաև կխանգարեն Թուրքիային իրականացնել իր նկրտումները, մուսուլմանական մասսան մեզ չի լսի։ Մասսաներին պետք է տալ փոխհատուցում և դա անկախությունն է»— հայտարարեց Հաջինսկին։ Մեկ խոստովանություն ևս. «Մենք՝ մուսուլման պատգամավորներս, խոսում ենք Թուրքահայաստանի մասին ոչ թե նրա համար, որ հաճելի լինի մեր հարևան հայերին, այլ ելնելով մեր սեփական շահերից»։ Արշակ Ջուրաբյանի հարցին՝ ի՞նչ կոնկրետ միջոցառումներ կբավարարեին մուսուլմաններին, Հաջինսկին

պատասխանեց. նախ՝ անկախություն, ապա՝ մուսուլմանական կորպուսի ճիշտ կազմակերպում։ Օգտագործելով պահը, Հաջինսկին փաստորեն փոխհատուցում պահանջեց ոչ միայն թուրքերի, այլև մուսուլմանների համար։ Նա դժգոհեց, որ մուսուլմանների նկատմամբ վերաբերմունքը արդարացի չէ, պարբերաբար արգելակվել է մուսուլմանական կորպուսի կազմակերպումը, նրանք շրջանցվել են ռուսական զորքի թողած գույքի բաժանման ժամանակ[203]։

Այլ մոտեցում էին դրսևորում հանձնաժողովների հայ և վրացի անդամները։ Մենք կարող ենք խոսել որպես Ռուսաստանից փաստորեն կտրված, հաշտություն կնքելու իրավունք ունեցող երկիր, բայց ապագայում, երբ կվերսկսվի կապը Ռուսաստանի հետ, մենք կդնենք կապի վերականգնման պայման[204], հայտարարեց Հովհ. Քաջազնունին։ «Քանի որ կնքված է պայմանագիր, Տրապիզոն գնալու կարիք չկա։ Մեր պատասխանը պետք է որոշենք և ուղարկենք Բրեստ։ Եթե մենք, մնալով Ռուսաստանի մի մաս, չենք ընդունում պայմանագիրը, մեզ կընդունեն իբրև խռովարար»— խորհում էր Նոյ Ժորդանիան։ Նրա կարծիքով, հարցին պետք էր մոտենալ ոչ թե ձևական, այլ շահի տեսակետից. «Դեռ պետք է ապացուցել, որ անջատումը մեզ օգուտ է։ Կովկասի բնակչության մեծ մասը մուսուլմաններ են։ Եթե մուսուլմանության ներկայացուցիչները երաշխավորում են, որ հայտարարելով իրենց անկախ՝ չեն սխալվում և մեզ հետ կգան համաքայլ, դա մեզ մեր երկրի ներսում կտա մեծ ուժ, եթե մուսուլմաններն այդ երաշխիքը չտան և մյուս կողմից Ռուսաստանը կլինի մեր դեմ՝ անկախության հայտարարությունը մեզ համար կարող է լինել կործանարար»[205]։

Եզրակացնելով, որ Անդրկովկասի կառավարությանը թուրքերի պատասխան չտալը կապ ունի Բրեստի պայմանների հետ, Ե. Գեգեչկորին Կովկասի հաշվին բոլշևիկների հետ թուրքական կառավարության հաշտություն կնքելու մեջ նկատեց թուրքերի ցանկությունը՝ նաև հակառակ իրենց իսկ նախաձեռնությամբ սկսված բանակցություններին, Անդրկովկասը կապել Բրեստի հաշտությամբ[206]։

Կովկասը պետք է գնա նրանց հետ, ովքեր նրան կտան 1914 թ. սահմանները, գտնում էր Մ. Արզումանյանը. «Եթե մուսուլմանները կասեն, որ իրենք մեզ կպաշտպանեն, մենք կլինենք ուժեղ։ Հարցը պետք է դնել շահերի առումով և մենք պետք է առաջնորդվենք շահերով և ոչ թե զգացմունքներով»[207]։

Չհամաձայնվելով հանձնաժողովի մուսուլման անդամների հարցադրումներին, Ն. Ռամիշվիլին ասաց. հիմա հանկարծ պարզվում է, որ մենք չգիտենք նրանց տրամադրությունը, ում ներկայացնում ենք։ Բաթումի բռնակցումը Թուրքիային նշանակում է Անդրկովկասը վերածել Սերբիայի. «Երբ ասում են, որ Բաթումում մուսուլմաններ են, իսկ Թուրքիայում նրանց ազգակիցները, ապա բոլոր մուսուլմաններն էլ կարող են ասել, որ Անդրկովկասում նրանք մեծամասնություն են և կպահանջեն միավորվել Թուրքիայի հետ։ Հիմա հասել է մեր հայե-

ցակետը հստակ և որոշակի արտահայտելու պահը,— հայտարարեց Ռամիշվիլին,— այստեղ կարևոր է ոչ այն, թե ինչ է մտածում բնակչությունը, այլ այն, ինչպես են կարծում քաղաքական կուսակցությունները»[208]։

Առարկելով թուրքական շահերը սատարող մուսուլմանական գործիչներին, որոնք որպես սահմանների պաշտպանության պայման պնդում էին Անդրկովկասի անկախության հռչակումը, Ա. Խատիսյանն ասաց. «Ես չունեմ վստահություն մուսուլմանական ներկայացուցիչների խոսքերի նկատմամբ, երբ վերջիններս ասում են՝ «կառավարությունը մեկ բան է, իսկ ժողովուրդը՝ այլ բան»։ Մուսուլմանական ղեկավարները միշտ իրենք են ասել և մենք սովոր ենք հավատալ դրան, որ բավական է մեկ խոսք, որպեսզի մասսան անի այն, ինչ նրանք կհրամայեն։ Այժմ, հանկարծ, նույն ղեկավարները ասում են, որ իշխանություն չունեն և զրկված են ժողովրդի աջակցությունից։ Հետևությունն այն է, որ մուսուլմանական մասսաները ունեն այլ ղեկավարներ կամ ներկա ներկայացուցիչները չեն գիտակցում իրենց իշխանությունը»։ Հայտարարելով, որ առանց Բաթումի Անդրկովկասը և հատկապես Վրաստանը, չեն կարող մնալ, իսկ հայերը «ամեն կերպ կպաշտպանեն Կարսը», Խատիսյանը պահանջեց մուսուլման պատգամավորներից հստակորեն ասել՝ «ովքեր են այն ներկայացուցիչները, որոնք հանդիսանում են մուսուլմանական մասսաների իսկական ղեկավարները, թող այդ ներկայացուցիչները մտնեն իշխանության մարմինների մեջ և մենք կունենանք խոսակցություն նրանց հետ, ոչ թե նրանց հետ, ովքեր ասում են իշխանություն չունենք մասսաների վրա»։ Խատիսյանը հարցը դրեց բացահայտ և կտրուկ. «Եթե դուք ազդեցություն չունեք մուսուլմանական մասսաների վրա և ձեր հետևից գալիս է մուսուլմանության մեկ տասներորդը, մենք այդպես էլ պետք է իմանանք, որ մենք ունենք երկու ճակատ. կամ ասեք, որ պատասխանատու չեք նրանց համար, ովքեր այսօր գործում են թուրքական գլխավոր շտաբի պլանով, այդ դեպքում մենք նրանց կհայտարարենք դավաճաններ, կամ եղեք մեզ հետ։ Մենք պետք է հստակ իմանանք, ով է մեր թշնամին»[209]։

Սեյմի, կառավարության հայ և վրացի անդամների նման հարցադրումներից հետո էլ մուսուլմանական կողմը մնաց հավատարիմ իր որդեգրած ուխտին։ «Թաթարական բնակչության շրջանում առաջացել է շարժում, որը մենք, ղեկավարներս կանգնեցնելու ուժ չունենք։ Մուսուլմաններն իրենց համարում են շրջանցված և մասսաներին հանգստացնելու միակ միջոցը մուսուլմանական կորպուսի կազմակերպումն է, ռուսական զորքերի թողած զինամթերքից մաս հանելը»— Հաջինսկուց հետո պնդում էր Ջաֆարովը։ Չժխտելով երկու ճակատի առկայությունը, շրջանցելով փաստերը, նա այն վերագրեց Երևանի նահանգում հայերի և մուսուլմանների պարբերական ընդհարումներին, «հայկական զորամասերի էքսցեսներին, որից տուժում է մուսուլմանական բնակչությունը»[210]։

Մուսուլման պատվիրակների հարցադրումների պատճառները պարզվում են Բաքվից Գերմանիա մեկնած ռազմագերի ավագ լեյտենանտ Դեզիդոր Բրանդների 1918 թ. հունվարի 24-ի զեկուցագրից. «Թուրքական սպաները մուսուլմանական ազգային կոմիտեի հետ աշխատում են Արևելյան Կովկասում մահմեդական պետություն ստեղծելու ուղղությամբ։ Բաքվում ազգային կառավարություն կազմելու ճանապարհին ծառանում է այն բարդությունը, որ մահմեդականները Ռուսաստանում զինապարտ չեն և այդ պատճառով չունեն զենք և ռազմական կազմակերպություն։ Հայկական զորքերի դեմ հանդես գալու համար բանակը զենքի կարիք ունի։ Այդ առումով մուսուլմանական կոմիտեն ստանում է թուրքերի և կենտրոնական տերությունների աջակցությունը՝ զենքով և դրամով»[211]։ Իսկ ազգային խորհրդի անդամները Սեյմում և Կոմիսարիատում ներկայացված նույն մուսուլմանական գործիչներն էին, որոնք ջանք չէին խնայում Կովկասում համաթրքության քարոզչության խորացման, մուսուլմաններին զինելու, հակահայկական և հակառուսական խժդժություններ կազմակերպելու համար։ Այդ նպատակով Գերմանիայից, Թուրքիայից և այլ աղբյուրներից հոսում էր հսկայական գումար. զենքի ձեռք բերումը դարձել էր ազգային մոլուցք։

Կովկասում թուրքական գործակալների գործունեության մասին համապատասխան կառավարություններին տեղեկացվում էր ֆրանսիական, ավստրո-հունգարական, անգլիական հետախուզությունների զեկուցագրերում։ Մուսուլմանական ապստամբություն բարձրացնելու պլանների մասին Վիեննա՝ կոմս Օտտակար Չերնինին Բադենից 1918 թ. հունվարի 4-ին, հեռագրով հայտնում էր Ավստրո-Հունգարական բանակի գլխավոր հրամանատարության առընթեր արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը[212]։ Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին 1918 թ. փետրվարի 8-ին հայտնում էր Վիեննա. «Էնվեր փաշան երեկ ասաց կայսերական և թագավորական զինվորական կցորդին, որ «թուրքական կողմից սպասվում է ապստամբություն Ռուսաստանի կովկասյան մարզերում»[213]։ Բաքվում, Ստավրոպոլում, Պետրովսկում թուրքական գործակալների գործունեության մասին Լոնդոնից Փարիզ, հունվարի 14-ին զեկուցում էր Անգլիայում Ֆրանսիայի զինվորական կցորդ գեներալ դը Պանուսը[214]։

Կովկասի հարցում թուրքական նկրտումները հայտնի էին երկրամասի հասարակայնությանը և իշխանություններին։ «Անդրկովկասի ճակատագիրը դեռ որոշված չէ և այն չպետք է որոշվի թուրքական ախորժակների մասշտաբով,— գրում էր վրացական սոցիալ-դեմոկրատների «Էրթոբա» թերթը,— 1878 թ. սահմանների վերականգնումը նրանց հնարավորություն կտա թուրքական դրոշները հասցնել ընդհուպ մինչև Կովկասյան լեռները, սպառնալ Անդրկովկասի ամբողջականությանը, բնակչության ֆիզիկական գոյությանը, նպաստել համաթուրքական ազգային իդեալի իրականացմանը[215]։

Հանգես գալով հօգուտ 1914 թ. սահմանների պահպանման, «Կավկազսկոյե սլովո» թերթը գրում էր. «Ներկայացնելով Թուրքահայաստանի ինքնավարության պահանջ, մենք ասում ենք, որ թուրքական ստրկությունից ազատագրված երկիրը հետ չտրվի ստրկության, այլ վերադարձվի իր իսկական տերերին՝ հայերին։ Այդ իրավունքը հայ ժողովուրդը ձեռք է բերել հազարավոր մարդկանց արյամբ, շատ թանկ գնով, մենք իրավունք չունենք Թուրքահայաստանից թեթև ձեռքով հրաժարվել, ինչպես մի ինչ-որ աննշան, թեթևսոլիկ կարգախոսից։ Եթե մենք նույնիսկ հաշվի չառնենք ազատության համար դարավոր պայքարը և բոլոր նահատակներին, և վերցնենք միայն վերջին չորս տարիներին Հայաստանի լեռներում ու դաշտավայրերում, Միջագետքի ճանապարհին զոհված, Արաքսի, Եփրատի ջրերում, Սև ծովում խեղդամահ արված զոհերին, ավերված քաղաքները, Մուշի, Խնուսի, Հասան-Կալայի, Էրզրումի, Տրապիզոնի, Բաբերդի, Երզնկայի անապատի վերածված հայկական թաղամասերը, հայ լինելու համար Թուրքահայաստանի բռնադատված բնակչությանը, պետք է, որ այդ բազմաչարչար, անբախտ երկիրը ստանա ինքնավարություն։ Այդ պարտավորեցնում է զոհվածների հիշատակը, ինչպես և ողջերի պահանջը։ Հայաստանի ազատագրության համար զոհվել են հարյուր հազարավոր կյանքեր և մենք իրավունք չունենք խաչ քաշել այդ հաշվի վրա»[216]։

Սակայն արդարության ձայնը Բրեստում չլսվեց։ Այն չհնչեց նաև Բեռլինում և Պետրոգրադում. իսկ էր Կոստանդնուպոլիսը։ «Բոսֆորի հիվանդը» առաջ էր մղում իր պլանները։

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԲՈՐԴ ՓՈՒԼԸ. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԻՆԱԿՑՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ

Գերմանական հարձակման և հաշտության հարցը քննարկվեց ՌՍԴ(բ)Կ Կենտկոմի փետրվարի 17, 18, 22, 24-ի նիստերում։ Փետրվարի 18-ի երեկոյան նիստում Տրոցկին միացավ Լենինի կողմնակիցներին և քվեարկեց անհապաղ հաշտություն կնքելու և այդ կապակցությամբ գերմանական կառավարությանը դիմելու օգտին։ Նա հայտարարեց նաև արտաքին գործերի ժողկոմի պաշտոնից իր հեռանալու մասին[217]։ Կենտկոմի փետրվարի 23-ի նիստում Սվերդլովը հրապարակեց գերմանական վերջնագրի պայմանները, որից հետո Լենինը հայտարարեց, որ «հեղափոխական ֆրազի քաղաքականությունը վերջացել է։ Եթե այդ քաղաքականությունն այժմ շարունակվի, ապա ինքը դուրս կգա ԲԿ կառավարությունից, ԲԿ Կենտկոմից։ Հեղափոխական պատերազմի համար բանակ է հարկավոր, այդպիսին չկա։ Ուրեմն, պետք է ընդունել պայմանները»[218]։

Գերմանական վերջնագրի անհապաղ քննության կողմ արտահայտվեցին Լենինը, Զինովևը, Սվերդլովը, Սմիլգան, Ստալինը, Ստասովան,

Սոկոլնիկովը։ Դեմ էին Բուբնովը, Բուխարինը, Լոմովը, Ուրիցկին։ Չեռնպահ մնացին Տրոցկին, Ջերժինսկին, Իոֆֆեն, Կրեստինսկին[219]։ Կենտկոմի անդամների ելույթներում չհնչեց ոչ մի խոսք Թուրքահայաստանի մասին, խոսք չասվեց նաև Կովկասյան ճակատի մասին։ Խոսքը վերաբերում էր միայն Արևմտյան ռազմաճակատին, Մոսկվայի, Պետրոգրադի և հեղափոխության ճակատագրին։

Ժողկոմխորհը հաստատեց խորհրդային պատվիրակության նոր կազմ, որի մեջ մտան Գ. Սոկոլնիկովը (նախագահ), Գ. Պետրովսկին, Գ. Չիչերինը, Լ. Կարախանը (քարտուղար), Ա. Ա. Իոֆֆեն նշանակվեց պատվիրակության խորհրդական։ Մինչ հանձնաժողովի կազմի հաստատելը, բանվորների, գյուղացիների, զինվորների պատգամավորների և Համառուսական կենտրոնական գործադիր կոմիտեի փետրվարի 24-ի նիստում 126 ձայնով ընդդեմ 85-ի որոշվել էր ընդունել գերմանական վերջնագիրը։ Այդ մասին Բեռլին, Վիեննա, Սոֆիա և Կոստանդնուպոլիս հղած ռադիոհեռագիրը ստորագրել են Լենինը և Տրոցկին[220]։

Պատվիրակությունը մեկնեց Բրեստ-Լիտովսկ՝ ունենալով Ժողկոմխորհի անունից հաշտության պայմանագիր կնքելու լիազորություններ։

Բրեստ-Լիտովսկ ժամանած խորհրդային պատվիրակությանը հայտնի դարձավ, որ գերմանական վերջնագրի պայմանները ավելի են վատթարացել։ «Սանձը կտրած գերմանական իմպերիալիստները ներկայացրել են հավակնություն Արդահանի, Բաթումի և Կարսի մարզերի վրա։ Չնայած դրան, Ռուսաստանի պատվիրակությունը որոշեց չքննարկել հաշտության պայմանագիրը, այն ստորագրել առանց քննարկման, որպեսզի ոչ մի դեպքում չստեղծվի Ռուսաստանի հեղափոխության և Քառյակ դաշինքի իմպերիալիստների միջև որևէ համաձայնության տպավորություն»[221]։ Այդպես էր գրում Իոֆֆեն 1919 թ. ապրիլի 19-ին, չկասկածելով, որ նման հայտարարությունը դիվանագետի համար տրամաբանությունից զուրկ քայլի արդյունք էր. հանձնել Թուրքահայաստանը՝ Անդրկովկասի բանալին, Ռուսաստանի եվրոպական մաս, Մերձբալթիկան հակառակորդին, առաջնորդվելով միայն «գերմանական իմպերիալիզմի հետ, դաշինքից խուսափելու» հիմնավորումով, ավելի քան անմիտ հայտարարություն էր։

Իր հեղափոխական ֆրազաբանությամբ ավելի հեռուն գնաց Տրոցկին։ Նրա համար գլխավորը «բոլշևիկներին գերմանական և համաեվրոպական հեղափոխությունը մոտեցնելն էր»։ Ագիտացիոն նպատակներով Տրոցկին պատրաստ էր Քառյակ դաշինքին անել ցանկացած զիջում։ «Մենք վատ դերում չէինք լինի, եթե նույնիսկ ստիպված լինեինք հանձնելու Պիտերը և Մոսկվան։ Մենք ամբողջ աշխարհը կպահեինք լարված վիճակում»[222],— հայտարարեց արտաքին գործերի ժողկոմը կենտկոմի պլենումում։

Այս փիլիսոփայության առկայության դեպքում խոսել Հայաստանի մասին «ավելորդ» էր։

Մարտի 1-ին բացելով բանակցությունների 3-րդ փուլի առաջին

լիագումար նիստը, գերմանական պատվիրակության ղեկավար դեսպան Ռոզենբերգը առաջարկեց ստորագրվող պայմանագրի հիմքում դնել Քառյակ պետությունների փետրվարի 21-ի Բեռլինյան սկզբունքները։ Ստանալով պատվիրակության ղեկավար Գ. Սոկոլնիկովի հավանությունը, որ «դա լրիվ համապատասխանում է մեր ցանկություններին» և լսելով նրա առաջարկությունը՝ «աշխատանքը ավարտելու ամենամեղմ ժամկետում», Ռոզենբերգը անցավ վճռական քայլերի։

Ռուսական դիվանագիտության վրա գերմանական կողմի ճնշումը, նպատակին հասնելու հետևողականությունը հստակ երևաց հայկական տարածքների հարցի քննարկման ժամանակ։ Կարդալով «արևելաանատոլիական գավառների մասին» կետը, Ռոզենբերգը բացատրեց. «ռուսական պատվիրակության պ. պ. ներկայացուցիչները կարող են համոզվել, որ մենք 5-րդ կետում խոսել ենք ոչ թե պատերազմի ընթացքում գրավված թուրքական մարզերի մասին, այլ հենց արևելաանատոլիական գավառների մասին»։

Այսպիսով, Թուրքահայաստանը անվերապահորեն դիտելով որպես Թուրքիայի արևելաանատոլիական գավառներ, Ռոզենբերգը, փորձում էր այդ հարցադրումը հաստատել թուրք բնակչության «դիմումներով» և Արդահանի, Կարսի ու Բաթումի օկրուգներում բնակվող մահմեդականների «ճնշված վիճակով», նրանց «ընդառաջ գնալու» մղումով։ «Տեղական մահմեդական բնակչությունը դիմել էր մեզ օգնելու մասին խնդրանքով՝ ռուսական զինվորական, ռուսական կամ իրենց այդպիսին ներկայացնող զորամասերի բռնությունների դեմ։ Այդ բնակչությունը համառորեն խնդրել է թուրքական և բեռլինյան կառավարություններին՝ իրեն հնարավորություն տալ նորից Թուրքիային միանալու համար։ Հնարավորություն չունենալով վճարել մեծ ռազմատուգանքներ, Թուրքիան ստիպված էր երեք նշված օկրուգները ժամանակին զիջել ցարական կառավարությանը[223]։ Այդ մարզերի մահմեդական բնակչության մեծամասնությունը ցարդ իրեն ճանաչում է որպես թուրքական բնակչություն և Արդահանի, Կարսի, Բաթումի Ռուսաստանին զիջելը դիտում է որպես դրամական գործարք։ Այդ պատճառով ցանկալի կլիներ Արևելյան Անատոլիայի գավառների պարպման մասին կետին ավելացնել «ներառյալ Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգները»։

«Սակայն, մենք դա չենք պնդում, խուսափելու համար բռնատիրական ձգտումների մեջ մեղադրվելուց», փարիսեցիորեն արտահայտված դարձվածքը, սակայն, չխանգարեց Ռոզենբերգին՝ «Արդահանի, Կարսի, Բաթումի օկրուգներից ռուսական զորքերի անհապաղ ազատումը, այդ մարզերի ներքին կյանքին և միջազգային դրությանը Ռուսաստանի չխառնվելը, դրանց բնակչությանը հարևան պետությունների, հատկապես Թուրքիայի համաձայնությամբ ազատ պետական իրավունք տալը» համարել Քառյակ դաշինքի պետությունների «պահանջների սահմանափակում, նվազագույն պահանջ»։ Նա բացատրեց. առաջին պայմանը նպատակ ունի ըստ հնարավորին ապահովել բնակչությանը հետագա բռնություններից, երկրորդը՝ ռուսական կառավարության հռչակած ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի համաձայն, հնարավորություն տալ այդ մարզերի բնակչությանը արտահայտվել իր ապագա ճակատագրի կապակցությամբ[224]։

Այսպիսով, կատարվեց օսմանյան կառավարության պահանջը։ Զավթողական տենչը ավելի բացահայտ դրևորվեց Հագգը փաշայի ելույթում։ Նա հիշեցրեց, որ ռուսական և թուրքական պատվիրակությունները ունեցել են հանդիպումներ, հաշտության պայմանների մասին թուրքական առաջին նախագիծը հանձնվել է Իոֆֆեին, երկրորդը՝ ավելի լրիվը, լրացուցիչը՝ Տրոցկուն. մարտի 1-ի նիստում երկուսը միասին հանձնվեցին Սոկոլնիկովին։ Մատնանշելով, որ Իոֆֆեն ու Տրոցկին առարկություններ չեն ներկայացրել, թուրքական պատվիրակության ղեկավարը շարադրեց նախագծերի հիմնական սկզբունքները և խնդրեց Սոկոլնիկովին «արտահայտվել այդ առիթով»։ Սոկոլնիկովի պատասխանը հակիրճ էր. «Ես ոչ մի առարկություն չունեմ»[225]։

Բանակցությունների լիագումար նիստը շարունակվեց փետրվարի 18 (մարտի 3)-ին։ Ռուսական պատվիրակության անունից հանդես եկավ Սոկոլնիկովը։ Նա կանգ առավ և Հայկական հարցի վրա։

«Կովկասում ակնհայտ խախտելով հենց գերմանական կառավարության ձևակերպած 1918 թ. փետրվարի 21 (8)-ի վերջնագրի պայմանները, և հաշվի չնստելով Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերի բնակչության իսկական կամքի հետ, Գերմանիան բռնի կերպով խլում է Թուրքիայի օգտին պատերազմի ժամանակ ոչ մի անգամ թուրքական զորքերի կողմից չնվաճված այդ մարզերը»։ Այդ տարածքը նա բնութագրեց, որպես սոսկ «կարևոր ստրատեգիական կետեր», որոնց «այդպիսի բացահայտ և բռնի գրավումը կարող է ունենալ միայն մեկ նպատակ՝ Ռուսաստանի վրա նոր հարձակման նախապատրաստում»[226]։

Անդրադառնալով Սոկոլնիկովի հայտարարությանը, նիստի նախագահողը՝ Ավստրո-Հունգարիայի պատվիրակության ղեկավար Գրացը, չհամաձայնվեց ռուսական պատվիրակության ղեկավարի հայտարարությանը, թե «Ռուսաստանին առաջադրած Քառյակ դաշինքի պայմանները իրենց որոշ մասերով՝ Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերի կապակցությամբ դուրս են վերջնագրի սահմաններից»։ Նա հայտնեց, որ «Թուրքիայի պատվիրակության ներկայացուցիչը իրեն իրավունք է վերապահում մանրակրկիտ կանգ առնել այդ հարցի վրա»[227]։

Պատմական ճշմարտությանը հակառակ, Հագգը փաշան հաստատեց մարտի 1-ի նիստում գերմանական պատվիրակության նախագահի հայտարարությունը թուրքական իրավունքների մասին։ «Գերմանական պատվիրակության պարոն նախագահը բավականաչափ մանրազնին բացատրեց վերջնագրի իսկական իմաստը, որը ամենևին չի ասում գրավված մարզերի ազատման մասին, բայց ասվում է դրանց Թուրքիային վերադարձնելու մասին»,— ասաց Հագգը փաշան։ «Վերադարձնելու» հիմնավորումն այն էր, «որ Թուրքիան Արդահանի, Կարսի և Բա-

թումի մարզերին տիրել է չորս դարերի ընթացքում: Այդ ժամանակ Ռուսաստանը դեռ կոչվում էր Մոսկվայի իշխանություն: Այդ երեք մարզերը գտնվում են Ռուսաստանից երկու հազար կիլոմետր հեռավորության վրա: Ընդ որում, ամբողջ տարածքում չի եղել ոչ մի ռուս: Կարսի սարալանջը երբեք չի սպառնացել Ռուսաստանին, նա հանդիսացել է Ռուսաստանի դեմ հանված լոկ պաշտպանական կետ, Ռուսաստանը ուժով բռնագրավել է այն»:

«Վերլուծելով» Սոկոլնիկովի հայտարարությունը, Հագգը փաշան անդրադարձավ և Արդահանի, Կարսի, Բաթումի մարզերի բնակչության ինքնորոշման իրավունքի հարցերին: «Ռուսական պատվիրակության պ. նախագահը այստեղ ասաց, որ մեր կողմից ներկայացված հաշտության պայմանագիրը սահմանում է բռնակցում Թուրքիայի օգտին: Ապա ռուսական պատվիրակության պ. նախագահը խոսեց Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի բնակչության ինքնորոշման մասին»,— ասաց երևոպաշտ դիվանագետը: Նա անվրդով ավելացրեց. «Բավական է կարդալ այդ պայմանագիրը, հակառակում համոզվելու համար»: Այո՛ինքն, բռնակցում չկա: «Ինչ վերաբերում է այդ մարզերի բնակչության շահերին, ես հարց եմ տալիս, որ պետությունն է, որը ավելի իրավունքներ ունի այդ մարզերի նկատմամբ, քան Թուրքիան, որը դրանք տիրել է չորս դարերի ընթացքում և չի առաջացրել իր դեմ ոչ մի հեղափոխական շարժում: Բացի դրանից, շատ բան է կապում Թուրքիային այդ մարզերի հետ, օրինակ, ազգությունը»: Կրկնելով, որ Ռուսաստանը ուժով է բռնագրավել այդ երկրի մարզերը, պարտքի վճարման դիմաց, որը Թուրքիան վճարել չի ցանկանում, Հագգը փաշան շեշտեց. «Ռուս ժողովուրդը բոլոր տեսակետներից խորթ է այդ մարզերի ազգաբնակչությանը, եթե նա որևէ մեկի հետ պետք է մտնի համաձայնության մեջ, ապա ես կարծում եմ՝ միայն Թուրքերի հետ»: Այստեղ ևս կեղծելով փաստերը, նա ընդգծեց. «Այդ մասին է խոսում մեր պատմությունը»[228]:

Հագգը փաշան իր խոսքն ավարտեց Խորհրդային Ռուսաստանին շողոքորթելով. «Ես խնդրում եմ ռուսական պատվիրակությանը իմ ասածների մեջ չտեսնել ինչ-որ անդուր ակնարկ Ռուսաստանի հասցեին: Եթե Ռուսաստանը անցյալում նույնիսկ հասցրել է մեզ որևէ վիրավորանք, ապա մենք լավ գիտենք, որ դա եղել է ոչ այն Ռուսաստանը, որի ներկայացուցիչների հետ մենք ներկայումս վարում ենք բանակցություններ: Մենք միայն խնդրում ենք ռուսական պատվիրակության պ. պ. ներկայացուցիչներին՝ շտկել ռուսական նախկին կառավարության կողմից ուրիշ ժողովուրդներին հասցված վիրավորանքը՝ այն կառավարության, որ նրանք տապալել են»: Աստիճանաբար ավելի էին ծավալվում փաշայի դիվանագիտական ճամարտակությունները. «Մենք այստեղ անում ենք պատմական գործ, մենք աշխատում ենք արդարության սկզբունքների իրականացման համար: Այստեղ չկան ոչ հաղթողներ, ոչ պարտվողներ: Մենք բոլորս հաղթողներ ենք, որովհետև մենք բոլորս Ռուսաստանի կողմից տապալված կառավարության ֆշնամիներ

ենք: Ահա թե ինչու հույս ունեմ, որ հաշտության այս պայմանագիրը հիրավի կլինի խաղաղության գործ ու ոչ թե վրեժի գործ: Ես ասում եմ «ամեն»[229]:

Հայոց պատմությանը «անտեղյակ» կամ իսկապես անտեղյակ դիվանագետների և զինվորականների շրջանում Հագգը փաշան հաշվի չէր նատում պատմական ճշմարտության հետ: Որտե՞ղ էին Թուրքերը մինչև Կարսին, Արդահանին, Բաթումին, Արևմտյան Հայաստանին տիրելը, ո՞ւմ էին պատկանում այսպենական տարածքները՝ մինչև Թուրքիայի և Պարսկաստանի միջև 16-րդ դարի կեսերին Հայաստանը բաժանելը, ո՞վ էր նրանց օրինական տերը: Նա մոռանում էր խոսել նաև Թուրքական բռնապետության հայահալած քաղաքականության, սուլթան Աբդուլ Համիդի և երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության, հայ ազգային-ազատագրական շարժումների մասին, ներկայացնելով Թուրքական կայսրությունը որպես այստեղ բնակվող բոլոր ժողովուրդների դրախտավայր, բոլոր ժողովուրդների պատմությունը նույն Թուրք ազգի պատմությանը համահարթեցնելով:

Հանդես գալով Թուրքիայի փաստաբանի դերում, Ռոզենբերգը պաշտպանեց Թուրքական կողմի հարցադրումները, կրկնեց, որ 4-րդ կետի պայմանները չեն խոսում «Թուրքական հովանավորության կամ վերոհիշյալ մարզերը Թուրքիային կցելու մասին», այլ խոսում են պետական, իրավական և միջազգային իրավունքի մասին»: Ռուսական պատվիրակության նախագահի մտավախությունը «Թիֆլիսի և Հարավային Կովկասի կապակցությամբ», նա համարեց «միանգամայն անհիմն», քանի որ գերմանական առաջարկության պայմանները հստակ նշում են, որ «նոր կարգը մտցվում է այդ մարզերի բնակչության հետ համաձայնեցրած ճանապարհով և հետևաբար, բնակչությունը ստանում է կամքի ազատ արտահայտման հնարավորություն»[230]:

Հաշտության պայմանագիրը կնքվեց 1918 թ. փետրվարի 18 (մարտի 3)-ին: Խորհրդային Ռուսաստանի անունից որպես լիազոր ներկայացուցիչներ այն ստորագրեցին կենտգործկոմի անդամներ Գ. Սոկոլնիկովը, Լ. Կարախանը, արտաքին գործերի ժողկոմի օգնական Գ. Չիչերինը, ներքին գործերի ժողկոմ Գ. Պետրովսկին: Թուրքական կողմից պայմանագիրը ստորագրեցին Բեռլինում սուլթանի դեսպանորդ, սենատոր Իբրահիմ Հագգը փաշան և սուլթանի համհարզ գեներալ Զեքի փաշան:

Ընդունված 4-րդ կետը հիրավի, չարաղետ էր Հայաստանի և Անդրկովկասի համար, ըստ որի, «Ռուսաստանը կանի իրենից կախված ամեն ինչ, որպեսզի ապահովի Արևելյան Անատոլիայի գավառների պարպումը և դրանց օրինական վերադարձը Թուրքիային: Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգները ևս անհապաղ պիտի պարպվեն ռուսական զորքերից: Ռուսաստանը չպետք է միջամտի այդ օկրուգների պետական-իրավական և միջազգային իրավական հարաբերությունների նոր կազմակերպմանը, թրավունք տա նրանց բնակչությանը հաստատելու նոր

կարգ՝ հարևան պետությունների և հատկապես Թուրքիայի համաձայնությամբ»[231]։

Ռուսաստանի և Թուրքիայի միջև նույն՝ մարտի 3-ին ստորագրված լրացուցիչ պայմանագրով Արևելյան Անատոլիայից, ինչպես նաև Կարսից, Արդահանից, Բաթումից իր զորքերի դուրս բերումից բացի, Ռուսաստանը պարտավորվում էր մինչև պատերազմը եղած սահմաններից այն կողմ ընկած տարածքից հանել իր բոլոր ուժերը, քաղաքացիական և զինվորական պաշտոնատար անձանց՝ պայմանագիրը կընքելուց 6—8 շաբաթվա ընթացքում։ 5-րդ կետով նշվում էր, որ «Ռուսաստանյան հանրապետությունը պարտավորվում է զորացրել և ցրել Թուրքահպատակներից ու ռուսահպատակներից կազմված հայկական խմբերը, որոնք գտնվում էին ռուսական տարածքում և զինագրավված թուրքական մարզերում»։ Ռուսաստանը համաձայնվում էր Կովկասի ամբողջ տարածքում հաշտության ամբողջ ընթացքում չկենտրոնացնել մեկ դիվիզիայից ավելի զորք։ «Հակառակը, Թուրքիան իր մյուս թշնամիների դեմ պատերազմը շարունակելու անհրաժեշտությունից ստիպված է իր բանակը պահել ռազմական վիճակում»[232]։

Թուրք-ռուսական լրացուցիչ պայմաններով վերականգնվում էին Թուրքիայի և Ռուսաստանի միջև 1878 թվականի սահմանները։ Սահմանագիծը որոշելու համար կազմվեց թուրք-ռուսական երկու հանձնաժողով, որոնց հանձնարարվեց պայմանագիրը վավերացնելուց հետո երեք ամսվա ընթացքում ներկայացնել առաջարկություններ սահմանագծի մասին։ Այսպիսով, ի չիք էր դառնում Ժողկոմխորհի՝ «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի իրականացումը։ Ժխտվում էր նաև «Հաշտության մասին» հրովարտակով հռչակված «Հաշտություն առանց հողագրավումների և ռազմատուգանքների» սկզբունքը։

Անդրադառնալով ռազմական և տարածքային առումով Ռուսաստանի սահմանափակումներին, բաղդատելով և համադրելով Բրեստ-Լիտովսկի հիմնական և ռուս-թուրքական և գերմանա-ռուսական, ավստրո-հունգարական-ռուսական, բուլղարա-ռուսական լրացուցիչ պայմանագրերի՝ Ռուսաստանի համար ռազմական կապիտուլյացիոն բնույթի կարևորագույն որոշումներ պարունակող հոդվածները, Վ. Վիտորտը առանձնացնում է Ռուսաստանի հատուկ պարտավորվածությունը՝ «զորացրել և ցրել հայկական խմբերը. անկախ նրանից, որտեղ են գտնվում և ումից են կազմված՝ թուրքական, թե ռուսական հպատակներից» հոդվածը։ Բերելով համապատասխան հոդվածները, Վիտորտը առաջարկում է համեմատել այդ որոշումները «վերջին օրերին Թուրքիայի ձեռնարկած՝ հայ բնակչության գլխովին կոտորածների դիվային տրվելյալների հետ, որի դադարեցման համար Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը հատուկ նամակով պահանջել է Գերմանիայից նրա վճռական միջամտությունը»[233]։

Պատասխան է տրվում և Տրոցկուն Քյուլմանի տված հարցին՝ «որտեղով են անցնում Ռուսաստանի սահմանները»։ Ընդունված պայմանագրով ոչ միայն փոխվում էր Ռուսաստանի վարչա-քաղաքական, աշխարհագրական քարտեզը արևմուտքում, այլև Ռուսաստանը կորցնում էր իր իշխանությունը և իրավունքները բացի պատերազմի օրենքներով գրավված Թուրքահայաստանի, նաև Արդահանի, Կարսի, Բաթումի նկատմամբ, որոնք թուրքերի կողմից գրավված չէին։

Չի կարելի չհամաձայնվել Զ. Ավալովի (Ավալաշվիլի), այդ օրերին գրած «Բաթում և Կարս» հոդվածում առաջ քաշված դրույթների հետ։ Բրեստի պայմանագիրը անտեսեց 1917 թ. նոյեմբերի 24-ին «Ռուսաստանի բոլոր աշխատավոր ժողովուրդներին» ուղղված կոչում՝ «պատերազմից հետո հայերին՝ իրենց քաղաքական ճակատագիրը ազատ որոշելու իրավունքի ապահովման մասին» խորհուրդների տված խոստումը, անտեսեց և «Թուրքահայաստանի մասին» Ժողկոմխորհի հրովարտակը։ «Բրեստի պայմանագիրը չգիտի Հայկական հարցը, ինչպես և չգիտի «Թուրքահայերին»։ Նրան հետաքրքրում է միայն «արևելաանատոլիական գավառների» շուտափույթ պարպումը և դրանց «օրինական վերադարձը» Թուրքիային։ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակներին դյուրին էր հրաժարվել «արևելաանատոլիական գավառներից», ինչպես նկատում է Ավալովը, «քանի որ ռուսական հանրապետությունը և նրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը դեմ են ուրիշի հողերի զավթմանը. Թուրքիայի բաժանման ու նրանից Հայաստանը պոկելու պայմանագիրը պատված է և ոչնչացված»։ Եվ ապա, «չի կարելի հաստատել, որ Կարսի և Բաթումի վերաբերյալ որոշումները պայմանագրի ամենակարևոր կետերն են, սակայն դժվար է կասկածել, որ իր հետևանքներով, նա Բրեստի տրակտատում ամենանշանակալիցն է»[234]։

Վ. Վիտորտը գտնում էր, որ «Չարաղետ մարտի 3-ին, չարաղետ Բրեստ-Լիտովսկ քաղաքում» կնքված հաշտությունը կապիտուլյացիա է ոչ միայն գերմանա-պրուսական իմպերիալիզմի», այլև «թուրքական օսմանիզմի առաջ»[235]։ Պրոֆ. Բ. Նոլդեն, նկատելով, որ գերմանացիները «պատերազմի համար Թուրքիային վճարում են ռուսական գավառներով», ահռելի տարածքային կորուստներ Կովկասում բնորոշում էր որպես «բրեստյան ազետ», «թեթևսոլիկ մոտեցում միապետական սահմանների նկատմամբ», իսկ «1877—1878 թթ. պատերազմի նվաճումները Թուրքիային վերադարձնելը՝ ստորացուցիչ»[236]։

Բրեստում ստորագրված հաշտությունը արժանացավ ՌԿԿ(բ) 7-րդ արտակարգ համագումարի հավանությանը։ 1918 թ. մարտի 8-ին ընդունվեց Լենինի բանաձևը (30 կողմ, 12 դեմ, 4 ձեռնպահ), որում ընդգծվում էր, որ համաշխարհային հեղափոխության շահերի և ուժերի հարաբերակցության տեսանկյունով հաշտության պայմանագրի ստորագրումը խորհրդային իշխանության կողմից արդի պահին՝ անհրաժեշտություն է։[237] Լենինը խոսում էր «ձախ» կոմունիստների և Տրոցկու արկածախնդրության մասին, որոնք հասցրեցին Ռուսաստանը ծանր պարտությունների։ Ջստորագրելով հաշտություն, Տրոցկին նպաստեց գերմանական հարձակման ծավալմանը, որի արդյունքով խորհրդային

Ռուսաստանը հարձակման նախնական պայմանների փոխարեն ստացավ «ավելի ստորացուցիչ հաշտություն նրանց մեղքով, ովքեր այն չվերցրեցին»,— ընդգծեց Լենինը։

Պայմանագիրը վավերացվեց Խորհուրդների համառուսական 4-րդ համագումարում, որը բացվեց Մոսկվայում, մարտի 14-ին։ Կոմունիստական կուսակցության կենտկոմի բանաձևը ստացավ 784 ձայն, դեմ՝ 261, ձևոնպահ մնացին 118 պատգամավոր։ Այսպիսով, ներկա 1232 պատգամավորների մոտ 1/3-ը չպաշտպանեց պայմանագիրը։ Այդ տեղի ունեցավ Բրեստի հաշտության արդյունքների մասին Գ. Չիչերինի զեկուցման բուռն քննարկումից հետո։ Չիչերինը արդարացրեց խորհրդային պատվիրակության գործունեությունը, որը առանց քննարկելու ստորագրել էր պայմանագիրը, նշելով նրա անհամաձայնությունը Քառյակ տերությունների վարքագծի հետ՝ հենվելով Սոկոլնիկովի երկու հայտարարությունների վրա։ «Ով հիրավի, ինչպիսի քննարկում կարող էր լինել այն ժամանակ, երբ գերմանական զորքերի հարձակումը շարունակվում էր դեպի անպաշտպան երկրի խորքերը և երբ բանակցությունները կարող էին ստեղծել միայն կեղծ վիճակ, համաձայնության պատրանք, միայն պատրանք այն բանի, իբր մենք կարող ենք ունենալ ինչ-որ ազդեցություն բանակցությունների ելքի վրա, իբր Ռուսաստանի, Ավստրիայի և Գերմանիայի միջև կայանում է ինչ-որ համաձայնություն»։

«Մյուս հայտարարությունը մեր կողմից արվեց հատուկ՝ Բաթումի, Կարսի և Արդահանի անջատման մասին այն բանից հետո, երբ կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից ընդունվեցին Գերմանիայի և նրա դաշնակիցների վերջնագրային պայմանները։ Երբ մենք եկանք Բրեստ-Լիտովսկ, մեզ ներկայացվեց ևս մեկ նոր պայման, որը ավելի վատթարացրեց նախկին պայմանագիրը՝ Ռուսաստանից Կարսի, Արդահանի և Բաթումի անջատումը, ընդ որում, մեզ հայտնվեց, որ դա հակառակ կողմի նվազագույն պայմանն է։ Ով այդ պատճառով բացի մեր ընդհանուր հայտարարությունից՝ առանց քննարկելու հաշտություն կնքելու մասին, մենք արեցինք ևս հատուկ բողոքի հայտարարություն՝ նոր պայմանների կապակցությամբ, որոնք ավելի վատթարացրին մեզ ներկայացված վերջնագիրը»։

Չիչերինը բացատրեց, որ Կարսին, Արդահանին և Բաթումին վերաբերող պայմանագիրը հստակ չի արտահայտում, թե այդ մարզերը անջատվում են Ռուսաստանից. այդ մարզերը պարպվում են ռուսական զորքերից։ Բայց անմիջապես ըրեց պատրանքը՝ ներկա դեպքում բռնագավթումը կրում է թաքնված տեսք, քան մերձբալթիացիների և Լեհաստանի դեպքում։ «Նրա էությունը մնում է նույնը»,— եզրափակեց Չիչերինը[238]։ Չիչերինի բացատրությունները արժանացան շատ պատգամավորների առարկությանը։

Սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների խմբակցությունը ներկայացված բանաձևում արձանագրեց. «Լեհաստանը, Լատվիան,

Լիտվան, Էստոնիան, Կարսի, Բաթումի, Արդահանի մարզերը դառնում են Ավստրո-գերմանական և թուրքական իշխանությունների ենթակա մարզեր։ Ըստ որում, հրեա, հայ և վրացի ազգաբնակչությունները մատնվում են ավարառության և թալանի»[239]։

«Բրեստի հաշտության պայմանագիրը, իր այն կետով, որով պոկվում են Բաթումը, Կարսը և Արդահանը, այդ վայրերի վրացի և հայ ազգաբնակչությանը մատնում է ֆիզիկական ոչնչացման»։ Այդպիսին է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության (միավորված) բանաձևը։ Նրա հեղինակներն այն բնորոշում էին որպես «ամոթի չմաքրվող բիծ»՝ հեղափոխական Ռուսաստանի համար[240]։

Մենշևիկյան խմբակցության անունից հանդես եկած Յու. Մարտովը գտնում էր, որ «Բրեստում գտնվող դիվանագետները ստորագրեցին գործարք» իրենց չպատկանող մարզերը Թուրքիային հանձնելու մասին՝ չունենալով իրավունք, «քանի որ Կովկասյան խորհուրդները չեն ընդունել Ժողկոմխորհի իշխանությունը»[241]։

Յակով Զավրիյանի հետ Պետրոգրադում Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնող Լիպարիտ Նազարյանցի վկայությամբ, Տրոցկին պայմանագիրը կնքելուց հետո ասել է. «Բրեստի դաշնագիրը ափսո է ձեր ժողովրդի համար և երջանիկ եմ, որ ես ստիպված չեղա ստորագրել դա»[242]։ Հիշեցնենք, գերմանական կողմը բանակցությունների սկզբնական փուլում առերես հայկական տարածքների հարցեր չէր դնում։ Այդ հարցը առաջադրվեց Տրոցկու հայտարարությունից և Բրեստ-Լիտովսկից նրա հեռանալուց հետո։ Նա մոռանում էր իր իսկ խոսքերը, արտահայտված ՌՍԴ(բ)Կ կենտկոմի փետրվարի 22-ի նիստում. «Մեզ առաջարկված պայմանները այժմ դարձան ավելի վատ, քան Բրեստում, և իհարկե, դրանք ավելի լավ էին Կամենևի առաջին այցելության ժամանակ և լավ կլիներ, եթե Կամենևը և Իոֆֆեն կնքեին պայմանագիր։ Մենք ձգձգում էինք, որովհետև անհրաժեշտ էր պատճառների պարզություն՝ ինչու ենք մենք այդ կնքում, պարզություն բոլորի համար։ Միջազգային տեսակետից մենք կկորցնեինք, ստորագրելով հաշտություն Բրեստում։ Այժմ պարզությունը առկա է, ոչ մեկի համար կասկած չկա այս պատերազմում Գերմանիայի իմպերիալիստական ձգտումների մեջ»[243]։ Տեղին է նկատել, որ նման «գլուխ» համար չարժեր, որպեսզի Ռուսաստանը Արևմուտքում և Արևելքում հսկայական տարածքներ կորցներ և ահռելի վնասներ կրեր, հայերին հասցվեր դաժան հարված, Հայաստանը զրկվեր իր պատենական հողերից, կրեր մարդկային, տնտեսական ու բարոյական հսկայական վնաս։

Պայմանագիրը ստորագրվեց, սակայն թուրքական հարձակումը Հայաստանի վրա շարունակվում էր։ Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի ռազմական ներկայացուցչության զեկավար ֆելդմարշալ-լեյտենանտ Յոժեֆ Պոմյանկովսկին այդ անցքերի մասին գրում է. «Բարձր դուռը այդ բացատրում է նրանով, որ իրավունք ունի Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը գրավել իր զորքով։ Բանակին և նա-

վատորմին մարտի 10-ին ուղղված հրամանում էնվերը ծանուցեց 1878 թ. կորցրած այդ գավառների՝ Թուրքիային վերադարձնելու մասին և ապա հայտնեց, որ 3-րդ բանակը հրաման է ստացել գրավել այդ մարզերը»[244]։

Պատերազմում պարտված և փլուզման շեմին գտնվող Թուրքիայի զավթողական նոր կեցվածքը և հոխորտանքը պայմանավորված էին ոչ թե նրա ռազմական ուժով, այլ խորհրդային դիվանագիտության և կառավարության կողմից բանակցությունների ձգձգման և ժամանակ շահելու, զիջողական քաղաքականությամբ[245], համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակի նրանց ակնկալություններով, հզոր դաշնակցի սատարմամբ։

Իրականացնելով, Լենինի խոսքերով ասած, «վելիկոռուսների պարտավորվածությունը» «թե՛ Գալիցիայից, թե՛ Հայաստանից, թե՛ Պարսկաստանից զորքերը անհապաղ դուրս բերելու» հարցում, անտեսվեց հենց իր՝ Լենինի դրույթը. «Ինչպես այդ ժողովուրդներին, այնպես էլ ընդհանրապես առանց բացառության բոլոր ժողովուրդներին թույլատրելով, որ նրանք միանգամայն ազատորեն որոշեն՝ արդյոք իրենք ցանկանում են ապրել առանձին պետության մեջ, թե միութենական պետության մեջ՝ ում հետ ուզեն»[246]։

«Հատկապես Թուրքիայի համաձայնությամբ» Կարսի, Արդահանի, Բաթումի բնակչության, մասնավորապես հայերին. ինքնորոշման իրավունք տալու գերմանական տարբերակը Նիկողայոս Ադոնցը նույն օրերին բնորոշեց որպես պարզ օրինակ «այն բանի, թե ինչ չարիք կարելի է մոգոնել ինքնորոշման ամենաազնիվ սկզբունքներից»։ «Մենք պատրաստ ենք սկզբունքորեն ողջունել ինքնորոշման իրավունքի կիրառումը, իհարկե, ոչ Թուրքիայի համաձայնությամբ, առանց որևէ արտաքին ճնշման,— գրում է մեծանուն պատմաբանը,— սակայն ինչու նրանք, ովքեր մոտենում են Բաթումի ջրերին և Կարսի ամրություններին՝ ինքնորոշման սկզբունքներով, մոռանում են այդ ազնիվ զենքը վանի, էրզրումի արյունածածկ պատերի, Հայաստանի այն մարզերի նկատմամբ, որոնք Բուբերի դիվանագիտական լեզվով կոչվում են, «արևելահանատոլիական» և դրանց պարպումը պահանջում ռուսական, իշխանություններից»։ Եվ ապա. «Հայերի ինքնորոշումը, որքանով վերաբերում է Թուրքիայի հետ գոյակցելու անհնարինությանը, վաղուց է կայացել։ Դրա վկաներն են արյունածոր Հայաստանը՝ ամենուր ծածկված կանանց, երեխաների դիակներով, ողջերի փախստական շղթան, Միջագետքի անապատներում կործանվողների հառաչանքն ու դեպի երկինք, դեպի մարդկային խղճին դիմող մահացողների ուրվականները»։ Ակնհայտ պատմաբանը տեղեկացնում էր, որ այնժամ, երբ համաշխարհային հասարակական կարծիքը՝ ի դեմս պետական գործիչների և հեղափոխական սոցիալիստական կազմակերպությունների, պահանջում է Թուրքական զորքերի հետքաշում Հայաստանից, Թուրքիան ոչ միայն չի մտադրվում հրաժարվել Հայաստանից, այլև ակնկալում է

գավթել Կարսի, Արդահանի, Բաթումի մարզերը, քանի որ նրա պաշտպանը Գերմանիան է։ «Պետությունն, որը փլուզման շեմին հազիվ շնչում է և մնում է միայն տերությունների մրցակցության շնորհիվ, այդ անշունչ մարմինը հանկարծ փոքրիկ օբյեկտից վերածվում է թալանչիական քաղաքականության հավակնորդի սուբյեկտի»,— գրում է Ադոնցը։ Թուրքիայի նոր դիրքը Ադոնցը բացատրում է ոչ թե Օսմանյան կայսրության ֆիզիկական ուժով, նա ջախջախված էր բոլոր ռազմաճակատներում, ոչ թե աշխարհին հայտնի իր մշակույթի առավելություններով, այլ Գերմանիայի սատարումով, նրա հաղթանակած դաշնակցի զենքով։ Կանխատեսելով սպասվող նոր աղետը՝ Ադոնցը հարցնում էր. «Ինչու է Գերմանիան հայերին սպասում նորից քշել լաբիրինթոս»։

Ընդգծելով, որ հայերի «ռուսական կողմնորոշումը հյուսվել է պատմականորեն և այդ պատճառով այն շատ ճիշտ է», «հայերի ձգտումը դեպի Ռուսաստան վիճաբանության ոչ ենթակա փաստ է», և որ «Ռուսաստանի մեծապետական կյանքի իրիկնամուտին» գերմանական հաղթանակները ստիպեցին նրան հրաժարվել Հայաստանից և սպասում են շուտ տալ ավանդական պատկերացումները ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Անդրկովկասի ճակատագրում, Ադոնցը մտահոգված գրում էր. «Հայերի համար օրվա տագնապն է՝ ինչ է գուժելու Հայաստանի գլխին փայլատակող նոր սուրը։ Գերմանիան, ինչպես և Թուրքիայով շահագրգռված եվրոպական մյուս երկրները, նայում են Հայաստանին և Հայկական հարցին, ինչպես կշեռքի վրա ավելորդ կշռաքարի։ Այստեղից էլ առաջացել են անտարբերությունը և հակազդեցությունը»։

Բացահայտելով Կարսի, Արդահանի, Բաթումի՝ Թուրքիային բռնակցելու թուրքական և գերմանական հիմնավորումների շինծու բնույթը, «կռվաններ, որոնք ուսանելի են վերապրող պահի համար», Ադոնցը համոզված նշում էր. մուսուլմանների «բողոքները», որոնց մասին խոսում էր Ռոզենբերգը, հորինվել են Կոստանդնուպոլսում և ոչ թե Արևմտյան Հայաստանում։ Տարակուսանք հայտնելով այդ «բողոքների» նկատմամբ գերմանական դիվանագետների և քաղաքագետների «զգայուն» վերաբերմունքի կապակցությամբ, Ադոնցը հիշեցնում էր. «Հարյուրամյակներ հայերը դիմում են քաղաքակիրթ աշխարհին, հարյուրամյակներ գոչում Թուրքիայում իրենց բանտային կյանքի մասին։ Թուրքերի տիրապետության տակ գտնվելուց առաջ, իրենց սեփական մշակույթի և այլ իրավական պայմաններում ապրող բոլոր ժողովուրդները վաղուց ազատվել են թուրքական դժոխքից։ Միայն հայ ժողովուրդն է, որ չնայած բոլորից շուտ է բարձրացրել բողոքի ձայնը, շարունակում է ցարդ տնքալ անտանելի լծի ծանրության տակ։ Պատմական ոչ մի հիմնախնդիր չունի այդքան ողբերգական ճակատագիր, ինչպես Հայկական հարցը։ Եթե Բաթումի մուսուլմանների տրտունջները նոր են թափանցում Բեռլին, ապա թուրքական անօրինություններից հայերի հառաչանքները և հոգոցը հնչել են ոչ միայն Բեռլինում, այլև

ամբողջ աշխարհում։ Ծիի խոսքը, իրոք, վերաբերում է սկզբունքներին, ապա ինչպես եղավ, որ Բեռլինը դարձավ այդքան զգայուն մի բուռն մուսուլմանների րոպեական բողոքներին, այդ նույն ժամանակ մնալով խուլ ու մունջ ամբողջ հայ ժողովրդի ցասման հանդեպ, որի արդարացիությունը, ի թիվս այլ տերությունների, ճանաչել է և Գերմանիան»։ Նկատի ունենալով 1878 թ. Բեռլինի վեհաժողովի փաստաթղթերը, Ադոնցը հիշեցնում էր, որ համաեվրոպական սեղանի վրա դրված է ժամանակից խունացած հայոց ազատության խարտիան, որի տակ դրված է և Գերմանիայի ստորագրությունը և մշակույթի մեծ արժեք ստեղծած Գերմանիան պետք է զսպի չարին անցած իր դաշնակցին, հանդես գա հանուն արդարության և բարոյականության հաղթանակի[247]։

Արդեն ապրիլին Բրեստի պայմանագրի կործանարար հետևանքների մասին հարկադրված էին նշել իրենք՝ փաստաթուղթը ստորագրած Չիլերինը և Կաբախանը։ Թուրքիայի ավերիչ հարձակման կապակցությամբ Թիֆլիսում գերմանական հյուպատոսին նրանք գրում էին. «չպետք է թույլ տալ, որպեսզի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը «իր կամքից անկախ համաշխարհային պատերազմի մեջ ներքաշված հայ ժողովրդի համար դառնա տառապանքի աղբյուր»։ Նրանք մատնանշում էին, որ «հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունը ընկնում է Գերմանիայի վրա, քանի որ նրա պնդմամբ ռուսական զորքերը հանվեցին հայկական մարզերից և այժմ նրանից է կախված հետ պահել Բուրքական զորքերին վրեժի և գազանացման հոդի վրա առաջացած հետագա էքսցեսներից»[248]։ Խղճի ուշացած ճիչ, թույլ տված չարաղետ սխալի խոստովանություն։

Ժողովուրդների ինքնորոշման արդարամիտ բանաձևը Բրեստ-Լիտովսկում օգտագործվեց հենց ռուսական պետության դեմ։ Այդ նշում է և Թուրք պատմաբան Հիքմեթ Բայուրը. «Ի վերջո, գերմանացիներն ու ավստրիացիները Արևմտյան Ռուսաստանում, Ֆինլանդիայում, օսմանցիներն էլ Կովկասում պետք է այդ սկզբունքը գործադրեին Ռուսաստանի դեմ, այն էլ ավելի շատ հենվելով ուժի վրա, քան թե օգտվելով նրա սկզբունք լինելու հանգամանքից»[249]։

Ազնիվ, ազգերի ինքնորոշման քաղաքակիրթ սկզբունքը, այսպիսով, Թուրքերի ձեռքին, գերմանացիների օգնությամբ դարձավ բումերանգ Ռուսաստանի դեմ, որին մեծապես տուժեց հայ ժողովուրդը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԱԹՈՒՄ ԸՆԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստանալով Բրեստի հաշտության լուրը, Անդրկովկասյան Սեյմը և Կոմիսարիատը ուղարկեցին բողոք Բրեստ-Լիտովսկ՝ հաշտության կոնֆերանսին, Պետրոգրադ՝ ժողկոմխորհին, Կոստանդնուպոլիս, Վիեննա, Բեռլին, Լոնդոն, Փարիզ, Նյու-Յորք, Հռոմ, Տոկիո՝ պետությունների արտաքին գործերի նախարարներին, Կենտրոնական նավատորմիզ (Բալթիկա), Օդեսա՝ Սովդեպ, Կիև՝ Կենտրոնական ռադա։ Հեռագրում ասված էր. «Անդրկովկասի և նրա սահմանների վերաբերյալ յուրաքանչյուր պայմանագիր՝ կնքված առանց Անդրկովկասի գիտության և համաձայնության, Անդրկովկասյան կառավարությունը, Սեյմի որոշման համապատասխան, համարում է միջազգային նշանակությունից զուրկ և նրա համար պարտադիր ուժ չունեցող»։ Ի գիտություն էր հայտնվում, որ Անդրկովկասյան Սեյմը արդեն ընտրել է հաշտության պատվիրակություն, որը պատրաստ է մեկնել Տրապիզոն՝ Թուրքիայի հետ վերջնական հաշտություն կնքելու համար[1]։

Սակայն Թուրքիան դա հաշվի չառավ։ Փետրվարի 18 (մարտի 3)-ին ստացվեց Վեհիբ փաշայի հեռագիրը Կարսի, Արդահանի և Բաթումի մարզերը պարպելու մասին։ «Ռուսական հանրապետությունը համաձայնվելով Բաթումի, Կարսի և Արդահանի մարզերը պարպելուն, հենց հիմա ստորագրեց դրա վերաբերյալ հաշտության պայմանագիրը։ Դրա հետևանքով պատիվ ունեմ հայտնել Ձերդ վսեմությանը (հեռագիրը ուղղված էր Կովկասյան ռուսական զորքերի հրամանատար գեներալ Լեբեդինսկուն— Հ. Ա.), որ հենց հիմա ստացա իմ գեներալիսիմուսի (էնվեր փաշայի— Հ. Ա.) հրամանը՝ կարճ ժամանակում կատարել նըշված մարզերի պարպումը»[2]։

Բրեստ-Լիտովսկից ստացված լուրերը, Թուրքական պատվիրակության երկդիմի քաղաքականությունը և մեքենայությունները քննարկվում էին երկրամասի հասարակայնության բոլոր ոլորտներում։ «Կավկազսկոյե սլովո» թերթը փետրվարի 20-ին տեղեկացնելով այդ մասին, իրավացիորեն հիշեցնում էր, որ Թուրքիան ինքը առաջինը գիմեց Անդրկովկա-

սի կառավարությանը հաշտության առաջարկությունով, որը և ընդունեց Կոմիսարիատը։ «Մենք՝ երկու պատերազմող կողմերս, Անդրկովկասը և Թուրքիան, մինչև Բրեստ-Լիտովսկում հաշտություն կնքելը սկսեցինք բանակցությունները վերջնական խաղաղություն կնքելու համար։ Թուրքիային լավ հայտնի էր, որ Անդրկովկասը Հոկտեմբերյան հեղափոխության հենց սկզբից չի ճանաչել Ժողկոմխորհի իշխանությունը, որ նա փաստորեն գոյություն ունի ինքնուրույն, չի ունեցել կապ բոլշևիկյան Ռուսաստանի հետ և այդ պատճառով էլ Թուրքիայի հետ պատերազմի և խաղաղության հարցերում Անդրկովկասի յուրաքանչյուր ելույթ կարող է կրել օրինական, իրավական բնույթ,— գրում էր Թերթը։— Թուրքիան այն ժամանակ անհրաժեշտ համարեց դիմել Անդրկովկասի կառավարությանը, երբ այդ կառավարությունը նրա հետ կնքել էր զինադադար և զինադադարի պայմանները Անդրկովկասի կողմից չէին խախտվել»։

Թուրքիայի կառավարության այդ քայլը համարելով «ոչ թե ուղղակի քաղաքականության արդյունք, այլ որպես դիվանագիտական քայլ», Թերթը գրում էր. «Թուրքիան պահանջում է հաշտություն կնքել մեր թիկունքից, առանց մեր մասնակցության, բայց մեր հաշվին»։ Անդրկովկասը Ռուսաստանի այն մասն է, բացատրում է Թերթը, որտեղ բոլշևիկները ոչ միայն չէին հաստատել իրենց իշխանությունը, այլև նույնիսկ չունեին որևէ ազդեցություն։ Բացարձակորեն անհասկանալի համարելով Թուրքիայի տակտիկան այս հարցում, Թերթը միամտորեն հարցնում էր. «ինչո՞ւ էր Թուրքիային հարկավոր Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտության պայմանագրում պնդել Անդրկովկասի մասին կետի մտցնելը» և պատասխանում. «մենք չգիտենք»[3]։

Բացասաբար վերաբերվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Կարսի, Բաթումի, Արդահանի մարզերը Թուրքիային հանձնելու փաստին և չհիսելով Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության և կառավարության դիրքորոշումը այդ հարցում, «Պայքար» Թերթը լուսաբանում էր պայմանագրի լուրը ստանալուց հետո Անդրկովկասում ստեղծված իրավիճակը, ժողովրդի և քաղաքական կուսակցությունների, բազմազգ երկրամասի կառավարողների տարակուսանքն ու մտորումները. «Բոլորին ներկայումս զբաղեցնում է Անդրկովկասի անկախության և Ռուսաստանից նրա անջատման հարցը և ամենայն հավանականությամբ, եթե ոչ այսօր, այդ հարցը կկանգնի Անդրկովկասյան Սեյմի առաջ։ Թող իմանան նրանք, ովքեր անջատման կողմնակիցներ են՝ դրանով կամա թե ակամա թեքվում են դեպի թուրքական կողմնորոշում, մեր երկրամասը ենթարկում են թուրքական և գերմանական ռեժիմի հեգեմոնիայի և հանձնում նրանց տիրապետությանը,— գրում էր Թերթը։— Ոչ թե անկախության և անջատողական քայլով կարելի է փրկել վիճակը, այլ Ռուսաստանի հետ անխախտ կապով և մեր տրամադրության տակ գտնվող ռազմական ուժերի հզորացմամբ և միավորմամբ»[4]։ Շարունակելով այդ միտքը, մարտի 1-ի համարում «Պայքարը» գրում էր. «Թուրքիայի գիշատիչները և նրանց Անդրկովկասյան եղբայրները հանդիսա-

նում են խաղաղություն կնքելու ամենակատաղի թշնամիները։ Այդ վտանգը ավելի մեծ է այժմ, երբ Թուրքիային են հանձնվում ոչ միայն գրավված տարածքները, այլև Բաթումի, Արդահանի, Կարսի մարզերը։ Խոսք չկա, որ թուրքական գիշատիչների ախորժակը այժմ բացվել է ինչպես երբեք, նրանց թիկունքում կանգնած է գերմանական իմպերիալիզմը»[5]։ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը համարելով աներկբա նահանջ Թուրքահայաստանի մասին բոլշևիկների հռչակած հրովարտակից, «Հորիզոնը» գտնում էր, որ Անդրկովկասի կառավարողները, ի դեմս Կոմիսարիատի և Սեյմի, պետք է հրաժարվեն այդ պայմանագրից և գիտենան, որ Անդրկովկասի բախտը կարող են վճռել միայն նրա ժողովուրդները։ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Թուրքահայաստանը պետք է վերադարձվի Թուրքիային, բայց պարզ է, որ ոչ մի հայ, անկախ դասակարգից և կուսակցությունից, չի համաձայնվի դրա հետ, ոչ մի հայ չի կարող թույլատրել, որպեսզի Թուրքահայաստանի բնակիչները ենթարկվեն նոր ջարդերի, այդ իսկ պատճառով նա կպայքարի ոչ միայն Կարսի և Բաթումի պաշտպանության համար, այլև Թուրքահայաստանի հանդեպ պատրաստվող նոր հանցագործությունների դեմ։ «Առանց Կարսի և Բաթումի չի կարելի պատկերացնել ազատ Անդրկովկաս, առանց Թուրքահայաստանի անկախության չի կարելի ապահովել Թուրքահայերի ֆիզիկական գոյությունը և հանգիստը Անդրկովկասում»։ Այսպիսին էր «Հորիզոնի» կարծիքը[6]։

Հայտնելով Սեյմում ծավալված բանավեճերի մասին, մասնավորապես Անդրկովկասի անկախության և Ռուսաստանից անջատման հարցի կապակցությամբ, «Կավկազսկոյե սլովո» Թերթը 1918 թ. փետրվարի 24-ին գրում է. «Հիրավի, Անդրկովկասի անկախության հռչակումը շատ հեշտ է։ Բայց այնքան էլ հեշտ չէ ստեղծել իրական և ոչ կեղծ անկախություն, ավելի դժվար է լուծել բարդ և խճճված հարցերը, որոնք, անկասկած, կառաջանան անկախության հռչակման հետ միասին։ Այն, որ Անդրկովկասի և Ռուսաստանի միջև կտրվել է կապը, այն, որ մենք չենք ճանաչում բոլշևիկների իշխանությունը, դեռ չի ստեղծում այն վիճակը, որը կառաջանա Ռուսաստանից տևական անջատման ժամանակ։ Ռուսական կառավարությունը Անդրկովկասում չի եղել արդեն 4 ամիս, բայց Ռուսաստանը կա և կլինի»[7]։

«Հումանիզմի և քաղաքակրթության» կարգախոսով հայկական հողերը ներխուժած թուրքական զորքերի առաջխաղացման պայմաններում Անդրկովկասի Սեյմի պատվիրակությունը փետրվարի 23 (մարտի 6)-ին ժամանեց Թուրքիայի կողմից արդեն գրավված Տրապիզոն։ Տեղական վալիի կարգադրությամբ հաշտության պատվիրակությանը «Կառլոս Թագավոր» հածանավից ափ իջնել չթույլատրվեց։ Արձանագրելով իրադրությունը, Ա. Խատիսյանը պատվիրակության փետրվարի 24 (մարտի 7)-ի նիստում դրեց պատվիրակության անկախ գործունեության ապահովման և Անդրկովկասի տարածք վերադառնալու հարցը։ Նա գտնում էր, որ քաղաքում թուրքական զորքերի ցուցադրական քայլերը

և տեղաշարժերը կփշացնեն «բանակցությունների մթնոլորտը, կազդեն նրա բովանդակության վրա»։ Ժամանակից շուտ առաջարկություններ չպետք է անել, պետք է սպասել Թուրքական պատվիրակության ժամանելուն, ասաց Հայդարովը, պետք է օգտվել Թուրքերի «հյուրընկալությունից»՝ Տրապիզոնը համարելով չեզոք քաղաք։ Արդարացնելով Թուրքերի գործողությունները, Խասմամեգովը դրանք բացատրեց մուսուլմանների բնակչության նկատմամբ նահանջող զորքերի կամայականություններով, հանգամանք, որ «Թուրքերին իրավունք է տալիս շարժվել առաջ՝ կամայականություններին վերջ տալու համար»։ Չիչենկելին հեռագրեց Կոստանդնուպոլիս՝ անդրկովկասյան պատվիրակության՝ Տրապիզոն ժամանելու և Թուրքական պատվիրակության չժամանելու մասին[8]։

Պատվիրակություն Տրապիզոն ուղարկելու փոխարեն Օսմանյան կառավարությունը՝ ի դեմս Էնվեր փաշայի, Անդրկովկասի կառավարությունից փետրվարի 25 (մարտի 8)-ի հեռագրով պահանջեց անհապաղ զորքերը հանել Բաթումից, Արդահանից, Կարսից[9]։ «Խեղճ» մուսուլմաններին հայերի «գազանություններից» փրկելու համար Վեհիբ փաշան հրամայեց «որքան հնարավոր է արագ ձեռնարկել այդ շրջանների ազատագրմանը»[10]։

Բրագրության և առացված հեռագրերի մասին զեկուցվեց Անդրկովկասի Սեյմի փետրվարի 25-ի և 26-ի նիստերում։ Թուրքական կառավարության բռնակցման քաղաքականությունը պաշտպանելու առիթը բաց չթողեց Խան-Խոյսկին։ «Ինչ վերաբերում է Թուրքական կառավարության վարքագծին,— ասաց նա,— ապա նրանում մենք տեսել ենք տրամաբանական հետևողականություն։ Թուրքական կառավարությունը բազմիցս դիմել է մեզ, որպես ինքնուրույն միավորի և պնդել այդ գաղափարի ընդունումը մեր կողմից։ Թուրքական կառավարությունը առաջարկել է իր պատվիրակությունը ուղարկել Բրեստ-Լիտովսկի խաղաղության կոնֆերանս՝ ինքնուրույն բանակցություններ վարելու համար։ Անդրկովկասյան կառավարությունը տարբեր պատճառներով այն հնարավոր չհամարեց։ Թուրքական կառավարությունը բազմիցս դիմել է Անդրկովկասի կառավարությանը՝ շեշտելով նրա անկախությունը։ Դրանց մենք որոշակի պատասխան չենք տվել։ Մենք այդ հարցին չենք տվել որոշակի պատասխան և Սեյմի նախորդ նիստում, երբ այդ հարցը հստակ և վճռական դրվել է մեր առաջ։ Այդ պատճառով, երբ այսօր Թուրքական կառավարությունը, գիտակցելով մեզ որպես ռուսական հանրապետության մաս, առաջարկում է կատարել հաշտության պայմանները, որոնք կնքվել են ռուսական հանրապետության կողմից, ապա դրանում չի կարելի չտեսնել տրամաբանական հետևողականություն»։ Առարկելով Սեյմի անդամներին՝ ընդհանուր ուժերով երկրամասի սահմանները պաշտպանելու հարցում, Խան-Խոյսկին այն համարեց «միջազգային անտակտություն»։ Պահը համարելով նպաստավոր, նա անհրաժեշտ համարեց ընդունել Թուրքերի առաջարկությունը Անդրկովկասի անկախության հռչակման մասին[11]։

Այնուամենայնիվ, Սեյմը գտավ, որ Անդրկովկասի և նրա սահմանների վերաբերյալ յուրաքանչյուր պայմանագիր, կնքված առանց ինքնուրույն Անդրկովկասի համաձայնության և գիտության, համարվում է միջազգային նշանակությունից զուրկ և Անդրկովկասի համար պարտադիր ուժ չունեցող, դիմեց Թուրքական իշխանություններին՝ «շտապ հայտնել, պետք է դիտե՞լ արդյոք Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի պարպման մասին առաջարկը որպես Թուրքական կառավարության և Անդրկովկասյան կառավարության միջև խաղաղության բանակցությունները շարունակելու անցանկալիություն»[12]։ Հաստատվեց, որ «Անդրկովկասը պատրաստ է վարել ինքնուրույն բանակցություններ Թուրքերի հետ»։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

Օսմանյան կայսրության կառավարության հաշտության պատվիրակության անդամները, որ հիմնականում զինվորականներ էին, Տրապիզոն ժամանեցին փետրվարի 27 (մարտի 12)-ին, Թուրքիայի ռազմածովային ուժերի սպայակույտի պետ փոխծովակալ Ռաուֆ բեյի ղեկավարությամբ։ Նույն օրը կայացան պատվիրակությունների ներկայացուցիչների փոխադարձ այցելությունները և պատվիրակության նախագահների հանդիպումները։ Առաջին իսկ օրը, ապա պատվիրակությունների բանակցություններում, մասնավոր հանդիպումներում և խորհրդակցություններում ակնհայտ դարձան Օսմանյան Թուրքիայի զավթողական նկրտումները, Թուրքիայի պատվիրակության անդամների երեսպաշտությունը, խուսանավելը, հաճոյախոսությամբ և պերճախոսությամբ իրենց նպատակներին հասնելու միտումները։

Առաջին իսկ հանդիպման ժամանակ Ռաուֆ բեյը դիմեց անդրկովկասյան պատվիրակությանը ոչ որպես պետություն ներկայացնող պատվիրակության, այլ որպես «Թուրքական կայսրության գիրկը վերադարձած ժողովուրդների» ներկայացուցիչների։ Իր և իր գործընկերների անունից Ռաուֆ բեյը «բարեկամաբար և վստահությամբ» բանավոր հայտնեց Օսմանյան կայսրության կառավարության ցանկությունը «կնքել եղբայրական և երկարատև հաշտություն Անդրկովկասի հետ»։ «Մեր բարեկամության շնորհիվ կլինենք հանգիստ ապագայի համար։ Թաքնված ցանկություններ մենք չունենք։ Հաշտությունը հավասարապես ցանկալի է երկու կողմի համար էլ։ Այսքան վերքերից հետո պետք է սկսվի ապաքինումը։ Մենք ունենք հաստատ նպատակ գալ ձեզ ընդառաջ. ոչինչ չկա մեզ անջատող։ Սակայն չպետք է տալ մեր մերձեցմանը մեծ հրապարակայնություն։ Որպեսզի այն ժողովուրդները, որոնց շահերն են արգելակել մեր մերձեցմանը՝ մեզ չխանգարեն»,— հայտարարեց օսմանյան պատվիրակության ղեկավարը, ընդ-

գծելով, որ այդ հաշտությունը կհանդիսանա երաշխիք «Արևելքի ընդհանուր բարօրության համար»։

Ա. Չխենկելու հարցադրմանը՝ թուրքական պատվիրակության լիազորությունների մասին, Ռաուֆ բեյը անուղղակիորեն պատասխանեց, որ թուրքերը ունեն հատատ մտադրություն՝ գնալ ընդառաջ Անդրկովկասյան կառավարությանը, պատվիրակությունը ունի բոլոր լիազորություններն ու ցանկությունները քննարկել «բոլոր հարցերը, որոնք կառաջադրվեն Անդրկովկասի կառավարության կողմից», կնքել հաշտության և բարեկամության պայմանագիր։ Ռաուֆ բեյը ժխտեց օսմանյան պատվիրակության տեղյակ լինելը Վհհիբ փաշայի հեռագրին կարսը, Արդահանը, Բաթումը պարպելու վերաբերյալ, խուսափեց պատասխանել՝ նշանակո՞ւմ է արդյոք դա բանակցություններ չվարելու ցանկություն։ Նա հաստատեց. մենք Ծրապիզոն եկել ենք հաշտություն կնքելու, մեր պատասխանը պաշտոնական է[14]։ Նույնը կրկնվեց պատվիրակությունների ղեկավարների երկրորդ հանդիպման ժամանակ՝ փետրվարի 28 (մարտի 13)-ին[15]։

Պատվիրակությունների առաջին համատեղ նիստի օրակարգի քննարկման ժամանակ անդրկովկասյան պատվիրակության՝ փետրվարի 28 (մարտի 13)-նիստում թուրքական կողմի մտքերի արտահայտչի դերում հանդես եկավ Հայդարովը։ Առարկելով Գվազավային, որն առաջ էր քաշում Անդրկովկասի սահմաններում ժողովուրդների ինքնորոշման իրավունքի կարգախոսը և սահմանների անձեռնմխելիության հարցը, մասնավորապես, Կարսի, Արդահանի և Բաթումի նկատմամբ թուրքական ակնկալությունների անհիմն լինելը, Հայդարովը զարգացրեց այն «միտքը», որ այդ կարգախոսի պաշտպանությամբ կարող է դրսևորվել «մեր հաշտության պատվիրակության թուլությունը»։ «Ես չեմ պատկերացնում Անդրկովկասի ազգաբնակչությանը անշարժ, քարացած սահմաններում։ Սահմանները կարող են փոխվել՝ կախված շատ պայմաններից և այդ պատճառով խոսել պետական սահմանների անխախտելիության մասին, ինչպես նաև Անդրկովկասի սահմաններում ժողովրդի ինքնորոշման մասին, թուրքական կառավարության կողմից՝ տրամաբանական հետևողականությամբ կարող է հարց հարուցվել՝ ինչո՞ւ Անդրկովկասի Սևյմի հաշտության պատվիրակության անդամները չեն կարծում, որ երկրամասի ժողովուրդների մեջ ինքնորոշման միտում կարող է դրսևորվել թուրքական կայսրության սահմաններում և այդպիսով Օսմանյան կայսրության կողմից այդպիսի հարցադրումը չի կարող թվալ զուրկ իրական մտքից և բովանդակությունից»։

Պատվիրակությունների առաջին պաշտոնական նիստում, մարտի 1 (14)-ին գրավոր հայտարարության մեջ Ռաուֆ բեյը հավաստեց օսմանյան կառավարության անկեղծ ցանկությունը, հաստատել բարիդրացիական հարաբերություններ «Անդրկովկասում կազմավորման ընթացքում գտնվող հանրապետության հետ»։ Թուրքական պատվիրակությունը խնդրում էր անդրկովկասյան պատվիրակությանը հանդես գալ ստույգ

հայտարարությամբ Անդրկովկասյան հանրապետության էության, ձևի, քաղաքական և վարչական կառավարման, պետության կազմավորման, նրա կողմից միջազգային իրավունքով պահանջվող պայմանների կատարման մասին։ Այդ հայտարարությունում հաշտություն կնքելու լիազորությունների մասին այլևս չէր հիշատակվում։ Դա փաստորեն հարցադրում-քննություն էր։ Դրա փոխարեն իր պերճախոսությամբ և թաքնված մտքերով փայլեց Ռաուֆ բեյը, որը ողջույնի խոսքում շնորհակալություն հայտնեց երկնքից իրենց ընձեռված հնարավորությունների համար և իր երկրի և պատվիրակության անդամների անունից դիմեց ցարիզմի անկումից հետո աստիճանաբար դեպի անկախության գնացող Անդրկովկասի ժողովուրդների ներկայացուցիչներին։ Շողոմության և փարիսեցիության գոհարներ էին Ռաուֆ բեյի հետևյալ խոսքերը. «Ես պատիվ ունեմ այս թանկարժեք դեպքը դիտել որպես իմ կյանքի անկեղծ ուրախություններից մեկը։ Ի դեմս Ձեզ, այսօր ողջունում եմ Ձեր երկիրը՝ ամենևին ոչ որպես արարողությունների պահանջների և դիվանագիտության ավանդույթների պահպանության անհրաժեշտություն, այլ ավելի շատ ես ոգևորված եմ մեծարման զգացումով և ցանկությամբ աջակցել սուրբ գործին, որի ներկայացուցիչները դուք եք հանդիսանում»։ Եվ «ինչո՞ւ» հարցին պատասխանում է ինքը՝ թուրքական պատվիրակության ղեկավարը, շեշտելով Կովկասում թուրքերի հատուկ խնդիրները։ Թուրքիայի և Անդրկովկասի ժողովուրդների երկու հարյուր տարվա ընդհանուր փառապանծ պատմության ընթացքում բոլոր ռազմական գործողությունները ցարիզմի դեմ ավելի են կապել այդ ժողովուրդներին։ Այդ ժողովուրդների կապող հանգույցները հանդիսանում են ոչ միայն պատմական և աշխարհագրական հարաբերությունները, այլ ավելի շատ «ազգակցական կապերը, որոնք բխում են մեր ընդհանուր անցյալից։ Հենց այդ պատճառով անդրկովկասյան և թուրք ժողովուրդները կազմված են այժմ նույն կրոնից և ազգություններից և ունեն գրեթե միատեսակ պատմություն»։ Այսպիսով, թուրքական բացատրությամբ, Անդրկովկասի և Թուրքիայի ժողովուրդները ունեն նույն արմատները, նույն կրոնը, առաջինները ուժով պոկվել են երկրորդներից, եղել են «ռուսական զնդանում» 200 տարի, վերջապես վերադարձել են «մայրական գիրկ»[16]։ Ռաուֆ բեյի խոսքերը «Կովկասում Թուրքիայի հատուկ խնդիրների մասին, Անդրկովկասի պատվիրակության վրա թողեցին ուժեղ տպավորություն»,— գրված է Մ. Թումանյանի գրառումների տետրում[17]։

Չմոռանալով վիճաբանության մեջ և չժխտելով թուրքական պատվիրակության տեսակետը, Չխենկելին շրջանցեց Ռաուֆ բեյի հարցադրումները, բավարարվեց մի ընդհանուր հայտարարությամբ. «Անդրկովկասի ազատ ժողովուրդները իրենց ձեռքը վերցնելով իրենց ճակատագիրը վճռելու գործը, կարող են պաշտպանել իրենց երկրամասը»[18]։

Կոնֆերանսի 2-րդ նիստում, մարտի 2 (15)-ին, թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց Չխենկելու առաջարկությունը կոնֆե-

բանտում հերթականորեն նախագահելու մասին։ Չցանկանալով բարդացնել հարցը, «միջադեպը կոնֆլիկտի չհասցնել», անդրկովկասյան պատվիրակությունը ընդունեց թուրքական առաջարկությունը, այդպիսով Տրապիզոնը համարվեց թուրքական տարածք, իսկ անդրկովկասյան պատվիրակությունը՝ հյուր։ Առաջին զիջումը դարձավ սկիզբ թուրքերի մեթոդական ճնշման և անդրկովկասյան պատվիրակության մյուս առաջարկությունները մերժելու համար։

Թուրքական հարցադրումներին անդրկովկասյան պատվիրակության պատասխանում ասված էր. Անդրկովկասի էության, ձևի, քաղաքական և վարչական կառավարման հարցը առաջ է քաշվել նրա որոշման համար միակ իրավասու մարմնի՝ Անդրկովկասի Սեյմի կողմից՝ ստեղծված ժողովուրդների կամքի ազատ արտահայտությամբ, համընդհանուր ընտրական իրավունքի հիման վրա։ Շարադրելով թուրք-անդրկովկասյան հարաբերությունների պատմությունը հետհոկտեմբերյան շրջանում, Չխենկելին շեշտը դրեց այն հանգամանքի վրա, որ հաշտություն կնքելու համար ինքնուրույն բանակցությունների մեջ մտնելու առաջարկությունը արվել է օսմանյան կառավարության կողմից, հետևաբար նա ճանաչել է Անդրկովկասյան ինքնուրույն իշխանության գոյությունը, որը «իրենից ներկայացնում է պետություն»[19]։

Թուրքական պատվիրակության խնդրանքով անդրկովկասյան պատվիրակության հայտարարությունը հրապարակվեց և քննարկվեց կետ առ կետ և այդ ապացուցում է թուրքերի ձգտումը՝ խառնվել Անդրկովկասի ներքին գործերին, թափանցել նրա վարչական և քաղաքական կառուցվածքի մեջ։ Այդ ձգտումը նկատեց և Չխենկելին, որը «միջազգային բանակցություններում ներքին բնույթի հարցերի» առաջքաշումը համարեց «անհարմար»։ Ժխտելով Անդրկովկասի ներքին հարցերի մեջ խառնվելու գործոնը, թուրքական պատվիրակության ղեկավարը նորից աչքի ընկավ արևելյան պերճախոսությամբ և ճամարտակություններով։ Օսմանյան կայսրությունը թույլ չի տա խառնվելու իր ներքին գործերի մեջ և ինքը մտադրություն չունի խառնվել մյուս ժողովուրդների և պետությունների ներքին գործերին, հայտարարեց նա։ Իր հարցադրումները «հիմնավորեց» նրանով, որ Անդրկովկասյան կառավարությունը գտնվում է կազմավորման ընթացքում և թուրքերը նրա մասին քիչ բան գիտեն»[20]։

Բայց և այնպես, անդրկովկասյան պատվիրակության քննությունը շարունակվեց նաև նույն օրը կայացած պատվիրակությունների նախագահների մասնավոր զրույցի ժամանակ։ Նպատակը հիմնավորվում էր Անդրկովկասին ի մոտուստ ծանոթանալու անհրաժեշտությամբ։ «Հենց դրա համար էլ Վեհիբ փաշան գեներալ Օդիշելիձեին հղեց հեռագիր՝ հաղորդելով, որ Կոստանդնուպոլսից Թիֆլիս ուղարկվում է պատվիրակություն Անդրկովկասի հետ ծանոթանալու համար»,— հայտարարեց Ռաուֆ բեյը, ավելացնելով. «Չնայած մեր պատվիրակության մեջ խոսք է գնում ծանոթության մասին, սակայն մենք պատրաստ ենք գնալ

առաջ և ճանաչել ձեր անկախությունը։ Մենք պետք է ներկայացնենք մեր կառավարության մանրակրկիտ հաշվետվություն և բացատրենք ձեր կառավարության էությունը»։ Տարակուսանքի մեջ ընկած Չխենկելին անհրաժեշտ գտավ ուղղակի հայտարարել. «Ես անհարմար գտա շոշափել այդ հարցը պաշտոնական նիստում, քանի որ օսմանյան գլխավոր հրամանատարը մտնելով բանակցությունների մեջ հաշտության մասին, չէր կարող չիմանալ՝ ում է դիմում»։ Չխենկելու հարցին, թե պե՞տք է արդյոք հասկանալ Ռաուֆ բեյի բացատրությունը այնպես, որ թուրքական պատվիրակությունը ստանալով Անդրկովկասից տեղեկություններ, սպասելու է հրահանգների Կոստանդնուպոլսից հետագա բանակցությունների համար, թուրքական պատվիրակության ղեկավարը խուսափողաբար պատասխանեց, որ ցանկանում է բանակցությունների շտապ ավարտ, քանզի «Օսմանյան կառավարությունը դրանում շահագրգռված է Անդրկովկասյան կառավարությունից ոչ պակաս»։ Սակայն «Օսմանյան կառավարության և Անդրկովկասի միջև հաշտության պայմանների մանրամասնությունների բնորոշումը իրենից ներկայացնում է արտակարգ դժվարին գործ և կարիք ունի մանրակրկիտ քննարկման»[21]։

Թուրքական պատվիրակության հարցադրումները առաջացրին հակադիր կարծիքներ անդրկովկասյան պատվիրակության անդամների մեջ։ Դա արտահայտվեց նույն օրը՝ մարտի 2 (15)-ին հաշտության պատվիրակության երեկոյան նիստում՝ մարտի 3 (16)-ին քննարկվելիք հարցերի տակտիկան մշակելու կապակցությամբ։ Խամամեդովը նշեց Կովկասի իրավիճակի և անդրկովկասյան պատվիրակության պատասխանի միջև եղած անհամապատասխանությունը՝ երկրամասի քաղաքական կառուցվածքի վերաբերյալ։ Հայդարովը պնդեց թուրքերի հետ լրիվ անկեղծ բանակցությունների օգտին, դիտելով, թե նրանք «իրենց հերթին սրտաբաց են դնում հարցերը»։ Մեհտիևը համոզված էր, որ թուրքերը չափազանց շահագրգռված են շտապ հաշտություն կնքելու և անդրկովկասյան պատվիրակությունը պետք է հայտարարի Սեյմին, որ բանակցությունները արդյունքի չեն հասնի, քանի չի հայտարարվել անկախություն։ «Նախագահը պետք է հայտարարի թուրքերին, որ մենք փաստորեն ինքնուրույն ենք և հարցնի, արդյոք, թուրքերը հաշտություն կնքելու համար անհրաժեշտ պայման համարո՞ւմ են անկախության հռչակումը»։ Հայդարովի հարցադրմանը Լասխիշվիլին պատասխանեց հակիրճ. թուրքերը իրենք կդնեն այդ հարցը։ Անդրադառնալով մարտի 3 (16)-ի նիստի օրակարգին, Խատիսյանը առաջարկեց այդ նիստում ավարտել թուրքական պատվիրակության ձեռնարկած քննությունը։ Որոշվեց խնդրել օսմանյան պատվիրակությանը՝ ավարտել Անդրկովկասի կառուցվածքի հետ ծանոթությունը և հայտնել, որ բանակցությունների հիմքում դրվող սկզբունքների մասին հայտարարություններ պետք է հայտնվի ոչ ուշ, քան մարտի 4 (17)-ի առավոտյան ժամը 10-ը[22]։

Սակայն թուրքական պատվիրակության բանակցությունների ձգձգվող քաղաքականությունը շարունակվում էր։ Դրա նպատակը ռազմաճակատում առավելության հասնելն էր, ուժի դիրքերից խոսելը։ Եթե սկզբում Ռաուֆ բեյը հայտարարում էր սուլթանի կողմից բանակցություններ վարելու համար իր ունեցած լիազորությունների մասին, ապա այժմ հայտարարում էր, որ այդպիսի լիազորություններ չունի։ Մարտի 3 (16)-ին, 3-րդ նիստում թուրքական պատվիրակությունը անընդունելի գտավ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ Կովկասին վերաբերող մասի կապակցությամբ անդրկովկասյան պատվիրակության հիմնադրույթները՝ «հիմնավորելով» այդ նրանով, որ Կովկասյան կառավարությունը Բրեստ-Լիտովսկի դաշնագրի կնքման ժամանակ կազմավորված չէր և ոչինչ չէր արել իր անկախությունը մյուս պետություններին ճանաչել տալու համար։ Թուրքական կառավարությունը ժամանակին իմացավ Անդրկովկասյան կառավարության կազմավորման և Ռուսաստանից նրա անջատման մտադրության մասին, չանկանալով ծանոթանալ նրա հետ և բարեկամական հարաբերությունների մեջ մտնել, սակայն մինչև հիմա Անդրկովկասը իրեն համարում է «Ռուսաստանի դաշնակցային հանրապետության անդամ» և երկրամասում միայն ռուսական զորքն է իշխում, այդ իսկ պատճառով Անդրկովկասի անկախությունը Թուրքիան չի ճանաչում։ Գրավոր հատուկ հայտարարությամբ թուրքական պատվիրակությունը խնդրեց անդրկովկասյան պատվիրակությանը սահմանել և հռչակել Անդրկովկասյան կառավարության պաշտոնական ձևը, պետության սահմանները, տարածքը, լեզուն և կրոնը, ինչպես նաև «հստակ սահմանել անկախ կառավարության դիրքորոշումը և վերաբերմունքը Օսմանյան կայսրության նկատմամբ»[23]։

Այդ հարցերը արծարծվեցին և երկու պատվիրակությունների ղեկավարների մարտի 4 (17)-ի և 6 (19)-ի մասնավոր խորհրդակցություններում։ Ռաուֆ բեյը առաջնորդվում էր Բրեստի հաշտության պայմաններով ու սահմանումներով։ Արդեն զարգացվում էր այն միտքը, որ իրենք եկել են Տրապիզոն ոչ թե հաշտություն կնքելու, այլ Անդրկովկասի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու, հյուպատոսական, առևտրական և այլ բնույթի պայմանագրեր կնքելու համար։ Հաշտության պայմանագիր կկնքվի, երբ Սեյմը կհռչակի Անդրկովկասի անկախությունը[24]։

Թուրքական պատվիրակության առաջադրած հարցերի պատասխանները մշակվեցին անդրկովկասյան պատվիրակության նիստերում՝ մարտի 3 (16)-ին, 4 (17)-ին, 5 (18)-ին, 6 (19)-ին, դրանք հրապարակվեցին պատվիրակությունների բանակցությունների չորրորդ նիստում՝ մարտի 7 (20)-ին։ Այստեղ ժխտվում էին թուրքական պատվիրակության առաջադրած «հիմքերը» հաշտություն կնքելու համար Անդրկովկասյան կառավարության իրավունքներից զուրկ լինելու մասին, բերվում էին այն բոլոր փաստարկերը, որոնք Անդրկովկասի կո-

միսարիատը ստացել էր Կոստանդնուպոլսի հետ հարաբերությունների մեջ մտնելու, «վերջնական պայմանագիր կնքելու համար»։ Պատվիրակության եզրակացությունն էր. «Անվիճելի է, որ օսմանյան կառավարությունը ճանաչել է Անդրկովկասի կառավարությանը որպես անկախ և միակ լիազորված կառավարություն՝ հաշտություն կնքելու օսմանյան կառավարության հետ»։ Անդրկովկասյան պատվիրակությունը միաժամանակ հայտարարեց, որ Թուրքիայի և Անդրկովկասի պատվիրակությունների Տրապիզոնում գտնվելը հաստատում է երկուստեք Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող մասի չընդունելը։

Տրվեց կոնկրետ պատասխան նաև Օսմանյան կայսրության կառավարության առաջադրած մյուս հարցերին. Անդրկովկասյան պետության տարածքի մեջ մտնում են 5 նահանգ՝ Բաքվի, Ելիզավետպոլի, Երևանի, Թիֆլիսի, Քութայիսի և երկու մարզ՝ Սուխումի ու Զաքաթալայի։ Դաղստանի մարզի և Սևծովյան նահանգի հարցը կվճռվի նրանց ներկայացուցիչներին Անդրկովկասյան Սեյմ գործուղելուց հետո։ Պաշտոնական լեզուն ռուսերենն է. մշակվող սահմանադրությամբ պետական լեզուներ պետք է ճանաչվեն վրացերենը, հայերենը, թուրքերենը։ Պետք է լինի խղճի ազատություն։

Թուրքիայի նկատմամբ Անդրկովկասյան կառավարության վերաբերմունքի մասին օսմանյան պատվիրակության հարցադրմանը տրվեց հետևյալ պատասխանը. «Իր սահմաններում ստանալով Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմի վիճակի ժառանգություն, նրանց ստորագրած Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, որի բովանդակությունը Անդրկովկասի կապակցությամբ առաջացրել է Անդրկովկասյան կառավարության բողոքը, Անդրկովկասը ներկայումս գտնվում է Թուրքիայի հետ այդ պատերազմի հետևանքների վերացման և նրա հետ ամուր խաղաղության հաստատման համար բանակցությունների վիճակում»[25]։

Առարկելով անդրկովկասյան պատվիրակությանը, Ռաուֆ բեյը պաշտոնական հայտարարության մեջ առաջ քաշեց նոր կռվան. Թուրքիայի առաջարկությունը Անդրկովկասյան կառավարությանը՝ մտնել խաղաղ հարաբերությունների մեջ, իրավաբանական հիմք չունի, քանի որ Օսմանյան կայսրության կառավարությունը Անդրկովկասի կառավարությանը պաշտոնապես չի ճանաչել։ Թուրքական կառավարության փետրվարի 10-ի առաջարկությունը բնորոշվեց որպես «վերացական խոստում և վերացական առաջարկություն», որը չի ամրապնդվել նույնիսկ «ձևական պայմանագրով»։ Թուրքական պատվիրակության եզրակացությունն այն էր, որ պետությունների շարքը չմտած նոր կազմավորվող պետական միավորման բողոքը միջազգային ակտ հանդիսացող Բրեստի պայմանագրի պարտադիր լինելու դեմ՝ ոչ մի իրավաբանական հիմք չունի։ Թուրքական պատվիրակությունը կրկին պնդեց իր վարկածը, որ Անդրկովկասի կառավարության հետ Թուրքիայի հարաբերությունների մեջ մտնելը «չունի այլ նպատակ, բացի Բրեստ-Լի-

տովսկի պարտավորություններից դուրս մնացած տնտեսական և առևտրական հարաբերությունների և նրանց տեխնիկական և գործնական մանրուքների համար հիմքերի նախապատրաստումը և ամենևին չի նշանակում այդ պայմանագրի նշանակության ժխտում»։ Պայմանագրի դրույթները, հակառակ անդրկովկասյան պատվիրակության կարծիքի, միանգամայն պարտադիր են։ Օսմանյան պատվիրակությունը ցանկություն հայտնեց, որպեսզի «Անդրկովկասը ավելի շուտ վճռի հայտարարել անկախության և կառավարման ձևի մասին, քան սկսված բանակցությունները կկրեն վերջնական բնույթ»[26]։

Թուրքական պատվիրակության «փակ» քայլերի կծիկը բացվեց պատվիրակությունների բանակցությունների հինգերորդ նիստում, մարտի 8 (21)-ին։ Օսմանյան պատվիրակությունը զայրույթով հանդես եկավ Անդրկովկասյան Սեյմի 1918 թ. փետրվարի 17 (մարտի 2)-ի հաշտության պատվիրակությանը տրված հրահանգների՝ Արևմտյան Հայաստանի ինքնավարության վերաբերյալ 4-րդ կետի դեմ։ Նա անդրկովկասյան պատվիրակության հայտարարությունը դիտեց որպես Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու ցանկություն, հանդես եկավ հայտարարությամբ, որը երիտթուրքերի հափշտակիչ նկրտումները դրսևորում էր առանց դիմակի։

Պաշտոնական հայտարարությունում ասված էր. կովկասյան հանրապետության վերջնական և պաշտոնական ճանաչումը կարող է կայանալ միայն նրա՝ «Բաթումի, Արդահանի և Կարսի սանջակների նկատմամբ որևէ հավակնություններից հրաժարվելուց հետո»։ «Օսմանյան կառավարությունը ունի բոլոր իրավունքները այդ մարզերի նկատմամբ և այդ իրավունքը հենվում է Օսմանյան կայսրության ուժի և հզորության վրա։ Եվ դա պետք է ճանաչվի Անդրկովկասյան կառավարության կողմից»,— հայտարարեց Ռաուֆ բեյը։ Դա պետք է լինի Անդրկովկասի կառավարության կողմից «ոչ որպես Օսմանյան կայսրության իրավունքի ճանաչում այդ սանջակների նկատմամբ, այլ որպես իրենց հավակնություններից հրաժարում»,— ընդգծեց ծովակալը։ Այսպիսով Ռաուֆ բեյը հայտարարեց Բրեստ-Լիտովսկի պայմանագրի անդառնալիության փաստը՝ բացառելով Կարսի, Արդահանի և Բաթումի մասին հարցերի քննարկումը։

Նիստը ավարտվեց երկու պատվիրակությունների ղեկավարների երկխոսությամբ։ Ա. Ի. Չխենկելի. «Ես հանգում եմ եզրակացության, որ Կարսը, Արդահանը և Բաթումը չեն կարող հանդիսանալ մեր քննարկման առարկա», Ռաուֆ բեյ. «Ճիշտ այդպես»[27]։

Անդրկովկասյան Սեյմի հիմնադրույթները Բարձր դռանը զեկուցելու անհրաժեշտության կապակցությամբ առաջացավ կոնֆերանսի աշխատանքները ընդմիջելու հարցը։ Առաջացավ նաև անդրկովկասյան պատվիրակության խորհրդակցելու անհրաժեշտություն կառավարության հետ[28]։ Սակայն անդրկովկասյան պատվիրակության նիստերի և հարցերի քննարկումները շարունակվում էին։ Պատվիրակության նիս-

տերի արձանագրությունները ցույց էին տալիս, որ Անդրկովկասի՝ Ռու-
սաստանից անջատման թուրքական պատվիրակության հետևողական
միտումը, հայկական և մասամբ, վրացական տարածքի Թուրքիային
բռնակցման անզուսպ նկրտումները արժանանում էին պատվիրակու-
թյան մուսուլման պատգամավորների բացահայտ պաշտպանությանը։
Ավելի էր զգացվում ամբողջական, կուռ, համախոհ, միասնական պատ-
վիրակության բացակայությունը. «Նրա առանձին ազգային խմբեր մտա-
ծում էին իրենց շահերի մասին. մենշևիկները դիմում էին մերձեցման
գերմանացիների, մուսուլմանները՝ թուրքերի հետ։ Մուսավաթականնե-
րը սպասում էին թուրքերի գալուն, տենչում էին վերացնել հայերին,
Անդրկովկասում դառնալ կառավարող ազգ»[29]։
Ստավրովսկու այս միտքը հաստատում են հաշտության պատ-
վիրակության նիստերում մուսուլման պատվիրակների ելույթները։
Անդրկովկասի ազգաբնակչության մեծ մասը՝ մուսուլմանությունը, թուր-
քերի հետ պատերազմի մեջ չի եղել, հայտարարեց Հայդարովը պատ-
վիրակության մարտի 4 (17)-ի նիստում, «մենք եկել ենք ոչ թե հաշտու-
թյուն կնքելու, այլ պատերազմին վերջ տալու, Թուրքիայի հետ բարի-
դրացիական հարաբերությունները վերականգնելու համար»։ Նա շարու-
նակում էր պնդել, որ Անդրկովկասի պետական անկախությունը շահե-
կան է թուրքերի համար և բանակցությունները պետք է շարունակել
անկախության հաստատման հիման վրա։ «Ոչ մեկը մեզ չի ճանաչի,
մինչև մենք մեզ չճանաչենք»,— հայտարարեց Հայդարովը։ Հայդարո-
վին կրկնում էր Խասմամեդովը. «Բրեստի պայմանագիրը իրավաբանո-
րեն պարտադիր է Ռուսաստանի բոլոր մասերի համար, այդ թվում և
Անդրկովկասի։ Հարցը պետք է դնել քաղաքականապես. եթե մենք ան-
ջատվել ենք, ապա՝ մշտապես և ոչ պայմանական»[30]։ Մարտի 6 (19)-ի
նիստում Խասմամեդովը իր մտքերը հայտնեց պատերազմի և խաղաղու-
թյան հարցում. «Եթե թուրքերը անցնեն սահմանը, այն ժամանակ էլ
կմտածենք՝ հայտարարել նրանց պատերազմ, թե ոչ, և եթե այո, ապա
Անդրկովկասի ժողովուրդների բոլո՞ր մասերը կհայտարարեն պատե-
րազմ, թե՞ մի մասը»[31]։
Մարտի 7 (20)-ի և 8 (21)-ի նիստերում մուսուլմանական պատվի-
րակները առարկում էին Քաջազնունու առաջարկությանը՝ բանակցու-
թյունները դադարեցնելու, Թիֆլիս գնալու և բանակցությունների հա-
մար ավելի հարմար վայր ընտրելու հարցում։ Հաջինսկին, Մեհտիևը,
Խասմամեդովը կարծում էին, որ դա կունենա վատ հետևանքներ, քան-
զի բնակչության կողմից այն կդիտվի որպես բանակցությունների
ավարտ։ Վճռականորեն մերժելով Քաջազնունու առաջարկը, նրանք ցան-
կանում էին «սկզբից պարզել՝ ինչպես կընդունի օսմանյան պատվիրա-
կությունն այդ միտքը»։ Ամբողջ կազմով Տրապիզոնից հեռանալը Հա-
ջինսկին համարում էր «պատմական սխալ»[32]։
Չխենկելին, ինչպես և Քաջազնունին, Խատիսյանը, Լասխիշվիլին,
կարծում էր, որ ոչ մի հիմք չկա մնալ Տրապիզոնում, շեշտելով, որ

Տրապիզոն գալու առաջին իսկ օրվանից պատվիրակությունը հայտնվել է թուրքերի տենդագին ռազմական պատրաստությունների ականատեսի դերում և պատվիրակությունը չի կարող հանգիստ մնալ Տրապիզոնում, չանհանգստանալ Անդրկովկասի ճակատագրով։ «Մեր թուլությունը միասնության բացակայության մեջ է, այդ իսկ պատճառով փակուղուց դուրս գալու միակ միջոցն է հնարավորություն տալ Անդրկովկասի յուրաքանչյուր ժողովրդի ինքնուրույն պարզել իր դիրքը և վերաբերմունքը առաջարկած հարցերի նկատմամբ։ Մեր պահանջների մի կետը բավարարում է մեկ ազգին, միաժամանակ դիպչում մյուսի շահերին, վերացնելով հակասությունը, վնաս պատճառում երրորդին։ Ջորքերը կանգնած են սահմանի վրա, դա գաղտնիք չէ և մեր վիճակը չի կարելի չհամարել լուրջ»[33]։

Ջխենկելու հարցադրումներում նկատելով «հիասթափություն և հուսահատություն», Հայդարովը հայտարարեց, որ Ջխենկելին «գյուտ չի արել» և իրենք պատրաստ են պատվով կատարել իրենց վրա դրված պարտականությունը։ Բազմանշանակ էր նրա հայտարարությունը. «Մենք մնում ենք այստեղ, որպեսզի չդիմենք խզման, մենք եկել ենք այստեղ, որպեսզի Կովկասում լինի խաղաղություն»։

Բանակցություններում թուրքական վերամբարձության և սին խոստումների վերլուծությունը, հետանկարի բացակայությունը ամփոփվեց Խատիսյանի ելույթում. «Ինչպիսի բանակցություններ եմ ես վարում, երբ ես նստում եմ որպես տիկնիկ, որին հրամցնում են սուրճ, հրամցնում բարիդրացիական հարաբերությունների մասին խոսակցություններ, և որը կտրված է ամբողջ աշխարհից»։ Նշվում էր և թուրքական թելադրանքի առկայությունը. «այսօր նրանց եռանդուն բողոքից հետո ես միլիարդերորդ անգամ հասկացա, որ թուրք կառավարությունը պիտանի չէ, եթե նա կարող է իրենից դեն նետել մի ամբողջ ազգ։ Եվ արևելյան ժողովուրդների կողմնորոշումը, որը պատկերացվում էր որպես իմ ժողովրդի իդեալ,— այդ բոլորը, պարզվեց, առասպել է»։ Խատիսյանի եզրակացությունն էր. այդ պայմաններում բանակցությունները շարունակել չի կարելի, «անհրաժեշտ է դուրս գալ այդ դժոխային պայմաններից»[34]։ Խատիսյանը այն կարծիքին էր, որ եթե բանակցությունները առաջ չեն շարժվում, ապա պատճառը նրանում է, որ նախաձեռնությունը գտնվում է թուրքերի ձեռքին. «Չպետք է թույլ տրվի այնպիսի վիճակ, որ թուրքերը իրենց համար անհրաժեշտ պահին մեզ պատասխանեն վճռականորեն»[35]— զգուշացնում էր Խատիսյանը։

Չհամաձայնվելով Խատիսյանի հետ՝ Տրապիզոնից հեռանալու մասին, Խալիլ բեկ Խասմամեդովը հայտարարեց. «Մենք այնպիսի վիճակում ենք, որ պետք է շնորհակալ լինենք այն մի գավաթ սուրճի համար, որ մեզ տալիս են», «ընդհանուր լեզու պետք է գտնել ոչ թե Տրապիզոնում, այլ Կովկասում»։ Հաջինսկին ավելի վճռական էր. «Ինձ համար մի բան պարզ է, որ թուրքերի համար կարևորը մեր անկախության հրուշակումն է, միայն մեր անկախությունը կտա հնարավորություն բանակ-

ցությունների համար։ Բրեստի հաշտությունը նրանց համար անխախտելի է. հաշտություն կնքելու համար հարկավոր է անկախության հռչակումը և Կարսից, Արդահանից, Բաթումից հրաժարվելը։ Եվ ուրիշ ոչինչ»[36]։

Թիֆլիս գնալու և Սեյմին ու կառավարությանը զեկուցելու համար հաստատվեց պատվիրակություն հետևյալ կազմով. Գեորգի Լասխիշվիլի՝ մենշևիկների, ազգային դեմոկրատների և սոցիալ ֆեդերալիստների կողմից, Ռուբեն (Հովհաննես) Քաջազնունի՝ դաշնակցության կողմից, Իրրահիմ բեկ Հայդարով՝ մուսուլմանական կուսակցությունների կողմից։

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՍԵՅՄՈՒՄ։ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Պատվիրակության զեկուցումը մարտի 12 (25)-ին քննարկվեց Սեյմի նախագահության, խմբակցությունների ներկայացուցիչների և Անդրկովկասի կառավարության համատեղ նիստում։ Մանրամասն հաղորդման մեջ Քաջազնունին և Լասխիշվիլին անդրադարձան նաև Թուրքահայաստանի ինքնավարության հարցին։ Հաշտության պատվիրակության թեզիսները չընդունվեցին թուրքերի կողմից, Թուրքահայաստանի ինքնավարության հարցի քննարկումը նրանք համարում են անթույլատրելի, «իրենց ներքին գործը», հայտարարեց Քաջազնունին։ «Անկախ Անդրկովկաս թուրքերը համարում են անհրաժեշտ և ցանկալի, քանի որ իբր ստեղծվում է պատնեշ Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Սակայն զգացվում է, որ թուրքերը վստահ չեն, թե հակառուսական կողմնորոշման դեպքում Անդրկովկասը կարող է սեփական ուժերով պաշտպանել իրեն՝ հյուսիսային հարևանից։ Ահա այդ պատճառով թուրքերը չեն համաձայնվում և ցանկանում են ունենալ Կարսը և Բաթումը, որպեսզի իրադրության փոփոխության ժամանակ հեշտ լիներ պաշտպանել իրենց իրավունքները»։

Լասխիշվիլին արձանագրեց, որ թուրքերը լիազորված չէին վարել հաշտության բանակցություններ և որ Թուրքահայաստանի ինքնավարության հարցում անզիջում էին։ Եվ բանակցությունները շարունակելու համար անհրաժեշտ է, որպեսզի Սեյմը անի «որոշ զիջումներ» հատկապես Թուրքահայաստանի հարցում։ Հ. Մելիք-Ասլանովի հարցին՝ «շոշափվե՞լ է արդյոք Հայկական հարցը պատվիրակությունների ներկայացուցիչների մասնավոր խոսակցությունների ժամանակ», Լասխիշվիլին պարզաբանեց. «Երբ Ռաուֆ բեյին ներկայացրեցինք մեր տեսակետը, նա ասաց, որ «վերջին դարերի թուրքական պատմության ամբողջ ընթացքում մեծ պետությունները խեղդել են Թուրքիային այդ հարցով» և երևում էր, որ հարցադրումը նույնիսկ վիրավորական էր Թուրքիայի

համար։ Հայաստանի ինքնավարության հարցը Ա. Չխենկելին զարգացրեց և մասնավոր զրույցների ժամանակ, սակայն յուրաքանչյուր անգամ ստանում էր ձևական պատասխան՝ «դա Թուրքիայի գործն է»։

Կարծես թե ունենալով օսմանյան կառավարության մանդատը, Հ. Հայդարբեկը կտրականապես հայտարարեց, որ Թուրքիայի մտքով նույնիսկ չի անցնում ձեռք բարձրացնել Անդրկովկասի անկախության վրա, թուրքերը ցանկություն չունեն խաթարել Անդրկովկասի անկախությունը, նրանք չեն ցանկանում հետագա պատերազմ և նվաճումներ։ Հենվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա, Թուրքիան չի էլ մտածում հրաժարվել Բաթումից, Կարսից, Արդահանից, առավել ևս, որ անցյալում պոկված մարզերը վերադարձնելը առաջացրել է ժողովրդի և բանակի ոգևորությունը։ Առաջ քաշելով «Անդրկովկասի պետության անկախության հռչակման հարցը», նա ասաց, որ այդ «փաստը շահեկան է Թուրքիային և մեր բանակցությունները պետք է վարել այդ ոգով»։

Թուրքահայաստանի հարցը չպետք է դիտվի Թուրքիայի ներքին հարց, Անդրկովկասը չի պահանջում Հայաստանի բռնակցում, սակայն հոգալով ազգակից ժողովուրդների վիճակի մասին, պարտավոր է մատնանշել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը։ Այսպիսին էր Խ. Կարճիկյանի կարծիքը։ «Ո՞վ կպաշտպանի Անդրկովկասի անկախությունը, միայն Թուրքիա՞ն, թե՞ նրա դաշնակիցները։ Ո՞վ ընդհանրապես կերաշխավորի Անդրկովկասի անկախությունը։ Եթե թուրքերը հաշվի են նստում ռուսների հետագա աշխուժացման հետ, ապա մենք պետք է իմանանք. ո՞վ է երաշխավորում մեր անկախությունը։ Ի՞նչ կասի մեզ Գերմանիան»,— խորհում էր Չխեիձեն։

Լորդքիփանիձեն անհրաժեշտ էր համարում Սեյմի տված հրահանգների կիրառումը։ Պատվիրակները պետք է խոսեին Հայաստանի իրավիճակի և հետագա կառուցվածքի մասին, ինչպես և թուրքերը կարող են խոսել օսմանյան պետությանը ազգակից ժողովուրդների ինքնորոշման մասին։ Մեհտիևը մուսուլմանական խմբակցության անունից բանաձևեց. «Եթե Անդրկովկասի անկախությունը չհայտարարվի, իր խմբակցությունը կհրաժարվի հաշտության բանակցությունները պաշտպանելուց»։ Եվ, ընդհանրապես, բանակցությունները պետք է վարեն ոչ թե Սեյմի պատվիրակները, այլ անկախ կառավարությունը՝ արտակարգ լիազորություններով օժտված իր արտաքին գործերի նախարարի միջոցով։

Միացյալ ժողովը որոշեց. «Կանգնելով Սեյմի որոշումների վրա, ցանկանալով հասնել Անդրկովկասյան կառավարության և Թուրքիայի համար ընդունելի պատվավոր հաշտության, տալ հաշտության պատվիրակության նախագահին այդ ուղղությամբ ինքնուրույն քայլեր անելու արտակարգ լիազորություններ», «փոխել պատվիրակության բնույթը»[37]։

Մարտի 12-ի և 13-ի (26)-ի նիստերում բազմակողմանի քննարկվեց և Անդրկովկասի անկախության հարցը։ Վերլուծելով մոտեցումները, Ռամիշվիլին հայտարարեց, որ Անդրկովկասի անկախություն ասելով, մենք այն նկատի ունենք իրականացնել երկրամասի հին՝ նախապատերազմյան սահմաններում և անկախության մասին հռչակագիրը պետք է ընդգրկի այդ դրույթը, որպես հիմնական պայմաններից մեկը։ Սակայն, քանի որ այդ դրույթը մերժվում է թուրքական կայսրության կառավարության կողմից, «մենք կարծում ենք, որ հաշտության բանակցությունների ներկա փուլում դեռ չի հասել մեր անկախության հռչակման և մեր պետականության վերջնական ձևավորման պահը»։ Ռամիշվիլին պարզամտորեն կարծում էր, որ եթե թուրքական կայսրությունը շահագրգռված է պատնեշ ստեղծել պետությունների մեջ, եթե չի ուզում, որ Անդրկովկասը գործի հակաթուրքական կոալիցիայում, «պետք է և չի կարող ընդառաջ չգնալ Անդրկովկասի հին սահմանները վերաձևելուն և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Անդրկովկասին վերաբերող մասի վերանայմանը»։ Նա հանդես եկավ Տրոցկու և Կամենևի առաջարկած սկզբունքների դեմ, ըստ որոնց, «մենք մտել ենք սոցիալիստական հեղափոխության փուլը և պետության սահմանները նշանակություն չունեն», առաջ քաշեց անկախության հռչակման տարածքային սկզբունքը[38]։

Բուռն քննարկումից հետո Սեյմի բոլոր խմբակցությունները, բացի մուսավաթից, «մուսուլմանական բլոկից», «մուսուլմանները Ռուսաստանում» կազմակերպությունից, հանդես եկան Անդրկովկասի անհապաղ անկախության հռչակման դեմ։

Մուսուլմանական խմբակցության աջակցությունը ավելի էր ամրապնդում թուրքերի հետևողական հարցադրումները, Թուրքահայաստանի հարցը իրենց ներքին հարց համարելը, Կարսի, Արդահանի, Բաթումի նկատմամբ անզուսպ նկրտումները բացահայտ հայտնելը։ «Թուրքերին չեն բավարարում Թուրքիայում հայերի կոտորածը, ինքնավարության մերժումը. նրանք Անդրկովկասի հայերից պահանջում են վերածվել թուրքական կառավարության գործիքի, ցանկանում են օգտագործել նրանց ազդեցությունը Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակները առանց դիմադրության թուրքերին զիջելու և թուրքերի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու համար։ Թաթարներն ասում են, որ չեն ուզում կռվել թուրքերի դեմ, բայց չէին ուզի պատերազմել և հայերի հետ։ Բաթումը թուրքերին պետք է իբրև Սև ծովում ուժեղ բազա Ռուսաստանի և Բուլղարիայի դեմ, որը սպառնում է Կոստանդնուպոլսին, Կարսը անհրաժեշտ է Էրզրումի պաշտպանության համար։ Հայերի ինքնավարություն Թուրքիայում չի թույլատրվի, քանի որ Թուրքիան ռազմական պետություն է, իսկ թուրքերը կուլտուրական չեն, պատերազմի դեպքում նրանք սպառնում են ոչնչացնել Անդրկովկասի հայերին։ Իրադարձությունները Երևանի նահանգում, ասում են նրանք, թուրքերի համար միևնույնը չեն և կարող են առիթ

ի վեր համատեղ բնակվում էին Կովկասի միայն մի մասում։ Ամենուրեք՝ Անատոլիայում և Ադրբեջանում նրանք կազմում էին խիստ սահմանափակ փոքրամասնություն, թեև նրանք փորձում էին իմպերիալիստական գերիշխանություն հաստատել թուրքերի և մահմեդական այլ ցեղերի նկատմամբ, որոնք հարյուրապատիկ գերազանցում են հայերին»,— գրում էր համաթրքության գաղափարախոս Զիյա Գեոք Ալփը 1918 թ.։ Թուրքերին համարելով դեմոկրատներ և խոսելով նրանց ազգային ձգտումների մասին, նա սխալ էր համարում, «երբ կարծում են, թե դեմոկրատական և ազգայնական ձգտումները օսմանական կամ մահմեդական ժողովուրդների շրջանում հակասում են միմյանց»[41]։

Համաթրքության «դեմոկրատական» սկզբունքների մեջ մտնում էր նաև հայերի ոչնչացման ծրագիրը։

ՏԱՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՐՈՒՄ

Սեյմի կողմից հաշտության պատվիրակության նախագահին արտակարգ իրավունքներ վերապահելը, որի մասին Դեգելկորին և Ջաֆիձեն հեռագրով հայտնեցին Տրապիզոն, առաջացրեց պատվիրակության մուսուլման անդամների դժգոհությունը։ Դա դրսևորվեց պատվիրակության մարտի 14 (27)-ի նիստում՝ հեռագրի քննարկման ժամանակ։ «Մենք՝ պատվիրակության անդամներս, պատվիրակների կարգից վերածվում ենք խորհրդականների կարգի»,— հայտարարեց Հաջինսկին։ «Մենք ոչ մի իրավունք չունենք։ Այսուհետև պատվիրակությունը, որպես միասնական կոլեկտիվ ամբողջություն, կորցրել է ամեն մի նշանակություն»,— պնդեց Խասամամեդովը։ Նա ժխտեց Թիֆլիսի թերթերում եղած հաղորդագրությունները պատվիրակության մեջ միասնության բացակայության մասին, ջանաց ապացուցել, որ եղած տարաձայնությունները չպետք է «պատճառ հանդիսանային այն լիազորություններին, որ տրվեցին Ջեննկելուն»[42]։

Մարտի 17 (30)-ի նիստում նոր տարաձայնություններ առաջացան, մասնավորապես, Թուրքահայաստանի ինքնավարության հարցում։ Վերլուծելով Բրեստի պայմանագրի հրապարակված տարբերակը, Խասխյանը հայտնեց այն կարծիքը, որ Անդրկովկասյան պատվիրակությունը չի կարող հեռանալ պայմանագրի լրիվ ժխտման դիրքերից, Կարսի, Արդահանի, Բաթումի հարցում խոսքը վերաբերում է ոչ թե ինքնորոշմանը, այլ պետական տարածքի որոշակի մասը զիջելուն։ Նրա կարծիքն էր, որ զիջման դեպքում պետք է առաջնորդվել թե՛ համակովկասյան և թե՛ ազգային շահերով։ Եվ այդ երկու շահերը համընկնում են, քանզի խոսքը վերաբերում է Կարս, Արդահան, Բաթում ամրոցներին։ Եթե Թուրքիան չի հրաժարվում Կար-

տալ Անդրկովկասի խորքը շարժվելու համար, իսկ այնտեղ, որտեղով կանցնի թուրքական զինվորը, չի կարող մնալ ոչ մի հայ»,— գրում էր Ա. Խատիսյանը Տրապիզոնից Թիֆլիս՝ Մ. Պապաջանյանին։ Նամակում հայտնվում էր, որ ըստ թուրք գործիչների, հայերը «դավաճանել» են իրենց և «միայն իրենց ծառայությամբ և լավ վերաբերմունքով կարող են արժանանալ թուրքերի սիրաշահությանը», հակառակ դեպքում կործանում է սպասվում նաև Թուրքիայում կոտորածներից մազապուրծ փրկված 200 հազար հայերին։ Ըստ այդ թուրք գործիչների, որոնցից մեկը Կոստանդնուպոլսի համալսարանի պրոֆեսոր, պատվիրակության առաջին քարտուղար Իսմայիլ Համիդ բեյն էր, «Թուրքիայի համար ոչ մեծ թվով հայեր օգտակար են տնտեսական և ֆինանսական առումով, և որպես հակակշիռ հույների դեմ։ Բայց հայերի ուժեղացում Թուրքիայում իրենք թույլ չեն տա, և ոչ մի արտոնությունից նրանք չեն կարող օգտվել»։

Հայտնելով այս մասին, նամակի հեղինակը զգուշացնում էր. «Սրանից հետո մենք կարող ենք դատել ում հետ ենք կնքում պայմանագիր և ինչ կարող ենք մենք ապագայում սպասել թուրքերից, եթե մեզանում չինի ազգությունների և կուսակցությունների միասնություն, խիստ կարգապահություն և հստակ քաղաքականություն։ Բայց կարո՞ղ ենք արդյոք դրա հույսը ունենալ, երբ Սեյմը, նույնիսկ այսպիսի պահին շարունակում է վտանգավոր սոցիալական փորձարկումները և դրանով բնակչության մի մասին մղում թուրքերի գիրկը»։ Դա երևում է և «մեր պատվիրակության առանձին անդամների գործերով։ Թաթարների տրամադրությունների հետ թուրքերը հիանալի ծանոթ են և մեր պատվիրակությունն այդ հատկապես զգում է գրեթե յուրաքանչյուր հարցում, ամեն օր»[39]։ Ընդգծելով մուսուլման պատվիրակների թուրքամետ քաղաքականությունը, Խատիսյանը գրում է. «Բանակցությունների ժամանակ նույնիսկ Դաղստանի լեռնականները այնչափ թուրքական կողմնորոշում չունեն, որքան ադրբեջանցիները»։

Ուժեղացվում էր և հակահայկական քարոզչությունը։ Հիշեցնելով «Վերածնունդ» թերթի տարածած ասեկոսեները, վրացիներին ուղղված կոչը՝ «Չանձնեցեք Կարսը թուրքերին և նրանք դրա փոխարեն չեն դիպչի վրացիներին», «Էրթոբա» թերթը գրում էր. «Ճարպիկ, խորամանկ դիվանագետները ցանկանում են սառեցնել վրացիների շրջանում ինքնապաշտպանության զգացումը, որպեսզի հայերի հետ հաշվեհարդարից հետո անցնեն վրացիներին»[40]։

Այսպիսով Տրապիզոնի բանակցությունների ընթացքում հայերի դեմ ուղղված թուրքական քարոզչությունը հետապնդում էր Հայկական հարցի վերացման նպատակ։ Կոստանդնուպոլսում մշակվում էին «հայկական իմպերիալիզմի» մասին պանթուրքական դրույթները, հայկական նոր կոտորածների, որպես ազգ նրանց ոչնչացնելու պլաններ, «հիմնավորվում» էր Անատոլիայում ի սկզբանե թուրքերի, Ադրբեջանում՝ ադրբեջանցիների տիրապետող լինելու վարկածը։ «Հայերը հնուց

սից, ապա ամեն կերպ պետք է պահպանել Արդվին, Արդանուշ-Արդահան ճանապարհը, ինչպես նաև Կարսի մարզի Արևելյան՝ Հայկական մասը։ Խատիսյանը բարձրացրեց և Թուրքահայաստանի հարցը։ Հայտնելով, թե ինչպես է ուզում լուծել այդ հարցը Թուրքիան, նա ընդգծեց. մենք չենք կարող ստիպել Անդրկովկասում գտնվող 400 հազար փախստական թուրքահայերին հրաժարվել ազգային գաղափարից։ «Այդ հարցին պետք է տալ նոր ձևակերպում. դա պետք է լինի Թուրքիայում Հայաստանի տարածքային ինքնավարության, հայերի վերադարձի և ազգային մարզերում բնակեցման իրավունքի ապահովումով»։ Շեյխ-ուլ Իսլամովը անգետ ձևանալով հայտնեց. «Ի՞նչով է առաջնորդվում Թուրքիան բռնակցելով այդ մարզերը՝ ամրոցների հարցո՞վ, թե՞ այդ մարզերի ազգային կառուցվածքով»[43]։

Թուրքահայաստանի հարցը դարձավ նոր բանավեճի հարց՝ պատվիրակության մարտի 18 (31)-ի նիստում, որտեղ քննարկվում էին Սեյմի հիմնադրույթների 3-րդ և 4-րդ սահմանումները։

Թուրքահայաստանի ինքնավարության հարցի կապակցությամբ զեկուցումով հանդես եկավ Ա. Խատիսյանը։ Պնդելով այդ հարցի լուծման անհրաժեշտությունը, Խատիսյանը առաջ քաշեց տարածքային, բռնագաղթածների վերադարձի և բնակեցման, ինքնավար Թուրքահայաստանի իրավունքների հարցը։ Զեկուցողը պնդում էր, որ պատվիրակությունը պետք է ձգտի հասնել Թուրքահայաստանի ինքնավարությանը, թեկուզ տարածքի խիստ որոշակի սահմաններում. այդ տարածքները կհանդիսանային էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակը, Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջակը և Բիթլիսի սանջակի հյուսիսային մասը, Վանի վիլայեթի Վանի սանջակը՝ մինչև Բաթման-սու գետի հարավային շրջանը։ Այսպիսով, Վանա լճի շրջանը՝ Մուշի, Վանի և Ալաշկերտի երեք դաշտավայրերով, դառնում էին հայ ժողովրդի ուշադրության կենտրոն։ Այդ տարածք վերադառնալու առաջին իրավունքը տրվելու էր հայերին. այնտեղ կարող էին վերադառնալ մոտ 600 հազար հայ՝ Անդրկովկասից, Թուրքիայի փոքրասիական վիլայեթներից, Միջագետքից, Ամերիկայից և այլ վայրերից։ Կարող էին վերադառնալ և նախկինում այնտեղ բնակված այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Իր ներքին գործերը վարելու համար այդ տարածքի բնակչությունը պետք է օգտվեր ինքնակառավարման իրավունքներից՝ օժտված օրենսդիր ժողովով և ընտրովի գործադիր մարմնով, պետք է ունենար ոստիկանություն՝ տարածքում բնակվող բոլոր ազգերի ներկայացուցիչներից։ Պետք է լիներ և միջազգային երաշխիք՝ Գերմանիայի դաշնակիցների և Անդրկովկասյան պետության կողմից և հենց իր՝ Թուրքիայի կողմից։ Կատարելով լրացումներ, Հ. Քաջազնունին անհրաժեշտ էր գտնում, որպեսզի հաշտության պայմանագիրը կնքելու հետ անմիջապես սուլթանը հռչակեր Թուրքահայաստանի ինքնավարությունը՝ Թուրքիայի հովանավորության տակ, ընդունելով, որ ինքնավար Թուրքահայաստանը

սուլթանին վճարում է տարեկան հարկ, ունի իր սեփական կառավարությունը, ոստիկանությունը[44]։

Սակայն, Թուրքահայաստանի ինքնավարության հարցերի քննարկման դեմ հանդես եկած մուսուլման պատվիրակների և նրանց համախոհների կշռանժարն ավելի ծանր էր։ Լասխիշվիլին կարծում էր, որ Անդրկովկասի ներկա վիճակը և թուրքերի ու անդրկովկասցիների ուժերի հարաբերակցությունը հնարավորություն չեն տալիս վերցնել Հայկական հարցի լուծման ծանրությունը։ Այդ հարցը պետք է դրվի համաշխարհային հաշտության կոնֆերանսի առջև, իսկ առայժմ 4-րդ կետը քննարկումից պետք է հանել։ Նա, սակայն, կարծում էր, որ անդրկովկասյան պատվիրակությունը պետք է բացատրի թուրքերին, որ Թուրքահայաստանի հարցով զբաղվելը «Թուրքիայի ներքին գործերին միջամտել չէ, Անդրկովկասը չի կարող հանգիստ ապրել և ազատ զարգանալ, եթե Հայկական հարցը Թուրքիայի սահմաններում լուծում չստանա»։ Նրա կարծիքով պետք է կնքվեր հատուկ կոնվենցիա Թուրքիայի հետ՝ թուրքահայերի իրավունքների և նրանց տուն վերադառնալու մասին[45]։

Հիշեցնելով, որ թուրքերը ասել են միայն երկու խոսք, թե Թուրքահայաստանի ինքնավարության հարցի առաջ քաշելը միջամտություն է Թուրքիայի ներքին գործերին, Հաջինսկին «միամտորեն» ցանկանում էր հարցնել թուրքերին, թե ինչպե՞ս են նրանք վերաբերվում այդ հարցին՝ «կամ բացարձակապես մերժվում է ամեն մի բանակցություն այդ հարցում, կամ ցանկանում են փոխել քննարկման ձևը», այդ դեպքում Սեյմը կհրաժարվի հարցադրման իր ձևից։ Նա ցանկանում էր Տրապիզոնից կովկաս վերադառնալ «ունենալով հստակ պատկերացում՝ ինչ ձևով են ընդունում երկու կողմերը Հայկական հարցը»։ Տրտնջալով, թե այդ հարցը ըստ էության չի լուսաբանվել նույնիսկ հաշտության հանձնաժողովում, Հաջինսկին ընդհանրացրեց. և «այստեղ հնարավորություն չեն տալիս ծանոթանալ դրա հետ»[46]։

Հայկական հարցն առավել ծանրն է, այն չեն կարողացել վճռել մեծ տերությունները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան։ «Այժմ դնել այդ ծանրությունը դեռ թույլ, չհզմավորված Անդրկովկասի ուսերի վրա, դա նշանակում է ճզմել դրանով Անդրկովկասը, երկրամասը ներքաշել արկածախնդրության մեջ։ Եվ, հատկապես թուրքական պատվիրակության վերջին հայտարարություններից հետո, դա անթույլատրելի է»,— հայտարարեց Գվազավան։ Հենվելով թուրքերի վերջնագրի վրա՝ «չխոսել Հայաստանի ինքնավարության մասին, եթե ցանկանում եք հասնել բարի հարաբերությունների և հարևանության վերականգնման նպատակին», Գվազավան գտավ, որ այսպիսի հայտարարություններից հետո, մենք չենք կարող նորից դնել Հայաստանի ինքնավարության հարցը, դա կնշանակեր խզել բանակցությունները իր բոլոր հետևանքներով։ Այս հայտարարությունից հետո Գվազավան, Խատիսյանի և Քաջազնունու հարցադրումները համարելով «իրենց մաքսիմալ պահանջնե-

րի որոշակիությամբ հետու գնացող», իրադրության հետ հաշվի չնստող ցանկություն, առաջարկից ընդհանրապես հանել 4-րդ կետը, դրանում տեսնելով «միակ ելքը ստեղծված փիճակից»[47]։

Դվազավային անմիջապես արձագանքեց Խասամեդովը. այն ձևով, ինչպես շարադրված է Սեյմի պահանջը Հայկական հարցի գծով, «դա օսմանյան պետության ներքին գործերին միջամտություն է։ Եվ իրեն հարգող ամեն մի պետություն, պետք է հենց այդպես արձագանքի։ Այդ պատճառով ես համարում եմ միանգամայն բնական այն պատասխանը, որը մենք ստացել ենք օսմանյան պետության պատվիրակությունից»[48]։

Ա. Շեյխ-ուլ Իսլամովը առաջարկից առաջադրված թեղիսներից բացառել 4-րդ կետը, այն փոխարինելով այնպիսի առաջարկով, որը ընդունելի լինի Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու տեսակետից։ «Մենք Թուրքիային առաջարկում ենք այն հարը՝ Թուրքահայաստանը, որը մի քանի անգամ Եվրոպան մատուցել է «հիվանդ մարդուն» և հիվանդ մարդը, ուժի ճնշման տակ ընդունել է, բայց կուլ չի տվել և բարեպատեհ պահին վերադարձրել է հետ, նույն Եվրոպային»։ Շեյխ-ուլ Իսլամովը Հայկական հարցը քննարկումից հանելը «հիմնավորեց» հայերի շահերի պաշտպանությամբ. «եթե խզվեն բանակցությունները, ապա Թուրքիան ուժեր կուղարկի հայերի դեմ», որը «կհասցնի հայերի նոր կոտորածների»[49]։ Մուսուլմանական խմբի խորհրդական Ա. Պեպինովը նշում էր, որ չպետք է սահմանափակվել միայն Հայկական հարցի լուծումով և պետք է ասել օսմանյան պատվիրակությանը, որ ցանկանալով սահմանել բարիդրացիական հարաբերություններ, անդրկովկասյան պատվիրակությունը աշխատում է ապահովել երկրամասի սահմաններում ներկայումս գտնվող Օսմանյան կայսրության բոլոր հպատակների անարգել վերադարձ թուրքական պետության տարածք[50]։

Բուն էին մարտի 19 (ապրիլի 1)-ի և 21 (ապրիլի 3)-ի նիստերը, որոնք նվիրված էին Սեյմի առաջադրած հիմնադրույթների 3-րդ՝ սահմանների ճշման հարցին և Թուրքերի մարտի 8 (21)-ի վերջնագրի պատասխանին։ Հին՝ 1914 թ. սահմաններն արդեն համարվում էին վիճելի և խոսքը պետք է վերաբերեր կողմերի փոխադարձ զիջումներին։ Այստեղ արդեն վրացական և մուսուլմանական պատվիրակների կողմից փոխադարձ զիջումների հարց չէր դրվում, խնդիրը հայկական տարածքները Թուրքիային շռայլորեն զիջելու մասին էր։ Մարտի 19 (ապրիլի 1)-ի նիստում երեք ամրոցների՝ Կարսի, Արդահանի, Բաթումի հարցի մասին հիմնական զեկուցող՝ պատվիրակության խորհրդական Պ. Ինգորավան դրեց Բաթումի մարզը ամբողջապես Անդրկովկասին թողնելու, Արդահանի և Օլթիի օկրուգները, Կարսի և Կաղզվանի օկրուգների մի մասը Թուրքիային որպես միևիմում զիջելու հարցը։ Շեյխ-ուլ Իսլամովը բերեց «պաշտոնական տվյալներ», որոնցով «ապացուցվում էր», որ մուսուլմանները Կարսի և Կաղզվանի օկրուգներում կազմում են հարաբերական մեծամասնություն, իսկ Կարսի ամբողջ մարզում՝ բացարձակ մե-

ծամասնություն, այն դեպքում, երբ այստեղ ազգաբնակչության $^2/_3$-ը հայեր, ռուսներ, հույներ էին։ Հաջինսկին կարծում էր, որ պետք է թույլ տալ մաքսիմում զիջում, տնտեսական առումով պետք է Անդրկովկասի համար պահել Բաթումի նավահանգիստը, հրաժարվելով նրա ռազմական նշանակությունից։ Կշտամբելով պատվիրակության անդամներին, որ նրանք մտածում են միայն հարավային սահմանների ամրացման մասին և ոչ մի անգամ չեն խոսում հյուսիսային սահմանների ապահովման մասին, Հաջինսկին շեշտում էր՝ մինչդեռ Անդրկովկասին «մեծ վտանգ է սպառնում այնտեղից, քանզի Ռուսաստանի իմպերիալիստները, անկասկած, կցանկանան վերադառնալ երկրամաս»։

Նորից դնելով Անդրկովկասի անկախության անհապաղ հռչակման հարցը և նշելով, որ Թուրքերի դեմ Անդրկովկասի մուսուլմանները չեն կռվի, մուսավաթի ներկայացուցիչ Խասամեդովը կատարեց նաև Ռուսաստանին սիրաշահելու փորձ. «շատերը ուզում են Անդրկովկասի անկախության հռչակման մեր հետևողական պահանջը բացատրել Ռուսաստանի նկատմամբ իբր թե մեր անբարյացակամ վերաբերմունքով։ Դա մեծ սխալ է. Ռուսաստանում մնում են մոտ 20 միլիոն մեր եղբայր մուսուլմանները, որոնց ճակատագրով մենք հետաքրքրվում ենք և որոնք մեր ճակատագրին անտարբեր չեն»։ Եվ այսպես, նորից մուսուլմանական գործոնը։

Ձգտելով տրամաբանություն ամբողջ տարածքը հանձնելու և Բաթումի նավահանգիստը պահելու հնարավորության միջև, Քաջազնունին կարծում էր, որ պետք է զիջել Արդվինի, Արդահանի և Օլթիի օկրուգները, պահել Բաթումի, Կարսի, Կաղզվանի օկրուգները, նկատելով, որ «այդ օկրուգների բնակչությանը Թուրքիային հանձնելը կնշանակի նրանց նկատմամբ կատարել դաժան բռնություն»։

Հաջինսկու կարծիքին միացավ Խասամեդովը, նշելով, որ այդ կարծիքը ոչ թե անձնական է, այլ մուսավաթ կուսակցությանը, որին իրենք պատկանում են։ Առարկելով Վիշապելուն, որ Անդրկովկասի անկախ պետության քաղաքացիները պետք է պաշտպանեն իրենց սահմանները, մի բան, որից մուսուլման պատվիրակները հրաժարվում են, Խասամեդովը նորից առաջ քաշեց Անդրկովկասի անկախության հռչակման հարցը։ Սահմանների պաշտպանությունը «միանգամայն ճիշտ է, երբ այդ պետությունը իրոք անկախ է և ունի որոշակի սահմանադրություն։ Անդրկովկասը ոչ միայն չունի սահմանադրություն, այլև չի հռչակել իր անկախությունը։ Դուք բոլորդ գիտեք, որ մուսուլմաններն ամբողջ ժամանակ պնդել են այդ անկախությունը և նրանց մեղքը չէ, որ այդ ցանկությունը չի իրականացել»։ Խասամեդովը միանշանակ հայտարարեց. «Թուրքիայի հետ պատերազմին մուսուլմանները չեն մասնակցի և եթե հայ և վրացի ժողովուրդները զգում են ուժ և ունեն հնարավորություն, թող այն սկսեն իրենց սեփական պատասխանատվությամբ»։

Մուսուլման պատվիրակների գործունեությունը խափանելը բնորոշեց որպես մուսավաթ կուսակցության հրաժարում ընդհանուր Անդրկովկասյան գործերին օգնելուց. «Ինչպես նրանք որոշակի հայտարարեցին, ուժով չեն պաշտպանելու մեր պահանջները, և լավագույն ելքը նրանք տեսնում էն վիճելի մարզերը օսմանյան կառավարությանը հանձնելու մեջ։ Խոր վշտով մենք արձանագրում ենք, որ մենք գուցե չհասնենք մեր նպատակին, ոչ թե նրա համար, որ թուրքերը շատ ուժեղ են, այլ այն պատճառով, որ մեր սեփական միջավայրում մենք չգտանք սպասված սատարումը։ Մեր անհաջողության պատճառը մեր ներքին թուլությունն է։ Այսօր մեզ ասացին, որ մեր դիմադրողականությունը հասցվել է զրոյի, և եթե դա այդպես է, մեր վիճակը թշվառ է և մեզ, բացի կապիտուլյացիայից, ոչինչ չի մնում անել»։ Եվ ապա. «Եթե ճիշտ են Գ. Մ. Լասխիշվիլին, Հ. Բ. Հայկարովը և Հ. Քաջազնունին, որոնք հաղորդեցին մեզ Սեյմի կամքը՝ բանակցությունների ժամանակ պայքարել յուրաքանչյուր թիզ հողի համար, ապա ինչի հիման վրա է Մ. Գ. Հաջինսկին առաջարկում թուրքերին զիջել ամեն ինչ, այնպես, որ մեզ ոչ մի արշին չմնա վիճելի մարզերում»[51]։

Ամփոփելով մարտի 19 (ապրիլի 1)-ի նիստի արդյունքները, Չխենկելին հայտնեց այն միքը, որ Տրապիզոնում, այն գահլիճում, որտեղ կայանում է հանձնաժողովի նիստը, վճռվում է Անդրկովկասի ճակատագիրը։ Թուրքիայի հետ պատերազմը խաղատախտակի վրա է դնում Անդրկովկասի գոյության և միասնության հարցը։ Թուրքիան այսօր կարող է կանգնել Օլթիի թուրքերի և ալարների ինքնորոշման վրա, որոնք վրացիներ են, սակայն հետամնացության և պատերազմական սարսափների հետևանքով նրանց մեջ կարող են լինել թուրքական կողմնորոշման միտումներ։ «Ես վճռականապես կապստամբեմ նման ինքնորոշման դեմ, ես, որպես դեմոկրատ, պետք է նրանց փրկեմ այդ կողմնորոշումից, քանզի ընկնել թուրքական տիրապետության տակ, դա մասսաների համար նշանակում է կորցնել ինչպես քաղաքացիական, այնպես էլ քաղաքական ազատությունները»,— հայտարարեց Չխենկելին, թեթև ձեռքով առաջարկելով Թուրքիային հանձնել Կարսի և Կաղզվանի հայկական օկրուգները։ Անկախ Անդրկովկասի հռչակման հարցը, ինչպես Հաջինսկին և Շեյխ-ուլ Իսլամովը, Չխենկելին համարում էր առաջնահերթ հարց և այդ հարցում նա սպասում էր Թուրքիայի «ամենաեռանդուն և բարոյական աջակցությունը»։ Թուրքերի հետ համաձայնության գալու հնարավորությունը նա տեսնում էր անկախ Անդրկովկասի ստեղծման մեջ, «որում թուրքերը շատ շահագրգռված են։ Այդ մասին բազմիցս ինձ ասել է օսմանյան պատվիրակության ղեկավար Ռաուֆ բեյը։ Դա շատ ցանկալի է Թուրքիային։ Անդրկովկասի այդ անկախությունը թուրքերին երաշխավորում է հյուսիսի վտանգից»[52],— հայտարարեց Չխենկելին։

Մարտի 21 (ապրիլի 3)-ի նիստում Ա. Չխենկելին ներկայացրեց իր առաջարկները Թուրքիային զիջումների հարցում. հանձնել 1) ամբողջ

Օլթիի օկրուգը, 2) Արդահանի օկրուգի մեծ մասը, 3) Կարսի օկրուգը՝ Բեգլի Ահմեդի գծով ցած, 4) Կաղզվանի օկրուգը, առանց Կաղզվան քաղաքի և նրա հյուսիսային մասի։ 4-րդ կետի՝ Թուրքահայաստանի մասին հիմնադրույթների կապակցությամբ պետք է տալ բացատրություն, կարծում էր Չխենկելին, այն է՝ պատվիրակության բարձրացրած հարցը ամենևին չի նշանակում միջամտություն Թուրքիայի ներքին գործերին։ Սակայն քանի որ թուրքերը այդպես են հասկանում, պետք է գտնել այն տարբերակը, որը «մենք նրանց հետ համաձայնեցրած կարող ենք դնել քննարկման»[53]։

Տարածքային զիջումների վերաբերյալ ներկայացված նախագծի դեմ առաջինը վճռականապես հանդես եկավ Հ. Քաջազնունին։ Նա հիմնավորած պնդում էր, որ Կարսի և Կաղզվանի օկրուգների ազգաբնակչության մեծամասնությունը կազմող հայերը, ռուսները, հույները չեն ցանկանում միավորվել Թուրքիայի հետ, մինչդեռ պատվիրակության ղեկավարը Թուրքիային չհանձնելով Արդվինի օկրուգը, առաջին հերթին հանձնում է Կարսի, Կաղզվանի օկրուգների մասերը, բրիստոնյա բնակչությանը դնում անելանելի վիճակի մեջ։ «Նրանք պետք է կամ ապրեն նրանց հետ, ում հետ չեն ուզում և չեն կարող ապրել, կամ էլ դուրս գան հայրենիքի տարածքից, թողնեն տնտեսությունը և շարժվեն ինչ-որ տեղ»։ Քաջազնունին կարծում էր, որ այդպես վարվելով, պատվիրակությունը հրաժարվում է իր իսկ հռչակած դեմոկրատական սկզբունքներից, թույլ է տալիս խոշոր սխալ։ Դիմելով Չխենկելուն և նրա համախոհներին, նա ասաց. Վրաստանի համար «դուք ցանկանում եք պահպանել պաշտպանության մեկ գոտի ևս. ցանկանում եք Բաթումի օկրուգի թիկունքում ունենալ նաև Արդվինի, Ախալցխայի և Ախալքալաքի գավառները, թիկունքում՝ Արդահանը։ Մինչդեռ, հանձնելով Կարսի և Կաղզվանի օկրուգների մի մասը, ոչ միայն առաջ եք շարժում թուրքական սահմանները դեպի հայկական մարզերի դռները, այլև կտրում եք այդ մարզերից աշխարհագրական, տնտեսական, ազգագրական անբաժանելի մասերը»[54]։

Մի կողմից հայտնելով անհամաձայնություն Չխենկելու թեզիսներին, և մյուս կողմից կշտամբելով պատվիրակության անդամներին, որոնք չէին խոսում զիջվող մարզերում «հսկայական մեծամասնություն կազմող մուսուլմանների շահերի մասին», Պեպինովը ծանուցեց, որ Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի կազմից դուրս մնացած Բաթումի և Կարսի մարզերի մուսուլմանական միավորները «մտածում են կազմել Անդրկովկասում առանձին չորրորդ միավոր, քանզի նրանց միջև տնտեսական, կրոնա-կենցաղային, ռասսայական կապերը շատ ուժեղ են և էական»։ Թուրքերի զբաղեցրած տարածքում պետք է ստեղծվի առանձին ինքնավարություն Թուրքիայի հովանավորությամբ, որի հնարավորությունը թույլ է տրվում Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։ Թուրքիայի հովանավորության ներքո Պեպինովը ցանկանում էր տեսնել և ամբողջ Անդրկովկասը՝ որպես ինքնավար միավոր[55]։

Ինչպես միշտ, միատեսակ կարծիք ունեին Հաջինսկին և Խասամեդովը: Բավարարված Չխենկելու առաջարկություններով, նրանք խորհուրդ էին տալիս վերջինիս գործել ինքնուրույն, առանց քվեարկության, քանզի «կարծիքները հիմնովին հակասական են»[56]:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

Մարտի 23 (ապրիլի 5)-ի առավոտյան նիստում Չխենկելին, հենվելով Ռաուֆ բեյի պնդման վրա, նորից դրեց Անդրկովկասի անկախության հարցը: Եթե Անդրկովկասը չհայտարարի իր անկախությունը, Թուրքիան նրան կհամարի ռուսական գավառ, որը չի ենթարկվում հաշտության պայմաններին, իսկ հաշտության բանակցությունների վերսկսման պահին անկախության հռչակումը «թուրքերի վրա կթողներ լավ տպավորություն»: Այդ առաջարկությունն առաջինը պաշտպանեց Շեյխ-ուլ Իսլամովը. «Ռուսաստանի հետ կապը այսուհետև պետք է լինի զուտ երևութական»,— հայտարարեց նա[57]:

Մարտի 23-ի երեկոյան նիստում Չխենկելին հրապարակեց Ռաուֆ բեյի վերջնագիրը՝ 48 ժամում պատասխան տալ մարտի 8 (21)-ի թուրքական հուշագրի կապակցությամբ: Դրանից երևում էր, որ թուրքական կողմին չէր բավարարում Անդրկովկասյան հաշտության պատվիրակության պատասխանը Կարսի մարզը՝ Կարսի ամրոցով, Կաղզվանի և Կարսի օկրուգների մի մասով, Արդվինի օկրուգը (առանց Արդվինի տեղամասի) զիջելու մասին: Բուռն քննարկումից հետո հարցի վերջնական լուծումը թողնվեց Սեյմին[58]:

Թուրքական հուշագրի պատասխանը մշակվեց անդրկովկասյան պատվիրակության մարտի 26 և 28 (ապրիլի 9 և 11)-ի նիստերում[59]: Պատվիրակության մուսուլման անդամները մնացին հավատարիմ իրենց ուխտին: Հաջինսկին նորից պնդեց թուրքերին առավելագույն զիջման իր առաջարկությունը: «Այսօր, ինչպես և երեկ, ես ընդգծում եմ, որ եթե մեր նախագահի առաջարկած մաքսիմումը, որը քիչ է, քան իմ ասածը, թուրքերին չբավարարի, իսկ մյուս կողմից Անդրկովկասը չի մտածում կռվել, ապա գերադասելի է կանգնել Բրեստ-Լիտովսկի տեսակետի վրա և որքան շուտ, այնքան լավ»: Այդ դեպքում, ըստ Հաջինսկու, «կստեղծվի մի վիճակ, երբ մենք ինքներս ենք ընդունում պայմանագիրը և հրաժարվում վիճելի մարզերից: Այլ վիճակ կլինի, երբ թուրքերը այդ մարզերը վերցնեն զինքի ուժով: Երկրորդ դեպքում Բրեստի պայմանագրի մասին խոսք լինել չի կարող, քանի որ թուրքերը վիճելի մարզերի նկատմամբ կունենան կրկնակի իրավունք՝ միջազգային իրավունքի համաձայն և նվաճման իմաստով: Վերջին իրավունքը չափազանց ծանրակշիռ է»:

Անդրկովկասի պատվիրակության մուսուլման անդամների թուրքամետ կողմնորոշումը դառնում էր ավելի ու ավելի բացահայտ: Թուրքական զորքերի առաջխաղացումը և վիճելի մարզերի նվաճումը խասամեդովը դիտում էր (և այդպես պահանջում մյուսներից), ոչ թե որպես նվաճում, այլ որպես թուրքական «իրավունքների վերականգնում»: Ռուսաստանը կատարել է իր պարտավորությունը և այդ մարզերը ազատել է իր զորքերից, նրանց փոխարինած կովկասյան ազգերի զորամասերը թուրքերը համարում են ավազակախմբեր: Անդրկովկասը Ռուսաստանի մաս է և «այժմ Թուրքիան Կարսի և Բաթումի մարզերը խլում է ավազակախմբերից»: Հետևաբար, հետագա բարդությունների ելքը անկախության հռչակումն է և Բրեստի պայմանների ճանաչումը[60]:

Այդ միտքը խասամեդովը զարգացրեց և մարտի 28 (ապրիլի 11)-ի նիստում: Թուրքական վերջնագրում կա երկու միտք, նշեց նա, առաջին՝ որ մենք, որպես Ռուսաստանի մի մասը, մեզ համար պարտադիր ենք համարում Բրեստի պայմանագիրը, ապա, որպես Ռուսաստանի մաս, չենք կարող միջամտել այդ մարզերի գործերին, և որպեսզի այդ իրավունքը ունենանք, առաջին հերթին մեզ պետք է ճանաչեն որպես անկախ պետություն: «Ես կցանկանայի, որպեսզի մենք լավ ըմբռնենք թուրքական պահանջների էությունը և դրանց համապատասխան կարողանանք ընդունել որոշում»,— ասաց խասամեդովը՝ պատվիրակությանը նորից տանելով դեպի անկախության գաղափարի ոլորտը:

Մարտի 31 (ապրիլի 13)-ին Ռաուֆ բեյը կրկնելով վերջնագիրը, նորից դրեց Անդրկովկասի անկախության առաջնայնության հարցը, այս անգամ արդեն Թուրքիայի դաշնակիցներին բանակցություններին մասնակից դարձնելու պատրվակով: Հաստատվում էր Թուրքիայում Ամստրո-Հունգարիայի դեսպանի տեղեկությունը արտաքին գործերի նախարար Բուրիանին, որ Թալեաթ փաշան Տրապիզոնում տարվող բանակցությունները դիտում էր որպես ավելի զուտ լրատվական բնույթի բանակցություններ: «Նախ և առաջ պետք է ճշտել, թե ինչպիսի դրական ազդեցության գործոններ է ներկայացնում Անդրկովկասի հանրապետությունը»[61],— ասել է Թալեաթը Պալավիչինիին:

Մարտի 31 (ապրիլի 13)-ին կայացած Անդրկովկասյան Սեյմի նիստում Սեյմում ներկայացված բոլոր կուսակցությունները, բացի մուսավաթից և մուսուլմանական բլոկից, վճռականորեն հանդես եկան թուրքական ներխուժումից երկրամասի պաշտպանության հայտարարությամբ:

Երկրամասի ժողովուրդների համար այդ օրհասական պահին, երբ թուրքական ներխուժումը Կովկաս արդեն փաստ էր և ոչ միայն վտանգ, Սեյմում ունեցած ելույթում մուսավաթի ներկայացուցիչ Ռուստամբեկովը Անդրկովկասի ժողովուրդների հակաթուրքական միավորման և հայրենի հողի պաշտպանության գաղափարը համարեց պատրանք: Նա ընդգծեց, որ մուսավաթը, մուսուլմանական դաշնակցությունները թուրքերի դեմ ակտիվ հանդես գալ չեն կարող «կրոնական մոտիվներով»: «Մենք տեսնում ենք, որ մուսուլմանական դաշնակցությունների ղեկավարող բնազ-

ղը նրանց կհուշի ում կողմում լինել և որտեղ են նրանց շահերը»։ Եվ ապա. «Մուսավաթը իրատես քաղաքականության կուսակցություն է և այն ամենը, ինչ որ նա կարող է տալ՝ տալիս է»։

Կևդծիքը և փարիսեցիությունը տակա են նաև մուսավաթի, Ռուսաստանի մուսուլմանների (իթթիհադ) և անկուսակցականների խմբի անունից ներկայացված բանաձևում։ Ահա նրանց երկիմաստ բանաձևը. «Մուսավաթ կուսակցությունը կանի ամեն ինչ՝ պատերազմը բարեհաջող ավարտելու համար»։ Նկատի ունենալով երիտթուրք-մուսավաթական ընդհանրությունը, մենշևիկ Ի. Ծերեթելին հայտարարեց. «Թուրքիան իր բոլոր հույսերը կապում է մեր ներքին տարաձայնությունների հետ»։ Սոցիալիստ-ինտերնացիոնալիստ Ջուղելին նշեց. հայտարարելով «չեզոքություն» ու լվանալով ձեռքերը, մուսավաթը դրանք լվանում է մեր արյամբ, նրանք օգնում են թուրքական իմպերիալիզմին, թուրքական ներխուժմանը։ Չեզոքությունը այսօր չի կարելի դիտել այլ կերպ, քան ֆշնամու ակտիվ պաշտպանություն։ Եվ եթե մուսավաթի ներկայացուցիչը երկմտորեն ասում է՝ «կձեռնարկենք միջոցներ պատերազմը բարեհաջող ավարտելու համար», չի ասում՝ ում օգտին, դրանով մուսավաթը ցույց է տալիս իր դեմքը։ Մուսավաթի և մուսուլմանական մյուս կազմակերպությունների վարքագիծը և թուրքական կողմնորոշումը նա բնորոշեց որպես «հարված թիկունքից»։

Ավելի դիպուկ արտահայտվեց դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչ Մ. Չարուխյանը. «Երբ խոսքը վերաբերում է թուրքերին, մենք գիտենք՝ ում հետ գործ ունենք։ Մենք նրանց ճանաչել ենք մեր արյունաներկ պատմությամբ։ Մենք գիտենք թուրքական բարբարոսությունը, որի հետևանքով Թուրքիան ողողվել է իր կողմից ճնշված ժողովուրդների արյամբ։ Մենք գործ ունենք թուրքական կայսրության հետ, որի ամբողջ պատմությունը ծածկված է կանանց, երեխաների և ծերունիների արյամբ։ Մենք գործ ունենք Թուրքիայի հետ, որի տարածքի յուրաքանչյուր թիզը արյունաներկ է և ոչ թե այդ պետության դեմ կռված զորքերի արյունով, այլ խաղաղ ժողովուրդների, որոնք ձգտել են անկախության, ցանկացել են ազատություն։ Եվ այդ պատճառով ես գիտեմ, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Թուրքիայի համար չի նշանակում երեք «սանջակներ», նրանք կգնան ավելի հեռու, կգնան Կոստանդնուպոլիս՝ Բոլշևիկների հետ միավորելու իրենց փայփայած ծրագրով։ Եվ հոգ չէ, որ նրանց ճանապարհին կան ուրիշ ժողովուրդներ, նրանց կարելի է ջնջել, իսկ որ Թուրքիան ջնջելու և ոչնչացնելու վարպետներ են, բոլորին վաղուց հայտնի է և կասկած չի հարուցում»։

Նկատի ունենալով ստեղծված իրավիճակը, Ն. Ժորդանիայի առաջարկությամբ Սեյմը որոշեց անդրկովկասյան պատվիրակությանը հետ կանչել Բաքու։ Ընտրվեց հուշակ՝ մարքին արտակարգ լիազորություններով՝ երկրամասի պաշտպանության գործը կազմակերպելու համար։ Հուշակի մեջ մտան Ե. Գեգեչկորին, Ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին, Ֆինանսների նախարար Ս. Կարմիկյանը[63]։

Սեյմի որոշումը ստացավ երկրամասի հասարակական կարծիքի պաշտպանությունը. «Թուրքերը իրենց բոլոր կրոնակիցներին կոչ են անում սրբազան պատերազմի կովկասյան քրիստոնյաների դեմ, բոլոր մուսուլմանների շրջանում տարվում է մարդատյաց քարոզ՝ զինված համախմբվել բոլոր ոչ մուսուլմանների, բոլոր «գյավուրների» դեմ։ Եվ այդպիսով, մի կողմից Ռաուֆ բեյը զրուցում է մեր պատվիրակների հետ, մյուս կողմից՝ Վեհիբ փաշան մեր դեմ ուղարկում է իր զորքերը»,— գրում էր վրացական սոցիալիստների «էրթոբա» թերթը։ «Մենք ձգտում ենք կնքել խաղաղություն, իսկ թշնամիները ճոճում են զենքը։ Մենք իբրև հարևանի ձեռք մեկնեցինք Թուրքիային, իսկ նա մեր դեմ ոտքի հանեց մեզանում ապրող իր կրոնակիցներին, կիրառելով անմեղ մարդկանց արյան ծովում լողացնելու իր քաղաքականությունը»։ Կոչ անելով «Բոլորս ոտքի Թուրքերի դեմ», թերթը 1918 թ. ապրիլի 2-ին գրում էր. «մեզ վրա է հարձակվում անողոք Թուրքիան՝ կուլտուրայի, լուսավորության թշնամին, կովկասյան ժողովուրդների դարավոր թշնամին, իր բարբարոսությամբ և դաժանությամբ հայտնի թշնամին և նրա դեմ մղվող ազատագրական պատերազմում պետք է համախմբվեն բոլոր ուժերը», քանի որ «փաշաները գիտեն միայն մեկ միջազգային լեզու, գնդակների սուլոց, թնդանոթների որոտ, մեր օջախների, մեր ընտանիքների ոչնչացում, արյունահեղություն»[63]։

Պատվիրակության անդամներին Տրապիզոնից հետ կանչելու մասին Սեյմի որոշումը պատվիրակության մուսուլման անդամների մեջ առաջ բերեց դժգոհություն։ Ապրիլի 1 (14)-ի նիստում Սեյմի որոշումը Հաջինսկին բնորոշեց որպես «սկանդալ, որին հավասարը չկա միջազգային հարաբերությունների համաշխարհային պատմության մեջ»։ Այդ որոշման մեջ տեսնելով անվստահություն պատվիրակության անդամների նկատմամբ, նա առաջարկեց պատվիրակության անդամների հրաժարականը, որպես առաջին ելք ստեղծված վիճակից։

Երկրորդ ելքը, ըստ Հաջինսկու, կառավարության անդամների հրաժարականն էր, երրորդը՝ Սեյմի անդամների հրաժարականը։ Չհամաձայնվելով Թիֆլիս գնալու հետ, նա ընդգծված ասաց. «Անձամբ ես կասեմ, որ իմ կուսակցությունից մանդատ ունեմ գնալ Կոստանդնուպոլիս՝ հաշտություն կնքելու վերջին փորձն անելու»։

«Մահմեդ Հասանի մտքերին ես ոչ մի դեպքում համաձայն չեմ»,— հայտարարեց Խատիսյանը։ «Այն, ինչ պատահեց, դրանում կառավարությունը մեղք չունի։ Կառավարությունն իմ միջոցով ժամանակին հայտնել է, որ Բաքումը ոչ մի դեպքում չի կարելի հանձնել»,— հայտարարեց Տրապիզոն նոր ժամանած ժողովրդական լուսավորության նախարար Ուսուբեկովը։ Նա ավելացրեց. «Ես ոչ Սեյմի, ոչ կառավարության կողմից գործուղված չեմ և հատուկ լիազորություններ չունեմ, այդ պատճառով պաշտոնական հաղորդում չեմ արել»[64]։ Դա պատասխան էր Խատիսյանի հարցադրմանը, թե «Ուսուբեկովի կողմից պաշտոնական հաղորդում չի եղել»։ Այդ հայտարարությամբ Ուսուբեկովը կեղծում էր

իրողություններ։ Գնդիչկորու թիվ 43/143 հեռագրում Տրապիզոն՝ Չխենկելուն, ասված էր. «Հաղորդում եմ, որ այսօր Տրապիզոն են գալիս լուսավորության նախարար Ուսուբեկովը և Սեյմի քարտուղար Կանտեմիրո՛վը»[65]։

Բանակցություններն ընդհատվեցին։ Անդրկովկասի կառավարության կանչով պատվիրակությունը Տրապիզոնից վերադարձավ Թիֆլիս։

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՐՊՈՒՍԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Հայկական հողերի և հայ ժողովրդի պաշտպանությունը պահանջում էր ուժերի նոր մոբիլիզացում և տեղաբաշխում։ Դեռևս փետրվարի 25-ին Հայկական կորպուսի շտաբը Թիֆլիսից տեղափոխվել էր Ալեքսանդրապոլ։ Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարի մարտի 1-ի հրամանով Հայկական կորպուսը վերածվել էր Հայկական առանձին կորպուսի։ Բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Ելգենի Վիշինսկին նշանակվել էր կորպուսի շտաբի պետ։ Մարտի 3-ին գեներալ Նազարբեկյանը գեներալ Օդիշելիձեից Սարիղամիշում ընդունել էր ճակատի հրամանատարությունը։ Մինչ այդ, ընկել էր Էրզրումը, որի պատճառը պաշտպանության կազմակերպման գործում տիրող քաոսն էր։ Ինքնուրույն էին գործում քաղաքների միության լիազոր Տիգրան Աղամալյանը, որը տնօրինում էր ամբողջ ռազմամթերքի բաշխումը, Մոսկվայի հայկական կոմիտեի լիազոր Լևոնյանը, որն ուներ սեփական ջոկատ, Հայաստանի ապահովության խորհրդի և արևմտահայ ազգային խորհրդի տեղական մարմինները, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Օդիշելիձեի շտաբը, Թորգոմի վաշտը, Մուրադի շտաբը, Քղիի գունդը, Բաբերդի գունդը, կազմավորվող հայկական դիվիզիայի գնդապետ Բեժան-Բեկի հրամանատարությամբ գործող 1-ին և 3-րդ գնդերը, գնդապետ Մորելի ջոկատը։ Նկատի ունենալով ստեղծված վիճակը, Անդրանիկը, որը պաշտպանության ընդհանուր հրամանատարն էր, գրում է Թիֆլիս՝ Ապահովության խորհրդի նախագահ Վահան Փափազյանին. «Քաոս, բառիս իմաստին բոլոր երկայնությամբ, բոլոր լայնությամբ, Օդիշելիձեն կհրամայե, Ազգային խորհուրդը կհրամայե, քաղաքներու միության լիազոր Աղամալյանը՝ կհրամայե, դաշնակցության ներկայացուցիչը՝ կհրամայե։ Մեկ մը չկա, որպեսզի ես ալ անոր հրամայեմ»[66]։

Փորձում էր հրամայել և Վեհիբ փաշան։ Անդրանիկին և Էրզրումի ղեկավարությանը 1918 թ. փետրվարի 25-ին գրած նամակում Վեհիբ փաշան հոխորտում էր. «Օսմանյան հաղթական զորքերը շարժման մեջ են՝ գրավելու համար հայրենի հողերը։ Ըստ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, ռուսները մեզ թողել են Բաթումը, Կարսը, Արդահանը, Օլթին և Արդվինը։ Ուրեմն և կառաջարկեմ, որ այս պայմաններն ընդունեք։ Այլապես խստորեն կպատժվեք օրենքի համաձայն։ Արդեն մեր զորքերը նետվում են դեպի Կարս»։ Թուրքական 3րրորդ բանակի հրամանատարին Հայաստանի երկրապահ զորախմբի հրամանատար Անդրանիկը պատասխանեց. «Եթե Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը ձեզ Կարսն ու Բաթումը հանձնեց, մեզ էլ տվեց ամեն տեսակ ռազմամթերք՝ պաշտպանելու համար Կարսը, Էրզրումը, Վանը, Բիթլիսը և մնացյալ չորս վիլայեթները, որոնք դեռ գտնվում են թուրքական բռնակալության տակ։ Ռուսական կառավարությունը մեզ զենք տվեց և մենք այդ զենքով եկել ենք այստեղ։ Ես քեզ պես փաշաներ տեսել եմ, քեզ էլ կտեսնեմ»[67]։

Սակայն միասնության բացակայությունը խանգարեց կազմակերպել քաղաքի պաշտպանությունը։ Բնակչության ապահով հեռանալը իրականացնում էին գնդապետ Մորելի ջոկատը, Մուրադի, Սեպուհի, Թորգոմի հեծյալները։ Չնայած զինվորների ջանքերին և հրոսակների դեմ մի քանի մարտերին, դեպի Սարիղամիշ և Կարս շարժվող գաղթականների մի մասը ճանապարհին զոհվեց մահմեդականների դարանակալ հարձակումներից։

Ինչպես մարտի 3-ին հայտնում էր Կարսի մարզի կոմիսար Զամոյանը Անդրկովկասյան Սեյմին՝ «Թուրքերի և քրդերի շարժումը Կարսի մարզում կրում է խոշոր ու կազմակերպված ռազմական գործողությունների բնույթ։ Մուսուլմանների ջոկատը շրջապատել է Մերդենեկը և Արդահանը, գնում են մարտեր Կարս, Արդահան, Օլթի հեռախոսագիծը կտրված է։ Նախապատրաստվում է հարձակում Կարսի վրա։ Խնդրում եմ լուրջ ուշադրություն դարձնել Անդրկովկասի բանալու՝ Կարսի ամրոցի պահպանման վրա»։ Գեներալ Նազարբեկյանը գրում էր. «Պայքարի ամբողջ ծանրությունը ընկնում էր միայն հայերի վրա։ Վրացիները զբաղված էին բացառապես Բաթումի հարցով, իսկ ադրբեջանցիները ամեն ինչով թուրքերի կողմն էին»[68]։ Իրենց «մաքրագործումն» էին կատարում տեղական մահմեդականները, որոնք հարձակվեցին Ջոլափլու, Բաշգյուղ, Արմթլու և այլ հայկական գյուղերի վրա։ Թուրքական էմիսարների քարոզչության պատճառով վիճակը անհանգիստ էր թիկունքում։ «Ստեղծվել էին մուսուլմանական հրոսակախմբեր ու չոկատներ, որոնք հարձակվում էին հայերի ու հույների բնակավայրերի վրա, գործադրում բռնություն, թալան։ Առանձին հրոսակախմբեր ղեկավարում էին թուրքական սպաներ։ Գործելով մեր թիկունքում, թուրքերը նախապատրաստում էին իրենց նոր հարձակումը։ Զորքերի մի մասը ստիպված էր այդ բնակավայրերը պաշտպանել»։ Մյուս կողմից, ինչպես գրում է գեներալ Նազարբեկյանը, «ամբողջ Սարիղամիշը և երկաթգծի շուրջը լեցուն էր կիսամերկ, ցրտաշունչ ձմռան պայմաններում կծկված գաղթականներով։ Նրանք գլխավորապես կանայք էին, երեխաներ, ծերուներ։ Ջենք վերցնելու ընդունակները գտնվում էին ճակատում։ Գաղթականներով ոչ մեկը չէր հետաքրքրվում, նրանց մասին ոչ մեկը չէր հոգում։ Մեծ ցավ էր այդ բոլորը տեսնել և զգալ քո անճարակությունը՝ օգնություն ցույց տալու հարցում։ Վագոններ չկային»[69]։

Ծանր պայմաններում կազմավորվում էր հայկական ազգային բանակը: Հայկական բանակ կազմավորելու և թշնամուն դիմակայելու համար իրենց լուման ներդրեցին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը, Արևմտահայերի Ազգային խորհուրդը և նրա ստեղծած Ապահովության մարմինը, դեկտեմբերի սկզբին ստեղծված Երևանի Ազգային խորհուրդը, որը դեկտեմբերի վերջերին գլխավորում էր Թիֆլիսից եկած Արամ Մանուկյանը: Խորհուրդը իր վրա վերցրեց պետական գործունեությունն ամբողջ նահանգում: Ստեղծվեցին ներքին, զինվորական, ֆինանսական, խնամատարության, ինքնապաշտպանության, ռազմական գույքի հաշվառման և պահպանման բաժիններ: Շուտով Արամ Մանուկյանը ստանձնեց դիկտատորի պարտականություններ՝ Երևանի նահանգում ամբողջ վարչական գործը կենտրոնացնելով իր ձեռքում: Բանակի կազմավորման համար Ազգային խորհրդին առընթեր ստեղծվեց հատուկ կոմիտե, որի մեջ մտան Ազգային խորհրդի, հայ զինվորական միության, ազգային կուսակցությունների ներկայացուցիչներ: Հայկական զորամասեր կազմակերպելու համար Երևան եկան գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, գնդապետներ Ջալինյանը, Դանիել-Բեկ Փիրումյանը, Նիկոլայ Ղորղանյանը, կորպուսի կոմիսար Դրոն: Կորպուսի և նրա մեջ մտնող արևմտահայերից բաղկացած երկրապահ դիվիզիայի կազմակերպմանը մեծապես նպաստում էին գեներալ Լեբեդինսկին, գնդապետ Զինկևիչը և այլ ռուս հրամանատարներ: Անդրանիկին շնորհվեց զորավարի գեներալի կոչում: Երևանի նահանգում հայտարարվեց մինչև 32 տարեկան տղամարդկանց զորահավաք:

Փետրվարի վերջերին, մարտի սկզբներին Երևանյան զորաջոկատի մեջ մտնում էին էջմիածնում գտնվող 6-րդ հայկական գունդը՝ գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ, Երևանում տեղակայված գնդապետ Պերեկրեստովի հրամանատարությամբ հետևակային պարտիզանական գունդը, փոխգնդապետ Կորոլկովի հեծյալ պարտիզանական գունդը, Քանաքեռում գտնվող 2-րդ հայկական հեծյալ գունդը՝ գնդապետ Ջալինյանի հրամանատարությամբ, գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակը: Վանից նահանջելուց հետո Երևան եկավ գնդապետ Փիրումյանի 5-րդ հայկական գունդը, Ղուրդուղուլիում (Արմավիր) էր գտնվում երկրորդ գնդի երկրորդ գումարտակը, որի հրամանատարը գնդապետ Սամարցյանն էր: Թիֆլիսից Ալեքսանդրապոլ եկավ նոր կազմավորված Առանձին ջոկատի Զեյթունյան հեծյալ գունդը, թուրքահայերից բաղկացած երկու հեծյալ գունդ, Վանի առաջին գունդը՝ գնդապետ Յուզբաշյանի և Վանի երկրորդ գունդը՝ գնդապետ Չախմախչյանի հրամանատարությամբ: Նրանք մտնում էին գնդապետ Բաղդասարյանի ղեկավարած բրիգադի մեջ: Երևանյան ջոկատի մեջ մտնում էին նաև երկու դաշտային կայան, կապի զորամասը, երեք ինքնաթիռ և գնդապետ Արարատյանի հրամանատարությամբ հրետանային բրիգադը: Երևանյան ջոկատի հրամանատարը գեներալ Մովսես Սիլիկյանն էր[70]:

Գեներալ-մայոր Տեր-Հակոբյանի գլխավորությամբ ստեղծվել էր Հայկական առաջին դիվիզիան, որի կազմի մեջ մտնում էին Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատարի՝ 1918 թ. հունվարի 10-ի հրամանով Շուլավերում կազմավորված Լոռվա տեղացիների գունդը, Շուշիում կազմավորված Շուշվա հայկական գումարտակը, Վարդաշենում կազմավորված հայկական առանձին գումարտակը, Ախալքալաքի առաջին հայկական գումարտակը, Ախալցխայում և Նախիջևանում կազմավորված առանձին պահեստային գումարտակները, Ղազախի ռուս-հայկական հատուկ գումարտակը Դիլիջանում, Լոռվա առանձին գումարտակը Ղարաքիլիսայում: Ալեքսանդրապոլում, Բաքվում, Կարսում, Ելիզավետպոլում, Նախիջևանում, Թիֆլիսում գտնվում էին Շուշվա, Լոռվա, Թիֆլիսյան, Երևանյան պահեստային հայկական գնդերը, Հայկական հեծելազորային պահեստային բրիգադը, պահեստային էսկադրոնը, ուսումնական մարտկոցը՝ Կարսում, ենթասպաների դպրոցը՝ Թիֆլիսում, Մակուի երկաթգծային գումարտակը, Զեյթունի և Իրանյան գնդերը[71]:

Կորպուսի մարտի 4-ի հրամանով Հայկական առաջին հրաձգային դիվիզիայի շտաբը և առաջին հրետանային բրիգադի շտաբը վերանվանվեցին երկրորդ Հայկական դիվիզիայի և երկրորդ հրետանային բրիգադի շտաբի, հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Սիլիկյանը: Երկրորդ հրաձգային դիվիզիայի շտաբը և երկրորդ հրետանային բրիգադի շտաբը վերանվանվեցին Առաջին հայկական դիվիզիայի շտաբի: Հրամանատար նշանակվեց գեներալ մայոր Արեշյանը[72]: Շտաբը Սարիղամիշում էր: Սարիղամիշ եկան և Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը, կորպուսի կոմիսար Դրոն, որը ստանձնեց Կարս-Կուրգանի ջոկատի հրամանատարությունը: «Շնորհիվ Դրոյի հեղինակության և խիզախության, հնարավոր եղավ կասեցնել հակառակորդի ճնշումը և մենք ավելի երկար մնայինք Սարիղամիշում»[73],— գրել է Նազարբեկյանը: Ապա կոմիսար նշանակվեց Հակոբ Զավրիյանը, որին, ինչպես գրում է գեներալ Նազարբեկյանը, ինքը խորապես հարգում էր, «որպես գաղափարական մարդու: Նա գործի համար չէր ափսոսում իր կյանքը և իր փայլուն կարիերան, որը նրան սպասում էր, եթե նա հանուն իր ժողովրդի Թուրքիա չգնար, հրաժարվելով կոմֆորտից և հարմարավետ կյանքից»[74]:

Ալ. Խատիսյանը հետագայում գրել է. «Զավրիյանի համար բոլոր անցքերը մեկ արժեք ունեին միայն, որ չափով որ անոնք կրնային նպաստել Հայկական հարցի լուծման և Թուրքահայության ազատագրման: Զավրիյանի տեսակետն այն էր, որ հայ ժողովուրդը զենքով պետք է նվաճի իր ազատությունը, իսկ Ռուսիան ալ, ինչ ուժիմ էլ ան ունենա, պարտավոր է և պետք է օգնի հայերուն: Այդ գաղափարի մոլեռանդ սպասավոր մըն էր ան, բյուրեղյա մաքուր հոգի մը ունեցող մեծ անձնավորություն մը, Թողած էր իր տունը, իր քարիերը և հանգստավետ կյանքը՝ ծառայելու համար իր ժողովրդին: Բարոյական մաքուր-

թյան և հայրենասիրության տեսակետով մեծագույն մարդ էր ան, զոր ես տեսած եմ երբևէ իմ կյանքի ճամբուն վրա։ Զինքը կսիրեին բոլորը եւ չէին կարող չսիրել»[75]։

Էրզրումից հետ քաշվող զորամասերից, որոնց հրամանատարներն էին փոխգնդապետ Հասանփաշյանը, գնդապետ Զինկևիչը, կապիտան Շնեուրը, գնդապետ Թորգոմը, ստեղծվեց Սարիղամիշի ջոկատը՝ գլխավոր շտաբի գնդապետ Մորելի գլխավորությամբ։ Թուրքական առաջացած զորաջոկատներին մարտ տվեցին Կարա-կուրգանի տակ՝ գնդապետ Թորգոմի, Բաշգյուղի տակ՝ Մուրադի կամավորները, հետ շպրտելով հակառակորդի ուժերը, նրանց պատճառեցին մեծ կորուստներ։

Սարիղամիշում կենտրոնացվեցին Հայկական դիվիզիայի 1, 2, 4, 7 գնդերը, Դալի Ղազարի, Սեպուհի և Մուրադի ջոկատները։ Գեներալ-մայոր Արեշյանի Սարիղամիշ գալուց հետո նա նշանակվեց Սարիղամիշյան ջոկատի հրամանատար։ Գնդապետ Մորելը ստանձնեց Սարիղամիշ-Կարս ճանապարհի պաշտպանության ղեկավարությունը, կենտրոնանալով Նովո-Սելիմում։ Հատուկ նշանակության երկրորդ բրիգադի հրամանատար նշանակվեց շտաբս-կապիտան Շնեուրը։ Այստեղ էին Երզնկայի և Էրզրումի գնդերը, երեք հրետանային մարտկոց, հատուկ ջոկատի հեծյալների մեկ գունդ, մեկ զրահագնացք, առաջին հեծյալ գունդը, ռուսական սպայական ջոկատը՝ գնդապետ Օֆրեմովի գլխավորությամբ[76]։

Կովկասյան ճակատի շտաբի պետի տեղակալ գեներալ-մայոր Գաբրիել Ղորղանյանը գրել է. «բարոյական պարտքս կընկատեմ յիշել այստեղ, որ շատ մը ռուս սպաներ կօգնեին մեզի անհատասար պայքարին մեջ։ Կարելի չէ մոռանալ զոր. Վիշինսկին, որը ստանձնած էր հայկական զորամարմնի սպայակոյտի պետին պաշտօնը (առաջ այդ զօրավարը կովկասեան ռուս բանակի սպայակոյտի պետն էր), զոր. Դեևը՝ Կարսի բերդի հրամանատարը, գնդապետ Մորելը (Ռուսիո նախկին զինուորական կցորդը Տոկիոյի մեջ), որը հայերու համար ամենածանր վայրկեանին, երբ ռուս զօրքերը հեռացան ռազմաճակատէն, մնաց հայերու հետ Երզնկա. գնդապետ Զինկևիչը, որը զոր. Սիլիկեանի եւ Անդրանիկի սպայակոյտի պետն էր, ու վերջապես, գնդապետ Օֆրեմովը իր սպայական ջոկատով, որի մեջ սպաները իբրեւ պարզ զինուորներ կրծառայէին։ Կարճ յառաջաբանի մեջ անկարելի է յիշել բոլոր անձերը, որոնց հանդէպ հայերը պէտք է երախտագիտութեան զգացում տածեն»[77]։

Մարտի 24-ին ստանձնելով Կաղզվանի ջոկատի հրամանատարությունը և վերականգնելով կարգ ու կանոնը, կապիտան Շնեուրը իր ջոկատով շարժվեց առաջ՝ Բերնի շրջան։ Մարտի 26-ին թուրք-քրդական զորաբանակին տրվեց առաջին մարտը Աղադաշի շրջանում։ Հարձակողական մարտերում հատկապես աչքի ընկավ պրապորշչիկ Գարեգին Ամիրջանյանի հեծյալ հարյուրյակը։ Թշնամին կրեց մարդկային մեծ կորուստներ և նահանջեց։ Հաջորդ մարտում՝ Կազի-Կալա բարձունքի

շրջանում, որին մասնակցում էին 300 հեծյալներ, թուրքերը հետ շպրտվեցին 5 կիլոմետր։ Հակառակորդի հարձակումը ամբողջ ճակատով կանգնեցվեց։ Բերն գյուղի և Նովո-Սելիմի շրջանում դիրքեր գրավեցին գեներալ Արեշյանի ջոկատները, Կաղզվանի ջոկատը մնաց իր դիրքերում, պահեստային ուժեր ունենալով Բերնում[78]։ Այսպիսով, ամրացվում էին Կարսի մատույցների պաշտպանության դիրքերը։ Կարսի ամրոցում այդ ժամանակ գտնվում էին հայկական երրորդ գունդը, ուժեղացված պահեստային գունդը, ամրոցի սակրավորների գումարտակը, հետիոտն ու հեծյալ հայկական կամավորական զորամասերը, ռուսական կամավորական գնդի և հունական գնդի մի մասը, ամրոցային հրետանին, երկու դաշտային մարտկոց և հեծյալների մեկ գունդ։ Կարս քաղաքը պաշտպանում էին հետևակային 18 վաշտ, հրետանային 11 մարտկոց, գրնդացրային, հետախուզական, վարժական խմբեր, սակրավորներ։ Ամրոցի պարետ գեներալ-մայոր Դեևի 1918 թ. ապրիլի 1-ի հրամանով կատարվեց պաշտպանական ուժերի վերադասավորում և հստակ տեղաբաշխում՝ պաշտպանական չորս գոտիներում։ Ամրացված շրջանների պետեր նշանակվել էին գնդապետներ Փիրումյանցը, Միցկևիչը, Կարումիշևը, Քալանթարովը, պահեստային ուժերի պետ՝ գնդապետ Փիրումովը։ Կորպուսի հրամանատար Նազարբեկյանի հրամանով Երևանից Կարսի ճակատ էին տեղափոխվել հայկական երկրորդ գունդը և երկրորդ գումարտակը։ Հայկական կորպուսի ստորաբաժանումները բռնել էին պաշտպանություն Ենգիջա-Բեզիգջյան-Կեչիտ-Նովո-Սելիմ-Կարանգազ-Թեհնիս-Պասլի գծով[79]։

Անցնելով նոր հարձակման, թուրքական զորքերը ապրիլի 1-ին գրավեցին Բաթումը։ Մինչ այդ, գրավել էին Սարիղամիշը։ Չխեննկելին ապրիլի 3-ին Թիֆլիսից դիմեց Վեհիբ փաշային՝ Կարսի շրջանում ռազմական գործողությունների դադարեցման խնդրանքով։ «Թուրքիայի հետ պատերազմել է Ռուսաստանը և ոչ թե Անդրկովկասը, որը օրերս կհայտարարի իր անկախությունը և կթողնի Կարսը»,— հիմնավորեց իր առաջարկությունը Չխենկելին, այդպիսով, հայտարարելով Անդրկովկասյան կառավարության կողմից Թուրքիայի կամքի կատարման պատրաստակամության մասին։

Թուրքերի հարձակումը բացատրելով անդրկովկասյան պատվիրակության կողմից բանակցությունների խզմամբ, թուրքական գլխավոր հրամանատարը նորից ընդգծեց, որ քանի դեռ չի հայտարարվել անկախություն, Անդրկովկասը հանդիսանում է Ռուսաստանի մասը և հետևաբար, նա պետք է հնթարկվի Բրեստի հաշտության պայմաններին և անմիջապես էվակուացնի Կարսը և մինչև Արփաչայ ընկած տարածքը[80]։

Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի վրա կախվեց թուրքական նոր ներխուժման վտանգ։

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքական ներխուժման և Անդրկովկասի պաշտպանության հարցերը գանվում էին հայ քաղաքական կուսակցությունների և ազգային հատուցակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում։ Բաթումի անկումից հետո Հայ Հեղափոխական Դաշնակցության՝ Սեյմում ներկայացված պատգամավորները նպատակահարմար համարեցին Թուրքիայի հետ հաշտության պայմանները քննության առարկա դարձնել ոչ թե խմբակցային, այլ ազգային չափանիշով, մի ժողովում, որի անցկացումը նախատեսվում էր Հայաստանում։ Խորհրդակցության վայր ընտրվեց Ալեքսանդրապոլը։ Ապրիլի 6—8 (19—21)-ը կայացած խորհրդակցությանը մասնակցում էին Սեյմի և կառավարության հայ անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները, Երևանի և Կարսի նահանգական կոմիսարները, Հայոց ազգային խորհրդակցության Երևանի, Կարսի և Ալեքսանդրապոլի լիազորները, Ալեքսանդրապոլից քաղաքական մի շարք գործիչներ։ Խորհրդակցությունը բացեց Ս. Վրացյանը, մտքերի փոխանակությունից հետո հաստատվեց խորհրդակցության օրակարգը. 1. հաշտության պատվիրակության զեկուցումը, 2. կառավարության անդամների զեկուցումը, 3. զեկուցում ռազմական դրության մասին, 4. զեկուցումներ Երևանի և Կարսի շրջանների ներքին դրության մասին, 5. պատերազմի, հաշտության և երկրի պաշտպանության հարցեր։

Առաջինը լսվեց Կովկասյան ճակատի գլխավոր զորահրամանատար գեներալ Լեբեդինսկու հաղորդումը՝ ճակատում իրավիճակի մասին։ Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Նազարբեկյանի, շտաբի պետ գեներալ Վիշինսկու և ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ գեներալ Ղորղանյանի հետ Լեբեդինսկին նոր էր վերադարձել ճակատի առաջին գծից և խորհրդակցության մասնակիցներին բազմակողմանի ներկայացրեց ռազմական իրադարձությունները, զորքի բարոյական վիճակը, մարտերի ընթացքը։ «Մարտին եղա Բաթումում, տպավորությունս մխիթարական չէր։ Այժմ եղա Հայկական կորպուսի ճակատում և տպավորությունս համեմատաբար մխիթարական է։ Ալեքսանդրապոլում ստացա այն տպավորությունը, որ նոր կազմավորվող զինական ուժեր կան։ Հենց այսօր գալիս եմ ճակատից, ուր սկսվել են կռիվները, ուր մեր զորքերը կռվում են քաջաբար։ Ձախ թևում մենք մինչև իսկ հետ քշեցինք Թշնամուն իր դիրքերից։ Զորքի բարոյական մակարդակը ևս բարձր է։ Այդ կռիվը տվել է 60 ծանր և 200 թեթև վիրավոր, որը ինքնին դարձյալ ապացույց է համառ դիմադրության։ Այժմ մենք ունենք նոր Թշնամիներ. դա տեղական տաճիկներն են, որոնք տիրակալ են Ախալցխայի շրջանում, Բաթումի շրջանը անհուսալի է, Կարսը բավարար չափով պաշտպանված է և կարող է ցույց տալ դիմադրություն»։ Այդպիսին էր Լեբեդինսկու հաղորդման բովանդակությունը։ Լրացումներով

հանդես եկավ գեներալ Նազարբեկյանը, որը դրեց զորքի համալրման, հանդերձանքով, սննդով, ռազմամթերքով ապահովելու հարցը[81]։

Ապրիլի 7 (20)-ի նիստում լսվեցին Ա. Խատիսյանի և Հ. Քաջազնունու զեկուցումները Տրապիզոնի հաշտության բանակցությունների արդյունքների և Ղազարյանի զեկուցումը՝ անդրկովկասյան կառավարության գործունեության մասին։

Խատիսյանի զեկուցումից խորհրդակցության անդամներին պարզ դարձավ, որ Անդրկովկասյան Սեյմի պատվիրակության մուսուլման անդամներն իրենց դիրքորոշմամբ ավելի մոտ էին Թուրքերին, ավելի պաշտպանում էին տաճկական տեսակետները, քան Անդրկովկասի շահերը։ «Ինչ խոսում էինք մեր մեջ, Քշնամին գիտեր վաղօրոք և «մեր» Թուրքերից։ Նրանք ժամերով լինում էին տաճիկների մոտ, մեր հեռագրերի և թղթերի բովանդակությունը հայտնում նրանց։ Ճակատից եկած ամեն մի վատ լուր թե էր տալիս Քշնամուն, տաճիկները գիտեին, որ հայկական ճակատում ավելի դիմադրություն կլինի, քան վրացականում, լրտեսությունը լավ կազմակերպված էր նրանց համար։ Տաճիկները զգում էին իրենց, ինչպես իրենց տանը, որպես տան տերեր»։

Այդ եզրակացությունները Խատիսյանը ներկայացրեց Թուրք-Անդրկովկասյան բանակցությունների վեց նիստերի և Անդրկովկասյան Սեյմի պատվիրակության 46 նիստերի արդյունքների վերլուծության հիման վրա, առանձնացնելով Անդրկովկասի անկախության, տարածքային զիջումների և Հայկական հարցերը։

Անկախության հարցում, որին կողմնակից էին բոլոր մուսուլման պատվիրակները, Թուրքական պնդումները հանգում էին հետևյալին. դուք Ռուսաստանի մի մասն եք՝ մինչև օրս էլ միջազգային տեսակետից, ճակատում ռուս գեներալներ են։ Պետք է ընդունեք Բրեստի հաշտության պայմանները, հետ տանեք զորքերը, ազատվող տարածքի նկատմամբ հավակնություններ չունենաք։ Ընդունեք անկախություն, այն ժամանակ մենք ձեզ կճանաչենք որպես պետություն. մեծ ուրախությամբ կաջակցենք ձեզ սեփական պետություն կազմելու, որ մեր շահն է՝ քնդդեմ Ռուսաստանի։ Դրա փոխարեն մենք կօգնենք ձեզ՝ ինչում կամենաք, օրինակ՝ զորք կուղարկենք ձեզ համար ընդդեմ բոլշևիկների, կօգնենք կազմավորել հայկական տարածքներ Կովկասի սահմաններում։

Տարածքային հարցերում Տրապիզոնում բանակցությունների առաջին իսկ պահից երևաց, որ վրացիները ուզում են ամեն գնով Բաթումը պահել, զիջելով Կարսը, Արդահանը, անգամ՝ Ախալցխան։ Ջխենկելին և կառավարությունը զիջում էին Կարսը՝ իր շրջանով, բացառությամբ հայկական մասերի, Արդահանի, և Բաթումի մարզի մեծ մասը։ Սեյմում ներկայացված բոլոր խմբակցությունները, բացառությամբ դաշնակցություն կուսակցության, մարտի 26-ի նիստում քննարկման ժամանակ կողմնակից էին տարածքների մաքսիմալ զիջումների։ Հայերը պնդում էին համարում պնդել Կարսը և նրա շրջանը Անդրկովկա-

սին Թողնելու վրա։ Քաջազնունու և Խատիսյանի տեսակետն այն էր, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ավելի ձեռնտու է եղել հայերի համար, քան Անդրկովկասյան կառավարության մաքսիմալ պիշոնները։

Հայկական հարցի կապակցությամբ դրվում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջ, որը մոտենում էր անկախության. Հայաստանը պետք է Տաճկաստանին տար միայն տուրք։ Դրվում էր տարածքային հարց. առավելագույնը վեց վիլայեթ, նվազագույնը չորս՝ սեփական օրենսդրական հաստատություններով։ Թուրքական պատվիրակության մոտեցումներն էին՝ Տաճկաստանը ներկայումս շատ ուժեղ է և պիտի խոսի կտրուկ լեզվով. անգլիական և իտալական նավատորմը չկարողացավ մտնել Դարդանել, մենք մեր սեփական ուժերով, առանց գերմանացիների, պաշտպանեցինք նեղուցները և Կոստանդնուպոլիսը։ Ռուսաստանը ամբողջ 15 տարի կլինի Թույլ. ամբողջ հայ ազգը դավաճանել է Տաճկաստանին, որի հետևանքով կոտորվել է 600 հազար հայ, 300 հազար Թուրք կոտորվել է հայերի և ռուսների ձեռքով։ Տաճկաստանը հայերին երաշխիք չի տա, եթե մտնի Կովկաս, միջազգային կոնֆերանսների վրա ևս հայերը հույս չպետք է դնեն. հայերի Թուրքական կողմնորոշումը պետք է նաև Թուրքերին իրենց շահերի համար, Թուրքիայում ապրում է 400 հազար հայ, այդ Թիվը Թուրքերի համար վտանգավոր չէ, հայերը լավ արհեստավորներ են և լավ տուրք վճարողներ, քրդերը Թուրքերին պետք չեն, հույների դեմ հայերը հակաՀույն են։ «Մենք մեր պատմական կոչումը պետք է կատարենք և եթե հայերը ստիպեն, որ Կովկասը կռվի մեր դեմ, այն ժամանակ կլիներնք անողոք։ Վրացիները և մահմեդականները վտանգավոր չեն մեզ համար։ Մեղավորը հայերն են, որ Երևանի նահանգում ավերում են Թուրքական գյուղերը»[82]։

Հ. Քաջազնունին ներկայացրեց իր գրավոր հիմնավորումը՝ «Թե ինչու Անդրկովկասի համար համեմատաբար փոքրագույն չարիք է Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և Թե ինչու չպետք է հրաժարվել այդ դաշնագրից»[83]։ Որոնք էին հիմնավորումները։ Նախ, Թուրքական պատվիրակության կովաններով. Թուրքերը համաձայն պահանջում են Բրեստ-Լիտովսկի պայմանների ճանաչում։ Անդրկովկասյան կողմը ոչ մի հիմք չունի, որ բանակցությունների ընթացքում կարող է կոտրել նրանց համառությունը, հակառակը՝ կա համոզմունք, որ նրանք ոչ մի քայլ չեն նահանջի իրենց պնդումներից։ Կնքված հաշտ մի շարք պայմանագրերը Թուրքիային տվել են լուրջ հաղթողի կեցվածք, Թեկուզ աննշան զիջումը կնշանակեր հիասթափեցնել բանակը և ժողովուրդը։ Կառավարությունը չի կարող ասել. «Հաղթելով Բրեստում հզոր Մոսկվային, Տրապիզոնում մենք պարտվեցինք Անդրկովկասին»։ Հյուսիսում Անդրկովկասի հաշվին ձեռքբերումը միաժամանակ կարող է հանդիսանալ Արաբիայում, Սիրիայում, Միջագետքում կորուստների հատուցում։ Թուրքերը բացահայտ հայտարարում են, որ ցանկանում են օգտագործել իրենց համար ստեղծված բարեհաջող պայմանները։ Թուրքիան 200 տարվա ընթաց-

քում միայն կորցրել է, այժմ ստեղծվել են հնարավորություններ՝ ձեռք բերել, ավելին՝ մասնակցելով պատերազմին, նա խաղաքղթին էր դրել իր ամբողջ գոյության հարցը, դիմել էր մեծ փորձության։ Հետևաբար, նա պետք է ստանար այն ամենը, ինչ հնարավոր է։ Անդրկովկասը ձեռք գցելը անհրաժեշտ է նաև ազգային վերածննդի և կայսրության պետական ամբողջականության, Ռուսաստանից պաշտպանվելու համար։ Ռուսաստանը այժմ ջախջախված է և ոչ մեկին սարսափելի չէ, բայց դա չի նշանակում, որ նա այդպիսին կմնա մշտապես։

Անդրկովկասի անջատումը որպես ինքնուրույն, Ռուսաստանի հետ կապ չունեցող պետություն, անկասկած մեծ ձեռքբերում է Թուրքիայի համար, սակայն ամբողջապես հենվել այդ բուֆերի վրա՝ Թուրքիան չի կարող։ Պատճառներն էին՝ նախ, Թուրքիան վստահ չէ, որ Անդրկովկասը չի փոխի իր կողմնորոշումը և նորից չի միանա Ռուսաստանին, ապա, նա վստահ չէ, որ եթե Անդրկովկասը նույնիսկ ցանկանա պաշտպանել իր անկախությունը Ռուսաստանի ոտնձգություններից, կարող է իրեն պաշտպանել։ Դրա համար իրենց հարկավոր են այնպիսի ուժեղ ռազմական կետեր, ինչպես Կարսը, Արդահանը, Բաթումը։ Բաթումը, որպես հենակետ հարկավոր է Թուրքիային ոչ միայն Ռուսաստանի դեմ, այլև Բուլղարիայի, որի ուժեղացումից Թուրքերը վախենում էին։ Բաթումի և Կարսի մարզերի Թուրքիային անցնելը բռնակցում չէ, այլ վերադարձ այն տարածքների և ազգաբնակչության, որոնց հիմնական մասը Թուրքեր են և որոնք Թուրքիայից ուժով պոկվել էին իմպերիալիստական Ռուսաստանի կողմից։ Նրանց վերադարձը ժողովուրդների ինքնորոշման հարցում դեմոկրատիայի պահանջն է։

Ներկայացնելով Թուրքիայի «ազգայնական և իմպերիալիստական, կենտրոնացված կառավարության» պահանջները, Քաջազնունին բերում էր և պայմանագիրն ընդունելու անհրաժեշտության իր կովաններ։ Դրանք էին. Բրեստի պայմանագիրը, բռնակցելով Թուրքիային Կարսի և Բաթումի մարզերը, դրանք չի հանձնում Թուրքիայի տիրապետությանը, բնակչությանը իրավունք է տալիս որոշելու իր պետական կեցությունը և միջազգային գրությունը՝ հարևանների, մասնավորապես, Թուրքիայի համաձայնությամբ։ Բրեստի պայմանագիրը սահմանում է սկզբունք, որի դեմ Անդրկովկասյան կողմը առարկել չի կարող, քանզի ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը իր սեփական կարգախոսն է։ Հասկանալի է, որ պնդելով Բրեստի պայմանագրի վրա, Թուրքիան ենթադրում է, որ ներկա պահին մարզերի ինքնորոշումը փաստացի նշանակում է դրանց միացում կայսրությանը։ Հայերի և մյուս քրիստոնյաների հետագումից հետո Թուրքիայի ճնշմամբ անցկացված հանրաքվեն հետագայում կարող է թաղոքարկվել մեր կողմից, և չի բացառվում Կարսի և Կաղզվանի վերադարձը Անդրկովկասին։ Չի կարող պատահել, որ Անդրկովկասի ճակատագրի տնօրինությունը Թողնվի միայն Թուրքիային, կարելի է դիմել և պայմանագիրը ստորագրած պետություններին։ Պատերազմի արագ ավարտը և հաշտության կնքումը հնարավորություն կտան զբաղվել Անդրկովկասյան պետության կառուցմամբ, մի կողմից՝ բաժանել մենք

մյուսից, մյուս կողմից՝ միավորվել դաշնության մեջ, կազմակերպել տեղական և կենտրոնական կառավարություններ, հաստատել կարգ ու կանոն, վերականգնել հաղորդակցության ճանապարհները, կանխել ֆինանսական և կենսամթերքների ճգնաժամը, «որն ավելի վտանգավոր է, քան ռազմական պարտությունը»։ Հաշտության կնքումը հնարավորություն կտա Անդրկովկասին պահպանել զորքը, զենքը, ամրապնդել զինական ուժերը։

Հակառակ դեպքում, երկրամասում կառաջանան հակամարտություններ, և պարտության դեպքում Բրեստի պայմանագիրը Թուրքիայի համար կկորցնի իր պարտադրիչ ուժը, հաշտության նոր պայմաններ կնքելու ժամանակ Թուրքիան կպահանջի ավելի շատ տարածք, քան երկու մարզերը, ընդ որում, առանց հենվելու ժողովուրդների ինքնորոշման իրավունքի վրա, այլ որպես անպայման սեփականության. Անդրկովկասի վրա կդնի մեծ ռազմատուգանքներ, կզավթի մեր հողերի մի մասը։ «Այդ մասին թուրքերն ասում էին որոշակի»։ Պատերազմը Թուրքիայի հետ կլինի ոչ թե սոսկ պատերազմ, այլ կոտորած։ Հայ բնակչությունը կկոտորվի ամենուր, ուր կմտնի Թուրքը։ Կարսից, Կաղզվանից, Ախալքալաքից և ապա Ալեքսանդրապոլից ու Երևանից հայ բնակչությունը կհեռանա, եթե հասցնի, մնացածները կկոտորվեն։ Հայերի մնացորդները անողոքաբար կկոտորվեն նաև Միջագետքում և Փոքր Ասիայում. «այդ մասին թուրքերը զգուշացրել են միանգամայն բացահայտ»։

Ռազմական անհաջողությունները և նրանց ուղեկցող հանգամանքները կառաջացնեն Անդրկովկասի բզկտումը, ոչ միասնություն, ոչ Սեյմ, ո՛չ երկրային կառավարություն այլևս չեն լինի։ Երկրամասը կվերածվի իրար հետ թշնամացած հողակտորների, իսկ արդյունքում կլինեն չարդեր և կոտորածներ։ «Այդ պայմաններում Թուրքիան իր սեփական նպատակներով կամ կողմերից մեկի կանչով կգա կարգ հաստատելու, ինչպես Գերմանիան՝ Ռուսաստանի հարաբերությամբ, միայն այն տարբերությամբ, որ Թուրքիան գործի կդնի ոչ թե կարգեր ստեղծելու գերմանական մեթոդը, այլ իր սեփական՝ թուրքականը», թուրքական վտանգը պիտի կոչեր Ղազիզյանը։

Խորհրդակցության մասնակիցներին ներկայացնելով այս տեսակետները, Հ. Քաջազնունին, միաժամանակ, հայտնում էր, որ դժվար է հաշտվել Կարսի և Պաղտվանի կորստի հետ, 1.) այդ ծկրտուների բնակչության մեծ մասը քրիստոնյաներ են (հայեր, հույներ, ռուսներ), որոնց թուրքական տիրապետությունը ոչ մի լավ բան չի խոստանում, 2) այդ ծկրտուները՝ թուրքերին հանձնելով, Անդրկովկասում էապես կրճատվում է Հայկական կանտոնի տարածքը և կտրվում է դեպի Բասեն և Ալաշկերտ տանող ճանապարհը. 3) ամրանալով Կարսում, թուրքիան կհանդիսանա մշտապես սպառնալիք Ալեքսանդրապոլի և Երևանի հանքյունների համար։

Բրեստի պայմանների և Տրապիզոնի բանակցությունների արդյունքների մասին Խատիսյանի և Քաջազնունու հաղորդումներն առաջացրին

տարակարծություն, որն ավելի խորացավ Ն. Կարճիկյանի՝ Թիֆլիսից հղած հեռագրի և ապրիլի 5 (18)-ին գրած նամակի հրապարակումից հետո։ Նամակում Կարճիկյանը պնդում էր, որ «պատմական ամենախոշոր և ճակատագրական սխալ» կլինի, եթե ընդունվեն Բրեստի հաշտության պայմանները և դաշտարեցվի պատերազմը։ Նրա համոզմամբ, նույնիսկ Թուրքիայի առաջադրած պայմաններն ընդունելուց հետո էլ Անդրկովկասը չի ազատվելու օսմանյան զորքերի առաջխաղացումից և երկրամասը՝ լիովին տրվելու վտանգից. քանզի «հակառակ այն բոլոր համաստիացումներին, որ արել են տաճիկները, Կովկասի գրավումը Տաճկաստանի համար քաղաքական ծրագիր և անհրաժեշտություն է», որով ակնկալվում է նաև Ռուսաստանից Կովկասի անջատումը։ Բաթումի և Կարսի գրավումը համարելով թուրքական ծրագրի առաջին փուլ, Կարճիկյանը նախազգուշացնում էր խորհրդակցության անդամներին Անդրկովկասը անկախ հայտարարելու թուրքական պահանջի հեռահար նպատակների մասին, այն է՝ երկրամասը վերածել Տաճկաստանի վասալի, նրան անդառնալի կերպով մտցնել տաճկական ոլորտի մեջ։

Առաջ քաշելով «կարո՞ղ է արդյոք Անդրկովկասը իրեն անկախ հայտարարել և խզել բոլոր կապերը Ռուսաստանի հետ և ինչու է պետք այդ անել» հարցը և պատասխանելով դրան, Կարճիկյանը միանգամայն սխալ էր համարում այն նկատառումը, որ իբր թե, եթե Անդրկովկասը անկախ լինի, իրավունք կունենա և կկարողանա ազդել, համաձայն Բրեստի դաշնագրի, երկրամասից կտրվող գավառների տնօրինության հարցում։ Այդ գավառների բնակչության գերազանց մասը կցվելու է Տաճկաստանին, վերջինս հանդուրժել չի կարող, եթե այդ ժողովուրդները ցանկանան և վճռականություն ունենան իրենց համար ինքնավար կյանք ստեղծել կամ միանալ Կովկասին։ Դրա ապացույցը Տաճկաստանի հայտարարությունն է. «Կարսը, Արդահանը և Բաթումը պետք է լինեն իր ձեռքում, իբրև բերդեր»։ Այլևս տարակույս չի կարող լինել, որ այդ գավառների ճակատագիրը կանխորոշված է։ Իր «անվտանգությունը» ապահովելու համար Տաճկաստանը «պետք է ներս գա Անդրկովկաս և բռնի այն դռները, որով Ռուսաստանը մտադիր կլինի առաջանալ։ Դա կլինի Անդրկովկասի փաստացի գրավումը, որը դյուրանալու էր տեղական թուրք բնակչության վերին աստիճանի ագրեսիվ և սանձարձակ տրամադրության հետևանքով»։ Անդրկովկասում ևս պետք է վերացվի «վտանգավոր տարրը, ինչպես եղավ Տաճկահայաստանում»։

Ընդհանրացնելով, Կարճիկյանը գրում է. այսպիսով, Բրեստի դաշինքը ընդունելուց հետո հնարավոր է երեք դրություն. 1) կամ, չտալով ոչ մի նշանակություն կնքված դաշնագրին, անմիջապես Տաճկաստանը առաջանում և գրավում է Անդրկովկասը. 2) կամ կանգ է առնում որոշված սահմաններում ու ստիպում Անդրկովկասը անկախ հայտարարել, դարձնել իր վասալ նահանգը և 3) կամ գրավում է Կովկասը, երբ

մենք հրաժարվում ենք անկախություն հայտարարելուց ու մնում ենք Ռուսաստանի մի մասը։

Թուրքական ներխուժումը ամեն դեպքում կարճիկյանը համարում էր անխուսափելի։ Նա այդ բացատրում էր նաև նրանով, որ տեղական թուրք բնակչության համար հանդուրժելի է անկախ Անդրկովկասը, «իսկ եթե խնդիր գա Ռուսաստանի հետ կապված մնալուն, տարակույս չկա, որ նա ամեն միջոց ձեռք է առնելու Տաճկաստանին հրավիրելու և կցվելու իր ազգակից պետությանը»։ Երեք դեպքում էլ, գրում էր Կարճիկյանը, «հայերի բնաջնջումը անխուսափելի է»։ Նա կարծում էր, որ Կարսը և Բաթումը տալուց հետո Անդրկովկասը անկախ հայտարարելը համահավասար է հայ և վրաց ժողովուրդների ինքնասպանության, քանի որ Ռուսաստանը ներկայումս անջատումը չպետք է նկատվի անկախության գաղափարի իրականացում, այլ մի բռնության ակտ, որին ակամայից ենթարկվել է Կովկասը Տաճկաստանի ճնշման տակ»։ Մյուս կողմից, գրտնում էր Կարճիկյանը, Ռուսաստանը չպիտի հաշտվի Անդրկովկասը կորցնելու հետ, եթե անգամ Ռուսաստանի՝ Կովկասի սահմանները մտնելու ցանկությունները չինեն և «նա վերջնականապես հաշտվի Անդրկովկասի անջատման մտքի հետ, դրա հետ չի հաշտվելու հայությունը, որը միշտ պետք է զգա իր գլխին տեղական թրքության և Տաճկաստանի կախված սուրը, իր հայացքը պետք է հառի դեպի հյուսիս։ Անգամ վրաց ժողովուրդը, որքան էլ նա չուզի ռուսներին և մտածի Տաճկաստանի հովանու տակ ինքնավարության բարիքները վայելելու, վաղը, երբ իր կաշվի վրա զգա Տաճկաստանի բռունցքը, պիտի տենչա ձգտել Ռուսաստանի հովանավորության»։

Բերելով այս կովանները, Կարճիկյանը միանգամայն կորստաբեր էր համարում Բրեստի դաշնագիրն ընդունելով ու կորուստ տալով պատերազմը դադարեցնել, կամովին զիջել այն դիրքերն ու ամրությունները, որոնք կարող են ամրացնել հայերի դիմադրողական ուժը, գիտակցաբար զենքը ցած դնել։ Նրա համոզմունքն էր. «պատերազմը դադարեցնելը մեզ համար ինքնասպանության նշանակություն ունի։ Բիլը պետք է շարունակվի, որը անհույս մի կռիվ չէ, որը անվիճելի կերպով կտաներ մեզ դեպի կորուստ»։ Անհույս չհամարելով «Ռուսաստանից հետագայում զինամթերք ստանալը», խաչատուր Կարճիկյանը տեղեկացնում էր. «այդ ուղղությամբ աշխատանքներ արդեն կատարվում են և մեծ հավանականություն կա, որ հաջող ելք կունենան»[84]։

Ապրիլի 7-ի երեկոյան նիստում պատերազմը շարունակելու առաջարկությամբ հանդես եկավ Հայոց ազգային խորհրդի անդամ Ստեփան Մամիկոնյանը։ Վերլուծելով Տրապիզոնում թուրքերի պատվիրակության ղեկավարի հայտարարությունը՝ թե, եթե հայերը չհամաձայնվեն իրենց պահանջներին, ռուսահայերը ևս կարող են ենթարկվել կոտորածի, ինչպես տաճկահայերը, Մամիկոնյանը այն բնութագրեց որպես «գայլի հոգեբանություն»։ Կոտորվելուց խուսափելու հիմնական երաշխիքը նա տեսնում էր ուժերը կազմակերպելու, զորահավաքը առաջ

տանելու և դիմադրելու մեջ։ Ազգային խորհրդի անդամը սխալ համարեց նահանջի համար զորքին և ժողովրդին մեղադրելը, պատասխանատվությունը վերագրեց ղեկավարներին. «Էրզրումի և Սարիղամիշի անկումը զորքի մեղքը չէ, մենք չնպաստեցինք նրանց պաշտպանության գործին։ Սարիղամիշի նահանջն էլ հրամանատարության կարգադրության հետևանքն էր»։ Մամիկոնյանը զգուշացնում էր՝ «հավատալ թուրքերի խոստումներին, դա վատագույն արկածախնդրություն է։ Տաճկաստանը ուզում է մեզանից ստեղծել բուֆեր պետություն իր և Ռուսաստանի միջև, սակայն բուֆեր պետությունը չի կարող լինել ինքնուրույն, նա պետք է ենթարկվի հարևան մեծ տերություններից մեկին։ Տաճկաստանի նպատակն է բաժանել մեզ Ռուսաստանից և ենթարկել իրեն»։ Առաջ քաշելով «բայց մենք կարո՞ղ ենք թողնել Ռուսաստանը, հյուսիսային կողմնորոշումը, կարո՞ղ ենք դադարել մեր աչքերը դեպի հյուսիս հառելուց» հարցը, Մամիկոնյանը միանշանակ պատասխանում է. «Ոչ. Տաճկաստանը ամեն մի սադրանք կարող է առիթ ծառայեցնել շարժվելու առաջ. օրինակ՝ հայ-թաթարական որևէ ընդհարում։ Այս բոլորը նկատի առնելով, ես չեմ գտնում որևէ հիմք՝ փոխելու մեր մինչայժմյան քաղաքականությունը»[85]։

Մամիկոնյանի ելույթից հետո կառավարության անդամ Ղազարյանը հրապարակեց Կարճիկյանից ստացված հեռագիրը, որում հայտնվում էր Սեյմի վերջին իրադարձությունների մասին։ Սեյմի խմբակցությունների և կառավարության անդամների ժողովում մահմեդականները հայտնել են, թե իրենք բոլորը հեռանում են կառավարության կազմից և օրերս կհայտարարեն Ադրբեջանի անկախությունը։ Պատճառաբանությունն էր. «մենշևիկները և դաշնակները չեն կամենում հայտարարել Անդրկովկասի անկախությունը. իրենք չեն ուզում մնալ Ռուսաստանի սահմաններում»։ Մենշևիկները հաստատ են մնում մարտի 31-ի տեսակետի վրա և կշարունակեն Անդրկովկասի սահմանների պաշտպանությունը[86]։

Կարճիկյանի հեռագիրը տեղիք տվեց նոր մտորումների։ Ս. Հարությունյանը, Ա. Երզնկյանը, Մ. Կարաբեկյանը, Ս. Մամիկոնյանը, Ա. Ղազարյանը, Հ. Բեկզադյանը և խորհրդակցության այլ մասնակիցներ դրեցին աշխատանքները արագ վերջացնելու և ամբողջ կազմով Թիֆլիս մեկնելու, այնտեղ «հարևանների հետ անմիջապես խոսելու» հարցը։ Մահմեդական պատգամավորների վարքագիծը Լեոն համարեց «երկրորդ ճակատի ստեղծում»։ «Տաճկաստանը ինքը հենց այժմ էլ չի պահում Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, քանի որ, համաձայն դրա, Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները պետք է լինեն ինքնավար, ինքնորոշվեն, բայց ոչ գրավվեն Տաճկաստանի կողմից, որ անում է նա այժմ։ Թուրքերը Անդրկովկասն անկախ հայտարարելով, նրանց առաջին գործերից մեկն է լինելու, իմ կարծիքով, պատերազմ հայտարարել մեզ»,— ասաց Լեոն։ «Նոր դրության հետևանքով մենք պետք է շարունակենք

պատերազմը»,— հայտնում էր Քաջազնունին, հակառակ իր նախկին կարծիքին։

Խորհրդակցության մասնակիցներին հատկապես ոգեւորեցին ռազմաճակատից նոր վերադարձած գեներալներ Նազարբեկյանի և Վիշինսկու հայտնած տեղեկությունները։ Հայտնի դարձավ, որ հայկական զորքերը հետ են գրավել Թողած դիրքերը, գրավել գնդացիրներ, վերցրել գերիներ։ Դրությունը զորահրամանատարները համարում էին հաստատուն։

Ապրիլի 8 (21)-ի նիստում, երբ քննարկվում էին անկախության և ինքնապաշտպանության հարցերը, ներկայացված բանաձևերի նախագծերը, Թիֆլիսից ստացվեց հեռագիր, որտեղ հայտնվում էր Վրաց ազգային խորհրդի որոշումը անկախություն հռչակելու մասին։ Որոշվեց ամբողջ կազմով մեկնել Թիֆլիս։ Կային և առաջարկություններ՝ մնալ Ալեքսանդրապոլում, շրջել գավառները, նպաստել ինքնապաշտպանության կազմակերպման գործին։

Հովհ. Թումանյանը կարծում էր, որ պետք է ստեղծել մի կամք, մի հեղինակություն։ Կովկասյան ոչ մի ժողովրդի համար ընդհանուր իշխանությունը, կենտրոնը այնքան անհրաժեշտ չէ, որչափ հայերի համար։ Նման իրադրության մեջ Անդրկովկասի անջատումը մասերի՝ կնշանակի կոիվ առանձին մասերի միջև, կոիվ ոչ միայն Տաճկաստանի, այլև Ադրբեջանի և Վրաստանի դեմ։ «Անջատումը ավելի շատ կվնասի մեզ, հայերիս, այդ դեպքում մենք կմնանք կզզիացած, կտրված արտաքին աշխարհից»,— կարծում էր Ս. Վրացյանը։ Կողմնակից լինելով պատերազմը շարունակելուն, նա, միաժամանակ, առաջ քաշեց Գերմանիային դիմելու հարցը։ Ս. Ստամբոլցյանի կարծիքն էր. պետք է ամեն կերպ պահպանել հեղափոխական ճակատի միասնությունը, ընդունել կովկասյան խորհուրդների իշխանությունը։ Բ. Ղարիբջանյանի համոզմամբ, հեղափոխությանը և ժողովրդին կարող է փրկել միայն ժողովրդական կոմիսարների խորհրդի իշխանությունը ճանաչելը։ Բունիաթյանը կողմնակից էր ռուսական կողմնորոշմանը, ապակենտրոնացումը համարում էր ծախս։ Անջատումը կտրուկ դեմ էր Ս. Հարությունյանը։ Անջատումը հայերի համար մահացու հարված է, ասում էր ժողովրդական կուսակցության զեկավարը։ «Հիմա թույլ ենք, անջատվելով ավելի կթուլանանք»։ Նա կարծում էր, որ Անդրկովկասյան կառավարության մեջ պետք է մտցնել «կենտրոնական կառավարության կողմից ռուսական տարրի ներկայացուցիչ, մանավանդ, որ մենք չենք ուզում Ռուսաստանից անջատվել»։ Բժիշկ Տերտերյանը հույսը դնում էր ժողովրդի լավատեսության վրա։ Նա կարող է հերոսանալ, դրա համար հարկավոր է «ժողովրդական պատերազմ, ընդհանուր զորակոչ, բռունցք»։

Ծլույթ ունեցողների ճնշող մասը ազգային կուսակցությունների և կազմակերպությունների խնդիրն էր համարում ամրապնդել ժողովրդի ռազմական ուժը, այն ի սպաս դնել հայրենիքի ինքնապաշտպանության գործին։ Առաջարկվում էր նաև հայ-վրացական միացյալ կառա-

վարության ստեղծման հարցը՝ Թուրքերի դեմ միասնաբար հանդես գալու համար։

Ա. Շահխաթունյանը ժամանակ նպաստավոր չէր համարում Անդրկովկասում առանձին կառավարություններ ստեղծելու համար։ Անջատ կառավարությունը կտանի դեպի Անդրկովկասի երեք մասերի բաժանում, որը ձեռնտու կլինի Թուրքիային։ Վերջինս այդ դեպքում գործ կունենա երեք առանձին երկրների հետ։ Պետք է ուժեղացնել երկրի պաշտպանությունը արտաքին թշնամու դեմ։ Ա. Ջուրաբյանը Ռուսաստանի կազմից Ադրբեջանի հեռացումը համարում էր ադրբեջանցիների գործը, սակայն կարծում էր, որ դա պետք է լինի հանրաքվեի միջոցով։ Ս. Մամիկոնյանի կարծիքն էր. Թուրքերի քայլը միայն մի խաղ է, մի միջոց՝ հարկադրելու, որ Անդրկովկասը անջատվի Ռուսաստանից և հաշտություն կնքի Տաճկաստանի հետ, ստեղծի անիշխանություն, որ չիրագործվի հողային դեկրետը, դժվարացվի երկրի պաշտպանությունը։ Թուրքերից պետք է պահանջել, որ անջատումը լինի ըստ հանրաքվեի, մանավանդ Ադրբեջանի սահմանները որոշակի չեն։ Ն. Ադրալյանը կարծում էր, որ անջատվողների դեմ միջոցներ պետք է գտնի Ռուսաստանի իշխանությունը։ Ա. Երզնկյանը դեմ էր արտահայտվում Ադրբեջանի անջատմանը, համարելով դա ոչ թե ժողովրդի անջատում, այլ տիրող դասակարգի անջատում,, բռնի ներպով։

«Որն է լավը. լավը չկա։ Որն է չարիքներից փոքրագույնը, ահա խնդիրը»,— ասաց Քաջազնունին։ Նա հայտնում էր, որ սխալ կլինի հետևել Ադրբեջանի օրինակին, պետք է ստեղծել ընդհանուր կառավարություն՝ վարչական ապակենտրոնացմամբ, տեղական իշխանություններով, անցկացնել վարչական բաժանում, «կաղապարել այն, ինչ որ կատարվում է անիշխանությամբ»։

Թուրքիայի հետ հաշտության և պատերազմի, Անդրկովկասի անկախության մասին ներկայացվեց բանաձևի վեց նախագիծ։ Դրանք քննարկվեցին խորհրդակցության ապրիլի 8 (21)-ի առավոտյան և երեկոյան նիստերում։ Սոցիալ-դեմոկրատների (Ա. Ջուրաբյան, Ա. Երզնկյան) բանաձևն էր. տաճկական արշավանքը սպառնում է Անդրկովկասում ապրող բոլոր ժողովուրդներին՝ քայքայման, կատարյալ բնաջնջման սարսափներով։ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որը հաստատում է Բաթումի, Կարսի և Արդահանի շրջանների անջատումը, անընդունելի է հենց այն պատճառով, որ չի ապահովում ժողովուրդների խաղաղ հաբեւանություն Անդրկովկասում։ Հակառակը՝ Թուրքիայի առաջ բաց է անում ավելի հեշտ եղանակներ և ուղիներ՝ տիրելու ամբողջ Անդրկովկասին և բնաջնջելու ժողովուրդներին, մասնավորապես հայերին, որոնք առավել աւելի են Թուրքիային։ Անդրկովկասի ժողովուրդները և առավելապես դեմոկրատիան ստիպված են հանգամանքների բերմամբ զենքը ձեռքին պաշտպանելու իրենց կյանքը, կայքը և հեղափոխության բոլոր նվաճումները, հաստատ համոզված լինելով, որ շատ

մոտ ապագայում կստեղծվեն ամուր և երկարատև խաղաղության իսկական հնարավորություններ։

Անդրկովկասի անկախության մասին բանաձևում սոցիալ-դեմոկրատներն արձանագրում էին. Անդրկովկասի անկախությունը խզում է բոլոր պատմական կապերը Ռուսաստանի հետ, որի դեմոկրատիան ու քաղաքակրթությունը մեկ դարից ավելի սնում են տեղական ժողովուրդներին, խզումը նրանց մատնում է մեկուսացման, որից կառաջանա Անդրկովկասի ստրկացումը Թուրքիայի կողմից՝ իր բոլոր բացասական հետևություններով։ Ելակետ ունենալով այս հանգամանքը, առաջարկվում էր չընդունել Անդրկովկասի անկախությունը, հերթական խնդիր դարձնել Ռուսական ֆեդերատիվ հանրապետության հետ կապերի ամրապնդումը։

Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչների (Մ. Պապաջանյան, Ս. Հարությունյան, Մ. Բունիաթյան, բժիշկ Տեր-Սահակյան) բանաձևը, նկատի ունենալով 1) ռազմաճակատը պաշտպանող հայկական և վրացական զորամասերի սակավությունը, 2) ռազմական ապարատի քայքայման և ռազմամթերքի, ֆինանսների, պարենավորման, հաղորդակցության անբավարար վիճակը, 3) թուրք ազգաբնակչության տաճկական կողմնորոշման պատճառով թիկունքի վտանգված դրությունը, 4) դրսից օգնություն ստանալու հույսի բացակայությունը, 5) պատերազմի սպառնալիքը հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը, առաջարկում էր. 1) ռազմաճակատի պաշտպանության և թիկունքի ամրացման համար զենքի կոչել զենք կրելու ընդունակ մինչև 45 տարեկան բոլոր հայերին։ Պարտավորեցնել ամեն մի գյուղական և քաղաքային համայնքի, տալ որոշ քանակությամբ հրացաններ, փամփուշտներ և հագուստ՝ իրենց զինակոչիկներին, 2) պարտավորեցնող համարել բոլոր ազգային կազմակերպությունների և կուսակցությունների համար՝ ձեռք առնել բոլոր միջոցները բարձրացնելու ժողովրդի ռազմական ուժերը հայրենիքի պաշտպանության համար, 3) միաժամանակ, վերսկսել հաշտության բանակցությունները՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիման վրա, պայմանով, ա) որ պահպանվեն հայկական բոլոր զորամասերը և ապահովված լինեն սահմանները, բ) Երևանի նահանգին միացվեն Կարսի և Կաղզվանի հայաբնակ շրջանները, գ) ապահովված լինեն թե թուրքահայերի վերադարձը Հայաստան և թե նրանց կանոնավոր վիճակը տեղերում, 4) միջոցներ ձեռք առնել հարևան թուրք ժողովրդի հետ խաղաղություն հաստատելու համար։

Առանձին նախագծեր ներկայացրին Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ Վ. Նավասարդյանը, Սեյմի անդամներ Ա. Տեր-Գրիգորյանը և Ս. Խաչատրյանը, Ազգային խորհրդի և Սեյմի անդամ Ս. Վրացյանը։

Պատերազմի և խաղաղության հարցերին նվիրված բանաձևերից հանվեցին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հիշատակումը, «պատերազմը» փոխարինվեց «երկրի պաշտպանություն» ձևակերպումով։ Որոշվեց անկախության և իշխանության մասին հարցը քննարկել Թիֆլիսում։ Անդրկովկասյան Սեյմի արտահերթ նիստ հրավիրվելու կապակցությամբ

ապրիլի 8 (21)-ին երեկոյան ժամը 8.30-ին խորհրդակցությունն ընդհատեց իր աշխատանքները[87]։

Մինչ այդ, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը որոշել էր, որ դեմ է Անդրկովկասը անկախ հայտարարելուն[88]։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Անդրկովկասյան Սեյմի ապրիլի 9 (22)-ին կայացած 22-րդ նիստում երկրամասի անջատման և անկախության հռչակման հանձնաժողովի նախագահ Օնիաշվիլու զեկուցման քննարկումից հետո Սեյմը Անդրկովկասը հայտարարեց անկախ։ Անդրկովկասի անկախության օգտին հանդես եկան Ռասուլ-զադեն, Գվազավան, Լորդքիփանիձեն, Լասխիշվիլին, Կանտեմիրովը, Շեյխ-ուլ Իսլամովը, Արսենիձեն, Գոբեչիան, Քաջազնունին։ Վերջինիս հայտարարությունը հակիրճ էր. «դաշնակցության խմբակցությունը գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ նա վերցնում է իր վրա այս պատմական պահին, միանում է ինքնուրույն Անդրկովկասյան պետության հայտարարմանը»[89]։

Անկախության հռչակման դեմ հանդես եկան Գեորգաձեն, Սեմյոնովը, Թումանյանը։ «Նման իրադրության մեջ Անդրկովկասը անկախ հռչակելը նշանակում է ոչ այլ ինչ, քան թուրքական կողմնորոշում և այդ փաստը դուք ոչ մեկից չեք թաքցնի»,— ասաց Գեորգաձեն։ Սոցիալիստ-հեղափոխական Թումանյանի կարծիքով, «Անդրկովկասի ներկա պահին հաստատված անկախությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ դառնալ կատարյալ ստրուկ Թուրքիային»[90]։

Հռչակելով անկախություն, Սեյմը ընդունեց որոշում Թուրքիայի հետ բանակցությունները վերսկսելու մասին։ «Օսմանյան կայսրության կառավարությունը ճանաչել է Անդրկովկասի անկախությունը և հայտնել այդ մասին իր դաշնակիցներին»,— գոհունակությամբ հեռագրեց Վեհիբ փաշան։

Ե. Գեգեչկորու կառավարությունը հրաժարական տվեց։ Սեյմի ապրիլի 13 (26)-ի նիստում հռչակվեց Անդրկովկասի Դաշնակցային Ռամկավարական Հանրապետության ծնունդը, հաստատվեց կառավարության նոր կազմ Ա. Չխենկելու գլխավորությամբ։ Չնայած հայ քաղաքական և ռազմական գործիչների դիմադրությանը և բողոքներին, կառավարությունը ընդունեց թուրքական հրամանատարության բոլոր պայմանները, համաձայնվեց պարպել Կարսի մարզը, անդրկովկասյան զորքերը հետ քաշել մինչև Արփաչայ գետը, ոչնչացնել գետի աջ ափին գտնվող Ալեքսանդրապոլի ամրությունները։ Ապրիլի 10 (23)-ին հրամայվել էր Կովկասյան ճակատի զորքերին դադարեցնել ռազմական գործողությունները ամբողջ ճակատով՝ «թուրքական զինվորական իշխանությունների համաձայնությամբ»[91]։ Դրան համաձայն չէին կորպուսի հրամանատար և ճակատի գլխավոր հրամանատար Նազարբեկ-

յանը, պաշտպանության պատասխանատուները՝ գեներալ Վիշինսկին, գեներալ Դևևը, գնդապետ Մորելը, կորպուսի կոմիսար Ս. Մանասյանը, Կարսի կոմիսար Մ. Արզումանյանը և ուրիշներ։ Նրանք պնդում էին, որ Հայկական կորպուսը և ժողովուրդն ունեն այնքան ուժ և հնարավորություն, ռազմամթերք, որ թշնամուն կարող են դիմադրել առնվազն մեկ ամիս։ Այդ մասին բազմիցս հայտնվել էր Թիֆլիս՝ հեռագրերով և ուղիղ հեռախոսաթելով։ Չնայած դրան, ապրիլի 11 (24)-ին Ջիենկելին և Անդրկովկասյան կառավարության ռազմական նախարարի պաշտոնակատար Օդիշելիձեն հրամայեցին Նազարբեկյանին՝ թողնել Կարսը[92]։ Ապրիլի 12 (25)-ին Հայկական կորպուսի հրամանատարը ստացավ նոր հրաման՝ հայտնել վճիռը փաշային Անդրկովկասյան կառավարության խնդրանքը՝ «Անդրկովկասյան զորճերի՝ Կարսի մարզը պարպելու հետ միաժամանակ ապահովել Բութայիսի և Թիֆլիսի նահանգների մասերի պարպումը թուրքական զորճերից»[93]։

Թուրքական խոստումները մնացին խոստումներ։ Զորքը և զինված խաժամուժը ստանալով Կարսը, ձգտում էր դեպի Օրևան, Թիֆլիս, Բաքու և իրենց հատուկ մեթոդներով, «հանուն ալլահի և իսլամի», ավերում հայկական գյուղերը, թալանում, ոչնչացնում խաղաղ բնակչությանը։

ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՄՈՒՍԱՎԱԹԻ ԽԺԴԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ։ ԲԱՔՎԻ ՄԱՐՏՅԱՆ ԱՆՑՔԵՐԸ

Աղբյուրները վկայում են երիտթուրքերի, թուրքական հրամանատարության իսկական մտադրությունների, նրանց համաթուրքական ծրագրերի, Կովկասի, Դաղստանի, Հյուսիսային Պարսկաստանի, Անդրկասպյան երկրամասի, Մերձվոլգյան շրջանների և Ռուսաստանի այլ վայրերի մուսուլմաններին թուրքիայի հետ միավորելու, այնտեղ մուսուլմանական ապստամբական շարժում նախապատրաստելու, այդ նպատակով մուսուլմաններին զինելու, թուրքական բանակի համար մարդկային նոր ուժեր և նյութական միջոցներ ստանալու ուղղությամբ ծավալված գործունեության մասին։ Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ օսմանյան բանակը միայն Կովկասում կարող է համալրվել 300 հազար զինված արյունակիցներով[94]։

Թուրքական բարոգչությունը անդուլ գործում էր նաև Ավստրիայի, Գերմանիայի, Հունգարիայի ռուսական ռազմագերիների ճամբարներում գտնվող մուսուլմանների շրջանում։ Միայն էգեր քաղաքի ճամբարներում նրանց թիվը հասնում էր 20 հազարի։ Երիտասարդ թուրքերի կոմիտեն, թուրքական էմիսարներն ու հոգևորականները, էնվեր փաշայի գործակալները, այդ թվում և վրաց իշխան Գ. Մաչաբելին «իսլամի հետևորդներին» կոչ էին անում մտնել թուրքական բանակ, վրացական ռազմագերի սպաներին՝ գերմանական սպայի հրամանատարությամբ

Սարսուրի տակ ձևավորվող վրացական լեգեոն։ Էնվեր փաշան վրացի ռազմագերիներին խոստանում էր կազմակերպվող լեգեոն մտնելու լեռքում պահպանել սպայական կոչումները և կալվածքներ շնորհել Կովկասի ցանկացած վայրում[95]։

Կովկասը ռուսներից «ազատագրելու» համար երկրամասում «մուսուլմանների ապստամբական շարժման նախապատրաստման» պլանների մասին Բեռլին, Լոնդոն, Փարիզ, Վիեննա տեղեկացվում էր հատուկ զեկուցագրում։ Բաքվում, Ստավրոպոլում, Պետրովսկում թուրքական սպաների գործունեության մասին Լոնդոնից Փարիզ, 1918 թ. հունվարի 14-ին հայտնում էր Անգլիայում ֆրանսիական զինվորական կցորդ գեներալ Պանուսը[96]։ Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին փետրվարի 8-ին հայտնում էր. «էնվեր փաշան երեկ ասաց կայսերական և թագավորական զինվորական կցորդին, որ «թուրքական կողմից սպասվում է ապստամբություն Ռուսաստանի կովկասյան մարզերում»[97]։

Կովկասի իրավիճակի և Պարսկաստանի վրայով Կովկաս անցած թուրքական բանակի գլխավոր շտաբի սպաների՝ Բաքվում ծավալած գործունեության մասին Բեռլինում և Վիեննայում հայտնի դարձավ ռուսական գերությունից Բաքվի վրայով Գերմանիա հասած ավագ լեյտենանտ Դեզիդոր Բրանդների 1918 թ. հունվարի 24-ի զեկուցագրից։ «Թուրքական սպաները մուսուլմանական ազգային կոմիտեի հետ աշխատում են Արևելյան Կովկասում մահմեդական պետականություն ստեղծելու ուղղությամբ։ Բաքվում ազգային կառավարություն կազմելու ճանապարհին ծառանում է այն բարդությունը, որ մահմեդականները Ռուսաստանում զինապարտ չեն և այդ պատճառով չունեն զենք և ռազմական կազմակերպություն, մինչդեռ, հայերի և վրացիների գեպքում այլ վիճակ է։ Զորամասերը, որոնք կանգնած են ռազմաճակատում՝ Տրապիզոնից արևելք, մինչև Վանա լիճ (40 հազար մարդ), ռուսական զորամասերին փոխարինած հայկական գնդերն են։ Հայկական զորամիավորումների և մահմեդական ազգաբնակչության միջև գոյություն ունի շարունակական ընդհարում և պայքար։ Հայկական զորամասերի դեմ հանդես գալու համար բանակը զենքի կարիք ունի։ Այդ տեսակետից նրանք սպասում են թուրքերի և կենտրոնական իշխանությունների աջակցությանը»,— գրում էր Բրանդները։

Բրեստ-Լիտովսկի բանակցություններում Ավստրո-Հունգարական պատվիրակության անդամ կոմս Չեկին հաղորդում էր Վիեննա, որ Բրանդների գալու նպատակն է՝ կովկասի իրադրության մասին տեղեկություններ տալուց բացի, «աջակցել մուսուլմանական կոմիտեին զենքով և դրամով սատարելու պլանի իրականացմանը»։

Բրանդների զեկուցման մեջ խոսվում էր նաև Կովկասի՝ Ռուսաստանից անջատման, նրա անկախ քաղաքականության, Հայաստանի կարգավիճակի մասին։ Բրանդների զեկուցման մասին տեղյակ պահելով Ավստրո-Հունգարական կառավարությանը, կոմս Չեկին նախազգուշաց-

նում էր. «Հատկապես էնվեր և Թալեաթ փաշաների հետ հանդիպումն ժամանակ Հայաստանի հարցում լինել զգույշ, քանի որ շատ զգայուն ձևով շոշափվում են Թուրքիայի շահերը և մենք այստեղ պետք է անպայման հաշվի առնենք մեր դաշնակցի տեսակետը»[98]։

Հետախուզական աշխատանքները շարունակելու համար Բրանդենբուրը, իշխան Մաշաբելու և 6 մահմեդական լեռնականների հետ ուղարկվեց Կովկաս։ Այդ հարցում Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի զինվորական հրամանատարությունները գործում էին համատեղ[99]։

Այդ նույն օրերին, փետրվարի 6-ին, «Հորիզոնը» գրում էր. «Թուրքերն, իհարկե, ևս լավ գիտեին ինչ է մեզ մոտ կատարվում։ Գաղտնիք չէ, որ թուրքերը ավելի լավ գիտեն մեր գործերը, քան մենք, քանի որ անհերքելի ճշմարտություն է, որ Կովկասում վաստում են ոչ միայն թուրքական գաղտնի գործակալներ, այլև թուրքական սպաներ ու ասկյարներ, որոնք լույս օրով աշխատում են Թուրքիայի օգտին։ Թուրքական էմիսարներին չեն զիջում և գերմանական գործակալները, որոնք եռանդուն աշխատում են Թիֆլիսում՝ բարձր իշխանության քթի տակ։ Եվ, իհարկե, նրանք ծանոթացնում են իրենց կառավարություններին Ռուսաստանի ներքին վիճակի հետ»։

Վավերագրերը վկայում են, որ օգտվելով ռազմաճակատում ռուսական ուժերի կտրուկ անկումից, Անդրկովկասի կառավարության անկախության ձգտումներից, Գերմանիայի հովանու տակ գլուխ բարձրացրած Օսմանյան կայսրությունը լարել էր բոլոր չանքերը Կովկասում համաթրքության քարոզչության խորացման համար։ Նա ձեռնամուխ եղավ կովկասյան մուսուլմաններին զինելու հնարավորության դեպքում նրանց բացահայտ ելույթների կազմակերպմանը։ Անդրկովկասի մուսուլմանների ապստամբության կազմակերպման համար հատուկ գործուղված թուրքական էմիսարները և զգեստափոխված սպաները «անխոնջ աշխատում էին կովկասյան լեռնականների շրջանում, ռուսական Ադրբեջանում, հատկապես Բիլիզավետպոլում, Բաքվում և Հայաստանում։ Գերմանիայից, Թուրքիայից և այլ աղբյուրներից հոսում էր հսկայական գումար մուսուլմաններին զինելու համար։ Չենքի ձեռքբերումը դարձել էր ազգային մոլուցք։ Կանգ չէին առնում ոչ մի գնի առաջ»,— ասված է «Իրադարձությունները Բաքվում» փաստաթղթում։ «Ռուսական բանակը հետ էր քաշվում ամբողջ զորամասերով։ Ճակատը լքված էր վերջնականորեն և անհույս։ Թուրքերի հարձակման անցնելը ամենամոտ օրերի հարց էր և անդրկովկասյան թաթարները, իրենց ղեկավարների կողմից հրահրված, որոշեցին ամենահեռանդուն կերպով օգտագործել ժամանակը և ձեռք բերել ավելի մեծ քանակությամբ զենք ու ռազմամթերք»[100]։

Հաչի-Կաբուլից Աղստաֆա ընկած երկաթուղու տարածքում գտնվող թաթարական գյուղերի բնակիչները 1917 թ. դեկտեմբերի 18—24-ը հարձակվեցին երկաթուղային կառուցվածքների, պահեստների, արհեստանոցների, զինանոցների վրա, քանդուքարափ արեցին և թալանեցին

մեծ հարստություն։ Մայրահեղ լարված և քաոսային վիճակում Թիֆլիսից՝ խորհուրդների երկրային կենտրոնից, Բիլիզավետպոլ ստացվեց դիվային ցուցում՝ ռազմաճակատից հետ քաշվող ռուսական զորամասերի զինաթափման մասին։ Նոյ Ժորդանիայի ստորագրած փաստաթուղթը մուսուլմանական կոմիտեի կողմից ընկալվեց որպես ռուսական զորամասերի զինաթափման և կազմակերպվող մուսուլմանական կորպուսը սպառազինելու հրաման։ Եվ մուսուլմանական զանգվածներն անցան գործի, բացահայտորեն նետվեցին ռուսական շարժակազմերի վրա՝ նրանց զինաթափելու և զենքը գրավելու համար։ Այդ հողի վրա 1918 թ. հունվարի 9—13-ը զարգացան Շամխորի արյունալի իրադարձությունները։ Թաթարները Հաչի-Կաբուլ-Աղստաֆա գծի վրա ձեռնարկեցին նոր արյունալի սպանդ, նենգորեն ոչնչացրին մոտ 2000 ռուս զինվոր, թալանեցին մեծ թվով զենք, որով զինեցին վայրենի դիվիզիայի մնացորդների հիման վրա ստեղծված մուսուլմանական-իսլամական զորամասերը։ Այսպիսով, թուրքական ավազակախմբերը զենք ձեռք բերելու հարցը լուծեցին իրենց ավանդական ճանապարհով՝ թալանով և կոտորածներով։ Ընդհանուր խառնաշփոթի և չղաձգության մթնոլորտում չանասեր աշխատում էր թուրքական գործակալությունը, տարածվում էին չարամիտ սադրանքը, սրտաճմլիկ և անհեթեթ ասեկոսեների ալիքը։ Սադրիչները հավատացնում էին թաթարներին, թե ռուս զինվորները զենքը տանում են, որպեսզի այն ուղղեն իրենց դեմ, մուսուլմանների հողերը զավթելու և ռուսներով վերաբնակեցնելու համար։

Սադրանքը ավելի զորեղ էր, քան իրականությունը։ Այդ երևաց և հունվարի 11—12-ը Բիլիզավետպոլում կայացած բանակցությունների ժամանակ, որին մասնակցում էին թաթարական դիվիզիայի հրամանատար, գեներալ Լևան Մազալովը, Բիլիզավետպոլի «մուսուլմանական հեղափոխական կոմիտեի» ղեկավարները և Անդրկովկասի կոմիսարիատի զինվորական ներկայացուցիչները՝ ստեղծվող ազգային զորամասերին զենք բաշխող հանձնաժողովի նախագահ կապիտան Ստելկովսկու գլխավորությամբ։ Կտրուկ էր իր պահանջների մեջ Բիլիզավետպոլի «մուսուլմանական հեղափոխական կոմիտեի» նախագահ Ս. Սաֆիքյուրդսկին, ըստ որի, ամբողջ պատերազմի ընթացքում ռուսական բանակը ծաղրել է մուսուլմաններին, և այժմ, երբ «մուսուլմանները իրավունք են ստացել ունենալ իրենց բանակը, նրանք պետք է ունենան նաև զենք։ Մուսուլմանները մեղավոր չեն, որ ստիպված են բռնությամբ ձեռք բերել զենք, այն դեպքում, երբ կառավարությունը ի դեմս Կոմիսարիատի, չի կատարում իր խոստումը»։ Շարժակազմերի զինաթափման հարցում նա հենվեց Ժորդանիայի հեռագրի վրա և հայտարարեց. «Այն ժամանակ, երբ մեր կրտսեր եղբայրները՝ հայերը և վրացիները զինված են, Անդրկովկասի ժողովուրդների ավագ եղբայրը՝ մուսուլմանները, զենք չեն ստացել»[101]։

Բնորոշելով իրադարձությունները, «Իրադարձությունները Բաքվում» փաստաթղթի հեղինակները գրում էին. «Կովկասյան ռուսական ճակատի

տարերային քայքայման պայմաններում թաթարները, ընդհակառակը, որոշակի աշխատանք էին կատարում թուրքական ներխուժման օգտին, որը նրանց, բնական է, անմիջապես գնդակոծություն տվեց իրենց քրիստոնյա հարևանների՝ հատկապես հայերի նկատմամբ։ Թաթարները, որոնք ղեկավարվում էին իրենց գլխավոր քաղաքական կուսակցության՝ մուսավաթի կողմից, խորապես գիտակցում էին, որ որպես մուսուլմաններ, իրենք չեն կարող կռվել թուրքերի դեմ, առավել ևս այն պահին, երբ միանգամայն որոշակի էր նրանց մոտալուտ հայտնությունը ռուսական զորքի հեռացման պատճառով։ Հատուկ դեր խաղացին մուսուլմանական ազգայնական կուսակցությունները»[102], մասնավորապես մուսավաթը։

Քաջատեղյակ լինելով Անդրկովկասի իրավիճակին, թուրքական հրամանատարությունը զորքերի առաջշարժմանը զուգընթաց, քիկունքում խառնաշփոթ առաջ բերելու, ապստամբություն բարձրացնելու համար զինում էր նաև Երևանի, Թիֆլիսի, Բորչալուի, Ջանգեզուրի, Ղարաբաղի, Նախիջևանի, Գանձակի և այլ շրջանների մահմեդականներին։ Հայկական զորքերի ռազմաճակատ տեղափոխումը խափանելու համար նրանք պայթեցրեցին Երևան-Ջուլֆա երկաթգծի վրա եղած կամուրջը, հարձակվում էին Արագած-Էջմիածնին, Ուլուխանլու-Ղամարլու երկաթգծի շրջակայքի հայկական գյուղերի վրա, սպանում, թալանում մարդկանց, խոչընդոտում ճակատի հետ կանոնավոր կապ պահպանելուն, ռազմամթերք, օժանդակ ուժեր տեղափոխելուն, նպաստում Անդրկովկաս ներխուժելու պատրաստ թուրքական ուժերի առաջխաղացմանը։ Ներքին թշնամիների դեմ պայքարելու և ճանապարհները, բնակավայրերը պահպանելու համար հայկական զորքերի հրամանատարությունը ստիպված էր պահել մեծ ուժեր՝ մոտ 12 հազար մարդ։

Ջմասնակցելով Անդրկովկասի պաշտպանությանը՝ մուսավաթականները շարունակում էին պահանջել իրենց բաժին հանել ռուսական զորքի թողած ռազմամթերքից։ Ուլուխանլուի և Բոյուք Վեդու մահմեդական հոգևորականները հայտարարեցին Ջանգիբասարի և Վեդի Բասարի անկախ հանրապետություն՝ Մուխթարիաթ անունով։ Պարսկական Ադրբեջանի քրդերը Սմկոյի գլխավորությամբ անցել էին թուրքերի կողմը, պարսկական իշխանությունները փակել էին Թավրիզ-Ջուլֆա, մուսավաթականները՝ Բաքու-Թիֆլիս երկաթգիծը, Մակուի սարդարը՝ Մակուի վրայով Բայազետից դեպի Ջուլֆա-Շահթախթի գնացող երկաթգիծը։ Նրանք կազմակերպում էին հարձակումներ Սալմաստի հովտի բնակավայրերի, Դիլմանի քրիստոնյա բնակչության վրա[103]։ Միաժամանակ էին հանդես գալիս Շահթախթիի, Շարուրի, Նախիջևանի թաթարներն ու պարսկական քրդերի զինված չոկատները։ Փետրվարի 2—8-ը հայկական 6-րդ գնդի առաջին գումարտակի վրա հարձակվեցին 1000 զինված հրոսակներ՝ նպատակ ունենալով դուրս բերել հայկական չոկատը Շահթախթիից։ Գնդացրային կրակով գրոհը հետ մղվեց, թաթարները և քրդերը թողի դաշտում թողեցին 124 դիակ։ Մարտը վերջացավ հակառակորդի լրիվ

պարտությամբ։ Փետրվարի 18—19-ին ուժեղ մարտեր տեղի ունեցան Ուլուխանլուի մոտ՝ Աղհամզալու և Թազաքենդ գյուղերի շրջանում։ Այստեղ աչքի ընկան ենթասպա Մելիք-Բաբախանյանի, ենթասպա Մնացականյանցի և պրապորշիկ Ավետիսյանցի ղեկավարած վաշտերի զինվորները։ Մարտի 18—20-ը թեժ կռիվներ գնացին Սադարակի շրջանում։ Այստեղ աչքի ընկան 6-րդ գնդի հրամանատար գնդապետ Դոլուխանյանի ղեկավարած չոկատի մարտիկները, որոնք գրավեցին Սադարակը, Գայլի դռները, Կարա Բուրուն բարձունքը և Խանուխլար գյուղը, որը շրջապատված էր թաթարական գյուղերով[104]։

Հայերի վիճակը վատանում էր նրանով, որ երկաթգիծը գտնվում էր վրացիների և աղրբեջանցիների ձեռքին, որոնք հայերին չէին տրամադրում շարժակազմեր և վագոններ՝ ռազմաճակատ զորք և ռազմամթերք տեղափոխելու համար։ Շամխորի դեպքերից հետո կանգ առավ Բաքու-Թիֆլիս երկաթուղու աշխատանքը։ Դա անելանելի վիճակ ստեղծեց հայերի համար։ Ելիզավետպոլում գործող «Հանրային անվտանգության կոմիտեի» կողմից կազմակերպված և ղեկավարվող շրջակա մուսուլմանական գյուղերի բնակչությունից կազմված ավազակախմբերը ներխուժում էին գնացքները, հայտնաբերում նրանցում գտնվող հայերին, սպանում նրանց տեղում՝ հենց վագոնում, կամ դուրս հանելով՝ կառամատույցում[105]։ Այսպես և մարտ-ապրիլ ամիսներին[106]։

Այնտեղ, որտեղ հնարավոր չէր վերցնել ուժով, մուսավաթականները գործի էին դնում գիշերային հարձակումները, երկաթգծի փլուզումները, երթևեկության խափանումը, բռնությունը, թալանը, Գանձակի և Բաքվի նահանգների՝ քրիստոնյա բնակչությունից «մաքրագործումը»։ Այդպիսի «մաքրագործումներ» եղան Լենքորանում, Սալյանում, Մուղանի տափաստանում, Քուռ գետի առափնյա տարածքում հիմնված ռուսական բնակավայրերում՝ Պետրոպավլովկում, Վորոնցովկայում, Դաշկովոյում, Գալիցինոյում, ինչպես նաև Շամխորում, Նուխիում, Դերբենդում։ «Մաքրագործումը» կատարվում էր տաճկական էմիսարների մշակած ծրագրերով, մուսավաթի տեղական կոմիտեների ղեկավարությամբ։ «Բաքվի նահանգը քրիստոնյաների համար այդ ժամանակ դարձել էր դանթեյան դժոխք՝ ամեն տեղից ծուխ էր բարձրանում, ամեն տեղից լաց ու կոծ էր լսվում, ամեն քաղաքից ու շրջանից օգնություն էր խնդրվում,— գրում է Ս. Մելիք-Յոլչյանը,— թե վլադիկավկազյան և թե անդրկովկասյան երկաթուղիներն այլևս գոյություն չունեին քրիստոնյաների, մասնավորապես, հայերի համար։ Կոտորելով բոլոր կայարաններում եղած հայերին և քշելով ռուսներին, մուսավաթի կողմից կազմակերպված խմբերը որսկան շների պես մտնում էին բոլոր անցնող գնացքները, խուզարկում զարմանալի եռանդով և գտնելով իրենց «որսը», դուրս էին բերում կայարանների կառամատույցներ և խելագար հրճվանքով բռնված ամբոխի առաջ կոտորում էին նրանց»[107]։

Գեներալ Նազարբեկյանի վկայությամբ, պատժիչ նպատակով Երևանի նահանգում ձեռք առած միջոցառումները այդ չարիքը վերաց-

նում էին ժամանակավորապես և վերջապես, Թիֆլիսում, Սեյմում և կառավարությունում գտնվող մուսուլմանների շրջանում առաջացնում հակահայական աղմուկ։ Մեղադրում էին իշարկե, միայն հայերին, որպես գլխավոր նախաձեռնողների։ Մինչդեռ, յուրաքանչյուր ողջամիտ մարդ կարող էր հասկանալ, որ այստեղ գործում է նախօրոք նախապատրաստված ինչ-որ ուժ[108]։

Այդ ուժը մուսավաթն էր, Սեյմում ներկայացված մուսուլմանական բլոկը։ «Իրադարձությունները Բաքվում» վավերագրում ասված էր. «Անդրկովկասի թաթարները Թիֆլիսյան կառավարությունում ունեն իրենց մշտական ներկայացուցիչները՝ ի դեմս մուսավաթի կուսակցության։ Այդ կուսակցությունը հետապնդում է խիստ և հետևողական ազգային նպատակ, պլանաչափ և անշեղ ձգտում քրիստոնյաներից մուսուլմանների անջատման և այսպես կոչված թուրքական կողմնորոշման որոշակի դրսևորում։ Շամխորի դեպքերից և հատկապես այն բանից հետո, երբ թուրքերը 1918 թ. հունվարի 30-ին խախտեցին զինադադարը և առաջ շարժեցին զորքերը դեպի Բաքու և Էրզրում, թաթարները դադարեցին թաքցնել իրենց տակտիկան և լարեցին բոլոր ուժերը մի նպատակի հասնելու՝ Անդրկովկասի բոլոր մուսուլմաններին գլխովին զինելու համար»[109]։

Մուսավաթի ղեկավարների գլխավոր նպատակն էր բոլոր միջոցներով թուլացնել այդ ժամանակ կազմակերպվող Հայկական բանակին կորպուսի ռազմական դիմադրությունը թուրքերին, խանգարել հետսիրից եկող հայ զինվորների՝ Անդրկովկաս մտնելուն։ Պետրոգրադում Հայկական զինվորական կոմիսար գեներալ Հակոբ Դերասիմի Բագրատունու ջանքերով Արևմտյան ճակատից և Իռւսաստանի տարբեր զինվորական օկրուգներից Կովկաս՝ թուրքերին դիմակայելու համար հավաքագրվել էր մինչև 40 հազար հայ զինվոր ու սպա։ Հայկական զինվորական կոմիսարիատը և Հայոց Ազգային խորհուրդը ներկայացուցիչներ ունեին Մոսկվայում, Կիևում, Խարկովում, Իռւստովում և այլ վայրերում։ Հայոց Ազգային խորհրդի միջնորդությամբ ազատվելով բանտից, Բագրատունին Բաքու եկավ մարտի սկզբին, Իռւստովի հետ նա կազմակերպեց չոկատներ ճանապարհը բացելու և դեպի Հայաստան առաջ շարժվելու համար։ Ծրագրվում էր ապրիլի սկզբներին ուղարկել մի շարք շարժակազմեր, բացել և գրավել ամբողջ Բաքու-Ելիզավետպոլ գիծը։ Մարտի 15-ին Բագրատունին ժամ վիրավորվեց թուրքական դարանակալ գործակալների կողմից, կորցրեց մեկ ոտքը[110]։

Թուրքական ճակատ ուղարկելու համար կամավորական չոկատներ և Հայկական առանձին կորպուսի զորամասեր կազմակերպելու նպատակով տարբեր ռազմաճակատներ և խոշոր հայաբնակ վայրեր գործուղվեցին ազգային խորհրդի լիազորներ։ Բաքու գործուղվեց Խնուսի չոկատի նախկին պետ, պատերազմի առաջին տարիներին փառաբանված 3-րդ Հայկական կամավորական չոկատի հրամանատար Համազասպը։ Նրան հաջողվեց կարճ ժամանակում Բաքվում ձևավորել կամավորական գու-

մարտակ և 2-րդ հայկական պահեստային գունդը։ Համազասպին մեծ օգնություն էր ցույց տալիս 70 հոգուց բաղկացած Բաքվի Հայոց Ազգային խորհուրդը, որի գործադիր մարմնի մեջ մտնում էին տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ՝ դաշնակցության անդամներ Ա. Դյուլխանդանյանը, Ս. Արարատյանը, Ս. Չիլինգարյանը, ժողովրդական կուսակցությունից Հ. Տեր-Միքայելյանը, Ս. Տեր-Ղազարյանը, սոցիալ-հեղափոխական Լ. Աթաբեկյանը, սոցիալ-դեմոկրատ Ղ. Տեր-Ղազարյանը։ Խորհրդի նախագահը Ա. Դուլխանդանյանն էր, քարտուղարը՝ Չիլինգարյանը։ Զինվորական խորհուրդը ղեկավարում էր բժշկապետ Թադևոս Զաքարյանը, զինվորական շտաբը՝ հանասորի հերոս Վարդանը։

Ազգային խորհուրդը աշխատանք էր տանում և գերմանական ու ավստրո-հունգարական ռազմաճակատներից զորացրված հայ զինվորներին ազգային բանակ զորակոչելու ուղղությամբ։ Նրանց մի մասը Սև ծովի վրայով գալիս էր Թիֆլիս, այնտեղից Հայաստան, մյուս մասը՝ Վլադիկավկազյան երկաթուղով Բաքու՝ այնտեղից Հայաստան, գլխավորապես Ղարաբաղ և Զանգեզուր անցնելու համար։

Զորամասերն արդեն պատրաստ էին Հայաստան մեկնելու, թուրքական ճակատից հեռացող ռուսական զորքերին փոխարինելու համար, սակայն դրան խանգարում էր թուրքական էմիսարների կողմից հրահրված տեղական մահմեդականների սաբոտաժը։ Ճանապարհները փակ լինելու պատճառով չէր կարողանում թուրքական ճակատ զենք և զինամթերք տեղափոխել և Կովկասյան բանակի հեղափոխական կոմիտեն։ Բաքվում կանգ էր առել նաև փետրվարի 6-ին Պետրոգրադից այստեղ հասած զինվորական սանիտարական գնացքը, որը տրամադրված էր Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին՝ Կովկասյան ճակատ ուղարկելու համար։ Ազգային խորհուրդն իր ուժերը կենտրոնացրեց Էնզելի, Ռեշտ, Ղազվին, Թեհրան, Համադան, Քիրմանշահ և պարսկական այլ քաղաքներում տեղակայված գեներալ Բարաթովի զորքի մի մասը հավաքագրելու և ռազմամթերքը Բաքու տեղափոխելու համար[111]։

Բաքվի Հայոց Ազգային խորհրդի (նախագահ Ա. Դյուլխանդանյան) բոլոր ջանքերը, մուսուլմանական ազգային խորհրդին ներկայացված առաջարկները՝ բացել ճանապարհները, թույլ տալ զինվորներին գնալ տուն, անցան ապարդյուն։ Անպատասխան մնաց և Բաքվի Ազգային խորհրդի մարտի 13-ի դիմումը՝ ուղղված Սեյմի բոլոր քաղաքական խմբակցություններին։ Այն տպագրվեց «Բաքու» թերթում։ Պահանջվում էր շտապ բացել Բաքու-Թիֆլիս երկաթգիծը, հնարավորություն ստեղծել Բաքվում կուտակված հազարավոր հայ զինվորներին Կովկասյան ճակատ ուղարկելու համար։ «Կան որոշակի տվյալներ, որ Բաքու-Թիֆլիս ճանապարհը փակված է Թիկունքում անիշխանությունը ավելացնելու և դրանով իսկ Կովկասյան ճակատի պաշտպանությունը դժվարացնելու համար»,— ասված էր դիմումում։ Պահանջվում էր նաև վերջ տալ այդ ճանապարհի վրա հայերի նկատմամբ կիրառվող բռնություններին։

Ապարդյուն անցան նաև Բաքվի Բանվորների, զինվորների և նավաստիների խորհրդի գործկոմի ջանքերը։ Այդ ժամանակ Բաքվի խորհուրդն ուներ մոտ 300 պատգամավոր, որոնցից 60-ը բոլշևիկներ էին, 55-ը՝ դաշնակցականներ, 52-ը՝ մուսավաթականներ, 50-ը՝ ձախ սոցիալ-հեղափոխականներ, 45-ը՝ աջ սոցիալիստ-հեղափոխականներ։ 30 հոգուց բաղկացած գործադիր կոմիտեում ընտրված էին յուրաքանչյուր կուսակցությունից 5-ական ներկայացուցիչներ։ Նախագահը բոլշևիկ Ս. Ջափարիձեն էր, փոխնախագահը՝ դաշնակցական Ա. Առաքելյանը, քարտուղարները՝ ձախ էսեռ Դենեժկինը, մուսավաթական Վեքիլովը[112]։ Գործադիր կոմիտեի ռազմահեղափոխական կոմիտեն ղեկավարում էր բոլշևիկ Սուխարցևը։ Վերջինիս հետ վիճաբանությունների մեջ էր Ռասուլ-զադեն՝ մուսավաթի ղեկավարը։

Հայկական զորամասերի կազմակերպումից հետո մուսավաթի պարագլուխը Բաքվի խորհրդի գործկոմի նիստում պահանջեց ցրել հայկական զորամասերը, Սալյանի գնդի զինամթերքի և զենքի մի մասը հանձնել իրենց,հակառակ դեպքում սպառնալով այն վերցնել ուժով։ Գործկոմի նիստում Սուխարցևը հայտարարեց. մուսավաթականները «ուզում են Բաքվի աշխատավորության ոչնչացում և կոտորած, այդ մենք չենք թույլատրի»։ Ստանալով մերժում, Ռասուլ-զադեն և Քյազիմ-զադեն հրաժարվեցին մասնակցելու գործկոմի նիստերին։ Զինապահեստների վրա հաճախակի դարձած մուսավաթականների հարձակումների պատճառով զենքի պահեստները տեղափոխվեցին հայկական թաղամաս։

Ակտիվացրեց իր գործունեությունը մուսավաթը։ Փետրվարի 24-ին Գանձակից Բաքու հասավ վայրի դիվիզիայի գեներալ Թալիշինսկու ղեկավարած շտաբը։ Նրան քաղաք մտնել չթույլատրվեց։ Միջամտեցին Նարիմանովը և էսեռ Վեզիրովը։ Քաղաք մտած կազմակերպված վաշտերը Շեմախինսկի թաղամասում անցկացրեցին զորավարժություններ։ Գործկոմի թույլտվությամբ գունդ կազմակերպվեց Լենքորանում։ Այդ գնդի համար մուսավաթը պահանջեց թնդանոթներ, գնդացիրներ, այլ տեսակի զենքեր և հանդերձանք։ Զենք պահանջվեց և քաղաքում կազմակերպվող ադրբեջանական խմբերի համար, որոնք իբր թե, «պետք է պաշտպաններին թրքությանը հայերի կողմից սպասվելիք հարձակումից»[113]։ Մուսավաթի նպատակը մեկն էր՝ Բաքվում իշխանության նվաճումը, անկախ Ադրբեջան հայտարարելը։ Մուսուլմանական ազգային խորհուրդը մուսուլմանական զորամասեր էր կազմակերպում Գյանջայում, Ղարաբաղում, Շամախում, զենք, զինամթերք ձեռք բերում կողպուտով ու թալանով։

«Մուսուլմանական կազմակերպություններին Բաքու քաղաքում պաշտպանում էր մուսավաթը,— գրում է գեներալ Իվան Սերգեյի Բագրամովը,— մուսավաթը Հայոց Ազգային խորհրդի հետ արտաքուստ պաշտպանում էր բարիդրացիական հարաբերություններ։ Մուսավաթի նկատմամբ Ազգային խորհրդի բարեկիրթ մոտեցումը, սակայն, չեղմեց

դրությունը։ Մուսավաթի գաղտնի քշնամական վերաբերմունքը հայկական կազմակերպությունների նկատմամբ շատ էր զգացվում, քանզի թուրքասիրական քաղաքականությունը բացահայտ արտահայտվում էր մուսավաթի կողմից, որը գտնվում էր մշտական կապի մեջ Ելիզավետպոլի և Դաղստանի մուսուլմանական կազմակերպությունների հետ, որոնք նույնպես ձգտում էին միանալ Թուրքիային։ Ամբողջ իշխանությունը ձեռքում կենտրոնացրած խորհրդային իշխանությունը մուսավաթը, ըստ էության, չէր ուզում ճանաչել, չնայած ամբողջապես իրր թե ենթարկվում էր։ Այդ երկու կազմակերպությունների միջև կացությունը քշնամական էր և ծայրահեղ լարված, ընդհարում նրանց միջև կարելի էր սպասել ցանկացած պահին։ Մուսավաթը ատրճ էր փնտրում իր ցանկությունը կատարելու համար։ Եվ այն իրեն երկար սպասել չտվեց»[114]։

Այդպիսի առիթ հանդիսացավ հայտնի մեծահարուստ Հաջի Թադևի որդու՝ վայրի դիվիզիայի 23-ամյա սպայի ինքնասպանությունը Լենքորանում։ Դիակը «էվելինա» նավով տեղափոխվեց Բաքու. ուղեկցում էր մոտ 50 զինվորից բաղկացած զինված պահակախումբ, որը զենաթափվեց խորհրդային իշխանության կողմից՝ նրա ներկայացուցչին չենթարկվելու և կրակ բացելու համար։ Զինաթափումը իրականացվեց ռազմա-հեղափոխական կոմիտեի կողմից՝ Հայոց և Մուսուլմանական ազգային խորհուրդների պատվիրակությունների միջնորդությամբ։ Այդ հանգամանքը առաջ բերեց մուսավաթի դժգոհությունը։ Երկու կողմերին հաշտեցնելու և միջադեպը վերացնելու համար Հայոց Ազգային խորհուրդը առաջարկեց որպես բռնագրավված զենքի փոխհատուցում տալ իր զենքը։ Մուսավաթը մերժեց։ Նշանակվեց բանակցություններ ժամ մուսավաթի և խորհրդային իշխանության միջև՝ 1918 թ. մարտի 17-ին, ժամը 6-ին։ «Սակայն չսպասելով որոշ,— գրում է գեներալ Բագրամովը,— իրենք՝ թուրքերը, նույն օրը, ժամը 5-ին սկսեցին թշնամական գործողություններ։ Չնայած դրան, Հայոց Ազգային խորհուրդը միջոցներ ձեռք առավ այդ ծայրահեղ անցանկալի միջադեպը կանխելու համար, բայց իր նպատակին չհասավ։ Սկսվեցին թշնամական գործողությունները, որոնք շարունակվեցին օր ու գիշեր, սկսած մարտի 17-ի ժամը 5-ից մինչև մարտի 20-ի առավոտյան, երբ այդ գործողությունները ավարտվեցին թուրքերի լրիվ պարտությամբ»։ Քաղաքի վրա հարձակմանը մասնակցում էին շրջակա 32 գյուղերից հավաքված մուսավորապես 25 հազար հրոսակներ։ Ինքնապաշտպանական միջոցներ ձեռք առան հայերը։ Հայոց Ազգային խորհրդի ստեղծած պաշտպանության շտաբի կողմից հայկական թաղամասերը բաժանվեցին տեղամասերի, նշանակվեցին տեղամասերի պետեր, ճշտվեցին հավաքակայանները, ուր պետք է հավաքվեին տեղամասի զինված բնակիչները, հայկական զորամասերի համար ընտրվեցին դիրքեր, նշանակվեցին հրամանատարներ, տեղ ընտրվեց հրետանու համար. անհրաժեշտ էր փակել բաղաք ներխուժող թաթարական նոր ուժերի առաջխաղացման ճանապարհները։ «Հայոց Ազգային խորհուրդը Բաքվի խորհրդային իշխանության հետ

էր,— գրում է գեներալ Բաղրամովը,— առաջին հերթին, որովհետև խորհրդային իշխանությունը միակ ռուսական իշխանությունն էր, որը հայերը ճանաչում էին, և բացի դրանից, բոլոր անհրաժեշտ սննդամթերքը, հանդերձանքը, զենքը, ռազմապաշարը գտնվում էր խորհրդային իշխանության ձեռքին, որից և կախված էր դրանց ստացումը: Խորհրդային իշխանության տրամադրության տակ գտնվում էին զինված ուժը, Կասպից ծովի ամբողջ նավատորմը, հրետանին և այսպես կոչված Կարմիր բանակի հետևակային զորամասերը: Նրա շարքերում էին ռուսական Արևմտյան ճակատից, Պարսկաստանից և Հյուսիսային Կովկասից եկած շատ հայ զինվորներ[115]:

Պաշտպանության հայկական շտաբը, որը ղեկավարում էին գեներալներ Բաղրամովը և Բագրատունին, փոխգնդապետ Հարությունյանին նշանակեց Բաքվի պաշտպանության պետ, շտաբի պետն էր շտաբս-կապիտան Սարգիս Մուսայելյանը: Իվան Բաղրամովը գեներալ էր 1912 թվականից, հմուտ շտաբային զորական. Նա ռուսական բանակի գլխավոր շտաբի զորահավաքի բաժանմունքի պետն էր: 1914—1915 թթ. եղել էր 500-հազարանոց զորախմբերի (12 կորպուս) հերթապահ գեներալ: 1918 թ. փետրվարին եկել էր Բաքու, ապա Թիֆլիս, որտեղ ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում Հայկական ազգային բանակի կազմակերպմանը: Հայերի պաշտպանության ուժերը կազմում էին 2-րդ հայկական պահեստային գունդը՝ բաղկացած 4 վաշտից, մոտ 700 հոգի, Համազասպի առաջին պարտիզանական ջոկատը՝ մոտ 800 մարդ, դաշնակցության ջոկատը՝ մոտ 500 մարդ, չորս թնդանոթ, հինգ գնդացիր՝ Ե. Գաղլավունու և Ի. Տեր-Ղազարյանի ղեկավարությամբ: Քաղաքի պաշտպանները բաժանվեցին վեց մասի՝ տեղամասերի պետերն էին շտաբս-կապիտաններ Արամ Դովլաթյանը, Լալաևը, Ամիրջանովը, պորուչիկ Կրիկորյանը, Սերգոն (Համազասպի օգնականը), Գրիգորյանցը[116]: Հայկական զորամասերի և խորհրդային բանակի կողմից շատ փողոցներ վերածվել էին բարիկադների և խրամատների, որտեղից Կարմիր բանակի ուժերը երկայնքով մեկ գնդակոծում էին փողոցները: Հրետանային, գնդացրային և հրացանային կրակը ճարճատում էր կռվի ամբողջ ընթացքում՝ ինչպես քաղաքում, այնպես էլ ծայրամասերում: Կռիվներին մասնակցում էին նոր կազմավորված խորհրդային ինտերնացիոնալ գունդը, սոցիալիստական գունդը, հեծյալ հարյուրյակը, զինվորական հրահանգիչների դպրոցը, բոլշևիկյան կուսակցության Բաքվի կոմիտեի մարտական ջոկատը, հրետանային թեթև մարտկոցը: Մուսավաթական խռովության դեմ պայքարը գլխավորում էր մարտի 19-ին ստեղծված Բաքու քաղաքի հեղափոխության պաշտպանության կոմիտեն՝ Շահումյանի գլխավորությամբ: Կոմիտեի կազմում էին Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Գ. Կորգանովը, Բաքվի խորհրդի նախագահ Ա. Ջափարիձեն, Բաքվի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Ի. Սուխարցևը, ձախ էսեռ Ս. Սահակյանը, դաշնակցական Ս. Մելիք-Յոլչյանը:

Խորհրդային բանակի և նավատորմի հրետանու հուժկու հարվածների տակ ոչնչացվեցին խռովարարների հենակետերը, մուսուլմանների զինված ուժերը թողեցին քաղաքը, ցրվեցին շրջակա գյուղերում: Մարտյան եռօրյա մարտերում նրանք տվեցին մոտ 2000 զոհ: Խորհրդային կողմից զոհվեց մի քանի հարյուր մարդ: Պաշտպանական մարտերում զոհվեցին 5-րդ վաշտի հրամանատար շտաբս-կապիտան Աղաբեկյանը, պրապորշչիկ Տեր-Միքայելյանը, հին հայդուկ Մինասը: Զոհվեցին հաշտության առաքելությամբ մուսավաթականների մոտ գնացող Լևոն Աթաբեկյանը, Դենեժկինը, Աղաևը: Հակառակ մուսուլմանական կազմակերպությունների հրահրած ազգամիջյան կոտորածներին, հայ ռազմիկները Հայոց Ազգային խորհրդի ջանքերով փրկեցին ոչ միայն հայ բնակչությանը, այլև 14 հազար թաթարների և պարսկահպատակների կյանք: Մեծահարուստ Հաջի Թաղիևը, որը հայերի կողմից փրկվածների մեջ էր, մամուլի միջոցով հայերին հայտնեց հատուկ շնորհակալություն[117]:

Բաքվում ամրապնդվեց խորհրդային իշխանությունը, ապրիլի 12 (25)-ին կազմավորվեց Ժողկոմխորհը Ստեփան Շահումյանի ղեկավարությամբ: «Բոլշևիկները մարտի 30-ից հետո ամրապնդեցին իրենց իշխանությունը, երբ ակնհայտ դարձավ կոշտ և ամուր պետական մարմնի անհրաժեշտությունը,— գրում է գեներալ Բագրատունին,— հենց այն հանգամանքը, որ բոլշևիկները բոլորից շատ ցուցաբերեցին ակտիվ և մճռական գործունեության ունակություն, նաև այն, որ նրանք էին իրականացնում կապը մնացած Ռուսաստանի հետ, մյուս կուսակցությունները և կազմակերպությունները լինելով մեծամասնություն, վերջնականապես ճանաչեցին Ժողկոմխորհի իշխանությունը»[118]:

Մուսավաթականների ղեկավարները փախչելով Գանձակ, աշխատանք տարան Գանձակի և Դաղստանի մուսուլմանական կազմակերպությունների կապը ավելի սերտացնելու համար: Դեպի Թուրքիա ձգտող մուսավաթը և մյուս մուսուլմանական կազմակերպությունները քարոզում էին, թե ամեն ինչում մեղավոր են հայերը: Բաքվի խռովությունը հայ դաշնակների գործն է՝ դաշնակ համարելով Շահումյանին, Ավագյանին, սոցիալիստ-հեղափոխական Սահակյանին: «Դաշնակներ Շահումյանը, Սարո Սահակյանը և Ավագյանը սոցիալիստների դրոշի տակ մտնելով խորհուրդ, ջանում էին արգելել մուսուլման բանվորների մուտքը խորհրդի կազմ: Հանքավայրերում և գործարաններում կազմավորվում էր Կարմիր բանակ: Նրանում ցուցակագրվում էին և հայեր, և ռուսներ, և մուսուլմաններ, սակայն այդ վերջիններին չէին ընդունում: Կարմիր բանակը գրեթե գլխովին բաղկացած էր հայերից, որի գլուխ կանգնած էր դահիճ Ավագյանը»[119],— գրում էր «Ազերբայջան» թերթը, չթաքցնելով իր ատելությունը:

Բոլշևիկների կողմից հայ զինվորների հանդես գալը մուսավաթականներն օգտագործեցին մտացածին լուրեր տարածելու, բոլշևիզմը որպես հայկական երևույթ և հակաթուրքական շարժում ներկայացնելու

համար։ Նրանք տարածում էին ստահող լուրեր, թե հայերի և բոլշևիկների միասնությունը «սպառնում է ամբողջ Ադրբեջանի, գուցե և Վրաստանի ֆիզիկական գոյությանը»։ Այդ մտքերը մուսավաթականները զարգացրին նաև Անդրկովկասի Սեյմի 1918 թ. մարտի 20-ի նիստում։ «Բոլշևիզմը և բոլոր ազգությունները գնացին մուսուլմանների դեմ, մուսավաթից հետո հերթը Անդրկովկասի կառավարությանն է»,— հայտարարեց Սաֆիբյուրդսկին։ Նա պահանջեց վերջ տալ «բոլշևիկյան բռնությանը»։ Անդրկովկասին հարավից վտանգ չի սպառնում, այնտեղ կանգնած են թուրքական զորքերը, այլ «անմիջական վտանգ Անդրկովկասին սպառնում է հյուսիսից,— հայտարարեց Ռասուլ-զադեն,— մեր դեմ այնտեղից գալիս են հրով և սրով, հարկավոր է ամեն միջոցներով ոտքի ելնել բոլշևիկների դեմ, հյուսիսի ճնշման դեմ, որը կարող է կոտրել մեր ինքնուրույնությունը և մեր համերաշխ կյանքը»[120]։

Իրադարձությունների գնահատականը տվեց Ստեփան Շահումյանը։ Ապրիլի 19 (մայիսի 1)-ին Բաքվի խորհրդի նիստում Շահումյանը բացատրեց. «Վայրի դիվիզիայի Բաքու տեղափոխելու փորձերը բոլորին հայտնի են, ագրեսիվ և հարձակողական էր պահում իրեն խանների և բեկերի կազմակերպությունը։ Մենք բավական ուժեղ էինք, որպեսզի ընդունեինք նրանց մարտահրավերը։ Հետևանքները ցույց տվեցին, որ մենք չսխալվեցինք։ Մեր քաղաքի ազգային կազմը մեզ վախեցնում էր։ Մենք երկյուղում էինք, որ պայքարն անցանկալի գունավորում կստանա։ Մենք անգամ ստիպված էինք դիմել հայկական գնդի օգնությանը։ Մենք նույնիսկ չէինք կարող մեզ թույլ տալ այդպիսի շռայլություն՝ հրաժարվել նրանց ծառայություններից։ Անհրաժեշտ էր օգտվել հայկական գնդի ծառայություններից և հաղթանակը այնքան խոշոր է, որ քիչ է մթագնում իրականությունը»[121]։

Գանձակում և Թիֆլիսում Խան-Խոյսկին, Ուսուբեկովը, Ջիվանշիրը, Հաջինսկին, Մելիք-Ասլանովը, Ջաֆարովը, Թոփչիբաշևը և մուսավաթի մյուս ղեկավարները ձեռնամուխ եղան մուսուլմանական զորամասեր կազմակերպելու գործին։ Նրանք համագործակցում էին Շամախում, Ղուբայում, Լենքորանում, Սալյանում գործող մուսուլմանական ուժերի հետ։ Կազմակերպվեց Բաքվի վրա նոր հարձակում, իրականացավ Ռամիշվիլու «գաղտնի» քայլը. որի մասին Սեյմի մարտի 20-ի նիստում նա հայտարարել էր. «Շատ պատճառներով, որոնք միանգամայն հասկանալի են Սեյմին, ինքը հնարավոր չգտավ ծավալվել այն ամենի մասին, որոնք ձեռնարկվում են կառավարության կողմից Բաքվի հարցում»։

Բաքվի վրա արշավող ընդհանուր ուժերի հրամանատար նշանակվեց վրացի գեներալ Լևան Մազալովը. նրա հրամանատարության տակ դրվեց մոտ 5000 զինվորներով դիվիզիա, վրացական հեծելազոր։ Դուրս գալով Գանձակից, այդ զորամասերը մարտի վերջերին հասան Հաջիկաբուլ։ Մուսավաթականների մի մասը գեներալ Թալիշինսկու գլխավորությամբ շարժվեց դեպի Խուրդալար։ Բաքվի վրա հարձակմանը վճռական դեմ արտահայտվեցին բոլոր քաղաքական կուսակցությունները,

բացառությամբ մուսավաթի։ Սեյմի անդամ Տեր-Ղազարյանը Բաքվից հեռագրում էր Թիֆլիս. «Մարտի 21-ից Բաքվում հանգիստ է։ Երեկ տեղեկություն ստացանք Բալաջարից հյուսիս գտնվող Խուրդալար կայարանից Դաղստանից հեծյալ գնդի գալու մասին։ Գունդն այսօր մարտական գործողություններ ծավալեց Բինադադի ուղղությամբ։ Տեղեկություններ կան Բաքվի վրա Թիֆլիսից զորամասերի և Ելիզավետպոլից զինված մուսուլմանների առաջխաղացման մասին։ Առանց բացառության, բոլոր սոցիալիստական, դեմոկրատական, հեղափոխական կուսակցությունները միավորվել են պատգամավորների Բաքվի խորհրդի հետ՝ Բաքվի շրջանի պաշտպանության համար։ Բաքվի դեմ Սեյմի ուժերի որևէ ելույթ անթույլատրելի է»[122]։

Սեյմի մուսուլմանա-վրացական միացյալ զինված ուժերին դիմակայելու համար Հայոց Ազգային խորհրդին կից ստեղծվեց շտաբ։ Պաշտպանության պլանը մշակվեց գեներալներ Բագրամովի և Բագրատունու կողմից։ Շտաբի պետ նշանակվեց փոխգնդապետ Հարությունյանը։ Թշնամու դեմ կանգնեցին Բաքվում կազմակերպված հայկական զորքերը՝ մոտ 3000 զինական կազմով։ Նրանց թվում էր Համազասպի 2-րդ կամավորական գումարտակը և շտաբս-կապիտան Սարգիս Մուսայելյանի ղեկավարած թիվ 2 զրահագնացքը։ Ապրիլի 1-ին ութժամյա համառ մարտերից հետո հայկական զորամասերը մտան Հաջի-Կաբուլ կայարանը։ Մարտեր սկսվեցին Զուբովկա-Հաջի-Կաբուլ-Ղուբա երկաթգծի շրջակայքում։ Եռօրյա մարտերում միայն շտաբս-կապիտան Օրբելյանի ղեկավարած 16-րդ գումարտակի 3-րդ վաշտը շարքից հանեց թշնամու մոտ 200 զինվոր։ Ապրիլի 8-ին հայկական ուժերը գրավեցին Խուրդալարի բարձունքները։ Աչքի ընկավ Թադևոս Ամիրյանի հեծելազորի ջոկատը՝ Ռ. Սաֆարյանի ղեկավարությամբ[123]։ Մեկշաբաթյա մարտերը վերջացան հայկական զորախմբի հաղթանակով. Մաղալովի զորքերի մնացորդները նահանջեցին Գանձակ և Վրաստան։

Չնայած հաղթանակին, վստահություն չկար, որ մարտյան իրադարձությունները, ապա դրանց հաջորդած դեպքերը խելքի կբերեն մուսավաթականներին. շատ որոշակի զգացվում էր թուրքերի ազդեցությունը և քարոզչությունը։ Այդ պատճառով Բաքվի Ազգային խորհուրդը որոշեց իր զորքերով գրավել թուրք-թաթարական ազգայնականների գլխավոր բունը՝ Գանձակը, բացել երկաթուղային ճանապարհը թուրքերի դեմ կռվող նոր կազմավորված Հայկական կորպուսին օգնության հասնելու համար։

Համազասպին հանձնարարվեց կազմակերպել 4 գումարտակից, հեծյալ դիվիզիոնից և 2 մարտկոցից բաղկացած բրիգադ, որի հիմքում 16-րդ գումարտակն էր։ Բրիգադը ստացավ համար 3 թիվը։ Կազմավորվեցին թիվ 16, 17, 18, 21 գումարտակները՝ յուրաքանչյուրը 1200 զինվորով, մեկ հեծյալ դիվիզիոն, երկու մարտկոց։ Գումարտակները կրում էին Ղարաբաղյան, Զանգեզուրյան, Երևանյան և այլ անուններ, կախված զինվորների կազմից։ Ազգային խորհրդի մտահղացմամբ, նրանք

պետք է շարժվեին Թիֆլիս, այնտեղից Հայաստան, թուրքերին դիմակայելու համար։ Հայ զինվորության շրջանում աշխատանք էին տանում Բաքվի խորհրդի դաշնակցության խմբակցության 25 անդամներ, հայ կոմունիստներ, սոցիալիստ-հեղափոխականներ։

Բրիգադի հրամանատարը Համազասպն էր, օգնականը՝ Սերգո Մանուչարյանը, շտաբի պետը՝ շտաբս-կապիտան Ս. Մուսայելյանը, Անաստաս Միկոյանը բրիգադի կոմիսարն էր։ Գումարտակների հրամանատարներ նշանակվեցին 16-րդի՝ կապիտան Դովլաթյանը, 17-րդի՝ շտաբս-կապիտան Չիլինգարյանը, 18-րդի՝ շտաբս-կապիտան Խոսրոևը, 21-րդի՝ շտաբս-կապիտան Օրբելյանը։ 5-րդ թեթև մարտկոցի հրամանատար նշանակվեց պորուչիկ Արղումանյանը, 3-րդ մորտերային մարտկոցի՝ պորուչիկ Չալիյանը։ 30 գնդացրից բաղկացած ջոկատի հրամանատար նշանակվեց կապիտան Դոնդուրովը, հեծյալ դիվիզիոնի հրամանատար՝ Ռ. Սաֆարյանը։ Բրիգադի կապի պետը պորուչիկ Չիչինյանցն էր։ Զենք և հանդերձանք ձեռք էր բերվում Հայոց Ազգային խորհրդի միջոցներով[124]։

1918 թ. ապրիլի 13 (26)-ին, ի կատարումն Բաքվի խորհրդի որոշման, Բաքու քաղաքի հեղափոխական պաշտպանության կոմիտեն և Հայոց Ազգային խորհուրդը վճռեցին հայկական զորամասերը վերակազմավորել և նրանց մացնել նոր կազմակերպվող Կարմիր բանակի կազմի մեջ։ Ստ. Շահումյանի, Գ. Կորգանովի (Բաքու քաղաքի հեղափոխական պաշտպանության կոմիտե) և Ա. Գյուլխանդանյանի, Ի. Տեր-Օհանյանի, Հ. Տեր-Ղազարյանցի (Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ) ստորագրած որոշման մեջ ասված է. 1. Հայկական ազգային երկրորդ հետևակ գունդը վերակազմավորվում է. նրա մի մասը մտնում է Համազասպի գումարտակների մեջ, մյուս մասը ձուլվում է ձևավորվող Կարմիր խորհրդային գումարտակի հետ։ 2. Համազասպի գումարտակները վերակազմավորվում են, ամբողջապես ենթարկվում են խորհրդային իշխանությանը և մտնում են Կարմիր բանակի կազմի մեջ՝ Կարմիր բանակի 16 և 17-րդ գումարտակներ անվան տակ։ 3, 16 և 17-րդ գումարտակների ընդհանուր հրամանատար նշանակվում է Համազասպը։ 16-րդ գումարտակի հրամանատար նշանակվում է Սերգոն, 17-րդ գումարտակի հրամանատար Չիլինգարյանը։ 4. Համազասպի գումարտակների խնդիրն է՝ պատրաստվել Արևմտյան ուղղությամբ մարտական գործողությունների համար»[125]։

«Այդ ժամանակ տվյալներ ստացանք,— գրում է Հարությունովը,— որ Հայաստանում թուրքերը նեղում են մեր զորքերին, որոնք հետ են քաշվում դեպի հյուսիս, հետո լուրեր եկան, որ Եվլախից հարավ կան հայկական զորամասեր կամ զինված ազգաբնակչություն և մենք Ազգային խորհրդի անդամ Ռոստոմ Զորյանի նախաձեռնությամբ առաջարկեցինք բոլշևիկների կառավարությանը ստեղծել հզոր ջոկատ՝ Ելիզավետպոլի ուղղությամբ գործելու համար։ Բոլշևիկները հաճույքով համաձայնվեցին, նկատի առնելով, որ մենք պետք է ջախջախենք թուրք հակահեղափոխականներին, որոնց էմիսարները նորից կազմակերպել են Ելիզավետպոլի թաթարներին՝ Բաքվի դեմ մեծ ուժերով արշավելու համար։ Այդ օրերին Բաքու եկավ գլխավոր շտաբի գնդապետ Ավետիսովը, որը բոլշևիկներին առաջարկեց իր ծառայությունը և նրանց կողմից նշանակվեց Կարմիր բանակի շտաբի պետ։ Միայն դրոշակն էր բոլշևիկյան, իրականում զինվորների 95 տոկոսը և սպաների գրեթե 100 տոկոսը հայեր էին։ Եվ քանի որ մեր նպատակները համընկնում էին բոլշևիկների հետ, ընդդեմ ընդհանուր թշնամու, մենք բոլորս հաճույքով գնացինք նրանց մոտ ծառայության։ Նրանք մեզ ապահովեցին հրացաններով, գնդացիրներով, զենքի, զինամթերքի բոլոր տեսակներով, որ ստանում էին Աստրախանից»[126]։

Բոլշևիկների նախաձեռնությամբ կազմավորվեց 4-ական առանձին գումարտակներից բաղկացած երեք բրիգադ, նրանք մտան մեկ կորպուսի մեջ։ Համազասպի գլխավորած բրիգադը ուներ 6000 զինվոր, փոխգնդապետ Բեկ Զուրաբովի բրիգադը՝ 4 հազար, գնդապետ Հարությունովի բրիգադը՝ 5000 զինվոր։ Ընդհանուր հրամանատարը գնդապետ Ղազարովն էր, շտաբի պետը՝ գնդապետ Ավետիսովը[127]։

Հայաստանին օգնություն ցույց տալու համար սկսվեց լարված աշխատանք, կազմավորվեց մարդաշատ ջոկատ, գրում է գեներալ Բաղրամովը՝ առանձնացնելով Բաքվի խորհրդային իշխանության աջակցությունը. «Համաձայնություն կայացվեց խորհրդային իշխանության հետ՝ անհրաժեշտ հանդերձանք, ռազմամթերք հատկացնելու մասին։ Ջոկատը դեպի Ելիզավետպոլ պետք է դուրս գար Զատկի երկրորդ օրը։ Սակայն այդ ծրագիրը չհաջողվեց։ Տեղեկություն ստացվեց զինված չեչենների հարձակում գործելու մասին, որոնք արգելակում էին Հյուսիսային Կովկասից գնացքների ժամանումը։ Հայկական ջոկատը ուղարկվեց Պետրովսկ»[128]։

Այս պարագաներում Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը փնտրում էր հետագա արհավիրքներից փրկության նոր ուղիներ։ Այդ խնդիրները քննարկելու համար հավաքվեց Ազգային ժողովը։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայոց Ազգային ժողովի արտակարգ նիստերը տեղի ունեցան 1918 թ. ապրիլի 15—18-ը, Թիֆլիսում։ Դրանք հրավիրել էր Ազգային խորհուրդը՝ «չկամենալով իր վրա վերցնել գալիք ծանր պատասխանատվությունը»։

Ազգային ժողովի նիստերին մասնակցում էին Հայ Հեղափոխական Դաշնակցության, սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության, սոցիալ-դեմոկրատական կուսակցության, Հայ ժողովրդական կուսակցու-

թյան 5-ական ներկայացուցիչներ։ Նոր Նախիջևանը ուներ իր հատուկ ներկայացուցիչը։ Նիստին մասնակցում էին Ազգային խորհրդի բոլոր անդամները, Սեյմի բոլոր հայ պատգամավորները։ Ժողովի նախագահ ընտրվեց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը։

Առաջին նիստում, ապրիլի 15-ին հաստատվեց հետևյալ օրակարգը. 1) Անդրկովկասի անկախությունից ծագող հանգամանքները և Ազգային ժողովի բռնելիք դիրքը, 2) Ազգային խորհրդի և Սեյմի հայ խմբակցությունների փոխհարաբերությունները, 3) Ազգային խորհրդի՝ Անդրկովկասի անկախություն հայտարարելու առթիվ կայացած որոշման քննարկումը։

Ա. Ահարոնյանը հայտարարեց, որ Ազգային խորհուրդը քննության է առել Անդրկովկասը անկախ հայտարարելու փաստը և ձայների մեծամասնությամբ արտահայտվել է «այդ անկախության դեմ», որի մասին որոշել է տեղեկություն տալ մամուլում։ Լուրը դեռևս մամուլին չի հանձնվել՝ սպասելով ներկա ժողովի որոշմանը։

Ամբողջ առաջին նիստը նվիրվեց Ազգային խորհրդի որոշման քննարկմանը։ Մոտեցումները տարբեր էին, սակայն առկա էր մտահոգությունը ժողովրդի ապագայի նկատմամբ։

Դաշնակցության կուսակցության ներկայացուցիչ Ա. Շահխաթունյանը կարծում էր, որ Անդրկովկասի անկախության հարցը ըստ էության քննելու ժամանակը չէ. փաստը կատարված է, «մենք, բնկուզ ցավ ի սիրտ՝ պետք է հաշտեցնենք մեր ժողովրդին այդ մտքի հետ, որ այլևս չկա այն Ռուսաստանը, որից մենք օգնություն կարող ենք սպասել», որպեսզի «ժողովուրդը հույս չունենա ռուսների վրա և չփշացնի իր հարաբերությունները հարևանների հետ»։ Շահխաթունյանի կարծիքին միացավ Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Ի. Ամիրյանը, ավելացնելով, որ «ժողովուրդը կհաշտվի անկախության փաստի հետ»։ Իր սկզբունքներում հաստատուն էր Ազգային խորհրդի անդամ Ս. Մամիկոնյանը. պահանջել, որ ժողովուրդը թողնի իր դարավոր ըմբռնողությունը, տարիների ընթացքում իր փայփայած միտքը, ձգտումը, որ համարել է իր համար միակ հուսատու ճրագը, «կնշանակի համարել մեր ժողովրդին մինչև իսկ անբարոյական»։ Նա գտնում էր, որ այդ սոսկալի պահին չի կարելի ժողովրդից առնել այն վերջին հույսը, որ նրան ուժ է տվել ամբողջ պատմության ընթացքում՝ կտրել հավատակից Ռուսաստանից։ «Պարոններ, վարեցնք պալատում ինչ բաղաքականություն ուզում եք, բայց ժողովրդի առողջ բնազդը թողեք կենդանի և տանցանք մի գործեք, գուշակել պետք չէ, հանգամանքները մեր երկրում արագ են փոխվում։ Ինձ թվում է, որ անկախ Անդրկովկաս չկա, Բաքուն՝ Անդրկովկասի շնչելու և ապրելու միակ աղբյուրը՝ ռուսական ձեռքերում է։ Անկախության հարցը դեռ լուծված չէ և այդպես հեշտ լուծելու չէ»։

Ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ, «Մշակ» թերթի խմբագիր Հ. Առաքելյանը խորհում էր, որ հայ ժողովուրդը չի կարող

հաշտվել նոր՝ թուրքական կողմնորոշման հետ, «բայց մենք պետք է խոնարհվենք փաստի առաջ»։

Սոցիալիստ-հեղափոխական Արամ Տեր-Գրիգորյանը հարցին մոտենում էր երկու տեսակետից. առաջին՝ նպատակահարմարության, ցանկալիության և երկրորդ՝ որպես կատարված փաստ։ Նա Անդրկովկասի անկախությունը համարում էր պատրանք. խոսել անկախության մասին, նշանակում է խոսել տաճկական ազդեցության, ապա և գերիշխանության, և ռուսական ազդեցության ու գերիշխանության մասին։ Ռուսական կողմնորոշումը նա հայերի համար համարում էր «արդեն հարազատ, սեփական կողմնորոշում դարձած կողմնորոշում, որը, իհարկե շինովի, սարքովի, արհեստական չէ»։ Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապված է տնտեսապես, կուլտուրապես և քաղաքականապես, և երբ հարցը դրված է ընտրել այս կամ այն կողմնորոշումը, «իհարկե, մենք պետք է անվերապահորեն ընտրենք ռուսական կողմնորոշումը»։ Անդրկովկասի անկախությունը համարելով արդեն փաստ, Ա. Տեր-Գրիգորյանը գտնում էր, որ չպետք է հակառակվել դրան, «թեկուզ մեր ամբողջ էությամբ նրա դեմ լինենք»։ Նա նշեց նաև, որ ժողովուրդները իրենց պատմական շարժման ընթացքում բարեգործությամբ չեն առաջնորդվում, «Ռուսաստանը որ ևկավ Կովկաս, անկասկած մեզ բարեկամություն անելու համար չեկավ, այլ իր ուժերի, տիրապետության տենչերն իրագործելու»։

Այս կարծիքին միացավ Ս. Հարությունյանը։ Ս. Փիրումյանը առաջ քաշեց հարևանների հետ հաշտ ու խաղաղ ապրելու հարցը, ասելով. «պատրանքներով չապրել, ռուսական օգնությամբ չխաբել ժողովրդին»։

Մ. Հարությունյանը կարծում էր, որ անհրաժեշտ է բացատրել ժողովրդին սեփական տարածք ունենալու և այդ տարածքի վրա հայ ժողովրդի վիճակը տնօրինելու հեռանկարների մասին, ցած չդնելով զենքը։ Անդրկովկասի անկախությանը դեմ արտահայտվեց Ռուբեն Տեր-Մինասյանը. «Կովկասի անկախությանը ոչ մի հայ կողմնակից չէ, իսկ դաշնակցական լինելով գիտեմ, որ ոչ մի շրջանային ժողով, ոչ մի իրավասու մարմին այդպիսի որոշում չունի։ Արհեստական կերպով Սեյմի դաշնակցական խմբակցությունը որոշում է կայացրել և համաձայնության եկել»։

Անկախության օգտին հանդես եկավ Արշ. Զուրաբյանը։ Սիրահոժար կերպով Կովկասը անկախ հայտարարելու մասին խոսք անգամ չի կարող լինել։ Այդ մենք պատրաստ էինք հերքելու Ալեքսանդրապոլում։ Սակայն այսօր, ելնելով իրադրությունից, «մենք պետք է հայտարարենք, որ անկեղծորեն հարում ենք անկախությանը, հայտարարենք Ազգային ժողովի կողմից և կարուկ կերպով ասենք, որ ոչ մի քայլ չենք թույլ տա անկախության դեմ, որտեղից էլ որ վերջինս լինի»,— հայտարարեց սոցիալ-դեմոկրատների ներկայացուցիչը։

Ազգային ժողովը ընդունեց որոշում, որտեղ ասվում է. «Ազգային խորհրդի որոշումը՝ հայտարարել մամուլի մեջ, որ ինքը դեմ է Անդրկովկասը անկախ հայտարարելուն, համարել չեղյալ»[129]:

Այս որոշումը ընդունելու հաջորդ օրը, ապրիլի 16-ին, բացելով երկրորդ նիստը, որին մասնակցում էին նաև Թուրքահայերի ներկայացուցիչները, Ա. Ահարոնյանը մտավախություն հայտնեց, թե իր կարծիքով անկախության հարցն ավելի աղետաբեր պետք է լինի հայերի համար, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը: Ազգային խորհրդի նախագահն այդ մտավախությունը բացատրում էր Թուրքիայի հետևողական պահանջով՝ Անդրկովկասը հայտարարել անկախ, և նրանով, որ ընդունելով թուրքական պայմանը և անկախ հայտարարելով Կովկասը, թիկունքում չունենալով մեծ Ռուսաստանը, «ուժի ձայնով չպետք է խոսանք, մեր պատգամավորությունը ավելի խեղճ պետք է լինի բանակցությունների ժամանակ, քան անկախություն չհայտարարած ղեպքում»: Մատնանշելով Կովկասը անկախ հայտարարելու պատճառով ռուսական իշխանությունների վերաբերմունքի մեջ եղած փոփոխությունները, Ահարոնյանը Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրեց նաև այն հանգամանքի վրա, որ Թուրքիան պատերազմ կհայտարարի, պատրվակ բռնելով բոլշևիկների երևան գալը Կովկասում և թարների շարժումը, որը նախապատրաստված և կազմակերպված է հենց իր՝ Թուրքիայի էմիսարների միջոցով, և կասպատակի երկրամասը: Թուրքիան Կովկասում պետք է աշխատի «լուծել» Հայկական հարցը, քանզի «այնքան ժամանակ, քանի որ թուրքահայերը կան այստեղ՝ Թուրքիան սիրտ տեսնի իր առաջ ցցված Հայկական հարցը, իրեն մի արյունոտ դրոշակ»: Եվ ոչ ոք չպիտի կարողանա ժխտել հայի իրավունքը՝ վերականգնել իր հայրենիքը Թուրքահայաստանում: Եթե Թուրքիան կամենար բուֆեր ստեղծել Կովկասից՝ չէր խլի մեր գավառները»:

Անկախության դեմ արտահայտվելով, Ազգային խորհուրդը հույս ուներ ստանալ բոլշևիկների՝ Ռուսաստանի օգնությունը, որտեղից գալիս էր պարեն և ռազմամթերք, որն այժմ չկար Կովկասը անկախ հայտարարելու պատճառով: Դաշնակիցները ինքնապաշտպանության նպատակով տալու էին 25 միլիոն ռուբլի, այդ էլ չկար, որովհետև Անդրկովկասի նորակազմ կառավարությունը ընդունել էր գերմանական կողմնորոշում: Անդրկովկասյան կառավարությունը Հայաստանի ինքնապաշտպանությունը կազմակերպելու փոխարեն Ալեքսանդրապոլից տանում է այնտեղ եղած զենքի և ռազմամթերքի պաշարները, ասաց Ս. Մամիկոնյանը: Քաղաքական նախադրյալները համարելով «չափազանց մշուշային և սպառնալից», Մամիկոնյանը Անդրկովկասի, մանավորապես հայերի համար խոստումնալից չէր համարում նաև Բաթումում նախատեսվող հաշտության բանակցությունները: Այդ բացատրում էր «խաղաղություն» հաստատելու համար Թուրքիայի Անդրկովկաս ներխուժելու վտանգով: Դեմ էր Բաթում գնալուն:

Ս. Հարությունյանը առաջարկում էր վարել սեփական անկախ քաղաքականություն, ուղղություն տալ այդ քաղաքականության սեփական շահերի նկատառումներով մերձենալ հարևան ժողովուրդներին «ոչ թե խոսքով, այլ անկեղծորեն, ոչ թե ճառով, այլ՝ գործով»: Խորհելով մի ուժեղ պետության կողմից Կովկասի պաշտպանության մասին, նա կարծում էր, որ այդ պետությունը պետք է լինի Գերմանիան, որի ներկայացուցիչը ևս պետք է մասնակցեր Բաթումի հաշտության բանակցություններին: Ա. Ջուրաբյանը հանդես եկավ «անկախության հարցը քաղաքական հողից ռազմական հողի վրա» տեղափոխելու դեմ: Նա կարծում էր, որ չի կարելի գնալ Բաթում հաշտություն կնքելու և միաժամանակ, «ինքնապաշտպանության համար զինվել այն պետության դեմ, որն ուղում է մեզ հետ հաշտություն կնքել»:

Բժիշկ Բաբալյանը միակ ելքը տեսնում էր խորհուրդների իշխանությունը ճանաչելու և Ռուսաստանից օգնություն ստանալու մեջ:

Ա. Ջուրաբյանի տեսակետը ժխտեց Ա. Խոնդկարյանը: Թուրքիայի վերաբերմունքը բոլորովին տարբեր է դեպի Կովկասի զանազան ազգությունները և հայերի մտահոգությունը տեղին է: Եթե մենք գիտենք, որ Թուրքը ներխուժելով մեր երկիր՝ մեզ համար տարբեր ու անջատ դրություն պիտի ստեղծի, մենք պիտի մտածենք մեզ ապահովելու անջատ միջոցների մասին, հայտարարեց սոցիալիստ-հեղափոխականների ներկայացուցիչը, դեմ արտահայտվելով նաև Բաբալյանի՝ խորհուրդների իշխանությունը ընդունելու մասին առաջարկությանը: Նա հայտնեց, որ «այժմ արդեն ոչ մի դիմադրության, պաշտպանության մասին խոսք չի կարող լինել՝ շնորհիվ Ջեներալ կարգադրության»: Ա. Երզնկյանը համաձայնություն հայտնեց Անդրկովկասի անկախության և բանակցությունները սկսելուն, միաժամանակ Բաբալյանի առաջարկը բնորոշեց որպես գուցե և «քաղաքական մի խոշոր դեղատոմս, բայց գուցե և մի արկածախնդրություն»:

Ապրիլի 18 (մայիսի 1)-ի նիստը քննարկեց Հայոց Ազգային խորհրդի և Անդրկովկասյան Սեյմի դաշնակցական խմբակցության փոխհարաբերությունների խնդիրը: Որոշվեց. «Բոլոր քաղաքական բնույթ ունեցող խնդիրները նախապես քննության առնել Ազգային խորհրդում՝ համաձայն համագումարի տված դեկավարող որոշումների»[130]:

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲԹՈՒԼԻՆՈՒՄ: ՀԱՅ–ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Թուրքական ներխուժման վտանգը կանխելու նպատակով Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը Վրաստանի օրինակով՝ ուժեղ դաշնակից փնտրելու համար շրջվեց դեպի Գերմանիա, չփակելով, սակայն, դեպի Ռուսաստան տանող դռները:

Ազգային խորհուրդը որոշեց Գերմանիա ուղարկել պատվիրակություն՝ նպատակ ունենալով գերմանական իշխանություններին ու հասարակայնությանը ծանոթացնել Առաջին աշխարհամարտի տարիներին և մինչ այդ Օսմանյան կայսրությունում Թուրքերի հայաջինջ քաղաքականությանը, Արևմտյան Հայաստանի հայաթափմանը, Անդրկովկասի նկատմամբ նրանց նվաճողական նկրտումներին, շահել գերմանական կառավարության համակրանքը, հայ ժողովրդին վերահաս կոտորածների և ջարդերի վտանգից փրկելու, Արևմտյան Հայաստանում բարեփոխումներ կատարելու համար։ Պատվիրակության կազմում հաստատվեցին Արշակ Ջամալյանը, Լիպարիտ Նազարյանցը (ՀՀ Դաշնակցությունից) և Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը (ժողովրդական կուսակցությունից)[131]։

Ժողովրդական կուսակցության նախաձեռնությամբ, Հայ Հեղափոխական Դաշնակցության և Ազգային խորհրդի համաձայնությամբ Բեռլին մեկնելու համար ձևավորվում էր մեկ այլ պատվիրակություն, այս անգամ արդեն Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդ Սուրենյանի մանդատով։

Հայ ժողովրդական կուսակցության ղեկավարության կարծիքով հայ ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում էր միայն Վեհափառին, որը իրավասու էր «իր վտանգյալ հոտի համար դիմել ամեն տեսակ միջնորդությունների՝ պետությունների առաջ»։

«Դժվար թե գերմանական կառավարությունը ընդունի ուրիշ որևէ մարմնի դիմումը, իբրև հայ ժողովրդի ներկայացուցչի, քանի որ հայ ազգը, բացի էջմիածնի հայրապետությունից, չունի մի որևէ այլ ներկայացուցիչ, որպես ճանաչված մեկից»,— ասված էր Ամենայն Հայոց կաթողիկոսին 1918 թ. մարտի 23-ին հղված դիմումում։ Այդ իսկ նկատառումներով, խնդրվում էր Վեհափառին, որը «Հայրապետության առաջին իսկ օրերից ստանձնել է Հայոց Մեծ դատի պաշտպանությունը և ղեկավարությունը», ուղարկել մի պատվիրակություն գերմանական իշխանությունների մոտ, խնդրելով գերմանական կայզերի միջնորդությունը՝ ազդել Թուրքիայի վրա՝ Թույլ չտալու նոր կոտորածներ ու ջարդեր, և նույնիսկ, «եթե հարկը կպահանջի՝ խնդրել Գերմանիայի հովանավորությունը Հայաստանի վրա»։

Կուսակցությունը կարծում էր, և դրա հետ համաձայն էին Հայոց Ազգային խորհուրդն ու Հայ Հեղափոխական Դաշնակցության ղեկավարությունը, որ Վեհափառ տերը պետք է «իբրև տառապյալ և կորստյան վտանգին մատնված հայ ժողովրդի հոգևոր հայր, հատուկ պատվիրակության միջոցով դիմում անի գերմանական կառավարությանը՝ զուտ մարդասիրական գործի համար, առանց որևէ քաղաքական նպատակի, խնդրելով, որ Գերմանիան իբրև քրիստոնյա և քաղաքակիրթ պետություն, ազդի յուր դաշնակից Թուրք կառավարության վրա, որպեսզի վերջինս իր գրաված կամ ուրջ դրած վայրերում խնայե հայ ժողովրդին և չմատնե նրան կոտորածի կամ հարստահարման»[132]։

Մինչ քննարկվում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվիրակության Բեռլին ուղարկելու հարցը, Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը (Ա. Ջամալյան, Գ. Մելիք-Ղարագյոզյան) Բաթում-Տուապսե-Նովոռոսիյսկ-Սևաստոպոլ-Սիմֆերոպոլ ճանապարհով մարտի 25-ին հասավ Մոսկվա։ Լ. Նազարյանցը Մոսկվա ժամանեց ապրիլի 7-ին[133]։

Պատվիրակության անդամները հանդիպումներ ունեցան Պետրոգրադից Մոսկվա նոր տեղափոխված Խորհրդային Ռուսաստանի ազգությունների գծով ժողովրդական կոմիսար Ի. Ստալինի, ռազմական գծով ժողկոմ Լ. Տրոցկու, արտաքին գործերի գծով ժողկոմի տեղակալ Լ. Կարախանի, քաղաքական-հասարակական տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։ Անդրկովկասի և Հայաստանի իրավիճակի մասին Հայոց Ազգային խորհրդի պատվիրակները զեկուցումներով հանդես եկան Ժողովրդական ազատության կուսակցության կենտկոմում, նրանց հայտնվեց և ամերիկյան դեսպանի տեսակետը՝ հայերին ցույց տրվելիք օգնության մասին[134]։

Ինչպես վկայում են պատվիրակության անդամները, տարբեր փաստաթղթեր, Ջիչերինը, Տրոցկին, Կարախանը, Խորհրդային Ռուսաստանի և բոլշևիկյան կուսակցության այլ ղեկավարներ, հայկական պատվիրակությանը ցույց են տվել գործնական օգնություն և աջակցություն։ Պատվիրակության անդամների խմբագրությամբ է կազմվել Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի 1918 թ. մարտի 31 (ապրիլի 13)-ի հուշագիրը գերմանական իշխանություններին՝ ստորագրված Գ. Ջիչերինի և Լ. Կարախանի կողմից[135]։

Հուշագրում գերմանական իշխանությունները դատապարտվում էին իրենց Թողտվությամբ դեպի Անդրկովկաս Թուրքական զորքերի առաջխաղացման ժամանակ ցուցաբերած ոճրագործությունների համար[136]։

«Առաջին գործս եղավ տեսնվել Տրոցկու հետ,— գրում է Ա. Ջամալյանը Մոսկվայից մարտի 28-ին Ա. Ահարոնյանին,— «Ես կարծում եմ,— ասաց Տրոցկին, որ հայկական կազմակերպությունները պետք է հեռանդով բողոքեն այդ դաշնագրի դեմ և պետք է կոչ անեն Եվրոպայի հասարակական կարծիքին օգնության գալու հայ ժողովրդին։ Մասնավորապես, այդ բանը պետք է անեն Բաթումի և Կարսի ազգային և հասարակական կազմակերպությունները»[137]։ Մեր հարցին (ինձ հետ էր և ընկեր Թերզիբաշյանը), թե ինչպես պետք է մեր բողոքն ուղարկենք Եվրոպայի ժողովուրդներին, նա ասաց, թե կարող ենք օգտվել անթել հեռագրից, որը ինքը մեր տրամադրության տակ կդնի։ Հաջորդ օրը գնացի Կարախանի մոտ,— շարունակում է Ա. Ջամալյանը,— անցագրի խնդիրը կարգավորելու, որ ամենադժվար հարցն էր։ Նրան հայտնեցի Տրոցկու և այդ խորհրդի մասին, և հարցրի նրա կարծիքը։ Կարախանն էլ կարծում էր, որ պետք է դիմել Եվրոպայի հասարակական կարծիքին։ Իմ հարցին, թե ինչ ձևով պետք է կատարել դիմումը, նա պատասխանեց, թե կարող ենք գրել կամ պատվիրակություն ուղարկել։ Այս վերջին տրտահայտությունից էլ բռնեցի և ասացի. մեր Ազգային խորհուրդն

էլ այդպիսի մի միտք է հղացել և հիմա չգիտենք, թե ինչպես պետք է պատվիրակությունը գնա Եվրոպա, քանի որ արգելված է արտասահման գնալ։ Նրա հարցին, թե ուր ենք ուզում գնալ՝ պատասխանեցի, թե ամեն տեղ, մինչև անգամ Գերմանիա։ Փոքր-ինչ մտածելուց հետո նա պատասխանեց, որ ինքը կկարգադրի մեզ անձնագրեր տալ։ Այդ կարգադրությունը կատարվեց անմիջապես»։

Կարախանը պատվիրակությանը ապահովեց դիվանագիտական մի շարք փաստաթղթերով, անձնագրով, անցագրերով, սահմանն առանց սուգման անցնելու թույլտվությամբ։ «Այս և մնացած այլ խնդիրներում Կարախանը մեզ չափազանց մեծ աջակցություն ցույց տվեց, այնպես որ ես չգիտեմ, թե առանց նրա օգնության մեր գնալու խնդիրն ինչպես կլուծվեր»[138],— գրում է Ջամալյանը Ազգային խորհրդին։

Աջակցեց նաև Պետրոգրադում շվեդական դեսպանը։ Պատվիրակությունը Պսկովի վրայով, գերմանական սպայի ուղեկցությամբ անցավ Դվինսկ, այնտեղից՝ Բեռլին, ուր հասավ ապրիլի 22-ին[139]։ Այդ օրը արդեն Սեյմը հայտարարել էր Ռուսաստանից Անդրկովկասի անջատման, Անդրկովկասի Ռամկավարական Դաշնակցային Հանրապետության ստեղծման մասին, որին հետամուտ էր Թուրքիան։ Այդ ամենը, սակայն, Ազգային խորհրդի պատվիրակությանը հայտնի չէր։ Չսպասելով երկրորդ պատվիրակության ժամանելուն, որն այդպես էլ չեկավ, Ազգային խորհրդի պատվիրակները Բեռլինում ծավալեցին բուռն գործունեություն։

Պատվիրակությունը կազմեց հուշագրեր Հայկական հարցի, Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի, թուրքերի կողմից Բրեստի պայմանագրի դրժման, թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժման, հայերին սպասվող նոր հաշվեհարդարի վտանգի մասին։ Հուշագրերը ապրիլի 27-ին, մայիսի 3-ին և 4-ին Գերմանա-հայկական ընկերության կողմից հղվեցին գերմանական ռայխստագին, նրա առանձին անդամներին, ականավոր քաղաքական գործիչների։ Ապրիլի 28-ին, 29-ին, մայիսի 4-ին պատվիրակությունը ներկայացրեց հուշագրեր Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը[140]։ Նա արևելյան քաղաքականության հանձնաժողովին տրամադրեց ստույգ տեղեկություններ Ռուսաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում Անդրկովկասում ծավալված իրադարձությունների մասին, որոնք 1918 թ. մայիսի 4-ին հրապարակվեցին առանձնատիպով[141]։ Հուշագրերում շեշտվում էր այն միտքը, որ 20-րդ դարում ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ անխնա ոչնչացման հանձնվեց հայ ժողովրդի մեծ մասը, այն ժողովրդի, որն Ասիայի շեմին դարերի ընթացքում ներկայացրել է քրիստոնեական բարոյականությունը և եվրոպական քաղաքակրթությունը։ Հայերը կարող էին հուսալ, որ Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքների և Բրեստի դաշնագրության շնորհիվ Հայկական հարցը դրական լուծում կստանար։ Սակայն մեծ էր ժողովրդի հիասթափությունը, երբ նա իմա-

ցավ, որ Բրեստի դաշնագրությունը շրջանցեց Հայկական հարցը և հայերի վիճակը։ Ավելին, պոկեց Ռուսաստանից ամբողջ երկրամասեր՝ դրանք թուրքական իշխանությանը կցելու համար։

Արձանագրվում էր, որ Թուրքահայաստանի վերադարձնելը Օսմանյան կայսրությանը և Կարսի, Արդահանի ու Բաթումի զավթումը իրենց քրիստոնյա բնակչությամբ, ենթարկում է Կովկասը մշտական վտանգի, թուրքերի առաջխաղացումը ոչ միայն ոտնահարում էր հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքը, այլև սպառնում Կովկասյան գավառներում հոծ զանգվածներով բնակվող հայերի գոյությանը։

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը կարծում էր, որ Անդրկովկասում հայ ժողովրդի ապահովությունը կարող է երաշխավորվել միայն այն դեպքում, երբ Գերմանիան պահանջի Թուրքիայից «անմիջապես և վճռականորեն դադարեցնելու հարձակումը», երբ ի նկատի կառնվեն հետևյալ կետերը.

1. Կարսի, Արդահանի և Բաթումի ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի իրագործումը, այն միտումով, որ ազգային սկզբունքը պահպանվի և բռնագաղթած բնակիչներին թույլ տրվի մասնակցել հանրաքվեին. 2. Թույլ չտրվի, որպեսզի թուրքերը որևէ պատրվակով անցնեն Բրեստի դաշնագրով ընդունված սահմանները. 3. Թուրքերը հրաժարվեն Կովկասի ներքին գործերին խառնվելուց. 4. լիակատար երաշխավորություն բոլոր այն հայերի ապահովության համար, որոնք գտնվում են Տաճկաստանում կամ ցանկանում են վերադառնալ իրենց հայրենի վայրերը։

Պատվիրակությունը կարծում էր, որ հրեշավոր ցեղասպանությունից հետո Կովկասում ապաստանած 300 հազար հայերի դրությունը կարող է տանելի դառնալ, եթե նրանք տուն վերադառնան, Թուրքիայում հայերով բնակեցված գոնե մի քանի վայրերի համար Գերմանիայի կողմից պայմաններ ստեղծվեն, քանզի «հայերը այլևս չեն կարող հավատալ, որ այդ հնարավորությունները կտրվեն իրենց, եթե դրանք միայն Թուրքիայի խոստումներն են»[142]։

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությանը սատար կանգնեց 1914 թ. Բեռլինում կազմակերպված Գերմանա-հայկական ընկերությունը, որի անդամները քաջատեղյակ էին Հայաստանի անցքերին, այնտեղ տեղի ունեցող իրադարձություններին։ Այդ երևում է և գերմանական ռայխստագի «բարեհաճ գիտությանը» ապրիլի 27-ին ուղղված փաստաթղթից, ստորագրված ընկերության քարտուղար քահանա Էվալդ Շտիրի կողմից։ Փաստաթղթում բացահայտվում էին թուրքական ագրեսիվ գործողությունները Բրեստի պայմանագիրը կնքելուց հետո, կովկասահայերին սպառնացող աղետը, օսմանցիների զավթողական անզուսպ նկրտումները, թուրքական մոլեռանդությունը։ «Ուր գնում է թուրք զորքը, այնտեղ բնաջնջվում է քրիստոնյա ժողովուրդը. կովկասահայությունը, ինչպես մինչ այդ թուրքահայությունը, կանգնած է ամբողջապես ոչնչացման վտանգի առաջ»։

Արձանագրելով ապառնագին իրավիճակը, Գերմանա-Հայկական ընկերության ղեկավարները զգուշացնում էին, որ քրիստոնյաների և մահմեդականների միջև կոտորածը կտարածվի ամբողջ Կովկասում և դրա հետևանքով կկործանվեն բազմամյա կուլտուրական արժեքներ և «քրիստոնյաների ոչնչացումը այդ երկրներում իբրև պատասխանատվություն կարձանագրվի քրիստոնեական Գերմանիայի հաշվառյանում, եթե նա լինի իր զինակիցների վերոհիշյալ գործողությունների հանգեպ սոսկ հանդիսատես, առանց բողոքի ձայն բարձրացնելու»: Համոզված լինելով, որ միայն Գերմանիան հնարավորություն ունի հրամայել Թուրքիային դադարեցնել առաջխաղացումը, թույլ չտալ թուրքերին անցնելու Բրեստի գաշնագրով որոշված սահմանները, Գերմանա-Հայկական ընկերության վարչությունը վճռականորեն գրում էր. «Գերմանիան պետք է պահանջի, որպեսզի թուրքերը հրաժարվեն Կովկասի ներքին գործերին խառնվելուց, թուրքերի ոչ մի առարկություն չպիտի թուլացնի նրա պահանջը, որպեսզի Բրեստի գաշնագիրը կիրառվի ամենայն ճշտությամբ»:

Ռայխստագի առաջ հարց էր դրվում առանց հապաղելու Հայաստան ուղարկել մի հանձնաժողով՝ տեղում Բրեստի գաշնագրի համապատասխան կետերի իրագործումը հսկելու համար: Այստեղ շոշափվում են գերմանական ժողովրդի ապագա շահերը, ինչպես նաև նրա կոչումը իբրև քրիստոնեական ժողովրդի, ուստի կորցնելու չէ ժամանակը, այստեղ դրված է կուլտուրապես և տնտեսապես բարձր արժեք ունեցող մի ամբողջ ազգի կյանքի և մահու, նրա կուլտուրական անփոխարինելի արժեքների փրկության խնդիրը, ասված էր փաստաթղթում[143]:

Ուշագրավ է նաև Գերմանա-Հայկական ընկերության մայիսի 3-ի հուշագիրը՝ «Հայկական հիմնահարցը» խորագրով: Վերլուծելով հայերի ցեղասպանության պատճառները և առանձնացնելով բռնապետածների և փախստականների՝ հայրենիք վերադառնալու անհրաժեշտությունը, որը մասամբ իրականացվեց ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանը գրավելուց հետո, փաստաթղթի հեղինակները նշում էին, որ Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո միջազգայնացված Հայկական հարցը կարող է խաղաղության հանգել, եթե Թուրքահայաստանում հայերի համար ազգային տարածք ստեղծվի, լինի երաշխիք նրանց կյանքի, պատվի, գույքի ապահովության համար, հայ ժողովրդի պապենական բնակավայրերը միջազգային երաշխիքներով տրամադրվեն տարագրությունից վերադարձող հայ ժողովրդի բեկորներին: Արձանագրելով, որ դրա համար միայն Թուրքիայի համաձայնությունը քիչ է, Գերմանա-Հայկական ընկերության վարչության ղեկավարները գրում էին. «Եռիտասարդ թուրքերը հաճախ են խոստացել հայերին՝ նրանց հետ գործելու և նրանց շահերը հարգելու մասին: Այդպես եղավ պատերազմից առաջ և պատերազմի սկզբում: Սակայն հայերը փորձով համոզվեցին, որ երիտասարդ թուրքերի ձգտումը՝ ամբողջ թուրք պետության տարածքը մաքրել ոչ թուրքական տարրից, ավելի ուժեղ է, քան իրենց բոլոր խոստումները»:

Հուշագրի հեղինակները շեշտը դնում էին և Գերմանիայի շահերի վրա. Կովկասում պատերազմը շարունակվելու դեպքում, իսկ հայերը կկովճն մինչև վերջ, քանզի կորցնելու ոչինչ չունեն, 1) Կովկասյան ճակատում զբաղված կլինեն մեծ թվով թուրքական ուժեր, 2) անխուսափելիորեն երկիրը կավերվի և կամայանա և, որ գլխավորն է, 3) առիթ կտրվի Գերմանիայի թշնամիներին անընդհատ կշտամբելու գերմանական քաղաքականությունը, այն, որ Գերմանիան իր պասսիվ վերաբերմունքով հնարավորություն տվեց բնաջնջել մի ամբողջ քրիստոնեական և կուլտուրական ժողովրդի:

Մատնանշվում էր ևս մեկ հանգամանք. թե՛ թուրքական, թե՛ ռուսաստանի(կովկասյան) հայաստանում թաքնված են բնական մեծ հարստություններ: Եթե հանգամանքները կովկասում ռազմական ուղղություն ստանան, դրանցից շատ բան կվնասվի: Մյուս կողմից, հայությունը թուրքական և կովկասյան ամբողջ տարածքի վրա ապագայում նշանավոր դեր ունի կատարելու եվրոպական կուլտուրական ազդեցությունը տարածելու համար: Եթե Գերմանիան հայերին չպաշտպանի բնաջնջման ձգտումների դեմ, որոնցով տոգորված են թուրքերը, ընդհանուր հասարակական կարծիքը պնդելու է, որ մի քրիստոնյա ժողովուրդ զոհվեց հօգուտ իր՝ Գերմանիայի մահմեդական դաշնակցի:

Գերմանա-Հայկական ընկերությունը պահի անհետաձգելի խնդիրն էր համարում. 1) հայկական բնակավայրերը Թուրքիայում այնպես կազմավորել, որ հայ ազգաբնակչության կյանքը, պատիվը և գույքը ապահովվեր Գերմանիայի կողմից, 2) պահանջել Թուրքիայից, որպեսզի հարգի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որի համաձայն Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների ազգաբնակչությունն իրավունք ունի իր հպատակության խնդրի վերաբերյալ ազատ կերպով իր դանկությունը հայտնել, 3) որ թուրքական զորքը չպետք է ներխուժի Կովկասի հայաբնակ վայրեր և հատկապես Երևանի նահանգ, 4) թուրքերը չպետք է խառնվեն Կովկասի ներքին գործերին[144]:

Գերմանա-Հայկական ընկերության և Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության ներկայացրած հուշագրերը լայնորեն քննարկվեցին ռայխստագի անդամների, քաղաքական-հասարակական ճանաչված գործիչների, կուսակցությունների ներկայացուցիչների հանդիպումների ժամանակ, պետական մարմիններում:

Մայիսի 2-ին ռայխստագի անդամների ժողովում Հայկական հարցի քննարկմանը մասնակցեցին Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության հիմնադիր, ռայխստագում կուսակցության պատգամավորական խմբի ղեկավար քահանա Ֆրիդրիխ Նոյմանը, համագերմանության տեսաբան Պաուլ Ռոհրբախը, կաթոլիկական կուսակցության ղեկավար էնցենբերգերը, սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներ Շեյդեմանը, Նոսկեն, Էբերտը, Զյուդեկումը, անկախ մտածողներ Հաազեն, Քիլբեկը, ազգային լիբերալ Ռեհենբեկը, ճանաչված գործիչներ

Շտրեզեմանը, Մաքսիմիլիան Գորդոնը, ռայխստագի ուրիշ անդամներ[145]։

Չնայած արտաքին սիրալիրությանը, ռայխստագի պատգամավորները Արևմտյան Հայաստանում հայերի նկատմամբ թուրքերի ոճրագործությունների մասին հայ պատվիրակների հուշագրերին և հարցադրումներին մոտեցան հոռետեսորեն։ Պաշտոնական Գերմանիան կաշվից դուրս էր գալիս, որպեսզի ազատագրվի այն համընդհանուր մեղադրանքից, թե Գերմանիան մեղսակից է եղել թուրքիայում հայ բնակչության բնաջնջման գործին, պնդելով, թե Գերմանիան որքան էլ ազդեցություն ուներ Թուրքիայի վրա, հակազդել չի կարող։

Նկատի էր առնվում և գերմանական շահերի առկայությունը, մասնավորապես այն, որ Թուրքիան ուներ 2 միլիոն զորք, որը Գերմանիային հարկավոր էր Միջագետքի և Պաղեստինի ճակատներում՝ ընդդեմ անգլիացիների և ֆրանսիացիների։ Այդ իսկ պատճառով, գերմանական իշխանությունները չէին ցանկանում, որ հայկական պատվիրակությունը Բեռլինում երկար մնար, մղեր հակաթուրքական քարոզչություն, հանդիպումներ ունենար մամուլի ներկայացուցիչների հետ[146]։

Պատահական չէր ռայխստագի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Ֆոն Գեոպպերտի զգուշացումը պատվիրակությանը առաջին իսկ հանդիպման ժամանակ, «ոչ ոքի, բացի գերմանական պաշտոնական ներկայացուցիչներից, նամանավանդ մամուլին, չբացահայտել պատվիրակության գալու նպատակը»[147]։ Դրա հաստատումն է նաև Գ. Մելիք-Ղարագյոզյանի հայտարարությունը «Կավկազիշե պոստ» թերթին. «Մամուլից խուսափում էինք»[148]։

Դա արվում էր դաշնակից Թուրքիային «չնեղացնելու», հասարակայնությանը, և ոչ միայն գերմանական, ճիշտ լրատվությունից հեռու պահելու, ճշմարտությունը թաքցնելու համար։ Մյուս կողմից, պաշտոնական Գերմանիան հաստատում էր իր քաղաքականությունը՝ Հայկական հարցում չխառնվել Թուրքիայի գործերին, ամրապնդում կենտրոնական տերությունների այն մոտեցումը, որ Թուրքահայաստանի հարցը Օսմանյան կայսրության ներքին գործն է, նա չպետք է միջազգայնացվի։ Այս տեսակետը դաշնակիցների պաշտպանությունն էր գտել Բրեստ-Լիտովսկում։

Ռայխստագի անդամների հոռետեսական մոտեցման պայմաններում հայանպաստ հնչեց Պաուլ Ռոհրբախի՝ Արևմտյան Հայաստանից հայերի տեղահանման ջատագովի ելույթը։ «Երբ դոկտոր Պաուլ Ռոհրբախը կրկին բացատրեց, համապատասխան խոսքերով, դրության լրջության մասին, որը առաջացել էր շնորհիվ գերմանական կառավարության ձեռք առած անբավարար միջոցների՝ զսպելու կուլտուրայից զուրկ թուրքական կառավարությանը, որը չի ճանաչում Գերմանիայի բարոյական պատասխանատվությունը պատմության առջև՝ ամբողջ հայ ազգի ոչնչացման առթիվ, մի քրիստոնյա ազգի՝ բարձր կուլտուրական զարգացումով, խորհրդակցությանը մասնակցող ռայխստագի անդամների վերաբերմունքը փոխվեց դեպի պատվիրակության հիմնավորումները»։

Այդպես է ներկայացրել Կովկասի գերմանացիների ազգային խորհրդի պաշտոնաթերթը՝ «Կավկազիշե պոստ» լրագիրը Գ. Մելիք-Ղարագյոզյանի հարցազրույցը։ Ավելին, դոկտոր Ռոհրբախը կարծում էր, որ Գերմանիայի բարոյական պատասխանատվությունն է՝ վերջ դնել շարունակվող արյունահեղություններին և հավաստում տալ հայ ազգին, որ Գերմանիայի հովանավորության ներքո նա ազատ կմնա հետագա ոչնչացումից[149]։

Սակայն քողարկված էին մնում Ռոհրբախի արմատական շրջադարձի դրդապատճառները, նրա քարոզչական նպատակները Առաջին աշխարհամարտի նախօրյակին և պատերազմի առաջին տարիներին՝ մինչև Բրեստի հաշտություն։ Ջեր ասվում, որ Բրեստի դաշնագրով համագերմանության և համաթրքության նվազագույն ծրագիրը Արևմտյան Հայաստանի հարցում կատարված էր, հաշտությունից հետո երեան էին եկել գերմանա-թուրքական հակամարտությունները, ազդեցության ոլորտների, Կովկասի և Բաքվի, Անդրկասպյան երկրամասի նկատմամբ մեկի և մյուսի նկրտումները։

Ավելին, Գերմանիայի պաշտոնական ներկայացուցիչները ոչ միայն թույլ չէին տալիս Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներին բարձրաձայն խոսել Բեռլին գալու իրենց նպատակների մասին, այլև խանգարում էին նրանց կապ պահպանել Թիֆլիսի Ազգային խորհրդի, Կովկասի և Ռուսաստանի հետ։ Պատվիրակությունը գործում էր Կովկասում և Ռուսաստանում կատարվող իրադարձություններից անտեղյակ։ Պատվիրակությանը չտեղեկացնելով իրավիճակի հետ, արտաքին գործերի նախարարությունը նրան գցում էր թյուրիմացության մեջ, ավելին, նույնիսկ ապակողմնորոշում։

Դա ակնհայտ երևաց արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար բարոն ֆոն Բուսշեի հետ պատվիրակության անդամների մայիսի 4-ի հանդիպման ժամանակ և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության մայիսի 8-ի պատասխան հուշագրում։

Ողջունելով Հայոց Ազգային խորհրդի՝ հայ ժողովրդի համար անչափ ծանր պահին գերմանական իշխանություններին «լիակատար վստահությամբ» դիմելու փաստը, բարոն ֆոն Բուսշեն ծանուցեց, որ գերմանական կառավարությունը ցանկություն ունի, որպեսզի հայերը, այն գավառներում, ուր նրանք բնակվում են, անցած տարիների սարսափելի ռեպրեսիաներից հետո կրկին հանգստություն վայելեն և երկարատև ու խաղաղ հարաբերություններ ստեղծվեն քրիստոնեական ու մահմեդական ազգաբնակչության միջև։ Համոզմունք հայտնելով, որ «Օսմանյան կայսերական կառավարությունը այդ ցանկությունը բաժանում է և որոշել է մեղմ վերաբերմունք գործադրել հայերի հանդեպ», գերմանական կառավարությունը կշտամբում էր հայերին թուրքական առաջխաղացման միջոցին Օրզնկայի շրջանում թուրք բնակչության դեմ իրր ձեռնարկած բունու-

թյունների համար։ «Փաստը առավել արժանի է ուշադրության,— ասված է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության մայիսի 8-ի հուշագրում,— որ թուրքական զորքերը ամենախիստ կարգապահություն են պահպանել։ Չեզոք և թշնամական մամուլի տված լուրերը տաճկական զորքերի սոսկալի գործունեության մասին, հնարված են զուտ դիտավորությամբ։ Թուրքերը ցույց են տվել նույնիսկ հատուկ մեղմություն։ Եթե թուրք զորքերի մոտենալու միջոցին կռիվներ են առաջ եկել ազգաբնակչության զանազան տարրերի միջև, թուրք զորքերը այդ բանում պատասխանատու լինել չեն կարող։ Ամենուրեք, ուր հասել են թուրք զորքերը, այն տեղեկությունների համաձայն, որ մենք ունենք (Հատահլի անձնավորությունների կողմից, լիակատար կարգապահություն է իշխում»[150]։

Որպես օրինակ, բերվում է Բաթումի այցելած էնվեր փաշայի կոչը՝ ուղղված Կարսի, Արդահանի և Բաթումի հայերին՝ մնալ իրենց տեղում, «ներշնչավորելով» նրանց «ազատություն, կյանքի և գույքի ապահովություն»[151], նման ապահովություն խոստացվում էր և «արևելյանատոլիական գավառների» հայերին, սակայն այնտեղ հայեր արդեն գրեթե չկային[152]։ Միաժամանակ հավաստում էին, որ թուրքերը իրենց արշավանքները դադարեցրել են։ Նրանք մտադրություն չունեն խախտել այն սահմանները, որ ընդունված են Բրեստի դաշնագրով։

Պատվիրակությանը իրազեկ դարձնելով Անդրկովկասում ապրիլի 22-ին նոր իշխանության՝ Անդրֆեդերացիայի ստեղծման, Բաթումում նոր բանակցություններ սկսելու մասին, որին մասնակցելու էր գերմանական պատվիրակությունը գեներալ ֆոն Լոսովի գլխավորությամբ (գեներալը նոր էր փոխարինել դեսպանության խորհրդական Վալբուրգին), Բուշեն խորհուրդ էր տալիս հայկական պատվիրակությանը. «այսուհետև իրենց ցանկություններն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են Կարսում, Արդահանում, Բաթումում իրենց շահերին, արտահայտել Անդրկովկասյան կառավարության միջոցով, որին նրանք պատկանում են»։ Պարզ ասվում էր, որ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության առաքելությունը Բեռլինում ավարտված է։ Ակնհայտ դրսևորվեց և այն հանգամանքը, որ գերմանական կառավարությունը հայկական պատվիրակությունը որպես պաշտոնական պատվիրակություն չէր ընդունում, նրան դիտում էր որպես «հայ ազգի ցանկություններն արտահայտող պատվիրակություն»[153]։

Ծանուցելով հայկական պատվիրակությանը Բաթումում նախատեսված նոր բանակցությունների մասին Բուշեն, ոչ առանց սպառնալիքի, նախազգուշացնում էր. «ինքնըստինքյան հասկանալի կլինի, որ այդ բանակցությունների վրա վնասակար ազդեցություն կունենան հայկական ավազակախմբերի մարտական գործողությունները և եթե չեզոք երկրներում չդադարեցվի հայկական քարոզչությունը»։ Ավելին, «հայերի համար ճակատագրական կլիներ Երզնկայի շրջանում իրենց գործողությունների կրկնությունը և այդ վայրերում, որտեղ հայերը կազմում են մեծամաս-

նություն, հալածանքներ կսկսվեն մահմեդական բնակչության դեմ»[154]։ Այսպիսով, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը, առանց երևույթների իրատես վերլուծության, արդարացնում էր իր դաշնակցի գործողությունները։

Հայոց Ազգային խորհրդին Բուշեն հայտարարեց, որ «հայ ժողովուրդը չի խաբվի իր հույսերի մեջ»[155], լավ իմանալով, որ թուրքերը վաղուց խախտել են Բրեստի հաշտության պայմանները, դեռ ապրիլ ամսին գրավել են ոչ միայն Բաթումը, Արդահանը, Կարսը, այլև գտնվում են Ալեքսանդրապոլի պատերի տակ, պահանջում են Բաթումը, Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղագծով ազատ երթևեկություն՝ իբր ռազմական փոխադրումների նպատակով։ Արտաքին գործոց նախարարությանը քաջ հայտնի էր, որ Կոստանդնուպոլսում 1918 թ. ապրիլի 27-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրով երկու պետությունների միջև որոշվել էին Կովկասում ազդեցության ոլորտները։ Այդ համաձայնագրով Թուրքիային էր անցել արդեն Բիֆլիսի նահանգից գրավված տարածքը՝ Ախալցխան, Ախալքալաքը, Բաթումը և գրեթե ամբողջ Հայաստանը, Ադրբեջանը։ Անդրկովկասի մնացած մասում, մասնավորապես Վրաստանում, պետք է գործեր Գերմանիան[156]։

Պատասխանելով «հայ հրոսակների գազանություններին» կապակցությամբ թուրք-գերմանական մեղադրանքներին, մայիսի 14-ի հուշագրում Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը պարզաբանում էր. «Նողկալի գործերն ու կոտորածները հայերի բնավորության մեջ չեն և բացի դրանից, նրանք քաղաքականապես բավականաչափ հասունացած են հաշվի առնելու համար, որ այդպիսի միջոցներով կվնասեն սեփական շահերին։ Եթե վրիժառության առանձին դեպքեր են պատահած եղել, մենք շատ ցավեցինք։ Բայց և չի կարելի մոռանալ, որ խոսքը այն մարդկանց մասին է, որոնք անսահմանորեն վշտացած են, որոնց ընտանիքի անդամները սպանված, պղծված և քշված են, որոնց ունեցածը չունեցածը կողոպտված և որոնց գոյությունը հիմնովին քայքայված է»։

Չգտնելով ըմբռնում գերմանական կառավարության կողմից, այնուհանդերձ, Ազգային խորհրդի պատվիրակությունը հայտնում էր. «Մենք վերադառնում ենք Հայրենիք մեր հույսերով զորացած, որ գերմանական կառավարությունը չի թողնի այդ վիճակի մեջ մի քրիստոնեական կուլտուրական ժողովրդի»։ Մոլորվածությունը առարկայական բնույթ ստացավ պատվիրակության հեռագրում՝ ծնե, Հայ Հեղափոխական Դաշնակցության կուսակցության կենտկոմ՝ Գերմանիայի և Թուրքիայի դեմ ագիտացիան ժամանակավորապես դադարեցնելու մասին[157]։

Հաղորդելով գերմանական պետական և հասարակական գործիչների մոտեցումների մասին, Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը հայտնում է, որ «Գերմանիան հայերին գերմանական կողմնորոշում չի առաջարկում, նրա նպատակն է միայն փոքր ազգերից բարեկամ շահել, որպեսզի անհրաժեշտության դեպքում, որտեղ գերմանական շահերն են պահանջում, նրանց վրա կարողանա հույս դնել»[158]։

Նոր մոտեցումները «Ջանգ» թերթը բնութագրում էր որպես Անդրկովկասի քաղաքագետների՝ կողմնորոշման հարցում մոլորության հետևանք։ «Անդրկովկասի երիտասարդ քաղաքագետներին թվում էր, թե բավական է Սեյմի ամբիոնից մի հայտարարություն անել և կես բերան այն մասին, որ Անդրկովկասն անկախ է, և որ ռուսական կողմնորոշումը փոխարինվում է գերմանականով, և Գերմանիան այդ կընդունի իբրև անկեղծ բարեկամության մի արտահայտություն և Անդրկովկասը կհամարի իր անկեղծ դաշնակիցը»։ Բայց այդպես չեղավ։ Իր պահանջը «Թուրքիան գործադրեց զենքի ուժով և նրա զինակից Գերմանիան, որի հետ Անդրկովկասյան ժողովուրդները՝ հատկապես հայերն ու վրացիները, այնքան հույս էին կապել, չկարողացավ արգելել Թուրքիայի այդ ոտնձգությունները։ Նա լսեց հայերի բողոքը, ինքն էլ միացավ այդ բողոքին, բայց և բավարարվեց դրանով։ Շարունակելով իր նախկին քաղաքականությունը, նա մատների արանքով էր նայում Առաջավոր Ասիայում մահմեդական ծովի մեջ ընկած մի բուռ հայերի սիստեմատիկ ջարդերին»[159]։

Չնայած գաղտնապահությանը, Ավստրիայի և Հունգարիայի արխիվներում պահվող փաստաթղթերը վկայում են, որ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության գործունեությունը, մասնավորապես նրա հուշագրերն ու խոսակցությունները հայտնի էին դառնում նաև Գերմանիայում Ավստրո-Հունգարիայի դեսպան Հոհենլոհեին, նրա միջոցով՝ կառավարությանը։ Դեսպանը ուղարկում էր Վիեննա ոչ միայն զեկուցագրեր, այլև պատվիրակության և արտաքին գործերի նախարարության միջև փոխանակված հուշագրերի պատճենները։

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Բուրիանին զեկուցելով Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության ապրիլի 22-ին Բեռլին ժամանելու, նրա անձնակազմի և նպատակների մասին, դեսպանը գրում էր Վիեննա. «պատվիրակությունը իրեն անվանում է Հայոց Ազգային խորհրդի պատվիրակություն, կազմակերպություն, որը ներառում է ողջ Ռուսաստանը, այդ թվում Կովկասը», ցանկություն ունի ընդունելության արժանանալ ռայխսկանցլերի կողմից, բայց «թերևս բավական կլիներ, եթե պետական քարտուղարի տեղակալը նրան ընդուներ։ Հայտնի է, որ պատվիրակությունը ցանկություն ունի մեկնել Վիեննա, հանդիպել Բուրիանի հետ[160], ստանալ նրա աջակցությունը Հայկական հարցի լուծման գործում։

Մայիսի 10-ին խիստ գաղտնի գրությամբ Հոհենլոհեն զեկուցում էր, որ գերմանական ղեկավար շրջանները, որոնք պատվիրակության ժամանման կապակցությամբ զգուշանում էին Թուրքերի հետ հնարավոր բարդություններից, այժմ ժգոհ չեն պատվիրակության Բեռլինում գտնվելուց. «Թվում է, հաջողվել է Թուրքերին վերաբերող հարցերում հայ պատվիրակներին գիջողաբար տրամադրել»։ «Այդ կապակցությամբ,— տեղեկացնում էր դեսպանը,— արտաքին գործերի լավատեղյակ աշխատակիցը և այստեղի հայամետ շրջանները, որոնք համապատասխան լրատվություն ունեն, նրանց հետ կապի մեջ են մտել և նրանց հայտնել արտաքին գործերի նախարարության ունեցած բավարարող լուրեր»։

Հայկական պատվիրակությանը հայտնվել էր, որ Թուրքական զորքերի առաջխաղացած շրջանները մեկնած գեներալ Սեքտը՝ Թուրքական բանակի գլխավոր շտաբի պետը, հյուպատոս Անդերսը և «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի թղթակից Վայթսը միատեսակ հաղորդել են. «Ներկա առաջխաղացման ժամանակ Թուրքական գազանությունների մասին լուրերն անհիմն են։ Թուրքերը պետք է փորձեն զգույշ, հանդուրժողական գործողություններով հայ բնակչությանը տրամադրել հնարավոր հանդուրժողության օգտին»[161]։ Նշված հաղորդումների վրա էր հենվում նաև Բուշհեն։

Սակայն փաստաթղթերը ցույց են տալիս հակառակը. դրանք վկայում են Թուրքական բռնությունների և գազանությունների, գերմանական և ավստրիական դիվանագիտական շրջանների կողմից փաստերը աղավաղված մատուցելու մասին։ Թուրքերի հայաջինջ քաղաքականությունը երևում է և «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի թղթակից Վայթսի և երկու բարձրաստիճան Թուրք սպաների հետ Թուրքահայաստանի և Կովկասի շրջանները 1918 թ. ապրիլի 12-ից հունիսի 13-ը այցելած Ավստրո-Հունգարիայի զինվորական շտաբի թղթակից դոկտոր Շտեֆան Շտայների զեկուցումից։ «Քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները ամեն օր մշակում էին մեզ, որպեսզի համոզեն, որ հայերը տիեզերքի ամենամեծ ոճրագործներն են, իսկ Թուրքերը՝ հայկական բարբարոսության անմեղ զոհերը։ Այն, որ Թուրքերը 1915 թ. ողջ ժողովրդին Թուրքահայաստանում բնաջնջել են՝ ընդունեցին, սակայն այն բացատրեցին որպես անհրաժեշտ կարգավորում։ Չէ՞ որ միայն հայերին են ջարդել, իսկ այսօրվա իրադարձությունների դեպքում խոսքը վերաբերում է մահմեդականներին և անշուշտ, նրանց մեջ մեծ տարբերություն կա»։

Կարևոր է նշել, որ այս տողերի հեղինակի նպատակը, ինչպես ինքն է գրում, եղել է «Եվրոպական հասարակայնությանը տեղյակ պահել այն մասին, որ գրավված շրջաններում, ռուսների կողմից վարձված և հրահրվող հայկական ավազակախմբերը բարբարոսաբար են վերաբերվում մուսուլմաններին և այդ պատճառով Թուրքիան իրավունք ուներ դիմելու ծայրահեղ միջոցների»[162]։ Սակայն լինելով նաև Արևելյան Հայաստանում, նրանք համոզվել էին, որ բարբարոսները Թուրքերն են։

Ահա և Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի զինվորական առաքելության ղեկավար ֆելդմարշալ-լեյտենանտ Յոժեֆ Պոմյանկովսկու վկայությունը. «Երբ Թուրքական բանակը հարձակվեց գրավելու Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանները, այստեղի ամբողջ հայ ժողովուրդը փախուստի դիմեց դեպի հյուսիս։ Հայերը չէին կասկածում, թե Թուրքական զորքերի կողմից ինչ վախճան է իրենց սպասում։ Սակավաթիվ հայերը, որոնք մնացել էին՝ իրոք, կոտորվեցին։ Թուրքերը այնպես էին պայմանավորվել, որ հայկական գյուղեր նախ ուղարկվեցին Թուրք

հրոսակները, որոնք կոտորած կաղմակերպեցին, ապա նոր միայն կանոնավոր թուրքական զորքերը։ Գրավված շրջաններում այլևս հայ չմնաց»[163]։ Այդ մասին լկտիաբար նշում է ինքը՝ հայերի ջարդարար Թալեաթ փաշան։ Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանի հետ 1918 թ. ապրիլի 11-ին ունեցած զրույցի ժամանակ նա նաև հաղորդած ասել էր, թե Անդրկովկասի Սեյմը կընդունի Բաթումը, Կարսը և Արդահանը զիջելու կապակցությամբ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կետերը, որովհետև «թուրքական զորքերը արդեն այնտեղ են»։ Նա համաստում էր, որ մահմեդական բեկերն ու աղալարները «ջերմությամբ կընդունեն թուրքական զորքերի մուտքը» Անդրկովկաս[164]։

Բուրիանին հայտնելով հայկական պատվիրակության վիեննա գնալու թույլտվություն ստանալու համար դեսպանության ստացած դիմումի մասին, Հոհենլոեն տեղեկացնում էր. պատվիրակությունը ընդունվել է արտաքին գործերի նախարարի տեղակալ Բուշեի կողմից. «Ես պատվիրակության անդամներին, ստացված հեռախոսային հրահանգի համաձայն, հայտնեցի, որ արտաքին գործերի նախարարությունը համաձայնվել է նրանց ուղևորության Վիեննա, սակայն Ձերդ գերազանցությունն ի վիճակի չէ պարոններին անձամբ ընդունել։ Պատվիրակությունը հրաժարվեց Վիեննա մեկնելու մտադրությունից»։ Հոհենլոեն զեկուցագրում ամբողջությամբ բերում էր հայկական պատվիրակության մայիսի 4-ի հուշագիրը և Գերմանիայի արտաքին գործերի նախարարության մայիսի 8-ի պատասխան հայտարարությունը[165]։

Թուրքական խոստումների «անկեղծության», ինչում համոզում էին գերմանացիները, և կովկասյան իրադարձությունների մասին պատվիրակությունը իմացավ միայն հունիսի սկզբներին, կիև ժամանելուց հետո։ Պատվիրակությունը ռայխսկանցլեր Հերտլինգին հղեց հիմնավորված փաստաթուղթ՝ Բրեստից հետո հայերի նկատմամբ թուրքերի ոճրագործությունների, պայմանագրի խախտման և Կովկաս առաջխաղացման մասին։ Պատվիրակության խնդրանքը Բեռլին վերադառնալու թույլտվության մասին, կիևում գերմանական դեսպանության կողմից մերժվեց[166],

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆՎԱՃՈՂԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱԹՈՒՄԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Բաթումի կոնֆերանսի սկիզբը

Բաթումի հաշտության կոնֆերանսը կայացավ 1918 թ. մայիսի 11-ից հունիսի 4-ը ընկած ժամանակաշրջանում։ Բանակցությունները և ընդունված փաստաթղթերը նորից հաստատեցին այն ճշմարտությունը, որ համաշխարհային պատմության մեջ գրեթե չկա մի պետություն, որն այնքան դաշնազանց լինի, ինչպես Օսմանյան կայսրությունը։ Կայսրության պատմությունը պարունակում է ստվարածավալ վավերագրեր՝ «Բարեկամության, եղբայրության, հավերժ խաղաղության» կարգախոսներով, որոնք, սակայն, մոռացվել են, ոտնակոխ եղել հենց իրենց՝ փաստաթուղթը ստորագրողների և հաստատողների կողմից։ Փոխվել էին գործող անձինք՝ սուլթանները, մեծ վեզիրները, նախարարները, զորավարները... մնում էր սկզբունքը՝ խարդավանքը, շողոքորթությունը և ըստ հարկին՝ բիրտ ուժը։

«Բարեկամության և խաղաղության դաշինք» կնքելու համար Բաթում ժամանեցին Օսմանյան կայսրության, Գերմանական կայսրության, Անդրկովկասյան Հանրապետության և Հյուսիսային Կովկասի ու Դաղստանի մահմեդական ժողովուրդների պատվիրակությունները։

Գերմանական պատվիրակությունը ղեկավարում էր գեներալ-մայոր ֆոն Լոսովը, պատվիրակության կազմում էին գերմանական կայզերական դեսպան կոմս Շուլենբերգը, գերմանական հածանավի հրամանատար ֆոն Հեսը, ֆոն Վեսենդոկը (քարտուղար)։

Օսմանյան կայսրության պատվիրակության ղեկավարը արդարադատության նախարար Հալիլ բեյն էր։ Պատվիրակության կազմում էին Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան, Ընդհանուր աշխատանքի նախարարության երկրորդ քարտուղար Մուհթար բեյը, Բարձր դռան օրենսդրական խորհրդականների

գրասենյակի տնօրեն Նուսրեթ բեյը, գլխավոր շտաբի գեներալ Սադրկ բեյը։

Անդրկովկասյան հանրապետության պատվիրակությունը ղեկավարում էր կառավարության նախագահ և արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելին։ Պատվիրակության կազմում էին ընդհանուր օգնության նախարար Հովհ. Քաջազնունին, ֆինանսների նախարար Ա. Խատիսյանը, առևտրի և արդյունաբերության նախարար Մ. Հաջինսկին, Սեյմի անդամներ Ն. Նիկոլաձեն, Մ. Ռասուլ-զադեն և ուրիշներ։

Հյուսիսային Կովկասի և Դաղստանի մահմեդականներին ներկայացնում էին Հայդար բեյ Բամատովը և Զ. Դեմիրխանովը։

Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը կոնֆերանսին մասնակցել չթույլատրվեց, չօգնեց և Գերմանիայի միջնորդությունը։

Առաջին նիստը բացեց Հալիլ բեյը։ Օսմանյան կայսրության կառավարության արդարադատության նախարարը խոսքը սկսեց շողոմքոր ողջույնով «ազատության և անկախության աստղին, որ երևում է Կովկասի գեղեցիկ երկնակամարում, երբ համաշխարհային պատերազմի ավերումները հետզհետե ավելի սոսկալի են դառնում, երբ երկրի վրա օրը օրին ավելի է ընդարձակվում այդ զարհուրելի աղետը»։ Նա մաղթեց, որ «Կովկասի լեռներն ու հովիտները, գյուղերն ու քաղաքները ավելի շուտ օգտվեն փայլատակող այդ աստղից, որ Կովկասի գեղեցիկ երկիրը ավելի շուտ ստանա երջանկության պայմաններ, որոնք պաշտպանեն նրա ժողովուրդների կյանքն ու ունեցվածքը և ապահովեն մարդու իրավունքներ։ Իբրև դրա երաշխիք դիտելով Թուրքիային, Հալիլ բեյը հավաստեց, որ կոնֆերանսի աշխատանքները «հիմնավորապես կհաստատեն ազատությունն ու անկախությունը և հիմքեր կդնեն, որոնք համապատասխան կլինեն երկու երկրների շահերին»։

Հյուսիսային Կովկասի և Դաղստանի տեղական (մահմեդական— Հ. Ա.) ժողովուրդների անունից ողջունելով խաղաղության կոնֆերանսի աշխատանքները, Բամատովը վստահություն հայտնեց, որ Կովկասի ժողովուրդների ընդհանուր ջանքերի շնորհիվ և «Բարձր տերությունների ազդեցիկ օգնությամբ (նկատի ուներ Գերմանիան և Թուրքիան) հնարավոր կլինի կայուն հիմք ստեղծելու Կովկասի անկախ պետության համար։ «Ջորս դաշնակից տերությունների բարյացակամ վերաբերմունքը կովկասյան պետության կազմակերպման նկատմամբ, կօգնի կովկասյան ժողովուրդներին, նրանց իղձերի իրականացմանը՝ քաղաքական, տնտեսական և քաղաքակրթության բնագավառում»,— հավաստիացնում էր Բամատովը։ Ապա նա տեղեկացրեց կոնֆերանսի մասնակիցներին՝ «Հյուսիսային Կովկասի տեղական ժողովուրդների միությունը և Դաղստանը իրենց անկախությունն են հռչակել և այն հայտնել են Կ. Պոլիս՝ Բարձր դռանը և նույնպես ի գիտություն են հայտնել մյուս դաշնակից պետություններին»[1]։

Ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր՝ Տրապիզոնում կայացած անդրկովկասյան և թուրքական մեկամսյա բանակցությունների ժամանակավորապես դադարեցման մասին և հենվելով դրանց վրա, Չխենկելին առաջարկեց Բաթումում սկսված բանակցությունները դիտել որպես Տրապիզոնում մարտի 1-ին սկսված բանակցությունների շարունակություն՝ հիմք ընդունելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Չհամաձայնվելով Չխենկելու կովկաններին, Հալիլ բեյը բերեց իր «հիմնավորումները». Անդրկովկասի պատվիրակության Տրապիզոնից հեռանալուց հետո «թուրքական զորքերի և անդրկովկասյան զորքերի միջև վերսկսվեց պայքարը և, դժբախտաբար, արյունը նորից հոսեց, ուրեմն մեր հարաբերությունների բնույթը փոխվեց, հետևաբար, ես չեմ կարող Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ընդունել որպես ներկա բանակցությունների հիմք»։

Հալիլ բեյին չբավարարեց նաև Չխենկելու այն բացատրությունը, թե Թուրքիայի դեմ պատերազմել է Ռուսաստանը և ոչ թե Անդրկովկասը։ Պատվիրակությունը եկել է Բաթում, որպես անկախ պետության պատվիրակություն։

Չարգացնելով իր նախորդ մտքերը՝ Հալիլ բեյը նկատում է, որ թուրքական զորքերը կռվել են ոչ ռուսական բանակի դեմ, որը Բրեստ-Լիտովսկի պայմանագրից հետո հետ էր քաշվել, այլ Անդրկովկասի զորքերի դեմ։ «Մի անգամ ևս դա ցույց է տալիս, որ կառավարությունների միջև եղած հարաբերությունները փոխվել են, և որ ինքն ամենևին չի համաձայնվի, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ներկա բանակցությունների հիմք հանդիսանա»,— պնդեց թուրքական պատվիրակության ղեկավարը, ավելացնելով՝ որպեսզի անօգուտ կերպով չշարունակվեն վիճաբանությունները, կցանկանար Անդրկովկասի պատվիրակությանը ներկայացնել «խաղաղության ու բարեկամության» մի պայմանագիր, որ ինքն է պատրաստել։ Նրա կարծիքով, այդ կերպ պատվիրակությունները ավելի արագ կհանգեին արդյունքի, քանի որ «երկու կողմերի շահերը պահանջում են հնարավորին չափ շուտ իրենց բանակցությունները լավագույն արդյունքի հասցնել»։

«Խաղաղության և բարեկամության» օսմանյան ծրագիրը հանձնելով Չխենկելուն, Հալիլ բեյը մեկնաբանում է. «Փաստաթուղթը պարունակում է քաղաքական, տնտեսական, իրավաբանական և ռազմական տեսակետներ», և որ ինքը անձամբ Անդրկովկասի պատվիրակության հետ վիճաբանություններ կսկսի «կարևոր քաղաքական հարցերի շուրջ»։ Նա մերժում է Չխենկելու առաջարկը՝ քաղաքական հարցերը քննարկել բոլոր պատվիրակությունների նախագահների մասնակցությամբ։ Այս անգամ արդեն, հենվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վրա, Հալիլ բեյն ասաց. «Այն հարցերը, որոնք վերաբերում են երկու երկրներին, կարծարծեն երկու հետաքրքրվող կողմերը»։ Ի գիտություն ընդունելով օսմանյան և անդրկովկասյան պատվիրակությունների տեսակետները Բրեստ-Լիտովսկի պայմանագրի նկատմամբ և պատրաստակամություն հայտնելով ուսումնասիրելու օսմանյան ծրագիրը, ֆոն Լոսովը հայտարարեց,

որ ինքը «կմասնակցի վիճաբանություններին, որպեսզի պաշտպանի գերմանական շահերը»[2]։

Լոսովը արտաքին գործերի նախարարությունից ապրիլի 30-ին ստացել էր հանձնարարական Անդրկովկասի պատվիրակության հետ Բաթումում բանակցելու ժամանակ ձգտել, որպեսզի հայերի համար երկրամասի այն շրջաններում, որտեղ կա համախմբված բնակչություն, ապահովվի տեղական ինքնավարություն վրացիների և թաթարների կողքին, լինի գիջում իրենց կրոնական և մշակութային գործերը հոգալու համար։ Պետք էր հորդորել օսմանյան կառավարությանը, որպեսզի Բրեստ-Լիտովսկի հաշտությամբ և Անդրկովկասի հետ կնքվելիք զաշնագրով թուրքերին անցնող շրջաններում, ուր հայերը համախմբված բնակություն ունեն, ապահովվի տեղական ինքնավարություն[3]։ Այս գործն էլ ցանկանում էր պաշտպանել ֆոն Լոսովը։ Սակայն գերմանական կառավարության լիազորի գործունեությունը, ելնելով թուրքական պահանջներից, ստացավ այլ ընթացք։

«Անկախություն, բարեկամություն, հավերժ խաղաղություն» հավակնող Հալիլ բեյի ներկայացրած երիտթուրքական ծրագիրը տարածքային նոր թալան էր, թուրքական անհագ ախորժակի նոր դրսևորում։ Մերժելով Տրապիզոնում առաջ քաշած իր իսկ սկզբունքները, թուրքական պատվիրակությունը մայիսի 11-ի պայմաններում փաստորեն դնում էր Թիֆլիսի, Քութայիսի և Երևանի նահանգների՝ հիմնականում հայերով բնակեցված նոր տարածքների, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի զավթման պահանջ։ Դնելով երկաթուղով թուրքական զորքեր անարգել անցման հարցը, թուրքական պատվիրակությունը դրա անհրաժեշտությունը հիմնավորում էր «մուսուլմանների անվտանգության ապահովման և միջազգային զորքի տեղափոխման» պատրվակով։

Նպատակը, սակայն, դա չէր. հայերին թողնելով հազիվ 9 հազար քառ. վերստ լեռնոտ տարածություն Արագածի և Սևանի միջև, դրանով իսկ Թուրքիան անարգել մուտք էր գործում Անդրկովկաս և իր ազդեցության տակ առնում Կովկասյան լեռնաշղթայից հարավ գտնվող բոլոր հողամասերը, Կարս-Սուրմալու-Նախիջևան-Զանգեզուր-Ղարաբաղ առանցքով՝ միանում Կովկասյան և Պարսկական Ադրբեջանին, իսկ հյուսիսում՝ Դաղստանի վրայով, Հյուսիսային Կովկասի մահմեդականներին։ Նրանց առջև բացվում էին լայն հեռանկարներ դեպի անդրկասպյան թուրք-թաթարական ցեղերը և կենտրոնական Ասիայի իսլամական աշխարհը։

Ինչպես դիպուկ նկատել է գեներալ Հինդենբուրգը, «Թուրքերը օսմանյան Հայաստանի սահմաններից նետվեցին Անդրկովկաս։ Համիսլամիզմի ոգեշնչող ուժը և զինվորականության կիրքը Կոստանդնուպոլսում կհանգստանան միայն այն ժամանակ, երբ Բաքուն ևս կհանձնվի Թուրքիային, հենց այն ժամանակ, երբ տեղի է ունենում թուրքական հին ասիական տիրապետության անկումը»։ Բաքվից կբացվեր ճանապարհ դեպի Անդրկասպյան երկրամասե։

Ավստրո-Հունգարիայի գլխավոր զինվորական շտաբին տեղյակ պահելով Թուրքական պահանջների մասին, ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկին գրում էր. «Եթե թուրքերի ցանկությունները չկատարվեն, 3-րդ բանակը անմիջապես կանցնի հարձակման»։ Նա, միաժամանակ, հայտնում էր երիտթուրքերի կարծիքը, թե կովկասյան մուսուլմանները «վախենալով բոլշևիկների սպառնալիքից, ձգտում են իրենց պետությունը սերտորեն կապել թուրքական հողին»[5]։

Հայտնելով, որ «Թուրքական հայացքները սևեռվել են Բաքուն և Վլադիկավկազը, ամբողջ Կովկասը զավթելու վրա»[6], Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի միջոցով Բեռլին հղած հեռագրում գեներալ Լոսովը արտաքին գործերի նախարարությանը տեղեկացնում էր. «Թուրքական չափազանց պահանջները նույնիսկ զուտ հայկական շրջանների՝ Ախալքալաքի, Ախալցխայի և Երևանի նկատմամբ, ունեն շատ հեռավոր նպատակ, այն է՝ Կովկասի բացարձակ տնտեսական կողոպուտ, նաև Անդրկովկասում հայերի կատարյալ բնաջնջում»։

«Ամսի 13-ի երեկոյան թուրքերը վերջնագրով պահանջեցին Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծի հանձնումը, առանց իմ համաձայնությունը ստանալու կամ նախապես ինձ տեղեկացնելու։ Ես բողոքեցի այդ վարմունքի դեմ»,— հայտնում էր ֆոն Լոսովը։ Նա խնդրում էր արտաքին գործերի նախարարության կարգադրությունը, որտեղ արտահայտվեին հետևյալ սկզբունքները. 1) թուրքերը պետք է բրեստի դաշնագրությունն ընդունեին որպես հիմք, 2) որպեսզի թուրքերի պահանջը թուլացվի, Ախալցխայի մահմեդական շրջանը, սահմանն ուղղելու ձեվով, փոխանակվի Բաթումից հյուսիս վրացական շրջանի և Կարսից արևելք գտնվող զուտ հայկական մասի հետ, որով Կարս ամրոցը կմնա թուրքերին։ Կարս-Ջուլֆա երկաթգծով թուրքական զորամասերի փոխադրումը կարող է իրականացվել միայն գերմանացիների ղեկավարությամբ և երաշխիքով։ Այդ նպատակով անհրաժեշտ է Թիֆլիս ուղարկել մի առաքելություն և գերմանական մեկ գումարտակ՝ ստանձնելու Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա ընկած երկաթուղու կայարանների հսկողությունը և կարգապահությունը։ «Այս բանը անպայման պահանջում են կովկասցիները, որովհետև նրանք խիստ անվստահություն ունեն դեպի թուրքերը և բացարձակապես մերժում են կովկասյան գործերում թուրքական ղեկավարումը կամ ազդեցությունը»։

Հետաքրքիր է գեներալ Լոսովի հետագրությունը. «Եթե կա ցանկություն խույս տալ Կովկասում նոր արյունալի կռվից, պետք է դեսպանը (Բերնսդորֆը— Հ. Ա.) մեծ վեզիրին անմիջապես բացատրի. գերմանական բանակի Գերագույն հրամանատարությունը երբեք չի կարող նպաստել էնվերի պահանջին և ամենաազդու բողոք կբարձրացնի զինակիցների շահերը սաստկապես վնասող թուրքական այս վարմունքի դեմ»[7]։

Փաստաթղթերը վկայում են, որ թուրքական նկրտումների նոր ծավալը առաջացրեց Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի զգույշ և

սառը մոտեցումը, նույնիսկ առանձին դեպքերում՝ դիմադրությունը։ Փոխվեց Գերմանիայի վերաբերմունքը Թուրքիայի աշխարհակալական անհագ ախորժակի նկատմամբ։ Երևան եկան Գերմանիայի քաղաքական և ռազմավարական նպատակները Անդրկովկասի նկատմամբ. Եվրոպան և Ասիան կամրջող և ռազմավարական իշխող դիրք գրավող երկրամասից կարելի էր շարժվել դեպի Պարսկաստան, Անդրկասպյան երկրամաս և Միջին Ասիա, Աֆղանստան, Հնդկաստան, նույնիսկ՝ Ջինաստան։ Այդ ցույց է տալիս և գերմանական բանակի գլխավոր շտաբի 1918 թ. մշակած քարտեզ-ուղեցույցը։ Օդեսա-Բաթում ծովային և Բաթում-Բաքու, Բաթում-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղիները ամենակարճ ճանապարհն էին դեպի Պարսկաստան և Հնդկաստան[8]։

«Անգլիացիների՝ Բաղդադը գրավելուց հետո Բեռլինում սկսեցին մտածել, որ հարկավոր է գտնել նոր ճանապարհ դեպի Պարսկաստան ու Աղվանստան և եզրակացրեցին, որ Սև ծովի, ապա Բաթումի, Թիֆլիսի, Բաքվի վրայով ճանապարհը ամենահարմարն է։ Բայց քանի որ Գերմանիան, դատելով Թուրքիայի պահվածքից, մինչև հիմա չէր կարողացել հասնել բավարարող համաձայնության՝ ուղղակի բանակցությունների միջոցով, որոշեց նպատակին հասնել Անդրկովկասյան հանրապետության, նույնիսկ Ռուսաստանի հետ փոխըմբռնման ճանապարհով։ Այստեղից ծագեց քաղաքական հակասություն Գերմանիայի և Թուրքիայի միջև, որը ծայրահեղորեն ոչ բարեհաջող ազդեց վերջինիս հետագա պատերազմական ընթացքի վրա և դեպքերի բերումով կարող էր նույնիսկ վերածվել վտանգի՝ գերմանա-թուրքական դաշինքի գոյության համար»։

Այս վերլուծությունից հետո Պոմյանկովսկին գրում է. «Գերմանական ակցիան Կոնստանդնուպոլսում տարվում էր գլխավորապես զինվորական լիազոր ֆոն Լոսովի միջոցով, ընդ որում, Թուրքերի նկատմամբ խորապես թշնամական ոգով։ Բեռլինից Թիֆլիս ուղարկվեց գերմանական առաքելություն՝ գնդապետ բարոն Կրես Կրեսենշտեյնի գլխավորությամբ։ Վերջինս, նույնպես բարեկամաբար չէր տրամադրված Թուրքերի նկատմամբ, սակայն տիրապետում էր դիվանագիտական մեծ արվեստի և նուրբ վարվելակերպի, որից Լոսովը բոլորովին զուրկ էր»[9]։

Սրվում էր պայքարը ազդեցության ոլորտների համար Անդրկովկասում։ Գերմանիան ցանկանում էր իր ազդեցության շրջափուկները տարածել Վրաստանի վրա, Վրաստանը վերածել իր հենակետի և այդտեղից շարժվել ավելի հեռու, նախ դեպի Հայկական Լոռի և Փամբակ, որտեղ կային պղնձահանքեր և հարուստ անտառներ։ Գերմանիան Վրաստանից պահանջում էր հայտարարել անկախություն, խոստանալով իր հովանավորությունը արտաքին թշնամիների դեմ, ինչպես նաև դնել պատմական Վրաստանի սահմանների վերականգնման հարցը։

Օգտվելով Գերմանիայի պաշտպանությունից, դեռևս 1918 թ. ապրիլի 5-ին, բողոքելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի Անդրկովկասին վերաբերող մասի դեմ, Ա. Ջխենկելին վրացական տարածք էր համարում նաև Արդահանը և Կարսի մարզի մի մասը։ «Մեր կարծիքով,—

գրում էր նա Քառյակ դաշինքի երկրների ղեկավարներին,— ոչ Թուրքերն իրավունք ունեն պահանջելու Կարսը, Արդահանը, Բաթումը, ոչ էլ ռուսները իրավունք՝ զիջելու»։ Դա Ջխենկելին հիմնավորում էր նրանով, որ վրացական այդ գավառները Թուրքերը գրավել են մոտ 200 տարի առաջ, քրիստոնյա վրացիներին բռնի մահմեդականացրել, սակայն մինչև Թուրքերի գրավումը, այդ գավառները 100 տարի պատկանելիս են եղել Վրաստանին։ Բաթումի բոլոր շրջաններում, Արդահանում, նույնիսկ Կարսի օկրուգի տարածքի մի մասում բնակչությունը վրացի մուսուլմաններ են, որոնց մայրենի լեզուն վրացերենն է։ Թուրքերն ու ռուսները արդեն բաժանել էին իրար մեջ վրացական գավառները մինչև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված պայմանագիրը։ Համարելով այդ գավառները «Վրաստանի օրինական սեփականություն», Ջխենկելին կարծում էր, որ դրանք պետք է վերադարձվեն վրացիներին[10]։ Այս տեսակետը պաշտպանում էր Գերմանիան։ Անդրկովկասի պատվիրակությունը մեծ հույսեր կապելով Գերմանիայի հետ, կարծում էր, թե «գերմանացիների Բաթումում գտնվելը կունենա Թուրքիային հագցրած զսպաշապիկի նշանակություն»[11]։

Ֆոն Լոսովի խորհրդով Հալիլ բեյի և Վեհիբ փաշայի հետ մայիսի 13-ի երեկոյան ժամը 11 անց 30-ից մինչև գիշերվա 2 անց 30 րոպե մասնավոր զրույց ունեցան Ա. Խատիսյանը և Հ. Քաջազնունին։ Հայ պատվիրակների ցանկության մասին Թուրք պատվիրակներին հայտնել էր մինչ այդ նրանց հետ հանդիպած Ջխենկելին։

Թուրքական պատվիրակներին Ա. Խատիսյանը պարզաբանեց. Տրապիզոնում երկու կողմերը եկան համաձայնության, որ ընդունելով Բրեստի հաշտությունը, Անդրկովկասը իրեն պաշտպանում է Թուրքերի հետագա ակնկալություններից. գաղթականների հարցում հավաստիացվեց, որ նրանց կթույլատրվի վերադառնալ հայրենիք, բնակվել Վանի շրջակայքի մարզերում, զենք կրելու իրավունք, մինչև հարևան քրդերի զինաթափումը։ Այդ խոստումներով Կովկաս վերադարձած պատվիրակության անդամները շատ չանցին համոզել քաղաքական կուսակցություններին և ժողովրդական մասսաներին Բրեստի դաշնագրի ընդունման անհրաժեշտության մեջ։ Կառավարությունը փոխվեց, Բրեստի պայմանագրի համաձայն Կարսը հանձնվեց առանց կռվի և մարզից հեռացան Անդրկովկասի զորքերը, կատարելով իրենց պարտականությունները, անդրկովկասյան պատվիրակությունը Բաթում եկավ այն համոզմունքով, որ այստեղ բանակցությունները կշարունակվեն Տրապիզոնում ընդունված սկզբունքների քննարկումով։ «Մինչդեռ, Թուրքերը այստեղ մեզ ներկայացրեցին նոր, ծանրագույն պահանջներ։ Կանգ չառնելով մյուս կետերի վրա, նշում ենք սահմանների մասին կետը, որոնցով մեզանից պոկվում են հինգ գավառ։ Այդ նոր պահանջները մեզ համար ստեղծում են անտանելի վիճակ։ Դուրս է գալիս, որ մենք եղել ենք խաբված և ինքներս ակամա խաբել ենք մեր ժողովրդին, հավաստելով, որ Թուրքերը իրենց պահանջներում Բրեստի դաշնագրից այն կողմ չեն անցնի»,—

նշեց Խատիսյանը։ Նա ընդգծեց, որ պահանջվող տարածքի ղիջումը Թուրքերին՝ միանգամայն անընդունելի է թե՛ Անդրկովկասի տեսանկյունից, թե՛ հայերի տեսանկյունից՝ հատկապես։ Հալիլի պատասխանը հոգեհարազատ էր նախորդների ոգուն. եթե Տրապիզոնում կնքվեր դաշնագիր, եթե Անդրկովկասի կառավարությունը պատվիրակությանը հետ չկանչեր և չվերսկսեր ռազմական գործողությունները, ապա Թուրքիան այլ պայմաններ, բացի Բրեստում սահմանածից, չէր դնի։ Անդրկովկասը ինքը խախտեց Տրապիզոնում ձեռք բերած համաձայնությունը և Թուրքերի համար Բրեստի դաշնագիրը դարձրեց ոչ պարտադիր։ Ինչ ասել է Ռաուֆ բեյը Խատիսյանին, մասնավոր խոսակցության ժամանակ, Ռաուֆի անձնական կարծիքն է, որի համար կառավարությունը պատասխանատու չէ։ Քանի որ Տրապիզոնից անդրկովկասյան պատվիրակության հեռանալուց հետո Թուրքերը ստիպված են եղել արյուն թափել, նրանք չեն կարող սահմանափակվել Բրեստի պայմանագրով և պետք է ստանան լրացուցիչ փոխհատուցում։

Երևանի նահանգի պատկանելի մասի նկատմամբ Թուրքական պահանջների շարժառիթներում գլխավոր պատճառը օսմանյան նախարարը համարեց «Կովկասից եկող լուրերը՝ Բաքվում և Երևանի նահանգում մուսուլմանների նկատմամբ հայերի բռնությունը։ Թուրքիայի հասարակական կարծիքը սարսափելի զայրացած է և պահանջում է բավարարում»։

Ինչպես Թուրքիայի մյուս ղեկավարները, այնպես էլ Հալիլը խոսքով դրսևորեց իր «սրտակից» մոտեցումը հայերին։ Երիտթուրքերի կուսակցությունում կա երկու հոսանք՝ բիչ անհաշտ և առավել անհաշտ։ Ամենավերջին պահին հաղթելու է երկրորդ հոսանքը, նա էլ պնդելու է Թուրքական նախագծի համեմատ նոր սահմաններ գծելու վրա։ Ինքը՝ Հալիլը, շատ վաղուց իր վրա վերցնելով հայերի և Թուրքերի միջև հաշտարարի դերը, այնքան էլ չի համակրում նախագիծը, սակայն անուժ գտնվեց փոխելու այն, ինչպես անուժ է այդ անելու այժմ։ Ինքն իրեն արդեն Թույլ է տվել տրված հրահանգից անելու մեկ խոշոր խախտում. իրեն հրամայված էր պահանջը ներկայացնել վերջնագրի ձևով, սակայն այդ չի արել և սահմանափակվել է միայն նախազգուշացումով։ Հալիլը դրեց երկու հարց. 1) հայերը Կովկասում պետք է դադարեցնեն մուսուլմանների դեմ բռնությունները և «ապացուցեն, որ խելոքացել են», 2) հնարավորություն տան Թուրքերին շուտափույթ օգտագործել երկաթուղին՝ զորքերը Պարսկաստան տեղափոխելու և Թավրիզը հնարավորին չափ շուտ գրավելու համար։

Ռազմական թեմայով առավել մանրամասն խոսեց Վեհիբ փաշան։ Մինչ այդ, նա խոսեց Երզնկայում, Մամախաթունում, Էրզրումում հայկական «վայրագությունների», հետ քաշվող զորամասերի կողմից մուսուլմանների նկատմամբ կիրառված «բռնությունների», Թուրք զորքի ցաոման, իր «մարգասիրական» հրահանգների, գրավված շրջաններում հայերի նկատմամբ օսման բանակի «միանգամայն վայելուչ» վերաբերմունքի, 1878 թ. սահմաններն անցնելուց և Կարսը գրավելուց հետո «անկախ ազգությունից» բնակչությանը տեղում մնալու կոչի, «օսմանյան բանակի պաշտպանության տակ անցնելուց հետո» նրանց «կյանքի և գույքի» անվտանգության երաշխիքի մասին։

Չխննկելու խնդրանքը,՝ Թույլ տալ գաղթականներին վերադառնալ հայրենի վայրերը, Վեհիբը մերժեց, իբր ոչ թե քաղաքական պատճառով, այլ բացառապես ռազմական իրադրության դրդմամբ, որում, ըստ նրա, «օսմանյան կառավարությունը մասնակից չէ. դա միայն իր հրամանն է», դրանով արդարացնելով մարդկային իրավունքների ոտնահարման Թուրքական պետական գործելակերպը։

Անգլիական առաջ շարժվող զորքերին դիմակայելու կարճ ճանապարհը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղին է և ինքն ունի էնվեր փաշայի հրամանը՝ շտապ գրավել այդ գիծը, շարունակեց Վեհիբը, ասելով. «Գործողությունը չունի թշնամական ինչ-որ բան հայերի դեմ, դա ռազմական շարժակազմերի անցում է հայկական տարածքով։ Նա ձեռք կառնի ամեն միջոց՝ իր զինվորների կողմից հնարավոր խժդժությունների դեմ, նա պատասխանատու է իր բանակի կարգապահության և վայելչության համար, համաստում է, որ իր կառավարությունը չունի ոչ մի հետին միտք, օրինակ, երկրին տիրելը։ Եթե նա ցանկություն ունենար զորքով գրավել Երևանի նահանգը, իրեն ինչ-որ ստի դիմելու հարկ չէր լինի, նա այդ կաներ բացահայտ, ցանկացած պահին, չվախենալով, որ կհանդիպի որևէ լուրջ դիմադրության»։ Նկատելով, որ հայերի շահերը ևս պահանջում են Թուրքական զորքերի տեղափոխումը Պարսկաստան, քանզի այդ դեպքում հայերը կխուսափեին նոր արյունահեղություններից և ավերածություններից, Վեհիբը չկարողացավ թաքցնել իր հրականդեմքը։ Նա զգուշացրեց, որ հայերի մերժումը կբարդացնի և կդժվարացնի իր առաջադրանքը, սակայն չի կանգնեցնի նրա լուծումը, քանզի եթե հայերը չհամաձայնվեն բարի կամքով Թույլ տալ անցնելու, ինքը կանդնի ուժով։ «Եթե հայերը չտան երկաթուղին, նա կանցնի «հանդիսավոր քայլքով»։

Վեհիբի ծրագրերում տեսնելով մեծ վտանգ, Քաջազնունին հստակ մատնանշեց հայ պատվիրակների տեսակետը. այն պահին, երբ Դուք պահանջում եք Ախալքալաքը, Ախալցխան, Ալեքսանդրապոլը, Էջմիածինը և Սուրմալուն, երբ Դուք պատրաստվում եք մահացու հարված հասցնել հայ ժողովրդի քաղաքական, գուցե և ֆիզիկական գոյությանը, մեր միջև չի կարող լինել ոչ մի համաձայնություն, ոչ մի հարցի շուրջ։ Նախ պետք է որոշել սահմանների մասին հարցը, որի լուծումից կախված են մնացած հարցերը։ «Ես գիտեմ, որ մերժման դեպքում Դուք կգործադրեք ուժ, և դա մեզ սպառնում է պատճառել մեծ վնասներ։ Բայց և այնպես, եթե Դուք չհրաժարվեք հավակնություններից, Ձեր պահանջների անցման համաձայնություն մենք չենք տա։ Իմ ընկերը ասաց Ձեզ, որ դա շատ դժվար է, ես ասում եմ, որ դա անհնար է։ Ինձ թվաց (նման ապավորություն ստացավ և Խատիսյանը), որ այդ խոսքերը

ունեցան որոշ ազդեցություն և Թուրքերի տոնը դարձավ պակաս վերամբարձ։ Նրանք երկար ձգտում էին համոզել մեզ՝ զիջել, սակայն մենք ամուր կանգնած էինք մեր դիրքերում»[12],— գրել է Քաջազնունին, նույն օրը, մայիսի 13-ին Թիֆլիս՝ Ազգային խորհրդին։

Չնայած թուրք պատվիրակների հետևողական հարցադրումներին և ձգտումներին, նրանց քաղցրածոր խոսքերն առաջացրին հայ պատվիրակների թյուր ըմբռնումը, թե Թուրքերի մեջ «ներկա պահին չկան այլ մտքեր ու ցանկություններ», քան շուտափույթ Թավրիզ ընկնելը։ Թուրքական պլանները լավ հասկանում էր ավստրո-հունգարական ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկին։ Դեպի Արևելք շարժման Թուրքական միտումը «կասկած հարուցել չէր կարող, քանի որ Թուրքիան համաթուրանական շարժման ղեկավարությունը իր ձեռքում էր պահում։ Թուրք-թաթարական ժողովուրդներով բնակեցված երկրներից դեպի Ռուսաստան տանող կամուրջը, այնուհանդերձ, Կովկասն էր, որի ստացումը կամ զավթումը համաթուրանական պլանների իրականացման հիմնական պայմանն էր։ Այն, որ այդ քաղաքական մտադրության մեջ անգնահատելի նավթահանքերի մոտակա գրավման ակնկալիքը մի առանձնահատուկ դեր ուներ և երիտթուրքական գործարար քաղաքագետների համար մի հիմնական նշանակետ էր ստեղծվել, հավանաբար կասկածի ենթակա չէր»[13],— գրել է Թուրքական քաղաքական ու զինվորական շրջաններին մոտ կանգնած ավստրո-հունգարական բարձրաստիճան զինվորականը։

Թուրքական դիվանագիտական խարդավանքը երկար սպասել չտվեց։ Մայիսի 15-ին գիշերային հանկարծակի հարձակումով Թուրքերը գրավեցին երկաթուղային կարևոր հանգույց Ալեքսանդրապոլ բերդաքաղաքը։ Սկսվեց վանդալիզմի նոր փուլ, զանգվածային բռնություն, թալան, սպանություն, միաժամանակ դատարկվեց Սուրմալուն։

Թուրքերի դաշնագրույժ քաղաքականությունը 1918 թ. մայիսի 17-ին դիպուկ բնորոշել է «Կավկազսկոյե սլովո» թերթը. «Թուրքերի գործունեության ուխտադրույժ բնույթը Անդրկովկասի համար ակնհայտ էր հենց սկզբից, այն օրվանից, երբ նրանք առաջինը փորձ կատարեցին բանակցություններ վարել Թուրքիայի խորքերում այն ժամանակ կանգնած ռուսական զորքերի հետ։ Թուրքերի բոլոր հաջողությունները, որոնք ուղեկցել են նրանց Տրապիզոնի, Երզնկայի, Էրզրումի, իսկ հետո Սարիղամիշի, Բաթումի, Կարսի, Օզուրգեթի և այժմ Ալեքսանդրապոլի գրավումով, հանդիսացան ոչ այնքան ռազմական գործողությունների հաջող իրականացման արդյունք, բառիս բուն իմաստով, որքան դիվանագիտական խորամանկությունների և միջազգային իրավունքների ու զինադադարի մի շարք պայմանների խախտման հետևանք։ Մեր կողմից Թուրքիան ոչինչ չի տեսել, բացի անվերջ զիջումներից ու սիրալիրությունից»։

Թուրքական հրամանատարության մայիսի 14-ի ծանուցումը Անդրկովկասյան հանրապետության տարածքով օսմանյան զորքի

անցման մասին, անդրկովկասյան պատվիրակությունը ստացավ մայիսի 15-ին, առավոտյան ժամը 6-ին, երբ Թուրքական զորքերը արդեն մտել էին Ալեքսանդրապոլ։ Չխենկելին մայիսի 15-ին Հալիլ բեյին հղած հուշագրով վճռականապես բողոքեց Թուրքական զորքերի այդ արարքի դեմ, նշելով, որ «Դա ուղղակի հարված է հասցնում Անդրկովկասի հանրապետության սուվերենությանը, որի անկախությունը ճանաչվել է Բարձր դռան կողմից, ինչը օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար Ն. գ. Վեհիբ Մահմուդ փաշան ապրիլի 27-ի հեռագրով պաշտոնապես հայտնել էր Անդրկովկասի հանրապետության կառավարությանը»[14]։

Մայիսի 14-ի Թուրքական հուշագիրը պարունակում էր և Ալեքսանդրապոլ քաղաք-ամրոցը հանձնելու վերջնագրային պայմաններ. առաջին, բոլոր անձերը պետք է հանձնեն զենքերը կամ Թողնեն քաղաքը։ Երկրորդ, Թուրքական զորքի մի մասը քաղաք է մտնելու կարգը պաշտպանելու համար, մյուսները կառաջանան դեպի արևելք։ Երրորդ, Անդրկովկասի զորքերը պետք է Արփաչայից հեռանան 25 կիլոմետր։ Չորրորդ, երկաթգծի կայարանը, դեպոն, վագոնների արհեստանոցը, վագոնները, ինչ որ գտնվում է քաղաքում և ամրոցում, պետք է, անշուշտ, մնան։

Բողոքելով Հալիլ բեյի հուշագրերի դրույթների դեմ և պնդելով, որ բանակցությունների միակ հիմքը պետք է լինի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, Չխենկելին Բաթումի քննարկումների բարդուլյունների ամբողջ պատճառը համարեց օսմանյան զորքերի հրամանատարի բռնած դիրքը, որը «արգելակեց Անդրկովկասի հանրապետության պատվիրակությանը մասնակցելու Ալեքսանդրապոլ-Ջուլֆա գծով օսմանյան զորքերի անցման այդ նրբին և հույժ կարևոր հարցի ցանկալի և արագ լուծմանը»։ «Ես ստիպված եմ այս խնդրում նկատել, որ Ն. գ. Վեհիբ փաշան զորքերի շարժման հրաման է տվել առանց նախնական անհրաժեշտ կարծիքի, իսկ Անդրկովկասի պատվիրակությունը հնարավորություն չի ունեցել այնպիսի միջոցներ ձեռք առնելու, որը նա կգտներ անհրաժեշտ այդպիսի պայմաններում,— գրում է Հալիլ բեյին Չխենկելին՝ մայիսի 18-ի հուշագրում,— Այն տեսակցությունները, որ Դուք ինձ հետ ունեցաք, ինչպես նաև իմ հետ գործընկերների հետ, բոլորովին պաշտոնական բնույթ չէին կրում և զուտ անհատական էին։ Այնուհանդերձ, նույնիսկ այդ անհատական տեսակցությունների ժամանակ, մենք բացահայտ կերպով ցույց տվինք, որ այդ զորքերի տեղափոխման հարցը, մեր տեսակետից, կարող է լուծվել միայն սահմանների խնդիրը կարգավորվելուց հետո. հետևաբար, մենք չէինք կարող որևէ պատասխանատվություն ստանձնել, քանի դեռ պաշտոնական համաձայնություն գոյություն չուներ մեր միջև»։

Անդրկովկասյան պատվիրակության ղեկավարը կարծում էր, որ վերջնական համաձայնության հարցը կարելի է լուծել հատկապես սահմանային և այլ խնդիրների լուծումից հետո, որոնք ստորագրված կլինեն կովկասյան չորս և դաշնակից պետությունների կողմից։ Այնուամե-

նայնիվ, ինչպես գրում էր Ջխենկելին, «Անդրկովկասի հանրապետությունը, ուժին տեղի տալով, միջոցներ ձեռք առավ, որպեսզի օսմանյան զորքերի շարժումը Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով դեպի Պարսկաստան խոչընդոտի չհանդիպի»[15]։

Այս ամենը՝ հայոց հողերի զավթման և բնակչության տեղահանման հաշվին։

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Իր դիրքորոշումն էր մշակում Հայոց Ազգային խորհուրդը։ Թուրքերի սանձարձակ հարձակումը, ազգի ֆիզիկական գոյության ապահովումը պահանջում էին հայերի սթափ մոտեցումը երևույթների գնահատման, ճիշտ կողմնորոշման հարցում։ Պարզ էր բոլորին՝ թուրքական կողմնորոշում լինել չի կարող։ Բաթումից Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներ Հովհ. Քաջազնունուց և Ա. Խատիսյանից ստացված տեղեկությունները քննարկվում էին Ազգային խորհրդի, կուսակցությունների, ռազմական խորհրդի նիստերում, մշակվում էր գործունեության վարքագիծ։ Ավելի հաճախ էր հնչում դեպի Գերմանիա՝ դեպի Թուրքիայի հզոր դաշնակիցը կողմնորոշվելու կողմնակիցների ձայնը։

Մայիսի 15-ին, երբ թուրքերը արդեն գրավել էին Ալեքսանդրապոլը, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդում քննարկվեց Խատիսյանից և Քաջազնունուց ստացված հակիրճ տեղեկությունը գերմանական պատվիրակության պնդման մասին՝ համաձայնել Թուրքիայի պահանջներին և թույլ տալ զորքերին անցնել Ջուլֆա, հայկական զորքերը և բնակչությունը հետ քաշել երկաթգծից 25 կմ։ Իսկ դա նշանակում էր գաղթեցնել Արարատյան և Շիրակի դաշտավայրերի հայկական գյուղերի մոտ 80 հազար բնակչությանը, նրանց մատնել նոր արհավիրքների։ Ազգային խորհրդի դիրքորոշումը հստակեցնելու համար որոշվեց Բաթում և Բեռլին ուղարկել նոր պատվիրակություն։ Պատվիրակության կազմում առաջարկվեցին Մլքայել Պապաջանյանը, Արշակ Ջուրաբյանը, Համո Օհանջանյանը կամ Սիրական Տիգրանյանը։ Վերջին երկուսից պետք է մեկներ մեկը՝ դաշնակցության կուսակցության համաձայնությամբ։ Վրացիների հետ Բաթումում և Թիֆլիսում համաձայնեցված գործողությունների քննարկումը հանձնարարվեց Ա. Ջուրաբյանին[16]։

Ա. Խատիսյանի և Հովհ. Քաջազնունու՝ մայիսի 13-ին Բաթումից գրած նամակները քննարկվեցին Ազգային խորհրդի մայիսի 16-ի նիստում. դրանք առաջացրին կարծիքների նոր բախում։

Ս. Հարությունյանը առաջարկում էր Բաթումում գտնվող Ազգային խորհրդի պատվիրակներին տալ լիազորություններ՝ հաշտության հարցը վերջնականապես լուծելու համար. ամեն կերպ աջակցել գերմանացիներին, գերմանական հրամանատարության տրամադրության տակ նույնիսկ զորք դնել՝ ժողովրդի գոյությունը պահպանելու համար։ Տալ

լիազորություններ պատվիրակության՝ բանակցություններ վարելու ոչ միայն Բաթումում, այլև հնարավոր դեպքում նաև Կոստանդնուպոլսում։

Ա. Երզնկյանը անհրաժեշտ էր գտնում ամեն կերպ շահագրգռել գերմանացիներին՝ զինել Կովկասում գտնվող գերմանական և ավստրո-հունգարական բանակի մոտ 4000 ռազմագերիներին, ունենալով մի քաղաքականություն, որը «տեղիք չտա կասկածելու, որ մենք երկդիմի դեր ենք կատարում, մի տեղ՝ հօգուտ բոլշևիկների, մյուս տեղում՝ ընդդեմ նրանց»[17]։

Ս. Մամիկոնյանը չէր կասկածում, որ թուրքական զորքը Ջուլֆա տեղափոխելու պահանջը պատրվակ է թուրքերի Երևան մտնելու, այնտեղից Բաքու անցնելու, Հյուսիս-Կովկասյան մահմեդականներին միանալու համար։ «Մեծ զորք չի կարող Թուրքիան տանել Պարսկաստան. ուրեմն՝ նրանց նպատակն է գրավել Կովկասը։ Գերմանիան թուրքերին չի նեղացնի և հազիվ թե շուտով գերմանացիք գան։ Պետք է բարձրացնել մեր ժողովրդին՝ կռվելու համար, որովհետև առանց այն էլ կոտորելու են մեզ»։ Նա դրեց բանակցությունների ժամանակ Ախալցխան Կարսի արևելյան շրջանների հետ փոխելու հարցը։

Ա. Ջուրաբյանը գտնում էր, որ իրեն սեպ Գերմանիայի և Թուրքիայի մեջ մտնելը վտանգավոր է, դրանով «կգրգռենք թուրքերին»։ Ազգային խորհրդի առաջադրած պայմանների հարցում պետք է ձգտել համաձայնության երկուսի հետ էլ, տեղական գերմանացիներին զինել հնարավոր չէ, զենք չկա։ Մյուս կողմից նա մտավախություն հայտնեց, թե գերմանական զինագրավումը միջազգային հաշտության միջոցին հայերի դրությունը կվատթարացնի և գերմանացիների գերիշխանությունը կլինի մշտական։

Վճռական էր Ա. Ահարոնյանը. «Ոչ ոք չի կասկածում, որ թուրքերը ուզում են Կովկասը գրավել, իսկ գերմանացիները բավական ուժ չունեն նրանց խանգարելու։ Միայն խորհուրդ են տալիս շարունակ թուրքերի պայմաններն ընդունել։ Պետք է նրանց ասել, քանի որ դուք չեք գալիս, իսկ թուրքերի գալը մեր ժողովուրդը չի կարող հանդուրժել, ուստի ստիպված ենք պատերազմ մեռնել։ Իսկ եթե գերմանացիները կարող են հարաշխավորել, որ կսզդեն թուրքերի վրա, թույլ կտանք օսմանյան զորքերի փակ վագոնները անցնեն ուզած վայրերը»։

Ս. Տիգրանյանի կարծիքն էր. թուրքերի անցումը թույլատրել կարելի է միայն Գերմանիայի երաշխիքով։ Իսկ այդ երաշխիքը պետք է լինի գերմանական զինագրավումը, «եթե ոչ մեծ զորքով, գոնե փոքրաքանակ»։ Նման զինագրավումը նա համարում էր «անվանական», «թերևս, նաև»։ Նման զինագրավումը նա համարում էր «անվանական», «թերևս, անհուսալի», բայց և «ներկայումս միակ գրավականը»։ «Կարելի է պղնդել, որ մեր զինվորներին անգամ դնեն նրանց տրամադրության տակ, նույնիսկ մի մասը ուղղել նրանց ուզած ճակատը»։

Առարկելով Ս. Հարությունյանին և Ս. Տիգրանյանին, Մ. Պապաջանյանը վճռականորեն հայտարարեց. «վնասակար է տարվել Գերմանիայի ազդեցությամբ ծայրահեղ աստիճանի։ Գերմանիային պետք է

դիմել թուրքերի վրա ազդելու համար։ Չպետք է մեր զորքը դնել գերմանացիների տրամադրության տակ և ոչ մի պայմանով»։

Թուրքերի նոր պահանջը՝ երկաթգծի 25 կմ լայնությամբ հեռացնել զորքը և բնակչությունը, նշանակում է մեր ժողովրդին գաղթեցնել, որը մահ է նրան։ «Իսկ եթե մահ, ավելի լավ է մեռնել իր հայրենիքում»,— ասաց Հ. Օհանջանյանը՝ համաձայնվելով Ա. Ահարոնյանի հետ[18]։

Ամփոփելով մայիսի 15-ի և 16-ի նիստերի ելույթները, Խ. Կարճիկյանը քննարկման դրեց եղած առաջարկությունները. 1) պատվիրակությանը համաձայնություն տալ բանակցելու ոչ միայն Բաթումում, այլև Կոստանդնուպոլսում, Սոֆիայում, Բեռլինում, 2) ընդունել առանց վարանումների ավստրո-գերմանական կողմնորոշում, 3) պարզել թուրքերի պահանջը զինագրավում է, թե տարանցիկ անցում, 4) երկաթուղու զինագրավումը հանձնել Գերմանիային, 5) հայկական շրջանները ևնթարկել գերմանական զինագրավման, դրանք Անդրկովկասից անջատելով, 6) բանակցությունները այնպես վարել, որ չկարծեն, թե մենք բանսարկություններ ենք ստեղծում ընդդեմ թուրքերի։

Քվեարկությամբ անցավ առաջին կետը՝ պատվիրակությանը լիազորել բանակցելու նաև Կոստանդնուպոլսում, Բեռլինում և Սոֆիայում, եվրոպա գնալիս նրա կազմը համալրել նոր անդամներով, և երկրորդ կետը՝ ընդունել գերմանական կողմնորոշումը, որպես հրահանգավորում, պայմանով, որ Գերմանիան տա հայ ժողովրդի ֆիզիկական ապահովության երաշխիք։ Պատվիրակության նախագահ փակ քվեարկությամբ ընտրվեց Հ. Օհանջանյանը։ Ս. Տիգրանյանը պնդում էր, որ նախագահը անպայման պետք է լինի «դաշնակցական, որը օտարների աչքում կդիտվի որպես տիրապետող կուսակցության ներկայացուցիչ»։ «Ինքը չի կարող կրկնակի քաղաքականություն ունենալ» պատճառաբանությամբ Մ. Պապաջանյանը դուրս եկավ պատվիրակության կազմից[19]։

Հայաստանում և Անդրկովկասում իրադրության հարցը կրքոտ քննարկման առարկա դարձավ Ազգային խորհրդի մայիսի 18—28-ը կայացած ամենօրյա նիստերում։ Փնտրվում էր ելք հայ ժողովրդին գոնե պակաս վնասով աղետից դուրս բերելու համար։ Արծածվում էին քաղաքական նոր կողմնորոշման, գաղթականության, զորահավաքի, պաշտպանության և այլ հրատապ հարցեր։

Արևելյան Հայաստանի փոքր հողակտորի վրա 1918 թ. մայիսի 15-ի վիճակով կար 475 հազար գաղթական։ Նրանցից 260 հազարը տաճկահայ էին, 135 հազարը՝ Կարսի մարզից։ Սկսվել էր Ախալքալաքի, Շիրակի, Սուրմալուի շրջանների բնակչության գաղթը։ Գաղթականների թիվը գնալով ստվարանում էր, բնակեցման տեղը՝ նվազում։ Չկար հաց, օգնություն չէր ստացվում ոչ մի տեղից, շատ էին հիվանդները, մարդկային կորուստը։ Զորքը սննդամթերք չուներ, ցրվում էր սպայությունը։ Գաղթականությունը թուրքական վտանգից հեռանում էր, ուր կարող էր, հիմնականում Թիֆլիս, ապա Հյուսիսային Կովկաս։ Գաղթականական գլխավոր խորհուրդն անուժ էր երևույթի առաջն առնելու

կամ օգնելու։ Օգնության համար դիմում էին բոլորին, «նույնիսկ բոլշևիկներին», Բաքու՝ Ստ. Շահումյանին։ Համոզված լինելով, որ երկաթգծի գրավումով թուրքերը Հայկական հարցը «կլուծեն» ընդմիշտ, գեներալ Արեշյանը կարծում էր, որ հայ ազգի փրկության համար պետք է դիմել այլ քաղաքակիրթ ժողովուրդների, քանի որ Գերմանիայից ևս հույս չկա։ «Թերևս, գերմանացիները չեն ուզում մեր ջնջումը, բայց թուրքերին բավարարելու համար Կովկասը կտան նրանց»[20],— այսպիսին էր Արեշյանի կարծիքը։

Ազգային խորհրդի նիստերում մինչ քննարկվում էին հրատապ և ազգի համար բախտորոշ հարցեր, Բաթում մեկնած պատվիրակությունը գերմանական, թուրքական, վրացական և ադրբեջանական պատվիրակությունների անդամների հետ ունեցած հանդիպումներում ճշտում էր նրանց մոտեցումներն ու տեսակետները, ծավալվող իրադարձությունների հեռանկարները, հայ ժողովրդի համար ընդունելի տարբերակը։

Հանդիպումների արդյունքների մասին Խորհրդի մայիսի 23-ի նիստում հաղորդեց Հ. Բեկզադյանը[21]։ Հենվելով Լոսովի հետ պատվիրակության ունեցած զրույցների վրա, Բեկզադյանը տեղեկացրեց, որ Թուրքիայից պահանջվում է Բրեստ-Լիտովսկի պայմանների լրիվ կատարումը։ Թուրքերը որոշել են վերացնել Հայկական նահանգը։ Նա դեմ է Սուրմալուն խլելուն, որպես միջնորդ կձգձգի թուրքերի նկրտումների կատարումը, մինչև վերջնագրի պատասխանը ստանալը։ Հայկական նահանգը իրենք կպաշտպանեն, թուրքական զորքերին հայերը պետք է թույլատրեն երկաթգծով անցնել, սակայն պետք է գերմանական պահակություն։ Նա հավաստել էր, որ Ալեքսանդրապոլի դեպքերը այդպես չի թողնի Գերմանիան, որը շատ շահագրգռված է հայ ժողովրդի վիճակով, ուզում է վերջնական հաշտության ժամանակ պահանջել Հայաստանին թողնել Ալաշկերտը, Ուրմիան, Վանը։ Գերմանացիներին դուր չէր գալիս հայերի վերաբերմունքը Ամերիկայի ու Անգլիայի նկատմամբ։ «Հայերի մեջ համակրանք կա նրանց նկատմամբ, կան փաստեր»,— նշել է գեներալը։

Լոսովին հայ պատվիրակները տեղեկացրել էին Հալիլ բեյի տեսակետի մասին. «Մենք հաղթող ենք, դուք պարտված. ընդունեցեք մեր պայմանները»։ Լոսովը իր հերթին տեղեկացրել էր, որ դիմել է կայզեր Վիլհելմին, որպեսզի գերմանական զորք տա Վրաստանում դեսպան Շուլենբերգին՝ հայ ժողովրդի սպասվող կոտորածը կանխելու համար։ Թուրքական վերջնագրի դեպքում կլինի անկախ Վրաստան, որը կապահովի հայերի անվտանգությունը գերմանական գումարտակի միջոցով, կլինի անկախ Ադրբեջան։ Ադրբեջանի անկախությունը կունենա թուրքական կողմնորոշում։ Իսկ Հայաստա՞նը։

Մայիսի 19—21-ը տեղի ունեցած հանդիպումների ժամանակ Լոսովը հայերին խորհուրդ էր տալիս պատվիրակություն ուղարկել Բեռլին, Կոստանդնուպոլիս մարդ չուղարկել, որտեղ Բաթումից հետո կնքվելու է վերջնական դաշնագիր, անջատ պայմանագիր Թուրքիայի հետ չկնքել,

Թուրքիայի դիմագրավմանը չխանգարել, հայտարարել Հայաստանի անկախությունը։ Նա ասում էր, որ թուրքերը չեն սիրում գերմանացիներին և նրանց միջև կա հակամարտություն։

Երևանի մուսուլմանների «կոտորածները» մեծ դժգոհություն են առաջացրել Թուրքիայում, որը կազդի հայերի հետ հարաբերությունների վրա. այդպես էին ասել Հաջինսկին և Ռասուլ-զադեն։ Այդ դժգոհությունը հայ պատվիրակները զգացել էին նաև Հալիլի հետ հանդիպման ժամանակ։ «Հալիլի վերաբերմունքը զզվելի էր։ Խոսակցությունը վերջացրեց հնչակով ու դաշնակով, հայերը մեղավոր են» խոսքերով։

Բաթումի բանակցությունների ընթացքը ավելի խոր քննարկվեց Ազգային խորհրդի մայիսի 25-ի և 26-ի նիստերում։ Վ. Բունիաթյանը տեղեկացրեց գեներալ Լոսովի նամակի մասին, որում վերջինս հայտնում էր. որովհետև Բրեստ-Լիտովսկի պայմանները չկատարվեցին Թուրքերի կողմից, ինքը հրաժարվում է միջնորդի իր մանդատից։ Ջիենկելին Լոսովի հետ գնում է Բեռլին, Անդրկովկասի պատվիրակությունը կազմալուծվել է, Սեյմը հիմա հայտարարում է Վրաստանի անկախությունը, Ջիենկելին վրացական կառավարությունից պահանջում է մանդատ, անհրաժեշտ է հայկական պատվիրակությանը լիազորություններ տալ Բեռլին, Կոստանդնուպոլիս, Սոֆիա գնալու։ «Թուրքերը մեզ վատ դրության մեջ են դնում, որը թանկ կնստի»։ Բերելով գեներալ Լոսովի այս խոսքերը, Բունիաթյանը ասել է. «Ֆոն Լոսովի խոսքերին մենք միշտ շատ վստահ ենք»։

Քաջազնունին նամակով առաջարկում էր բեռլինյան պատվիրակության կազմը՝ Հ. Օհանջանյան, Ա. Ջուբարյան, Տ. Բեկզադյան։ Հայկական պատվիրակություն Բեռլին ուղարկելուն դեմ էին Ադրբեջանի ազգային խորհրդի ներկայացուցիչներ Աղաևը, Հաջինսկին և Թուրքերը։

Տեղեկացվեց նաև տարածքային հարցերի վերաբերյալ գերմանական, թուրքական, վրացական, ադրբեջանական տեսակետների մասին։ Ազգային խորհրդի հակիրճ սղագրությունից երևում է. Լոսովը առաջարկում է Թուրքերին բավարարվել Ախալցխայով և Սուրմալուի մի մասով, փոխարենը հայերին տալ Կարսի արևելյան մասը։ Նիկոլաևն Ախալցխան տալուն չէր համաձայնվում։ Ջիենկելին պաշտպանում էր Նիկոլաևի ծրագիրը։ Լոսովի առաջարկություններին առարկում էին մահմեդական պատվիրակները։ Քաջազնունին և Խատիսյանը բողոքեն Վրաստանի անջատողական գործունեության և Անդրկովկասյան դաշնությունը քանդելու դեմ. Ջիենկելին չի առարկել։ Ադրբեջանական Թուրքերն ասել են, որ իրենք ստիպված կլինեն անջատվել, իսկ հայերի շահերը կաշխատեն պաշտպանել՝ առանձին գավառի ստեղծումով, կամ որևէ հարևան պետության կազմում։

Նիստը նախագահող Տ. Բեկզադյանի հաղորդումը Վրաստանի անկախության մասին, հրամայաբար դրեց «Ի՞նչ անել» հարցը։ Քննարկվեց «Մեր վերաբերմունքը դեպի Վրաստանի անկախությունը» հարցը։ Մա-

յիսի 25-ի երկու նիստերում էլույթ ունեցան Ազգային խորհրդի՝ նիստերին ներկա բոլոր անդամները, կուսակցությունների ներկայացուցիչները։

Ստորև բերվում են հայ քաղաքական-հասարակական գործիչների խոհերն ու մտորումները՝ ըստ Ազգային խորհրդի արձանագրության բնագրի՝ առանց միջամտության։

1918 թ. մայիսի 25-ի առաջին նիստ

Ստ. Մամիկոնյան— Այդ անկախությունն ընդունել իբրև կատարված փաստ և ոչ մի ողջույն չտանել։ Մեր տեսակետին հակառակ է, մենք անկախության դեմ էինք. շարունակել նույնը։ Հետևանքները շատ խոշոր են. հայկական գավառները մնում են առանց գլխի— կառավարության, որ ստեղծում է վիճակ՝ անհրաժեշտության ժամանակ մնալ առանց հայկական գավառների վարչության։ Հարկավոր են միջոցներ՝ փոխադրություն, հարկահավաք և այլն, որ կարողանանք կոխել անել։ Հայաստանի անկախությունն անժամանակ է. թույլ ենք. միակ ճնարավորությունը Ռուսաստանի օգնությունն է։ Թող դա լինի Հայոց Ազգային խորհուրդը կամ մի այլ մարմին, այդ միևնույնն է, ժամանակավոր վարչություն, որի մեջ կարող է մտնել և 1 թուրք ներկայացուցիչ։ Երկու դեպքում էլ վարչակազմը մեկնելու է Երևան, իր ներկայացուցիչը թողնելով այստեղ։ Մեր բոլոր զորքն ու մթերքները Թիֆլիսից անմիջապես ուղարկել։

Հ. Առաբելյան— Չպետք է դեմ գնալ. բայց չողջունել։ Չգիտենք, թե ի՞նչ դրություն է ստեղծվում մեզ համար։ Մանավանդ, որ դա կարող է դավաճանական քայլ լինել Ռուսաստանի դեմ։

Ղ. Տեր-Ղազարյան— Թող կուսակցություններն իրենք որոշեն— Ազգային խորհուրդը ոչինչ չունի։ Վիրավորել Ռուսաստանին՝ այնքան նշանակություն չունի, որքան վրացիներին։ Մեր վերաբերմունքը. չենք կարող մտնել ոչ Գերմանիայի, ոչ Վրաստանի, ոչ էլ Տաճկաստանի կազմի մեջ։ Եթե Անդրկովկասի միությունը մնար, այլ բան է, բանի որ այդ չկա, մենք Ռուսաստանի բաղադրիչներ ենք։ Պետք է ուժ տալ Բաքվին, հաշվի չառնելով, ում հողումն է նա։ Դա է դեմոկրատիայի և ժողովուրդների փրկանքը։ Ուղարկել ուժեր Ռուսաստան, զորք կազմակերպել։ Հնարավոր չափով ժողովրդին զինել և կռվել մեր քաղաքարների դեմ։ Առանձին կառավարություն հարկավոր չէ։ Պետք է ընդունել սովետական իշխանություն և կազմակերպել գավառներում։

Մ. Արզումանյան— Վրացիների անկախությունը պետք է ողջունել, անագին հայություն կա, թողել, որ բարեկամաբար ապրեն։ Անկախությանն է ձգտում ամեն ոք, վրացիներին հարկավոր է ողջունել։ Հայկական գավառների համար մի կառավարություն կազմել և գերմանացիների հրավիրել։ Չի հավատում, թե ռուսները շուտ կգան։

Ո՛չ մի կառավարություն՝ չընդունել, մինչև այժմ ակամա ենք տեղ, կամավոր սխալ չանել. լռելյայն թողնում ենք, որ էապես նշանակում է հիմք տալ Ռուսաստանին միջամտելու, որ դուրսը մնացած երկրները մնան նրան: Ռուսաստանի աջակցությանը դիմում է ոչ թե Ազգային խորհուրդը, այլ այն կուսակցությունները, որ չեն ընդունում այդ գիծը: Ժամանակավորապես թողնել Ազգային խորհուրդը՝ հայ ժողովրդին վերաբերող գործերը կառավարելու: Որոշել՝ ի՞նչ հայ զորք, ի՞նչ աննշ, ո՞ւր գնայ՝ մի մասը Ռուսաստան, անկախ Վրաստանը կաչակցի ավելի լավ, քան առաջ էր:

Վ. Բունիաթյան— Առարկում է Ղազարին և վտանգավոր է համարում բոլշևիկյան հաղափականություն վարել, որ սաստիկ կգրգռի թե տաճիկներին և թե գերմանացիներին: Միակ փրկությունը տեղական թուրերի հետ բարեկամաբար վարվելն է, ուստի պետք է մուսավաթի հետ համաձայնության գալ: Մեր աննելիքի մասին առայժմ վաղաժամ է խոսել, թողնել Ազգային խորհրդին որոշելու, մինչև դերության պարզվելը:

Ա. Երզնկյան— Ադրբեջանի մեջ մտնելուն չեմ առարկի, թե տաճիկները չգրավեն: Անպատճառ գրավելու են և արդեն գրավել են՝ Գանձակը, Բորչալուն: Իրական մուսավաթությունը բերում է Տաճկաստանը: Այսպիսի հանգամանքներում տանկանպատակ լինել չի կարելի, նրանք այստեղ նույնն են անելու, ինչ որ Թուրքիայում: Իմ ստացած տպավորություններից և տեղեկություններից հավանական ելքը երկուսն է՝ տաճկական և գերմանական ոլորտ: Ո՞րն է մեզ ձեռնտու: Որքան շատ լինենք գերմանական ոլորտում, այնքան լավ, իսկ այդ լինելու է Վրաստանի միջոցով: Մեր աննելիքը համարվելու է՝ Վրաստանին, Ադրբեջանին և Ռուսաստանին: Ներկա մոմենտում ավելի ձեռնտու է Վրաստանի հետ կապված մնալ, որքան կարելի է քան հնարավորության, շատ գավառներ միացնելով: Եթե հնարավոր է, Ղազախը և այլ մասերը միացնել, ավելի կշատանան հայերը: Իսկ Ռուսաստանի մեջ աշխատել բոլշևիկների միջոցով: Իրոք հայկական զորամասեր չկան, այլ կան ռուսական զորամասեր, դա վճռական է տեղական հայերին:

Ա. Խոնդկարյան— Կուսակցությունները իրենք կարող են, իսկ Ազգային խորհուրդը հարցերը լուծելու դեպքում, թող գա, ճառ ասի:

Վրաստանը անկախության միտք ունի. իսկ մենք չունենք: Մեր գործն է շարունակել դիվանագիտություն և պատերազմ: Ազգային խորհուրդը կա իրրև ազգի ներկայացուցիչ թե պատերազմի, և թե դիվանագիտության համար: Անկախությունը մեզ համար ելք չէ առայժմ, կրվենք, տեսնենք ինչ կլինի: Այս կամ այն գավառը տալը ումից է կախված. մեր ցանկությունի՞ց, թե վերջնագրից:

Ա. Հարությունյան— Անկախության նկատմամբ համեստ վերաբերմունք ունենալ, որ մեր տեղական թուրքերին չգրգռենք, քանի որ քան երևույթին, հրամ դեմ են: Մենք չենք կարող կառավարություն հայտարարել,

Ս. Տիգրանյան— Խորհրդավոր լռություն պահելը անընդունելի է: Բացասական հետևանքներ կունենա տեղական և գաղթական հայության համար: Քանի որ Անդրկովկասյան միությունը չկա, պետք է ընդունել այդ փաստը, առանց հաշվի առնելու, մեզ վնա՞ս է, թե՞ ոչ: Ձպետք է մեր չկամությունը արտահայտենք անկեղծ կերպով. թեև մենք միության կողմնակիցներ ենք, բայց եթե մի ժողովուրդ կարծում է, որ բաժանվելով կարող է լավ կյանք ունենալ, ոչինչ դեմ չունի: Լիազորություններ ունենալ հայկական գավառների նկատմամբ ու աշխատել մոտիկ կապ պահպանել կովկասյան թուրերի հետ:

Ա. Երզնկյան— Հայտնում է, որ թուրերը ֆրակցիայի ժողով ունեն, իմը այդ մասին կխոսի հետո:

Ռուբեն Տեր-Մինասյան— Անկախությունը մեզ չպետք է հուզի, գուցե դա երանց չի փրկի, բայց մեր գործը չէ: Մեր վերաբերմունքը պետք է լինի վայելուչ, անգին հայություն կա, որ պատսպարված է այնտեղ: Մեր աննելիքը. նույն վերաբերմունքն ունենալ դեպի Ադրբեջանը. մենք դրսից չենք կարող պայթեցնել: Տեղ չունենք կառավարություն սահմանելու: Եթե Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան... (անընթեռնելի է):

Մեր դերն առայժմ սպասողական է: Միայն ներքին կանոնների մասին կարող է խոսք լինել: Ղազարն (Տեր-Ղազարյան) ուշացել է: Այդ առաջ էր անհրաժեշտ: Հիմա կնշանակի կռվել ոչ միայն թուրքի դեմ, այլև Վրաստանի և Ադրբեջանի: Մեր գլուխը պահել թեկուզ հպատակությամբ: Բոլոր հայության մեծ մասը դարձնել Ադրբեջանի հպատակ, միայն պահենք մեր գոյությունը: Ինքը կողմնակից է ռուսների գալուն, լինի բոլշևիկ, թե մոնարխիստ, բայց այժմ հույս չկա:

Ն. Աղբալյան— Ինձ համար ամենաերջանիկ օրը հիմա Վրաստանի անկախությունն է. վերջապես Կովկաս կոչվածը վերանում է: Այսուհետև ամեն ազգ իրեն ճամփով կերթա: Պետք է ողջունել ամեն տեղ:

Հայության ամբողջությունը կտրատված է. Վրաստանի հայությունը նոր մարմին է ունենալու, ինչպես և Ադրբեջանինը: Մյուս խնդիրը հայ ժողովրդինն է, դրա համար էլ մի կառավարություն, մի հաղափականություն: Ազգային խորհուրդն էլ թող իր դիրքը որոշի, թե որտեղ է լինելու և ինչ հաղափականություն է ունենալու: Մեկ հաղափականություն կարող էր լինել Ռուսաստանի և Անդրկովկասյան միության մեջ: Վրաստանի հայությունը վրացիների չափ կապահովվի. դարաբաղցիները-գանձակցիները մուսավաթի հետ բարեկամական լինեն, տեսնենք ինչ կլինի: Զինվորականությանը ազատություն չտանք, այլ փող՝ դրա փոխարեն: Մի մասն էլ գնա Ռուսաստան՝ իր գիծն անցկացնելու:

Տ. Բեկզադյան— Հայ ժողովրդի ֆիզիկական գոյության հարցը բոլոր կուսակցությունների համար մեկ է: Սկզբունքային տեսակետի ժամանակը չէ, պետք է ողջունել անկախությունը, որքան էլ ես հակառակ լինեմ այն կուսակցությանը, որ այդ բայլն անում է: Ազգային խորհուրդն ու պատասխանատու կուսակցություններն էլ անելու են նույնը:

հող չունենք: Դրա հայությունը. Վրաստանում պետք է պարզել, մեր քուրերի հետ բանակցել և մնալ Ադրբեջանի հետ, դրանով, գուցե, մեղմենք կռվի ելքը և ապահովենք մեր գոյությունը: Ղազարը առաջարկում է, գնալ Ռուսաստան. չեղաք ենք մնալու: Ռուսաստանը մեր փոքր ուժերի կարիքը չունի:

Լ. Թումանյան— Որքան էլ փոքր լինենք, պետք է մեր խոսքն ասենք: Չի կարելի ասել, թե Ռուսաստանի հպատակ ենք. վնասակար է և պետք է անկախություն ունենալ: Առաջարկում է մի հայտարարություն անել, որ մինչև սահմանների և շրջանների հարցի լուծումը մենք վերցնում ենք պետական իրավասություններ:

Ստ. Մամիկոնյան— Քաղաքականությունը խաբեբայություն է, բայց դա էլ սահման ունի: Վրացիները մեզ մինչև հիմա տարան իրենց հետևից և հիմա մեջ գցում են. դա դավաճանություն է: Ես մենք բողոքող չլինենք, այլ ընդունենք իբրև փաստ, ոչ թե շողոքել: Այն էլ այժմ, երբ վատ չենք կարող սատանալ: Ես վերջապես, հաշվի պետք է առնել մեր ժողովրդի նուսաղրանքը, որ այս քայլը ընկառում է իբրև հետագա հայկական: Այս քայլը, սակայն, չի խանգարելու պահպանել բարեկամական հարաբերություն: Ժամանակավոր կառավարության ստեղծման իր առաջարկը գործնական նշանակություն ունի. փող գործի, գաղթականության համար, որտեղից առնենք: Վրաստանն էլ չի կարող տալ: Առարկում է Ն. Աղբալյանին, որ չպետք է քաղաքականապես մահանալ, որ դա վտանգավոր է: Կա մի նվազագույնը, որից այն կողմ ոչ մի ժողովուրդ չի կարող անցնել. մեր ձգտումները՝ պարզ ասել և ոչ թե լցել: Ավելի լավ է հեռավոր Ռուսաստանի հետ լինել, քան լինել հեռացող Վրաստանի և Ադրբեջանի հետ: Ընդհանուր քաղաքականություն չունենալը վնասող է:

Ս. Ահարոնյան— Ազգային խորհուրդը լռել չի կարող: Ադրբեջանին որևէ զիջում առաջարկել չի կարելի, նշանակում է օտարներին տալ: Վրաստանին հրամցնել՝ դարձյալ անհնարին է, որովհետև նրանք չեն ուզում դատապարտված ժողովրդի հետ կապվել: Առաջարկում է. Ազգային խորհուրդը պետք է հայտարարի ժամանակավոր կառավարություն, մտահոգվում է իր ժողովրդի ֆիզիկական գոյությամբ, շարունակում է իր բարեկամական հարաբերությունները հարևանների հետ, առանց որևէ մեկի դեմ պատերազմ վարելու, բայց և առանց հրաժարվելու մեր քաղաքականության խնդիրներից, առանց անկախության հայտարարության:

Նախագահ— Ազգային ժողովը որոշեց Վրաստանի անկախությունը ընդունել որպես փաստ, լինել բարեկիրթ և թշնամական քայլ թույլ չտալ: Նկատի ունենալով, որ Անդրկովկասի հանրապետությունը փլուզվել է, Վրաստանը հայտարարել է իր անկախությունը, Ազգային խորհուրդը իր վրա է վերցնում ժամանակավոր կառավարության ֆունկցիաները՝ միայն հայկական շրջանների նկատմամբ[22]:

Մայիսի 25-ի երկրորդ նիստ

Հրապարակվում է Վեհիբ փաշայի վերջնագիրը: Առաջարկվում է ընդունել որոշում. կռիվն անկարելի է, ո՛չ պատերազմին, իրավական բողոքի իրավունք. վերջնագիրն ընդունել: Պետք է ընդունել թուրքերի պահանջը իբրև փոքրագույն չարիք, որքան էլ այդ ծանր լինի:

Տ. Բեկզադյան— Ներկայացվում են նոր պահանջներ Շարուր-Դարալագյազի, Երևանի, Նախիջևանի, Էջմիածնի, Ախալքալաքի գավառների, Ալեքսանդրապոլ քաղաքի նկատմամբ, ընդհուպ մինչև նրանց Թուրքիային միացում: Թուրքերը, միաժամանակ, պահանջում են Անդրկովկասյան կառավարությունից թույլատրել անարգել տեղափոխել ամբողջ Անդրկովկասի երկաթգծով զորք և զինամթերք, զորքերին ապահովել սննդամթերքով: Նպատակը «հիմնավորված էր». «վերացնել ներքին խռովությունները», «պաշտպանել մուսուլմաններին, որոնք տանջվում են և հալածվում Բաքվում», անգլիացիների դեմ զորք տեղափոխել Միջագետք:

Մ. Արզումանյան— Համոզված չէ, թե դրանով վերջանա, այդ պատճառով առաջարկում է վերջնագիրը չընդունել: Տաճիկը մեծ ախորժակ ունի Կովկասը տիրելու: Գերմանիային էլ չի հավատում: Եթե հավատում են Գերմանիայի հաղթությանը, պետք է ընդունել: Օսմանյան կառավարությունը չի ցանկանում Հայկական կանտոն ստեղծել: Թուրքիան չի կարող Կովկասը կառավարել, մեծ զորք չունի: Ապագայի մասին մտածել: Զատորագրել հաշտություն և պատերազմ չհայտարարել:

Ս. Երզնկյան— Գործնական քայլեր անել. մտցնել գերմանական զինվորներ, թեկուզ քիչ: Հանձնարարել նախագահին, միգուցե պետք է խոսել Գերմանիայի ներկայացուցչի հետ և կազմակերպել նույն բանը մեզանում: Եթե այդ չանենք, մենք կհակառակենք մեր բռնած դիրքին: Եթե Գերմանիան կարող է իր պրոտեկտորատը Վրաստանի միջոցով տարածել, ընդունելի է՝ պահանջով տալ գործնական երաշխիքներ:

Ղ. Տեր-Ղազարյան— Այս բոլոր գործնական քայլերը համարում եմ սխալ թե մեր, և թե Անդրկովկասի համար, ուշացել ենք: Նրանց որոշումը հայտնի էր առաջուց. հայերին կարող են փրկել գուցե գերմանացիները, որոնք միջնորդել են Միրբախին՝ թույլ չտալ թուրքերին՝ տիրելու: Անգլիացիների պայմանը չպետք է ընդունել. երբ Անդրկովկասի միությունը քանդվի, այն ժամանակ ուրիշ բան է: Բաքվում բոլորովին այլ բան է կատարվում: Նա կապված է Ռուսաստանին: Անդրկովկասի միությունը հիմա, իրոք, չկա, պետք է թողնել, որ նա միանա Ռուսաստանի հետ: Գերմանիայի հետ կապվելը սխալ է: Նա չի գալու: Վերջնագիրը չպետք է ստորագրել: Իսկ հայերին, որքան հնարավոր է, գաղթեցնել: Մնացած մեր մասը կապված պետք է մնա Ռուսաստանի հետ: Ո՞րի հպատակ. տաճկա՞ց, Վրաստանի՞, թե՞ մեծ Ռուսաստանի: Ի՛հարկե, մեծ Ռուսաստանի: Լեռները տանել հայ ժողովրդի մնացորդները և դիմադրել:

Ս. Մամիկոնյան— Ուժի տեսակետից ի՞նչ է ներկայացնում Բաքուն: Կարող է 10000 ուղենավ, այժմ ունի 5000 սվին: Կարող են էլի կազմակերպել: Պետք է մի գիծ ուղենավ: Բաքվի միջոցով գալ Գանձակ և հայտարարել նրա իշխանությունը: Ռուսական կողմնորոշումը էս րոպեիս էլ չի: Դրանով մենք կգրգռենք բոլորին. կատարելով նույնը, ինչ որ էր առաջ Տաճկահայաստանում և Ռուսաստանում: Շուկեներգից հաստատ իմանալ, թե ունի՞ ֆարտ բլանշ: Նրանց պայմաններն ընդունելը միաժամանակ կկանգնեցնի առաջխաղացումը: Պայմանների ստորագրումը կոալիցիայի համար նշանակություն չունի, ֆիզիկական գոյությունը պահելու համար է:

Նախագահն առաջարկում է խոսել Ա. Տրզնկյանի առաջարկի մասին:

Ս. Մամիկոնյան— Խնդիրը բննում ենք միակողմանի: Բաքուն, արևելյան հայությունը, Երևանը— այդ կերպ են մտածում: Եթե հավատ ուղենայի պայմանագրի հաստատման, և եթե Գերմանիան էլ չի ուզում, չի կարելի հավատալ: Օսմանցիները ուզում են ոչ միայն Անդրկովկասը գրավել, այլև Հյուսիսային Կովկասը: Ոչ մի զիջողություն չի փրկի՝ ուզենք, թե չուզենք:

Ոչ մի ելք չկա, բացի կովից, մինչև վերջ, եթե Անդրկովկասի կառավարությունը հաշտվի, պետք է ընդունել: Քաղաքականությունը ֆիզիկական գոյությունն է և դրա համար պետք է կովել: Գերմանացիների համար ամեն ինչ նախորոշված է: Ուրիշ ելք չկա. զինական ուժը կազմակերպել, և որտեղից փրկություն կգա՝ կրնդունենք, Բաքվից, թե Անգլիայից: Մեր զինական ուժերը գրել գավառները: Գերմանիայի հետ կապ ունենալ, երբ գրավոր կհավաստիացնենք մեր ֆիզիկական գոյության ապահովությունը, իսկ եթե չէ՝ մենք մեզ հայտարարում ենք Ռուսաստանի fաղաfացի: Ջոհ տալու ենք, ավելի լավ է կռվով տալ և ոչ թե ճանապարհներին: Ազգային խորհրդի մի մասը պետք է գնա Երևան, մյուսը Ռուսաստան. այստեղ տեղ չունենք, փող չունենք[23]:

Նիստը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Հարցի քննարկումը չավարտվեց: Այն շարունակվեց մայիսի 26-ին:

Ա. Ահարոնյանը տեղեկացրեց, որ երեք անգամ հանդիպել է գերմանական ներկայացուցիչների հետ և խնդրել հայերի հանդեպ անել նույնը, ինչ վրացիների՝ վերցնել հովանավորությունը: Խնդրել է զինվորներ տալ, օգնել Ախալքալաքին, որ հայերը չգաղթեն: Բայց գերմանացիները դրական բան չեն ասել. «Թուրքերը ուզում են ձեզ կոտորել, իրենք անկեղծորեն չեն ցանկանում: Բայց զենք չունեն դիմադրելու»,— ասել են Գերմանիայի ներկայացուցիչները:

«Ահա տեղեկությունները ցույց են տալիս, որ օսմանյան կառավարությունը ոչ միայն գրավելու է հայկական հողերը, այլև ոչնչացնելու է հայ ժողովրդին: Ստացված է Գերմանիայի դաժան սանկցիան: Գերմանական ներկայացուցիչները ֆոն Լոսովի հետ դրա համար էլ

գնում են Գերմանիա, փոխել տալու այդ որոշումը»,— հայտարարեց Խ. Կարճիկյանը[24]:

Հիրավի, Լոսովը դիմում էր կոնկրետ քայլերի: Նա Բերնսդորֆի միջոցով Կոստանդնուպոլսից մայիսի 23-ին հեռագրել էր Բեռլին (փաստաթուղթը արտաքին գործոց նախարարությունում ստացվել է մայիսի 24-ին). «Հայ վստահելի անձանց մի պատվիրակություն (նկատի ունի Ազգային խորհրդի պատվիրակներ Մ. Պապաջանյանին, Ա. Ջուրաբյանին, Հ. Բեկզադյանին— Հ. Ա.), ինչպես նաև Անդրկովկասյան պատվիրակության հայ ներկայացուցիչները, որոնք միևնույն ժամանակ որպես նախարարներ մտնում են կառավարության մեջ (Հովհ. Քաջազնունի և Ա. Խատիսյան— Հ. Ա.), բազմիցս խոսել են ինձ հետ: Հայերը Գերմանիայից ակնկալում են փրկություն և օգնություն իրենց հուսահատ կացության մեջ:

Թուրք քաղաքականության նպատակն է, ինչպես ես միշտ կրկնում եմ, մշտապես տիրապետել հայկական շրջանները և բնաջնջել հայերին: Թալեաթի և Էնվերի դրան հակառակ խոսքերը անարժեք են: Պոլսում իշխում է ծայրահեղ հակահայկական, բշնամական մի ուղղություն: Թուրքական ծրագիրը հստակորեն աչքիս առաջ է: Վստահաբար համոզված են, թե Ախալքալաքի թուրքական շրջանը պիտի ստանան. Ախալցխայի ամբողջովին հայկական շրջանը փորձում են իբր Ախալքալաքի գավառին վերաբերող իրողության քողի տակ յուրացնել: Ալեքսանդրապոլ քաղաքը գրավել են: Դեպի Ջուլֆա երկաթուղին՝ արևելյան կողմից 25 կիլոմետր լայնքով նրան հարավից մի շերտով ուզում են գրավել՝ այլևս չվերադարձնելու պայմանով»:

Լոսովը տեղեկացնում էր նաև օսմանցիների ու կովկասյան թաթարների կապի ու համագործակցության, նրանց համախոհ հանդես գալու մասին: Նա մասնավորապես նշում էր. Գանձակի և Բաքվի նահանգները թուրքերը գրավելու են թաթարների հետ համագործակցած. միաժամանակ առաջանում են դեպի Բաքու մեծամասնականներին դուրս մղելու և այնտեղ հաստատվելու համար: Բանակին ընկերակցող թաթարական և քրդական «կամավորները» կողոպտում են հայկական գյուղերը և սպանում են հայերին: Թուրք քաղաքականությունը բացահայտորեն նպատակ ունի հայկական հողերը նվաճել, սեփականացնել, վերջնագրից խուսափելու համար կողմերին կանգնեցնելով «կատարված իրողության առաջ»: Հայ ժողովրդի համար այլևս ապրելու տեղ չի մնում: Նա փախչում է դեպի արևելք, ուր անխուսափելի կլինեն հայ-թուրքական բախումները և կոտորածները: Ինչպես հասկանում եմ, թուրքերի դիտավորությունը հայերի բնաջնջումն է և հողերի զավթումը, գրում էր Լոսովը, նշելով, որ «Հայ ազգի և Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության լիազորները խնդրում են, որ հայկական երկրամասի մնացորդը ընդունվի գերմանական հովանավորության տակ: Դրա վերաբերյալ պաշտոնական գրությունը ձեռքիս է. եթե պետք է արգելվի հայերի ոչնչացումը, անհրաժեշտ է անմիջական ամենաազդու ճնշու-

մը Թուրքիայի վրա»։ Լոսովը խնդրում էր շտապ Փոթի ուղարկել ռազմանավ՝ մեկ գումարտակ զինվորներով, Թուրքերի դեմ անմիջական գործողություններ ձեռնարկելու, հայերի բնաջնջումը կանխարգելելու համար[25]։

Հայերին Թուրքերի պատճառած արհավիրքների, հայկական տարածքը գրավելու, իրենց հատուկ մեթոդներով հայերից այն «մաքրելու» մոլուցքի մասին գերմանական հասարակայնությանը հայտնի էր նաև Գերմանիայի արևելյան քաղաքականության հանձնաժողովի 1918 թ. մայիսի 4-ին հրապարակած նյութերից։ «Քրիստոնյա հայ ժողովուրդը, որն ապրում էր մասամբ ռուսական և մասամբ Թուրքական տարածքում, վերջին տարիներին անասելի տառապել է Թուրքերի հետապնդումից,— ասված էր փաստաթղթում,— պատերազմից առաջ Թուրքիայում հայերի թիվը անցնում էր 2 միլիոնից։ Նրանցից մեկ միլիոնը տեղահան արվեց կամ էլ կոտորվեց։ 300 հազարը փախավ Կովկասի ռուսական տարածքը։ Վերջիններս կկործանվեն, եթե նորից ընկնեն Թուրքական տիրապետության տակ։ Տեղի ունեցած հարձակման ժամանակ Թուրքերի վերաբերմունքը լիովին արդարացնում էր հայերի երկյուղը։ Առաջ շարժվող Թուրքական զորքին միացան կովկասյան մահմեդականների և քրդերի հրոսակները, որոնք բազում հայերի սպանեցին, թալանեցին նրանց գյուղերը, ավերեցին նրանց ունեցվածքը։ Ինչպես երևում է, Թուրքերի նպատակն է արմատախիլ անել քրիստոնյա մի ամբողջ ժողովուրդ, բնաջնջել նրան, որպեսզի այդ շրջանում հաստատվի մահմեդական իշխանություն»[26]։

Թուրքական զորքերի՝ Արևելյան Հայաստան և Անդրկովկաս առաջխաղացման պայմաններում Հայոց Ազգային խորհրդի մայիսի 26-ի նիստում հրապարակվեց գեներալ Նազարբեկյանի հեռագիրը. զորք չի մնացել, ցրվել են գյուղերը։ Դիլիջանում հաց, փամփուշտ չկա։ Անելանելի դրություն է, որը ստիպում է. 1) Յրել փաստորեն ցրված զորքերը, բացի հիմնական կռվողներից, 2) Հայտարարել, որ այսօրվանից զորքերը թողնվում են տեղական մթերքներով կերակրվելու, 3) Հաշտություն կնքել և փրկել, ինչ կարելի է։

Ժողովը որոշեց առաջին երկու խնդիրների լուծումը հանձնել գեներալ Նազարբեկյանի «հայեցողության և լիազոր կամքին, խորհրդին իրազեկ պահելով այնտեղի բոլոր անցուդարձերին։ Հաշտության հարցին անդրադառնալ Ազգային խորհրդի պատվիրակության վերադարձից հետո»[27]։

Հայ ժողովրդի իր գոյատևման համար մղվող ազատագրական պայքարը մտավ նոր փուլ։ Մայիսի 26-ին լայնորեն տարածվեց գեներալ Նազարբեկյանի կոչը.

«Հայեր. ծանր փորձություններ է ապրում մեր ժողովուրդը։ Բազմադարյան ստրկությունից հետո ժողովուրդը հասկանալով, որ այլևս այդպես շարունակել չի կարելի, որոշեց կամ զենքը ձեռին նվաճել իր համար ազատություն և լուսավոր ապագա կամ պատվով մեռնել։ Ամենաբարբարոս կերպով խախտելով զինադադարը, թուրքերը առանց նախազգուշացման անցան հարձակման և գրավեցին Ալեքսանդրապոլը։ Թվում էր, թե ամեն ինչ կորած է։ Մեր խարդախ թշնամուն մնում էր մի բան՝ շարունակել իր հաղթական հարձակումը հայոց հողի խորքը, ստիպելով բնակչությանը թողնել իր բնակավայրը, կորցնելով ամբողջ ունեցվածքը։ Բայց ամեն ինչ աստծու ողորմածությունն է։

Հայեր. եթե դուք ցանկանում եք փրկել ձեր բնտանիքները և ձեր պատիվը, եթե դուք չեք ուզում ավելի սարսափելի ստրկություն, որը թուրքական լծի տակ ճաշակել են ձեր եղբայրները, եթե դուք չեք ուզում, որ ամբողջ հայ ժողովուրդը կործանվի, բոլոր զենք կրելու ընդունակությունն ունեցողներ, կանգնեցեք ձեր ժողովրդի պաշտպանությանը։ Հապաղելը ներկայումս կործանարար է։ Եթե մենք այսօր չկարողանանք զենքը ձեռքներս պաշտպանել մեր ազատությունը և մեր պատիվը, ապա մենք արժանի չենք գոյություն ունենալ որպես ինքնուրույն ազգ և կյինքի մեծ վիշտ, մեզ մեր սերունդները կհիշեն անեծքով։ Մենք պետք է հույս դնենք միայն մեր ուժի վրա, և եթե անմիջապես չօգնենք բանակին, մենք կկործանվենք։ Հիշեցեք՝ այժմ մենք ձեռ ենք բերում մեր լավագույն ապագան կամ երբեք չենք տեսնի այն ոչ մենք, ոչ էլ մեր սերունդները»[28]։

ՀԱՅԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸՐԸ

Դաժան փորձություններին դիմակայած, պատմության քառուղիներում իր ինքնությունը, լեզուն, մշակույթը, պատիվն ու ազգային ինքնագիտակցությունը և ինքնաճանաչումը պահպանած հայ ժողովուրդը այլևս նահանջելու տեղ չուներ։ Թուրքական նվաճողները արդեն ներխուժել էին Արարատյան դաշտավայր։ Բաթումի, Արդահանի, Սարիղամիշի, Կարսի, Ալեքսանդրապոլի գավթումից հետո թուրքական բանակի հսկողության տակ էին անցել ոչ միայն Տրապիզոն-Բաթում, Օլթի-Մերդենեկ-Արդահան- Ախալցխա, էրզրում-Սարիղամիշ-Ալեքսանդրապոլ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհները, այլև ստեղծվել էր անմիջական սպառնալիք Կովկասի նվաճման համար։ Դրված էր Կովկասահայության լինել-չլինելու հարցը։ Անդրկովկասյան կառավարության գիջումների համաձայն հետ էր քաշվել Կովկասյան բանակը, որը բաղկացած էր ռուս-թուրքական ռազմաճակատից վերադարձած մոտ 100 հազար հիմնականում հայ, վրացի, ռուս զինվորներից ու սպաներից։ Նրանցից մոտ 35 հազարը թուրքերի դեմ մինչև վերջ մարտնչելու համար պատրաստ հայեր էին, որոնց ուժերով, Ստ. Շահումյանի խոսքերով ասած, «հրաշքներ կարելի էր գործել»։ Նրանց հետ էր հայ գյուղացիության հսկայական զինված մասսան, որ «մենակ կարող էր հաշիվ տեսնել» Թուրքերի հետ։ Սակայն այդ ուժերը չօգտագործվեցին Անդրկովկասի կառավարողների կողմից։

«Դեռ չէին էլ հասցրել Ջխենկելու հրամանով կարսը հանձնել, երբ թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, Ջուլֆան և սկսեցին պահանջել ոչ միայն Բրեստի պայմանագրի կատարումը, այլև իրենց հանձնել Անդրկովկասի հսկայական մասը։ Այդ ժամանակ Բաթումում եռանդագին քննարկվում էր այն հարցը, թե զորքերն ինչպես շարժեն Բաքվի դեմ, այսինքն՝ իրենց ձեռքը վերցնեն Անդրկովկասը»,— հայտարարել է Ստ. Շահումյանը Բաքվի խորհրդի նիստում, մայիսի 29-ին[29]։

Առաջ շարժվելով Անդրկովկաս, թուրքական քաղաքագետները լավ գիտեին, որ ադրբեջանական մուսավաթականները կդառնան իրենց հենարանը Արևելյան Հայաստանը կլանելու և երկրամասում իրենց գերիշխանությունը հաստատելու համար։ «Մուսավաթի կուսակցությունը սոսկ բեգական կուսակցություն չէ։ Դա մի կուսակցություն է, որը ցանկացել է և ցանկանում է Կովկասը, ամբողջ գյուղացիական Կովկասը հանձնել կալվածատիրական, ֆեոդալական Թուրքիային՝ խժռելու»[30],— ասված է Բաքվի հեղափոխական պաշտպանության կոմիտեի դիմումում։ Մուսավաթականները Թուրքիայի օգնությամբ հույս ունեին Կովկասի մահմեդական ժողովուրդներին միավորել իրենց դրոշի տակ և հասնել մուսուլմանական գերիշխանության։ Այդ հարցում, ինչպես ընդգծել է Ստ. Շահումյանը, մուսավաթ կուսակցությունը ուներ երկու դաշնակից, «մի կողմից վրացական մենշևիկները՝ վրացական նացիոնալիստների կուսակցությունը, և մյուս կողմից՝ մուսուլմանական դեմոկրատիայի տգիտությունն ու անկազմակերպվածությունը։ Այդ երկու դաշնակիցների շնորհիվ՝ այդպիսի մի խղճուկ, չնչին կուսակցությունը դարձավ ամենաազդեցիկը և վճռում է ամբողջ Անդրկովկասի բախտը»[31]։

Այս պայմաններում Յաղուբ Շևքի փաշայի հրամանատարությամբ ստեղծված «Կարս» զորախումբը ստացավ նոր առաջադրանք, կատարվեց ուժերի նոր վերախմբավորում։ Դրա հիմնական նպատակը էնվեր փաշայի ծրագրի իրականացումն էր։ Նա նախատեսում էր գրավել ամբողջ Արևելյան Հայաստանը, դուրս գալ Թիֆլիս, վերահսկել Թիֆլիս-Բաքու երկաթուղագիծը, շարունակել արշավը դեպի Բաքու-Դաղստան-Վլադիկավկազ, Անդրկասպյան երկրներ։ Առաջին կորպուսի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին հրամայված էր Ալեքսանդրապոլի գրավումից հետո ուժերի մի մասը շարժել Ջուլֆա-Թավրիզ, զավթել իրանական Արրբեջանը։ Այդ ծրագիրը պետք է իրականացվեր Մոսուլի շրջանից դեպի հյուսիս և հյուսիս-արևելք շարժվող թուրքական 6-րդ բանակի զորամասերի օգնությամբ։ Թուրքական հսկողության տակ պետք է առնվեր և Ալեքսանդրապոլ-Ուլուխանլու-Նախիջևան-Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը։ Պանթուրքական պլանի իրագործումը «պահանջում» էր կապվել Աֆղանստանի և Հնդկաստանի մահմեդական գոտու հետ։ Նախիջևանի գրավումով թուրքերը ծրագրում էին լուծել մի քանի հարց, այդ թվում հայ բնակչության բնաջնջում, զինված ուժերի ջախջախում, կարճ ճանապարհով Զանգեզուրով և Ղարաբաղով դուրս գալ Ելիզավետպոլ։

Թուրքական գլխավոր հրամանատարության ծրագիրը և Հայկական կորպուսի ղեկավարության ձեռնարկած հակամիջոցները ռազմագիտական տեսանկյունից բացահայտված են կորպուսի հրամանատար Թովմաս Նազարբեկյանի, 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար Մովսես Սիլիկյանի չհրապարակված հուշերում, 1918 թ. դեկտեմբերին ստեղծված «Հայերի մասնակցությունը 1914—1918 թթ. համաշխարհային պատերազմին» պատմության հանձնաժողովի (նախագահ՝ գեներալ-մայոր Կուլեբյակին) հավաքած նյութերում, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանի հրապարակած հուշերում, Աշոտ Հարությունյանի «Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները», Ս. Աֆանասյանի «Սարդարապատի հաղթանակը», Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» և այլ աշխատություններում[32]։

Ռազմագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ շարունակելով իրագործել էնվեր փաշայի առաջադրած նվաճողական պլանը, Յաղուբ Շևքի փաշան «Կարս» զորախումբը բաժանելով չորս մասի, իր առջև դրել էր ռազմավարական հետևյալ խնդիրները։

1-ին զորախումբը, հարձակվելով Վորոնցովկայի (Տաշիր) ուղղությամբ, Ղարախաչի լեռնանցքով դուրս էր գալու Բոլնիս-Խաչեն, Բորչալու, Թիֆլիս։ 5-րդ հետևակային դիվիզիան համագործակցելով Ղաղախից շարժվող թուրքական զորքերի հետ, գրավելու էր Թիֆլիսը։ Այս գործում նրան աջակցելու էր Կովկասյան 11-րդ հետևակային դիվիզիան։

2-րդ զորախումբը հարձակվելու էր Ջաջուռ-Համամլու-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ։ Նպատակն էր Ղազախ-Ազատ-Ելիզավետպոլ գծով հասնել Բաքու։ Այստեղ գլխավոր ուժը Կովկասյան 11-րդ դիվիզիան էր, լրացված տեղական մահմեդականներով։

3-րդ զորախումբը, որի հիմնական կորիզը կովկասյան 9-րդ հետևակային դիվիզիան էր, հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Բաշ-Ապարան ուղղությամբ։ Դրա խնդիրն էր՝ գրավել Երևանը, ուղղություն վերցնել դեպի Համամլու-Ղարաքիլիսա։

4-րդ զորախումբը հարձակվելու էր Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծի ուղղությամբ՝ Անի-Սարդարապատ-Էջմիածին-Երևան։ Այստեղ հարվածային ուժը 36-րդ հետևակային դիվիզիան էր։

Այսպիսով, 3-րդ և 4-րդ զորախմբերը, որոնց մեջ մտնում էին առաջին բանակային կորպուսի 9-րդ և 36-րդ հետևակային դիվիզիաները՝ ուժեղացված տեղական մահմեդական բաշիբոզուկներով, խնդիր ունեին Սարդարապատի և Աշտարակի կողմերից ներխուժել Երևան, գրավել արևելահայության վարչական կենտրոնը, աշխարհի քարտեզից ջնջել Հայաստանը։

Ալեքսանդրապոլ-Սարդարապատ-Երևան ուղղությամբ հարձակվող 36-րդ դիվիզիայի մեջ մտնում էին 3 հետևակային, մեկ հրետանային գունդ, հարվածային մեկ գումարտակ, սակրավորների գումարտակ, կոր-

պուսային ուժեղացված հեծյալ գունդ, քրդական կանոնավոր հեծելազոր՝ 1500 սուր, 40 հրանոթ[33]։

Գտնվելով ծանր իրադրության մեջ, իր պլաններն էր մշակում Հայկական կորպուսի հրամանատարությունը։ 1918 թ. մայիսի 16-ին Ղարաքիլիսայում գեներալ Նազարբեկյանը և շտաբի պետ գեներալ Վիշինսկին ստորագրեցին հրաման, որով կատարվեց կորպուսի ստորաբաժանումների նոր վերախմբավորում։ Այն բերվում է ամբողջությամբ.

1. Թուրքերը, խախտելով զինադադարը, մայիսի 15-ին անցան հարձակման և հետ մղեցին մեր զորամասերին, որոնք կանգնած էին Ջաջուռի լեռնանցքում։

2. Հանձն Դյոհեղուշ-Ավդիբեկ գծով մեր գրաված դիրքերը հրամայում եմ պաշտպանել Ալեքսանդրապոլի ջոկատին՝ իմ պահեստային զորամասերի կազմով (թիվ 15 գաղտնի հրամանի համաձայն), նրան կցելով 7 և 8-րդ հայկական հրաձգային, Կարսի ամրոցային հայկական հետևակ և հնձյալ գնդերը և Խանասորյան գումարտակը՝ Հայկական առաջին հրաձգային դիվիզիայի պետ գեներալ-մայոր Արեշովի ընդհանուր հրամանատարությամբ։

3. Ալեքսանդրապոլի ամրացված դիրքերի կազմի մեջ մտնող մյուս զորամասերին (գաղտնի հրաման թիվ 15) հրամայում եմ շարժվել Ղարաքիլիսա, որտեղ նրանց կտրվեն հետագա առաջադրանքներ։ Երևանի ջոկատին՝ շարունակել իր վրա դրված առաջադրանքի կատարումը Երևանի շրջանի պաշտպանության ուղղությամբ։

4. Ալագյազի ջոկատին՝ մտնել Երևանի ջոկատի կազմի մեջ և թուրքերի գերազանց ուժերի հարձակման դեպքում հետ քաշվել Երևան։

5. Գեներալ Անդրանիկի ջոկատին՝ փակել Լոռվա դռները, կենտրոնանալով Վառոնցովկա գյուղում[34]։

Այս հրամանը տրվեց Ալեքսանդրապոլի անկումից հետո, իսկ թիվ 15 գաղտնի հրամանը տրվել էր ապրիլի 14-ին, Կարսի անկումից հետո։ Ըստ հրամանի, կորպուսի բոլոր զորամասերը պետք է կենտրոնանային Արփաչայի աջ ափին, հետևյալ խմբավորումներով.

1. Ալեքսանդրապոլի ամրացված շրջան. ամրոցի պարետ գնդապետ Յանկովսկի։ Ամրացված շրջանի մեջ մտնում էին Հայկական 7-րդ և 8-րդ հրաձգային գնդերը, Կարսի ամրոցային հետևակ գունդը, Խանասորի առաջին գումարտակը, փոխգնդապետ Եֆրեմովի սպայական գումարտակը, Վասպուրականի վաշտը, Հայկական առաջին և երկրորդ հրաձգային-հրետանային բրիգադների ութ մարտկոց, Ալեքսանդրապոլի և Կարսի ամրոցային հրետանին, Կարսի Հայկական առաջին հեծյալ գունդը, հատուկ հեծյալ հարյուրյակը, Կարսի ամրոցային սակրային վաշտը, Ալեքսանդրապոլի ռադիոկայանը։

2. Ալագյազի ջոկատ. հրամանատար հետևակային առաջին հատուկ բրիգադի պետ գնդապետ Մորել։ Ջոկատի մեջ մտնում էին Հայկական առաջին հետևակային հատուկ բրիգադը, Էրզրումի և Երզնկայի Հայկական հետևակային գնդերը, Հայկական հետևակային երկրորդ

հատուկ բրիգադը, Խնուսի, Ղարաքիլիսայի Հայկական հետևակային գնդերը, Հայկական հատուկ հեծյալ գունդը, դաշտային ռադիոկայանը։

Ջոկատի խնդիրն էր. պաշտպանել Երևան տանող երկաթուղին՝ Աղին կայարանից մինչև Ալագյազ կայարան։ Առաջին բրիգադի գնդերը տեղակայվելու էին Աղինի շրջանում, երկրորդ բրիգադի գնդերը՝ Ալագյազի շրջանում, հեծյալ գունդը՝ Անիի շրջանում։

3. Երևանյան ջոկատ. հրամանատար Հայկական երկրորդ հրաձգային դիվիզիայի պետ Մ. Սիլիկյան։ Ջոկատի մեջ մտնում էին 5-րդ և 6-րդ Հայկական հրաձգային գնդերը, Հայկական երկրորդ հրաձգային-հրետանային բրիգադի 1—5-րդ մարտկոցները, Հայկական հեծյալ և հետևակ պարտիզանական գնդերը, Իգդիրի Հայկական գունդը, Հայկական երկրորդ հատուկ հետևակ բրիգադի շտաբը, Վանի առաջին և երկրորդ Հայկական հետևակ գնդերը, Մակուի երկրորդ հետևակ գունդը, Ջևդիունի Հայկական հետևակ հատուկ գունդը, Վանի առաջին գումարտակը, Ջուլֆա-Ալեքսանդրապոլ երկաթուղին հսկող առանձին գումարտակը, սակրային և կապի վաշտերը, Երևանի դաշտային և Իգդիրի շարժական ռադիոկայանները, Կովկասյան երկրորդ ավիաջոկատը։ Ջոկատի խնդիրն էր պահպանել սահմանը Արփաչայի երկայնքով Ալագյազ կայարանից մինչև Թոնդուրեք լեռը և պետական սահմանը Թոնդուրեքից մինչև Նախիջևան։

4. Անդրանիկի կամավորական ջոկատը պետք է բռներ պաշտպանական գիծ Կարզախ և Բանդևան գյուղերի միջև ընկած տարածքում. կենտրոնանալու էր Խան գյուղ լճի շրջանում։

5. Կորպուսային պահեստային ուժեր. հրամանատար՝ Հայկական առաջին հրաձգային դիվիզիայի պետ գեներալ-մայոր Արեշյան։ Պահեստային ուժերն էին 1—4-րդ Հայկական հրաձգային գնդերը, առաջին հրաձգային-հրետանային բրիգադի 3—5-րդ մարտկոցները, մեկ սակրային և մեկ հետևակային վաշտ, դաշտային ռադիոկայան, Հայկական առաջին հեծյալ բրիգադը, առաջին և երկրորդ հեծյալ գնդերը, Հայկական հեծյալ-լեռնային մարտկոցը։ Կենտրոնանալու էին Ջաջուռ-Թափադի-Փոքր-Ղարաքիլիսա-Հոռոմ-Քավթաղի-Ջանախչի գյուղերի սահմաններում[35]։

Թուրքական հարձակման պատճառով ռազմական դրություն հայտարարվեց Ալեքսանդրապոլի և Ղազախի հայոց զորքի ձեռքում մնացած մասերում, նոր Բայազետի գավառում։

Թե ինչպես էին իրականացվում հրամանատարության մտահղացումները, ցույց են տալիս Հայկական առաջին կորպուսի շտաբի համառոտ գրառումները։

Մայիսի 16. Ղազախի գնդին հրամայված է շարժվել Ղարաքիլիսա. գեներալ Անդրանիկին տրված էր առաջադրանք՝ պաշտպանել Լոռվա գոտին։ Գեներալ Սիլիկյանին ևս տրվել են հանձնարարականներ։ Հայկական առաջին դիվիզիայի շտաբի պետի հազորդման համաձայն, թուր-

քերը պահանջել են մեր զորքերը հետ քաշել Արփաչայից 25 կմ։ Մայիսի 15-ին նրանք գրավել են Օրթաքիլիսան և դրանից ձախ գտնվող բարձունքները, խմբավորվել ամրոցի ձախ թևում՝ Թանա-Թալապադի և Փոքր Ղարաքիլիսայի շրջանում։ Հայկական 4-րդ գունդը նահանջեց Ջաջուռի լեռնանցքի շրջան, 3-րդ գունդը Դուզքինդից նահանջեց Օրթաքիլիսա։ 2-րդ և 1-ին գնդերը հետ քաշվեցին Մեծ Քափանակի բարձունքներ։ 8-րդ գունդը շարունակում էր պահել ամրոցի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասը։ Նահանջող զորքերի ուղղությունը դեպի Ջաջուռ էր։ Թուրքերի պահանջը՝ հետ քաշել զորքերը Արփաչայից 25 կմ, կատարվեց ինքնըստինքյան։ Զորքերի քայքայման պայմաններում կամ-ակամա հրամայվեց նրանց հետ քաշվելը Դյոքեղուշ, Բեկանդ, Ավդիբեկ և Փուլիբ գիծը՝ ուշքի գալու և մարտ ընդունելու համար։ Լոռվա գնդի հրամանատարը հաղորդեց Ալեքսանդրապոլից մինչև Ախալքալաք ճանապարհի վրա 3-րդ օրը ընթացող մարտերի մասին։ Հարցում արվեց Թիֆլիս՝ Ազգային խորհրդին, հետագա անելիքների մասին, եթե թուրքերը շարունակեն հարձակումը։

Մայիսի 17. Ստացվել է Վեհիբ փաշայից վերջնագիր՝ իրենց տրամադրության տակ դնել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին՝ զորքերի տեղափոխման համար։ Կորպուսի հրամանատարը ստիպված էր համաձայնել այդ պահանջին։ Գեներալ Արեշյանը հայտնում է իր ջոկատի կատարյալ անմարտունակության մասին։ Գեներալ Սիլիկյանին հրամայվել է թույլ տալ թուրքական զորքերին անցնել երկաթգծով։ Իգդիրի ջոկատին հրամայվել է մնալ տեղում։ Ախալքալաքի գնդի հրամանատարին հրամայված է պատրաստվել դիմակայելու թուրքերին և գործել գեներալ Անդրանիկի հետ։ Ալագյազի ջոկատի պետից ստացվել է հաղորդում, որ Երզնկայի գունդը հետ է քաշվում Կարա-Կալա կիսակայարան, իսկ Ղարաքիլիսայի և Խնուսի գնդերը հսկում են Արփաչայի շրջանը՝ Ղազվինից մինչև Թազաքենդ, Քարվանսարայի շրջանը հսկում է հեծելազորը։ Թազաքենդի մոտ երևացել է թշնամու մոտ 100 հեծյալ և 200 հետևակ զինվոր։ Ռուսական կամավորական ջոկատը ուղարկվել է Ղարաքիլիսա՝ այնտեղ գտնվող կորպուսի շտաբի տրամադրության տակ։

Մայիսի 18. Արփաչայի շրջանում Բուղդաշենից մինչև Թազաբենդ, հակառակորդ չի հայտնաբերվել։ Ջինգիլի լեռնանցքում պարեկը գնդակոծվել է։ Ղազախի գնդի հրամանատարին կարգադրվել է ճակատի մերկացման պատճառով մոբիլիզացնել ևս 1000 կադրային զինվոր։ Գեներալ Արեշյանը հայտնում է, որ իր ամբողջ դիվիզիայից մնացել է 8000 զինվոր, մնացածները դասալքել են։ Երևանի շրջանում Քուլփայի ջոկատը հրամանի համաձայն հետ է քաշվել դեպի Կարա-Կալայի կամուրջը՝ Արաքսի վրայով անցումը ապահովելու համար։ Դեպի Բաշ-Ապարան ուղարկվել է Դրոյի ջոկատը։ Գեներալ Արեշյանը ջոկատի հրամանատարությունը հանձնել է գնդապետ Բեյ-Մամիկոնյանին և մեկնել արձակուրդ։ Բեյ-Մամիկոնյանը հայտնել է հրամայատարությունը ստանձնելու և զորքերի քայքայման մասին։ Այդ բոլորի մասին զեկուցվել է Ազգային խորհրդին։ Գնդապետ Ղորղանյանը հաղորդում է, որ Վորոնցովկայի մոլոկանները և թաթարները հայտնում են թուրքերին ենթարկվելու իրենց ցանկության մասին, համոզելով, որ կռվել հնարավոր չէ։ Գեներալ Նազարբեկյանը շտաբի պետին մատնացույց է անում Ղարաքիլիսայում 3000 թուրք ռազմագերիներ պահելու աննպատակահարմարության մասին, նրանք դեպի իրենց են հառում յուրայիններին ազատել ձգտող թուրքերի ուշադրությունը։

Մայիսի 19. Գեներալ Նազարբեկյանը կարգադրել է Ալեքսանդրապոլի ջոկատի պետին ճակատը պահել թեկուզ սպաներով, եթե զինվորներին ստիպել հնարավոր չլինի։ Ղազախի գնդի հրամանատարին կարգադրված է բռնել Դիլիջանի դասալիքներին և ուղարկել ռազմաճակատ։ Ճակատ է ուղարկվել 300 ելիզավետպոլցի։ Թուրքերը հարձակվել են Կարա-Կալա կայարանի և Մաստարայի ուղղությամբ, Ալագյազի ջոկատը հետ է քաշվել Կարա-Բուրունի շրջանը. կայարանի վրա հարձակված քրդական ջոկատը հետ է շպրտվել։ 12.30 րոպեին թուրքերի և հայերի միջև հրադադարություն էր Ջինգիլի լեռնանցքում և Խալֆալուի ու Խաչկատարի հարավային բարձունքների տակ։ Սարդարապատի ուղղությամբ ամրացման համար ուղարկվեց Հայկական 5-րդ հրաձգային գունդը՝ 2 հրանոթով։ Ալագյազյան ջոկատի հրամանատար գնդապետ Կազիմիրսկուն հրամայվեց ուղարկել պաղամենտյորներ։ Գեներալ Քվինտաձեն հայտնում է Չխենկելու որոշումը՝ թուրքերին թույլ տալ անցնել։ Գեներալ Անդրանիկին հրամայված է մնալ Ջալալօղլիում, պաշտպանել Լոռվա գոտին։ Անդրանիկը կենտրոնացել է Ջալալօղլիում։

Մայիսի 20. Ժամը 14-ին Ջաջուռի լեռնանցքից դեպի Աղբուլաղ շարժվեց հակառակորդի մեկ զորասյուն՝ մեկ գումարտակ ուժով։ Միաժամանակ, Աղբուլաղից դեպի արևելք շարժվեց հետևակային մեկ վաշտ՝ մոտ 80 զինվոր։ Ղալթախչի գյուղում գտնվում է հակառակորդի մեկ վաշտ և մեկ էսկադրոն։ Ժամը 3-ին թուրքերը գրավեցին Ավդիբեկ գյուղը։ Ալեքսանդրապոլի ջոկատի պետին կարգադրված է Ղարաքիլիսայի վրա հարձակման դեպքում մեկ դիվիզիոնով և երկու լեռնային մարտկոցներով հետ քաշվել Ղարաքիլիսա, մյուս մասերը՝ գնդապետ Իշխան Արղությանի հրամանատարությամբ՝ նահանջեն Դիլիջան։ Վորոնցովկա գյուղի մոլոկանները ռուսական մարտական հրանոթները պահել են ու չեն տալիս կապիտան Լուտցեուին՝ պատճառաբանելով, թե թուրքերը վրեժխնդիր կլինեն։ Վորոնցովկա են ուղարկվել Անդրանիկի ջոկատի 200 հեծյալ և երկու վաշտ։ Առաջին դիվիզիայի շտաբին զեկուցվել է, որ Աղբուլաղից Ալեքսանդրապոլ խճուղով դեպի Նալբանդ է շարժվում թուրքական հետևակի զորասյուն՝ հեծելակի հետ։ Ալեքսանդրապոլի ջոկատը դիրքեր է գրավում Գոգարան-Թափաղի-Որթնավ գծով։ Գեներալ Սիլիկյանը հաղորդում է Երևանի ջոկատի ողբերգական վիճակի մասին. զորքերին կառավարելը դառնում է անհնարին։ Կորպուսի հրամանատարը հաղորդում է բանակի հրամանատարին և Ազգային խորհրդին, որ իրադրությունը պահանջում է վերջնական հաշտության անհապաղ կըն-

քում։ Թուրքերի մոտ նորից ուղարկվում են պառլամենտյորներ, նշվում է, որ թուրքերը խախտում են զինադադարի իրենց իսկ ընդունած պայմանները։ Թուրքերը մեղադրելով հայերին ամեն ինչում, շարունակում են իրենց առաջխաղացումը մեծ ուժերով։ Մեր զորքերը նահանջում են Մաստարայից, Թալինից, Աշնակից։ Իգդիրի ջոկատին հրամայված է Քյուլփայի կողմից հարձակվող թուրքերից պաշտպանել Մարգարայի կամուրջը և միանալ Սարդարապատի ջոկատին[35]։

Մայիսի 21. Երկրորդ դիվիզիայի շտաբից հաղորդվել է. մայիսի 20-ի առավոտյան, թաթարներով և քրդերով համալրված թուրքական զորամասերը հարձակում սկսեցին Իգդիրի վրա։ Ուղարկված պառլամենտյորները զեկուցեցին, որ թշնամին պահանջում է մեկ ժամվա ընթացքում իրենց հանձնել ամբողջ զենքը և բոլոր զինված հայերին։ Ջոկատի պետը հրամայեց հետ քաշվել Մարգարա, որոշելով թուրքերի առաջխաղացումը կասեցնել Արաքսի անցման կամուրջի մոտ։ Թուրքերը գրավեցին Համամլուն և շարունակում են հարձակումը։ Ջոկատը սկսեց հետ քաշվել դեպի Ղշլաղ, ապա՝ Ղարաքիլիսա։ Համամլուի ջոկատին տրվել է նոր հրաման՝ հետ քաշվել դեպի Դիլիջան։ Երկաթուղու երկայնքով ուղարկվել են Կարսի ամրոցային գունդը և Խանասորյան ու Լոռվա գումարտակները։ Գնդապետ Բեյ-Մամիկոնյանը հաղորդել է իր անելանելի վիճակի և թուրքերի պայմանների ընդունման անհրաժեշտության մասին։ Գեներալ Նազարբեկյանին Անդրկովկասյան կառավարության կողմից հանձնարարված է թուրքերի հետ գալ համաձայնության՝ երկաթգծով մինչև Ջուլֆա զորքերի տեղափոխության հարցում։ Գեներալը ուղիղ հեռախոսագծով արտահայտում է իր զարմանքը՝ մտնելու թուրքերի հետ բանակցությունների մեջ, այն ժամանակ, երբ իրենք՝ թուրքերը, միանգամայն որոշակի, չեն ցանկանում ոչ մի բանի մասին խոսել, այլ ուղղակի պահանջում են այն ամենը, ինչ ուզում են։

Գեներալ Սիլիկյանը հաղորդում է. մայիսի 21-ին, ժամը 17-ի մոտ, սկսվեց մարտը Երևանյան երկաթուղու Սարդարապատ կայարանի մոտ։ Սարդարապատի ջոկատը հետ քաշվեց Քյորփալու-Հայկական Ջեյվա գծով։ Իգդիրի ուղղությամբ հայկական զորամասերը ամրացրել են Արաքսի գետանցը, Մարգարայի մոտ ունենալով հենելազոր[37]։

Թուրքական հարձակման հետևանքով ուժեղացել էր փախստականների հոսքը դեպի Երևան։ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի շրջակայքում առաջացել էր փախստականների զանգվածային կուտակում, խցանվել էին Էջմիածնի ելքի և մուտքի ճանապարհները։ Դեպի Երևան էին շարժվում նույնիսկ Էջմիածնի շրջանի բնակիչները՝ կանայք ու երեխաներ, գյուղերում թողնելով զինված տղամարդկանց։ «Մայիսի 21-ին Էջմիածնի վիճակը հատկապես ծանր էր. գաղթականների և տեղական բնակիչների ընկճված տրամադրությունը, Նորին Սրբություն Գևորգ 5-րդ կաթողիկոս Սուրենյանի վճռականությունը չլքելու Մայր տաճարը և ամբողջ Սուրբ Էջմիածինը՝ Երևանյան ջոկատի հրամանատար, փառապանծ գեներալ Սիլիկյանի և փոխգնդապետ Վեքիլյանի շտաբին կանգ-

նեցրին անհրաժեշտ վճիռ առաջ՝ ցույց տալ համառ դիմադրություն առաջ շարժվող թշնամու զորքերին, և մայիսի 21-ին, կեսօրից հետո, 5-րդ գունդը անցավ հարձակման։ Թուրքերը չդիմացան և սկսեցին հետ քաշվել։ Դա բարձրացրեց զորքի և բնակչության ոգին և ամբողջ Վաղարշապատը բառացիորեն թնդում էր ցնծության պոռթկումից։ Բնակիչները սկսեցին խմբերով ներկայանալ զենքով և սննդամթերքով՝ ճակատ մեկնելու համար։ Համալրում եկավ ամեն տեղից, հատկապես Երևանից և Ղամարլուից»,— գրել է Հայկական հրետանային բրիգադի հրամանատար գնդապետ Արարատյանը[38]։

Հստակ գնահատելով պահը, Հայկական 2-րդ դիվիզիայի հրամանատար գեներալ Սիլիկյանը հեռախոսով հայտնում է Երևանի պարետ Արշավիր Շահխաթունուն. «Թուրքերը առաջանում են դեպի Սարդարապատ՝ Քարքանի ճակատից։ Ալեքսանդրապոլից, Անիից և Աղինից կտրված ենք։ Չունենք որևէ պահեստի զինվոր՝ թշնամուն դիմադրելու համար։ Կարելին անել անմիջապես, ինձ հասցնել Ձեր տրամադրության տակ եղած պահեստի զինվորներին, ինչպես նաև պաշար, փամփուշտ, ռազմամթերք։ Հայտնեցեք Արամ փաշային նույնպես, թե պետք է աշխատել նահանջել դեպի Քարքանի ճահիճները և ամրանալ Բոզ-թեփեների վրա։ Դուք ամրացրեք Երևանը։ Տեղի մի տաք շփոթության և իրարանցումի»[39]։

Այդ օրերի մասին Ս. Վրացյանը գրում է. «Թուրքերի ընդհանուր հարձակումը մի պահ Երևանում առաջ բերեց անասելի իրարանցում ու սարսափ։ Դիմադրությունը շատերին թվում էր անհնար և անիմաստ։ Հաղթության վստահություն չէին ներշնչում և բանակից մեզ հասնող տեղեկությունները։ Զորավար Սիլիկյանի հաղորդագրությունները մռայլ գույներով էին ներկայացնում զորամասերի դիմադրական կարողությունը»[40]։

Սարդարապատի հերոսամարտի մասնակից, հետագայում Խորհրդային Միության մարշալ Հ. Բաղրամյանը անձնական դիտողությունների և ռազմական ամփոփագրերի ու գեներալներ Նազարբեկյանի և Սիլիկյանի հուշերի ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա հանգել է հետևյալ եզրակացության. «Այդ ծայրահեղ բարդ քաղաքական և ռազմական պայմաններում գեներալ Սիլիկյանը ընդունեց միակ ճիշտ, բազմակողմանի մշակված, առանց չափազանցության տաղանդավոր որոշում»։ Եվ ապա՝ «Չեմ կարող լռությամբ անցնել Սարդարապատի տակ թուրքերի ջախջախման գործում Մովսես Սիլիկյանի ականավոր դերի կողքով։ Նա այդ դժվարին ժամանակ գլխավորում էր հայկական զորքերի Երևանյան խումբը։ Իմ խորին համոզմամբ, այն ժամանակվա բոլոր հայ գեներալներից ամենաշնորհալի զորապետը Սիլիկյանն էր»[41],— գրել է Բաղրամյանը։

Գեներալ Սիլիկյանը կատարեց իր գլխավորած 2-րդ հրաձգային դիվիզիայի 7-րդ և 8-րդ գնդերի, Երևանյան զորախմբի մեջ գտնվող առանձին զորամասերի, 3-րդ հետևակային բրիգադի՝ Վանի 1-ին և

2-րդ գնդերի, Մակուի հետևակային գումարտակի, 2-րդ հեծյալ բրիգադի 1-ին գնդի, գնդապետ Դոլուխանյանի հրամանատարությամբ գործող 6-րդ հրաձգային գնդի, գնդապետ Ջալինյանի գլխավորած պարտիզանական հեծյալ գնդի, գնդապետ Սիլինի սահմանապահ գումարտակի, փոխգնդապետ Կորոլկովի պարտիզանական հեծյալ խմբի ուժերի նոր վերադասավորում: Դրաստամատ Կանայանի ղեկավարած զորախմբի խնդիրն էր հակագրոհների միջոցով դուրս քշել թուրքերին Բաշ-Ապարանի մատույցներից:

Երևանի պաշտպանությունը ապահովելու նպատակով գեներալ Սիլիկյանը միջոցներ ձեռնարկեց Կողբի (Քյուլփա) ու Իգդիրի ուղղությամբ թուրքական 5-րդ և 12-րդ դիվիզիաների գործողությունները կասեցնելու համար: Այդտեղ գտնվող սակավաթիվ ստորաբաժանումներին նա հրամայեց պայթեցնել Մարգարայի ու Կարակալայի կամուրջները, խրամատավորվել Արաքսի ձախ ափում: 3-րդ հետևակային բրիգադը, գնդապետ Բաղդասարյանի գլխավորությամբ, պաշտպանական դիրքեր գրավեց Նախիջևան-Շարուր ուղղությամբ: Գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի՝ դյուցազնամարտի ամենաարժանավոր հերոսներից մեկի հրամանատարությամբ գործող Սարդարապատի ջոկատի զորքերը՝ 5-րդ կամավորական գունդը և կամավորական աշխարհազորային ջոկատները՝ գնդապետ Պողոս Բեկ-Փիրումյանի հրամանատարությամբ, գնդապետ Պերեկրեստովի ղեկավարած պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրյան հետևակային գունդը, Ջեյթունյան հեծյալ գունդը (հրամանատար գնդապետ Սալիբեկով) և Հատուկ հեծյալ գունդը (հրամանատար Ամիրխանով) մայիսի 22-ին հարձակման անցան Քյորփալու (Արշալույս), Ղուրդուղուլի (Արմավիր) գյուղերի բնագծից և հուժկու գրոհով ոչնչացրին թուրքերի ուժերը Ղամշլու (Ծղեգնուտ) գյուղի շրջանում և նույն օրը հետ վերցրին թուրքերի կողմից մեկ օր առաջ՝ մայիսի 21-ին գրաված Սարդարապատը: Թուրքերը խուճապահար նահանջելով՝ կրելով խոշոր կորուստներ, պաշտպանության անցան Արաքս կայարանի և նրա հյուսիս-արևելյան բարձրունքների բնագծերում:

Երևանյան ջոկատի պաշտոնական զեկուցագրերը հակիրճ էին. «մայիսի 22. Առավոտյան ժամը 6-ին սկսվեց մեր զորամասերի հարձակումը: 5-րդ հայկական գնդի գումարտակները առաջ շարժվելով Կողբի և Թալինի ուղղությամբ երեքժամյա մարտերից հետո՝ ժամը 11-ին գրավեցին Ուշան, Բաշ-Խորաբ, ժամը 18-ին՝ Կոշ գյուղերը: Մայիսի 23-ին Իգդիրյան ջոկատը կռվի բռնվեց հակառակորդի հետ Ջաֆար արխի շրջանում, Մոլլա Բայուկից 2 կիլոմետր հեռավորության վրա: Սարդարապատի ջոկատի զորամասերը մարտերով մտան Սարդարապատ կայարան: Սարդարապատը և Մոլլա Բայուկը վերցվում են մարտերով: Թուրքերի հետապնդումը դեպի Արաքս շարունակվում է»:

Ավելի զուսպ էր կորպուսի շտաբի գրառումը. «Մայիսի 23. գեներալ Սիլիկյանը զեկուցեց Սարդարապատի վրա իր հարձակման մասին,

առայժմ բավականին հաջող: Որոշվել է գիշնամուն կանգնեցնել Ղարաքիլիսայի մոտ[42]:

Մայիսի 23-ի զեկուցագրի մասին «Հորիզոն» թերթը մայիսի 25-ին գրել է. «Գեներալ Սիլիկյանը հաղորդեց. որ 22-ին ժամը 12-ին նրա զորամասի ձախ թևը Սարդարապատի շրջանում հարձակում գործեց, հետ մղեց թուրքերին և գրավեց կայարանն ու Սարդարապատ գյուղը: Երեկ էլ հաջողություն ունեցանք Մարգարայի շրջանում: Զորքի տրամադրությունը բարձր է: Դասալիքները ինքնուրույն ներկայանում և զորքի մեջ են մտնում ու գնում ճակատ: Գրավված է մեծ թվով ռազմամթեր»:

Սառն է կարաբեքիրի գրառումը. «Սարդարապատի շրջանում գործող մեր ջոկատը մայիսի 22-ին ստիպված էր մի քիչ նահանջել: Մայիսի 24-ին բանակի հրամանատար Վեհիբ փաշան և զորախմբի հրամանատար Շևքի փաշան եկան Գյումրի: Սարդարապատի շրջանում մայիսի 27-ին հայերին հաջողվեց հետ շպրտել մեր ջոկատը, որը նահանջեց դեպի Ալագյազ»[43]:

Հայկական զորքերի և աշխարհազորայինների տարած փայլուն հաղթանակում հատկապես աչքի ընկան գնդապետներ Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյանների, գնդապետներ Դոլուխանյանի, Սիլինի, Պերեկրեստովի, փոխգնդապետ Կորոլկովի զորամասերը, գնդապետ Կարաքեշիշյանի, կապիտաններ Սակիլյարիի, Աթանեսյանի, Կլիչի, Իգիթխանյանի, կրտսեր սպա Ջայլախյանի (Հայրենական մեծ պատերազմի տարիներին գեներալ-լեյտենանտ) հրետանավորները, Հովհաննես Բաղրամյանի և Արտակ Վարդանյանի հեծյալները (վերջինը Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ գեներալ-լեյտենանտ), Սարդարապատի խմբի շտաբի պետ էլզաս-լոթարինգցի Ալեքսանդր Շնեուրը:

Գեներալ Սիլիկյանը իր շտաբով մշակեց թուրքերի շրջապատման և ջախջախման նոր պլան: Մայիսի 23-ին Սարդարապատի և Իգդիրի ջոկատները միավորվեցին գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի ընդհանուր հրամանատարության տակ: Վերջինս միաժամանակ Երևանյան ջոկատի հրամանատարի տեղակալն էր: Աջ կողմից Սարդարապատ կայարանի մոտ դիրքեր գրավեցին 5-րդ հարվածային գնդի վեց վաշտ, էչմիածնի պարեկային վաշտը, Խնուսյան գնդի կես վաշտ, Ղարաքիլիսայի գնդի մեկ վաշտ, Ջեյթունյան գունդը, Հատուկ հեծյալ գնդի մեկ էսկադրոն, Առաջին մարտկոցի 2 հրանոթ: Թալինի շրջակայքում կանգնած էին կապիտան Պանդուխտի հեծյալները՝ 150 սվին, Արաքս կայարանի մոտ՝ հետախույզների ջոկատը: Ձախից՝ երկաթուղային գծից հարավ, կանգնած էին Իգդիրյան ջոկատը, Սարդարապատ և Մոլլա Բայազետ գյուղում՝ պարտիզանական գունդը, Հատուկ հեծյալ գունդը, Երկրորդ մարտկոցի 4 հրանոթ: Քերիմ արխ գյուղում տեղակայվել էր Իգդիրյան գունդը: Ջաֆարաբադը և Կարակալան հսկում էին Մելքոնի հեծյալները: Հետախույզները առաջ էին մղվել հյուսիս-արևելք:

Երկու ջոկատների ընդհանուր պահեստային ուժերն էին Հայկական 5-րդ հարվածային գնդի 2 վաշտ, Զեյվա գյուղում կանգնած մեկ գումարտակ, Քյորփալու գյուղի շրջակայքում կանգնած Մակվի գումարտակը, Սրգնիայի և Խնուսի գնդերը: Նույն օրը՝ մայիսի 23-ին, Զեյթունյան գնդի և 5-րդ գնդի 2 հրանոթի ուժերով կազմակերպվեց Շահրիարի ջոկատը: Մակուի գունդը տեղակայվեց Կողում[44]:

Թուրքերի գլխավոր ուժերը՝ 36-րդ դիվիզիան, համառ մարտերից հետո քաշվել էր դեպի Կարա-Բուրուն և Ներքին Թալին: Երկաթուղուց հարավ թուրքերին միացած քրդական զինված խմբերն էին: Ընդհանրապես, ինչպես գրում է Ղարաբաղյան առանձին բրիգադի պետ գեներալ-մայոր Փիրումյանը, «Սարդարապատի, Քյորփալուի, Արբատի և մնացած մյուս ռազմական գործողությունների ժամանակ թուրքերի ամբողջ հետախուզությունը դրված էր տեղական թուրքերի վրա. նրանք էլ կազմում էին կողային ջոկատները, ծառայում թուրքերի համար որպես ուղեկցողներ և սլիններ, իսկ թիկունքում նրանց զինված խմբերը կատարում էին հայերի նկատմամբ մասսայական բռնություններ: Նույնիսկ Երևանի թուրքերը մասնակցում էին թուրքերին ամեն անհրաժեշտ տեղեկություններ տալուն»[45]:

Հայրենիքը վերջնականապես կորցնելու վտանգը համախմբել ու ուրի էր հանել ողջ հայ ժողովրդին. հարյուրավոր մարդիկ ներկայանում էին զորամաս, կամավոր գնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադրամիջոցներ և աննդամթերք, մտնում աշխարհազորայինների շարքերը: Անկախ քաղաքական համոզմունքից, նրանք դուրս էին եկել գոյամարտի հանուն հայոց հողի և ազգային արժանապատվության: Մարտի էին դուրս եկել մտավորականը և հոգևորականը, բանվորն ու շինականը, երիտասարդներն ու ալեհերները, կանայք ու աղջիկներ, բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները: Պաշտպանների շարքերում էր հոգևորական և հայագետ Գարեգին Հովսեփյանը: «Երևանի շրջանում ամբողջ իշխանությունը ամուր գտնվում էր Արամ Մանուկյանի ձեռքերում, որը համերաշխ գործում էր ժողովրդին ու զորքին ոգեշնչող գեներալ Սիլիկյանի ու Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական ու տնտեսական հզորության կազմակերպման նրանց ակնառու ունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքին պահել մի կտոր հողը, միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի վանքը, և եթե մեր՝ հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նստում այժմ, ապա այդ ես վերագրում եմ բացառապես երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկյանին և Դրոյին»[46],— գրել է 1919 թ. փետրվարի 7-ին Հայկական հրետանային բրիգադի հրամանատար, Սարդարապատի մարտերի մասնակից գնդապետ Արարատյանը:

«Հայկական զորքը իր թիկունքում հենվում էր հայկական գյուղերի վրա, որոնք իրենց ամբողջ ունեցվածքը, թե կամավոր կերպով և թե իրերի բերումով տրամադրել էին զորքին»[47],— վկայում է Շևեուրը:

Սարդարապատի առաջին հաղթանակը, նկատում է Հ. Թուրշյանը, մոգական գավազանի մեկ հրաշագործ զարկով վերացնելով գաղթականի ու տեղացու տխուր հակամարտությունը և հաղթանակի հավատով տոգորելով բոլորին, հուսակտուր ժողովրդին դարձրեց միաձույլ ու միասնական[48]: «Երևանում աղգաբնակչությունը զոհաբերում է ամեն ինչ: Ամբողջ քաղաքը հաց է թխում զորքի համար,— գրում էր «Հորիզոնը» մայիսի 24-ին,— Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Ղազախում դասալիքները խումբ-խումբ վերադառնում են դեպի ճակատ գնալու՝ հրացաններով ու փամփուշտներով. զորքն ու ժողովուրդը պատրաստակամություն են հայտնում կռվելու և պաշտպանելու իրենց իրավունքները: Ղազախում հին զինվորներն ու գյուղացիները անգամ զորամասեր են կազմում և պատրաստվում կռվելու»:

Հարձակողական գործողությունների զարգացման մասին մայիսի 24-ի ամփոփագրում գրանցված է. Երևանյան ուղղությամբ՝ հաջողություն Սարդարապատի մոտ: Օրվա ընթացքում մերոնք հետապնդում էին նահանջող հակառակորդին երկաթգծի ուղղությամբ և Ալագյազի փեշերին: Հետախուզությամբ հայտնաբերվել են Սարդարապատ-Արաքս ուղղությամբ հետ քաշվող հակառակորդի մեծ խմբեր: Դրոյի ջոկատը հասավ Ալի-Քուչակ, ուղարկվել է հետախուզություն Բաշ-Ապարան: Պարզվել է Բաշ-Ապարան և Աշտարակ շարժվող 36-րդ թուրքական դիվիզիայի նպատակը: Դրոյի ուժեղացված ջոկատը մտավ Ալի-Քուչակ: Սարդարապատի տակ գործել է թուրքական 108-րդ գունդը, հայերի կորուստները մեծ չեն: Գեներալ Սիլիկյանը հայտնել է հաջողության կապակցությամբ զինվորների ոգու բարձրացման մասին. դասալիքները վերադառնում են զենքով ու փամփուշտներով, զինվորները ձգտում են առաջ[49]:

Թե զինվորների, թե բնակչության սրտերում և շուրթերին էին հայերին մայիսի 24-ին գեներալ Սիլիկյանի ուղղված խոսքերը. «Հայեր, շտապեցեք Հայրենիքն ազատելու: Հասել է պահը, երբ յուրաքանչյուր հայ,մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի, Հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործ դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար...

Հայեր, ժամանակը չէ դանդաղելու. մինչև 50 տարեկան բոլոր տղամարդիկ պարտավոր են զենքի տակ գնալու: Ես պահանջում եմ բոլորից Հայրենիքի պաշտպանության համար ներկայանալ իրենց զենքով ու փամփուշտներով:

Հայուհիներ, հիշեցեք 5-րդ դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգեվորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը՝ անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցեք նրանց օրինակին, եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնատակ լինի, խրախուսեցեք այրերին, նզովեք վախկոտներին, հավաքեք ռազմապաշար, հաց, հագուստ...

Մենք չէինք ուզում կռվել, հանուն խաղաղության պատրաստ էինք գնալ ամեն զոհողության, սակայն մեր ուխտադրուժ թշնամին շարու-

նակում է գնալ իր նշած ուղիով, նա ցանկանում է ոչ միայն կեղեքել մեզ, նա ուզում է բնաջնջել և հողին հավասարեցնել մեր բազմաչարչար ազգը։ Բայց եթե մեզ վիճակված է լինել բնաջնջված, ավելի լավ չէ՞ արդյոք զենքը ձեռքներիս մենք պաշտպանենք մեզ, մարտում ձեռք բերենք մեր գոյության իրավունքը։ Հայեր, ոտքի կանգնեցեք, դեպի գործ, դեպի սրբազան պատերազմ»[50]։

Մայիսի 25-ին գեներալ Սիլիկյանի հրամանով Սարդարապատի ջոկատը կենտրոնացավ Արաքս կայարանի մոտ, այնտեղից Կարա-Բուրուն շարժվելու համար։ Նպատակը Թյուլքի-Թափա լեռան դիրքերից թուրքերին դուրս քշելն էր։ Օգնության պետք է գար շտաբս-կապիտան Սարգսյանցի գլխավորած հատուկ զորաջոկատը, որի մեջ մտնում էին 5-րդ հարվածային գնդի 6 վաշտ, Հատուկ հեծյալ գնդի 2 էսկադրոն, 2 գնդացիր, 2-րդ մարտկոցի 2 հրանոթ։ Ջոկատը պետք է դուրս մղեր թուրքերին և դրանով ապահովեր մնացած զորասյուների շարժումը դեպի Արաքս։ Շտաբս-կապիտան Սարգսյանցի զորաջոկատին հետևելու էին 5-րդ գնդի վեց վաշտ, ձախ թևով գնդապետ Պերեկրեստովի զորաջոկատը՝ պարտիզանական գնդի երկու գումարտակ, Հատուկ հեծյալ գնդի 2 էսկադրոն և 2-րդ մարտկոցի երկու հրանոթ։ Թուրքերը ժամը 16-ի մոտ արդեն գրավել էին Թյուլքի-Թափան՝ ունենալով երկու գումարտակ և 8 գնդացիր։ Արաքս կայարանը գրավված էր հակառակորդի մեկ գումարտակով։ Ջոկատի հրամանատարը ընդունում է նոր որոշում. գրոհել հակառակորդի վրա և դուրս գալ Ալեքսանդրապոլ երկու զորասյուներով։ Ջոկատի թիվ 5 հրամանով այդ պլանը պետք է իրականացներ գնդապետ Պավել Բեկ-Փիրումյանի զորասյունը՝ 5-րդ հարվածային գնդի 12 վաշտով, Հատուկ հեծյալ գնդի 45 և կամավորական խմբի 25 հեծյալներով, 2-րդ մարտկոցի 2 հրանոթով։ Զորագնդի առաջադրանքն էր. մայիսի 26-ի լուսաբացին հարձակվել Արաքս-Ներքին Թալին-Մաստարա-Ալեքսանդրապոլ ճանապարհով։

Գնդապետ Պերեկրեստովի ղեկավարած ձախ զորասյունը՝ պարտիզանական գնդի 2 գումարտակով, պարետային վաշտով, Հատուկ հեծյալ գնդի 2 էսկադրոնով և 2-րդ մարտկոցի 2 հրանոթով, պետք է առաջ շարժվեր Արաքս-Կարա-Բուրուն երկաթգծի երկայնքով։ Կողային ջոկատը՝ 5-րդ Հայկական գնդի երկու վաշտով, Հովսեփի հեծյալ հարյուրյակով, երկու գնդացրով Արաքս կայարանից պետք է առաջ շարժվեր Բագրևանի փլատակների շրջակայքը և Արփաչայի երկայնքով պաշտպաներ ամբողջ խմբի ձախ թևը։

Հայկական զորամասերը վեց վերստ ճակատով, դիրքեր գրավեցին թուրքերին զուգահեռ 800 քայլ հեռավորությամբ, ճակատով դեպի հյուսիս։ Պարտիզանական ջոկատի մի մասը անցավ երկաթգիծը և դիրքեր գրավեց 5-րդ գնդի ձախ թևում, ապա ճակատով դեպի հարավ՝ Արաքս կայարան։ 5-րդ գնդի 3-րդ և 4-րդ վաշտերի հարձակման ժամանակ սպանվեցին գումարտակի հրամանատար, շտաբս-կապիտան Ջաղինյանը, 17 զինվոր, երկու սպա։ «Հարձակումը դադարեց,— գրում է Ալեքսանդր Շնեուրը,— թուրքերը հասցնելով հարմար խրամատավորվել, ամուր պահում էին սարերը։ Սարդարապատի խումբը ընկավ կիսաօղակի մեջ, պահեստային ուժեր չկային, թուրքերը բարձրունքներում էին, մենք՝ ներքևում։ Նրանք էլ տարածված էին 8 վերստի վրա։ Ջոկատի հրամանատարը վճռեց մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը առանձնացնել նոր պահեստային ուժեր և խնդրել դիվիզիայի պետին՝ ստեղծել շարժունակ պահեստային ուժեր»։ Ստեղծվում է Ազնաուզի ջոկատը Կարապետ Հասանփաշյանի ղեկավարությամբ, որը և նետվում է հակառակորդի թիկունքը։ Սարդարապատ կայարանում ստեղծվեց ընդհանուր պահեստային ուժ՝ Իգդիրյան գնդի մեկ գումարտակով և 5-րդ մարտկոցի 2 հրանոթով։ Ձախ թևում ընդհանուր ռեզերվի մեջ մտան պարտիզանական գնդի 2 վաշտ։ Ազնաուզի ջոկատը Երզնկայի գնդով և Խնուսի գնդի 59 հեծյալով առաջ շարժվելով Կոշից և Ազնաուզից (Արագած) Շամիրամի ձորով ու լեռներով դուրս եկավ Արաքս կայարանի մատույցները, գրավեց Թյուլքի-Թափա լեռը և անցավ վճռական հարձակման ամբողջ ճակատով, ունենալով Սարդարապատի ջոկատի աջակցությունը։ Մայիսի 26-ի լույս 27-ի գիշերը այդ հատվածում Սարդարապատի ջոկատը ուներ երկու տեղամաս։ Աջ կողմից, գնդապետ Կազիմիրսկու հրամանատարությամբ գործում էին 3 ու կես գումարտակ, 4 գնդացիր, 2 հրանոթ, ձախ կողմից՝ գնդապետ Պերեկրեստովի մեկ ու կես գումարտակ, 2 հրանոթ, 16 գնդացիր։ Առավոտյան ժամը 6-ին հրետանային նախապատրաստությունից հետո երկու թևերով հայոց զորամասերը անցան հարձակման, նրանց միացան կապիտան Պանդուխտի 150 հեծյալները։ Ձախ թևում շրջապատված և աջ թևում ջարդված թուրքերը նահանջեցին Արաքս կայարանից։ Մայիսի 28-ին ժամը 22 անց 40 րոպեին Կարա-Բուրուն-Աշնակ գծով թեժ մարտերից հետո մեր զորքերի ճնշման տակ թուրքերը հետ քաշվեցին Ալագյազ կայարան-Քիրմաշլու-Վերին Աշղալու ուղղությամբ։ Առաջապահ զորամասերը գրավեցին Ալագյազ կայարանը։ Ջարգացնելով հարձակումը Ալագյազ-Արաքս կայարանների, Թալին-Մաստարա գծով, նրանք գրավեցին Ներքին ու Վերին Թալին, Կարա-Բուրուն, Մաստարա բնակավայրերը։ Առջևում Ալեքսանդրապոլն ու Կարսն էին։

Մայիսի 27-ի և 28-ի մարտերի մասին Սարդարապատի ջոկատի շտաբի պետ, շտաբս-կապիտան Ալեքսանդր Շնեուրը գրել է. «Մայիսի 27-ի առավոտյան թուրքերի թևը ուղարկվեց առաջին մարտկոցի 2 հրանոթ՝ Իգդիրյան գնդի 6-րդ վաշտի հրաձգային ջոկատի պաշտպանությամբ։ Այդ թնդանոթները գնում են դեպի հյուսիս՝ Թալինի ճանապարհով և դիրքեր են գրավում թիվ 440 բարձունքի դիմաց։ Պանդուխտի հեծյալները առաջ են շարժվում և մարտի բռնվում թուրքական հեծյալների հետ։ Ժամը 9-ին սկսվում է հրետանային նախապատրաստությունը. մեր հրետանին գործում է հիանալի։ Թուրքերի գնդացիրները ստիպված են փոխել իրենց տեղերը։ Ժամը 14-ին ստացվում է տեղեկություն, որ Երզնկայի գունդը շրջանցել է թուրքական թևը. նրանցից աջ, Մակուի

գումարտակը առաջ շարժվել չի կարողանում, կալկուտի շրջանում թուրքերը նրանց դիմավորել են կրակով։ Երզնկայի գնդի հրամանատարը հարձակումը ժամանակավորապես դադարեցնում է, մակվևահներին օգնության է ուղարկում 2 վաշտ, մնացած պահեստային ուժերը շարժվում են հարավ, մտնում թուրքերի թիկունքը։ Հայերի երկու թևերով հարձակման հետևանքով թուրքերը խուճապահար փախչում են դեպի Կարա-Բուրունի ճանապարհը, դեն նետելով հանդերձանքը։ Մեր հեծելազորը հետապնդում է նրանց։ Ձախ զորասյունը հետապնդելով թուրքերին, երկաթգծի երկայնքով գրավում է Արաքս կայարանը և Մաստարա կիսակայարանը։ Աջ զորասյունը, որի մեջ մտցվել էր Երզնկայի գունդը, երեկոյան մոտենում է Մաստարա գյուղին։ Պանդուխտի հեծյալները շարունակում են հետապնդել թշնամուն Կրիզլուի և Գյոզլուի վրայով, մայիսի 28-ին հասնում են Սողութլու։ Այստեղ Պանդուխտի ջանքերով կազմավորվում է 1000 հոգանոց պարտիզանական զորամաս։ Թուրքերը խուճապի մեջ են։ Նրանց գումարտակները անցնում են Արփաչայի արևմտյան ափը։ Թուրքական ջոկատների միջև կապը կտրվում է, չունեն սննդամթերք և ջուր։ Մայիսի 28-ին Սարդարապատի ջոկատի զորամասերը գրավեցին Կարա-Բուրունը, Ներքին և Վերին Թալինը»[51]։

Այդ մարտերի մասին գեներալ Սիլիկյանի հայտնում էր Հայոց Ազգային խորհուրդ՝ Թիֆլիս. «Նորայ համառ մարտերից հետո Սարդարապատի ուղղությամբ մայիսի 27-ին շրջանցված թևերից ու ջարդված՝ թուրքերը նահանջեցին, հետապնդվելով մեր զորքերի կողմից։ Հետապնդումը կատարվում էր Կարակալա կայարանի և Սողութլու գյուղի ուղղությամբ։ Թուրքերի կորուստները նշանակալի են։ Այդ նույն ժամանակ Բաշ-Ապարանի ուղղությամբ մեր առաջավոր դիրքերը մոտ երկու գնդով և հրետանիով ճնշած թշնամին երկօրյա համառ մարտերից հետո մայիսի 29-ին երեկոյան գլխովին ջախջախվեց և հետ շպրտվեց՝ մարտի դաշտում թողնելով 200-ից ավելի դիակ։ Մեր ձեռքում է 2 գընդացիր, ավելի քան 700 հրացան, շատ ռազմավար։ Մեր կորուստը այդ մարտերում աննշան է։ Զինվորների ոգին գերազանց է»[52]։ Այդ մարտում զոհվեց և քաջարի սպա Զեմլյակը։

Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Խզնաուզի ջոկատների հաջողությունները ոգեշնչեցին Ղարաքիլիսայում գտնվող հայկական զորամասերին, որոնց միացան հազարավոր աշխարհազորայիններ։ Մայիսի 26-ին Արամ Մանուկյանը հեռագրեց գեներալ Սիլիկյանին. «Ուրախ եմ հաղորդելու Ձեզ, որ Ձեզ վստահված բանակի հաղթանակը Սարդարապատում կենարար ազդեցություն ունեցավ մեր ժողովրդի վրա։ Ոտքի են ելել ոչ միայն Երևանի նահանգը, այլև Ղազախն ու Դիլիջանը։ Հենց նոր հաղորդեցին, որ ինչպես մեր զինվորականների, այնպես էլ ժողովրդի ու փախստականների տրամադրությունները անմիջապես փոխվեցին։ Բոլորը զենքը ձեռքին շտապում են Ղարաքիլիսա, այնտեղից առաջ։ Ջոկատները գնում են երկար ժամանակի համար վերցված իրենց պարեհնով։ Ոգևորությունը աննախադեպ է»[53]։

Դեպի Ղարաքիլիսա էին շտապում թուրքերը, որոնց համար նրա հանգուցային դիրքերն ունեին չափազանց կարևոր նշանակություն։ «Ղարաքիսիլան պետք է վերցվեր դեպի Աղստաֆա ճանապարհը բացելու համար»[54],— հայտարարել է Վեհիբ փաշան։ Իսկ Աղստաֆայից ճանապարհը դեպի Բաքու կլիներ ազատ։ Այդ նպատակով Ղարաքիլիսայի ճակատ էին նետվել թուրքական մեծաքանակ ուժեր՝ առաջին և երկրորդ կորպուսների երեք դիվիզիաներ՝ կարաբեքիրի հրամանատարությամբ։ Ղարաքիլիսայի տակ մարտի էր պատրաստվում և Հայկական կորպուսի հրամանատարությունը։ Ղարաքիլիսայում կենտրոնացած Առաջին հեծյալ և Կարսի գնդերից, կամավորական ջոկատներից, Դիլիջանից առաջինը Ղարաքիլիսա շարժված շտաբս-կապիտան Գուրգեն Տեր- Մովսիսյանի 4 հրանոթից բաղկացած մարտկոցից և այլ զորամասերից կազմակերպվեց հավաքական հեծյալ ջոկատ՝ գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի հրամանատարությամբ։ Ջոկատը, ընդամենը 2000 սրով, մտավ գնդապետ Բեյ-Մամիկոնյանի գլխավորած Ղարաքիլիսայի խմբավորման մեջ։ Խմբավորման կազմում էին Հայկական կորպուսի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ գնդերը, որոնք դեռ վաշտերի, գումարտակների չվերածված դուրս եկան ճակատամարտի՝ մարտերում կոփված թուրքական բանակի դեմ։ Գնդերը ղեկավարում էին գնդապետներ Հովսեփյանը, Գամազյանը, Սամարցյանը, Ալորյանը։

«Բոլորի համար պարզ էր, որ այլևս նահանջի տեղ չկա, անհրաժեշտ էր փնտրել ելք. հանկարծ հնչեց զանգի ձայնը, բոլորը նետվեցին դեպի փրկարար ձայնը՝ սպաները, զինվորները, իրենց սայլերը թողին գաղթականները և նետվեցին առաջ։ Բոլորի աչքերում փայլում էր հույսը։ Գտնվեցին ոգով արի մարդիկ, որոնք կոչ էին անում անմիջապես կազմակերպել գնդեր և նետվել թշնամու դեմ։ Գնդապետ Գամազովը խրոպոտած ձայնով, արցունքոտ աչքերով հավաքում էր ամբոխին, շտապ, կարծես հիպնոսով կազմավորվում էր վաշտեր, գումարտակներ։ Դա Հայաստանի պատմական օրն էր, որը գուցե և կարող էր տալ մեր ժողովրդին ապրելու իրավունք։ Կազմվեցին զորամասեր, որոնք կանանց աղոթքների ուղեկցությամբ շարժվեցին Ղարաքիլիսա»[55],— գրել է շտաբս-կապիտան Պետրոս Տեր-Պետրոսյանցը 1918 թ. հունիսի 12-ին։ Գնդապետ Ղորղանյանի ջոկատը մայիսի 24-ին առաջ շարժվեց և դիրքեր գրավեց Արջուտ-Սարալ-Ղուրսալ տեղամասում։ Շտաբը, որի պետն էր եղիազարյանը, կենտրոնացավ Դարպաս գյուղում։ Պորուչիկ Գարեգին Նժդեհը իր 40 հեծյալներով, լեռներում, մայիսի 25-ին հարձակվեց և կանգնեցրեց առաջ շարժվող մոտ 100 թուրքական հեծյալների։ Կանգնեցվեցին և հետևակի մեծ ուժեր։ Թեժ մարտերում թշնամին կորուստներ կրելով նահանջեց։ «Մայիսի 26-ին երկրորդ կորպուսի 11-րդ դիվիզիան չկարողացավ հաղթանակի հասնել և նահանջեց 4 կիլոմետր։ Նրա նահանջի ժամանակ, հատկապես Հաջի Ղարա գյուղի մոտ (Լեռնապատ), կանայք և գյուղացիները կացիններով զինված՝ կոտորում էին հետ քաշվող զինվորներին»[56],— գրում է Կարաբեքիրը։

Զորքի հետ ոտքի ելան մինչև Ղարաքիլիսա ճանապարհին խռնված շիրակցի, կարսեցի, արևմտահայ հազարավոր գաղթականներ, որոնք արդեն տեսել էին թուրքական արշավանքի սարսափները։ Մարտերում հատկապես աչքի ընկան շտաբս-կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանի հրետանավորները, որոնք թուրքերի դեմ կռվել էին դեռ Ղարաղուրղանի տակ։ Նրանք թուրքերին գնդակոծում էին բաց դիրքերից։ Թշնամու վրա կեսօրվա ընթացքում արձակվեց 2000 արկ։ Զինամթերքը սպառվելուց հետո հրետանավորները, զինված սրերով ու հրացաններով, անցան գրոհի, կանգնեցրին թշնամու առաջխաղացումը։ Մարտերում զոհվեցին քաջարի հրամանատար Գուրգեն Տեր-Մովսիսյանը և 25 զինվոր։

Գուրգեն Տեր-Մովսիսյանի քաջագործությունների մասին Հայ զինվորական խորհրդի գործադիր մարմնի հաղորդման մեջ ասված է. «Ուղիղ չորս տարի, որպես սպա, Գուրգենը մասնակցեց մի շարք կռիվների, արժանացավ սպայական բոլոր պարգևներին, վիրավորվեց երեք անգամ և նորից ջոկեց գործը։ Եթե մեր հուսախաբ, արնաքամ ժողովուրդը երբևիցե պետք է փրկվի, ապա այդ կարող է լինել արյան գնով, թանկագին զոհերով։ Մեծ գործը մեծ զոհեր է տանում և Գուրգենը գնաց այդ գիտակցությամբ։ Տառապանքն ու ցավը կռում ու կոփում է խիզախ ու հայրենասեր ոգիներին։ Սրանի բոլոր հայերը գիտակցեն Գուրգենի անցած ճամփի վսեմությունը»[57]։

Ակնառու էին գնդապետ Վլադիմիրսկու դիվիզիոնի հրետանավորների, երկու հեծյալ էսկադրոնների, էրզրումյան երկու վաշտերի զինվորների սխրանքն ու խիզախությունը, 5—7-րդ հավաքական մարտկոցի հրամանատար, շտաբս-կապիտան Վեքիլյանի մարտերը գերազանց վարելու ունակությունը։ Հետևակը, հրետանին, հեծելազորը մի քանի անգամ հետ մղեցին հակառակորդի գերազանց ուժերի հակագրոհները, մայիսի 27-ին Արջուտի և Սարալի շրջանում անցան հարձակման և նրան սեղմեցին Արագածի փեշերին։ Սակայն հակառակորդը ամեն գնով ձգտում էր զավթել Ղարաքիլիսան։ Մայիսի 27-ին, ժամը 15-ին թուրքական մեկ գունդ 600 ասկյարներով, ուժեղացված հրետանիով և հեծելազորով Բզովդալի (Բազում) կողմից շրջանցեց 3-րդ գնդի ձախ թևը։ Փոխգնդապետ Ալոբյանին օգնություն ուղարկվեց Ղորղանյանի վերջին պահեստային ուժը՝ երկու վաշտ։ Գունդը դիրքեր գրավեց Կամակատարի հյուսիս-արևելյան կողմում։

Թուրքական առաջին և երկրորդ կորպուսների երեք դիվիզիաների և նրանց միացած տեղական թուրքական գյուղերի բաշիբոզուկների խոշոր ուժերի դեմ դիրքեր էին գրավել Բզովդալի (Բազումի) մոտ երկու վաշտ՝ երկու թնդանոթով, Ղոնդախսազ գյուղի մոտ՝ հետախուզական ջոկատը, Ղշլաղ գյուղի արևմտյան կողմում՝ առաջին հավաքական գնդի մեկ գումարտակ, երկրորդ և չորրորդ գնդերի երկու վաշտ, սակրավորների վաշտը։ Մայիսի 28-ին Ղշլաղից հյուսիս դիրքեր գրավեց առաջին հրաձգային-հրետանային գնդի 4-րդ մարտկոցի միակ հրանոթը՝ ենթասպա Մելիք-Փարսադանյանի հրամանատարությամբ։ Գուրգեն Տեր-Մով-

սիսյանի հերոսաբար զոհվելուց հետո, մարտկոցի հրամանատարությունը ստանձնել էր շտաբս-կապիտան Պետրոս Տեր-Պետրոսյանցը։

Մայիսի 27-ի և 28-ի ռազմական գործողությունների կառավարման և իրավիճակի պատկերը երևում է Ղարաքիլիսայի ջոկատի հրամանատար գնդապետ Բեյ-Մամիկոնյանի և հատուկ ջոկատի հրամանատար գնդապետ Նիկոլայ Ղորղանյանի հեռախոսագրերից։

Գնդապետ Բեյ-Մամիկոնյանին. 1918 թ. մայիսի 27-ին, ժամը 3 անց 30 րոպե. Դարպասից։ Էրզրումի գնդի առաջխաղացումը շարունակվում է դանդաղ, ինչի որ հակառակորդը գնդակոծում է հարձակվողներին հրետանիով։ Եկեղեցու փլատակների մոտ թիվ 912 բարձունքը գրավված է մեր կողմից։ Ուղարկել եմ երկու էսկադրոն՝ բարձունքից հարավ հեռացող թշնամուն հետապնդելու և ձախ թևում նրան կանգնեցնելու համար։ Երկու վաշտ՝ երկու հրանոթով Բզովդալից դուրս եկան դեպի 965 բարձունք։ Հետախուզական էսկադրոնը առաջ է մղվել Գյաուգյաո։

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Ղորղանյանին. 1918 թ. մայիսի 27-ին, ժամը 15-ին. տեղեկացնում եմ, որ ինձ վստահված տեղամասը ժամը 14-ի մոտ անցավ հարձակման։ Հակառակորդը գնդակոծում է հրացանային, հրանոթային, գնդացրային ուժեղ կրակով։ 500—600-անոց զորամասը շրջանցում է տեղամասի աջ թևը, շարժվելով դեպի 1017 բարձունքը։ Մյուս զորաշարը՝ մոտ 700 ասկյար, իջնում է Իրխանիի ձմեռանոցը։ Հայտնաբերվել է երկու զորասյուն, յուրաքանչյուրը 800 մարդուց, որոնք ժամը 10-ին դուրս են եկել Համամլուից և շարժվել դեպի էֆենդի գյուղը։ Հիմա Վորոնցովկայից եկան երկու հայ ու ասացին, որ թուրերը 2000 հետևակով և 6 հրանոթով Գյուլագարակից խճուղով շարժվում են առաջ և այժմ Բզովդալի լեռնանցքում են։ Բնակչությունը անկազմակերպ փախչում է հարավ և հարավ-արևելք։ Սպասում եմ կարգադրության։

Փոխգնդապետ Ալոբյան

Էրզրումյան գնդի հրամանատարին. 1918 թ. մարտի 27-ին, ժ. 15 անց 50 րոպե. Դարպասից։ Հարձակումը առայժմ դադարեցրեք։ Իմացեք, ինչ է կատարվում Ձեր աջ թևում և 1110 բարձունքում։ Ինձ ուղարկեցեք ճիշտ տեղեկություններ։

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Բեյ-Մամիկոնյանին. 1918 թ. մայիսի 27-ին, ժամը 16-ին. Դարպաս։ Փոխգնդապետ Ալոբյանը ինձ հաղորդում է (բերվում է հաղորդումը)։ Այդ հաղորդումը բերած սպան ինձ անձամբ զեկուցեց, որ 1075 բարձունքի մոտ խճուղու վրա պայթել է մի հանի արկ։ Եթե Ալոբյանի այդ տեղեկությունները կիսով չափ ճիշտ են, վիճակը ուրախալի չէ։ Ես պահեստում ունեմ մեկ գումարտակ և մեկ էսկադրոն։

Առայժմ Էրզրումյան գնդին հրամայել եմ Արչուտի վրա հարձակումը դադարեցնել, գնդակոծում եմ միայն հրետանիով: Վերջին էսկադրոնը ուղարկել եմ Գյաոզյառ՝ վիճակը ճշտելու և զեկուցելու համար:

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ-Բեյ-Մամիկոնյանին. 1918 թ. մայիսի 27-ին, ժամը 16 անց 50 րոպեին. Դարպասից: Հակառակորդը 965 բարձունքից դուրս է գալիս մեր աջ թևը. ճշտորեն սահմանել՝ ուր է հասել հակառակորդը, չհաջողվեց: Սակայն ուղեկալը զեկուցում է, որ հետևակը Բզովդալի շրջանը գնդակոծում է հրացանային և գնդացրային կրակով: Հետ քաշվելու մասին հրաման չեմ տվել: Աջ թևին աջակցելու համար ուղարկել եմ մեկ վաշտ իմ պահեստային ուժերից:

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Բեյ-Մամիկոնյանին. 1918 թ. մայիսի 27-ին, ժամը 17-ին. Դարպասից: Էրզրումյան գնդի հրամանատար Այոբյանը անձամբ ինձ զեկուցեց, թե պարզել է, որ թուրքերը մեծ ուժերով շրջանցում են մեր աջ թևը Ահմեղ սղա յուրտի շրջանում: Իմ վերջին պահեստային ուժը՝ երկու վաշտ, ուղարկում եմ գրավելու Կամակատարի հյուսիսային բարձունքը: Փորձում ենք այս վերջին միջոցները:

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Բեյ-Մամիկոնյանին. մայիսի 27-ին, ժամը 18 անց 30 րոպեին. Դարպասից: Իմ աջ տեղամասը՝ Էրզրումյան գունդը, հակառակորդի ճնշման տակ հետ է քաշվում Դարպաս-Բզովդալ ճանապարհով: Ես հրամայեցի գրավել Կամակատարի հյուսիս- արևելյան բարձունքը: Այստեղ են ուղարկված իմ պահեստային ուժերը:

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Բեյ-Մամիկոնյանին. 1918 թ. մայիսի 28-ին, ժամը 9-ին. Դարպասից: Այս կարևոր պահին իմ և շտաբի միջև հեռախոսային կապի ծայրահեղ անհրաժեշտությունից ելնելով, խնդրում եմ Առաջին հեծյալ գնդի կապի պետ Ենթասպա Վերմիշևի վրա դնել 5 վերստ հեռախոսային գիծ անցկացնելու գործը: Պետական գույքը խնդրում եմ տրամադրել սույնը ներկայացնող սպայակին:

Գնդապետ Ղորղանյան

Գնդապետ Ղորղանյանին. 1918 թ. մայիսի 27-ին. վաղ առավոտից գեներալ Անդրանիկի ջոկատը Քոլագերանից Դաշքյասանի և Քյարամ-քափա լեռան վրայով շարժվում է ձեր աջ թևին հարվածող թուրքերի խմբին թիկունքից հարվածելու համար: Ընդունեք ի գիտություն ձեր գործողությունների կարգավորման համար և հայտնեցեք այդ մասին զորքին: Կայուն մնացեք, մինչև Անդրանիկի գալը:

Գնդապետ Բեյ-Մամիկոնյան[58]

Անդրանիկի օգնության հասնելու մասին այս հաղորդումը անմիջապես տարածվեց, որն առաջ բերեց ժողովրդի և զորքի ոգևորությունը։

Դարպասի և Ղշլաղի տակ բռնկված կատաղի մարտերում չհասնելով առավելության, թուրքական զորքերը հայկական զորքի ձախ թևում խոր շրջադարձ անելով, մայիսի 28-ին դուրս եկան Վարդանլու։ Հարձակվող թուրքական զորքերին միացան և Ղարաքիլիսայում գտնվող 3000 ռազմագերի ասկյարները։ Մայիսի 30-ին, երբ վերջացել էր հայ մարտիկների զինամթերքը, թուրքերը իջնելով Մայմեխ լեռան վրայով Թայիրովի ամառանոցի և Վոսկրեսենովկա գյուղի կողմից, մտան Ղարաքիլիսա։ Սկսվեց ռազմագերի զինվորների և սպաների, զինվորական հիվանդանոցում գտնվող վիրավորների, քաղաքի բնակչության զանգվածային խոշտանգումը և գնդակահարությունը, կանանց և աղջիկների բռնաբարությունը, բարբարոսություն, որը անհանգստացրեց նույնիսկ Ղարաքիլիսայում գտնվող գերմանական լեյտենանտի և զինվորների բողոքը։ Թուրք ասկյարները հարցը լուծեցին իրենց մեթոդներով, սպանեցին գերմանական երկու զինվոր, գերի վերցրին լեյտենանտին, «գերմանական կոմենդատուրա» ցուցանակը փոխարինեցին «թուրքականով»։ Վար իջեցվեց գերմանական դրոշը և բարձրացվեց թուրքականը[59]։

Թուրքական զորքերի հրամանատար Ջևեդ փաշայի թույլ տված եռօրյա նախճիրի հետևանքով միայն անտառում գնդակահարվածների թիվը հասավ մոտ 4000-ի[60]։

Չնայած ծանր կորուստներին, հայ զինվորների ու աշխարհազորայինների սխրանքը և հերոսությունը ակնհայտ էին։ Այս սխրանքի նշանակությունը արձանագրվեց գնդապետ Ղորղանյանի 1918 թ. մայիսի 29-ի հրամանում. «Ղարաքիլիսայի տակ չորսօրյա փառապանծ մարտերից հետո գեներալ Նազարբեկյանի ջոկատի մի մասը ճեղքեց թուրքական զորքի օղակը, դուրս եկավ Դսեղ-Սանահին շրջան: Ազգը պապայում կգնահատի ձեր ջանքերն ու սխրանքը, քաջարի մարտական ընկերներ: Այժմ մեր խնդիրն է միանալ Դիլիջան մտած զորամասերին: Գեներալ Անդրանիկի ջոկատն այսօր շարժվում է Դիլիջան»:

Սակայն Անդրանիկին չհաջողվեց օգնության հասնել Ղարաքիլիսայի պաշտպաններին։ «Թե ինչու» հարցին պատասխան տալիս է նաև Հովհաննես Թումանյանի ռեպլիկը, տպագրված «Մշակ» թերթի 1918 թ. օգոստոսի 9-ի համարում. «Ղարաքիլիսայի անկման օրից սկսած՝ անդադար մարդիկ են պատահում, որոնք դատապարտում են Անդրանիկին, որ Ղարաքիլիսայի ժամանակ նա՝ բոլոր ուժերով, մնաց էնքան մոտիկ Դսեղ նստած, մինչդեռ եթե օգնության հասներ Դիլիջից, պատերազմը բոլորովին ուրիշ ելք կունենար։ Այո, միանգամայն ճշմարիտ են ասում, որ եթե Անդրանիկը էստու կողմից՝ Դիլիջից օգնության հասներ, պատերազմը, անկասկած ուրիշ ելք կունենար։ Սակայն բոլոր խոսողները մի բան չգիտեն, որ հենց էդպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին՝ մնալ Դսեղ և պաշտպանել Երկաթուղու գիծը։ Մինչև էս

հրամանը փոխվեց՝ արդեն 3-րդ օրն էր և գրեթե միաժամանակ, եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը»։

Ղարաքիլիսայի անկումից անմիջապես հետո Ն. Ղորղանյանը զեկուցում էր հրամանատարությանը. «Մայիսի 23-ին ջոկատի հրամանատարությունն ընդունելուց հետո, ես մայիսի 25-ին ունեցա թշնամու հետ հանդիպական հաջող մարտ։ Մայիսի 26-ին ինձ վստահված ջոկատը Թուրքերին դեն շպրտեց և նրանց ստիպեց թողնել հրամանատարական բարձրունքները։ Մայիսի 27—28-ին ջոկատը, չնայած թուրքերի շրջանցմանը, պահում էր իր դիրքերը։ Եթե և տեղի ունեցավ աղետ, ապա ոչ իմ մեղքով։ Իմանալով, որ Վարդանլու տանող ճանապարհը գրավված է, ես ձեռք առա բոլոր միջոցները, որպեսզի իմ ջոկատը դուրս հանեմ օղակից, և ջոկատը հանելով Ղարաքիլիսայից, չունենալով փամփուշտ, սննդամթերք, ռազմամթերք, գերությունից խուսափելու համար արձակեցի այն, թողնելով գյուղերում, և սպաներով բարձրացանք լեռները»[61]։

Ղարաքիլիսայի կռիվների մասին Կովկասյան ճակատի թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան Բաթումում հայկական պատվիրակության հետ ունեցած հանդիպման ժամանակ, 1918 թ. մայիսի 31-ին, ասել է. «Ղարաքիլիսայում հայերի ցուցաբերած հերոսությունը իրենց հայրենիքի պաշտպանության համար արժանանում է մեր հարգանքին։ Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմի պատմության մեջ... Հայերը Ղարաքիլիսայի տակ մարտով ցույց տվեցին, որ իրենք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները»[62]։

Ըստ Վեհիբ փաշայի՝ Բաթումում հայկական պատվիրակների հետ ունեցած զրույցի ժամանակ արած հայտարարության, Ղարաքիլիսայի տակ հայերը հերոսաբար են կռվել հարձակվող 10-հազարանոց բանակի դեմ։ Ունենալով ընդամենը 7 հազար զինվոր, հայերը թուրքերին պատճառել են մեծ վնասներ։ Հայերը կորցրել են 1500 սպանված և վիրավոր, թուրքերի կորուստները եղել են ավելի շատ։ Հայերը վերցրել են 1000-ից ավելի գերի, մեծ թվով ռազմավար։ Հայերի մեկ երրորդը հետ է քաշվել Սանահին, երկու երրորդը՝ Դիլիջան[63]։ Այս թվերը Բաթումից ստացված հաղորդագրության համաձայն, հունիսի 4-ին հրապարակել է «Կավկազսկոյե սլովո» թերթը։ Թերթը գրում էր. «Այժմ Բաթումից, թուրքական աղբյուրներից հաղորդում է ստացվել, որ Ղարաքիլիսայի մոտ հայկական զորամասերի և թուրքերի միջև տեղի է ունեցել արյունահեղ ճակատամարտ, որը տևել է չորս օր»[64]:

Վեհիբ փաշայի մեկ վկայություն ևս. Ղարաքիլիսայի տակ հապշտապ հավաքված 7000 հայերը, որոնք դեռևս չէին հասցրել դասավորվել որպես գումարտակներ և գնդեր, ունենալով 10 հրանոթ և 20 գնդացիր, կատաղի մարտ մղեցին թուրքերի դեմ, որոնք ունեին 10 հազար ընտիր զորք, 70 հրանոթ և 40 գնդացիր։ «Առաջին երկու օրը հայերը հետ էին մղում թուրքերի բոլոր գրոհումները, իրենք էին անցնում հակահարձակման, և միայն փամփուշտների և արկերի վերջանալը ստիպեցին վերջ

տալ դիմադրությունը և նահանջել»։ Վեհիբ փաշան հայ պատվիրակներին ասել է. «Ձեր գյուղացիները նույնպես այնպես ազնիվ են, դաժան և քաջ զինվորներ, ինչպես և բուլղարները»[65]։

Հայ զինվորների և աշխարհազորայինների մեկշաբաթյա մարտական գործողությունները իրենց վրա գրավեցին Կովկասյան ճակատում թուրքական բանակի գլխավոր ուժերը և կազմալուծելով, կաշկանդելով, մեծ վնասներ հասցնելով նրանց, փաստորեն արգելակեցին Արևելյան Հայաստանի նվաճումը, կանգնեցրին զավթիչների դեպի Բաքու առաջխաղացումը։ Հայկական զորքերի կողմից թուրքերի ջախջախման և նրանց խուճապահար փախուստի մասին գրեց և «Բակինսկի ռաբոչի» թերթը, «Հայերի խոշոր հաղթանակը» հոդվածում։

Բաքվի Կոմունայի ռազմածովային ժողկոմ Գրիգորի Կորգանովի հրամանում ասված է. «Հայաստանի լեռնալանջերին և դաշտավայրերում մեր եղբայրները մղում են հերոսական մարտեր թուրքական զավթիչների դեմ։ Հրամայում եմ թշնամու դեմ ծավալել վճռական մարտեր և ցույց տալ օգնություն հայկական ազգային ազատագրական միավորումներին՝ Արարատյան դաշտավայր մտած թուրքական հորդաների դեմ պայքարում»[66]։

Բաքվի Կոմունայի 10-հազարանոց բանակը շարժվելով Հաջի-Կաբուլ կայարանից և մարտերով հասնելով Քյուրդամիր կայարանը, առաջ շարժվեց դեպի Եվլախ և Ելիզավետպոլ։ Այս հարձակումը դիտելով որպես հայերի հարձակում, թուրքական 5-րդ դիվիզիայի հրամանատար Ռյուշտյու բեյը գրել է. «Զավթելով Բաքուն, հայ բոլշևիկների զորքերը շարունակել են առաջխաղացումը մինչև Շամախի և Քյուրդամիր բնակատեղը։ Նրանց ագրեսիայից չկարողացան փրկվել նաև Լենքորան, Սալյան և Ղուբա քաղաքները»[67]։ Սակայն հայկական զորամասերի հարձակումը չզարգացավ։ Նրանք ուղարկվեցին Հյուսիսային Կովկաս՝ Ջեչնիա։

Մայիսի 29-ին, հայկական զորքի և աշխարհազորայինների բարձր մարտական ոգու պայմաններում, հրապարակվեց գեներալ Սիլիկյանի նոր հրամանը ուղղված հայերին՝ Ալեքսանդրապոլի ազատագրմանը մասնակցելու կոչով։ Հրամանում ասված էր. «Հայեր. մենք պետք է հետ վերցնենք Ալեքսանդրապոլը, որը այդպես խայտառակորեն գրավել են թուրքերը։ Անկուշտ ախորժակ ունեցող թուրքերը պահանջում են, որպեսզի մենք իրենց տանք Ախալցխայի, Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի (վանքերով) գավառները ամբողջությամբ, Երևանի և Նախիջևանի գավառների մի մասը։

Մի՞թե մենք կգնանք այդպիսի ստորացման։ Մի՞թե հանգիստ և թեթև սրտով թշնամուն կհանձնենք մեր հարազատ հողերը։

Ոչ, երբեք։ Այդ ստորությունը չի լինի, եթե մենք շարժվենք դեպի Ալեքսանդրապոլ, այն վերցնենք երեք-չորս օրում։

Եվ այդպես, չհապաղել, հայեր։ Բոլորն ի զեն՝ դեպի Ալեքսանդրապոլ»[68]։

Սակայն Ալեքսանդրապոլի, ապա Կարսի վրա հայկական զորքերի նախատեսվող գրոհը կասեցվեց, ոչ առանց թուրքական խարդավանքի։ Բաթումում բանակցությունները սառցան նոր ընթացք։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Սարդարապատը, Բաշ-Ապարանը, Ղարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, իր անկախության համար մինչև վերջ միահամուռ ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության վկաներ եղան։ Հայ ժողովրդի Մայիսյան այդ հերոսամարտերը վիժեցրին Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և այնտեղի հայերին ևս ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը։ Հայերի հերոսական ոգին, համաժողովրդական սխրանքը, Հայրենիքի պաշտպանության միասնական կամքը ստիպեցին թուրքերին հաշվի նստել իրենց հետ։ Հաղթանակը հայոց պետականության վերականգնման, Հայաստանի Հանրապետության ստեղծման նախադրյալներ ընձեռեց։ Այդ հաղթանակը զգացվեց և Բաթումում՝ արդեն մայիսի 27-ին թուրքական պատվիրակության ղեկավարների և հայ պատվիրակների հանդիպման ժամանակ։ «Բարեկամական զրույցի» ընթացքում Հալիլ և Վեհիբ փաշաներն արդեն խոսում էին զուսպ, հայտարարում էին, թե «թուրքերի մեջ էլ կան հայերի բարեկամներ, որոնք կարող են նպաստել նրանց գործին»։ Վեհիբը խնդրում էր իրեն հավատալ, որ «իր բանակը չի թույլատրի անկարգություն հայերի նկատմամբ։ Այդ կապակցությամբ նա արել է շատ խիստ կարգադրություն։ Քաղաքականության հարցերը իրեն չեն վերաբերում, սակայն բանակի վայելուչ վերաբերմունքը նա համարում է անձնական պատվի հարց և պատասխանատու է իր զինվորների համար»։ Նա հավաստեց, որ Երևանի նահանգի սահմաններում թուրքական զորքի առաջխաղացումը նպատակ ունի գրավել ռազմավարական կետերը, Պարսկաստան ուղարկվող զորքի անվտանգությունը ապահովելու համար։ «Ղարաքիլիսան այսօր պետք է վերցնենք։ Այդ ուղղությամբ թուրքերը այլևս առաջ չեն շարժվի։ Առաջապահ զորամասերը գտնվում են Ջալալօղլում, երևանյան գծում նրա զորքերը հասել են մինչև Սարդարապատ կայարան, դեռևս վագոններ չեն նստել, քանի որ թիկունքում վիճակը ապահովված չէ»։ Ավարտելով հաղորդումը, Վեհիբը առաջ քաշեց Անդրկովկասյան դաշնակցային հանրապետության փլուզումից հետո թուրքական վերջնագրի կատարման անհրաժեշտությունը, Թուրքիայի և Հայաստանի միջև ռազմական կոնվենցիայի կնքման հարցը։ Արծարծվեց նաև հայկական պետության կազմավորման հարցը։ «Անդրկովկասի սահմաններում՝ Թուրքիայի գրավումից դուրս մնացած մարզերում հայկական առանձին պետության կազմավորման հարցում Թուրքիան ոչինչ դեմ չունի, անդրկովկասյան թաթարներին ևս անձամբ խորհուրդ եմ տվել քիչ սեղմվել, հայերին զիջելով տարածքի մի մասը, որպեսզի

նրանք կարողանան կազմավորել իրենց պետությունը։ Թուրքիան կապրի բարեկամությամբ և խաղաղությամբ Հայաստանի հետ, եթե այդպիսին կազմավորվի»,— հայտարարել է Հալիլը։ Նա ավելացրել է. «Ազգային խորհրդին ինքը չի դիմել և չի էլ կարող դիմել, քանի որ այդպիսի մարմին ինքը չի ճանաչում»[69]։

Փաստերը և հետագա իրադարձությունները վկայում են, որ Վեհիբի և Հալիլի շողոքորթ լեզվին պետք չէր հավատալ, կարծել, թե Թուրքիան դրանով հրամարվում է հայաջինջ քաղաքականությունից։ Հայկական հարցում Հալիլ բեյի բնորոշմամբ, «Օսմանյան կայսրության պատմության դարձակետի» պատճառը ոչ թե նրանց հայասիրությունն էր, այլ Հայոց Մայիսյան հերոսամարտերը, դեպի Բաքու շարժվելու համար ժամանակ շահելը։ Թուրքական հրամանատարները չէին թաքցրել, որ այդ մարտերը «ներշնչել են հարգանք հայերի նկատմամբ»[70]։

Նման հայտարարության համար թուրքերն ունեին և մեկ պատճառ. դա Թուրքահայաստանի ինքնավարության ճանապարհի փակումն էր։ Դեռևս 1918 թ. մարտի 2-ին թուրքական կառավարողներին գերմանական դիվանագիտությունը զգուշացնում էր, որ արևմտյան պետությունների հետ հաշտություն կնքելիս նրանք, անտարակույս, քննության կդարձնեն Արևելյան Անատոլիայի հայկական նահանգներին ինքնավարություն տալու հարցը։ Թուրքերի դրությունը կլիներ ավելի նպաստավոր, եթե նախքան հաշտության վեհաժողովը Օսմանյան կայսրությունը տար շոշափելի ապացույցներ, թե ինքը վճռել է այդ նահանգների քրիստոնյա, ինչպես և իսլամ ազգաբնակչության հետ «միեղմ և արդար վարմունք հաստատել», «պետության ներսից աքսորված հայերի վերադարձը նկատի ունենալ»։ Բարոն Բուշեն արձանագրում էր, որ նվաճված շրջանների վերագրավումը անսպասելի կերպով արագ է կատարվում։ Էրզրումը գրավելուց հետո կգա ժամանակը հայտարարել նաև զինված հայերին, որպեսզի հպատակվեն, և այդ դեպքում Թուրքիան պետք է ապահովի նրանց անվնաս մնալն ու ազատորեն իրենց բնակավայրերը վերադառնալը։ «Դրանով սկիզբ կդրվի այն բանին, որ այնտեղի հայերը, որոնք այս նահանգների ազգաբնակչության տարրն են կազմում, վերստին Թուրքիայի խաղաղ հպատակներ դառնան»,— գրում էր Բուշեն։ Դեսպանին առաջարկվում էր թույլտվություն ստանալ Գերմանիայի արտաքին գործերի նախարարության համար՝ ներկայացուցիչներ Թուրքիա ուղարկելու, «տեղում խեղճերին» օգնելու համար՝ առանց կրոնական խտրության։ Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատարը խնդրում էր Բերնսդորֆին մեծ վեզիրի, արտաքին գործերի և ռազմական գործերի նախարարների հետ զրույցի ժամանակ «զարգացնել այդ գաղափարը և հաղորդել Բեռլին իր ստացած տպավորությունների մասին»[71]։

Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու «վտանգը» կարող էր վերացվել Կովկասում ստեղծվող Հայաստանի Հանրապետության առկայությամբ, որը թուրքերին հնարավորություն կտար հայտարարել,

թե Հայկական հարցը լուծված է, իրենց՝ Թուրքերի շնորհիվ, լուծված է վերջնականորեն։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այդտեղ այլևս հայ չկա, ինչպես հայտարարում էին համաթրքության գաղափարախոսները, այդտեղ կան «հայադավան օսմանցիներ, և ով այդ վիճակից դժգոհ է, թող գնա իր հանրապետության «լեռներում քաղաքականությամբ զբաղվի»[72]։

Բաթումի բանակցությունների օրերին, հատկապես Լոսովի Բեռլին ժամանելուց հետո, Գերմանիայի քաղաքականության մեջ դրսևորվեցին նոր երևույթներ, որ արտահայտվեցին Կոստանդնուպոլիս և Վիեննա գերմանական դեսպաններին արտաքին գործերի նախարարության մայիսի 28-ին հղած հրահանգներում։ Դրանք պարունակում էին «Գերմանական կառավարության խորհուրդը Թուրքական կառավարությանը՝ չհեռանալ Բրեստ-Լիտովսկի պայմանների սկզբունքներից»։ Հստակ երևում է, որ Գերմանիայի կառավարող շրջանները Բաթումի բանակցությունների արդյունքներից համոզվել էին Թուրքական նկրտումների մեջ՝ ոչ միայն անցնել Բրեստի պայմանագրով ընդունված սահմանները, այլև տիրել ամբողջ Անդրկովկասին՝ իբրև պատերազմական ավար, անցնել Դաղստան։

Հրահանգում պարզաբանվում էր՝ Թուրքական կառավարության վերաբերմունքի պատճառով Բաթումի հաշտության բանակցությունները ձախողվեցին, դրա հետևանքով փլուզվեց Անդրկովկասյան դաշնությունը, Վրաստանը իրեն հայտարարել է ինքնուրույն պետություն։ Հակառակ Բրեստի պայմանագրի դրույթների, որոնց համաձայն Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանները Ռուսաստանից վերցվեցին և բնակչության հայեցողությանը թողնվեց նորովի՝ պետական-իրավական, նաև միջազգային իրավական սկզբունքների հիման վրա կարգավորել իր հարաբերությունները հարևան պետությունների, հատկապես Թուրքիայի հետ, Թուրքիան իրեն իրավասու համարեց այդ շրջանները զինագրավել։ Թուրքերը, սակայն, իրենց սահմանում չկանգնեցին, այլ շարունակեցին առաջխաղացումը. նրանք Բաթումի բանակցություններում առաջ էին քաշում ավելի հեռուն գնացող տարածքային պահանջներ։ Բացի Արդահանից, Բաթումից և Կարսից, նրանք պահանջում են Ախալցխան ու Ախալքալաքը, Երևանի նահանգում՝ Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգիծը, ներառյալ և նրանից արևելք ընկած հատվածը՝ շուրջ 25 կմ լայնությամբ, Բաթումից հյուսիս ընկած հատվածը՝ մինչև Կորուլեքի։

Թուրքական կառավարությանը գերմանական կառավարությունը խորհուրդ էր տալիս չհեռանալ Բրեստի պայմանագրի հիմնադրույթներից, չպահել Բաթում քաղաքը, այն հանձնել վրացիներին, քանզի, հակառակ դեպքում «դժվար կլինի Թուրքերի և վրացիների միջև տևական խաղաղ հարաբերություններ հաստատել։ Թուրքերը չափը կորցրին, Բլիզավետպոլում և այլ քաղաքներում Թուրքական դրոշ բարձրացրին և մտադիր են անհրսիայի ենթարկել ողջ Բլիզավետպոլի գավառն ու Բաքուն, գնում են Բաքվի վրա՝ բոլշևիկներին քշելու և այնտեղ հաստատ-

վելու համար։ Թուրքական զորքերը Ախալքալաքից հարավ ռազմաճակատում են և գնում են Թիֆլիսի ու Երևանի վրա։ Նրանց ուղեկցող քրդական ու թաթարական ջոկատները թալանում և սպանում են հայ բնակչությանը, գերի տանում բոլոր տղամարդկանց։ Հայ բնակչությունը փախչում է դեպի արևելք, որտեղ շուտով կբախվի թաթարներին»։

Ակնհայտ էր, որ գերմանական իշխանությունները դրանով հետապնդում էին երկու նպատակ. նախ, խուսափել համաշխարհային հասարակական կարծիքի մեղադրանքից, ապա, կանգնեցնելով Թուրքիայի առաջխաղացումը Կովկասում, ազատված ռազմական ուժերը օգտագործել Միջագետքում և Պաղեստինում։ «Դաշնակից պետությունները չեն կարող պատասխան տալ ոչ իրենց սեփական ժողովուրդների, ոչ էլ աշխարհի առաջ, եթե ընդունեն, որ իրենց օգնությամբ իրականացված Բրեստի պայմանագրի հիմնադրույթը օգտագործվում է որպես Կովկասում քրիստոնյաներին հետապնդելու արտոնագիր»,— ասված էր փաստաթղթում[73]։

Մայիսի 29-ին մի նոր գրությամբ, Վիեննայում գերմանական դեսպանին հանձնվեցին այն հրահանգները, որոնք տրվել էին Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանին։ Առաջարկվում էր «բարեկամաբար, բայց և վճռաբար բանավոր» հաղորդել Թուրքական կառավարությանը.

1. Կայզերական կառավարությունը կովկասյան բոլոր իրադարձությունների դեմ-հանդիման իրեն գործողությունների ազատություն է վերապահում։ Նա մնում է իր տեսակետին Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի նկատմամբ՝ Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից դուրս կիրառվող քաղաքականության հարցում։

2. Կայզերական կառավարությունը չի կարող հավանություն տալ կամ աջակցել Թուրքական զորքերի հետագա առաջխաղացմանը Կովկասում, նշված երեք շրջաններից դուրս Թուրքական քարոզչություն տանելուն։

3. Կայզերական կառավարությունը ճանաչում է վրացական կառավարությանը դե ֆակտո և պատրաստակամություն է հայտնում աշխատել ստանալ ռուսական խորհրդային կառավարության համաձայնությունը՝ սկզբունքորեն ճանաչելու Վրաստանի անկախությունը։ Գերմանիայի կառավարությունը նիայի կառավարությունը կոչ է անում Թուրքական կառավարությանը նմանապես վարվել և ճանաչել Վրաստանի սահմանները, որոնք կճշտվեն Վրաստանի մասնակցությամբ։

4. Կայզերական կառավարությունը խնդրում է օսմանյան կառավարությանը ապահովել պատշաճ վերաբերմունք հայերի նկատմամբ՝ Թուրքերի կողմից գրավված տարածքում, իրեն վերապահելով մանրամասն առաջարկություն անելու իրավունք։

5. Կայզերական կառավարությունը օսմանյան կառավարության ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ Թուրքիայի և Գերմանիայի միջև գոյություն ունեցող քաղաքական դաշնագրի ուժով Թուր-

քիան ոչ մի պահանջ չի կարող դնել՝ պայմանավորելու այնպիսի ռազմական կամ դիվանագիտական գործողություններ, որոնք նա ձեռնարկում է առանց Գերմանիայի համաձայնության և խորհրդակցության՝ մինչև իսկ հակառակ։

Գերմանիան մեղադրում է ամեն մի պատասխանատվություն Թուրքիայի սեփական նախաձեռնությամբ ուժով ձեռնարկված գործողությունների համար, հետևանքները «պատիվով թողնելով Թուրքերին»։

Տեղյակ էր պահվում ֆոն Քյուլմանի խնդրանքի մասին բարոն Բուրիանին՝ հնարավորին չափ արագ ցուցումներ տալ Կոստանդնուպոլսում ավստրո-հունգարական դեսպան Պալավիչինիին, անել նույն հայտարարությունը, ինչ որ Գերմանիայի դեսպան Բերնսդորֆը, «որպեսզի Թուրքական կառավարությունը կանգնի երկու դաշնակից մեծ տերությունների միասնական գործողությունների առաջ և չփորձի մեկին մյուսի դեմ խաղացնել»[74]։ Քյուլմանի առաջարկությունը ստացավ Ավստրո-Հունգրիայի արտաքին գործերի նախարար բարոն Բուրիանի հավանությունը։ Բևռլինում ավստրո-հունգարական դեսպան Հոհենլոեն մայիսի 29-ին հայտնում էր Վիեննա՝ ֆոն Քյուլմանի «շնորհակալ գոհունակությամբ ողջույնի մասին», այն բանի համար, որ նա «համաձայնություն է տվել հնարավորին չափ պաշտպանել գերմանական քաղաքականությունը Կոստանդնուպոլսում» և խնդրել է դեսպան կոմս Վեդելին «միանալ Բարձր դռան դեմ ուղղված գերմանական գործակալությանը»[75]։

Մյուս կողմից, Հոհենլոեն տեղեկացնում էր նաև գերմանական մեկ այլ քայլի մասին. «Ինչպես ես կարողացա տեղեկանալ արտաքին գործերի նախարարությունում, գերմանական զորահրամանատարությունը նախապես և փաստորեն հավանություն է տվել Թուրքիայի առաջխաղացմանը դեպի Ջուլֆա՝ Ալեքսանդրիայից Մոսուլ Թուրքական զորքերի տեղափոխումը հեշտացնելու, դրանով իսկ անգլիական զինված ուժերի պայքարը դժվարացնելու հույսով։

Պարոն ֆոն Քյուլմանի հաղորդումներից ես եզրակացնում եմ, որ ֆոն Լոսովի զեկուցումները Թուրքիայի համար աննպաստ են հնչում և խոսում են Թուրքերի չափը կորցրած և անիրականալի ցանկությունների մասին»[76]։

Թուրքերի առաջխաղացման վերաբերյալ գերմանական սանկցիայի մասին մայիսի 30-ին Վիեննա հայտնում էր և Պալավիչինին։ Մեծ վեզիրը ինձ ասաց, որ «Բերնսդորֆը իր կողմից կտրուկ հայտարարել է, թե համաձայն է անդրկովկասյան կառավարությանը ներկայացրած վերջնագրին, և որ գերմանական բանակի գլխավոր հրամանատարությունը հայտարարել է իր համաձայնությունը «սահմանի վերանայման կապակցությամբ», ըստ որի, մարզի մի հատվածը՝ մինչև Ջուլֆա, Թուրքիային է տրվում»։ Թալեաթն ու Ենվերը ասել են, որ Թուրքական բանակի առաջխաղացումը նույնպես տեղի է ունեցել գերմանական բանակի հրամանատարության «համաձայնությամբ և նույնիսկ հրահանգով»[77]։

Ավստրո-Հունգարական կայսրության արևելյան քաղաքականության մեջ Գերմանիայի հետ նոր գործելակերպի դրդապատճառները երևում են նաև արտաքին գործերի նախարարության և Բևռլինում ու Կոնստանդնուպոլսում կայսրության դեսպանների միջև բանակցությունների ժամանակամիջոցի գրագրություններից։

1918 թ. ապրիլի 30, Բեռա, Պալավիչինիից՝ Բուրիանին.

Հալիլ բեյն առավոտյան, մինչև Բաքում գնալը, այցելեց ինձ։ Նա ասաց, որ այնտեղ պետք է բանակցություններ վարի անդրկովկասյան հանրապետությունների կառավարությունների հետ բարեկամության մասին պայմանագրի շուրջ։ Ճիշտ է, Թուրքիայի կառավարությունը դեռ չի ճանաչել Չխենկելու գլխավորած կառավարությունը, ինչպես նա, այնպես էլ նեսիմի բեյը, որը նույնպես այցելել է ինձ, տեղեկացան ինձանից, թե ինչպես է մոտենում կայզերական և արքայական կառավարությունը այդ հարցին։ Բաքում է գնում նաև գեներալ Լոսովը[78]։

1918 թ. մայիսի 2, Բուխարեստ, Բուրիանը՝ Պալավիչինիին.

Ձերդ պայծառափայլությունը կարող է թուրքական պետական գործիչներին ասել, եթե նրանք անդրադառնան այդ հարցին. մենք մեծ հաճույքով կճանաչենք անդրկովկասյան հանրապետությունները, սակայն, այն կարծիքին ենք, որ դրա համար անհրաժեշտ է ունենալ անդրկովկասյան կառավարությունների խնդրանքը՝ քննարկման համար։ Դեսպանին՝ զուտ անձնական տեղեկության համար. մեր վերոհիշյալ այդ մոտեցումը առաջնորդվում է այն ըմբռնումով, որ մեր շահերին չէր համապատասխանի այն հանգամանքը, որ նոր հանրապետությունն իր վիճակի համար պարտական լիներ բացառապես Թուրքիային[79]։

1918 թ. մայիսի 2, Բեռա, Պալավիչինիից.

Գերմանական դեսպանն ինձ ասաց, որ գեներալ Լոսովին Բաքում են ուղարկել գլխավորապես նրա համար, որպեսզի վերահսկի թուրքերին և նրանց հետ պահի չմտածված հնարավոր քայլերից։ Իմ գերմանական գործընկերն այն կարծիքին է, որ Թուրքիան կցանկանար Բաքում-Բաքու գծի շրջանը։

1918 թ. մայիսի 21, Բեռլին, արքայազն Հոհենլոեից.

Պետական քարտուղարն ինձ ասաց, որ հանձնարարել է կոմս Բերնսդորֆին, հաշվի առնելով Կովկասում թուրքերի մեծ ակնկալությունները, հնարավորին չափ ազդել նրանց վրա։ Գերմանական կողմի ցանկությունն է, որպեսզի թուրքական արշավանքը սկսվի դադարից ոչ շուտ, մինչ այդ սկսվեն անհրաժեշտ նախնական բանակցություններ Վրաստանի հետ, հարցերը կարգավորվեն մանրակրկիտ հրահանգավորումով՝ Կոստանդնուպոլսում, որտեղ գերմանական քաղաքականությունը կաշխատի թեթևակի ազդել Բարձր դռան վրա։ Ինչպես ինձ հայտնեցին, ֆոն Կրեսը ուղարկվել է Թիֆլիս, որպես արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ։

1918 թ. մայիսի 27, Բեռա, Պալավիչինիից.

Մեծ վեզիրը ինձ այսօր ասաց, որ կարծում է, թե Բաթումում բանակցությունները կավարտվեն լավ արդյունքներով։ Մյուս կողմից ինձ հասել են տեղեկություններ, որ գեներալ Լոսովը ուզում է թողնել Բաթումը, սակայն գլխավոր հրամանատարից ստացել է հրաման՝ առայժմ մնալ Բաթումում[80]։

1918 թ. մայիսի 28, Բեռա, Պալավիչինիից.

Անդրկովկասյան հանրապետությունների հետ բանակցությունները քևակոխել են բարեհաջող փուլ։ Արտաքին գործերի նախարարը այդ կապակցությամբ ասաց. «Վրացիների հետ փոխհարաբերություններն արդեն լրիվ հաջող են, սակայն թուրքերը, բացի երեք գավառներից, ահմանային կարգավորման պատրվակով պահանջում են Կարս-Ջուլֆա երկաթգծի շրջանի տարածքը»։ Նեսիմի բեյը հաստատում է, որ վրացիները դրան համաձայն են, սակայն հայերը դիմադրում են. Հալիլ բեյը հղել է վերջնագիր Անդրկովկասյան պատվիրակներին՝ 12-ժամյա ժամկետով, սակայն երկարաձգել է մինչև 72 ժամ[81]։

1918 թ. մայիսի 28, Վիեննա, մարկգրաֆ Պալավիչինիին.

Ինչպես մեզ հայտնել է բեռլինյան կաբինետը, բանակցությունները Բաթումում խզվեցին թուրքական կառավարության վարքագծի հետևանքով։ Այսպիսով, չնայած բոլոր նախազգուշացումներին, թուրքերը ընդլայնեցին Բաթումի, Կարսի, Արդահանի շրջանակները։ Նրանք գրավում են նոր մարզ, անմիջապես անդրկովկասցիներին ներկայացնում են հետուն գնացող պահանջներ[82]։

1918 թ. մայիսի 29, Բեռա, Պալավիչինիից.

Իմ գերմանական գործընկերն ինձ ասաց, որ գեներալ Ֆոն Լոսովը գտնվում է ճանապարհին՝ Կոստանդնուպոլիս կամ Բեռլին։ Նրա հետ ճանապարհորդում են Ջեննկելին և երկու հայեր։ Գերմանական դեսպանի հետագա ասածից ես հասկանում եմ, որ Լոսովը Բաթումում խիստ ընդհարվել է Հալիլ բեյի հետ, քանի որ Լոսովը կովկասցիների կողմն է։ Այսօր ես ստացա Ձեր երեկ ուղարկած թիվ 254 հեռագիրը և նրա բովանդակությունը քննարկեցինք գերմանական դեսպանի հետ[83]։

1918 թ. մայիսի 29. ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկուց Բեռայից՝ գլխավոր շտաբին.

Բաթումի բանակցությունների մասին իմացել եմ հետևյալ մանրամասները. մայիսի 21-ին, թվում էր, թե հասել էր հաշտության պայմանագիր կնքելու պահը, քանի որ փոխադարձաբար ընդունվել էր 1877 թ. հաստատված սահմանը։ Ամսի 22-ին թուրքերը անառարկելիորեն հանդես եկան նոր պահանջով, որի համաձայն Հարավ-կովկասյան հանրապետության և Թուրքիայի միջև սահմանը պետք է անցներ Թիֆլիսից 5 կմ, հարավից, Փոթիի հյուսիսային կողմով։ Կովկասյան պատվիրակները հայտարարեցին, որ անընդունելի է այս պահանջը և այն տպավորությունն էր առաջանում, որ բանակցությունները ձախողվում են։ Գեներալ Ֆոն Լոսովը Բաթումից մեկնեց Կոստանդնուպոլիս։ Այդ ընթացքում կարծես թե ընդհանուր համաձայնություն էր ստեղծվում։ Գեներալ Լոսովը հրաման ստացավ նորից հետ դառնալ Բաթում։ Էնվեր փաշան այսօր ինձ հայտարարեց, որ մոտ օրերս հաշտությունը գլուխ կբերի։ Բուլղարական գնդապետ Կաբելկևը իր կառավարությունից հրահանգ ստացավ գնալ Բաթում և այնտեղ հանդես գալ որպես բուլղարական պատվիրակ[84]։

1918 թ. մայիսի 29. կայսերական-արքայական բանակի գլխավոր հրամանատարություն. ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկուց.

Ի լրումն իմ՝ 1918 թ. մայիսի 29-ի թիվ 387 հաղորդման, որ թուրքական կառավարությունն անդրկովկասյան հանրապետությունից պահանջում է զիջել ոչ թե Փոթին, այլ Ջուլֆայի շրջանը, կովկասյան պատվիրակները հայտարարեցին, որ հավատարիմ են մնում Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրին, որի համաձայն միայն Բաթումի, Կարսի, Արդահանի շրջաններին է վերապահված ինքնորոշման իրավունքը և մեկժում են Թուրքիայի պահանջը։ Դրանից հետո Հալիլ բեյը կովկասցիներին 12 ժամանոց վերջնագիր ներկայացրեց, որը Կոստանդնուպոլսի կողմից երկարաձգվեց 3 օրով և ժամկետն այսօր լրանում է։ Բարձր դուռը Հարավ-կովկասյան հանրապետության նկատմամբ ունեցած իր վարվելակերպը արդարացնում է այն պնդումով, որ գերմանական շտաբի գլխավոր կայանը անառարկելիորեն համաձայն է Ջուլֆայի զիջմանը և հավանություն կտա Թուրքերի կողմից նաև այդ շրջանի գրավմանը։ Դրան հակառակ, դեսպան Բերնսդորֆին արտաքին գործերի նախարարության հղած հրահանգում ասվում է այն մասին, որ պետք է գործադրել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, իսկ թուրքերին պետք է կասեցնել՝ դրանից դուրս պահանջներ չներկայացնելուց։ Գեներալ Լոսովը հավանաբար եռանդուն պաշտպանել է այս տեսակետը և Հալիլ բեյի հետ կոնֆլիկտի մեջ է մտել։ Նա ժամանում է Կոստանդնուպոլիս և անմիջապես մեկնում Բեռլին։ Կոստանդնուպոլսում հավատում են, որ կովկասցիները կզիջեն և կարճ ժամանակ անց հաշտության պայմանագիր կկնքվի։ Եթե այս ենթադրությունը չիրականանա, ապա 3-րդ բանակն իսկույն հարձակման կանցնի Թիֆլիսի ուղղությամբ։ Անդրկովկասյան հանրապետությունների մահմեդականները կարծես թե փոխել են իրենց նախկին վերաբերմունքը թուրքերի հանդեպ։ Հավանաբար, բոլշևիկյան սպառնալիքի ճնշման հետևանքով նրանք ցանկանում են իրենց պետությունը սերտորեն կապել Թուրքիայի հետ[85]։

1918 թ. հունիսի 1, Պալավիչինին Բուդիանիին.

Բրեստ-Լիտովսկում թույլ տրված բազմաթիվ սխալների թվում խոշոր սխալներից մեկն, իմ կարծիքով, Բաթում, Կարս և Արդահան շրջանները Թուրքիային հանձնելն է։ Պետք է շատ անբնական համարվեր, որ շրջաններ, որոնք տարիներ ի վեր կառավարվել են քրիստոնեական կառավարության, այսինքն Ռուսաստանի կողմից, սրանից հետո վստահ-

վեն ավելի ցածր կուլտուրա ունեցող երկրի։ Ինչպես երևում է, Գերմանիայի մտադրությունն է առաջին հերթին Վրաստանը փրկելով՝ նրան իր կողմը գրավել։ Նրանք ցանկանում են Սև ծովի ափին գտնվող այս շրջանը, նրա աշխարհագրական դիրքի պատճառով, անկախ պետություն դարձնել։

Ինչ վերաբերում է Թուրքերի առաջխաղացմանը, երևկ չէ առաջին օրը Թալեաթ փաշան ինձ հայտնեց, որ կառավարությունը մտադիր չէ գերմանացիների կողմից «սահմանային կարգավորում» անունը ստացած շրջաններից բացի, այլ տարածք պահանջել։ Այդ մասին է մայիսի 30-ի իմ թիվ 340 հեռագիրը։ Այս շրջանը, սակայն, նա պետք է անպայման ստանա, քանի որ այնտեղ է Ջուլֆա տանող երկաթուղային ճանապարհը։ Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ Թուրքիան դեռևս հույս ունի իրագործել իր հին երազանքը, նվաճել պարսկական գավառ Ադրբեջանը[86]։

Եվ դա այդպես էր։ Օսմանյան դիվանագետները, թուրքական զորքերի առաջխաղացման շնորհիվ, ապրում էին ոգևորության շրջան, անզիջում էին իրենց պահանջներում, դրսևորելով «հաղթական թուրքի ամբարտավան գիծը»[87]։ Նրանք նույնիսկ հաշվի չէին նստում գերմանական զորահրամանատարներ Հինդենբուրգի և Լյուդենդորֆի՝ էնվերին հղած «զսպողական» հեռագրերի հետ։ Մայիսի 15, 20, 25-ին գեներալ Սեքտին հղած հեռագրերում Լյուդենդորֆը պահանջում էր ներազդել էնվերի վրա, արշավանքը Անդրկովկաս դադարեցնելու, զորքերը Միջագետք և Հյուսիսային Պարսկաստան տեղափոխելու համար։ Չհասնելով հաջողության, Լյուդենդորֆը ուղղակի գրեց էնվերին՝ հարգել Բրեստի պայմանագիրը, սպառնալով՝ «եթե Թուրքիան չհարգի Բրեստում ընդունված սահմանները, Գերմանիան իրեն հետագա ազատ գործողությունների իրավունք է վերապահում։ Գերմանիան, Ավստրիան և Բուլղարիան շրջանցած և Թուրքիայի ու անդրկովկասյան հանրապետությունների միջև կնքված պայմանագիրը Գերմանիան չի ճանաչի»[88]։

Ռազմա-քաղաքական ծանր պայմաններում Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը շարունակում էր իր բուռն քննարկումները։ Մայիսի 28-ի առավոտյան նիստում որոշվեց Թուրքական վերջնագիրը մերժել։ Հարցի վերջնական լուծումը թողնվեց երեկոյան նիստին, որին մասնակցում էին Ա. Ահարոնյանը, Ա. Խոնդկարյանը, Ս. Վրացյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբալյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Ա. Երզնկյանը, Տ. Բեկզադյանը, Մ. Պապաջանյանը, Ս. Հարությունյանը, Ս. Մամիկոնյանը, Վ. Բունիաթյանը, Բաթումից նոր վերադարձած Հ. Քաջազնունին և Ա. Խատիսյանը։ Վերջնագրի ընդունմանը կողմ արտահայտվեց դաշնակցություն կուսակցությունը։ Սոցիալ-դեմոկրատները հայտարարեցին, որ «ժամանակ չեն ունեցել ժողով կայացնելու, ուստի նրանց կարծիքը մնում է ուժի մեջ», սոցիալիստ-հեղափոխականները ներկա չէին։ Բեկզադյանը և Մամիկոնյանը մնացին նախորդ կարծիքին։ Որոշվեց վերջնագիրը համարել ընդունված։ Վիճաբանություն հարուցեց՝ «ով է վերջնագիրն ընդունում. Ազգային խորհուրդը, թե մեկ այլ մարմին՝ Հայաստանի կառավարությունը, կազմված Ազգային խորհրդի կողմից» հարցը։ Քննարկմանը մասնակցեցին բոլոր ներկաները։

(Մատրև բերվում է մայիսի 28-ին երեկոյան ժամը 22 անց 30 րոպե սկսված նիստի արձանագրությունը)։

Մ. Հարությունյան— Առաջարկում է Ազգային խորհուրդը հայտարարել Հայաստանի ժամանակավոր կառավարություն։ Կարելի է Ազգային խորհուրդը դարձնել մի տեսակ պառլամենտ և կազմել կառավարություն՝ բեկուզ և դրսի մարդկանցից։ Պետք է այնպիսի պատվիրակություն ուղարկել, որ թուրերի վստահությունը վայելի։

Ս. Վրացյան— Ըստ կարգի, կարծում է, որ խնդիրը կապ ունի անկախության հարցի հետ։ Մեր խոսակցության մեջ այդ հարցը դեռ ծեծվում է։ Հարմար է թողնել, որ եզրակացության գան և ապա խնդիրը լուծել։

Ս. Մամիկոնյան— Հայ գավառները համարվում են Ռուսաստանի մաս։ Ազգային խորհուրդը կարող է կարգադրություններ անել դրա մասին։ Միջնորդություն ընտրելու կարիք չկա։ Ազգային խորհուրդը ինքը կարող է պատվիրակներ ուղարկել։

Ռ. Տեր-Մինասյան— Ինչ էլ լինի, պետք է մի կառավարություն և դա Ազգային խորհուրդն է, որը ըստ էության, եղած է արդեն կառավարություն։ Պետք է միայն որոշ փոփոխություններ կատարել կազմի մեջ։

Ս. Հարությունյան— Պետք է ընդունել՝ մենք Հայաստանի կառավարություն ենք, առանց սահման որոշելու։ Պետք է կառավարության ղեկը հանձնել մեկ կուսակցության՝ հանձնարարելով կազմել կառավարություն։ Դրածո կառավարությունը բխած է լինելու մի իրավազոր մարմնից։

Հ. Քաջազնունի— Առաջարկում է կարդալ իրենց գրությունը թուրերին՝ Ազգային խորհրդի կառավարական ֆունկցիաները ստանձնելու մասին։ Խատիսյանը կարդում է։

Մ. Պապաջանյանը կարդում է. թուրերն իրենց խմբակցությունը հայտարարել են պառլամենտ, լրացրել են զանազան հիմնարկություններից ներկայացուցիչներով՝ ընտրել են կառավարություն։ Վրացիի, հայտնի է, ինչպես են կազմել։ Մենք ենք մենք, որպեսզի անկախություն հայտարարենք։ Թուրերը հայտարարելու են վաղը։ Վաղը պետք է խոսել թուրերի հետ մեր սահմանների մասին։ Պետք է պատվիրակներ ունենանք այս նպատակով։ Պետք է մի կառավարություն ստեղծել. պետք է մի պառլամենտ, որը կարող է լինել Ազգային ժողովը, որը պետք է լրացվի։ Նա էլ կընտրի միջնորդ-նախագահ։

Ա. Խատիսյան— Վաղը, մինչև պատվիրակության գնալը, պետք է Հայաստանը անկախ հայտարարվի, որ թուրերը բանակցեն Հայաստանի հետ։ Պետք է օգտվել պահից և տեսականորեն անկախ հայտարարել Հայաստանը։ Մենք արդեն ակամա անկախանում ենք։ Մանդատը պետք է անկախ Հայաստանի կառավարության անունից լինի։ Պետք է Ազգային խորհուրդն իրեն հայտարարի ժամանակավոր կառավարություն՝

վաղվա համար: Կարող է փոխվել կազմը: Պետք է նախապես պարզել, թե վերջնագրի որ կետերն են անընդունելի:

Ղ. Տեր-Ղազարյան— Այս ամենը ձևական են մեր կառավարությունը կազմավորելու համար: Պարզ է, որ պիտի Հայաստանի կառավարություն լինի, նշանակված Ազգային խորհրդի կողմից:

Ա. Երզնկյան— Կառավարությունը պետք է նաև պետական ժառանգությունը բաժանելու համար: Պետք է աշխատանքի բաժանում լինի: Ազգային խորհուրդը պետք է կենտրոնական մարմին դառնա: Պատվիրակությունը պետք է անմիջապես ընտրվի: Վաղը կառավարություն կկազմավորենք, որի անունից և կերթանք բանակցությունների:

Տ. Բեկզադյան— Կառավարություն պիտի կազմել փլուզումից եկած հարաբերությունները մշակելու և երկիրը վարելու համար: Բայց տարօրինակ է նմանության այն տենչը, որով հետևում ենք ուրիշներին: Մենք անկախ Հայաստան ենք հայտարարում, բայց ինչ բովանդակություն ունի այդ Հայաստանը՝ անհայտ է: Ինչ մարմնի անունից են գնում մեր պատվիրակները, թուրքերը կընդունե՞ն, ինչպես և ասել են: Տրչահայաց լինենք: Ազգային խորհուրդն անվանենք կառավարություն՝ առանց անկախություն հայտարարելու: Խորհուրդն արդեն կառավարություն է. մեր արտաքին գործերի վարիչը կարող է բանակցել: Բայց ոչ անկախ Հայաստանի անունից:

Վ. Բունիաթյան— Որքան և փոքր լինի մեր հողը, կամ պիտի ասենք անկախ ենք, կամ Ռուսաստանի մաս: Պոլիս և Հալիլ բեյին տված թղթերով արդեն ասել ենք, որ Ազգային խորհուրդը գերագույն մարմին է: Բայց այդ խորհուրդը արդեն պետք է մի մարմին լինի, որ վավերացնի այդ դաշնագիրը: 2—3 շաբաթում պիտի այդ մարմինը ստեղծենք:

Նախագահ— Պատվիրակություն ընտրենք, վաղը որոշենք, թե ում անունից են գնալու Ազգային խորհրդի՞, թե՞ կառավարության: Առաջարկում են երկու հոգի՝ Խատիսյան, Պապաջանյան, ուրիշները՝ երեք, նաև Երզնկյան: Երրորդ անձն ընտրվում է Քաջազնունին:

Մ. Պապաջանյան— Պետք է կորպուսի հրամանատարին հայտնել, որ որոշել ենք վերջնագիրն ընդունել և պատվիրակություն ենք ուղարկել:

Ռ. Տեր-Մինասյան— Հակառակ է, նախքան պայման չկապելը հայտնել կորպուսի հրամանատարին այդ մասին, քանի որ կռիվները պիտի ընթանան իրենց կարգով:

Բեկզադյան— Կողմնակից է տեղեկացնելու, նաև Սամսոնը: Որոշվում է շիֆրով հայտնել Նազարբեկյանին, ասելով, որ գաղտնի պահի:

Որոշվում է բանակցել նաև թաթարական Ազգային խորհրդի հետ: Հաստատվում է պատվիրակություն՝ Ս. Հարությունյան, Ա. Ահարոնյան, Ա. Երզնկյան, Ռ. Տեր-Մինասյան, Մ. Պապաջանյան, Ստամբոլցյան[89]:

Բուռն քննարկումներից հետո Հայոց Ազգային խորհուրդը որոշեց ընդունել թուրքական վերջնագիրը և ընտրեց նոր պատվիրակություն՝ Բաթում գնալու համար։ Ա. Խատիսյանը, Հ. Քաջազնունին, Մ. Պապա-

ջանյանը մայիսի 29-ին մեկնեցին Բաթում։ 1918 թ. մայիսի 30-ին Թիֆլիսի մամուլում հրապարակվեց Հայոց Ազգային խորհրդի կոչը, որտեղ ասվում է. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ Հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը՝ որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն: Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարության բոլոր ֆունկցիաները հայկական գավառների քաղաքական-վարչական ղեկը վարելու համար»[90]:

Մտահոգված էր Երևանի Հայոց Ազգային խորհուրդը։ Թուրքական բանակը Ղարաքիլիսայից հետո շրջվել էր դեպի Երևան։ «Իմ կորպուսը կենտրոնացվել էր Երևանը և Էջմիածինը գրավելու համար»[91],— գրել է Կարաբեքիրը 1919 թ.։ Երևանի Ազգային խորհուրդը իրավիճակի և անելիքների հարցը քննարկեց մայիսի 30 և 31-ի նիստերում, որը վարում էր Երևանի թեմի առաջնորդի փոխանորդ Խորեն եպիսկոպոսը։ Գևորգ 5-րդ կաթողիկոսին ներկայացված հաղորդումից պարզվում է Դիլիջանից եկած պատվիրակության զեկուցման և ընդունված որոշումների էությունը։ Եթե հաշտություն չկնքվի, ժողովուրդը կորչելու է. նա գաղթում է դեպի Ծաղկաձոր՝ առանց ապրուստի միջոցների։ Այսպիսին էր Դիլիջանի ներկայացուցիչների կարծիքը։ Մայիսի 31-ին առաջնորդարանում կայացած նիստում լսելով գեներալներ Նազարբեկյանի, Սիլիկյանի և Բեժան-Բեկի կարծիքը, Ազգային խորհուրդը եկավ եզրակացության՝ վարում ենք պաշտպանողական կռիվ, ժամանակ շահելու համար. կռիվը շարունակել անկարող ենք ռազմամթերքի պակասի պատճառով։ Բանակցել տաճիկների հետ և ժողովրդի ֆիզիկական գոյության համար հաշտություն կնքել։ Ի նկատի ունենալով Թիֆլիսից ստացված հեռագիրը, ուր հայտնվում էր Բաթում ուղարկված Ազգային խորհրդի պատվիրակության մասին, ժողովը որոշեց յոթ օր սպասել Բաթում մեկնած պատվիրակների պատասխանին, այդ ընթացքում ուժեղացնել դիմադրությունը ռազմաճակատներում։ Յոթ օրից հետո պատասխան չունենալու դեպքում թուրքերի հետ սկսել անջատ բանակցություններ։ Ստեղծվեց պատվիրակություն, որի մեջ մտան գեներալ Նազարբեկյանը (Նախագահ), Խորեն եպիսկոպոսը, Արամ Մանուկյանը, Թիֆլիսի ներկայացուցիչ Աստվածատուր Տեր-Սարգսյանը, Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ բժիշկ Արտաշես Ղազարյանը, ներկայացուցիչներ դաշնակցություն, ժողովրդական, սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստ-հեղափոխական կուսակցություններից։ Երևանի Ազգային խորհրդի անդամներ Հովհ. Մելիքյանին և Մկրտիչ Մուսինյանին հանձնարարվեց մասնակցել գեներալ Նազարբեկյանի կարգադրությամբ կազմակերպված հայ-թուրքական տեղական մարմնի աշխատանքներին, որը գործելու էր գեներալ Բեժան-Բեկի նախագահությամբ[92]։

1918 թ. մայիսի 30-ին Հայոց Ազգային խորհրդի պատվիրակները հասան Բաթում։ Նույն օրը նրանք նամակով դիմեցին Օսմանյան կառավարության պատվիրակության նախագահ Հալիլ բեյին՝ առաջարկելով սկսել անջատ բանակցություններ Հայաստանի և Թուրքիայի պատվիրակությունների միջև։ Հալիլ բեյին տեղեկացվում էր, որ Հայաստանի պատվիրակությունը հանդես է գալիս Հայկական գավառների նկատմամբ իրեն գերագույն իշխանություն հայտարարած Հայոց Ազգային խորհրդի անունից։ Թուրքերը հասել էին իրենց նպատակին. Անդրկովկասի դաշնությունը փլուզվել էր, ջլատվել էին ուժերը։ Եթե մայիսի 27-ին Հ. Քաջազնունուն և Ա. Խատիսյանին Հալիլ բեյը հայտարարում էր, թե «Ազգային խորհրդին չի դիմել և դիմել չի կարող, քանի որ այդպիսի մարմին չի ճանաչում, ապա հայկական զորքի սխրանքի ու փաստացի անկախություն հայտարարելու մասին գրավոր հավաստում ստանալուց հետո համաձայնվեց նստելու բանակցությունների։ Հայաստանի պատվիրակության անդամների հետ թուրքական պատվիրակության առաջին հանդիպումը կայացավ նույն օրը, մայիսի 30-ին, երեկոյան ժամը 5-ին։ Մեկ ժամ տևած զրույցի ժամանակ Հալիլ բեյը պնդում էր իրենց նախագծի ընդունման վրա, դնելով Բաքվից հայկական ուժերի դուրս բերման, «Բաքուն հեղափոխականներից մաքրելու» պահանջ։ Հայկական կողմը առաջ էր քաշում Ազգային խորհրդի մշակած ծրագիրը՝ այդ թվում և տարածքային հարցեր։ Բաքվի հարցում առարկելով, հայկական պատվիրակությունը նշեց, որ նման մոտեցումը միջամտություն կլինի Բաքվի ներքին գործերին։ Այնուհանդերձ, Հալիլը հետևողականորեն անց էր կացնում այն միտքը, թե «հետագա բանակցությունների համար լավագույնն է տալ լրիվ համաձայնություն թուրքական նախագծին, իսկ հետո «բարեկամաբար ուղղել այդ պայմանագիրը»։

Երկու պատվիրակությունների նախագահների՝ Խատիսյանի և Հալիլի առանձնազրույցի ժամանակ Հայաստանի պատվիրակության նախագահը մանրամասն ներկայացրեց տարածքային պահանջները։ Հալիլը նորից պնդեց ստորագրել վերջնագիրը, «ազնիվ խոսք տվեց սրբագրել, որքան հնարավոր է»։ Հայաստանի պատվիրակությունը դրանից հետո, երեկոյան ժամը 7 անց 40 րոպեին տվեց իր գրավոր համաձայնությունը թուրքական նախագծին։

Մայիսի 31-ին, առավոտյան ժամը 11-ին, Վեհիբ փաշայի նախագահությամբ սկսվեց տեխնիկական հանձնաժողովի աշխատանքը՝ բաղկացած տարբեր խորհրդականներից։ Բացելով նիստը, Վեհիբը ասաց, որ հայերի վերջին շրջանի վարմունքը լավ տպավորություն է թողել, հայկական զորքը հիանալի է կռվել, Հայաստանը մոտ ապագայում կարող է եվրոպական տիպի լավ զորք ունենալ։ Շեշտը փաշան հայտարարել էր, նման կռիվ չէր տեսել տաճկական և ոչ մի ռազմաճակատում, չնայած թուրքերի ուժերի ու տեխնիկայի առավելություններին, Ղարաքիլիսայի

կռիվը տևել է չորս օր։ Այդ կռիվը տվել է զանազան խորհրդածություններ առիթ[93]։

Հայաստանի պատվիրակների հետ. մասնավոր զրույցի ժամանակ Հալիլը և Վեհիբը, չհամաձայնվելով Ազգային խորհրդի առաջարկած տարածքային պահանջներին, պնդում էին երկու տարբերակ։ Առաջինով Թուրքիան «զիջում» էր Հայաստանին Արագածի ստորոտների և Ապարանի շրջանում 900 ք կմ և Երևանի նահանգի հարավային մասում 400 ք կմ տարածք։ Երկրորդ տարբերակով առաջարկվում էր փոխանակում. վերցնելով Բորչալուի գավառի մեկ երրորդը, Ախալքալաքի գավառի և Կարագլոզների միջև ընկած տարածքը, տալ 2,5 հազար ք կմ տարածք։ Դրանով իսկ առաջ էր քաշվում Բորչալուի միջոցով Ախալքալաքի և Ղարաքաղի միջև կապ պահպանելու, այդ տարածքը ոչ միայն իրենցը համարելու, այլև Հայաստանը Վրաստանից փաստորեն կտրելու հարցը։ Թուրքերի այդ առաջարկը չընդունվեց։ Թուրք պատվիրակները համաձայնվեցին սահմանը գծել Արագածի ամենաբարձր գագաթով՝ 900 ք կմ տարածքով մինչև Աղբուլաղ, ամբողջ Ապարանի շրջանը՝ խճուղով, Հայաստանին թողնելով 400 ք կմ տրվում էր Երևանի նահանգի հարավային մասում։ Վեհիբը «մեծահոգորեն» տեղեկացրեց. Կոստանդնուպոլսում եղել է երկու հոսանք՝ մեկը հակառակ Հայաստանի անկախության, մյուսը՝ կողմնակից կովող կողմերի միջև հարաբերությունների պահպանման, սակայն սահմանների կրճատումով, մեկ դիվիզիա զորք ունենալու իրավունքով։ «Ներկա պահին, իհարկե, ձեր բոլոր ցանկությունները չեն իրագործվում, բայց դա բեկման կետ է»,— ասել է Վեհիբը[94]։

Մայիսի 31-ին երեկոյան ժամը 6-ից մինչև գիշերվա 3-ը տևած բանակցություններից հետո Ազգային խորհրդի պատվիրակները թուրքական պատվիրակների հորդորանքով ստորագրեցին պայմանագրի առաջին՝ սևագիր տարբերակը, հետագայում մանրակրկիտ քննարկելու հեռանկարով։ Հունիսի 2-ին Ա. Խատիսյանը նամակով շտապեց հայտնել Թիֆլիս՝ Ազգային խորհրդին, ապա հեռագրով՝ գեներալ Նազարբեկյանին՝ պայմանագրի ստորագրման և նրա հիմնական դրույթների մասին։ Նույն օրը կայացավ պատվիրակության անդամների հեռախոսային խոսակցությունը Նաթաներիից՝ Հայոց Ազգային խորհրդի անդամ Խ. Կարճիկյանի հետ։

Նամակի և հեռախոսային զրույցի բովանդակությունը հանգում էր հետևյալին. թուրքերը համաձայնվել են Հայաստանին «զիջել» Երևանի, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների 1300 ք կմ տարածք. սահմանը գծվում էր Արփայի դաշտից Շարուր-Էջմիածին գծով, կտրելով Էջմիածին-Սարդարապատ խճուղին՝ Էջմիածնից յոթ կմ հարավ-արևելք, Արագածի գագաթից անցնում էր Աղբուլաղ, այնտեղից Ախալքալաքի գավառի սահմանը։ Հայաստանի պատվիրակության պահանջով մայիսի 11-ին ներկայացված թուրքական նախագծից դուրս էր գցվում 1. Հայաստանի ներքին գործերին միջամտելու թուրքական իրավունքը, 2. Ջինաթրավված գավառներից պատերազմի ժամանակ հայերից զինվորներ

հավաքագրելու թուրքական իրավունքը, 3. Բաքուն բոլշևիկներից ազատագրելու հայերի պատասխանատվությունը, 4. Հայաստանի երկաթգծերը և շարժակազմը թուրքերի ուժերով վերանորոգելու իրավունքը և Հայաստանի ինքնուրույնությունը ոտնահարելու թուրքական այլ փորձեր։ Թուրքական պատվիրակությունը համաձայնվում էր դիվանագիտական ճանապարհով լուծել մի շարք հարցեր, այդ թվում. 1. Ջուլֆայի վրայով Պարսկաստանից հայ փախստականների և հայկական զորքի տեղափոխման իրավունքը Հայաստանին վերապահելը, 2. Կարս, Բաքում, Ալեքսանդրապոլ, Սուրմալու փախստականների վերադարձի հարցը, 3. Պայմանագրով նախատեսված շրջաններից թուրքական և հայկական զորքերի դուրս բերման հարց[95]։ Սակայն Հալիլը իր խոստումը չկատարեց։

Գեներալ Նազարբեկյանին հեռագրով տեղեկացնելով ստորագրված պայմանների մասին, պատվիրակության անդամները, օգտվելով Ազգային խորհրդի ընձեռած լիազորություններից, խնդրում էին. 1. դադարեցնել ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ, 2. մտնել հարաբերությունների մեջ թուրքական հրամանատարության հետ՝ երկու կողմերի զորքերին իրենց տարածքը տեղափոխելու համար, 3. թույլ տալ թուրքական զորքին անարգել անցնել Դիլիջան-Ղազախ ճանապարհով, 4. հարաբերությունների մեջ մտնել թուրքական զորքի հրամանատար Շևքի փաշայի հետ՝ ռազմական գործողությունների դադարեցման համար։ Խատիսյանը, Պապաջանյանը, Քաջազնունին ջերմորեն շնորհավորում էին Նազարբեկյանին Ղարաքիլիսայի տակ մղած մարտերի համար, որոնք «թուրքական գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի կողմից արժանացել են ջերմ գովաբանության՝ հայ զինվորների փայլուն գործողությունների համար»[96]։

Հայտնելով մանրամասնություններ Վեհիբի հետ իր առանձնազրույցից, Խատիսյանը գրում էր. «Վեհիբն է լուծում հարցերը և ոչ թե Հալիլը։ Մենք ունեցանք լուրջ բանակցություն Թուրքիայի և Հայաստանի ապագա փոխհարաբերությունների մասին, պարզեցինք, ինչպես են դա նրանք պատկերացնում։ Նա որոշակիորեն հայտարարեց, որ Հայկական պետության կազմակերպման (թեկուզ և փորր) թուրքական կողմի համաձայնությունը շրջադարձային կետ է Թուրքիայի վերաբերմունքի մեջ, որ դա Հայաստանի հետ հաշտվելու առաջին քայլն է, և որ դրանից հետո ոյուրին կլինի լուծել հայկական մի շարք հարցեր ևս»։ Վեհիբն ասել էր, թե թուրքական նման տրամադրությանը նպաստել են ա) հայերի բաղաքականության պարզությունը (սկզբից ի՛շնամական, այժմ հաշտվողական), բ) Ադրբեջանի հետ համաձայնությունը և հաշտությունը, գ) Հայրենիքի պաշտպանության համար Ղարաքիլիսայում հայերի՝ իրենց հարգանքին ոչժանացած հերոսությունը։

Տեղեկացվում էր նաև, որ թուրքական սպառնալիքի տակ մայիսի 31-ին, ժամը 10-ին վերջնագիրը ընդունել են վրացիները. հակառակ դեպքում, ըստ Վեհիբի հայտարարության, թուրքերը Բաթումի, Նախիջևանի և Վաղոնցովկայի ուղղություններով հարձակվելու էին Թիֆլիսի վրա։

Պայմանագիրը ստորագրել է նաև Ադրբեջանի պատվիրակությունը։ Վեհիբը վրացիներին մեղադրում էր գերմանացիների հետ կապերի համար, զարմանք հայտնում, թե «կարող են լինել խելագարներ, որոնք կարծում են, թե Վրաստանի պատճառով Գերմանիան կսկսի վիճել թուրքերի հետ»։ Անցկացվում էր այն միտքը, թե միայն Թուրքիան է գերիշխողը, Գերմանիան չի երևում և չի զգացվում։ Հայաստանի ապագան պատկերվում է ամբողջական և որոշակի քաղաքականությամբ դեպի Թուրքիան։ Խատիսյանը խնդրում էր Ազգային խորհրդին մտածել հայկական զորքը Բաքվից դուրս բերելու մասին, նշելով, որ Ադրբեջանի ճանապարհը շուտով կլինի անանցանելի, եթե հաշտության շնորհիվ Բաքվից հայկական զորքերը չէվակուացվեն, թուրքերն այնտեղ զորքեր կուղարկեն։

Հայտնելով, որ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների հարցը լուծվելու է հանրապետությունների միջև բանակցությունների ճանապարհով, Խատիսյանը առաջարկում էր 1. հաստատել ամուր սահմաններ Հայաստանի և Վրաստանի միջև Բորչալուի գավառում, Աղրիքոր լեռան և Շուլավերի գոտում. այդ պնդում էին և թուրքերը, մինչդեռ վրացիները այդ գոտին համարում էին վրացական, 2. հասնել նրան, որ կովկասյան թաթարները բոլորովին ձեռք չտան Երևանի նահանգին, շտապ գրավել Շարուրը[97]։

Հունիսի 3-ին նորից հայտնելով տարածքային սահմանային հարցերի մասին, Խատիսյանը գրում էր. «Ադրբեջանի կապակցությամբ պետք է մտածել. թուրքերը դրանք համարում են իրենց գավառը»[98]։

Հայտնելով այս բոլորի մասին հունիսի 2-ի նամակում, Խատիսյանը առաջին անգամ հիշատակում է, որ պատվիրակությունը հանդես է գալիս «Հայկական անկախ պետության անունից»։ Այլ կերպ՝ անմտություն կլիներ։ Նա հորդորում էր Ազգային խորհրդին արագացնել անկախության ակտի իրականացումը, քանզի «չի կարելի խոսել ինչ-որ «հայկական գավառների» մասին, կարծես թե մենք ինչ-որ անձև կտոր լիններ՝ առանց տիրոջ և առանց անվան»։ Բանակցությունների ընթացքը նկարագրելուց հետո Խատիսյանը գրում է. «Մենք կբերենք վատ հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բուն, որտեղ կովում է ժողովրդական միտքը։ Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է։ Ես հավատում եմ մեր պետությանը»[99]։

Ստորագրելով պայմանագիրը, Հալիլ բեյը ասել է, թե իր կառավարությունը ճանաչել է Հայաստանի Հանրապետության գոյությունը և նրա անկախությունը, հայտնում էր Խատիսյանը հեռախոսով, հորդորելով Ազգային խորհրդին՝ մինչև պատվիրակության Թիֆլիս վերադառնալը նախագծել և հռչակել Հանրապետության անկախության ակտը, որի անունից ստորագրվել է պայմանագիրը[100]։

Նախնական պայմանագիրը ստորագրելուց հետո պատվիրակությունների անդամների անհատական տեսակցությունների ժամանակ և տեխնիկական հանձնաժողովի նիստերում թուրքական կողմը երկու որ-

վա ընթացքում հետևողականորեն անցկացնում էր մայիսի 11-ին ներկայացրած պայմանագրի դրույթները՝ մոռանալով երկու օր առաջ տված խոստումները։ Այդ դրույթները արձանագրվեցին Օսմանյան կայսրության կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև 1918 թ. հունիսի 4-ին ստորագրված պայմանագրում։ Պայմանագրի ստորագրման արարողությանը ներկա էին օսմանյան պատվիրակության և Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության բոլոր անդամները։

Պատվիրակությունների ղեկավարների ստորագրած փաստաթղթում արձանագրվում էր, որ անդրկովկասյան հանրապետության բաժանման հետևանքով օսմանյան կառավարության պատվիրակությունը, որը ուղարկվել էր Կովկաս՝ հաշտության բանակցություններ վարելու անդրկովկասյան հանրապետության կառավարության պատվիրակության հետ, բաթումում բանակցության մեջ մտավ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության հետ՝ հաշտության ու բարեկամության պայմանագիր կնքելու Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև։ Այդ փաստաթղթով ևս հաստատվում էր, որ օսմանյան կառավարությունը ընդունում էր Հայաստանի Հանրապետության անկախ գոյությունը։ Այդ ստորագրությունը, հավաստեց Հալիլը պայմանագիրը ստորագրելու արարողությունից առաջ. միջազգային հասարակության մեջ տեղ է բացում Հայաստանի Հանրապետության համար, վկայում, որ Թուրքիան ճանաչում է Հայաստանի գոյությունն ու անկախությունը Կովկասում նոր կազմված պետությունների շարքում։ Նա չի ուզում հիշել «պայքարի այն ցավալի դեպքը, որ տեղի ունեցավ թուրքերի և հայերի միջև», ուզում է միայն նշել, որ «վերջին ժամանակները Օսմանյան կայսրության կառավարությունը հաստատակամությամբ հաղթահարեց իր զգացմունքները և ինձ հանձնարարեց ստորագրել մի փաստաթուղթ, որով ճանաչվում է հայկական կառավարության գոյությունը»։ Նա հայտարարեց, որ «հայ ժողովուրդը Օսմանյան կայսրության այս որոշման կարևորությունը լավ կգիտնի և համաձայնության մի նոր դարագլուխ կբացվի մեր ժողովրդի և ձեր ժողովրդի միջև»։

Հակիրճ էր և Ա. Խատիսյանի պատասխան ճառը. «Հայաստանը, որի անունով պատիվ ունեմ խոսելու, երկար տարիներ շատ զոհողություններ է կրել, որպեսզի ազգային գոյության իրավունք ստանա։ Այսօր բազմահայտ կերպով այդ իրավունքը ստացավ և մտավ անկախ պետությունների շարքը։ Այս մեծ օրը մի հանդիսավոր թվական կհանդիսանա հայերի պատմության էջերում։ Թեպետ նոր պետության սահմանները մեծ չեն, բայց հայ ժողովրդի սերը դեպի ազատություն և դեպի մշակույթը, աշխատանքի նրա ընդունակությունը, հույս ունեմ, որ նրա համար արժանավոր տեղ կապահովեն դրացի պետությունների շարքում»։ Հավաստելով, որ հայերը ցանկանում են, որ կայուն խաղաղություն և հավիտենական բարեկամություն հաստատվի Օսմանյան կայսրության և Հայաստանի Հանրապետության միջև, Ա. Խատիսյանը հաստատ համոզմունք հայտնեց, որ «մեր հայ եղբայրները, որոնք հեռացել են Թուր-

քիայից, կկարողանան շուտով այնտեղ վերադառնալ և Օսմանյան կայսրության ազնիվ քաղաքացիներ դառնալ»։ Այս ճառերից հետո ստորագրվեց հաշտության և բարեկամության պայմանագիրը և երեք հավելված։ Լիագումար նիստը տևեց ընդամենը մեկ ժամ՝ երեկոյան ժամը 5-ից 6-ը[101]։

Հալիլ բեյի վերամբարձ տոնի տակ թաքցվում էին Օսմանյան կայսրության թալանչիական ձգտումները, բուն նպատակները։ Թուրքիային էին անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասը՝ Շարուր-Դարալագյազը, Նախիջևանը, Սուրմալուն, Կարսը, Կաղզվանը, Սարիղամիշը, Ախալքալաքը, Լոռին։ Հայաստանը բաղկացած էր լինելու Նոր Բայազետի գավառից, Երևանի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի գավառների մի մասից՝ ընդամենը 9 հազար քառակուսի վերստ տարածություն։ Հայաստանից խլվում էր Ալեքսանդրապոլը և երկաթուղին՝ մինչև Ջուլֆա. նրան մնում էր ընդամենը 6 վերստ երկաթգիծ. երկաթուղիների վերահսկողությունը անցնում էր Թուրքիային։ Պետական սահմանը անցնում էր Երևանից 7 կմ հեռավորության վրա։ Կեղծելով փաստերը, նման «պարգևը» թուրքական կորպուսի հրամանատար Կարաբեքիրը համարում էր «հայ ազգի նկատմամբ թուրքական փառապանծ ավանդության կիրառում»։ Միայն այդ «գթասրտության» շնորհիվ էր, սեթևեթում էր գեներալը, որ ինքը հրաման չտվեց հարձակվել Երևանի վրա[102]։

Մինչդեռ, ինչպես տեսանք, թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառը, որը երևում է և Հալիլ բեյի, Վեհիբ և Շևքի փաշաների կցկտուր խոստովանանքներից, Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի տակ հայերի հերոսամարտերն էին, որոնք «ներշնչել էին հարգանք հայերի նկատմամբ»[103]։ «Գյավուրները գեշ կկռվեն, ուր են հայ պատվիրակները, վերջացնենք»,— ասել է Վեհիբ փաշան, նկատելով, որ հակառակ դեպքում թուրքերը ստիպված կլինեն թողնել ոչ միայն Ալեքսանդրապոլը, այլև Կարսը[104]։

«Մեր մարտերի մասին մենք տեղեկություններ ստացանք Վեհիբ փաշայից,— գրում են Երևանի Հայոց Ազգային խորհրդին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը և քարտուղար Ն. Ագբաչյանը 1918 թ. հունիսի առաջին օրերին,— թեկուզ և փոքր ու աղքատ, բայց ազատ Հայաստանի համար մենք պարտական ենք մեր բանակի անձնազոհությանը։ Պետք է կարծել, որ մեր զորքերի մարտերը ստիպեցին թուրքերին ճանաչել և Հայաստանը»[105]։

Ծխտելով թուրքական քաղաքագետների պնդումը, թե, իբր, իրենք են Հայաստանին տվել անկախություն, 1920 թ. ապրիլի 20-ին Հ. Օհանջանյանը հայտարարել է. «իր անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդը ապացուցել է Սարիղամիշի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի և այլ մարտերում, ուր Հայաստանի հազարավոր զավակներ զոհվեցին այդ անկախության համար՝ հայ ժողովրդի ազատության բազմադարյան թշնամու դեմ պայքարում։ Հայ ժողովուր-

գը իր այս զոհերով ստեղծեց անկախ և ինքնիշխան Հայաստան Հանրապետությունը»[106]։

Դա է ճշմարտությունը։ Թուրքիան համաձայնվեց դրա հետ, գտնելով, որ տնտեսապես աղքատ, փոքր տարածք ունեցող Հայաստանը չի կարող երկյուղ ներշնչել Օսմանյան կայսրությանը։ Հեռանկարում նրանք տեսնում էին այդ Հայաստանի վերացումը։ Այդ «հեռանկարը» երևում է նաև այդ օրերին Կոստանդնուպոլսում հրատարակված Կովկասի քարտեզից։

Ստորագրված փաստաթղթերով թուրքական զորքերը իրավունք էին ստանում անարգել անցնել Հայաստանի տարածքով, օգտվել Ղարաքիլիսա-Ղազախ խճուղուց՝ զորամասեր և ցանկացած ռազմամթերք տեղափոխելու համար։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետք է նպաստեր թուրքական զինվորներին մթերքով ապահովելու գործին, լավ վիճակում պահեր երկաթուղին և խճուղիները, աշխատակազմը, հակառակ դեպքում օգտագործվելու էին օսմանյան բանակի ուժերը։ Էսադ փաշան համոզում էր, որ Ղարաքիլիսա-Ղազախ խճուղու թուրքերին անցնելը, Ղարաքիլիսայի և Աղբուլաղի գրավումը թուրքերի կողմից «չի թունավորի ոչ Հայաստանը և ոչ էլ հայերին, նույնիսկ նրանց օգտակար է»[107]։

Պատահական չեն Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Բերնսդորֆի տեղեկությունները, հայտնված Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության անդամների հետ հանդիպման ժամանակ, 1918 թ. հունիսի 23-ին, այն մասին, որ ինքը «չի հավատում թուրքական կառավարության խոստումներին, որովհետև Թալեաթ փաշան քանի անգամ իրեն խոստացել է ներումն հրապարակել թուրքիայի հայերի համար, բայց մինչև այժմ ոչինչ չի արել»։ Դեսպանը զարմանք է հայտնել, որ Թուրքիան, որը մի քանի օր առաջ «չէր ուզում լսել անգամ Հայաստան ստեղծելու մասին (մանավանդ էնվեր և Թալեաթ փաշաները) հանկարծ համաձայնություն տվեց և իմ հայտնած զարմանքին նրանք պատասխանեցին, որ երկար մտածելուց հետո վճռել են, որ այդպես ավելի լավ կլինի»[108]։

Այսպիսով, նույնիսկ իրենց հզոր դաշնակցից թուրքերը թաքցնում էին երիտթուրքական կառավարողների քաղաքականության առիթիս փոփոխության, հակահայկական տրամադրության մեջ հանկարծակի բեկման պատճառները։ «Հայերը հաճությամբ ստորագրեցին դաշնագիրը և նրանց այլևս ոչինչ հարկավոր չէ»,— ասել էր Հալիլը Բերնսդորֆին[109]։

Հալիլի առածը ուղղակի կեղծիք էր։ Հայ պատվիրակները դնում էին շատ հարցեր, այդ թվում և հայկական տարածքների պահպանման պահանջ։ Թուրքական կողմը Հայաստանի Հանրապետությանը «հատկացնում» էր Անդրկովկասի ամբողջ տարածքի միայն 5 տոկոսը՝ 20-րդ մասը, որտեղ բնակվում էր ընդամենը 310 հազար մարդ, որոնցից հայերը էին 230 հազարը։ Նրանք կազմում էին երկրամասի հայ բնակչության մեկ ութերորդ մասը։ Հայերի թիվը Անդրկովկասում հասնում էր մեկ

միլիոն 825 հազարի։ 210 ք կմ կազմող երկրամասի տարածքում բնակվում էր 7 միլիոն 100 հազար մարդ։

Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Անդրկովկասից պոկվել էր 25,5 ք կմ տարածք։ Միայն Կարսի և Կաղզվանի օկրուգները ունեին 10,2 հազար ք կմ տարածք, 140 հազար հայ բնակչությամբ[110]։

Թուրքական զինագրավման հետևանքով Կարսի, Կաղզվանի, Արդահանի, Օլթիի, Արդվինի օկրուգներում, Սուրմալուի գավառում ավերվել էր 117 հայկական գյուղ, այնտեղից Անդրկովկաս էր գաղթել 13203 գերդաստան։ Հայ պատվիրակները դնում էին փախստականների տուն վերադառնալու հարցը։ Սահմանագծման հարցում առաջ քաշելով ազգագրական սկզբունքները և պատմական իրավունքը, Հայկական պատվիրակությունը ճիշտ էր գտնում Հայաստանի Հանրապետության սահմաններում ներառնել Երևանի, Նահանգը, Ելիզավետպոլի նահանգի հարավ-արևմտյան մասը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը 54,4 ք կմ տարածությամբ՝ մեկ միլիոն 972 հազար բնակչությամբ, որից 1 միլիոն 169 հազարը՝ հայեր էին, 548 հազարը մուսուլման (ներառյալ 61 հազար քուրդ), 25 հազար եզդի, 7 հազար վրացի, 50 հազար ռուս և այլ ազգեր։ Տարածքը ընդգրկում էր Արաքս գետի հովիտը, Արարատից մինչև Զանգեզուրի հովիտը, Ղարաբաղը։

Իրենց հավակնությունն էին ներկայացնում վրացիները և ադրբեջանցիները։ Վրացիները թեև կազմում էին Անդրկովկասի բնիկ բնակչության 28 տոկոսը, ստանում էին երկրամասի տարածքի 33 տոկոսը (61 հազար ք կմ), 43 տոկոս կազմող կովկասյան մուսուլմանները՝ տարածքի 38 տոկոսը (70 հազար ք կմ)։ Բնիկ բնակչության 29 տոկոս կազմող հայերի 54,5 հազար ք կմ տարածքի պահանջը երկրամասի տարածքի 29 տոկոսն էր։ Սակայն Հայկական գավառները միմյանց մեջ և Թուրքիայի հետ բաժանել ցանկացող վրացական մենշևիկներն ու մուսավաթը ձգտում էին հասնել Հայաստանի հաշվին նոր տարածքների ձեռքբերման։ Վրացիներն ունեին հավակնություն Ղազախի ու Բորչալուի, Ալեքսանդրապոլի շրջանի մի մասի՝ Փամբակի նկատմամբ, որտեղ ոչ մի վրացի չկար, հակառակը՝ հայերի թիվը այդտեղ հասնում էր 171 հազարի։ Նույնը և թուրքերի կողմից զրավվված Ախալքալաքի նկատմամբ, որտեղ բնակվում էր 90 հազար հայ և ընդամենը 7 հազար վրացի։ Այսպիսով, վրացիների հավակնությունները հայկական հողերի նկատմամբ, ներառյալ Ախալքալաքը, միտում էին 13 հազար ք կմ տարածքի, 261 հազար հայ և 7 հազար վրացի բնակչությամբ։ Վրաստանի պահանջած տարածքը կազմում էր 75 հազար ք կմ, երկու միլիոն 951 հազար բնակչությամբ, որոնցից 1,607 հազարը վրացի, 535 հազարը՝ հայ, 300 հազարը մահմեդական, 510 հազարը ռուսներ և այլ ազգեր։

Կովկասյան թաթարների հավակնությունները հայկական գավառների նկատմամբ ներառում էր 18,5 հազար ք կմ տարածք, 337 հազար հայ, 167 հազար մուսուլման (որից 25 հազարը՝ քուրդ) բնակչությամբ։ Ադրբեջանը իրենն էր համարում Ջիվանշիրի, Շուշվա, Գանձակի, Բա-

ներկա պատերազմին, չի լսած զոհաբերություններ բրաւ հայ ազգը եւ ցուցուց թէ ինքը գիտէ ոչ միայն մարտիրոս ըլլալ, այլ եւ կռուիլ իր ազատութեան համար։ Անիկա կռիւով ինքզինքը արժանի բրաւ ազատութեան։ Պատերազմին սկիզբը հայը տուաւ կամաւորական խումբեր՝ որոնք վերջէն կանոնաւոր բանակի վերածուեցան։ Անոնք փառաւոր յաղթանակ մը տարին վերջերս։ Հպարտ եղեք այդ բանակով։ Ես ծանօթ եմ ուրիշ բանակներու եւս, բայց մերինները տարբեր են։ Անոնք՝ դժվարին կացութեան մէջ, զուրկ հագուստէ, ռազմամթերքէ, ձիւնի մէջ կը մարտնչին մեր ազատութեան համար։ Ազատութիւն ստանալու առաջին պայմանն է ոչ թէ խնդրել, այլ կռուով ձեռք ձգել զայն։ Յանդգնութեամբ միայն կարելի է տիրանալ անոր։ Ատոր ապացոյցը տուաւ մեր բանակը։ Անոր շնորհիվ Արարատեան երկրի մէջ բարձրեցաւ Հայկական դրօշակը՝ որին համար հպարտ ենք մենք»[115]։

Հայկական պետականութեան վերականգնման և Հայաստանի Հանրապետութեան ստեղծման փաստը ի լուր ամբողջ աշխարհի հայտնեցին Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Ահարոնյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար Ա. Խատիսյանը։ Ծանուցումն հակիրճ էր և հստակ. «Անդրկովկասյան Հանրապետության կազմալուծումից հետո Հայոց Ազգային խորհուրդը, այն իրավունքների հիման վրա, որով նրան լիազորել է հայ ժողովուրդը, 1918 թվականի մայիսի 28-ին որոշեց հռչակել հայկական պետության անկախությունը, հիմնեց Հայկական Ժողովրդավարական Հանրապետություն»[116]։

Թիֆլիսի և Երևանի Հայոց Ազգային խորհուրդները ծանր պայմաններում ձեռնամուխ եղան նորաստեղծ իշխանության մարմինների ստեղծմանը, տարբեր երկրներում Հայկական հարցի առաջքաշմանն ու հայոց շահերի պաշտպանությանը։

սարգսեարի, Դարալագյազի, Կարյագինի շրջանները, Զանգեզուրը, Նախիջևանը, ձգտում էր ունենալ 95300 ք կմ տարածք, 3.103 հազար բնակչությամբ։ Մուսուլմանների թիվը առաջարկվող տարածքում կազմում էր 2.138 հազար, հայերինը՝ 653 հազար, այլազգիներինը՝ 319 հազար հոգի։ Այսպիսով, նման ծրագրերի իրականացման դեպքում կովկասահայության ճնշող մասը՝ 1.200 հազար մարդ, բնակվելու էր Հայաստանի Հանրապետությունից դուրս։ Անդրկովկասի տարածքի մեկ քսաներորդ մասը կազմող Հայաստանը բաղկացած էր գլխավորապես հրաբխային լեռներից, չհրացված հողերից, գտնվելով ծովի մակերևույթից 2 հազար մետր բարձրության վրա։[111] Դա էլ պնդում էր Թուրքիան։ Բերնսդորֆի արտահայտությամբ, Թուրքերը հայերին տեղ տվեցին «Ձևանում լողանալու համար, բայց դուրս գալու՝ չորանալու համար տեղ չտվեցին»[112]։

Բաթումում բանակցություններն ավարտվեցին Թուրքական զավթողական ախորժակի բավարարումով։ Թուրքիային բռնակցվեց 38 հազար քառ. վերստ տարածություն՝ 1250 հազար բնակչությամբ։ Տարածքը պոկված էր Հայաստանից և Վրաստանի՝ հիմնականում հայաբնակ վայրերից։ Այդ տարածքը 12421 ք կմ՝ 635 հազար բնակչությամբ, գերազանցում էր այն տարածքը, որը զավթել էին Թուրքական զորքերը Բրեստի դաշնագրով[113]։ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը գծվել էր Արփաչայ և Արաքս գետերի երկայնքով, մինչև Պարսկաստանի սահմանը։

Ավստրո-Հունգարական կայսրության արտաքին գործերի նախարար Բուրիանին իրավիճակի մասին տեղեկացնելով, Ֆոն Ֆրանկենշտայնը Թիֆլիսից գրում էր. «Հայաստանը անկում ապրեց հյուսիսում և հարավում, արևելքում և արևմուտքում։ Այն Հայաստան է առանց Լոռու ու Ղազախի, առանց Արարատյան դաշտավայրի, առանց Շիրակի և Ախալքալաքի, առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի, առանց գավառների, որոնք դարեր շարունակ Հայաստանին են պատկանել»[114]։

Դա դառը ճշմարտություն էր։ Սակայն մեր պատմության այդ ծանրագույն ժամանակաշրջանը միաժամանակ ազգային իղձերի իրականացման ժամանակաշրջան էր։ Հինգ դարից ավելի կորցրած պետականության վերականգնումը մեր հինավուրց ժողովրդի դարավոր բաղձանքն էր, որը իրականացավ համառ պայքարով, անթիվ զոհերով ու զրկանքներով։ Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի մեծագույն հաղթանակն էր, բեկումնային իրադարձություն նրա կյանքում, բազմադարյան պատմության մեջ։ Բանակի դերը դեռևս 1919 թ. դեկտեմբերի 7-ին ընդգծել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակության միացյալ զինվորական առաքելության ղեկավար գեներալ Հակոբ Բագրատունին։ Հանդես գալով Նյու,Յորքում՝ 4 հազարանոց հանդիսավոր ժողովում, նա ասել է. «Մեր ազգը օտարների լուծի տակ ապրել է դարերով։ Կար ժամանակ մը՝ երբ կարծես մեռած էր անկախության կայծը։ Բայց

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ 1918 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԵՌԼԻՆՈՒՄ, ՎԻԵՆՆԱՅՈՒՄ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ

Անդրկովկասյան հանրապետությունների հետ Բաթումում կնքված պայմանագրերը եռանդուն քննարկվում էին Բեռլինում ու Վիեննայում։ Գերմանիան ու Ավստրո-Հունգարիան գտնում էին, որ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հետ Բաթումում Թուրքիայի կնքած պայմանագրերը ընդունելի չեն, քանի որ կնքվել են առանց դաշնակիցների մասնակցության։ Կովկասյան հարցերը պետք է քննարկվեին Կոստանդնուպոլսում հրավիրվող կոնֆերանսում։ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի դեսպաններին հանձնարարվել էր կոնֆերանսում հանդես գալ համախորհուրդ։ Գերմանիայի կարծիքով, կոնֆերանսին պետք էր հրավիրել նաև Ռուսաստանի և Ուկրաինայի պատվիրակություններին, որոնք ստորագրել էին Բրեստի հաշտությունը, առանց Ռուսաստանի հնարավոր չէր վճռել ռուսական նախկին տարածքների հարցը։ Մյուս կողմից, Ռուսաստանի մասնակցությունը կարող էր լինել հակակշիռ թուրքական չափը անցնող պահանջների նկատմամբ։ Կոնֆերանսը պետք է թուրքերին ստիպեր կատարել Բրեստի պայմանները, որից Թուրքիան հրաժարվում էր, հակառակ նրան, որ ինքն էր դա պահանջում Տրապիզոնում՝ Անդրկովկասյան կառավարությունից։ Գերմանիան, միաժամանակ, շարունակում էր իր նախազգուշացումները բարձր դռանը։

Հունիսի 3-ին Բերնսդորֆին հղած հեռագրում ֆոն Քյուլմանը հանձնարարում էր տեղյակ պահել Բարձր դռանը, որ Թուրքիան իրավունք չունի շրջանցելու իր դաշնակիցներին և պայմանագրեր կնքելու կովկասյան հանրապետությունների հետ, քանի որ դա հակասում է 1916 թ. սեպտեմբերի 28-ին Գերմանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրին։ Ակնհայտ էր դառնում նաև պատճառը՝ հայերի դեմ գործադրվող վայրագությունների հետևանքով քաղաքակիրթ աշխարհի զայրույթը Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ։ «Բոլոր կողմերից՝ Վատիկանից, Իսպանիայի թագավորից, Շվեյցարիայից, ինչպես նաև հենց նոր այս-

տեղ հանդիպած Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներից մեզ կոչ է արվել օգնության հասնել հայերին,— գրում էր Քյուլմանը,— և այն ամենի համար, ինչ նրանց հետ կպատահի, մենք պատասխանատու ենք»։ Քյուլմանը ընդունում էր, որ Գերմանիան, որպես Թուրքիայի առաջ կարսի, Արդահանի, Բաթումի ճանապարհները բացած Բրեստի պայմանագրի տակ ստորագրող կողմ, չի կարող խուսափել այդ պատասխանատվությունից, առավել ևս, որ «մեր հեղինակավոր մարդկանց հաղորդումները և հայ պատվիրակների զեկույցները միանգամայն վկայում են, որ թուրքերը հակառակ իրենց բոլոր խոստումներին, Կովկասում ամենուր իրականացնում են հայերի ոչնչացումը»։ Ելնելով ստեղծված իրավիճակից և հասարակական կարծիքի ճնշման տակ, Գերմանիան իրեն պարտավոր էր համարում պնդել այն բանի վրա, որ «թուրքական կառավարությունը ոչ միայն պահպանի իր խոստումները՝ անհապաղ և լիովին դադարեցնել հետագա իր հարձակումը, այլև այսուհետև՝ առանց հապաղման իրական երաշխիքներ ստեղծի արդեն զբաղեցրած մարզերում հայերին պաշտպանելու բաշիբոզուկների և այլ խաժամուժի հարձակումներից։ Թուրքիան չպիտի հույս տածի, թե մենք գերմանական արյունով կամ գերմանական դիակների վրա նորից նրա համար կվերականգնենք թուրքական տարածքը, որի պաշտպանությանը կամ վերանվաճմանը նա արդեն ձեռնարկել է կամ դրան է սպասում։ Մի այդպիսի սպառնալիք է նկատվում նաև հայերի դեմ գործադրվող վայրագությունների մեջ, քանի որ դրա հետևանքով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը բողոքում է Թուրքիայի և նրա դաշնակիցների դեմ»[1],— *արձանագրում էր Քյուլմանը։*

Այդ բարդ իրադրության պայմաններում Բեռլինում սկսեց իր գործունեությունը Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը, որը փոքրինչ անց հանդես եկավ Հայաստանի կառավարության անունից։ Պատվիրակության անդամներ Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը Բեռլին էին ժամանել Հունիսի 3-ին։ Ա. Ջամալյանը, Լ. Նազարյանցը, Գ. Մելիք-Ղաբագյոզյանը մայիսի 30-ին մեկնել էին Բեռլինից։ Կիևում գերմանական դեսպանի կողմից նորից Բեռլին վերադառնալու մերժում ստանալուց և կանցլեր Հերտլինգին նոր փաստերով հագեցած հուշագիր հղելուց հետո, նրանք ճանապարհ ընկան Կովկաս[2]։

Հունիսի 5-ին Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը ընդունվեցին արտաքին գործերի նախարարությունում՝ նախարար Ռոզենբերգի և փոխնախարար Գյոպերտի կողմից։ «Մեծ ուշադրությամբ լսեցին և ասացին, որ արդեն արված են շատ ազդու քայլեր թուրքերի առաջխաղացումը կանգնեցնելու և գրաված վայրերում հայերին վնաս չբերելու համար և այդ նպատակին հասել են։ Իսկ մեր պայմաններին, թե հարկավոր է, որ թուրքերը դատարկեն գրաված երկիրը մինչև Բրեստի սահմանները, պատասխանեցին, որ դա օրախնդիր (actual) հարց չէ, նրանց նպատակն է Բրեստի սահմանները և պայմանները անխախտ պահել»[3],— *գրում էր Օհանջանյանը Բեռլինից Կոստանդնուպոլիս, այնտեղ*

գտնվող Հայկական պատվիրակությանը՝ Ա. Ահարոնյանին և Ա. Խատիսյանին, հունիսի 26-ին։

Բեռլինում մնալով մոտ հինգ ամիս (հունիսի 3-ից մինչև նոյեմբերի սկզբները), հայկական պատվիրակությունը ծավալեց բուռն գործունեություն։ Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը պատվիրակությունը, մեր ունեցած տվյալներով, ներկայացրեց 15 հուշագիր, 9 հուշագիր հղեց Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությանը և Բեռլինում կայսրության դեսպանին, մեկ հուշագիր՝ Բուլղարիայի դեսպանին, 2՝ ռայխստագի պատգամավորներին, 3՝ պետական և հասարակական գործիչների, 1-ական՝ Ռուսաստանի ժողկոմխորհին և Ուկրաինայի կառավարությանը։

Հիմնականում դրվում էին Հայաստանի Հանրապետության ճանաչման, թուրքական զորքերի առաջխաղացումը արգելակելու, կոտորածներին վերջ տալու, Հայաստանին ռազմական և մարդասիրական օգնություն ցույց տալու, Արևմտյան Հայաստանից բռնագաղթած, փախստական և ռազմագերի հայերի տունդարձի և նրանց կյանքի, պատվի, գույքի ապահովման երաշխիքների, Բրեստում ընդունված պայմանների կատարման հարցերը։[4]

Հաշվի առնելով Կոստանդնուպոլսի կոնֆերանսի կարևորությունը, Հայաստանի պատվիրակները հունիսի 10-ի հուշագրով Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը առաջ դրեցին կոնֆերանսում հայկական պատվիրակության մասնակցության հարցը։ «Այն հանգամանքը, որ Հայոց Ազգային խորհուրդը իրապես կառավարական իշխանության ֆունկցիաները Կովկասյան Հայաստանում է գործ դնում, իրավունք է տալիս մեզ խնդրելու, որ նրան թույլ տրվի պաշտոնական ներկայացուցիչ ունենալ կոնֆերանսում,— ասված էր հուշագրում,— մենք այդ անխուսափելիորեն անհրաժեշտ ենք համարում, քանի որ այդ կոնֆերանսում Կովկասի մասին է որոշվում և այդ պատճառով էլ անարդար և աննպատակահարմար կլինի հայերին, որոնք Անդրկովկասի բնակչության մեկ երրորդից պակաս չեն կազմում, մի կոնֆերանսի պաշտոնական մասնակցությունից զրկելը, որը Կովկասյան հանրապետություններ վերջնական կազմակերպման մասին ընդհանուր որոշումներ է կայացնելու»[5]։

Հունիսի 18-ի հուշագրում պատվիրակությունը փաստերով ցույց էր տալիս երիտթուրքերի ոճրագործությունները, թուրքահայերի գրեթե գլխովին ոչնչացումը կամ իրենց բնակավայրերից բռնագաղթեցումը, նախազգուշացվում էր, որ թուրքական առաջխաղացումով նույն ճակատագրին կարժանանան նաև կովկասահայերը։ Կոչ էր արվում գերմանական կառավարությանը՝ սաստելու հայերի «իրավունքը և արդարությունը մեկտեղ ոտնակոխ անող» իր դաշնակցին, որպեսզի նա «չհայտնվի Կովկասում»[6]։

Պատվիրակությունը պատրաստեց գունավոր քարտեզ՝ Հայաստանի սահմաններով, որը չնայած Գերմանիայի արտաքին գործերի նախարա-

րության արգելքներին, հուշագրերի հետ տարածվեց թե արտաքին գործերի նախարարությունում, թե գլխավոր զորակայանում, և թե ռայխստագի ականավոր անդամների և հասարակական գործիչների շրջանում։ Նրանք տպագրվեցին Պաուլ Ռոհրբախի խմբագրությամբ հրատարակվող Արևելյան քաղաքականության հանձնաժողովի ամսագրում՝ առանձնատիպով։ Ընդհանրապես, հրատարակվեց չորս համար՝ հայկական նյութերով, որոնց օրինակները հանձնվեցին նաև Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Պարսկաստանի դեսպաններին՝ իրենց կառավարություններին ներկայացնելու համար[7]։

«Մենք բոլոր մեր հուշագրերը և քարտեզը ի մի հավաքեցինք, կցեցինք և դիվանագիտական նյութեր, որ վերցրել էինք Չխենկելուց, և տպագրեցինք առանձին գրքով,— գրում է Օհանջանյանը,— Արտաքին գործոց նախարարությունը մեզ հասկացրեց, որ նրան հաճելի չէ, որ այդ գրքույկը տարածվի լայն շրջաններում, բացի կառավարական շրջաններից, այնպես որ նրանք խոչընդոտեցին դրա տարածումը», քանզի «նրանք շատ հակառակ են, որ մի որևէ բան տպվի տաճիկների դեմ»[8]։

Արտաքին գործերի նախարարության պաշտոնական վարկածն էր. դա արվում է, որպեսզի «խաղաղեցվեն թե՛ թուրքերի, թե՛ հայերի կրքերը»։ Սակայն գլխավորը հակագերմանական քարոզչությունից խուսափելն էր, գերմանացիների իսկ ասելով «ոչինչ այնքան չի վնասել գերմանական գործին, քան Բելգիայի և Հայաստանի առթիվ եղած քարոզչությունը»։

Ռայխստագի պատգամավորների շրջանում տարածված նյութերը խաղային իրենց դերը Հայ դատի պաշտպանության գործում, հունիսի 24-ի և 25-ի նիստերում, որտեղ արծարծվեցին Կովկասի քաղաքական իրավիճակի հարցերը։ Դրանք իրենց արտահայտությունը գտան պետական քարտուղար Քյուլմանի, ռայխս-պատգամավորներ արքայազն Շյոնաիխ Կայսլաուտի, Դրոբերի, Դավիդի, Վեստարպի, Շտրեզեմանի, Հաազեի, Վերների ելույթներում։ Դրանցում թեև արտահայտվում էին բարեկամական զգացումներ Թուրքիայի, նրա ղեկավարների, դաշնակից պետության, դաշնակցային պարտքի նկատմամբ, շողոքորթություն նրա բանակի հասցեին, բայց նկատվում էր և սթափ մոտեցում Հայկական հարցի հանդեպ, թուրքական զավթողական նկրտումների բացահայտման և կովկասյան արշավանքը կանխելու միտում։

«Մենք վճռապես պահանջում ենք, որպեսզի վերջ տրվի թշնամանքին և հայերի հալածանքին. հայտնի չէ ոչ մի առիթ հայերին նորից սպառնացող հալածանքների համար, որը երբեք չի դադարում»,— ասաց արքայազնը, հույս հայտնելով, որ իրենց «թուրք դաշնակիցները և բարեկամները չեն լինի խուլ հայ ժողովրդին օգնելու առթիվ հիմնավորված գանգատների և սրտաճմլիկ կոչերի կապակցությամբ»։

Քյումանը Բրեստ-Լիտովսկի դաշնադրությունը ներկայացրեց խեղաթյուրված, Կարսին, Արդահանին, Բաթումին վերաբերող հոդվածի սխալ մեկնաբանմամբ, Բաթում-Ջուլֆա-Թավրիզ երկաթուղու թուրքա-

կան գրավման պահանջը հրամցրեց որպես «ստիպողական» քայլ Հյուսիսային Պարսկաստանի վրայով Տիգրիսի հովիտ առաջ շարժվելու, անգլիացիների դեմ կռվելու համար։ Խեղաթյուրելով փաստերը, արտաքին գործերի պետական քարտուղարը հայտարարեց, որ Թուրքական բանակի արշավանքը դեպի Կովկասի խորքերը կանգնեցված է։ Այնուհանդերձ, նշելով, որ Կովկասում, ինչպես երբեք, բախվել են Գերմանիայի և Թուրքիայի շահերը, նա հայտարարեց, որ Գերմանիան պահանջելու է Թուրքերից պահպանել Բրեստի պայմանագիրը։

Անդրկովկասում գերմանացիների շահերի մասին խոսեց վեստարպը, որը Կովկասի բնական հարստություններից բացի, նշեց Սև ծովից Կասպից ծով դուրս գալու, այնտեղից Անդրկասպյան երկրամաս թափանցելու կարևորությունը, դրանց «վճռական նշանակություն Գերմանիային հումքով մատակարարելու գործում»։

Ուշագրավ էին Գուստավ Շտրեզեմանի և Հուգո Հաազեի ելույթները։ «Երեկ,— ասաց Շտրեզեմանը,— պետական քարտուղարը ասաց, որ Բաթումը, Կարսը, Արդահանը հաշտության պայմանագրով անցնում են Թուրքիային։ Դա ամենևին ճիշտ չէ։ Դա զինագրավում է, որին շտապ պետք է վերջ տրվի և վերականգնվի նախկին վիճակը։ Պետք է հարցը որոշվի ազգային ինքնորոշման հիման վրա՝ հանուն մարդասիրության։ Վիճակն այնպիսին է, որ առաջանում է հարց, «Կա՞, արդյոք, մարդկայնություն»։ Այժմ վերսկսվել է Թուրքերի առաջխաղացումը հայկական մարզերում և չի կարելի թույլ տալ, որպեսզի այրվեն գյուղերը, հազարավորները սպանվեն։ Պետք է վերականգնել Բրեստի դաշնագրով սահմանված դրույթները»։

Բացահայտելով Քյուլմանի հարցադրումների թուրքամետ լինելը՝ Հաազեն ցույց տվեց, որ Կարսը, Արդահանը, Բաթումը Բրեստի դաշնագրով Թուրքիային չեն անցնում, դաշնագրի 4-րդ կետում խոսվում է այդ մարզերի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին։ Առաջնահերթ հարցը Հաազեն համարեց հայերի կոտորածներին անհապաղ վերջ տալը։

Բերելով թվեր ու փաստեր կոտորածների, փախստականների, դրա հետևանքով մարդկային մեծ կորուստների մասին, նա կանգ առավ Արդահանի և Օլթիի կոտորածների, Քյուլմանի ճամարտակությունների վրա։ «Եթե կառավարության ներկայացուցիչը համախոհ չէ կրոնակից քրիստոնյաների հետ, ապա նա պետք է ուննենա մարդկային առաքինություններ՝ լարելով բոլոր ջանքեր, որպեսզի Կովկասում ապրող հայերը չենթարկվեն կոտորածների, Թուրքերը անմիջապես թողնեն Կովկասը, անհապաղ կատարեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանները»։ «Նրանք, ովքեր իշխանություն ունեն, պաշտոնյաներ են, ջանքեր չպետք է խնայեն Թուրքերին սանձելու համար»[9],— հայտարարեց Ռայխստագի պատգամավորը։

Կովկասում Գերմանիայի գործելակերպը հստակեցվեց 1918 թ. հուլիսի 2-ին և 3-ին կայզեր Վիլհելմի նախագահությամբ կայացած գեր-

մանական պետական գործիչների և բանակի բարձր հրամանատարության համատեղ նիստում։ Այդտեղ Ռոզենբերգը արտաքին գործերի նախարարության անունից առաջարկեց Վրաստանին խոստանալ պահանջների բավարարում պատմական և ազգագրական սահմանների հարցում, որը պետք է իրականացվեր և ի հաշիվ Հայաստանի։ Լյուդենդորֆը կարծում էր, որ Վրաստանին ճանաչելը միակ ուղիղ ճանապարհն է դեպի Բաքու, իսկ նավթի հարցը ամենակարևորն է, պետք է գործել անհապաղ, մինչև էնվերի եղբոր՝ Նուրիի հարձակումը։ Հայտնվեց նաև այն միտքը, որ Իոֆֆեն՝ Ռուսաստանի դեսպանը, «կգերադասեր Բաքվի զինագրավումը Գերմանիայի կողմից, քան Թուրքիայի», երաշխավորելով Գերմանիային նավթ՝ Բաքվից։

Կովկասյան հիմնահարցի քննարկումն ավարտվեց կայզեր Վիլհելմի հակիրճ ամփոփումով. «Թիֆլիսում ստեղծել հակառուսական կենտրոն»[10]։

Նույն օրերին Կոստանդնուպոլսում ճշտվում էին հարաբերությունները հունիսի 19-ին այստեղ ժամանած հայկական պատվիրակության և օսմանյան կառավարության միջև։ Կոստանդնուպոլիս պատվիրակության ուղարկվել էր Ազգային խորհրդի հունիսի 12-ի որոշումով, խորհրդի նիստում Հալիլ բեյի՝ Թալեաթ փաշայի անունից հղած հեռագիրը քննարկելուց հետո։ Հեռագրում հայտնվում էր. «Մեր դաշնակիցների ներկայացուցիչները ուզում են բարեկամական դաշն կապել Կովկասի պետությունների հետ և արդեն Պոլսում են։ Խնդրում են ժամանել նաև Հայաստանի ներկայացուցիչներին՝ Պոլսում բանակցություններ սկսելու»[11]։

Պատվիրակության անդամներ Ա. Ահարոնյանը (նախագահ), Ա. Խատիսյանը, զինվորական խորհրդական գեներալ Գ. Ղորղանյանը հունիսի 22-ին հանդիպումներ ունեցան մեծ վեզիր Թալեաթ փաշայի, ռազմական նախարար Էնվեր փաշայի, արտաքին գործերի նախարար Նեսիմի բեյի, ծովային նախարար Ջեմալ փաշայի, արդարադատության նախարար Հալիլ բեյի և մի քանի այլ նախարարների հետ։ Թուրքական կառավարության նույն պաշտոնյաների հետ մի քանի օր հետո հանդիպումներ ունեցավ նաև Կոստանդնուպոլիս ուղ ժամանած պատվիրակության անդամ Միք. Պապաջանյանը։ Հանդիպումներ ունեցան Գերմանիայի դեսպան Բերնսդորֆի, Ավստրո-Հունգարիայի դեսպանի պաշտոնակատար Սցիլասի, զինվորական գլխավոր ներկայացուցիչ ֆելդմարշալ-լեյտենանտ Յ. Պոմյանկովսկու, Բուլղարիայի և չեզոք երկրների դեսպանների, Հռոմի պապի ներկայացուցչի հետ։ Այցելությունների ժամանակ դեսպաններին հանձնվեց Հայաստանի անկախության հայտարարության ակտը[12]։

Հայ ժողովրդի համար այդ շատ ծանր օրերին Կոստանդնուպոլիս ժամանած հայկական պատվիրակությունը մի խնդիր ուներ՝ իրականացնել Ազգային խորհրդի և նոր ստեղծված կառավարության ղեկավար սկզբունքը՝ ապահովելու հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։

գիծն էր անցնում հանդիպումներում և պատվիրակության գրավոր դիմումներում, որն ավելի էր թանձրանում Կոստանդնուպոլսի հայ բնակչության վիճակը տեսնելուց հետո։ «Հայ բնակչության սարսափելի կացությունը հասել էր այն աստիճանի, որ երկար ժամանակ նրանք խուսափում էին մեզանից՝ ինչպես կրակից և մենք, իհարկե, չէինք կամենում նրանց հետ մեր հարաբերություններով նոր վտանգների առիթ տալ նրանց համար»[13],— ասված է պատվիրակության զեկուցագրում։

Առաջին իսկ հանդիպումների ժամանակ հայկական պատվիրակությունը Թալեաթ փաշային, ապա և էնվեր փաշային ներկայացրեց Հայաստանի ազգաբնակչության սարսափելի կացությունը, գաղթականների թշվառ վիճակը, հանրապետության սահմանափակ տարածքների պատճառով կենսագործունեության հնարավորության բացակայությունը[14]։

Հանդիպումների արձանագրությունները հղելով Հայոց Ազգային խորհրդին, պատվիրակության դիվանի պետ և գլխավոր քարտուղար Հակոբ Քոչարյանը հայտնում էր. «Այդ տեսակցությունների նկարագրությունները մենք գրի առնելով, խնդրեցինք թույլատվություն՝ հրապարակելու այստեղի և մեր կողմերի թերթում։ Մուհթար բեյը[15] վերցրել է, որպեսզի ներկայացնի, ուր հարկն է և մեզ թույլտվություն բերի, սակայն մինչև օրս այսօր-վաղը ձգելով՝ դեռ չի վերադարձրել մեզ, ուստի հնարավորություն չունենք մամուլին հանձնելու։ Ձեզ էլ ուղարկում ենք միայն ի տեղեկություն մոտ շրջանների համար, բայց ոչ թերթերում հրապարակելու, եթե թույլ տան՝ իմաց կտանք Ձեզ, որ հրապարակեք»[16]։

Հրապարակումների արգելակման թուրքական կողմի դրդապատճառները երևում են արձանագրություններից։ Դրանք թուրք ղեկավարների սին խոստումներն են, պերճախոսությունը, խարդավանքը։ Ա. Ահարոնյանի գործնական հարցադրմանը՝ առաջին հերթին լուծել թշվառության մեջ գտնվող գաղթականների տեղափոխման և ներքին կարգավորման մի շարք խնդիրներ, Թալեաթը տվեց վերացական և խուսափողական պատասխան[17]։

Հարցը գործնական խոսակցության հուն փոխադրելու ձգտումով Ա. Խատիսյանը խոսք բացեց գաղթականության, առաջիկա կոնֆերանսի իրավասությունների և քննարկելիք հարցերի, ժամանակամիջոցի մասին։ Ապա նա Թալեաթ փաշային հանձնեց Հայաստանի անկախության հռչակագիրը։ Այստեղ արդեն երևաց մեծ վեզիրի «սիրալիրության» պատկերը։ Անկախության հռչակագիրը և փաստաթղթերը հանձնելով Հալիլ բեյին, նա ասաց. «Սրանք առանձին կարևորություն չունեն։ Կոնֆերանսը կսկսվի հավանորեն մեկ շաբաթից հետո»[18]։

Հայերին կշտամբելով Ռուսաստանի և Անգլիայի հետ հույսեր կապելու համար և շեշտելով, որ իրենց հաշիվների մեջ նրանք սխալվել են, էնվեր փաշան պահանջում էր Հայաստանի կառավարությունից հրաժարվել չեզոքության քաղաքականությունից, Թուրքիայի հետ լինել «ոչ միայն լավ հարևաններ, այլև լավ դաշնակիցներ», նրա հետ մտնել կոնֆեդերացիայի մեջ, կնքել «սրտակից համաձայնություն»։ Եթե դա չլինի, ոչ մի հարց հայերի հետ չի քննվի, հայտարարում էր հայերի ջարդարարը։ Այդպիսին էր երիտասարդ թուրքերի՝ հայերի հետ «բարեկամության» փիլիսոփայությունը։ Այդ փիլիսոփայությունը արտահայտվում էր նաև փաստերը «մոռանալու» և երևույթների խեղաթյուրման մեջ։ Թուրքական զորքերը Կովկասում՝ իր հրամանի համաձայն, «իրենց բոլորովին վայելուչ են պահում»,— գոհունակությամբ հայտարարեց էնվերը, շրջանցելով Ախալքալաքի, Շիրակի և Արարատյան դաշտի, Լոռու հազարավոր անմեղ զոհերին։ Նա «չմոռացավ» հիշատակել էրզրումի շրջանում թուրքերի նկատմամբ հայերի «բռնությունը», որի հետևանքով «թուրքերն էլ փախել են Տրապիզոնից մինչև Ուրֆա և Ադանա»[19]։ Նույն մտքերը կրկնեցին Ջեմալ փաշան, Նեսիմի և Հալիլ բեյերը։ Վերջինս միայն շեշտում էր, որ Բաթումում ամեն ինչ վերջացած է, դաշնագիրը ստորագրված, «մնում են միայն ձևականությունները»[20]։

Այդ հանդիպումների ժամանակ հայկական պատվիրակությանը հուզող հարցերին պատասխան չտրվեց։ Պատասխան չէր տրվում նաև պաշտոնական հուշագրերին և դիմումներին։ Թալեաթն ամեն անգամ խոստանում էր պատվիրակության առաջարկությունները քննության դնել կառավարության նիստում, նույնիսկ նշում էր կոնկրետ օրեր, խնդրում փաստաթղթերի կրկնօրինակները ներկայացնել նաև արտաքին գործերի նախարարին՝ նիստին պատրաստ լինելու համար[21]։ Շարունակ ձգձգելով պատասխանը, նրանք անվերջ կրկնում էին հայերի հետ իրենց լավ հարաբերությունների, համագործակցության և փոխըմբռնման անհրաժեշտության մասին, առաջ էին քաշում թուրք-հայկական դաշինքի հարցը։ Մյուս կողմից, թուրքերը հայերին մեղադրում էին Բաքվի պաշտպանության մեջ նրանց խաղացած դերի, Զանգեզուրում Անդրանիկի գործունեության, անգլիացիների հետ կապի, Փարիզում Պողոս Նուբար փաշայի՝ Կլեմանսոյի հետ ձեռնարկած գործողությունների, Բաթումի պայմանագիրը չվավերացնելու և այլ հարցերում[22]։

Էնվերը, Թալեաթը, Նեսիմին չէին թաքցնում իրենց դժգոհությունը Բեռլինում հայկական պատվիրակության գտնվելու կապակցությամբ, ցանկանում էին, որ հայերը հարաբերությունների մեջ մտնեն միայն թուրքերի հետ։ Նույնն էին պնդում նաև երիտասարդ թուրքերի կոմիտեի ղեկավարներ Բեհաէդդին Շաքիրը, Ռիզա բեյը, Շվեյցարիայում դեսպան Ֆուադ Սելիմ բեյը, ծովակալ Ռաուֆ բեյը և այլ պետական, հասարակական, քաղաքական գործիչներ ու հրապարակախոսներ։

Պատերազմի առաջին շրջանում էրզրումի վալի Շաքիրը խորհուրդ էր տալիս պատվիրակությանը կոնֆերանսում հայկական հարցը չշոշափել, հավաստելով, թե թուրքերն իրենք այն կկարգավորեն, դա իրենց ներքին խնդիրն է։ Թուրքական զորքի ներխուժումը Կովկասյան Հայաստանի սահմաններ՝ նա բացատրում էր զորքի «ռազմական տրամադրությամբ»[23]։ Հանդես գալով հայ-թուրքական կոնֆեդերացիայի գաղափարի պաշտպանությամբ, Ֆուադ Սելիմ բեյը կեղծավորաբար հայկական

պատվիրակությանը խնդրեց իրեն դիմել Շվեյցարիայում՝ «ամեն տեսակ հանձնարարություններով»[24]։ Այդ նույն փարիսեցիական հայտարարությունների օրերին, ինչպես գրում էր Ավետիք Իսահակյանը Բեռլինից Կոստանդնուպոլիս՝ Ա. Ահարոնյանին, «չքմեղելով փաստերը, սուտ ու փուտ կերպով մեղադրելով հայերին, Սելիմ բեյը տարածում էր առասպել, թե թուրքերի Կովկաս արշավելը հումանիտար, մարդասիրական գործ է՝ ազատել ավազակ արյունարբու հայերից Կովկասի իսլամ ժողովրդին»[25]։ Ռաուֆ բեյն իր հերթին հավաստում էր, թե Հայաստանը հարկավոր է Թուրքիայի հանգստության համար, «որովհետև դա երաշխավորություն է, որ թուրքահայերը հանգիստ կլինեն»։ Շողոքորթելով հայ պատվիրակներին, ծովակալը «հենվելով» պաշտոնական թուրքիա և հասարակական կարծիքի վրա, մատնանշեց, որ «Թուրքիայի ներքին գործերի մեջ» հայկական հանրապետության չխառնվելը «ավելին է անում հայերի համար, քան միջամտությունը՝ օգուտի տեսակետից»[26]։

Այսպիսով, Հայկական հարցը նորից ներկայացվում էր որպես Թուրքիայի ներքին գործ։

Ազգային խորհրդին զեկուցելով բոլոր հանդիպումների արդյունքների մասին, պատվիրակության դիվանի պետ Հ. Քոչարյանը գրում էր. «ընդհանրապես, խոսքերով պատասխանները գոհացուցիչ են, բայց ինչպես կլինի գործով՝ տեսննենք»[27]։ Բացվում էր և շողոքորթությունների, գաղթականների վերադարձի խնդրում խոստումների առատության և գործնական քայլերի բացակայության, հարցերի ձգձգման շղարշը։ Ազգային խորհրդին 1918 թ. հուլիսի 19-ին Ահարոնյանը հայտնում էր. «Թուրքերը արգելելով գաղթականների վերադարձը, հետապնդում են շատ պարզ քաղաքական նպատակ՝ թուրքացնել մեր բնակավայրերը մինչև կոնֆերանսը»[28]։

Թուրքիայի ղեկավար շրջանները գործնականում չլուծելով հայկական պատվիրակության առաջադրած ոչ մի հարց, քարոզչական մեքենայով ստեղծում էին թյուր կարծիք եվրոպական հասարակության մեջ Թուրք-հայկական բարեկամության, դրանից հայերի բավարարված լինելու, համատեղ գործելու մասին։ Եվ պատահական չէ, որ Թիֆլիս ժամանած Գերմանիայի զինվորական ներկայացուցիչ գեներալ ֆոն Կրես Կրեսենշտայնի, Ավստրո-Հունգարիայի զինվորական ներկայացուցիչ գեներալ բարոն Գեորգ Ֆրանկենշտայնի, Բուլղարիայի ներկայացուցիչ Կուլաշևի առաջին իսկ խնդիրը եղավ Հայաստանի Ազգային խորհրդի պատվիրակության (ղեկավար Ա. Սահակյան) անդամների հետ հունիսի վերջին Թիֆլիսում կայացած հանդիպման ընթացքում պարզել թուրքական վարկածի ճշմարտությունը՝ թե իբր, հայերը ցանկանում են ունենալ թուրքական հովանավորություն։ Ֆոն Կրեսը հայտարարեց, որ Գերմանիան Կովկասում ունի ոչ թե քաղաքական, այլ տնտեսական խնդիրներ և ցանկանում է ստեղծել բավական ուժեղ Կովկասյան ֆեդերատիվ պետություն, բացի դրանից, Գերմանիան կցանկանար հովանավորել Արևելքի քրիստոնյաներին[29]։

Նույնն էր պնդում և Բերնսդորֆը հունիսի 23-ին, Ա. Ահարոնյանի և Ա. Խատիսյանի հետ տեսակցության ժամանակ։ Դեսպանը մատնանշում էր, որ Գերմանիան կանգնած է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի տեսակետի վրա, առաջ է քաշում Վրաստանի և Հայաստանի՝ որևէ հիմունքներով «փոխադարձ համաձայնությամբ միանալու» գաղափարը, քանզի «Գերմանիան հատկապես հետաքրքրվում է Վրաստանով այն պատճառով, որ նրա և Վրաստանի միջև վաղուց ի վեր գոյություն ուներ առանձին համաձայնություն, իսկ Հայաստանի վերաբերմամբ՝ այդպիսի բան չկա»։ Բացի դրանից, ասաց Բերնսդորֆը, «Վրաստանը և Հայաստանը միացնելու միտքն ինձ թելադրում է այն հանգամանքը, որ, ինչպես ասում են, Վրաստանը առանց հայերի և հայկական ուժերի ու կապիտալի չի կարող գոյություն ունենալ»։ Նա նորից շեշտում է այն միտքը, որ Գերմանիայի և Վրաստանի միջև հուշագրերի փոխանակում է տեղի ունեցել, որոնց հետևանքով Գերմանիան պարտավորվել է ճանաչել Վրաստանի անկախությունը[30]։ Գերմանական դեսպանի ցանկությունն է, գրում էր Ա. Ահարոնյանը Հայոց Ազգային խորհրդին հուլիսի 19-ին, Կովկասում ապահովել.

1) անմիջական կարգ և մոդուս վիվենդի՝ մինչև պատերազմի վախճանը,
2) հայերի գոյությունը, ինչպես ապահովեցին վրացիներինը՝ քաղաքական ուրույն կազմակերպությամբ,
3) լուրջ մերձեցում առաջ բերել հայերի և վրացիների միջև կոնֆեդերացիայի կամ ֆեդերացիայի կամ մեկ այլ միջոցով,
4) Կովկասի մահմեդականներին թողնել Թուրքիայի հովանավորությանը, եթե իրենք ուզում են թուրքանալ,
5) անպայման վերջ դնել թուրքական հնարավոր առաջխաղացման պատճառներին և պատրվակներին, Հայաստանի խնամատարությունը հանձնել Ավստրիային։

«Ես հույս ունեմ հաջողել իմ ծրագիրը և մտածածը,— ասել է Բերնսդորֆը,— վրացիք օգտվում են մեր հովանիից, թաթարները՝ թուրքերի, դուք եք, որ մնացել եք օդի մեջ, թող ավստրիական հովանին էլ ձեզ վրա լինի, նամանավանդ, որ Ավստրիան բնավ կասկածներ չի հարուցանել, թե շահեր է հետապնդում, ինչ մեզ են վերագրում»[31]։

Բերնսդորֆին դրական պատասխան տալով ավստրիացիների հովանին ընդունելու մասին, Ահարոնյանը հուլիսի 19-ին Ազգային խորհրդին տեղեկացնում էր, որ Բերնսդորֆի հետ զրույցը եղել է «երես առ երես, շատ ծածուկ» և խնդրում էր իր նամակը խորհրդի նիստում չկարդալ, չհրապարակել, պահել գաղտնի։ «Ստիպված եմ Ձեզ խնդրել, աղաչել բացարձակ գաղտնիք պահել, մինչև տեսննենք, ինչ է դուրս գալիս։ Ջուրը չհասած չթրիկանանք»[32]։

Ահարոնյանի և Խատիսյանի հետ երկրորդ տեսակցության ժամանակ, հունիսի 26-ին, Բերնսդորֆը գլխավոր խնդիրը համարում էր այն, թե ինչպես թուրքերին ստիպել՝ գործադրել Բրեստի պայմանագիրը։ «Թուրքերը չափազանց շեշտում և պարծենում են նրանով, որ նրանք

առեղծեցին Հայաստան և ասում են, որ այնտեղ 800 հազար բնակիչ կա, իսկ ինքը նրանց պատասխանել է, որ հայերը գոհ չեն իրենց տարածքից: Արտաքին գործերի նախարարը դրան ոչինչ չի առարկել»[33],— ասել է գերմանական դեսպանը: Հայաստանի Հանրապետության և Հայոց Ազգային խորհրդին տեղեկացնելով գերմանական դեսպանի «միանգամայն հուսադրող և քաջալերիչ վերաբերմունքի մասին», ընկալվում էր և նրա կարգադրությամբ Բեռլին՝ հայկական պատվիրակության և Թիֆլիս՝ Կովկասի հետ կապ պահպանելու համար դեսպանատան ուղիղ հեռագրաթելը պատվիրակության տրամադրության տակ դնելու մասին: «Մեր ծածկագրով նրանց հեռագրաթելից օգտվելը անհարմար համարեցինք»,— գրում է Քոչարյանը: Դրա համար կար պատճառ. «Թուրք կառավարությունը իր հեռագրաթելը և փոստը դրել է մեր տրամադրության տակ, բայց հավաստի աղբյուրներից իմացանք, որ նրանց հեռագրատներում թվերը աղավաղվում են, ավելացվում են նոր թվեր. այսպիսի ծածկագիրը կարդալ չի լինի»[34]:

Գերմանական դեսպանը հայկական պատվիրակության ուշադրությունը հրավիրելով հայ-ռուսական հարաբերությունների վիճակի, հայերի նոր կողմնորոշման անհրաժեշտության, Կովկասում գերմանացիների և թուրքերի փոխհարաբերությունների, Բաքվի նկատմամբ վերջիններիս նկրտումների վրա, փորձում էր սեպ խրել հայ-ռուսական դարավոր բարեկամության մեջ: «Ես լավ հասկանում եմ, որ հայերը անցյալներում մնացած լինելով մենակ՝ պետք է ռուսական կողմնորոշում ունենային, դա հասկանալի էր և դրա համար մենք նրանց չենք մեղադրում, բայց այժմ մենք հավատում ենք, որ Ռուսաստանը արդեն բոլորովին անցել, գնացել է և այդ պատճառով մենք կուզենք Ձեզ ազնվորեն մոտենալ»,— ասել է Բեռնսդորֆը[35]:

Այն, որ Բեռնսդորֆը արտահայտում էր գերմանական քաղաքականության հիմնադրույթները, ցույց են տալիս Թիֆլիսում հրատարակվող «Կավկազիշե պոստ» թերթի հրապարակումները: Նրանցում հետևողականորեն սերմանվում էին հայերի՝ ռուսական քաղաքական և տնտեսական կողմնորոշման վնասակարությունը, հայերի՝ ռուսների կողմից խաբված լինելու միտքը: Հայերը երկար ժամանակ հավատ և հույս ունեին ռուսների հանդեպ, «հոժարությամբ քարշ էին գալիս ցարի կառավարության հետևից և զարմանալի միամտությամբ ու կարճատեսությամբ հավատում էին ռուսների ասածներին, թե Հայաստանի վերածննդի ժամանակը հասել է»,— գրում էր թերթը: Եվ ապա. «փոխանակ լեհերի, լիտվացիների, ֆինների օրինակին հետևելով՝ լոյալ, կրավորական դիրք ունենալու, նրանք կամավորական խմբեր կազմակերպեցին, որոնք ռուսական զորամասերի հետ Թուրքիա ներխուժեցին: Այդ կամավորական խմբերի գործունեության եղանակը տաճիկներին սաստիկ զայրացրեց և գերմանացիների ջանքերը՝ սոսկալի կոտորածը կանգնեցնելու, ապարդյուն անցան»: Թուրքական բարբարոսությունները, գրեթե ամբողջ արևմտահայության ոչնչացումը, մարդկանց հանդեպ ոճիրը՝ ցեղասպա-

նությունը համարելով «տխուր պատահար», թերթը դրա պատասխանատվությունը պատմության առաջ դնում էր «հայերի, ճիշտն ասած, նրանց վարիչների վրա, որոնք անգիտակցաբար ծառայեցին ռուսական իմպերիալիստական քաղաքականությանը, դարձան գործիք»: Փաստերի գիտակցաբար նման կեղծումից հետո Կովկասի գերմանացիների ազգային խորհրդի պաշտոնաթերթը դժգոհ արձանագրում էր. հայերը չեն դադարում ռուսներին «բարեկամ ձևանալուց», քանի որ «հայերի կարծիքով, դեպի Ռուսաստան տանող դուռը չի կարելի փակել»[36]:

Իր մոտեցումն ուներ և Ավստրո-հունգարական կայսրությունը: Կայսրության կառավարության հիմնադրույթները արտահայտեց 3. Պոմյանկովսկին հունիսի 23-ին, հայ պատվիրակների հետ զրույցի ժամանակ: «Հասկանալի է, որ հայերը հակված են դեպի Ռուսաստան, դա մի տեսակ ապահովագրում էր թուրքերի հանդեպ, բայց այժմ այդ հանգամանքը այլևս չկա, պետք է հասկանալ հայերի հոգեբանությունը, նրանք արժանի են ազատության և լավ տարածքի»[37]:

Կոստանդնուպոլսում հավատարմագրված դեսպանների հետ պարբերաբար հանդիպումների ժամանակ քննարկվում էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վավերացման, Բաթումի պայմանագրի անօրինականության, տարածքային, իսկ Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի դեսպանների հետ նաև Հայաստան զինվորական դիվանագիտական ներկայացուցիչ և զորք ուղարկելու, Հոլանդիայի դեսպանի հետ՝ թշվառ վիճակում գտնվող ռազմագերիներին նյութական օգնություն ցույց տալու հարցերը: Նրանց, ինչպես և թուրքական կառավարությանը հանձնվել էին քարտեզներ և տնտեսական, պատմական, աշխարհագրական բնույթի զեկուցագրեր ու տեղեկանքներ, հուշագրեր[38]:

Հայկական հարցին ըմբռնումով էր մոտենում Պոմյանկովսկին, որը «մեծ եռանդով և ամբողջ սրտով նվիրված աշխատում էր հայ գաղթականության վիճակը բարելավելու համար»: Բուլղարիայի դեսպանը, որը առաջին օրերից ի վեր դեպի Հայկական պատվիրակությունը «շատ բարյացակամ վերաբերմունք էր ցույց տվել» և հաճախ օգնել իր տեղեկություններով, հայտնել էր նաև Գերմանիայի ու Բուլղարիայի՝ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի կապակցությամբ Թուրքիային արած հայտարարությունների մասին: 1) Նրանք ընդունում են Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը և 2) պահանջում են Կարսի և Բաթումի ինքնորոշումը՝ մասնակցությամբ տեղական բնակիչների և հարևան պետությունների ներկայացուցիչների: Այդ առաջարկությանը թուրքերը պատասխանել են մերժումով, ասելով՝ «եթե Գերմանիան կոնֆերանս է հրավիրում դրա համար՝ Թուրքիային դա հարկավոր չէ»[39]: Գերմանիայի դեսպանը կարծում էր, որ Բաթումի պայմանագրի վավերացման խնդիրը պետք է թողնել բաց, քանի որ Կոստանդնուպոլսի կոնֆերանսը Բաթումի բանակցությունների շարունակությունն է[40]:

Ամփոփելով Կոստանդնուպոլսում հանդիպումների, բանակցությունների և քննարկումների առաջին արդյունքները, 1918 թ. հուլիսի 19-ին

Ա. Ահարոնյանը գրում էր Ազգային խորհրդին. «Ես անձամբ լավատես եմ և համառ՝ մեր հույսերի և մանավանդ պահանջների վերաբերմամբ։ Խատիսյանը ավելի սկեպտիկ է, Պապաջանյանը՝ վարանոտ։ Ի՞նչ են մտածում թուրքերը դեպի Բրեստ-Լիտովսկի սահմանները հետ գնալու մասին՝ տակավին չիմացանք, բայց բոլոր դեսպանները՝ բուլղարական, գերմանական և ավստրիական, միաբերան պնդում են, որ իբր թե Բաթումի դաշնագիրը չեն ընդունում և չեն ընդունելու և այս հայեցակետը պիտի լինի առաջիկա կոնֆերանսի հիմունքը։ Ուրախ եմ նույնպես, որ ռուսական դեսպանը Բեռլինում՝ Իոֆֆեն, նույնիսկ լսել չի ուզում Բաթումի պայմանագրի մասին, և գերմանական դեսպանը խիստ կատեգորիկ կերպով հայտարարել է, թե այս և այն խնդիրներում մենք ստիպված ենք համակերպվել Ռուսաստանի պահանջներին, որովհետև բնավ ցանկություն չունենք Ռուսաստանի հետ նոր կռիվ սկսել»[41]։

Հայոց Ազգային խորհրդի բեռլինյան պատվիրակության հետ համախորհուրդ գործող Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակության համար, այսպիսով, գնալով պարզվում էր, որ կոնֆերանսը, որին մասնակցելու համար նրանք շտապ հրավիրվել են Կոստանդնուպոլիս, շուտով չի կայանալու։ Պատճառներից մեկն էլ Բրեստի և Բաթումի պայմանագրերի հարցում գերմանա-թուրքական հակասությունն էր։ Ակնհայտ էր դառնում, որ Հայկական հարցի և ընդհանրապես Անդրկովկասին վերաբերող բոլոր հարցերի լուծման ծանրության կենտրոնը տեղափոխված է Բեռլին։ Այստեղ չէր ընդունվում Բաթումի պայմանագիրը, աշխատանք էր տարվում Բրեստի դաշնագիրը վավերացնելու համար։ Հայ պատվիրակների այն հարցին, թե ինչպես վարվել Բաթումի պայմանագրի վավերացման հետ, Գյոպերտը, հենվելով Քյուլմանի կարծիքի վրա, հունիսի 30-ին ասել է. «Մենք ձեզ խորհուրդ տալ չենք կարող, քանի որ դուք անկախ պետություն եք. ձեր գործն է՝ ինչպես վարվել այս կամ այն դեպքում։ Մենք ձեզ ասում ենք, որ մենք առհասարակ այդ Բաթումի հունիսի 4-ի պայմանագիրը չենք ընդունում, վավերացված կամ չվավերացված, դա միևնույնն է, չենք ընդունում, որովհետև դա կայացել է առանց մեր մասնակցության։ Իսկ մենք մեր դաշնակիցների հետ պայման ունենք, որ ոչ ոք մեզանից անջատ պայմաններ որևէ այլ պետության հետ կապելու իրավունք չունի»։

Օհանջանյանի հարցին, թե ինչպիսի դիրք կբռնի Գերմանիան, եթե հայերի վավերացման մերժումով տաճիկները նորից առաջ անցնեն և գրավեն Հայաստանի տարածքի մնացորդները, Գյոպերտը պատասխանել է, որ «չի հավատում այդ բանին, քանի որ նրանք պայմանավորվել են թուրքերի հետ, որ այլևս առաջ չգնան»։ Հայերի կողմից վավերացման դեպքում կստեղծվի անհարմարություն իրենց համար «կոնֆերանսին մասնակցել-չմասնակցելու հարցում», ասել է նախարարի տեղակալը, միաժամանակ, հավանություն չտալով Հայաստանի կառավարության պաշտոնական ներկայացուցիչների Բեռլին գալուն, քանզի դրանով «գրգռած կլինեն տաճիկներին»[42]։ Նույն միտքը հունիսին հայտնել էր Ֆոն

Լոսովը. Գերմանիան պաշտոնապես հայտնել է Տաճկաստանին, որ Բաթումի պայմանագիրը համարում է չեղյալ և ուրեմն ոչ մի խոսք չի կարող լինել վավերացման մասին։ Նույնը կրկնել է Ռոզենբերգը։ Լոսովը ասաց, գրում էր Օհանջանյանը հունիսի 29-ին, որ ոչ միայն չի կարող խոսք լինել վավերացման մասին, այլ որ Գերմանիան շատ խիստ կերպով պահանջել է, որ տաճիկները բոլորովին մաքրեն գրաված վայրերը մինչև Բրեստի դաշնագրով նախատեսած սահմանները։ Գեներալը, միաժամանակ ասում էր, որ չի հավատում թուրքերի տարածած լուրերին, թե հայերը կարող են լինել թուրքերի հետ, կրկնում էր այն միտքը, որ «տաճիկներին երբեք չի կարելի վստահել և հավատալ նրանց խոսքին։ Դա կլինի ուղղակի կորուստ հայերի համար»։ Եվ ապա. «Գերմանական կառավարությունը շատ որոշ և վճռական կերպով որոշել է Բրեստի պայմանագիրը ամբողջությամբ անխախտ պահել և կարող է նույնիսկ խնդիր լինի, որ գրավված Կարսի, Արդահանի և Բաթումի ազգություններն էլ պահանջի, հիմնավորելով, թե քանի այդտեղ կլինի տաճկական զորքը, ազատ կամքի ոչ մի արտահայտության մասին խոսք լինել չի կարող»[43]։

Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը և զինվորական հրամանատարությունը գործում էին գլխավոր զորակայանում մշակված քաղաքական և ռազմական միասնական ծրագրով, որին հայ պատվիրակները ծանոթ չէին։ Նրանք շարունակում էին իրենց դիվանագիտական առաքելությունը։ Պատվիրակները մի շարք հանդիպումներ ունեցան պետական քարտուղար Քյուլմանի, այդ պաշտոնում նրան փոխարինած ծովակալ Հինցեի (մինչ այդ դեսպան էր Նորվեգիայում, տասը տարի Մոսկվայում եղել էր դեսպանության զինվորական կցորդ), նախարար Ռոզենբերգի, նրա տեղակալ Գյոպերտի, նախարարության քարտուղար Վեզենդոնկի, գեներալ Լոսովի, դեսպան Բերնսդորֆի, Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթ փաշայի, դեսպան Հագգը փաշայի, Ռուսաստանի դեսպան Ա. Իոֆֆեի, Բուլղարիայի դեսպան Նիկիֆորովի, Չեխենկելու և նրա ղեկավարած վրացական պատվիրակության անդամների, Ուկրաինայի նախարար-նախագահ Լիզեգուբի (եղել էր Կովկասում փոխարքայության խորհրդի անդամ), Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ամբրոցիի, առաջին տեղակալ Ֆլոտոֆի, Վիեննայում գերմանական դեսպան Վեդելի, Հռոմի պապի պատվիրակի հետ։ Ռազմական բնույթի հարցեր բաղենում քննարկվեցին գլխավոր հրամանատար Արցի, Տրաուտմանսդորֆի, բարձրաստիճան զինվորականների հետ։

Հանդիպումների և քննարկումների արդյունքների, ներկայացված հուշագրերի մասին պատվիրակությունը Բեռլինից և Վիեննայից տեղեկացրեց ավելի քան 50 զեկուցագրերում, նամակներում և հեռագրերում՝ Կոստանդնուպոլսում գտնվող հայկական պատվիրակությանը, որի հետ գտնվում էր մշտական սերտ կապի մեջ, Հայաստանի կառավարությանը և Ազգային խորհրդին, որոնք արդեն գործում էին Երևանում։ Պատվիրա-

կությունը կապեր էր հաստատել պարսկական դեսպանի հետ, աշխատանքներում ներգրավել էր նաև դոկտորներ Դրինֆելդին, Լոհրբախին, Մարկվարտին, Աքսելֆելդին, Լիխտերին, Ստրժիգովսկուն և այլ ճանաչված գիտնականների և միսիոներների, Շվեյցարիայում գտնվող Ավետիք Իսահակյանին։

Գերմանիայի արտաքին գործերի նախարարությանը հուլիսի 5-ին ներկայացրած հուշագրում հաստատվում էր այն միտքը, որ Հայաստանի վերաշինությանը մեծապես խանգարում են պատերազմի հետևանքով ավերածությունները, մարդկային ահռելի կորուստները, թուրք-թաթարական ասպատակությունները, աշխատուժի և ինքնապաշտպանության մարտիկների սակավությունը։

Հաշվի առնելով Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում մոտ 10 հազար հայ ռազմագերիների առկայությունը, պատվիրակությունը խնդրում էր հնարավորություն ստեղծել նրանց Սև ծովով՝ Փոթիի վրայով հայրենիք վերադառնալու համար։ Օհանջանյանը և Զուրաբյանը կարծում էին, որ վերադառնալով հայրենիք, նրանք պիտանի կլինեն ինչպես տնտեսական ձեռնարկությունների, նույնպես և զորքի կազմի ու պետական ծառայության մեջ[44]։

Հուլիսի 19-ի հուշագրով, կից փաստաթղթերով, ցույց էր տրվում այն ահռելի վտանգը, որ կախված էր կովկասահայերի գլխին, ոչնչացման վտանգը, որ սպառնում էր քաղցից, հիվանդություններից և հալածանքից տանջվող հայ փախստականությանը։ «Թուրքերը շարունակ գրավում են հայկական նոր գավառներ, փախստականների խմբերը աճում են օրեցօր և թուրք զորքերի և թաթար հրոսակախմբերի արյունալի բռնությունները երկյուղալի չափեր են ընդունում։ Անցնող ամեն մի օր մեծացնում է թշվառությունը և պահանջում է մեր ազգից նոր զոհեր, միայն մի արագահաս օգնություն կարող է թերևս, կովկասահայերին իրենց Տաճկաստանի հայրենակիցների ճակատագրին ենթարկելուց ազատել»,— գրում էին հայ պատվիրակները։ Նրանք խնդրում էին գերմանական կառավարությանը շուտափույթ զորք ուղարկել Բրիստի պայմանագիրը արժեքավորելու, հայերին՝ մինչև թուրքերի կողմից հայկական գավառների պարպելը, հալածանքներից պաշտպանելու, փախստականների վերադարձը իրենց հայրենիք գլուխ բերելու և նրանց հովանավորելու համար։ Խնդրվում էր այդ նպատակի համար ուղարկել ընդամենը 3—4 հազար զինվոր[45]։ Դոկտոր Աքսելֆելդին հուլիսի 22-ին հանձնված նամակում նշվում էին այդ զորամիավորումների՝ Հայաստանում տեղակայման վայրերը և զինվորների թվաքանակը։ Ալեքսանդրապոլի շրջան 500 մարդ, Ախալքալաքի՝ 300, Սուրմալուի՝ 300, Նախիջևանի՝ 400, Երևանի՝ 300, Էջմիածնի՝ 400, Շարուր-Դարալագյազի՝ 400, Գանձակի նահանգում՝ 500։ Ակնկալվում էր, որ «Գերմանական զորքի հենց միայն ներկայությունը բավական կլիներ հայ ազգաբնակչության վրա հանգստացուցիչ ազդեցություն թողնելու և թուրքական հարձակումներն ու անկարգությունները սահմանափակելու համար»[46]։

Նույն օրը՝ հուլիսի 22-ին, Օհանջանյանը հայտնում էր Կոստանդնուպոլիս. «Աքսելֆելդը իրենից ներկայացնում է որոշ չափով արտաքին գործերի նախարարության բերանը, նրա միջոցով մենք բաներ ենք իմանում և մեր ասածները հոն հասցնում։ Նա ասաց, որ Գերմանիան ոչ մի միջոց չունի իրապես ազդելու տաճիկների վրա, որովհետև Գերմանիան չի կարող ինքնասպանություն գործել և պատերազմ հայտարարել Թուրքիային կամ նույնիսկ չտալ նրան զենք և փող, քանի որ Թուրքիան այդ զենքը և փողը գործադրում է Միջագետքի և Պաղեստինի ճակատներում, ընդհանուր թշնամու դեմ։ Շատ մարդ էլ չի կարող ուղարկել, որովհետև ինքը մարդու տեսակետից շատ նեղ դրության մեջ է։ Տպավորությունն այն է, որ իրապես մեզ օգնել չպիտի կարողանա Գերմանիան, ինչպես կարծում են Աքսելֆելդը և նրան ներշնչողները»[47]։

Արտաքին գործերի նախարար Հինցեին փախստական հայերի թշվառ վիճակի, նրանց հայրենիք վերադարձնելու, այնտեղ բերքը հավաքել թույլատրելու մասին հայտնում էր Կովկասում Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսը՝ հուլիսի 10-ին, 13-ին, 20-ին։ «Թուրքերի միտքը պարզ է՝ հայերին մատնել սովամահության, էսաղը խնդրում է ինձ ոչ մի դեպքում չհամաձայնվել հայերի ցանկությունների հետ»,— գրում էր Կրեսը։ Հուլիսի 11-ին Կրեսը հայտնում էր կանցլեր Հերտլինգին. «Միայն Գերմանիան կարող է ստիպել Թուրքիային հրաժարվել հայ ժողովրդի վերջին մնացորդներին սովամահ անելու իր մտադրությունից։ Իմ անձնական կարծիքն այն է, որ թուրքերն իսկապես ուզում են հայերի սովամահությունը։ Հարցի էությունը ոչ միայն նրանում է, որ կարող է ստեղծվել տպավորություն ամբողջ քրիստոնեական աշխարհում, թե չենք ուզում փրկել հայերին կործանումից։ Մեր շահերը Կովկասում և մոտակա ընկած մարզերում կարող են չարդարացվել, եթե մենք հայերին չփրկենք։ Այդ պատճառով ես խնդրում եմ Ձերդ պայծառափայլությանը օգտագործել Ձեր ազդեցությունը թուրքական կառավարության վրա, ստիպել նրան իր զորքերը դուրս հանել Հայաստանից»[48]։

Իր տեղեկություններն էր տալիս Բերնսդորֆը։ «Այստեղ հայկական պատվիրակությունն ամեն օր խնդրում է ուղարկել գերմանական կամ ավստրո-հունգարական չոկատներ, զինագրավել Հայաստանը։ Առանց մեր միջամտության հնարավոր չէ ճնշել անարխիան Հայաստանում։ Ահարոնյանը ներկայացրել է հուշագիր մեծ վեզիրին՝ Հայաստանի վիճակի մասին։ Թալեաթ փաշան արել է սովորական հայտարարություն՝ դա հնարավոր չէ»,— հուլիսի 25-ին գրում էր դեսպանը։ Չհապաղեց Հինցեի պատասխանը. «Գերմանացիների ազդեցությունը արևելքում խիստ կթուլանա, երբ կես միլիոն քրիստոնյաները մահանան քաղցից։ Այդ կարծիքին են նաև ավստրո-հունգարական գործարար շրջանները։ Այդ ոգով էնվեր փաշայի վրա խնդրում է ազդել նաև Գերագույն գլխավոր հրամանատարությունը»[49]։

Հայ պատվիրակների խնդրանքը կրկնվում էր և օգոստոսի 2-ի, 5-ի, 8-ի հուշագրերում, որոնք կազմվեցին Գերմանիայի արտաքին գործերի

գծով պետական քարտուղար Հինցեի հետ հուլիսի 26-ին ունեցած հանդիպումից և նրա բարեհաճ համաձայնությունը ստանալուց հետո։ Այդ հուշագրերում խնդրվում էր նաև ճանաչել Հայաստանի պետական անկախությունը, Երևանում նշանակել գերմանական դիվանագիտական ներկայացուցիչ առևտրական կոմիսար կամ ներկայացուցիչ, պարտավորվելով անմիջապես առաքել Գերմանիա պղինձ և բամբակ[50]։

Հինցեի հետ զրույցից ստացած ընդհանուր տպավորությունն այն էր, որ Գերմանիան հնարավորություն չպետք է ունենա Հայաստանին իրապես օգնել, ստիպելով Թուրքիային հեռանալ գրաված վայրերից, որովհետև Գերմանիան շատ էր վախենում, որ Թուրքիան կարող է միանալ Անգլիային ու Ֆրանսիային, այդպիսով, կազատվեր Համաձայնության երկրների համար մոտ մեկ միլիոն զորք, որ նրանք պահում էին Թուրքիայի դեմ զանազան ռազմաճակատներում։

Հինցեի հետ հանդիպման մասին Հ. Օհանջանյանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հայոց Ազգային խորհրդին տեղեկացրեց հուլիսի 27-ին։ «Ընդունելությունը շատ սիրալիր էր, բայց պաշտոնական։ Մեր կարճ, բայց լրիվ զեկուցումից հետո մեր հայրենիքի դրության մասին, նախարարն ասաց, որ այսօր նա միայն ծանոթանում է մեզ հետ, իսկ գործի էությանը և խնդիրներին դեռևս ժամանակ չի ունեցել ծանոթանալու, բայց և այնպես ավելացրեց նա, եղեք հանգիստ, մեր սրտին մոտ է հայ ժողովրդի ցավը և վիճակը, նամանավանդ, այն հարյուր հազարների դրությունը, որոնց մասին դուք ինձ պատմեցիք, և մենք կանենք ամենը, ինչ հնարավոր է Ձեր հայրենիքին օգնելու համար։ Մեզ էլ առաջարկեց լինել discret (գաղտնապահ), համաձայնելով մեր առաջարկության հետ ներկայացնել նոր հուշագիր»[51]։

Կառավարության ուշադրությունը Օհանջանյանը հրավիրում էր հենվելով Լոսովի և Ավետիք Իսահակյանի կարծիքների վրա։ «Ձեր դրությունը վատ չի կարող լինել, որովհետև ձեր կողմն է entante-ն»,— ասել է Լոսովը, այսինքն, իրենք չեն կարող օգնել։ Իսահակյանի ասելով «entante-ի բոլոր պետությունները և նրանց առաջին նախարարները և նախագահները շատ վճռական կերպով են արտահայտվել Հայաստանի առաջարկների վերաբերյալ, դնելով պատերազմի նպատակներից մեկը նաև Հայաստանի ազատագրումը տաճիկներից»[52]։

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակը, կատարելով գերմանական իշխանությունների պատվերը, գրում էր Ժնև՝ Ավետիք Իսահակյանին, ամեն միջոցներով «ճնշել և անդամալուծել» յուրաքանչյուր հակագերմանական քարոզչություն, որպես «վնասակար՝ հայերի ազգային շահերին»[53]։

Ամերիկահայերի մանդատով գալով Բեռլին, Ավ. Իսահակյանը հուլիսի 27-ին հանդիպեց նախարարի տեղակալ Գյոպերտի, ապա շատ այլ գործիչների հետ։ Հանդիպումների արդյունքների մասին մեծ բանաստեղծը երկու նամակներով՝ օգոստոսի 4-ին և 9-ին հայտնեց Կոստանդնուպոլիս՝ Ա. Ահարոնյանին[54]։ «Գերմանական շրջաններում այն

կարծիքն է տարածված, թե նվաստիս ղեկավարությամբ Զվիցերիայում մղվում է հակագերմանական պրոպագանդա, սակայն, ճշմարտությունը այդ չէ, այլ այն, որ ես, մի քանի ընկերներով հիմնել ենք «Հայ մամուլի գործակալություն»՝ մամուլին սուտ լուրեր տալու և հերքելու միտումնավոր լուրերը։ Մեր պրոպագանդների շուրջը ծագած թյուրիմացությունների համար էր, որ եկա այստեղ»,— գրում է Իսահակյանը։

Նկարագրելով Գյոպերտի հետ ունեցած զրույցի մանրամասնությունները, Իսահակյանը գրում է. «Գյոպերտը դարձավ գլխավոր խընդրին, որի համար ինձ տեսնել էին կամեցել։ Ասաց, թե մեր սրտին մոտ է հայ ժողովրդի վիճակը, մենք պետք է անենք ինչ կարող ենք, չնայելով, որ դուք հայերդ, պրոպագանդա եք արել և անում եք ու ողջ աշխարհը մեր դեմ գրգռելու պատճառ եք հանդիսացել։ Ես պատասխանեցի, թե արտասահմանում հայերի կողմից Համաձայնության մամուլում և չեզոք մամուլում Գերմանիայի դեմ թշնամական պրոպագանդա չի եղել կամ գրեթե չի եղել։ Մենք մեծ տարբերություն ենք դնում գերմանացու և թուրքի մեջ և բացի այդ մեր մեջ կան բավական թվով գերմանաֆիլներ և քաղաքականապես հասուն մարդիկ, որ քաղաքական նկատառումներով հարձակումներ չեն արել գերմանացու դեմ»։ Բերել է Պողոս Նուբար փաշայի օրինակը, որը դեռևս 1916 թ. գրել էր Ժնև՝ «ոչ միայն գերմանացու դեմ պրոպագանդա չանել, այլև թուրք ժողովրդի և իսլամի դեմ, պրոպագանդա անել միայն ջարդերը հրամայողների դեմ»։ «Սակայն մենք չենք կարող ազդել ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, իտալական մամուլի վրա, որը Ձեզ մեղադրում է հայկական սարսափելի ջարդերի պատասխանատվության մեջ,— ասել է Իսահակյանը,— այդ կարող եք անել դուք, որ ամենակարող եք՝ ճանաչել տալով Թուրքին բրեստյան սահմանները և ստիպելով դադարեցնել ջարդերը»։

Գյոպերտն ավելի շատ զայրացած էր, ինչպես գրում է Իսահակյանը, կամ ավելի որոշ ասած վիրավորված, որ Բրեստյան դաշնագրից հետո, երբ տեղի ունեցավ Արդահանի ջարդը, Ժնևի հայերը հեռագրեր ուղարկեցին Հռոմի պապին, Իսպանիայի թագավորին և սոցիալիստ Բրանտինգին։ Պատասխանել է, ինչ որ պետք էր։ Եվ ապա, օգոստոսի 9-ի նամակում. «Երբ շուտով Զվիցերիա գամ, պիտի նորից դիմում անեմ պապին, Իսպանիայի թագավորին և այլ չեզոքների»։

Գյոպերտի և գերմանական այլ պետական, քաղաքական, կրոնական գործիչների հետ խոսակցություններից Իսահակյանի ստացած տպավորությունն այն էր, որ Գերմանիան ցանկանում է օգնել հայերին ընդունել տալ Բրեստյան սահմանագիծը, սակայն դրա իրագործման համար, եթե թուրքերը հակառակվեն, չի դիմելու ոչ մի խիստ միջոցի չուզենալով իր չորս տարվա դաշնակցի հետ «հարաբերությունները փչացնել, սառեցնել, վատացնել»։

«Հայերին օգնելու մեջ նա միմիայն մի շահ ունի— մորալ, բարոյական, որը սակայն այնքան չի կշռվում, դժբախտաբար, քան մարգանեցը կամ նավթը։ Բայց այդ նավթը կամ մարգանեցը նրան չտվին ու չեն տա

հատուցումը մի չնչին մասի այն հսկա վնասի, որը ստացան հայկական ջարդերի պատճառով»,— գրում էր Խահակյանը։ Նա մեջբերում է պրոֆ. Ռիխտերի խոսքերը, որոնք ասվել են հանդիպման ժամանակ. «Գերմանիան շատ մոտ է վերցնում իր սրտին հայերի վիճակը, որ գրեթե անհույս մի կրիզիս է անցկացնում։ Նա՝ Գերմանիան, չի կարող թողնել, որ մի ամբողջ ազգ ոչնչանա, բայց Թուրքիան խարեությամբ ու խորամանկությամբ, արգելքներ է առաջացնում իր բարի կամքին և զանազան պատրվակներով իր դաժան ծրագրերը իրագործում»։

Այսպիսի խոսքեր շատ ենք լսել, գրում էր Խահակյանը, լսել ենք և տարիներ առաջ, լսում ենք և հիմա, սակայն մեր նահատակ ժողովուրդը, փաթաթված թշնամիներով, օր-օրի վրա հալվում է՝ այս վիթխարի արյան օրգիայի մեջ, որ մեր թշնամիները և հարևանները սարքում են մեր հայրենիքում։ Խոսքեր ասում են, բայց չեն օգնում։ Դա հաստատվեց Գյոպերտի հետ ունեցած զրույցի ժամանակ։ «Իմ հարցին, թե անհրաժեշտ է զորք ուղարկել Հայաստան, նա պատասխանեց, թե մենք մարդու կարիք ունենք, ամեն մի մարդ մեզ պետք է, տեսնենք, թերևս, ավստրիացիների հետ միասին մի բան անենք»։

Հենվելով արտասահմանյան թերթերի տեղեկությունների վրա, Խահակյանը գրում էր թուրքերի ծրագրերի մասին, այն է՝ ոչնչացնել և ռուսահայությանը, եթե զենքի ուժով թուրքերը այդ անել չկարողանան, ապա պիտի հաջողեն իրականացնել քաղցով, հիվանդություններով, սովամահությամբ, սիրաշահելով, խորամանկությամբ ու ստով։ Ավետիք Խահակյանը վճռականորեն գրում էր. «Չպետք է հավատալ թուրքերին»։

Գտնելով, որ Բրեստի պայմանագիրը ցնորք է, ոչ Ռուսիան է մեռած, և ոչ Թուրքիան վերակենդանացած և ոչ էլ վերջնական խոսք է ասված պատերազմի ելքի մասին, Խահակյանը Հայոց պատվիրակությանը տեղեկացնում էր Հայաստանի հարցում Գերմանիայի պաշտոնական կարծիքը՝ արտահայտված Գյոպերտի միջոցով. «Պետք է վաղօրոք ունենալ ռուսների համաձայնությունը, նրանք արդյոք գերմանական օգնությունից դժգոհ չեն լինի, քանի որ չեն ճանաչում Ձեր անկախությունը»[55]։

Ազգային խորհրդի պատվիրակության անդամներին Ռուսաստանի մոտեցումը հայտնի էր դարձել արդեն հուլիսի 1-ին՝ Իոֆֆեի հետ հանդիպման ժամանակ։ Դեսպանը հայտարարել էր, որ Ռուսաստանը ոչ մի դեպքում չի ընդունի Վրաստանի և Հայաստանի անկախությունը և հատկապես նրա համար, որ անխախտ պահվեն Բրեստի պայմանագրով ընդունված սահմանները։ Նրա համոզմամբ, ոչ վրացիները, ոչ հայերը, հատկապես հայերը, համաձայն չեն լինի անկախության հետ, չեն ցանկանա բաժանվել Ռուսաստանից[56]։

«Խնդիրը կարծես թե նոր բնավորություն է ստանում և մեր առաջ գրվում է նորից Ռուսաստանի հետ լինելու, նրա մեջ որոշ մաս կազմելու խնդիրը. վրացիները ամեն կերպ աշխատում են ազատվել Ռուսաստա-

նից, թեկուզ մենակ,— գրում էր Օհանջանյանը Կոստանդնուպոլիս, հուլիսի 7-ին,— ռուսաց դեսպանի ասածներից երևում է, որ նրանք ստիպված պիտի լինեն հաշտվել Վրաստանի անկախության հետ, իսկ Ադրբեջանը և Հայաստանը կպահեն իրենց հետ կապված և, ինչ որ գլխավորն է, հույս ունեն տաճիկներին քշել այդ երկու երկրների սահմաններից մինչև Բրեստի սահմանները, կամ գերմանացիների միջոցով կամ նույնիսկ իրենց սեփական ուժերով»[57]։

Հայաստանը Ռուսաստանի կազմում պահելու միտումը երևում է նաև Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանի պաշտոնում Ռոստոմ Զորյանի թեկնածության քննարկման փաստից։ Ռուսաստանը Պոլսում դեսպան չունի, գրում էր Օհանջանյանը հայկական պատվիրակության օգոստոսի 10-ին, Իոֆֆեն առաջարկում է Ռոստոմի թեկնածությունը։ Նրա «ինչու չի կարող Ռոստոմը դեսպան լինել» հարցին Օհանջանյանը պատասխանում է. «անհարմար է դաշնակցական ղեկավարին Ռուսաստանի պետության ներկայացուցիչ նշանակել»։ «Բայց և այնպես,— գրում է Օհանջանյանը,— Իոֆֆեն առաջարկեց ինձ, իհարկե ոչ պաշտոնական կերպով, գրել Ձեզ, խնդրելով Ձեր պաշտոնական կարծիքը այդ խնդրի առթիվ»[58]։

Ռուս-գերմանական բանակցությունների ընթացքում, որոնք Բրեստի պայմանագրի լրացուցիչ կետերի ընդունման կապակցությամբ տեղի էին ունենում Բեռլինում, ռուսական դիրքորոշման մեջ երևան եկան նոր ճշգրտումներ։ Ռուսական դեսպանի հաղորդման համաձայն, Ռուսաստանի և Գերմանիայի միջև կնքվելիք քաղաքական պայմանագրի գլխավոր կետերն էին. 1. ճանաչել Վրաստանի անկախությունը, 2. Գերմանիան երաշխավորում է Ադրբեջանի և Հայաստանի վերաբերյալ Բրեստի պայմանագրի պահպանումը, 3. Ադրբեջանը և Հայաստանը մնում են Ռուսաստանի սահմաններում, 4. Բաքուն մնում է Ռուսաստանի սահմաններում, Ռուսաստանը երաշխավորում է Գերմանիային որոշ քանակությամբ և տարիֆով նավթ՝ յուրաքանչյուր տարի։ Ա. Իոֆֆեն Ա. Զուրաբյանին հուլիսի 16-ին հայտնում էր, որ այդ բոլոր պայմանները գեներալ Լոսովի միջոցով ներկայացված են գլխավոր բանակատեղի և սպասում են պատասխանի։

Հայ պատվիրակները տեղեկացան Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բուլղարիայի կոալից Բրեստի դաշնագրի՝ հուլիսի առաջին կեսին վավերացման մասին։ Դաշնագրերը վավերացնելու ցանկություն էր հայտնել և Հազգր փաշան։ «Այդ վերջին հարցը բավականին կնճռոտ է, որովհետև Թուրքիան ոչ միայն խախտել և խախտում է պայմանագիրը, այլև հայերի հետ կապված պայմանագրի մեջ կա կետ, որի հիման վրա Բրեստի պայմանագիրը ընդունվում է այն չափով, ինչ չափով չի հակասում Բաթումի պայմանագրին։ Իմ կարծիքով,— ասել է Իոֆֆեն,— եթե Ռուսաստանն առանց որևէ պայմանի ընդունի Տաճկաստանի ստորագրությունը, այդ պարագայում այս վերջինը կոս-

տանդնուպոլիս կոնֆերանսում անհամեմատ ազատ կզգա։ Ուստի, ավելի լավ կլինի, որպեսզի որոշ հարցեր ձգձգվեն մինչև Կոստանդնուպոլսի կոնֆերանսը, որին ներկա կլինի և Ռուսաստանի ներկայացուցիչը»։ Արդեն հայտնի էր և կոնկրետ անձը՝ Գ. Սոկոլնիկով։

Գերմանիայի և Ռուսաստանի դիվանագետների միջև բանակցությունները շարունակվում էին այն ոգով, որ Թուրքերին արգելվի Շամախուց շարժվել դեպի Քուռ գետը կասպից ծովը թափվելու տեղը, նրանց անցնելու դեպքում գերմանացիները պետք է դիմադրեն թուրքերին և զինական ուժով, կանգ չառնելով նույնիսկ Թուրքիային պատերազմ հայտարարելու առաջ։ Անդրկովկասի մնացած վայրերում Գերմանիան դեմ չի լինի և չի համարի իր համար բնականոն, երբ ռուսները զինական ուժերով ուզենան դուրս քշել թուրքերին, մինչև Բրեստի սահմանները, Գերմանիան չի օգնելու իր դաշնակցին Ռուսաստանի դեմ ռազմատենչ նոր գործողություններ մեջ։ Սակայն «ստիպել թուրքերին բոլորովին հեռանալ գրաված վայրերից, Գերմանիան չի կարող, որովհետև դրա համար պատերազմել թուրքերի հետ մտադիր չէ։ Այդ դեպքում Թուրքիան կանցնի Անտանտի կողմը և վերջինս միանգամից կունենա ազատված մեկ միլիոն զորք Միջագետքի, Սիրիայի և Եգիպտոսի ճակատներից»։ Այս մտավախությունը Գերմանիայի գործողության հիմնահարցն էր։ Իոֆֆեն ասել էր նաև, որ ռուսները կպահանջեն Գերմանիայից հակառակվել Թուրքիային Հայկական գավառների հարցում, ինչպես հակառակվել են Բաքվի հարցում, իսկ իրենք կգործադրեն ճնշում Թուրքիայի վրա, երբ ուժեղանան[59]։

Իոֆֆեի կողմից ժողկոմխորհ՝ Մոսկվա, համաձայնության համար ներկայացրած գլխավոր կետերն էին. 1. Բարուն ազատ բաղաք՝ իր շրջակայքով և Թուրքերը ոչ մի դեպքում չպետք է գրավեն այն, 2. Ռուսաստանը չի բողոքի Վրաստանի անկախության Գերմանիայի կողմից ընդունելու դեմ, 3. Գերմանիան չի աջակցի Թուրքիային նրա գործողություններում՝ Հայաստանում և Ադրբեջանում և չի բնդդիմանա Ռուսաստանին, եթե վերջինս իր ուժերով կարողանա դուրս քշել թուրքերին գրաված երկրներից մինչև Բրեստի սահմանները, Գերմանիան նույնիսկ հետ կքաշի իր տեխնիկան թուրքական զորքից և դիվանագիտական ճանապարհով կօգնի Ռուսաստանին և Հայաստանին՝ հայկական հողերը պարպելու գործում։

Հայկական պատվիրակության, բայի Իոֆֆեի հետ հարցը քննարկելուց, իր կողմից օգոստոսի 8-ին հատուկ բողոք-հուշագիր էր ուղարկել Մոսկվա՝ ժողկոմխորհ, Հայաստանի անկախության ճանաչման և վերոհիշյալ այն կետերի առիթով, որով Հայաստանը զրվում էր այլ դրության մեջ, քան Վրաստանը, զրանով իսկ վտանգելով հայերի ֆիզիկական գոյությունը։ «Վրաստանը Գերմանիայի հովանավորությամբ, իսկ Ադրբեջանը Թուրքիայի հովանավորությամբ արդեն հիմա էլ ձգտում են ամեն կերպ մասամբ անել Հայաստանը և դարձնել նրան մի այնքան փոքր երկրամաս, որ դրանով չի կարող ունենալ բաղաքա-

կան գոյություն և չի կարող պաշտպանել հայ ժողովրդի կենսական շահերը և ֆիզիկական գոյությունը»,— գրում էր Օհանջանյանը Զավրիյանի միջոցով ուղարկած բողոք-հուշագրում[60]։

Հայկական պատվիրակության տեսակետի մասին Մոսկվա հայտնեց և Իոֆֆեն օգոստոսի 10-ի զեկուցագրում։ Ջստանալով պատասխան Մոսկվայից, Օհանջանյանը գրում էր կառավարությանը. «Ամեն ինչ թողնվել է Իոֆֆեին, «իսկ սա էլ ինչպես երևում է, ամբողջապես գտնվում է գերմանացիների ձեռքում։ Հիմա Գերմանիան շատ է աշխատում Ռուսաստանի հետ դաշն կնքել (ֆորմալ)՝ Անտանտի դեմ կռվելու Միևնույն ժամանակ, օգտվելով Մուրմանսկի ափերում նրանց նեղ դրությունից, ուզում է ստիպել ստորագրել Բրեստի վերաբերյալ իրենց բոլոր պայմանները»[61]։

Հինգեի հետ երկրորդ հանդիպումից հետո պարզ դարձավ, որ Գերմանիան Հայաստանին կնճռոտ հարցերում օգնելու վճռականություն չի ցուցաբերում և իրական միջոցներով չի դանկանում ստիպել թուրքերին՝ պարպելու Բրեստում նախատեսված սահմաններիդ դուրս գրաված հայկական տարածքները։ «Գերմանիան պարդ կերպով հայտնեց մեզ, որ ինքը Հայաստան չի կարող ոչ մի դեպքում ուղարկել զորք և առաջարկեց դիմել Ամստրիային, որն ունի ազատ զորք, մանավանդ, որ դրանով ևս ապացուցած կլինի Թուրքերին, որ Բրեստի սահմանները պահելու գործում բոլոր դաշնակից պետություններս համերաշխ են գործում, և այդպիսով հնար կլինի ազդել Թուրքիայի վրա»։ Գերմանիայի տաշտոնական ներկայացուցիչները համառորեն անդկադնում էին այն միտքը, որ հայերը սխալ ըմբռնում ունեն, հավատացած լինելով, որ «Եթե Գերմանիան ցանկանա, Թուրքիան կանի ամեն ինչ։ Նրանք չեն կարող պատերազմ հայտարարել Թուրքիային Հայաստանի խնդիրների առթիվ, իսկ այլ ճնշումները չեն ազդում»[62]։

Չգացվում էր Արևմտյան ռազմաճակատում գերմանական պարտության և Համաձայնության երկրների հաղթանակի ազդեցությունը, Թուրքական բաղաքականության փոփոխությունը, Թուրքիային Գերմանիայի ոիջոումները։ Այն արտահայտվում էր նաև Հայկական հարցում։

Այնուհանդերձ, Անդրկովկասում գտնվող գերմանական ներկայացուցիչ Ֆոն Կրեսը շարունակում էր ներկայացնել նոր տեղեկություններ Հայաստանում Թուրքական դաժանությունների վերաբերյալ։ Երևանում՝ կառավարության անդամների և էջմիածնում Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ հանդիպումներից հետո, 1918 թ. օգոստոսի 4-ին նա գրում էր Բեռլին՝ ռայխսկանցլեր Հերտլինգին. «Կառավարության և կաթողիկոսի հետ բանակցություններում ամրապնդվեց մեր կարծիքն այն մասին, որ միայն դաշնակից տերությունների անհրաժեշտ օգնություն կարող է փրկել Հայաստանը կործանումից։ 500 հազար փախստականների ծանր վիճակը դժվարանում է ամազակների նոր հարձակումով։ Հայաստանը գրավված է Թուրքիայի կողմից, որը խանգարում է առևտրի զարգացմանը, հայկական կառավարությունը զգուշանում է նաև Թուրքական նոր

հարձակումներից, Թուրքիան չի պահպանում նաև Բաթումի պայմանագրի պայմանները։ Հայաստանը կենսունակ է միայն Բրեստ-Լիտովսկում տրված սահմաններում։ Այդ շրջանն ունի արտակարգ կարևոր նշանակություն, չնայած պայմանագրի պայմաններին՝ Թուրքերն այդտեղից տարել են մասնավորապես բամբակը։ Հացահատիկի բերքը մասամբ ոչնչացված է։ Նախիջևանի երկաթգիծը պետք է անպայման պատկանի հայերին»[63]։

Գերմանական կողմի անվճռականությունը հստակ երևաց Հինցեի՝ ֆոն Կրևսին օգոստոսի 14-ին հղած հեռագրից. «Ես հասկացա Ձերդ պայծառափայլության և նրա ներկայացուցիչների երևան այցելության նպատակը։ Քանի որ ո՛չ գերմանական լրջագույն վերջնագիրը, ո՛չ գերմանական գլխավոր հրամանատարության եռանդուն ուղերձները չհասցրեցին հայկական հողերի պարպմանը և հայ փախստականների վերադարձի հարցը լուծելուն, ինչպես մեզ թվում է, մենք դժվար թե կարողանանք օգնել Հայաստանին։ Մեր ներկա գործողությունները կախված են ընդհանուր քաղաքական և ռազմական վիճակից»[64]։

Թուրքիայի հետ Հայաստանի պատճառով հարաբերությունները չէր ցանկանում փչացնել նաև Ավստրո-Հունգարիան, որը Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու խնդրի պարզաբանման հարցով բանակցում էր Գերմանիայի հետ, առաջ քաշելով իր տնտեսական շահերը[65]։ «Ես չեմ թաքցնում այն կարծիքը, որ զինվորական մասեր ուղարկելով Կովկասում կարելի է ապահովել հումք և առաջին հերթին՝ նավթ»,— գրում էր Բուրիանը 1918 թ. օգոստոսի 9-ին Բադենն, գլխավոր զորակայանում արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Տրաուտմանսդորֆին։ Բուրիանը կարծում էր, որ ավստրո-հունգարական էքսպեդիցիան ռազմական և քաղաքական առկա պայմաններում կարող է լինել ցանկալի, քանի որ կայսրությունը զգալիորեն կընդարձակի իր ազդեցության ոլորտները։ Այդ նպատակով առաջարկվում էր Գերմանիայի հետ բանակցություններում համաձայնության գալ Կովկասից ստանալիք տնտեսական շահից կայսրության հասանելիք բաժնի և Վրաստանում ու Հայաստանում գերմանական և ավստրիական զորքերի համատեղ հանդես գալու հարցում[66]։ «Կա վտանգ,— զգուշացնում էր նախարարը,— որ մեր զորքերը կգործեն հեռավոր, ճանապարհազուրկ, պարենով աղքատ, քաղաքականապես թույլ կազմակերպված Հայաստանում»։ Այդ կապակցությամբ առաջարկվում էր լսել գլխավոր շտաբի պետին և զեկուցել Վիեննա։

Ավստրո-Հունգարիայի կառավարությանը տված դիմումներին ավելի նպաստավոր ընթացք տալու համար, Կոստանդնուպոլսի պատվիրակության առաջարկով, Բեռլինի հայկական պատվիրակության անդամներ մտադիր էին գնալ Վիեննա, անձամբ ներկայանալ Բուրիանին և զեկուցել գործերի դրության մասին։ «Այդ առիթով այստեղի ավստրիական դեսպանի միջոցով դիմում արեցի Վիեննա, թե ընդունելի կլինի՞ արդյոք, իմ գալը այնտեղ և երեկ պատասխան ստացա, որ նախարար

Բուրիանը, իհարկե, շատ ուրախ կլինի մեզ հետ տեսակցելու, բայց քանի որ խնդիրը և դրությունը դեռ չի պարզվել և նրանք դեռևս բանակցում են Գերմանիայի հետ այդ խնդիրների շուրջ, նա գտնում է, որ նրա տեսակցությունը գործնական հետևանքներ չի կարող ունենալ, ուստի առաջարկում է մեզ սպասել նրա հրավերին»,— գրում էր Օհանջանյանը օգոստոսի 19-ին։ Եզրակացնում էր. «Այդպիսով, այստեղ էլ մերժում ստացանք»[67]։

Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության Վիեննա գալու մերժման դրդապատճառները երևում են օգոստոսի 21-ին Թիֆլիս՝ բարոն Ֆրանկենշտայնին Բուրիանի գրած նամակում։ Պարզաբանելով Ֆրանկենշտայնի օգոստոսի 4-ի նամակի հարցադրումները, Բուրիանը գրում էր. «Հարցադրումների այն մասը, որ Հայաստանը գտնվում է ավստրո-հունգարական հետաքրքրությունների ոլորտում և պետք է վերցվի մեր պաշտպանության տակ, իրականությանը չի համապատասխանում։ Այդ հաղորդումը պետք է վերագրել նրան, որ հայկական պատվիրակությունը Կոստանդնուպոլսում և Բեռլինում նման ցանկություններով մոտեցել է մեզ, որին մենք խուսափողական պատասխան ենք տվել։ Պետիցիան, որ նրանք առաջ են քաշել, վերաբերում է գլխավորապես կառավարության դե ֆակտո ճանաչմանը, Հայաստան զինվորական մաս ուղարկելուն, Հայաստանի նկատմամբ այնպիսի վերահսկողության հաստատմանը, ինչպիսին է Գերմանիայի հսկողությունը Վրաստանին։ Վերջին հիմնահարցին մենք մանրամասն ծանոթ չենք։ Ինչ վերաբերում է ավստրո-հունգարական զորամասեր Հայաստան ուղարկելուն, ապա վերջերս գերմանական հրամանատարությունը հակված է նրան, որ մենք ավստրո-հունգարական մի քանի գումարտակներով կարող ենք սատարել Գերմանիային Հայաստանում»։

Բուրիանը միտք էր հայտնում, որ գործողությունների համար հնարավոր է համաձայնության գալ «ընդհանուր և ոչ թե աշխարհագրական առաջարկվող շրջանում, համապատասխան տնտեսական շահի պայմանով։ Հայաստանի ճանաչման, այնտեղ դիվանագիտական ներկայացուցիչ ուղարկելու, Կովկասի նկատմամբ վերաբերմունքի հարցերը պետք է որոշվեն Գերմանիայի հետ փոխադարձ համաձայնությամբ, կապված մյուս քաղաքական հարցերի հետ, հաշվի առնելով և Քառյակ դաշինքի մյուս պետությունների հետ հարաբերությունները»։ Այսպիսին էր Բուրիանի մոտեցումը, որը միաժամանակ ապսպրում էր իր կառավարության ներկայացուցչին գերմանական գործընկերների հետ խոսակցության ժամանակ «արտահայտվել զգույշ և խոհեմ գաղտնի, վերը նշված ոգով»[68]։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՋԱՎԹՈՂԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՄՈՒՍԱՎԱԹԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՈՃԲԱԴՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Մինչ ձգձգվում էին բանակցությունները, Կոստանդնուպոլսում իր պլաններն էր մշակում և թուրքական դիվանագիտությունը: Դրանք ձևակերպվում էին հետևյալ կերպ. թուրքական սիրապետության վերականգնում Եգիպտոսում, Պաղեստինի, Սիրիայի, Միջագետքի այն մասերում, որոնք եղել են Օսմանյան կայսրության սիրապետության տակ. Սև ծովը վերածել թուրքական ներքին ծովի, առափնյա բոլոր պետությունները պետք է գանվեին թուրքական հովանավորության տակ: Թուրքական սուլթանի փոխանորդը պետք է կառավարեր Ղրիմում և Ադրբեջանում: Հայաստանը Թուրքիայի հետ կազմելու էր կոնֆեդերացիա: Մինչ այդ, թուրքերը գրավելով Արևելյան Հայաստանի մի մասը և մնացածը համարելով իրենցը, տակտիկական առումով կանդնելով Երևանից յոթ կիլոմետր հեռավորության վրա, հիմնական ուժերը նետել էին Բաքվի ուղղությամբ: Արևելյան Անդրկովկասի և Բաքվի նվաճման տենչը չէին թաքցնում երիտթուրքերի և համաթրքության գաղափարախոսները:

«Հիլալուի Ահմեդ» թերթը հունիսի 29-ին գրում է. «Ուզում եմ մի քանի խոսք ասել այն երկրի մասին, որի դրոշը չի տարբերվում թուրքերի դրոշից: Դա կովկասյան Ադրբեջանն է՝ «Ադրբեջանի Հանրապետություն» կամ ավելի ճիշտ ասած՝ «Թուրք Բագավարությունը Կովկասում»[69]:

Երիտթուրքերի պաշտոնաթերթ «Իկդամը» օգոստոսի 7-ին գրել է. «Կովկասը մեր կյանքն է, մեր հոգին: Բացարձակորեն անհրաժեշտ է, որ այս երկրի ժողովուրդը սիրի Թուրքին, այնպես էլ մեր թուրք կառավարությունը աշխատի իմաստուն քաղաքականությամբ իրեն կապել նրանց հետ: Թուրք կառավարությունը չի կարող և պետք չէ, որ անտարբեր նայի, որ մեկ ուրիշ քաղաքական և տնտեսական ազդեցության հպատակվի Կովկասը: Թուրք կառավարությունը պետք է հսկի, որ Կովկասը չդառնա բարդ ազդեցությունների բաղկացուցիչ մաս: Կովկասը պետք է անկախ ապրի և մեզ հետ լինի մարմնով ու հոգով»[70]:

Երիտթուրքերի մեկ այլ խոսափող՝ «Թանինը», օգոստոսի 14-ին գրում էր. «Կովկասը գրավելը և նվաճելը ոչինչ արժե Թուրքիայի համար, նա պետք է, որպեսզի Թուրքիան անձնամխիթարի պահի իր ամբողջությունը և պաշտպանի իր սահմանները»[71]:

Եթե «Իկդամը» գրում էր, թե Թուրքիան «Կովկասից և Պարսկաստանից այն կողմ ոչինչ չունի անելու», ապա «Աքրնը» օգոստոսի 15-ին հրապարակած հոդվածում «մահիկի և կիսալուսնի բարձրացվող դրոշի լույսի թափանցումը» տեսնում էր Խիվայում, Տաշքենդում, Բուխարայում, Դերբենդում, որը «ոգեշնչում է իսլամներին»[72]:

1918 թ. մայիսի 28-ին մուսուլմանական ազգային խորհրդի հռչակած անկախությունը փաստորեն նշանակում էր Ադրբեջանի լրիվ կախվածություն Թուրքիայից և այդ անկախությունը հռչակվեց թուրքական զորքերի առաջապահ ուժերի հետ Գանձակ ժամանած կովկասյան բանակի հրամանատար Նուրի փաշայի նախնական համաձայնությունից հետո: Հատկանշական է Ազգային խորհրդի վերջին նիստում Մահմեդ Էմին Ռասուլ-զադեի եզրափակիչ խոսքը. «Այն ուժերը, որոնցից սպասվում է մեր ներքին գործերին խառնվելը, օտար չեն, այլ ազգակիցներ են»[73]: Հատկանշական է և Ադրբեջանի հանրապետության կառավարության ղեկավար Խան-Խոյսկու արտասանած ճառը Գանձակում, Նուրի փաշայի քաղաք մտնելու առիթով. «Վերջապես, Ադրբեջանի թրքությունը հասնում է իր նպատակին: Նա մտնում է իր սիրելի Օսմանյան խալիֆաթի գիրկը: Վերջապես, իրականանում է համայն մահմեդականության դարավոր իդեալը՝ բոլորի միացումը սուլթանի կանաչ դրոշի տակ: Տասնյակ ազատարար զորքերին սրտատրոփ սպասում են Կովկասի լեռնականները, Թուրքեստանի թաթարներն ու կիրգիզները, Անդրկասպյան երկրամասի սարտերը, խիվացիները, բուխարացիները և վերջապես Ալդանստանը և հզոր Հնդկաստանը»[74]:

Համաթուրանական գաղափարը հնչեց նաև Խան-Խոյսկու հունիսի 23-ին Գանձակում արտասանած ճառում. «Ադրբեջանի անկախության նվիրական երազը իրականացավ: Մենք հաստատ համոզված ենք, որ ազգերի աննկուն կամքով և ցեղակից ու հավատակից Օսմանյան կայսրության աջակցությամբ մեր հայրենիքի բախտավոր ապագան ապահովված է: Բայց և այնպես, ներկայումս մեր հայրենիքին վտանգ է սպառնում՝ ինչպես դրսից, այնպես էլ ներսից»: Սպառնալով, որ «հանուն հայրենիքի բախտավորության ու փրկության, կառավարությունը չի վարանի ձեռք առնել ամենախիստ միջոցներ այն մարդկանց նկատմամբ, ովքեր կխուսափեն կառավարության որոշումները կատարելուց», Խան-Խոյսկին հայտարարեց. «Մենք հավատում ենք, որ մեր ցեղակից ու կրոնակից եղբայրների՝ մեծ Թուրանի ավագ որդիների աջակցությամբ, մեր հայրենիքը կլինի ուժեղ և բախտավոր»[75]:

Օսմանյան բանակի մուտքը Ադրբեջան, մուսուլմանական բանակի ստեղծումը, երկաթուղին, խճուղային ճանապարհները, կառավարման ղեկը թուրքական հրամանատարությանը հանձնելը երկուստեք ներկայացվում էր որպես երիտասարդ հանրապետությանը «եղբայրական օգնության իրականացման» փաստ: Եվ թուրքական հրամանատարությունը չխնայեց ոչինչ «իսլամական բանակ» ստեղծելու, այն հայկական բնակավայրերի և Բաքվի կոմունայի վրա շարժելու, հայ ազգաբնակչությանը զինաթափելու, արտաքսելու և կոտորելու համար: 1918 թ. հունիսի 2-ին Նուրի փաշային հղած հեռագրում Վեհիբ փաշան հայտնում էր. «Ադրբեջանի իսլամական անկախ հանրապետության պահանջով Ղազախի վրայով Գյանջա է ուղարկվում ուժեղացված հավաքական գինախումբը՝ մահմեդականներին փրկելու բոլշևիկյան ագրեսիայից»:

Մեկ այլ հեռագրում նա հայտնում էր. «Ես անմիջապես համաձայնվեցի բավարարելու Ադրբեջանի կառավարության ինձ հաղորդած խնդիրը՝ նրան զերծ պահել բոլշևիկյան ագրեսիայից, ապահովել խաղաղություն և անվտանգություն, Բաքուն և նրա շրջապատը մաքրել բոլշևիկներից և երաշխավորել երկաթուղային հաղորդակցությունը, ուղարկել ամենամարտունակ և քաջարի դիվիզիան, որը փառաբանված է շատ հաղթանակներով»[76]։

ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը այդ անցքերից 5 տարի հետո միայն հանգեց ճիշտ եզրակացության. «Համաթրքությունը՝ ի դեմս էնվերի, ձևնարկեց հարձակում դեպի Կովկաս, կատարելով համաթրքության առաջնահերթ ծրագրային կետը՝ գրավել Կասպիական ծովափը՝ Միջին Ասիա ներթափանցելու և Թուրքիայի ղեկավարությամբ թուրանական միավորումների անընդմեջ շղթա ստեղծելու նպատակով»[77]։

Հաշվի առնելով ռեալ իրականությունը, Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար Բուրիանին ֆոն Ֆրանկենշտայնը 1918 թ. օգոստոսի 4-ի հեռագրում հայտնում էր. «Ադրբեջանական կառավարությունը գործիք է թուրքերի ձեռքին, որը պատերազմական իրավիճակը պարտադրել է ողջ երկրին»։ Խոսելով Ղարաբաղի մասին, ֆոն Ֆրանկենշտայնը գրում է. «Ղարաբաղի լեռնային շրջաններում բնակվում են 150 հազար հայ և 20 հազար մահմեդական։ Այնուհանդերձ, թուրքերը տարածքը ադրբեջանական շրջան են համարում։ Երբ թուրքերը փորձեն զինաթափել տեղի բնակչությանը, ապա դա նոր բախումներ կառաջացնի, քանի որ հայերն այն ինքնակամ չեն հանձնի»[78]։

Հենց այս ժամանակ էր, որ Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը, հակառակ պատմական ճշմարտության և բնակչության ազգային կազմի, երիտթուրքերի և մուսավաթի կողմից հայտարարվեցին ադրբեջանական։ «Ադրբեջանական իմպերիալիզմի կրող մուսավաթը օգտվելով հայերի ծանր վիճակից, ճնշում է գործադրում նրանց վրա, պահանջում սահմանների անհապաղ վերագծում, զիջել ամբողջ Ղարաբաղը, որտեղ հայերը կազմում են բնակչության երկու երրորդը»,— գրում էր «Ձնամյա տրուդա» թերթը 1918 թ. հունիսի 1-ին։

Զանգեզուրը և Ղարաբաղը կազմում են մեկ ընդհանրություն, և նրանք պետք է միավորվեն Հայկական Հանրապետության մեջ, ասված է «Զանգեզուրի և Ղարաբաղի հայրենակցական միության» 1918 թ. հունիսի 17-ի հուշագրում։ «Այդ հարցը ունի առաջնային կարևոր նշանակություն հարյուր հազարավոր հայերի համար, հանուն նրանց բաղաքական շահերի, հայ ժողովրդի իրավունքների և արդարամտության, Ղարաբաղը պետք է մտցնել Հայկական Հանրապետության տարածքի մեջ»[79]։

Տարածաշրջանի բնակչության անվտանգության, այս կամ այն պետական միավորման պատկանելության միակ արդարացի լուծումը հուշագրի հեղինակները տեսնում էին «ազգերի ինքնորոշման» և «կուլտուր-պատմական ինքնատիպության» սկզբունքի կիրառման մեջ։ Հայերի վճռականությունը՝ պաշտպանել Ղարաբաղը, չենթարկվել Թուրք-մուսավաթական իշխանություններին, ամենայն վճռականությամբ արտահայտվեց 1918 թ. հունիսին և սեպտեմբերին կայացած գյուղացիական համագումարներում։

Հենց այդ սկզբունքն էր անտեսվում Թուրքիայի և Ադրբեջանի կողմից։ Նրանց համար կար մեկ սկզբունք՝ «քյասարախի», կոտորածի, բնաջնջման, բռնագաղթի սկզբունքը։ Այս անհերքելի ապացուցում են գերմանական ու ավստրո-հունգարական դիվանագիտական ու զինվորական ծառայությունների՝ Անդրկովկասից հղած փաստաթղթերը։

Առարկայական է Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար կոմս Շտեֆան Բուրիանին՝ Թիֆլիսում կայսերական-արքայական ներկայացուցիչ բարոն ֆոն Ֆրանկենշտայնի Երևանից հղած զեկուցագիրը. «Սեփական աչքով Հայաստանի իրավիճակին ծանոթանալու և նշանավոր անձնավորությունների հետ բանակցելու համար» ֆոն Ֆրանկենշտայնը Գերմանիայի ներկայացուցիչ բարոն Կրեսի հետ մեկնել էր Հայաստան, եղել մի շարք վայրերում։

«Արդեն թուրքերի կողմից Ղարաքիլիսայից այս կողմ գրաված տարածքում համոզվեցինք, որ անտեսական կարևորություն ունեցող շրջանները գտնվում են թուրքերի ձեռքին։ Թուրքերը այն պլանավորված ձևով թալանում են։ Այժմ Հայաստանը չի կարողանում իր սեփական բնակչությանը կերակրել, երբ մոտ 300 հազար փախստականներ ավելացել են և նրանց քանակը գնալով ավելանում է։ Թուրքերի հանկարծակի հարձակման պատճառով հայ բնակչությունը հիմնականում թողել է իր ունեցվածքն ու պաշարները և խուճապահար փախուստի դիմել։ Թուրքերը տարան ոչ միայն 100 միլիոն արժողությամբ բուրդ ու սպիրտ, այլև գրավեցին իրենց սահմաններից դուրս գտնվող այլ շրջաններ։ Փախստականները այստեղ սովամահ են լինում, մինչդեռ նրանց հայրենիքի բերքը թալանվում է ու փչանում»։ Եվ ապա՝ «Թուրքերը Թուրքահայաստանում սպանեցին տղամարդկանց, իսկ կանանց և երեխաներին քշեցին լեռները, մատնեցին սովահարության։ Նույն կերպով են վարվում թուրքերն այժմ փախստականների հետ»[80]։

«Թուրքերը բացահայտորեն ցանկանում են Հյուսիսային Կովկասը, ներառյալ Դաղստանը, միացնել Արևելա-կովկասյան մուսուլմանական Հանրապետությանը, որն այստեղ կոչում են Ադրբեջան»,— հունիսի 15-ին հայտնվում էր բարոն Լարիշին՝ Բեռլին։

Հայաստանից և Վրաստանից արևելք ընկած տարածքը թուրքերի «ողորմածությամբ» պետք է անցնի «Թաթարական Ադրբեջան Հանրապետությանը», որը «կատարյալ ֆարս է»,— հունիսի 28-ին հայտնվում էր Բուրիանին։ Այդ շրջանը, ներառյալ Դաղստանը, բացի Բաքվից, թուրքերի ձեռքում է, Բաքուն՝ բոլշևիկների։ Թուրքերը միշտ խոսում են «Ադրբեջան գավառի մասին»։ «Հայերի վերջին հալածանքների ժամանակ թաթարները իրենց դաժանությամբ մրցում էին թուրքերի հետ։

պել են բանակ և կռվում են տակավին, ինչպես նաև Զանգեզուրում Անդրանիկը շարունակում է պատերազմել մեր դեմ»[85]։ Դրանով էր փորձում էնվերը արդարացնել իրենց ոճրագործությունները և զավթողական գործողությունները։

Հայաստանում իրավիճակի հետ ծանոթանալու համար կառավարության խնդրանքով Երևան ժամանեցին Հալիլը, ֆոն Կրեսը և Ֆրանկենշտայնը։ Երեք պետությունների ներկայացուցիչները տեղում համոզվեցին Կոստանդնուպոլսում տարածված «Հայկական վտանգի» անհիմն և դիտավորյալ լինելու մեջ։ Արդյունքների մասին զեկուցագրեր գրեցին իրենց կառավարություններին Կրեսը և Ֆրանկենշտայնը։ Կրեսը կանցլեր Հերտլինգին ներկայացրեց նաև Ֆրանկենշտայնի մանրամասն կազմած զեկուցագիրը, որից երևում են թուրքական մեքենայությունները, կեղծիքը՝ խոսքի և գործի տարբերությունը։ «1. գերմանական կառավարության և գլխավոր հրամանատարության ճնշմամբ թուրքական կառավարությունը խոստացավ մեր դեսպաններին և ներկայացուցիչներին՝ համապատասխան պայմաններով հայերին իրավունք տալ Լոռի-Փամբակ շրջանների նկատմամբ։ Սրբ դա հայտնի դարձավ, գեներալ ֆոն Սեքտը հեռագրով ծանուցեց ինձ,— գրում էր Կրեսը,— երկու ժամ հետո ստացվեց հեռագիր էնվերից, նա չեղյալ էր հայտարարում գեներալ Սեքտի հրամանը։ 2. էնվերը հրամայեց, որպեսզի հայ փախստականները որոշակի պայմաններում հնարավորություն ունենան վերադառնալ հետ։ Էսադ փաշան կանխեց հրամանի կատարումը, քանի որ ինքը այն իբր չէր ստացել։ Բարոն Ֆրանկենշտայնի և օբեր-լեյտենանտ Պավլասի հեռագրերը և նամակները ուղարկվեցին Բաթում, որպեսզի սկսվեն բանակցությունները Էսադ փաշայի հետ՝ հայ փախստականներին վերադարձնելու հարցով։ Նրանք հետ ուղարկվեցին՝ պատճառաբանությամբ, թե գլխավոր հրամանատարության հետ հարաբերությունները փոխվել են և Հալիլ փաշան ի վիճակի չէ կատարել այդ հրամանը, 3. Հայ փախստականների հայրենիք վերադառնալը թուրքերը արգելում են, պնդելով, որ «չի կարելի թույլ տալ մոտ կես միլիոն զինված հակառակորդի անցնել բանակի թիկունքը»։ Այդ կես միլիոնը կանայք են, ծերունիներ, երեխաներ։ Եվ այն դեպքում, երբ այս տարվա բերքը թուրքերի գրաված հայկական շրջաններում ոչնչանում է»։

Ֆոն Կրեսի և բարոն Ֆրանկենշտայնի եզրակացությունը հետևյալն էր. «Երևանյան բանակցությունների արդյունքները, ի հակակշիռ էսադ, Շևքի և Նուրի փաշաների՝ հայերից սպասվող սպառնալիքների մասին միտումնավոր պնդումներին, Հալիլ փաշայի վրա թողեցին հակառակ տպավորություն։ Հայ փախստականների վերադարձը հնարավոր է և այն գտնվում է Հալիլ փաշայի իրավասությունների տակ։ Սակայն նա ինքը իրեն համարում է իրավունքից դուրկ այդ անելուց։ Փախստականներին սպառնում է մահացու վտանգ»[86]։

Հակառակ թուրքերի գործունեության, Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը՝ ի դեմս Գյոպերտի, օգոստոսի 29-ին հավաս-

Խարդախության և բարբարոսության տխուր պատկեր է այդ, որը շատ հեռու է թուրքական պաշտոնական վարկածից»[81]։

Նկատի էր առնվում 1918 թ. մայիս-հունիս ամիսներին կազմակերպված հայերի զանգվածային ցեղասպանությունը Շամախիի, Գյոկչայի, Օրդուբադի, Նախիջևանի, Գանձակի, Ագուլիսի, Նուխիի, Արեշի հայաշատ շրջաններում։ Միայն վերջին երկուսում՝ Նուխիում և Արեշում ոչնչացվեց 42 գյուղ՝ 52-ից, 40 հազար տեղաբնակ հայ։ Մինչ այդ, փետրվար-մարտ ամիսների ընթացքում ոչնչացվել էր 16 գյուղ, Գյոկչայի շրջանի 18 հազար հայերից՝ 17 հազարը։ «Թուրք-ադրբեջանական իշխանությունները նպատակ ունեն ոչնչացնել ամբողջ հայ ժողովրդին իրենց պատպենական տարածքում և Կոստանդնուպոլսի կոնֆերանսը կանգնեցնել կատարված փաստի առաջ»,— գրում էր «Կավկազսկոյե սլովո» թերթը[82]։ «Թուրք-թաթարական քաղաքությունը չափվում էր սպանված անմեղ երեխաների, բռնաբարված կանանց, գնդակահարված պատանիների, խողտանգված ծերունիների, խեղանդամ դարձած հոգևորականների, պղծված եկեղեցիներից թալանված հարստության քանակով»[83]։ Միայն տնտեսական կորուստը, ըստ Փարիզի խաղաղության կոնֆերանսին 1919 թ. փետրվարի 12-ին ներկայացված տվյալների, կազմեց 19 միլիարդ 33 միլիոն ֆրանսիական ֆրանկ, որից 4 միլիարդ 329 միլիոնը՝ Անդրկովկասում։ Օսմանյան զորքերի կողմից գրավված անդրկովկասյան տարածքի բնակավայրերից տեղահան արվեցին և փախան մոտ կես միլիոն կովկասահայեր։ Այդ թվում, Բաթումի մարզից՝ 20 հազար, Կարսից՝ 120, Ախալքալաքից և Ախլցխայից՝ 80, Ալեքսանդրապոլի գավառից մոտ 60, էջմիածնի և Սուրմալուի գավառներից՝ մինչև 80, Երևանի, Շարուրի, Նախիջևանի գավառներից՝ մոտ 100 հազար հայեր։ Ագրբեջանից փախած հայերով լեցուն էին Թիֆլիսը, Սղնախի գավառը, Ալազանի հովիտը։ Նրանցից երկու հարյուր հազարը զոհվեցին սովից, համաճարակից, տեղական մահմեդականների ասպատակություններից[84]։

Փախստականների վիճակի մասին բազմաթիվ տեղեկություններ են պարունակվում Հայաստանի կառավարության, Բեռլինում և Վիեննայում հանրապետության ներկայացուցիչների բողոք-դիմումներում, Թիֆլիսում ավստրո-հունգարական և գերմանական ներկայացուցիչների զեկուցագրերում, Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի՝ Հռոմի պապին և Եվրոպայի երկրների ղեկավարներին ուղղված կոչերում, Հովհաննես Թումանյանի՝ 1918 թ. դեկտեմբերի 29-ին Անտանտի երկրների Թիֆլիսում գտնվող դիվանագիտական ներկայացուցիչներին հանձնած փաստաթղթերում, Անդրկովկասի մամուլում։

Գաղթականների վերադարձը հայրենիք չէին թույլ տալիս ոչ թուրքերը, ոչ էլ ադրբեջանցիները։ «Արտաքին նկատառումները մեզ թույլ չեն տար, որ ազատութիւն տանք գաղթականներուն վերադառնալու մեր գրաված շրջանները, տեղական մահմեդականները չեն ուզեր զանոնք տեսնել։ Ես չեմ կարող երաշխավորել անոնց կյանքը, որովհետև, հայերը դեռ պատերազմ են մղում մեր դեմ։ Բաքվում նրանք կազմակեր-

տում էր Բրեստի սահմանների վերականգնման, Կարսի, Բաթումի, Արդահանի ինքնորոշման կարգավորման, փախստականների՝ իրենց տեղերի վերադարձի հույսի մասին։ Հայերի ողբերգական վիճակի մասին էին օգոստոսի 20-ին և 25-ին Բեռլին հայտնում Բերնսդորֆը և ֆոն Կրեսը. «գործերի վիճակը օրեցօր վատանում է. այդ հին քրիստոնեական ժողովրդի կործանման պատասխանատվությունը լրիվ ընկնում է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վրա։ Պատմությունը չի ների այն բանի համար, որ եվրոպական երկու մեծ տերությունները ի վիճակի չեն, համենայն դեպս այսօր, լուծել ամբողջ ժողովրդի գոյության հարցը և որոշում են այդ հարցը իրենց ասիական դաշնակցի ճնշման տակ»[87]։

Բեռլինը գնալով վերածվում էր ոչ միայն հայ-գերմանական, այլև հայ-ռուսական, հայ-ավստրո-հունգարական, հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունների կիզակետի, Կովկասի հարցում նաև ռուս-գերմանական, գերմանա-թուրքական, գերմանա-ավստրիական, ռուս-թուրքական հետաքրքրությունների բախման կենտրոնի։

Հայկական հարցը քննարկվում էր այդ հարաբերությունների լայն հենքի վրա, խորապես միաձուլվելով Գերմանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի շահերի և նկրտումների, Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի նկատմամբ նրանց ունեցած ընդհանուր խնդիրների հետ։

1918 թ. օգոստոսի 27-ին Բեռլինում կնքվեց գերմանա-ռուսական լրացուցիչ պայմանագիր, որով Գերմանիան պարտավորվում էր ցույց չտալ աջակցություն որևէ երրորդ պետության ձեռնարկած ռազմական գործողություններին՝ Բրեստ-Լիտովսկում կնքված հիմնական պայմանագրի 4-րդ կետում նշված սահմաններից դուրս, խոստանում էր ազդել երրորդ ուժի՝ այսինքն Թուրքիայի վրա, որպեսզի նրա ռազմական ուժերը գործողություններ չկատարեն Բաքվի շրջանում։ Այսպիսով, Գերմանիան պարտավորվում էր Թուրքիային աջակցություն ցույց չտալ ոչ մի տեղ, բացի Կարսի, Արդահանի, Բաթումի շրջաններից։ Փոխարենը, Ռուսաստանը Գերմանիային տալու էր որոշ արտոնություններ Բաքվի նավթի նկատմամբ[88]։

Լրացուցիչ պայմանների մեկ օրինակը ստանալով Ա. Իոֆֆեից և սեպտեմբերի 5-ին այն առաքելով Կոստանդնուպոլիս՝ Հայկական պատվիրակությանը, Հ. Օհանջանյանը, միաժամանակ հայտնում էր և Խորհրդային Ռուսաստանի դեսպանի հետ ունեցած զրույցի բովանդակությունը։ Այն է՝ Կոստանդնուպոլսում Ռուսաստանի դեսպանը պետք է պաշտպանի Վրաստանի պահանջը՝ Բաթումը վերադարձնելու մասին և ռուսները ամեն կերպ պետք է պաշտպանեն վրացիների և հայերի պահանջը։ Բացուն նույնիսկ զենքի ուժով պետք է պաշտպանվի Թուրքերից, հետո, երբ ռուսները գործեն Թուրքերի դեմ, նրանց Բրեստի սահմաններից այն կողմ քշելու համար Գերմանիան չպետք է օգնի Թուրքերին, նույնիսկ պետք է դիվանագիտական ճանապարհով օգնի ռուսներին Բրեստի դաշնագիրը իրականացնելու համար[89]։

Խորհրդա-գերմանական բանակցությունները ավարտվեցին, սակայն Կոստանդնուպոլսում նախատեսված կոնֆերանսի հրավիրումն անընդհատ հետաձգվում էր։ Քառյակ տերությունները համաձայնության չէին հասնում հիմնական հարցերի շուրջ։ Կատարվում էր Թալեաթ փաշայի պահանջը՝ կոնֆերանսը անցկացնել նեղ շրջանակներում, միայն Քառյակ դաշինքի պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։ Անդրկովկասյան հանրապետությունների և լեռնականների ներկայացուցիչները զրկվեցին իրենց վերաբերյալ հարցերի քննարկմանը մասնակցելու իրավունքից։ Այնուհանդերձ, նրանք շարունակում էին հանդիպումներ ունենալ առանձին պետական գործիչների հետ, ներկայացնելով նոր հուշագրեր և պահանջագրեր։

Կովկասի հետ կապված հարցերի քննարկման համար Բեռլին մեկնեց Թալեաթ փաշան։ Մինչ այդ, սեպտեմբերի 3-ին, Կոստանդնուպոլսում նա տեսակցեց հայկական պատվիրակության անդամների հետ՝ շողոքորթելով Թուրքահայերի գործին չխառնվելու համար, խոստացավ «Բեռլինում իր ձեռքից եկածն անել Հայաստանի անկախությունը ընդունելու նպատակով»[90]։ Նույն միտքը հայտնեց և Նեսիմի բեյը։ Սրտաճմլիկ էր սեպտեմբերի 6-ին հայկական պատվիրակության անդամների հանդիպման ժամանակ սուլթանի «սիրալիրությունը»։ Սակայն, հակառակ հայտարարություններին, գալով Բեռլին և իմանալով, որ Բրեստի հաշտության ռուս-գերմանական հավելվածը ստորագրվել է, Թալեաթը ցույց տվեց իր իրական դեմքը, «այնպես վրդովվեց, որ մինչև անգամ ուզում էր նույն րոպեին վերադառնալ Պոլիս»[91]։

Կովկասի հարցերը սեպտեմբերի 5-ի Վիեննայում նախնական քննարկումից հետո, որին մասնակցում էին Ավստրո-Հունգարիայի թագավոր Ֆերդինանդը, արտաքին գործերի նախարար Բուրիանը, տեղակալ Ամբրոցցին, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Հինցեն, Թալեաթ փաշան, Կոստանդնուպոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին և այլ պաշտոնատար անձինք, սեպտեմբերի 8-ին քննարկման առարկա դարձան Բեռլինում։

Երկու հանդիպումների ժամանակ էլ թաքցնելով Թուրքերի նոր դավերն ու հեռահար նպատակները, Թալեաթը ցուցադրաբար ջանում էր հասնել Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի անկախության ճանաչման, որը հավասարազոր էր Գերմանիայի և Թուրքիայի միջև ազդեցության ու տիրապետության ոլորտների սահմանազատման։ Առաջարկվում էր Վրաստանը Գերմանիային, Հայաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը՝ Թուրքիային բանաձևը։ Ինչպես ասում էր Թալեաթը Բեռլինյան ժողովից հետո Հայկական պատվիրակությանը՝ «Թուրքիան դրանում տեսնում էր իր պարտքը և իր նպատակը, չցանկանալով երբեք ոչ մի դեպքում ունենալ ընդհանուր սահմաններ Ռուսաստանի հետ»[92]։ Չխենթկելու հետ զրույցի ժամանակ Թալեաթը

երկիմաստ հայտարարել է. «Հայերի հետ մենք ինքներս կկարգավորենք մեր գործերը. եթե գերմանացիները չմիջամտեին, մենք հայերի հետ դեռ Բաթումում կվերջացնեինք բոլոր խնդիրները»։ «Հայերի հետ մենք համաձայնության եկել ենք, մնացել է միայն ձև գտնել, այդ ձևն էլ կգտնենք Պոլսում, մենք ինքներս մեր խնդիրները կվերջացնենք, որ ապագայում ոչ ոք չխառնվի մեր հարաբերությունների մեջ և կարիք չկա այդ հարցերը բարձրացնել Բեռլինում»։ Միաժամանակ ասել է. հայերի հանդեպ վստահություն չունի, վրացիների հետ ավելի վստահ կլիներ[93]։

Գործնականում ջուծելով հայկական պատվիրակության առաջադրած և ոչ մի հարց, քաղցր-մեղցր խոսքերով ու խոստումներով ձգձգելով կենսական հարցերի պատասխանը, Թուրքիայի ղեկավար գործիչները քարոզչական մեքենայով շարունակում էին թյուր կարծիք ստեղծել հայերի՝ իբր թե թուրքական հովանավորություն փնտրելու, իրենց հայասիրության մասին։ Սակայն, ինչպես վկայում են գերմանական և ավստրո-հունգարական աղբյուրները, Վիեննայի և Բեռլինի ժողովներում Կովկասի հարցի քննարկման ժամանակ Թալեաթի «գունափոխումը» առաջացրել էր խիստ կասկածներ նույնիսկ Թուրքիայի դաշնակիցների շրջանում։ Հայաստանի անկախությունն էր պահանջում այն պետությունը, որն իր հպատակ ժողովուրդների ազատության ամեն մի ցանկություն խեղդել էր դրակոնյան մեթոդներով, բուն Հայաստանի ժողովրդի ազգային ձգտումները ճնշել էր ամենաբարբարոս, բնաջնջման հրեշավոր քաղաքականությամբ ու գործունեությամբ, կատաղի դիմադրել Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալուն և բարեփոխումներին, իրագործել հայերի ցեղասպանությունը՝ Մեծ եղեռնը, «սեփականացրել» Արևմտյան Հայաստանը, Արևելյան Հայաստանից խլել էր Ալեքսանդրապոլն ու Ախալքալաքը, ներխուժել Շիրակի և Արարատյան դաշտավայրերը, ձգտում էր նվաճել Զանգեզուրն ու Ղարաբաղը, արգելում էր տուն վերադառնալ փախստականներին ու ռազմագերիներին։

«Թալեաթ փաշան այնքան հիմնովին է փոխել իր դիրքը դեպի հայերը, որ այստեղ նույնիսկ չեն հավատում, որ Տաճկաստանի քաղաքականությունը կարող է այդքան ռադիկալ ձևով փոխվել և կարիք են զգում զգուշորեն վերաբերվել նրա խոսքերին,— սեպտեմբերի 8-ի Բեռլինյան հանդիպումներից հետո հայտնել է հայկական պատվիրակությանը Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ կոմս Ամբրոցցին,— Թալեաթը ասել է, որ Տաճկաստանը պատրաստ է բավականանալ Բրեստի սահմաններով, միայն թե իրենց ազատություն տրվի գործելու և իրենց ազդեցությունը տարածելու Ադրբեջանում»[94]։ Ղարաբաղը Ադրբեջանին տալու հարցը Թալեաթը «հիմնավորել է» նրանով, որ «այստեղ տեղական թուրքերը սարն են բարձրանում և այդ պատճառով անհնարին է այդ երկիրը տալ Հայաստանին»։ Չխենկելին վկայում է, որ Թալեաթը ասում էր բոլորին, թե հայերը գոհ են իրենց դրությունից և որ իրենք հայերի հետ համաձայնության են եկել և կարիք չկա հիմա Բեռլինում այդ խնդիրը բարձրացնել։ Դաշնակիցների վրա այդ հայտարարությունը՝ թե հայերը ոչ մի պահանջ չունեն, թողել էր վատ տպավորություն։

Այդ մասին գեներալ Լոսովը գրել է. «Կարող ենք ասել, որ հասնում ենք մեր նպատակին. վերահաստատել Բրեստի սահմանները։ Մենք համոզում ենք Թալեաթ փաշային՝ միևնույնն է, հաշտությունը լինելու է առանց անեքսիայի, ավելի լավ է Թուրքիան իր համար այժմվանից բարերար տրամադրություն ստեղծի ապագա համաշխարհային կոնգրեսում իր դեմ ազգեր ու ժողովուրդներ չհանելու համար, տալ կամովին այն, ինչ միևնույնն է, առնելու են, և դրանով այլևս կոնգրեսում չզբաղվել։ Ինչպես երևում է, դա ազդել է Թալեաթի վրա և նա համոզվում է, միայն ասում է, որ դա կատարված լինի Թուրքիայի ազատ կամքով, իբրև մի շնորհ Թուրքիայի կողմից վրաց և հայ ժողովուրդներին ու կառավարություններին, և այդ բանը պաշտոնապես, հանդիսավոր կերպով կարվի Պոլսում, ուր նա կգնա այստեղից բոլոր պատվիրակների հետ»։ Ֆոն Լոսովը Թալեաթի հետ զրույցից հետո տեղեկացնում էր. «Թալեաթը ժողովներում միշտ ասելիս է եղել, թե հայերի հետ ինքը խոսել է և նրանք պահանջներ քիչ ունեն և հեշտությամբ կլուծվեն այդ խընդիրները տաճիկների ու հայերի միջև, բայց Լոսովը դրան առարկել է, որ հայերը, իհարկե, Պոլսում ուրիշ կերպ չեն կարող խոսել, նրանց դրությունը այդպես է, բայց ուրիշ տեղ, ուր նրանք կարող են ազատ խոսել, նրանցից մենք ուրիշ բաներ ենք լսում»։ Անկախության խնդրի մասին Լոսովն ասել է. «Եթե տարածք ունենաք, ինքներդ էլ կկարողանաք խընդիրը լուծել Ռուսաստանի հետ, քանի որ վերջինս լավ է տրամադրված ձեր հանդեպ և ավելի կզիջի, քան վրացիներին։ Հետո էլ մենք կընդունենք»[95]։

Թուրք ղեկավար գործիչների հեռահար նպատակները բացահայտվում են երկար ժամանակ Օսմանյան կայսրության բարձր շրջաններին մոտ կանգնած ավստրո-հունգարական բանակի գլխավոր շտաբի պաշտոնյա Մագրոֆֆերի հաղորդումից։ Ահա նրա կարծիքը. Թուրք ղեկավար շրջանները հրաժարվել են համիսլամության գաղափարից և տարվել համաթուրանության գաղափարով։ Հայաստանը և հայությունը գտնվում են դեպի Ադրբեջան և Անդրկասպյան երկրներ տանող նրա ճանապարհի վրա։ Եթե Թուրքիան հիմա կարող է հաշտվել Հայաստանի գոյության հետ, ապա այն պատճառով, որ նա կարծում է, թե կարելի է տարածքը սահմանափակել միայն Բաթումի հունիսի 4-ի պայմանագրի սահմաններով և խոսք չի կարող լինել Թուրքահայաստանի մասին (Վան, Ալաշկերտ և այլն)։ Դա բոլորովին կփակի Թուրքերի ճանապարհը՝ դեպի Թուրանական արևելք[96]։

Թալեաթի «ջանքերի» դրդապատճառների պատասխանը գտնում ենք «Վաքրթ» թերթի 1918 թ. սեպտեմբերի 3-ի համարում տպագրված «Մեր քաղաքականությունը Կովկասում և հայերը» առաջնորդող հոդվածում։ Հոդվածի հեղինակ, թերթի խմբագիր Ահմեդ Էմինը գրում էր.

«Եթե մենք ցանկանում ենք պաշտպանել հայերին, ապա ոչ թե նրա համար, որ մենք նրանց սիրում ենք, այլ նրա համար, որ այդ գործողություններին մղում են մեր շահերը։ Թուրքիան հնարավորություն կունենա հաշտության վեհաժողովում հայտարարել, որ անցյալը հանդիսացել է կործանարար քաղաքականության արդյունք, որ դա արդեն անցյալ է և մենք այժմ Հայկական Հանրապետության հետ իսկական բարեկամներ ենք»։ Նույն հոդվածում բացահայտվում էր հայերի հետ «բարեկամության», «հայասիրության» մասին թմբկահարության և շաղակրատանքի բուն նպատակը։ «Գործունեության համար անկախ և պատասխանատու Հայաստանը մեզ համար վտանգ չի ներկայացնում,— գրում էր Ահմեդ Էմինը,— մենք միշտ կարող ենք հաշիվ պահանջել մեր դեմ դրսևորված թշնամական յուրաքանչյուր քայլի համար։ Եթե այդպիսի գործողություններ տեղի ունենան, ապա ավելի հեշտ կլինի հաշիվները մաքրել անկախ Հայաստանի հետ, քան արտասահմանյան պետությունների հովանավորության տակ գտնվող հայերի հետ»։ Չի կարելի ենթադրել, որ Հայաստանը վճռեր տհաճություն պատճառել Թուրքիային, «քանի որ Ռուսաստանը միշտ կարող է վերածվել իմպերիալիստական տեսքով պետության, այդ դեպքում Կովկասի բնակչության մեծ մասը կանցնի մեր կողմը» և ռուսների դեմ իր ազատության համար օգնություն պետք է փնտրի թուրքերի մոտ, «գուշակում» էր համաթրքության գաղափարախոսը։ Նա կարծում էր, որ Հայաստանը կծառայի իբրև պետություն-պատնեշ Թուրքիայի և Ռուսաստանի միջև, իր գոյության համար հարկադրված կլինի օգտվել Թուրքիայի տարածքով, հաղորդակցության բոլոր ճանապարհներով՝ ծովային և ցամաքային։ «Այսպիսով,— ասում էր Ահմեդ Էմինը,— քաղաքական առումով Հայաստանը մեր տրամադրության տակ կլինի»[97]։ Պարզ էր դառնում, որ հայերի հետ բարեկամության, կոնֆեդերացիա ստեղծելու, Հայաստանին «անկախություն» տալու մասին երիտթուրքերի բոլոր խոստումները և հայտարարությունները անկեղծ չէին։

Ահա և Օսմանյան կայսրության պառլամենտի նախագահի մոտեցումը, արտահայտված սեպտեմբերի 11-ին, Խատիսյանի հետ զրույցի ժամանակ. «Մենք կորցնում ենք Արաբիան, դրա համար անհրաժեշտ է ստանալ Թաթարական Ադրբեջանը, Պարսկական Ադրբեջանը և Թուրքեստանը։ Այդ մեր իդեալն է։ Կարող է ցնորք լինել, բայց իդեալ է»[98]։

ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ավստրո-հունգարական աղբյուրները տեղեկացնում էին Թալեաթի նոր ծրագրերի մասին, այն է՝ վավճել Սուխումը, իբր չեչենների օգնությամբ աբխազներին վրացիներից պաշտպանելու համար։ Մագրոֆֆերը այդ մասին ասել էր և հայկական պատվիրակությանը, որը գտնվում էր Վիեննայում։ Մագրոֆֆերը, չթաքցնելով իր թրքասիրությունը, խորհուրդ էր տալիս հայկական պատվիրակությանը իրենց պահանջների մասին խոսել «շատ համեստ կերպով, ցածր ձայնով» և ավստրիական կառավարությունից «քիչ բան խնդրելով». մեկ գումարտակ հետևակ, մեկ-երկու մարտկոց, մեկ հիվանդանոց իրենց համար, մեկ օդանավ, մեկ ավտոշարասյուն, ասելով, որ «զորքերի մեջ խնդրում ենք ունենալ բոսնյակ մահմեդականների մի մաս, ավելի անկողմնակալ լինելու համար»։ Առաջարկում էր հայկական ներդրումների մասին խոսել շատ րարձր և մեծ թվերով՝ օր. բամբակ, պղինձ, մետաքս, կաշի, ցույց տալ հայերի տնտեսական ազդեցությունը Պարսկաստանում և Առաջավոր Ասիայում, զորքերն իրենց տրամադրության տակ դնել Անգլիայի դեմ գործելու համար։

Ըստ Մագրոֆֆերի, ավստրիական զինվորական շրջաններում Հայաստանին օգնելու հարցում կար երկու հոսանք, թեր և դեմ։ Երկրորդ հոսանքի ներկայացուցիչները պնդում էին, որ Հայկական հարցը շատ րարդ է և անշահավետ Ավստրիայի համար։ Անմիջական կապ Ավստրիայի և Հայաստանի միջև չկա, զորքեր ուղարկելու դեպքում Ավստրիան միշտ պետք է կախում ունենա Վրաստանից կամ Գերմանիայից՝ իր բանակի հետ կապ պահպանելու համար, Գերմանիան էլ արդեն գրավել է տնտեսապես ամենաշահավետ տեղերը՝ Վրաստանը, երկաթուղին, Ավստրիային մնում է միայն աղքատ Հայաստանը, այն էլ առանց երկաթուղու և կնճռոտ խնդիրներով։ Բարոյական գործոնը ոչ մի նշանակություն չուներ նրանց համար։ Նրանք համաձայն չէին Հայաստանի կողմնակիցների հետ, որոնք աշխատում էին ապացուցել, որ տնտեսական մեծ շահեր կարող են ունենալ, եթե փոքրաքանակ զորամասեր ուղարկեն[99]։

Երևում էր, որ ավստրիացիները ոչ մի բանով «չեն ուզում վշտացնել տաճիկներին», Հայկական հարցին վերաբերվում էին բավականին զգուշությամբ, չուզենալով իրենց վրա վերցնել պարտավորություններ, հրենց դաշնակիցների հետ գործում էին համախոհ։

Այդ երևում է և արտաքին գործերի նախարարության գործելակերպից։

11 օր Վիեննայում գտնվող Օհանջանին կոմս Ամբրոզցին նամակով հայտնեց, որ Բուրիանը չի կարող րնդունել հայկական պատվիրակությանը՝ գրազված լինելու պատճառով։ Պատվիրակությունը կարող էր հանդիպել նախարարի առաջին տեղակալ Ֆլոտոֆի հետ։ Սեպտեմբերի 14-ին «ներկայացանք Ֆոն Ֆլոտոֆին,— գրում էր Օհանջանյանը,— նա խնդրին բնավ ծանոթ չէր, պատմեցինք ամենայն մանրամասնությամբ մեր բոլոր խնդիրները և տեսակետները, շատ պարզ կերպով, մի քանի անգամ կրկնելով, հայտնեցինք նրան, թե ինչ պատասխան կարող ենք մենք գտել մեր կառավարությանը և մեր արտաքին գործերի նախարարին ու հանրապետության պատվիրակությանը՝ ավստրիական կառավարության մոտեցումների մասին։ Բայց ոչ մի պատասխան չստացանք։

խնդիրը դեռ մեզ համար պարզ չէ, խնդիրը պարզվում է Բեռլինի և այլ կոնֆերանսում, զորք ուղարկելը մեզնից չի կախված, պաշտոնական դիվանագիտական ներկայացուցիչ ուղարկելը դժվարանում է նրանով, որ աշխատող չունենք, այնքան կոնֆերանսներ և այլ բաներ գոյություն ունեն, որ ոչ մի մարդ չունենք ազատ։ Պարզ էր, որ ցանկություն չկար պատասխան տալու, դրա համար էլ ամեն մի պատասխան խուսափողական էր։ Բաժանվելիս ասաց. շատ-շատ շնորհակալ է, որ մենք եկանք և շատ բան պարզեցինք նրա համար, որ նրանք մեծ համակրանք ունեն դեպի հայ ազգը և կաշխատեն ամեն կերպ օգնել, հարկավոր է, որ իրենց համար Առաջավոր Ասիայում և Կովկասում լինի հայերի աջակցությունը և համակրանքը։

Այս է բոլորը, այսինքն, ինչպես տեսնում եք՝ ոչինչ։ Շատ անհասկանալի մնաց, թե ինչի համար էին մեզ այստեղ կանչել, եթե 11 օր սպասելուց հետո էլ ոչինչ չասեցին և տեսակցություն տվին մեկի հետ, որը նույնիսկ ծանրություն չէր քաշել ծանոթանալ մեր առաջուց ներկայացրած նյութերին»[100]։

Հաջորդ օրը, սեպտեմբերի 15-ին, Բադենում գլխավոր բանակատեղիում, Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը հանդիպեց գլխավոր հրամանատար Արցի հետ։ «Ընդունելությունը եղավ շատ սիրալիր ու ուշադիր։ Ներկայացրեցինք մեր բոլոր պահանջները կարճ կոնսպեկտի ձևով գրված և այն, ինչ որ մենք կարող ենք տալ դրա փոխարեն։ Նրա պատասխանը եղավ այն, որ նա, իհարկե, մենակ այդ խնդիրը որոշել չի կարող, կզեկուցի կայսրին և կբանակցի արտաքին գործերի նախարարի հետ և ըստ այնմ կվարվի։ Ինքը համակրանքով է վերաբերվում մեր դատին, ճանաչում է հայերին իբրև կուլտուրական և հարուստ ազգ և կարծում է, որ պետք է օգնել ամեն կերպ, և զորք ուղարկել նույնպես, ինչպես և ուրիշ կերպ»։

Պատվիրակությունը խնդրում էր 1. Հայաստան ուղարկել ավստրո-հունգարական զորք՝ երկու գումարտակ և մեկ-երկու մարտկոց, հիվանդանոց, մեկ հրաձգային ջոկատ, մեկ հեծյալ էսկադրոն, մեկ ռադիոկայան, մեկ ավտոշարասյուն, մեկ օդանավային ջոկատ։ Հայերը ոչինչ դեմ չեն լինի, եթե նրանցից մեկ-երկու ջոկատը բաղկացած լինի մուսուլմանական բոսնյակներից, 2. Ավստրո-Հունգարիայում գտնվող հայ ռազմագերիների հայրենիք վերադառնալու թույլտվություն, ինչպես և խնդրվել էր գերմանական կառավարությանը՝ Գերմանիայում գտնվող ռազմագերիների վերաբերյալ։ 3. Հայաստանում հայ բնակչության իրավունքի և հայկական շահերի, սահմանների և ինքնուրույնության պաշտպանություն կոնֆերանսներում և պայմանագրերի կնքման ժամանակ։ 4. Սատիպել Թուրքիային պահպանել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հաստատված սահմանները, Հայաստանը մաքրել թուրքական զորքերից։

Այդ բոլորի դիմաց Ավստրո-Հունգարիայի տրամադրության տակ դրվում էր հումք, ինչպես նաև ամբողջ քաղաքական, առևտրական ազ-

դեցությունը։ Նշվում էր, որ առկա է մոտ 400 հազար փութ կուտակված բամբակ (տարեկան արտադրանքը կազմում էր 2 միլիոն փութ), 30 հազար փութ պղինձ (տարեկան արտադրանքը 200 հազար փութ), բուրդ, կաշի, մետաքս և այլն։ Հայաստանը համաձայն էր, որպեսզի Ավստրո-Հունգարիան կազմակերպեր Հանրապետությունում հայկական ռազմական ուժեր և օգտագործեր այն երկու կողմերի շահերին համապատասխան։ Հայաստանն այդ ժամանակ արդեն ուներ 20 հազարանոց բանակ, 80 հազար հայեր ծառայում էին ռուսական բանակում[101]։ Հայաստանի տնտեսական նշանակության մասին զգալի տվյալներ բերվեցին դոկտոր Գրինֆելդի տպագրած «Կովկասի տնտեսական նշանակության մասին» հոդվածում[102]։

Վիեննայից մեկնելուց առաջ պատվիրակության անդամները հանդիպեցին Գերմանիայի դեսպան Վեդելի, Հռոմի պապի ներկայացուցչի, ավստրո-հունգարական հայկական ընկերության գործիչների, հայ կաթոլիկական եկեղեցու ղեկավարների հետ[103]։ Սեպտեմբերի 16-ին կայացավ նոր հանդիպում Ամբրոցցիի հետ։ Այդ հանդիպումից հետո պաշտոնապես զեկուցվում էր. Հայկական կառավարությունը խնդրում է կայսերական կառավարությանը պայմանագրում մտցնել կետ, որ Հայաստանը ձեռք է բերում Բրեստ-Լիտովսկի սահմանները, Ախալցխան ու Ախալքալաքը, Ալեքսանդրապոլն ու մինչև Ջուլֆա երկաթուղին, խնդրում է ճանաչել իր պետականությունը, Հայաստան ուղարկել ավստրո-հունգարական զինվորական անձնակազմ, այնպիսին, ինչպիսին Գերմանիան ուղարկել է Վրաստանին օգնելու, Երևան ուղարկել դիվանագիտական ներկայացուցիչ, պաշտպանել հայերի շահերը միջազգային կոնֆերանսներում, հայ ռազմագերիներին տալ հայրենիք վերադառնելու թույլտվություն։ Ավստրո-հունգարական կողմի պատասխանն էր. կայսերական կառավարությունը Բաթումի պայմանագիրը չի ճանաչել։ Բրեստի հարցում կոնկրետ երաշխիքներ տալ հնարավոր չէ, քանի որ գնում են բանակցություններ։ Հայաստանի կառավարությունը պետք է առաջին հերթին պայմանավորվի Թուրքիայի հետ։ Պատվիրակության փաստարկներն են. Հայաստանին սպառնում են թաթարական և քրդական ցեղերից կազմված ավազակախմբերը, որոնք ծառայում են Թուրքիային, այնպես որ այդ ավազակախմբերի դեմ պայքարը կարող է հայերին ներքաշել պատերազմի մեջ՝ հակառակ իրենց կամքի։ Ավստրո-Հունգարական չեզոք զորաջոկատը կարող է առաջ բերել խոր հարգանք և դրանով Հայաստանում ստեղծել հանգիստ վիճակ[104]։ Խուսափողական էր և Պալավիչինիի պատասխանը. «Երկար խոսեցի, բայց չկարողացա նրանից բան հասկանալ,— գրում էր Օհանջանյանը սեպտեմբերի 19-ին,— չհասկացա, խնդիրն ծանոթ չէ և չի էլ ուզում ծանոթանալ, թե՞ ուղղակի չի ուզում ուղիղ ասել, ինչպես և Վիեննայի նախարարության պաշտոնյաները»[105]։

Ֆելդմարշալ-լեյտենանտ Պոմյանկովսկին, ոչ առանց կառավարության գիտության, հայտնում էր այն միտքը, որ չնայած լինելով Թուր-

քիայի բարեկամը, Ավստրո-Հունգարիան լավ է վերաբերվում հայերին և «դեմ չէր լինի իր էրցհերցոգներից մեկին Հայոց գահի վրա տեսնելուն»[106]։ Կոմս Ամբրոցցիի վկայությամբ, Հայաստանի նկատմամբ Ավստրո-Հունգարիայի հովանավորությունը վերցնելու առաջարկությունը արել է Գերմանիան, սակայն ավստրիական կառավարությունում այդ հարցի քննարկման ժամանակ գերիշխող էր այն տեսակետը, որ բոլորովին կարիք չկա Կովկասը բաժանել մասերի, մանավանդ, որ Գերմանիային ընկնում է ավելի ոչ պատասխանատու և ավելի շահավետ, արտադրության առարկաներով հարուստ երկիր՝ Վրաստանը, իսկ Ավստրիային՝ ազգամիջյան ընդհարումներով, բարդություններով լի, կնճռոտ և միաժամանակ արտադրության առարկաներով ավելի աղքատ մի երկիր՝ Հայաստանը։ Այդ պատճառով, Ավստրիան պնդում էր, որ նա և Գերմանիան միասին վերցնեն Հայաստանին օգնելու և հովանավորելու հոգսը[107]։

Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ֆլոտոֆի, կոմս Ամբրոցցիի, բանակի գլխավոր հրամանատար Արցի, բարձրաստիճան շատ սպաների, ավստրիական ու գերմանական պետական գործիչների հետ հանդիպումներից հետո, Համո Օհանջանյանը սեպտեմբերի 15-ին Վիեննայից գրում էր Երևան, Հայոց Ազգային խորհրդին և կառավարությանը. «Երևում է, որ ընդունելությունները քաղաքավարության համար են, ոչինչ չեն ուզում անել, չեն ուզում իրենց վրա վերցնել ազգին հուզող խնդիրը, չեն ուզում ոչ մի դեպքում իրենց դաշնակից Թուրքիային նեղացնել, ոչ մի անախորժ քայլ անել, ընդհանուր խոսքեր իրենց համակրանքների մասին հայ ժողովրդի տառապանքների հանդեպ, բայց դրանից մենք ոչ մի շահ չունենք»[108]։ Հիրավի, դառն հիասթափություն։

Հայաստանի անկախության հարցին իր մոտեցումն ուներ և Խորհրդային Ռուսաստանը։ Դա բխում էր նրա քաղաքական շահերից, շաղկապվում կովկասյան ամբողջ հիմնահարցի հետ։

Հենվելով Թուրքերի տարածած լուրերի, մասնավորապես Թալեաթի և Մոսկվայում Թուրքիայի դեսպան Քյամիլ փաշայի տեղեկություններ վրա, Բեռլինում Ռուսաստանի ներկայացուցիչ Ա. Իոֆֆեն սեպտեմբերի 17-ին զրույցի ժամանակ հայտնում էր իր կառավարության տեսակետը. քանի որ հայերը դաշն են կապում Թուրքիայի հետ, միավորվում, կազմում են կոնֆեդերացիա, Ռուսաստանը չի կարող համաձայնվել նրա անկախության հետ։ Նրա կարծիքն էր. մինչև Ռուսաստանի ուժեղացումը և ռուսական ընդհանուր կոնֆեդերացիայի կազմումը պետք է Հայաստանին տալ անկախություն, պայմանով, որ նա ապագայում մտնի իրենց ֆեդերացիայի մեջ և դաշն չկնքի Թուրքիայի հետ Ռուսաստանի դեմ[109]։

Իոֆֆեն տեղեկացնում էր, որ թեև Տաճկաստանը համաձայնվել է դատարկել Կովկասի գրաված վայրերը, բայց ռուսական կառավարությունը դրանով չի բավարարվում և պահանջում է Բաքուն ձեռքից-ձեռք իրեն հանձնել, իրականացնել Կարսի և Բաթումի ինքնորոշումը, դրել է Թուրքահայաստանի ինքնավարության հարցը։ Ռուսաստանը խզել է խաղաղ ժամանակվա իր բոլոր հարաբերությունները Թուրքիայի հետ և իրավաբանորեն երկու կողմերն էլ կարող են սկսել պատերազմական գործողություններ[110]։ Այսպիսի պայմաններում, ասել է Իոֆֆեն հոկտեմբերի 12-ին, «այլևս ոչ մի դեպքում Հայաստանի անկախության մասին խոսք անգամ լինել չի կարող։ Մեր պահանջով Թուրքերը հեռանում են Կովկասից և ձեր երկիրը մնում է Ռուսաստանի մի մասը, ինչպես առաջ էր։ Ինչ կապերով նա կլինի կապված մեզ հետ, դա այլ խնդիր է. կլինի ինքնավար, բայց Ռուսաստանի ֆեդերացիայի մեջ։ Մենք դեռ Վրաստանի անկախությունը չենք ընդունել, Ադրբեջանինը՝ երբեք չենք ընդունելու։ Իոֆֆեն պահանջում էր հայերից, որ նրանք հայտարարեն. «Մենք Ռուսաստանի հետ ենք և նրա հետ դնում ենք այս և այն պահանջները»[111]։

Անդրադառնալով Հայաստանի անկախության հարցին, Բերնսդորֆը հայտնել էր այն միտքը, որ Գերմանիան չի կարող ճանաչել այն, սակայն կունենա պաշտոնական կապ «Երևանի հանրապետության հետ»[112]։ Բեռլինյան հանդիպումներում Բերնսդորֆը և Թալեաթը պահանջում էին, որ վավերացվի Բաթումի պայմանագիրը և չէին զանում հարստահարել ձեր անունը, գրում էր Ա. Զուրաբյանը Կոստանդնուպոլսի պատվիրակներին սեպտեմբերի 16-ին, հորդորելով նրանց, որպեսզի նրանք կտրուկ կերպով հայտարարեն, որ իրենց պարտքն են համարում պաշտպանել Բրեստի պայմանները։ Ա. Զուրաբյանը կարծում էր, որ պետք է հրապարակել հուշագիր Բրեստի սահմանների պահպանման, Կարսի մարզը վերստանալու և հանրաքվե անցկացնելու մասին։ Այդ պետք էր անել, քանի որ Թալեաթը Բեռլինում խոսում էր Կոստանդնուպոլսի պատվիրակության անունից[113]։

Գերմանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գյոպերտը պնդում էր այն տեսակետը, որ Հայաստանի անկախությունը չճանաչելով, Գերմանիան ի նկատի ունի Հայաստանի շահերը։ Նա համոզում էր հայ պատվիրակներին, որ եթե Հայաստանի և Վրաստանի անկախությունը ընդունվի, իսկ Ադրբեջանինը ոչ, դա կնշանակի, որ քրիստոնյա պետություններ են ստեղծվում, հակառակ մուսուլմանության, որը «ընդանց կգրգռի հայերի դեմ»[114]։

«Ինձ համար անկախության հարց գոյություն չունի այնպես, ինչպես դնում են հայերը,— ասում էր Գյոպերտը,— հարցը նրանում է, թե արդյո՞ք հայերն ունեն անկախություն, փաստորեն այն գոյություն ունի Հայաստանում և Ադրբեջանում։ Այդ հարցին մի պատասխան կարելի է տալ։ Այո։ Ինձ համար ոչ մի նշանակություն չունի, թե Պետրոսը կամ տալ։ Այո։ Ինձ համար ոչ մի նշանակություն չունի, թե Պետրոսը կամ Կիրակոսը ճանաչում են իրավաբանորեն իմ գոյությունը, թե ոչ, քանի որ ես գիտակցում եմ իմ գոյությունը»։ Այդպիսով, Գերմանիան Թուրքիային ուզում էր համոզել, որ նա ասպարեզից հետ քաշի Հայաստանի անկախության հարցը, խոստանալով «փաստորեն իրական փոխադարձ հարաբերություններով ճանաչել այդ անկախությունը»[115]։

Այսպիսով, Բեռլինում, Կոստանդնուպոլսում, Վիեննայում հայոց պատվիրակների հանդիպումներն ու քննարկումները գերմանական, ավստրո-հունգարական, ռուսական, վրացական դիվանագետների հետ, ցույց տվեցին, որ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի անկախության ճանաչման, կովկասյան ժողովուրդների կոնֆեդերացիայի կազմակերպման հարցը ստանում էր նոր, բազմերանգ ընթացք։

Որպես առաջին փուլ, Թուրքերը ցանկանում էին կազմել կոնֆեդերացիա՝ «սրտակից դաշինք» Հայաստանի հետ, որը Թուրքիայի ղեկավարությամբ արևելյան մեծ ֆեդերացիայի ստեղծման առաջին քայլն էր։ Նրա կազմում պետք է լիներին Թուրքիան, Հայաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը։ Ըստ համաթուրքիզմի տեսաբանների. «այդ ֆեդերացիան ստիպված պետք է ճանաչեն ամբողջ Ամերիկան, ամբողջ Եվրոպան և նույնիսկ բոլշևիկները»[116]։

Կովկասի լեռնական ժողովուրդների ներկայացուցիչները ցանկանում էին միավորել Հյուսիսային և Հարավային Կովկասը, որպես համադաշնական պետություն։

Թուրքիայի հետ «սրտակից դաշինք» կնքելու դեպքում Հայաստանը լրիվ կուլ էր գնալու Թուրքիային, կձուլվեր նրա հետ։ Այդպիսով կվերանար նաև Հյուսիսային և Հարավային Կովկասի միավորման միջև եղած հակահամաթուրանական սեպը։

Վրաստանի հետ կոնֆեդերացիայի դեպքում Հայաստանը ընդմիշտ կորցնելու էր Լոռին, Ախալքալաքը և հայկական այլ հողեր. նրանք մնալու էին Վրաստանի կազմում, Հայաստանը ունենալու էր սահմանափակ իրավունքներ։ Վրաստանի և Գերմանիայի միջև կնքված պայմանագրով գերմանական գերիշխանություն հաստատվելու էր և Հայաստանում։

Կոնֆեդերացիայի գաղափարը հայ և վրացի պատվիրակներին տվել էր Բերնհարդը։ «Գրուզիա» թերթը 1918 թ. սեպտեմբերի սկզբներին գրում էր. Հայաստանը տապալված է, քայքայված ու պատառ-պատառ արված։ Նրա բախտը այժմ մեզնից է կախված։ Ադրբեջանը փաստորեն հափշտակված է Թուրքերի կողմից։ Իսկ Վրաստանը՝ շնորհիվ իր ժողովրդական ոգու հզորության, ժողովրդական մասսաների գիտակցության և շնորհիվ գերմանական ազգի ներկայացուցիչների կողմից ժամանակին ցույց տրված հովանավորության, փրկվեց»[117]։

Գոյություն ուներ և հայ-ադրբեջանական կնճիռը։ Երկու հարևան երկրների հարաբերությունների վրա ազդում էր երրորդ ուժը՝ Թուրքիան, զրկելով Ադրբեջանին որպես ինքնուրույն միավոր հանդես գալու հնարավորությունից։ Թուրքիան Ադրբեջանի հետ վարվում էր որպես իր գավառի, հայ-ադրբեջանական հարաբերությունները փաստորեն վերածվել էին հայ-թուրքականի։ Ադրբեջանի քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ ներծծված էր թուրքական ազդեցության թանձր գունավորումով, թուրքական զորքի Ադրբեջան մտնելուց հետո այն զուգակցվում էր հայերի կոտորածներով ու թալանով, բռնություններով ու տեղահանումներով, հայերի երթևեկության արգելումով, անհանդուրժո-

ղական մոտեցումով։ «Եթե այսօր Անատոլիան արյուն է թափում հանուն Ադրբեջանի ազատագրման, վաղը՝ Ադրբեջանը կփրկի նրան։ Անատոլիան փրկելով Ադրբեջանը, փրկում է իրեն...»[118],— բարբառում էին համաթրքության գաղափարախոսները։

«Թուրքերը ցանկանում են Ադրբեջանից մտնել զուտ հայկական գավառ Ղարաբաղ և զինաթափել այն,— գրում էր Ֆոն Կրեսը ռայխսկանցլեր Հերտլինգին օգոստոսի 4-ին,— նոր պատերազմը նրանց միջև անխուսափելի է, եթե այն մենք չկասեցնենք»[119]։

Թուրքական զորքերի առաջխաղացման դադարեցումը դեպի Բաքու պահանջվում էր Անդրկովկասում գտնվող գերմանական, ավստրո-հունգարական, բուլղարական դիվանագիտական ներկայացուցիչներ, գեներալներ Ֆոն Կրեսի, բարոն Ֆրանկենշտայնի, Ստոյանովի հղած համատեղ նամակում, Բաքուն զավթելու մեջ տեսնելով ավերիչ գործողություններ[120]։

Գերմանիան այլևս չցանկացավ որևէ նշանակալից զիջում անել Թուրքիային Անդրկովկասում և թալեաթ փաշան Բեռլինում չհամառեց կորզելու այդ զիջումը, ենթադրելով, որ Բաքվի գրավումով դաշնակիցներին կկանգնեցնի կատարված փաստի առաջ։

ՀԱՅԵՐԸ ԲԱՔՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Թուրքական հրամանատարությունը շտապում էր դեպի Բաքու։ Այդ մասին Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներ Ա. Ահարոնյանին և Ա. Խատիսյանին հայտնեցին Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Բերնհարդորֆը և ավստրիական զինվորական գլխավոր ներկայացուցիչ Յո. Պոմյանկովսկին հունիսի 23-ին և 26-ին ունեցած զրույցների ժամանակ։ «Թուրքերն անցան իրենց տրված իրավունքի սահմանները։ Մեր գլխավոր զինվորական մարմինը այժմ պահանջում է անմիջապես զորքերը շարժել դեպի Միջագետք, բայց նրանք դեռ ձգձգում են։ Պատճառը Բաքվի հարցն է։ Քանի որ Թուրքիան ուզում է այն ձեռք գցել Ադրբեջանի համար, այսինքն, իրականում իր համար, որովհետև նա փաստորեն կտիրանա Ադրբեջանին»[121],— ասել է դեսպանը։

«Թուրքիան ուզում է Բաքուն իր համար. եթե Բաքուն անցնի Ադրբեջանին՝ այսինքն Թուրքիային, այդ ժամանակ Թուրքիան կտարածվի մինչև Վլադիկավկազ, որն անթույլատրելի է մեզ համար։ Դրանում է Դաղստանի խնդրի մեխը։ Դաղստանը պետք է անցնի Ռուսաստանին»[122],— ասել էր Պոմյանկովսկին։

«Բաքվի պաշտպանությունը ուներ մեծ նշանակություն Ռուսաստանի սահմանները պաշտպանելու գործում,— գրում է գեներալ Հակոբ Բագրատունին,— բայց հատկապես բացառիկ է նրա ունեցած նշանակությունը հայության գոյության համար։ Ինձ այլևս պարզ էր, որ գրավելով Բաքուն (հայերի համար իրենց բոլոր հետևանքներով), Թուրքերը հի-

տևողականորեն կգրավեին Ղարաբաղն ու Երևանը, որը կնշանակեր մեր ժողովրդի համար ֆիզիկական կործանում, լրիվ տարրալուծում և իրոք, Բաքուն գրավելուց մի շաբաթ հետո թուրքական բրիգադը՝ մոտ 6000 մարդ, մտավ Շուշի։ Ահա ինչու, ես մշտապես խորհում էի Բաքվի պաշտպանության անհրաժեշտության մասին, նույնիսկ զուտ հայկական տեսանկյունից (չէ որ Բաքվի պաշտպանները գերազանցապես հայեր էին), որպեսզի թուրքերին չթույլատրվի վերջնականապես ոչնչացնել հայերին, զրկել տալ նրանց կոտորածից վերջ մնացած հայկական շրջանները։ Բաքվի հերոսական և փառապանծ պաշտպանությունը խաղաց հսկայական դեր հայ ժողովրդի փրկության գործում»[123]։

Բագրատունու մաքերին համահունչ է անգլիացի պատմաբաններ Ալլենի ու Մուրատոֆի եզրակացությունները. «Հայերը, որոնք գործնականում ավելի ծանրակշիռ կերպով էին մխրճվել Բաքվի համար մղվող պայքարի մեջ, քան թե քաղաքը պաշտպանող մյուս ուժերից որևէ մեկը, փաստորեն քիչ էին շահագրգռված քարյուղի հանքերի պաշտպանության հարցերով։ Սակայն, Բաքվի հայերի առջև մեծ չափով դրված էր միևնույն ողբերգական խնդիրը, որը ծառացել էր Բուրքական և ռուսական Հայաստանի ավելի փոքր կենտրոններում, ուր հայերը ապրում էին վտանգավոր մոտիկության մեջ իրենց դարավոր ղրացիների և բշնամիների՝ մահմեդական թաթարների հետ։ Քուռ գետի հովտի Նուխին, Շամախին, Շուշին և ուրիշ հիմնավորը գյուղաքաղաքներ տեսել էին այդ երկու ազգերի բախումների վանազան փուլերը։ Հայերը ավելի կանուխ սկսեցին կազմել ազգային գումարտակներ այդ վայրերում, ինչպես նաև Ազստաֆա կայարանին մոտիկ Ղազախում, որտեղից անցնում էր Գանձակի ու Դիլիջանի միջև օսմանյան թուրքերի հաղորդակցման կենսական գիծը»։ Եվ նորից. Բաքվում և այլուր «հայերից բաղկացած զինվորական ուժի պարտականությունն էր հայ բնակչության պաշտպանությունը։ Ադրբեջանում բավականին մեծ թվով ցրված հայերից բոլորը չէ, որ ապաստանել էին Բաքվում, հայերի շոշափելի խմբավորում կար Շամախի հին մահմեդական քաղաքում (Բաքվից 60 մղոն դեպի արևմուտք), ուրիշ մի խմբավորում կար Քուռի դեպաբերանում՝ Սալյանում և այլ կենտրոններում։ Բոլոր այդ հայերը վտանգված էին, նրանց տեղական զինված կամավորները կարող էին պաշտպանել իրենց և բոլոր հարևաններին, բայց անտարակույս, պետք է անհրաժեշտ լինեին ընդդեմ թուրքերի, որոնք այն ժամանակ հասել էին Դիլիջան և շարժվել դեպի արևելք։ Ուստի որոշված էր Բաքվից դեպի արևմուտք գրավել այնքան տարածություն, որքան հնարավոր էր, նախքան օսմանյան թուրքերի կանոնավոր զորքերի կողմից ազերիների զինված խմբերին օգնության հասնելը»[124]։

Հայոց ճակատագրում Բաքվի պաշտպանության նշանակության մասին իր խոսքն է ասել նաև դաշնակցության Բաքվի կազմակերպության զեկավարներից Ս. Մելիք-Յոլչյանը։ «Մեծ է Բաքվի նշանակությունը բուն Հայաստանի համար,— գրել է նա,— պատմական Սարդարապատը, Վարաքիլիսան և Բաշ-Ապարանը իրենց հազթությամբ մեծ չափով պարտական են Բաքվի զորքերին, որոնք քաշելով իրենց վրա թշնամու առավելագույն և լավագույն ուժերը, հնարավորություն տվին նրանց պատվով դուրս գալու այդ հերոսամարտերից։ Դանվելով Երևանից յոթ վերստի վրա, տաճիկները չէին հանդգնում մտնել Երևան, վախենալով Բաքվի պատասխանատվությունից և ստիպված էին հետաձգել այդ քայլը, աշխատելով ցույց տալ իրենց «բարյացակամությունը» և «ցանկությունը»՝ տեսնել Հայաստանը «ազատ ու անկախ»։ Եվ վերջապես, ում է պարտական իր փրկությամբ Գանձակի, Ղարաբաղի, Զանգեզուրի Հայությունը, եթե ոչ անձնուրաց Բաքվի եղբայրներին և նրա անմահ գործիչներին։ Մեծ ախորժակով սրել էր իր ատամները Ադրբեջանի բրքությունը տաճիկների օգնությամբ կուլ տալու համար այդ գեղեցիկ վայրերը, բայց երբ հերթը հասավ, արդեն ուշ էր։ Պատերազմը վերջանալու էր»[125]։

Բաքվի պաշտպանությունում հայերի դերը լավ էին հասկանում էնվերը, Թալեաթը, խալիֆաթի մյուս հավատարիմ զավակները։ Բաքվում հայ զորաջոկատների չեզոքացմանն ու զինաթափմանն էին ձգտում Բաթումի հաշտության բանակցությունների թուրք պատվիրակները։ Եվ պատահական չէ, որ Օսմանյան կայսերական կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրում երևաց կետ. հայկական հանրապետությունը պարտավորվում է գործի դնել իր բոլոր ջանքերը, որպեսզի սույն պայմանագիրը ստորագրելուց անմիջապես հետո հեռացվեն Բաքու քաղաքից այնտեղ գտնվող հայկական զինվորական ուժերը և միջոցներ ապահովվեն, որ այդ հեռացումը ոչ մի ընդհարման տեղիք չտա։ Դա պայմանագրի 11-րդ կետն էր։ Թուրքական թակարդը և որոգայթը պարունակում էր 3-րդ կետը. «Հայաստանի կառավարությունը պարտավորվում է եռանդով դիմադրել հրոսակախմբերի կազմակերպմանն ու սպառազինմանը իր տարածքի սահմաններում, ինչպես և զինաթափ անել բոլոր այն հրոսակախմբերը, որոնք կգան այնտեղ թաքնվելու»։ Այդ թվում Անդրանիկի՝ չոկատը և Բաքվի հայկական զորամասերը, որոնք թուրքերի որակումով հրոսակախմբեր էին[126]։

Թուրքական խաղերը երևում են և Բաթումում Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության նախագահ Խատիսյանին Վեհիբի հունիսի 4-ին գրած նամակում. «Ես ոչ մի առարկություն չունեմ նախիջևանից և Ջուլֆայից իրենց զենքերով ու զինամթերքով հայկական զորքերի անցման դեմ դեպի Երևան, ինչպես նաև Ջուլֆայի գծով Պարսկաստանից վերադարձած զորքերի դեմ։ Դուք կարող եք վստահ լինել, որ մեր կողմից ձեզ համար ամեն ինչ կարվի փոխադրումները հեշտացնելու ուղղությամբ»։ Դա նամակում նշված 2-րդ կետն էր։ Իսկ 3-րդ կետով նորից հավաստելով «օսմանյան զորքերին շնորհված՝ Հայաստանի խճուղիներով անցնելու իրավունքը և այդ կետի ակնբախ անհրաժեշտությունը», Վեհիբը գրում է. «քանի որ սուլթանական կառավարության և Հա-

յաստանի Հանրապետության միջև խաղաղության դաշինք կնքված է, ապա հայկական զորքերի զորացրումը բնական է, ուրեմն և ոչ մի կարիք չկա, որ հայկական զորքերը նույնպես օգտվեն օսմանյան ճանապարհներից և խճուղիներից։ Ուստի այդ կապակցությամբ կայացրած մեր առաջարկությունները իրենց ուժը կորցնում են»[127]։ Թուրք քաղաքագետների խոսքի դրժման մեկ դրսևորում ևս։ Եվ իրենց «ազնիվ» խոսքից մի քանի ժամ հետո։

Բաքվից հայկական զորքերի դուրսբերման հարցը քննարկվում էր Հայոց Ազգային խորհրդի և թուրքական կառավարության միջև պայմանագրի ստորագրումից հետո ևս։ Քննարկվում էր Հայաստանի կառավարության կողմից հատուկ պատվիրակություն Բաքու ուղարկելու հարցը՝ «զորքերը էվակուացնելու և քաղաքն ու արդյունաբերությունը պատահական դեպքերից պաշտպանելու համար»։ «Որպեսզի հիշյալ հանձնաժողովը կարողանա ապահով կերպով հասնել մինչև Բաքու, ես անհրաժեշտ ձեռնարկումներ եմ առաջարկել Ադրբեջանի կառավարության խաղաղության պատվիրակությանը, ես պատրաստ եմ մի սպա տրամադրել այդ հանձնաժողովին, որը նրան կհասցնի մինչև այնտեղ, որտեղ պետք է»,— գրում էր Կովկասյան ճակատի օսմանյան զորքերի գլխավոր հրամանատարը Ա. Խատիսյանին՝ հունիսի 4-ին[128]։

Հայոց Ազգային խորհրդի կողմից Բաքու մեկնելու համար պատվիրակներ հաստատվեցին Մարտիրոս Հարությունյանը և Միքայել Արզումանյանը։ Նրանց հետ միասին հունիսի 10-ին դեպի Բաքու ճանապարհվեցին նաև թուրքերի ազգային խորհրդի պատվիրակության երեք անդամներ։ Պատվիրակության անդամները հունիսի 14-ին Գանձակում հանդիպեցին Նուրի փաշայի հետ։ Մուսալի կայարանում, սակայն, բոլշևիկների դեմ կռվող տաճիկ զորքերի հրամանատար Նազըմ բեյը չթույլատրեց պատվիրակներին սպիտակ դրոշակով ճակատն անցնել, պատճառաբանելով, «որ նա բոլշևիկների վրա վստահություն չունի, թե նոքա կհարգեն սպիտակ դրոշակը և չեն սպանի պատվիրակներին»։ Հայոց Ազգային խորհրդի պատվիրակությունը վերադարձավ Գանձակ։ Ամսի 25-ին Նուրի փաշային տեղյակ պահելով այդ մասին, պատվիրակությունը մեկնեց Թիֆլիս[129]։

Պատվիրակությունը Թիֆլիսում զեկուցեց Ազգային խորհրդին, որ իր միջնորդությամբ «անարյուն» անցավ Գանձակի հայության զինաթափությունը։ «Նուրի փաշայի խնդրանքով մենք նամակներ գրեցինք Ղարաբաղի հայությանը, հորդորելով դադարեցնել կռիվները տաճիկ զորքերի դեմ, չարգելել քոչը և խաղաղ ապրել հարևան թուրքերի հետ»։ Հունիսի 27-ին զեկուցելով վերոհիշյալի մասին, պատվիրակության անդամները անհրաժեշտ էին համարում Ազգային խորհրդի կարգադրությունը՝ դեպի Բաքու ճանապարհը շարունակելու մասին։ Նպատակն էր հայտնել Համազասպին, որ «Հայաստանում պատերազմը ավարտվել է, կառավարությունը ձևավորվել է, կնքվել է պայմանագիր թուրքերի հետ»[130]։

Բաքվի իրավիճակի հարցը քննարկվեց Հայոց Ազգային խորհրդի 1918 թ. հունիսի 15-ի նիստում։ Զեկուցողը Բաքվից նոր եկած գեներալ Իվան Բաղրամովն էր։ Գեներալը հաղորդեց, որ 8 հազարանոց բանակով Բաքվի զորքերը որոշել են անցնել Հաջի-Քաբուլ։ Զորքերի հրամանատարը Ղազարյանն էր, շտաբի պետը՝ Ավետիսյանը, «որոնք լավ գիտակ են ռազմական գործին»։ Համազասպի խմբում կար 3500 մարտիկ, «ոգևորված են, Համազասպին լսում են, որոշ կարգապահություն կա։ Անգլիական զորքը կարող է միացնող օղակ հանդիսանալ, Ռուսաստանից մարդ չի լինի, բայց ռազմամթերք՝ առատորեն»։ Տեղեկացվեց Ա. Գյուլխանդանյանի հաղորդման մասին. «Շահումյանից ուզել է 200 սպայի տեղ, Շահումյանը դժվարանում էր։ Լենինից հեռագիր կար՝ հայերի ցանկություններն ընդունել։ Ներքին գործերի մեջ չէին ուզում խառնվել։ Տեղի բոլշևիկների տրամադրությունը կարծես հաշտեցուցիչ էր։ Ռոստոմի կարծիքով, 14 օրից կարող է գալ 10.000-անոց անգլիական զորք։ Ղազարյանի կարծիքով, որը շատ լուրջ զինվորական է, եթե երկու գունդ լինի, Բաքուն կդիմանա։ Զինվորական խորհրդի կարծիքն էլ այն է, որ պետք է դիմադրել։ Խորհրդային իշխանությանն են ենթարկվում ոչ միայն Բաքուն, այլև շրջանը»[131]։

Բաքվի Կարմիր բանակի հայկական զորամասերը այդ ժամանակ քաղաքից շարժվել էին դեպի արևմուտք ավելի քան 100 կիլոմետր։ Համազասպի բրիգադը դիրքեր էր գրավել Քյուրդամիր կայարանից դեպի Շամախու ճանապարհը տանող գոտում։ Ճակատն անցնում էր Շամախուց Աղսուի վրայով մինչև Քյուրդամիր կայարանը, Թիֆլիս-Գանձակ-Բաքու երկաթուղով մինչև Պետրոպավլովկա գյուղը՝ Արաքս և Քուռ գետերի միացման կետը։ Մարտական գործողություններին մասնակցում էր 16 գումարտակ։ Թուրք-ադրբեջանական ուժերը կենտրոնացել էին Մուսալի կայարանում, Քյուրդամիրից 20 կմ դեպի արևմուտք և Գյոկչայում՝ Եվլախ տանող ճանապարհի վրա։ Հունիսի 16—17-ին թեժ կռիվներից հետո հայկական զորամասերը գրավեցին Կարամարյանը, Ջուրովկան։ Մինչև հունիս 26-ը այս գծի վրա էին. հունիսի 27-ին առաջ շարժվեցին Գանձակից հարձակվող թուրքական հրոսակների դեմ։ Հունիսի 29-ից մինչև հուլիսի 1-ը տեղի ունեցան թեժ կռիվներ թուրքական մեկ գնդի, հրետանու և ադրբեջանական միլիցիայի դեմ։ Հայկական զորամասերին օգնում էր և Շամախու կամավորական գումարտակը։ Թադևոս Ամիրյանի ղեկավարած հեծյալ ջոկատը մտնելով Շամախի, վերջ տվեց հայերի և ռուսների կոտորածներին ու թալանին։ Թուրքերը փախան դեպի լեռները։ Կարամարյան գյուղի մոտ չորսօրյա կռիվներից հետո Համազասպի բրիգադը թուրքական ջոկատներից գրավեց յոթ գնդացիր. Թուրքերը փախան Գյոկչա։ 3-րդ բրիգադի մարտիկները գրավեցին այն։ Հարձակվող զորամասերի ճանապարհը փակեց Քուռ գետի ջրհեղեղը։ Քանդվել էին կամուրջները, անցումը դարձել էր անհնար։ Եվլախ կա-

յարանի մոտ Օրբելյանի 21-րդ գումարտակը ընկավ ծուղակ։ Ամիրյանի ջոկատը հետ քաշվեց Քյուրդամիր։ Օգնության եկան Բաքվի կոմունայի նոր ուժեր։ Հուլիսի սկզբներին Բաքվի պաշտպաններն արդեն ունեին 30 գումարտակ, յուրաքանչյուրը 4—500 մարդ. նրանց մեջ կային կարմիր բանակ զորակոչված ռուս մասնագետներ, տուն վերադարձող հայ զինվորներ ու քաղաքացիներ, գաղթականներ, փախստականներ Ղարաբաղից, Երզնկայից, Վանից։ Չորքը ուներ 54 հրանոթ, տարբեր տեսակի հրանոթների 9 մարտկոց, երկու հարյուրյակ հեծելազոր։ Գնդապետ Ղազարյանը 2000 զինվորներով և զրահապատ մեքենայով կռվում էր Դաղստանից արշավող Իմամի զորքերի դեմ, Բեկ-Զուրաբյանի և Հարությունյանի բրիգադները՝ Մուղանի դաշտում։ Հուլիսի 5-ին Բաքու եկավ Բիշերախովը. նա անմիջապես կարգվեց Աղսու-Քյուրդամիր գծի զորախմբի հրամանատար։ Չէր հասցրել Բիշերախովը գալ Քյուրդամիր, երբ հուլիսի 8-ին թուրքերը երկու գնդով, ադրբեջանական միլիցիայով, հեծյալ հրոսակներով հարձակվեցին Քյուրդամիր-Կարամարյան ուղղությամբ։ Հայկական զորքերը հետ քաշվեցին, իրենց հետ տանելով մոտ 50 հազար հայ և ռուս ազգաբնակչություն։ Ճակատ եկան Բաքվի խորհրդի ներկայացուցիչներ՝ բոլշևիկներ Ա. Ջափարիձեն, Բասինը, դաշնակներ Ս. Մելիք-Յոլչյանը, Ն. Ջաղեթյանը, ձախ էսեռներ Սարգսյանը, Պերչկովը, աջ էսեռներ Վելունցը, Ումանսկին։ Ռազմաճակատի վիճակի մասին պատվիրակությանը զեկուցեցին Ղազարյանին փոխարինած Բիշերախովը, Ավետիսյանը, Բեկ-Զուրաբյանը։ Հայկական ուժերը կենտրոնացվեցին Բալաջար և Բիբի-Էյբաթ կայարանների միջև, Բիշերախովի կազակները՝ դեպի Դերբենդ տանող խճուղու վրա, Սումգայիթի շրջանում։ Այստեղ Բիշերախովը, Սումգայիթին թիկունքից հարված հասցնելու փոխարեն դավաճանեց հայկական զորամասերին և փախավ Հյուսիսային Կովկաս՝ Պետրովսկ, իր հետ տանելով 20 թնդանոթ, 40 գնդացիր, մեկ զրահագնացք։ Հրամանատարությունն իր վրա վերցրեց գնդապետ Ավետիսյանը[132]։

Հուլիսի 26—28-ին Բաքուն գտնվում էր թուրքական հրետանու գնդակոծման տակ։ Ժամանակակիցների վկայությամբ, քաղաքում ծպտված թուրքական գործակալները «մեծ ճարպկությամբ ուղղություն էին տալիս թուրքական թնդանոթներին»[133]։ Բիշերախովի փախուստից հետո ավելի է սրվում քաղաքական իրադրությունը։ Հուլիսի 29-ին կայացավ Բաքվի խորհրդի նիստը։ Ստ. Շահումյանը հայտնելով, որ դրությունը ծանր է, բոլոր միջոցները սպառվել են, անհնար է դիմադրել թուրքերին, կարդաց Նուրի փաշայի նամակը, որը ուղարկվել էր նաև Հայոց Ազգային խորհրդին։ Փարիսեցության և կեղծիքի նմուշ հանդիսացող նամակում ասված էր. «մենք՝ տաճիկներս, եկել ենք Կովկաս, ոչնչացնելու հարմար բռնակալ Ռուսաստանը և նրա ավերակների վրա պետք է հիմք դնենք Կովկասյան ժողովուրդների ազատության և երջանկության։ Ով թանկ է գնահատում ազատությունը, պետք է աջակցի մեզ, որպեսզի մենք վերջնականապես ոչնչացնենք այդ հյուսիսի արջին։ Այդ

խոկ պատճառով դիմադրել մեզ՝ կնշանակի նպաստել ռեակցայի հաղթանակին։ Հանուն ժողովուրդների ազատության և երջանկության, քաղաքը պետք է հանձնել մեզ»[134]։

Նույն օրը Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Շերոլդաևը, բոլոր կուսակցությունների, զինվորական մասերի, Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչները՝ Լիստոմը, Համազասպը, Ամիրյանը, Կարմիր բանակի ջոկատի պետեր և ուրիշներ, քաղաքի պաշտպանության հարցը քննարկեցին հիվանդանոցում բուժվող գեներալ Հ. Բագրատունու հետ։ Պարզվեց, որ բոլշևիկները կոնկրետ օգնության ակնկալություններ չունեն ո՛չ Հյուսիսային Կովկասից, ո՛չ Աստրախանից, ո՛չ Մուղանից։ Եկել էին Պետրովի ջոկատը՝ հրետանիով, 200 հեծյալ՝ Մուղանից։ Կարուկ դրվեց անգլիացիներին Բաքու հրավիրելու հարցը։ Շահումյանը վճռականորեն դեմ էր[135]։ Հուլիսի 30-ին քաղաքային խորհրդի նիստում դաշնակցականների, աջ սոցիալիստ-հեղափոխականների, սոցիալ-դեմոկրատ մենշևիկների խմբակցությունները հարկ համարեցին քաղաքը հանձնել անգլիացիներին. Լիստոմը հրապարակում է էնզելիից ստացված հեռագիրը, որտեղ հայտնվում էր. 5000 անգլիական զինվորներ պատրաստ են Բաքու մեկնելու։ Հեռագիրը ստացել էր սոցիալիստ-հեղափոխական Միքայել Տեր-Պողոսյանը[136]։ Շահումյանը տալիս է իր հրաժարականը[137]։

Անգլիացիներին Բաքու հրավիրելու ցանկության հարցը նորություն չէր։ Անգլիական հրամանատարության հետ Բաքվի Հայոց Ազգային խորհրդի բանակցությունները սկսվել էին մարտյան դեպքերից անմիջապես հետո։ 1918 թ. մայիսի սկզբներին Ազգային խորհրդի կողմից Պարսկաստան էր գործուղվել Ս. Տեր-Ղազարյանը, որը Ղազվինում հանդիպել էր անգլիական գեներալ Դենստերվիլի հետ։ Անգլիացիները խոստանում էին մինչև հուլիսի վերջերը Բաքու ուղարկել մեկ դիվիզիա զորք։ Շտաբում մասնավոր խոսակցության ժամանակ Ջապել Նազարյանին ասել էին, որ անգլիական զորքի թվաքանակը կլինի մինչև 40 հազար։ Հունիսի սկզբներին անգլիական հրամանատարության հետ բանակցությունների գնացին Հայոց Ազգային խորհրդի պատվիրակներ Մ. Տեր-Պողոսյանը և Ա. Արարատյանը։ Պատվիրակներին ասացին. «Հայերը մեզ պետք են միայն սկզբում, ապա ամեն ինչ կվերցնենք մեզ վրա՝ հուլիսի վերջին կտանք մեկ դիվիզիա, միայն թե Հայոց Ազգային խորհուրդը բացի նավերի ճանապարհը»։ Բանակցությունները տարվում էին Ազգային խորհրդի կողմից, առանց Բաքվի ժողկոմխորհի գիտության։

Շահումյանի հրաժարականից հետո, հուլիսի 31-ին Բաքվում ստեղծվեց «Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զինվորների, նավաստիների խորհրդի դիկտատուրա»՝ կազմված հիմնականում ոչ հմուտ քաղաքագետներից։ Նախագահը ռադիոհեռագրել հիմնականում ոչ հմուտ քաղաքագետներից։ Նախագահը՝ Ալեքսանդր Տիշկովն էր (սոցիալիստ-հեղափոխական), փոխ-նախագահը՝ Ալեքսանդր Առաքելյանը (դաշնակ), արտաքին գործերի կոմիսարը՝ Սադովսկին,

ֆինանսների կոմիսարը՝ Ս. Մելիք-Յոլչյանը (դաշնակ), ներքին գործերի կոմիսարը՝ Լև Ումանսկին (սոցիալիստ-հեղափոխական)։ Դիկտատուրայի օպերատիվ բաժնի պետը Ի. Բահաթրյանն էր (մենշևիկ)։ 18 հոգուց բաղկացած դիկտատուրայի մեջ մտնում էին նաև Ավետիս Օհանջանյանը, Ռոստոմը (դաշնակ), Աբրահամ Վելունցը, Հովհաննես Տեր-Հովհաննիսյանը (սոցիալիստ-հեղափոխական), Օլովը (մենշևիկ) և ուրիշներ[138]։

Ռազմա-ծովային կոմիսար նշանակվեց Գեներալ Հակոբ Բագրատունին, որը դեռ ապաքինվում էր (այդ ժամանակ նրան փոխարինում էր Գ. Մակարյանը), սակայն ռազմական գործի իր հմտությամբ դրականորեն էր ներգործում քաղաքի պաշտպանության վրա։

«Իր նպատակը Բագրատունին համարում էր ըստ հնարավորին երկարաձգել քաղաքի պաշտպանությունը և նրա վրա գրավել որքան կարելի է ավելի շատ թուրքական ու ադրբեջանական ուժեր, քանի որ դրանով պաշտպանվում էին ոչ միայն Ռուսաստանի շահերը, այլև փրկվում էր Ղարաբաղի և Երևանի նահանգի հայ բնակչությունը։ Դրանում նա համոզել էր Ռոստոմին և հաճախ, նույնիսկ այն րոպեին, երբ ամեն ինչ թվում էր կորած, նրանք չանում էին զինվորներին ու բնակչությանը ներշնչել հույս և ոտքի հանել հանուն առաջադրված նպատակի»[139]։ Դիկտատուրայի զորքերի ընդհանուր հրամանատար նշանակվեց գեներալ Դոկուչաևը, շտաբի պետ՝ գնդապետ Ավետիսյանը, բանակի մատակարարման պետ՝ Մ. Տեր-Պողոսյանը։ Շտաբի օպերատիվ բաժնի պետը գերմանացի գնդապետ Ֆոն դեր Պֆլանցեն էր, որը ըստ 3-րդ բրիգադի օպերատիվ տվյալների, թուրքերին տեղեկացնում էր «մեր ճակատի վիճակի մասին, որը հարցրեց վերջին դավաճանական հարվածը առանց այդ էլ թույլ և հյուծված Բաքվի բանակին»[140]։

Նուրի փաշայի հուլիսի 31-ի վերջնագրից հետո սկսվեց անհավասար մարտը հայ զինվորների և ուաճկական բանակի ու խաժամուժի միջև, որը տևեց 6 օր։ Հայերի դեմ կանգնած էին թուրքական 30-հազարանոց բանակը, Սալյանի գվարդիան, Հալիպոլիսում անգլիացիների դեմ հաղթանակ տարած դիվիզիաները՝ Նուրի փաշայի և Հեծելազորի պետ Մուրսել փաշայի գլխավորությամբ, գերմանական ռազմական մասնագետները։ Տաճիկների կողմն էին Բաքվի 50 հազար թաթարները, դեռևս չէին կողմնորոշվել 70 հազար ռուսները և 20 հազար հրեաները, կրավորական դիրք էին բռնել 5,5 հազար վրացիները։ Քաղաքը պաշտպանողների մեջ էին կասպիական նավատորմիղը, Պետրովի հրետանին 6 հրանոթով և հայկական գումարտակները[141]։

Պաշտպանության աջ թևը ղեկավարեցին փոխգնդապետ Բեկ-Զուրաբյանը, ապա գնդապետ Հարությունյանը։ Սալյանի շրջանը պաշտպանում էր Շամախու գունդը՝ Համազասպի ղեկավարությամբ, աջ կողմից 4, 5, 10, 20-րդ գումարտակներն էին՝ փոխգնդապետ Խոջաէյնաթյանի գլխավորությամբ։ Այդ օրերին Բաքու եկան Մուրադը և Սեպուհը։ Օգոստոսի 3-ին թուրքերը ուժեղացրին ճնշումը ամբողջ ճակատով՝

հատկապես աջ թևում և կենտրոնում՝ Արամ Դովլաթյանի ղեկավարած 16-րդ գումարտակի վրա։ «Օգոստոսի 3-ին, ամբողջ օրը կռիվները շարունակվում էին սոսկալի կատաղությամբ,— գրում է Աբրահամ Գյուլխանդանյանը,— թշնամին ցույց էր տալիս մեծ լուանդ ու նախաձեռնություն, իսկ մերոնք դիմադրում էին մեծ քաջությամբ, համարձակությամբ և համառությամբ։ Թնդանոթների հարվածներին հաջորդում էին գնդացիրները, հրացանների կրակոցները կամ սվինամարտ և այսպես մինչև ուշ երեկո։ 16-րդ գումարտակը, որ կռվում էր մեծ հաջողությամբ, կորցրեց իր հրամանատար Արամին, որը ծանր վիրավորվեց և անկարող էր վարել այդ դրությամբ կռիվը։ Զրկվելով իր հրամանատարից, զորքը կարծես ուզում էր նահանջել, Մուրադը, որ այդ ժամին այնտեղ էր և մասնակցում էր կռիվներին, նկատելով զորամասի ճգնաժամային վիճակը, զինվորներին իր անձնական օրինակով խրախուսելու նպատակով, քաջարար առաջ է անցնում։ Մուրադին հետևում է զորամասը։ Թշնամին այլևս անկարող է լինում շարժվել և կանգ է առնում։ Երկու թշնամի կողմերը միմյանց չեն զիջում մի թիզ հող, սակայն թշնամին այլևս անզոր է սպառնալ, նա նորից իր նախկին դիրքերն է անցնում։ Ահա այդ հերոսական կռվի վայրկյանին էր, որ Մուրադը կարողացավ կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, բայց ինքը ընկավ հերոսաբար[142]։

Օգոստոսի 4-ին Հայոց Ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանը ստացավ Մուրսել փաշայի օգոստոսի 3-ին գրած սպառնալից, հայերին Բաքվից տեղահանելու առաջարկությամբ նամակը. «Ձեզ արդեն հայտնի է, որ Բաքու քաղաքի դեմ գործում է օսմանյան բանակը։ Եթե դուք համաձայնվեք քաղաքը հանձնել առանց կռվի, այդ դեպքում առանց ազգի ու կրոնի խտրության, ամբողջ ազգաբնակչության իրավունքները կպաշտպանենք։ Ձեզ, առանձնապես հայերիդ, թույլ կտրվի և կերաշխավորվի անարգել փոխադրվել Բաքվից Հայաստան, եթե իհարկե, դուք այդ բանը կուզենաք։ Իսկ եթե քաղաքը չհանձնվի, որը, համոզված դնում, պիտի գրավվի մեր կողմից, այն ժամանակ և վնասների և թափված արյան պատասխանատվությունը կընկնի ձեզ վրա»[143]։

Կռիվները սաստկացան օգոստոսի 4-ին և 5-ին։ Հակառակորդը ստանալով նոր համալրում, ուժեղացրեց ճնշումը Բախլովի և Սալյանի շրջաններում։ Թշնամին տոնում էր իր հաղթանակը, սակայն այդ ծանր պահին գնդապետ Ավետիսյանը իրականացնում է իր տակտիկական մտահղացումը՝ թշնամուն խոցել թիկունքից։ Հայկական զորամասերին հաջողվեց ոչ միայն կանգնեցնել թուրքերի հարձակումը, այլև նրանց մատնել փախուստի։ Օգոստոսի 5-ին թուրքերը բաղաք չմտան, սակայն թուրքական հաղթանակի և Բաքուն գրավելու մասին հայտնվեց ի լուր ամբողջ աշխարհի։

Օգոստոսի 4-ի և 5-ի կռիվների մասին Ա. Գյուլխանդանյանը գրել է. «Քաղաքը կատարյալ դժոխք էր դարձել, հարյուրավոր վիրավորներով

լցվել էին բոլոր հիվանդանոցները։ Թնդանոթային ռումբերը բազմաթիվ շենքեր էին անբնակելի դարձրել և տասնյակներով մարդկային զոհեր էին խլում ու չնայած դրան, այնուամենայնիվ, քաղաքացիներն ու զինվորները նույն ոգևորությամբ ու զարմանալի արիությամբ ու քաջությամբ պատասխանում էին թշնամուն։ Այդ ճևով կռիվը շարունակվեց օր ու գիշեր. հաջորդ օրը, օգոստոսի 5-ի լուսաբացին, թշնամին թնդանոթների ահավոր կրակ բանալով անխտիր ամբողջ ճակատի վրա և մեծ ուժեր կենտրոնացնելով, մի քանի կողմից սկսեց ճնշել մերոնց ու կարողացավ գրավել ամբողջ Բիբի-էյբաթի շրջանը։ Մեր կռվողներին այդ օրը միացավ Բաքվում ապրող ռուս բանվորների մի ստվար թիվ, որոնք մինչև այդ սովորական ականատես էին, իսկ այդ օրը, երբ վտանգը իրենց դուռը հասավ, ստիպված եղան զենքի տակ մտնել և միանալ կռվողներին»։ Վիճակը ծանր էր Սալյանի շրջանում, ուր կռվում էր 3-րդ բրիգադը։ «Այդ ճակատագրական և շատ այլ կետերում անհավասար կռիվների ընթացքում մեր զորքին ոգևորում էր հրամանատարների անձնական քաջությունը, որոնք առյուծ կտրածի պես, անցնելով առաջին շարքերը, իրենց սեփական օրինակով խրախուսում և ղեկավարում էին կռիվը։ Շտաբի պետ Ավետիսյանի՝ թիկունքից հարվածելու հմտությամբ կազմած ռազմախաղը հանձնարարվեց կատարել հմուտ զինվորական խոջաէյնաթյանին։ Գլխապետ Ստեփանյանի 10-րդ գումարտակը իրականացրեց ծրագիրը։ Թշնամին օգոստոսի 5-ին, ժամը երեքին սկսեց փախչել խուճապահար, կռվի դաշտում թողնելով 100-ից ավելի սպանված, հարյուրավոր ձիեր, բեռնատար ուղտեր, զորիներ և զինամթերք։ Թշնամին փախավ 40 կմ, կանգ առավ Ալյաթ կայարանում»[144]։

Սակայն օգոստոսի 5-ի հաղթանակը չամրապնդվեց, հարձակումը չզարգացավ, որը զինվորական մասնագետների կարծիքով, կարող էր հասցնել հաղթանակի։ «Օգոստոսի 5-ին ոչ միայն հետ մղվեց թուրքերի առաջին հարձակումը քաղաքի վրա, այլև մեր զորքերը նույնիսկ անցան հակահարձակման և հակառակորդին հետ մղեցին երկաթուղուց այն կողմ գտնվող բարձունքից։ Մի քիչ ավելի նախաձեռնություն և հնարամտություն էլ լիներ մեր բարձր հրամանատարության մոտ, այդ օրը խուճապահարված թուրքական զորամասերը գլխովին կջախջախվեին և հնարավոր էր, որ նրանց ներկայությունը, համենայն դեպս, Արևելյան Անդրկովկասում, միանգամայն կվերացվեր»,— գրում է առաջին գնդի հեծյալ դիվիզիոնի հրամանատարը։

Օգոստոսի 4-ին Բաքու մտավ անգլիական գնդապետ Ստոքսը 40 պաշտոնյաներով, թիկնապահ ջոկատով։ Զորքի առաջին ջոկատը՝ 600 հոգի, Բաքու եկավ օգոստոսի 7-ին, օգոստոսի 13-ին՝ երկրորդը, 1000 հոգի։ Ընդամենը 1640 հոգի։ Դրանցից կռվող ուժ ներկայացնում էր 900-ը։ Օգոստոսի 4-ից մինչև 17-ը Բաքու հասավ անգլիական մեկ բրիգադ՝ երեք գումարտակ, մեկ դաշտային մարտկոց, երեք զրահապատ մեքենա։ «Դա, անտարակույս, բավարար չէր,— գրում են Ալենն ու Մուրատոֆը,— ճակատը բռնում էր 17 մղոն երկարություն»։ Զորքի հետ

եկավ և ընդհանուր հրամանատար գեներալ Դենստերվիլը։ «Սկզբում ծրագրվում էր, որ Դենստերվիլը բազմաթիվ սպաների հետ և խոշոր զորամասերով պետք է կտրեր Պարսկաստանի մի ծայրից մյուսը և հասնելով Կասպից ծովի ափը, որոշակի հարաբերություններ պետք է հաստատեր Անդրկովկասյան իշխանությունների հետ Բաքվում և Թիֆլիսում։ Ենթադրվում էր, որ հայերը և վրացիները բրիտանական ներկայացուցիչների միջոցով և նյութական աջակցությամբ պետք է կարողանային տանել թուրքական հարձակման ծանրությունը, մինչ ազերի թաթարներին կարելի պետք է լիներ հեռու պահել ռազմական գործողություններին մասնակցելուց՝ ի նպաստ Թուրքիայի,— շարունակում են Ալլենը և Մուրատոֆը,— տարօրինակ է, սակայն, որ քիչ թե շատ դրշափելի բրիտանական ուժ չուղարկվեց Հյուսիսային Պարսկաստան՝ զորավիգ լինելու Դենստերվիլի առաքելությանը»։ Օգոստոսի սկզբներին Դենստերվիլի զորախումբն իր մեջ ներառում էր հինգ գումարտակ, հրետանային չորս մարտկոց, հեծելազորի մեկ գունդ, մի քանի զրահապատ մեքենա, օդանավային մեկ ջոկատ[145]։

Ժամանելով Բաքու, Դենստերվիլը ծանոթացավ Հայոց Ազգային խորհրդի, մյուս ազգերի միություների ու նպատակների, ռազմաճակատների ու զորքի դասավորության, տաճկական զորքի մասին ունեցած տեղեկությունների հետ։ Դենստերվիլի շտաբը խորհրդակցեց գեներալներ Բագրատունու, Դոկուչաևի, գնդապետ Ավետիսյանի հետ, տեղեկացրեց, որ Միջագետքում բրիտանական զորքերի ընդհանուր հրամանատարը Բաքու լրացուցիչ զորք չի ուղարկելու։ Դենստերվիլի առաջին քայլերից էին քաղաքի պաշտպանները, մասնավորապես հայերը՝ նրանց օգնության խոստումներով։ Օգոստոսի 26—31-ի կռիվներից հետո, երբ թուրքական ուժերը նեղեցին անգլիացիներին, Դենստերվիլը արդեն ասում էր. «ազգաբնակչությունը ինքը պետք է պաշտպանի քաղաքը»։ Այդ ժամանակ քաղաքի վրա հարձակվում էր ավելի քան 25-հազարանոց թուրք-տաթարական բանակը, 32 գյուղերից հավաքված ավազակախմբեր։ Սումգայիթ կայարանի մոտ հրոսակները փակեցին Բաքու տանող ջրատարը, քաղաքը զրկեցին ջրից։

Սեպտեմբերի 1-ին Դենստերվիլը և ֆրանսիական գնդապետ Շարռինեն Յենտրոկասպիայի դիկտատուրայի առաջ դրեցին Բաքուն անմիջապես հանձնելու հարցը։ Հարցը քննվեց դիկտատուրայի նիստում։ Քաղաքը հանձնելու դեմ բողոքեց շտաբի պետ Ավետիսյանը։ Նա պրնդում էր, որ քաղաքը կարող է պաշտպանվել։ Դիմադրելուց հետո Դենստերվիլը գիջեց։ Սակայն Ավետիսյանը հանվեց շտաբի պետի պաշտոնից։ Նրա փոխարեն սեպտեմբերի 10-ին նշանակվեց անգլիական գնդապետ Ստոքսը։ Մինչ այդ, շտաբի պետի պարտականությունները կատարում էր գերմանացի սպա ֆոն դեր Գյեուսը[146]։

Ստոքսին շտաբի պետի պաշտոնում նշանակելով, անգլիացիները քայլ առ քայլ հասնում էին իրենց նպատակին, այն է՝ Բաքվում հաս-

նել քաղաքական գերիշխանություն, իրենց ղեկավարության տակ դնել ամբողջ հրամանատարությունը։

Նկատենք, որ քաղաքը հանձնելու նախօրյակին անգլիացիները լուծում էին մեկ անձի մեջ իշխանությունը կենտրոնացնելու հարց, ակնարկելով Լ. Ֆ. Բիչերախովին։ Բագրատունին կարծում էր, որ Բիչերախովը Բաքվին պատճառել է մեծ չարիք, նրան պաշտպանության ղեկավար նշանակել չի կարելի։ Այնուհետև, ի պատասխան Բագրատունու և Ավետիսյանի պահանջների՝ Պարսկաստանում և Լենքորանում կազմել հայկական ջոկատներ Բաքուն պաշտպանելու համար, Դենստերվիլը, ապա նրան փոխարինած գեներալ Թոմսոնը հայտնեցին. «Անդրկովկասում բոլորի, մասնավորապես անդրկովկասյան մուսուլմանների դեմ գործողությունները, իրենց պլանի մեջ չեն մտնում»։ Բագրատունու հարցմանը «Հանուն Ձեզ, մենք զրկվեցինք Պետրովի երկու հազարանոց ջոկատից և Ռուսաստանի՝ թեկուզ և բոլշևիկների օգնությունից», գեներալ Դենստերվիլը պատասխանեց, որ ինքը մեղավոր չէ, իրեն խոստացել են երեք գումարտակ, բայց տվել են միայն մեկը, և վերջնականապես հրաժարվել են նոր ուժեր ուղարկելուց։ Նշելով այս փաստերը, Բագրատունին, որպես ռազմագետ, եզրակացնում է, որ Դենստերվիլը «ստացել է վճռական հրաման՝ թողնել Բաքուն»։ Այդ է հաստատում և այն փաստը, որ անգլիական գեներալը ֆրանսիական ներկայացուցիչ գնդապետ Շարդինիի հետ միասին Բագրատունուց պահանջում էր ազդեցություն գործել դիկտատուրայի վրա և անմիջապես հանձնել քաղաքը։

Բագրատունին խոսում է և անգլիացիների իրական նպատակների, Բաքուն իրենց շահերին ծառայեցնելու մասին։ «Անգլիացիներին, իհարկե, կարևոր էր Բաքվի նշանակությունը, որը փակում էր ճանապարհը թուրք-գերմանացիների առաջ դեպի Անդրկասպյան երկրներ, Թուրքեստան, Աֆղանստան և այլն։ Բացի այդ զուտ ռազմաքաղաքական դատողություններից, Բաքուն նրանց ձգում էր նավթով և բենզինով, որոնց կարիքը նրանք խիստ զգում էին։ Նրանք ասում էին, որ բենզինի բացակայությունը հանդիսանում է զորքի ուշացման գլխավոր պատճառներից մեկը, ամսական պահանջում էին 25 հազար փութ։ Սակայն, օգոստոս ամսվա ընթացքում, երբ որոշվեց նրանց հրավիրման հարցը և սկսեցին ջոկատները ժամանել, նրանց բաց թողնվեց ոչ թե 25, այլ 68 հազար փութ բենզին, որի համար ոչինչ չի վճարվել։ Արդյունքը եղավ այն, որ նրանց զորքերի ժամանումը ոչ միայն չարագացվեց, այլև շուտով ամենևին վերջ տրվեց»[147]։

Անգլիական սակավաթիվ զորքերի առկայության և քաղաքին սպառնացող վտանգի վրա Դենստերվիլի ուշադրությունը հրավիրեց Ցենտրոկասպիայի ղեկավարությունը սեպտեմբերի 4-ի հուշագրում, որը իր հրատարակած հուշերում բերել է ինքը՝ գեներալը։ Այդտեղից երևում է, որ Ցենտրոկասպիայի ղեկավարությունը զգացել էր իր սխալը բոլշևիկների հետ չհամաձայնվելու հարցում։ «Երբ կնքեցինք ձեզ հետ

ռազմական համաձայնությունը, մենք ձեզ հետ միասին մեզ վրա վերցրինք պարտավորություն Բաքվի և շրջանների պաշտպանության համար՝ ինչպես ռուսական հանրապետության, այնպես էլ ընդհանուր դաշնության շահերի համար։ Մեր դաշինքը ձեզ հետ հասցրեց մեր և ռուս բոլշևիկների իշխանության միջև հարաբերությունների լրիվ խզման։

Մարդկանցով, զենքով, ռազմական նյութերով և սննդամթերքով Բաքվին նրանց օգնությունը վերջնականապես դադարեց։ Կարծում ենք, որ ձեզ անհայտ չէ, որ այն բանից հետո, երբ բոլշևիկների իշխանությունը Բաքվում տապալվեց, Լենինի ներկայացուցիչները ցանկանում էին այստեղ կազմակերպել կոալիցիոն կառավարություն, խոստանալով մեզ ապահովել բոլոր անհրաժեշտ ռազմական նյութերով և ցույց տալ ամենագործնական աջակցություն՝ թուրքերի դեմ պայքարում, պայմանով, որ անգլիական զորքերը Բաքվից և նրա շրջաններից հեռանան։ Այդ պայմանները մենք չընդունեցինք։

Մենք, դժբախտաբար, սխալվեցինք։ Նկատի ունենալով Լենինի կառավարության կողմից առաջարկած պայմանները, մենք պնդում ենք, որ ձեր զորքերը ոչ միայն չավելացրին, այլ նույնիսկ պակասեցրին Բաքվի պաշտպանների թիվը, քանզի մենք կարող էինք զգալիորեն լրացնել այդ շարքերը, եթե ընդունեինք բոլշևիկների պայմանները»,— ասված էր հուշագրում։ Անգլիացիների սեպտեմբերի 3-ի առաջարկությանը՝ ի հակակշիռ Բաքուն թուրքերին հանձնելու և քաղաքը թողնելու մասին, հուշագրում դրվում էր համատեղ ուժերով այն պաշտպանելու հարցը[148]։

Անգլիացիների նպատակների մասին Հայաստանի կառավարությանը ղեկուցում էր 1918 թ. սեպտեմբերի 8-ից մինչև հոկտեմբերի 30-ը հատուկ հանձնարարություններով Բաքվում, Պետրովսկում, Էնզելիում գտնվող Հայկական բանակի հետախուզության կապիտան Կալմանյանցը։ Պարսկաստանում իրենց գերիշխանությունը հաստատելուց հետո անգլիացիները կգրավեն Անդրկովկասը՝ ստեղծելով բուֆեր Պարսկաստանի և ապագա Ռուսաստանի միջև՝ ի դեմս առանձին և մանր հանրապետությունների, որոնք նույնպես կարելի է իրար հետ կռվեցնել Անդրկովկասում «քաղաքական հավասարակշռություն» պահպանելու համար, ինչպես նրանք այդ անում են իրենց արևելյան գաղութներում,— գրում էր Կալմանյանցը ղեկուցագրում։ «Անդրկովկասում անգլիացիները հաշվի են նստում մուսուլմանական մեծաքանակ բնակչության հետ, որի հետ նրանք չեն ուզում ստեղծել լարված հարաբերություններ։ Բաքվում գտնված ժամանակ Դենստերվիլը կոչով դիմել է մուսուլմաններին, նշելով անգլիացիների ավանդական հովանավորությունը մուսուլման ազգաբնակչության և նվիրվածությունը վերջինիս։ Գեներալ Դենստերվիլը ընդհանրապես խուսափում էր Բաքվի մուսուլմանների դեմ ուժ կիրառելուց»։

Բերելով փաստեր, Կալմանյանը տեղեկացնում էր, որ անգլիացիները բազմիցս փորձում էին շահել ադրբեջանցիների համակրանքը՝ ի

վնաս ռուսների և հայերի շահերի, սակայն, աշխատում էին և հայերին հեռու չպահել։ «Սեպտեմբերի 9-ին ներկայանալով գեներալ Դենստերվիլին, ես զեկուցեցի նրան հայերի ֆինանսական, տնտեսական և ռազմական վիճակի մասին։ Գեներալի ուշադրությունը հրավիրեցի հայկական զորամասերի մարտական գործողությունների վրա՝ Կովկասյան ճակատից ռուսական զորամասերի հեռանալու կապակցությամբ։ Մանրամասն կանգ առա ապրիլի 15-ից հետո գործողությունների, հատկապես Ղարաքիլիսայի և Սարդարապատի մարտերի վրա, որտեղ հայերը դրսևորել էին այդքան տոկունություն և խիզախություն, չնայած այն բացառիկ ծանր պայմաններին, որոնցում ընթանում էր հայկական զորամասերի կազմավորումը։ Վերջում, Երևանյան ջոկատի պետի և գեներալ-մայոր Բագրատունու հրամանի համաձայն, ես խնդրեցի տրամադրել մեկ ինքնաթիռ Գեներալ Դենստերվիլին այն ժամանակ արդեն արտահայտեց սկզբունքային համաձայնություն Երևանյան ջոկատին աջակցելու մասին։ Նա անպայման ցանկալի համարեց համաձայնեցված գործողությունները»։ Հայերին սովից փրկելու համար դրվեց նաև ֆինանսական օգնության հարցը։ Գեներալ Դենստերվիլի շտաբում խոշոր գումարներ չգտնվեցին։ Կովկասում «չգտնվեց» նաև բանկ՝ անգլիական դրամ փոխադրելու համար[149]։

Օգնության «անհնարինության» պատճառը երևում է անգլիական հետախուզության սպա Մակդոնալդի հայտարարությունից. ամենևին չժխտելով իրենց շահերը Ադրբեջանում, նա ասել է. «Իզուր են հայերը կարծում, թե մենք նրանց համար ենք եկել, չէ որ թաթարների վրա շատ փող ենք ծախսել և ոչինչ չենք ստացել»։ Այդ սպայի անվան հիշատակումը, ինչպես զեկուցում էր Կալմանյանցը Հայաստանի արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանին, որպես հայերի համար բացասական կերպարի, «Բաքվի հայկական շրջաններում՝ Բագրատունի, Ռոստոմ, Գյուլխանդանյան, առաջացնում էր տհաճ ժպիտ»[150]։

Ակտիվացրեց իր գործունեությունը Գանձակում գտնվող ադրբեջանական կառավարությունը։ Թուրք-ադրբեջանական զորքերի Բաքվին ընդհուպ մոտենալուց հետո, սեպտեմբերի առաջին օրերից, Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Մահմեդ Հասան Հաջինսկին, թուրքական բանակին առընթեր գերմանական շտաբի պետ ավագ լեյտենանտ Պարակվինը, Թուրքական կովկասյան բանակի շտաբի պետ գեներալ Մուրսել փաշան դիմեցին քաղաքը գրավելու դիվանագիտական խաղերի։ Հայոց Ազգային խորհրդին հղած նամակներում նրանք կոչ էին անում քաղաքը հանձնել առանց դիմադրության, խոստանալով հայերի անվտանգության ապահովում։ «Ինչ էլ ուղում է լինի, Բաքուն պետք է գրավվի,— գրում էր Հաջինսկին,— ես խնդրում եմ Ձեզ հասկանալ, որ սպիտակ դրոշակ բարձրացնելը ձեզ կտա անձեռնմխելիություն և իրավահավասարության կատարյալ երաշխիք»։ Միաժամանակ, այս ամի հետ գործ էր դրվում և այլ կեղծիք։ «Թուրքերի փոքր-ինչ առաջ կոտորած, մեզ հասած տեղեկությունների համաձայն, վերսկսվել է։ Նրանց կոտորում են դեպի Սուրախանի, Ռոմանի, Սաբունչի կայարաններ տանող ճանապարհների վրա»։ Գերմանական շտաբի սպան՝ Պարակվինը, հայերից պահանջում էր Բաքուն հանձնել գերմանացիներին, թույլ տալ նրանց օգտվել նավթից, նա կարծում էր, որ միայն այդ դեպքում կլինի «հաշտություն և բարեկամություն»։ «Մեր անկեղծ ցանկությունն է, որ ավելորդ արյունահեղություն չինի, մեզ հայտնի է, որ հայերդ տաճիկներին ատում եք։ Դրա համար մենք՝ գերմանացիներս, եկանք, որպեսզի ձեզ վստահեցնենք, որ եթե դուք Բաքուն հանձնեք, ձեր դեմ ոչ մի անարդար և չար գործողություն չի կատարվի։ Հայերի կյանքը, գույքը և ազատությունը անձեռնմխելի պիտի մնան։ Ձեր զենքերը ձեր ձեռքում պիտի մնան, եթե քաղաքում ոչ մի անկարգություն չառաջացնեք»։ Այս բոլոր խոստումներին հետևում էր գերմանական սպայի սպառնալիքը. «Արդ, եթե այդ նավթային քաղաքը չկամենաք անվնաս և առանց կռվի հանձնել մեզ՝ նրանից օգտվելու համար, այն ժամանակ պետք է կռվենք։ Հայերի կյանքն ու գույքը պիտի փչանան։ Եվ կփչանան»։

Բաքուն հանձնելու դեպքում գերմանական հրամանատարությունը խոստանում էր՝ 1. Բաքու թուրք զորքեր չեն մտնի, Բաքվի բոլոր ճանապարհները կարող են բռնվել գերմանական պահապան զորքերով։ 2. Քաղաքի բոլոր բնակիչների կյանքը, գույքը և ազատությունը անձեռնմխելի կմնան։ 3. Քաղաքի ռմբակոծությանը վերջ կտրվի։ 4. Իրենց կողմից փակած ջրանցքի ճանապարհը իսկույն ևեթ կբացվի։ Վերջում նոր սպառնալիք. «Եթե մեր առաջարկությունը մերժեք, այդ դեպքում բոլոր պատասխանատվությունը ձեզ վրա է ընկնելու։ Որովհետև դրանով ապացուցած կլինեք, որ հակառակ Հայոց հասարակապետության մտադրությանը, դուք Անգլիայի հրամանով, ուզում եք հայկական և թուրքական արյուն թափել»։

Այս նամակի հետ Հայոց Ազգային խորհուրդը ստացավ նաև Մուրսել փաշայի զուտ թուրքական ոճով գրված գրությունը. «Ծերկար տարիներ հայերի և թուրքերի միջև եղած որդիական և հայրական հին բարեկամությունը նորոգած կլինենք ավելի, եթե առանց արյունահեղության Բաքուն հանձնեք։ Այն ժամանակ կվայելեք մեր շնորհն ու բարօրությունը։ Ոչ ոք ձեռք չի տա ձեր իրավունքներին, ձեր գործին, ձեր կյանքին։ Դուք մեզանից մարդավարի վարմունք կգտնեք՝ միանգամայն ձեզ ապահովելու համար, հայկական զորքերին մենք կընդունենք զինվորական պահապանների և պահակների հսկողության տակ»։ Նշելով, որ դաշնակիցները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Բուլղարիան և Տաճկաստանը ցանկանում են հայերի հետ բարեկամ լինել և բարեկամական հարաբերություններ ունենալ, դրա առաջին պայմանը փաշան համարում էր Բաքուն թուրքերին հանձնելը. «Եթե քաղաքը չհանձնվի, ակնհայտ կլինի, որ հայերը ոչ ազգային և ոչ էլ քաղաքական նպատակի չեն ծառայում, այլ միայն անգլիական քաղաքականության են օգնում»։

Ի պատասխան ադրբեջանական կառավարության, թուրքական և գերմանական շտաբների նամակների, Հայոց Ազգային խորհուրդը վճռականապես հայտնում էր, որ իրենք բնավ չեն կասկածում, որ քաղաքի ողջ խաղաղ բնակչության կյանքի ու գույքի անձեռնմխելիությունը հակառակորդը պետք է ապահովի, որ պատերազմի օրենքներով ընդունված կանոնը չի ոտնահարվի։ Սակայն նա համարում է անբացատրելի թուրքերի և մյուսների սպառնալիքները՝ «ջնջելու հայ ազգաբնակչությունը», քանզի «պատերազմի կանոններով բոլոր ազգաբնակչությունը, առանց բացառության, իրավունք ունի թշնամու պահպանության, այլ ոչ միայն մի մասը»։

Անհասկանալի համարելով նաև թուրքերի հետևողական դիմումը հայերին, Հայոց Ազգային խորհուրդը հիշեցնում էր, որ թուրքերը պատերազմում են Ռուսաստանի դեմ, հանձինս նրա տեղական իշխանության, Հայոց Ազգային խորհուրդը սեփական զորամասեր չունի և քաղաքի հայ բնակչությունը մյուս ազգաբնակչության հետ իր քաղաքացիական պարտքն է կատարում։ Ազգային խորհուրդը հավատում էր, որ բոլոր հայ քաղաքական և հասարակական կազմակերպությունները միանգամայն անկիղծորեն ցանկանում են տեղական մահմեդականների հետ կացության բարելավում՝ բացառելով ամեն տեսակի բռնություն։ Նշելով, որ «մենք միշտ զանազանել ենք վարիչ շրջանների քաղաքական տրամադրությունները ազգի տրամադրություններից», Ազգային խորհուրդը հայերի բնաջնջման սպառնալիքը գնահատում էր որպես «պատերազմի սովորությունների մեջ չտեսնված մի ակտ, որի դեմ բողոքում է ամբողջ լուսավոր աշխարհի առաջ»։

Հայոց Ազգային խորհուրդին դիմեց նաև Վրաստանի կառավարության նախագահը՝ Իսիդոր Ռամիշվիլին, որը Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Միքայել Արգումանյանի միջոցով խորհուրդ էր տալիս քաղաքը, գործարանները, պետական և հասարակական սեփականությունը, զենքը անվնաս հանձնել թուրքերին, ճանաչել Ադրբեջանի հանրապետության կառավարությունը, որը «իր կողմից երաշխավորում է քաղաքացիների սեփականության և անձի անձեռնմխելիությունը»[151]։

Քաղաքը հանձնելու հորդորանքի հետ միասին, թուրքերը ուժեղացնում էին ռազմական ճնշումը։ Սեպտեմբերի 13-ի լուսս 14-ի գիշերը նրանք անցան հարձակման՝ գրավեցին Սուրախանը, Բալախանը, Ջաբրաթը, Խուրդուլանը, Բալաջարը, Բիբի-Էյբաթը։

Ըստ Դենստերվիլի վկայության, սեպտեմբերի 14-ի գիշերը Բաքուն պաշտպանող զորքերի տեղաբաշխումը ներկայացնում էր հետևյալ պատկերը. Ջախ եզրային թևում Բիբի-Էյբաթի նավթահանքերը պաշտպանող բարձրունքները զբաղեցված էին Հյուսիս-Ստաֆֆորդյան գնդի 7-րդ «Ա» վաշտով (մոտավորապես 60 սվին)՝ կապիտան Բոլլինգտոնի հրամանատարությամբ։ Հայկական մեկ գումարտակ (ոչ ավելի, քան 100 սվին) այդ նույն տեղամասում գտնվում էր պահեստում։ Գայլի Դուռքի

մոտ դիրքեր էր գրավել ռուսական ոչ մեծ մի ջոկատ՝ երկու գնդացրով։ Հյուսիս-Ստաֆֆորդյան գնդի միակ պահեստային մասը՝ 100 սվինով, ուղարկվեց, «Ա» վաշտի թիկունքը ուժեղացնելու համար։ Այդ բարձրունքների հյուսիսային լանջին տեղավորված էր երեք դյույմանոց մարտկոց՝ երկու հրանոթով։

Գայլի Դուռքից հյուսիս՝ 800 քայլի վրա դիրքեր էր գրավել Հյուսիս-Ստաֆֆորդյան գնդի «Վ» վաշտը՝ կապիտան Թուրկիզտոնի հրամանատարությամբ։ Այդ տեղամասի աջ կողմում կանգնած էին հայկական զորամասերը, որոնք դիրքեր էին գրավել Խոջա Հասան գյուղի դիմացի խրամատներում։ Մեկ հրետանային մարտկոց և մեկ հրանոթ առաջ էին մղվել Գայլի Դուռքից հյուսիս։ Հայկական մեկ պահեստային գումարտակ հատկացվել էր Սպիտակ քաղաքին, Բաքվից մեկուկես մղոն հեռավորության վրա։ Այնտեղ տեղավորված էր ճակատի ձախ տեղամասի շտաբը գնդապետ Բեկ-Զուրաբյանի հրամանատարությամբ։ Նրա մոտ որպես կապի սպա գտնվում էր մայոր Գեյբելը։ Դիրքերի աջ թևը՝ գնդապետ Ղազարյանի հրամանատարությամբ (նրա մոտ որպես կապի սպա գտնվում էր մայոր Էնգելդյուն), սկսվում էր Խոջա Հասան գյուղից։ Այնտեղից մինչև Բալաջարի աղուտները ճակատային գիծը զբաղեցնում էին բիչերախովականները՝ 600 սվինով։

Բալաջարը պաշտպանում էին 9-րդ Ուորչեստերյան գումարտակի երկու վաշտ, մինչև Դարանգուլ լիճը՝ նույն զորամասի զինվորները։ Գրեթե չորացած Դարանգուլ լճի աջ ափը պաշտպանվում էր հայկական մեկ գումարտակով և անգլիական գնդացրային ջոկատի չորս գնդացրով։

Հյուսիս-Ստաֆֆորդյան գնդի (մոտ 50 սվին) մեկ վաշտ, որպես տեղական պահեստային ուժ, տեղավորված էր Բալաջարյան խճուղու հատման գծում, Վարվիկյան գումարտակի մեկ վաշտ (100 սվին), գտնվում էր 39-րդ բրիգադի պահեստում՝ Բաքու-Բինադադյան խճուղուց երկու մղոն հեռավորության վրա։ Ամբողջ աջ թևի ճակատը պաշտպանում էր դաշտային հրետանու 8-րդ մարտկոցը, հաուբիցային մեկ մարտկոցի հետ։

Անգլիական երկու զրահապատ մեքենա կանգնած էին Բալաջարի մոտ, մեկը՝ քաղաքում։ 500 հայերից բաղկացած ջոկատը՝ երեք դյույմանոց հրետանու մարտկոցով, ռուսական երեք զրահամեքենա և հեծելազորային մեկ էսկադրոն, կանգնած էին Սուրախանի շրջանում, եզրային աջ թևում՝ թուրքական հեծելազորին դիմադրություն ցույց տալու համար։ Բաքվի զորամասերի մեծ մասի տեղաբաշխումը անգլիական հրամանատարությանը հայտնի չէր։ Ընդհանրացնելով իրավիճակի պատկերը, Դենստերվիլը գրում էր. «Մեր ամբողջ հավաքական բանակի հրամանատարությունը պատկանում էր, իհարկե, ռուս հրամանատարին, սակայն անգլիական բոլոր զորամասերի անմիջական ղեկավարությունը սեպտեմբերի 14-ին հանձնվեց Կելլորտին, որը շտաբի պետ Ստոքսի միջոցով կապ էր պահպանում գեներալ Դոկուչաևի հետ։ Մեր և

զորքերի հրամանատարի միջև այդպիսի կապող օղակներ էին՝ աջ թեվում 39-րդ բրիգադի հրամանատար գնդապետ Ֆավարիայելը և ձախ թեվում՝ Հյուսիս-Ստաֆֆորդյան գնդի հրամանատար մայոր Լեյը։ Ես ինքս գտնվում էի անմիջական շփման մեջ դիկտատոր գեներալ Դոկուշաևի և զինվորական նախարար գեներալ Բագրատունու հետ»[152]։

Անգլիական ուժերի հրամանատարությունը գնդապետ Կելվորտին հանձնելուց հետո Դենստերվիլը և Ստոքսը Յենտրոկասպիայի դիկտատուրայից պահանջեցին երկու նավ էնզելի գնալու և այնտեղից զորք բերելու պատրվակով։ Նպատակը քաղաքից փախչելն էր։

Չնայած ճակատի ճեղքմանը, հայկական զորամասերը դիմադրում էին, հետ մղում թուրքերի կատաղի գրոհները Գայլի Դուրբի մոտ։ Խիզախորեն մարտնչեցին 5-րդ մարտկոցի հրետանավորները պորուչիկ Արզումանյանի գլխավորությամբ։ Այդ մարտկոցը մեկ օրվա ընթացքում արձակեց 3800 արկ։ 3-րդ բրիգադի կորուստը կազմեց սպանված և վիրավոր 300 հոգի։ Հակառակորդը կորցրեց մոտ 3000 զինվոր և սպա[153]։

Իսկ ի՞նչ էին անում անգլիական հրամանատարությունը և անգլիական զինվորներն այդ նույն ժամանակ հարցին Ա. Մելիք-Յոլչյանը պատասխանում է. «Կովի ամենակատաղի ժամանակը՝ սկսած առավոտյան ժամը 6-ից, քաղաքում նկատվում էին խումբ-խումբ, 5—10 հոգի, անգլիական զինվորներ, որոնք հանգիստ, թույլ քայլերով, վերադառնում էին կովի դաշտից, անցնում էին դեպի անգլիական շտաբ և ապա իրենց ընկեր հայ զինվորներին թողնելով մենակ կռվելու ընդհանուր թշնամու հետ, հեռանում էին և փախչում կազմակերպված կերպով, համաձայն գաղտնի հրամանի, որ տրված էր իրենց՝ Ստոքսի կողմից։ Արդարացնելու համար իրենց տմարդի քայլը և հանգստացնելու համար իրենց խիղճը, Ստոքսը և Դենստերվիլը հեռագրել էին իրենց կառավարությանը, թե «ստիպված են թողնել Բաքուն և հետ նահանջել, որովհետև հայ զինվորը չի կռվում»[154]։

Սեպտեմբերի 14-ին քաղաքը լքեց Բաքվի զորքերի շտաբի պետ Ստոքսը, նրա հետ գնդապետ Շարդինենն։ Վերջինս «հավաստեց», որ «Ֆրանսիայի մեծ ժողովուրդը չի մոռանա հայ զինվորի երախտիքը»[155]։ «Սեպտեմբերի 15-ին, առանց զգուշացնելու անգիտացիները հանեցին իրենց զորքերը, մերկացրին ամբողջ տեղամասեր, մնացած տեղամասերը զրկեցին հրետանուց և ամենագլխավորը՝ առաջ բերեցին խառնաշփոթություն և խուճապ»,— տեղեկացնում է գեներալ Բագրատունին[156]։ Այդ փաստը արձանագրում են նաև անգլիական հետագոտողները։ «Սեպտեմբերի 14-ին դրությունը վատացավ և գեներալ Դենստերվիլը հրաման տվեց նավերին՝ պատրաստ լինել մեկնելու։ Ժամը 6-ին հավաքվեցին։ Ուժեր կազմակերպելու վերջին ճիգը ձախողվեց։ Մի ժամ հետո բրիտանական զորքերը սկսեցին հետ քաշվել քաղաքից դեպի նավահանգիստ։ Ժամը 10-ին բոլոր բրիտանացիները նավի վրա էին»[157]։ Նրանք իրենց հետ տարան մեծ հարստություն, զինապա-

շարի մի մասը, արհեստանոցներ, 600 հազար փամփուշտ, բընդանոթային արկեր, Բագրատունու խոսքերով ասած՝ «ռուսական պետության գույքը»։

Քաղաքի պաշտպանության վերջին ճիգերից հետո Բագրատունին, Ռոստոմը և Մ. Տեր-Պողոսյանը չարթարացան նավ, ուղղություն վերցրին դեպի էնզելի։ Էնզելի եկավ 1500 հայ զինվոր, 8 հազար փախստական, Պետրովսկ՝ 10 հազար զինվոր, որից 8 հազարը հայ և 16 հազար փախստական։ Մինչ այդ, Բաքվից հեռացել էր դիկտատուրայի կառավարությունը։

Թուրք-մուսավաթական զինված ուժերը, Խան-Խոյսկու բնորոշմամբ՝ «մեր զորքերը», սեպտեմբերի 15-ին ներխուժեցին Բաքու։ Դա տեղի ունեցավ Բաքվի կառավարողների՝ Յենտրոկասպիայի դիկտատուրայի և թուրքական հրամանատարության պատվիրակությունների բանակցություններից հետո։ Բանակցությունների վերջին փուլում ներկա էին Դանիայի և Պարսկաստանի հյուպատոսները։ Թուրքական կողմից մասնակցում էին զորքերի հրամանատար Մուրսել փաշան, Բաքվի ռազմական պարետ նշանակված Նազրմ բեյը, Հայոց Ազգային խորհրդի կողմից՝ Հայկ Տեր-Միքայելյանը, Քրիստափոր Եվանգուլյանը, բանակի կողմից՝ կապիտաններ Վասիլևը, Ֆյոդորովը։ Թուրքական պատվիրակությունը ընդունեց դիկտատուրայի սեպտեմբերի 14-ի առաջադրած պայմանները, այդ թվում նաև քաղաքի խաղաղ բնակչության անվտանգության և գույքի անձեռնմխելիության ապահովման հարցը։ Չընդունվեց միայն 7-րդ կետով նախատեսված «կազմակերպություններին ու կուսակցություններին չհետապնդելու» պայմանը։

Մուրսել փաշան վերջնագրի տեսքով հայտարարեց, որ Հայոց Ազգային խորհուրդը պետք է դադարի գործելուց, պետք է հանձնի հրետանին, զենքը, զինամթերքը, բոլոր հայերը պետք է զինաթափվեին։ Թուրքերի վերջնագիրն էր. մինչև ժամը 6-ը քաղաքը չհանձնելու դեպքում սպանել իրենց ձեռքում գտնվող Քրիստափոր Եվանգուլյանին, հրետանային համազարկով ջնջել հայկական բոլոր թաղամասերը, քաղաք թողնել ավազակախմբերից բաղկացած երկու ջոկատ՝ ոչ մուսուլմանական բնակչությանը կոտորելու համար[158]։ Գրոհը քաղաքի վրա սկսվեց 16-ժամյա հրետակոծումից հետո։ Առավոտյան ժամը 12-ին թուրքերը մտան քաղաք։ Նուրի փաշան քաղաք մտավ ժամը 2-ին։ Գյանջայում հրատարակվող «Ադրբեջան» թերթի առաջին համարում տպագրվեց Խան-Խոյսկու հեռագիրը «Կովկասյան մահմեդական զորքերի հրամանատար» Նուրի փաշային։ «Բախտավոր եմ արտահայտելու շնորհակալություն ազգի անունից Զերդ գերազանցությանը, շնորհակալություն թուրքերի զավակներին Ադրբեջանի մայրաքաղաքը թշնամուց ազատելու առթիվ, որը իրականացվեց Ձեզ ենթակա զորքերի ձեռքով»,— գրում էր Ադրբեջանի կառավարության ղեկավարը։ Նա շնորհավորում էր և «Արևելյան զորքերի հրամանատար» Հալիլ փաշային՝ «թուրքերի քաջարի զավակների ձեռքով խաշոր կենտրոնը վերցնելու առթիվ, որը հանդիսա-

նում է երկրորդ Ստամբուլը Թուրք աշխարհի համար և որը կարող է ապահովել Բաքվի և Ադրբեջանի ապագա քաղաքական և տնտեսական բարեկեցությունը»[159]։ «Թուրք-ադրբեջանական զորքերի» մուտքը Բաքու սրանց շնորհավորեց Թիֆլիսում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչ Քերիմ փաշան։ Բաքվի գրավումը Թուրքերը համարեցին քաղաքական հաղթանակ՝ ադրբեջանական կառավարության կողմից իրենց մայրաքաղաքի գրավում։ «Երեկ չէ առաջին օրը էնվեր փաշան լուր ստացավ, որ Բաքուն գրավվել է Նուրի փաշայի զորքերի կողմից։ Ռազմական նախարարն անմիջապես գիշերով, ժ. 11-ին ուղևորվեց Նորին մեծություն սուլթանի մոտ՝ նրան այդ լուրը հաղորդելու»,— սեպտեմբերի 17-ին Պանֆիլիին հայտնում էին Կոստանդնուպոլսից[160]։ Նույն օրը էնվերն այդ կապակցությամբ հեռախոսով շնորհավորեց Կոստանդնուպոլսում գտնվող Ռաուլ-զադեին։ Նուրի փաշայի հեռագրային հրավերով Ադրբեջանի կառավարությունը ամբողջ կազմով Խան-Խոյսկու գլխավորությամբ սեպտեմբերի 16-ին Գյանջայից մեկնեց Բաքու։ Վերջինս Բաքու մտավ թուրքական զորքերի հետ և իր պետական գործունեությունը սկսեց հայերի կոտորածով, թալանով, բռնությամբ։ Բաքվում սկսեց արյունալի «խրախճանք»։

Թուրքական բանակի գնդապետ Ֆեհմի փաշայի հետ Բաքվի տարբեր շրջաններում սեպտեմբերի 15-ին եղած Օվանգուլյանը թուրք-թաթարական գազանությունների առաջին ժամերի մասին գրում է գեներալ Բագրատունուն. «Թալանը, սպանությունները, բռնությունը տարբերքի մեջ էին։ Ամբողջ քաղաքում գնում էր հայ բնակչության կոտորած, թալանում էին բոլոր ոչ մուսուլմաններին։ Ջարդում էին դռներն ու պատուհանները, մտնում բնակարանները, դուրս հանում տղամարդկանց, կանանց և երեխաներին և սպանում փողոցում։ Բոլոր տներից գալիս էր խոշտանգվող բնակչության նվվոցը։ Տեղական թաթարների և ասկյարների՝ փողոցում սփռված գազանացած ամբոխը սպանում էր ամեն հանդիպած հայի։ Գանձատան մոտ Սուրախանյան փողոցի կողմից փակուղին լեցուն էր 9—10 տարեկան մանուկների դիակներով, մինչև 80 դիակ։ Շատերի մոտ կտրված էր կոկորդը, խեղճերին մորթել էին, ինչպես գառնուկների։ Տելեգրաֆնայա փողոցի կողմից լսվում էր կանանց և երեխաների լացն ու կոծը, լսվում էին և հրազենից կրակոցներ։ Ամենուր մանկական դիակներ»։ Տեսածը ցնցեց նույնիսկ թուրք գնդապետ Ֆեհմիին և թարգմանիչ-ասկյարին։ «Այդ ամենը չկարողացան տանել և գնդապետն ու ասկյարը,— գրում է Օվանգուլյանը,— ձեռքերով ծածկելով աչքերը, նրանք գլխիկոր հարցնում էին՝ ինչու է պետք այս սարսափելի սպանդը»[161]։

Բաքու առաջինը ներխուժած զորամասերը և թաթարական ավազակախմբերը, չնայած Մուրսել փաշայի տված «խաղաղ բնակչության անձնական և գույքային անվտանգության» երաշխիքին, տեղական թաթարական բնակչության հետ երեք օրվա ընթացքում թալանեցին և կոտորեցին հայ խաղաղ բնակչությանը։ Թալանը, բռնությունը բռնա-

բարությունը, սպանությունը թուրքերի և թաթարների զբաղմունքը դարձավ։ Կոտորվեց մոտ 30 հազար անմեղ հայ։ Այնուհետև, Մուղանի անապատներ քշվեց և կոտորվեց 6000 հայ տղամարդ, Բաքվում և նահանգում սպանվածների ու խոշտանգվածների թիվը հասավ 50000-ի։ Նուրի փաշայի զորքերը շրջվեցին դեպի Ղարաբաղ, որի նվաճման, խալամի դրոշով Կովկասի մահմեդական բնակչությանը ոտքի հանելու հրամանը Իզզեթ փաշային էնվերը տվել էր դեռևս 1914 թ. հոկտեմբերի 31-ին։

Բաքվի գրավման, Բրեստ-Լիտովսկի պայմանների խախտման և ընդհանրապես՝ Թուրքական ոճրագործությունների դեմ վճռական հուշագրով հանդես եկավ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը։ Դատապարտելով թուրքական գործողությունները, Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը 1918 թ. սեպտեմբերի 20-ի հուշագրում հայտարարում էր, որ «Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև այլևս գոյություն չունի»։ Հոկտեմբերի 3-ի հուշագրով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ներկայացնում էր նոր պահանջներ. Թուրքիան պետք է հետ քաշի իր բոլոր զորքերը մինչև Բրեստում ընդունված, սահմանները՝ տարածքը հանձնելով ռուսական զորքերին[162]։

Վրաց մենշևիկների «Բորբա» թերթը Բաքվի գրավումը բնորոշեց որպես թուրքական հրոսակների և ադրբեջանական ավազակախմբերի ներխուժում[163]։ Սոցիալիստ-հեղափոխականների «Ջնամյա տրուդա» թերթը թուրք-ադրբեջանական ուժերը բնորոշեց որպես «մութ ուժեր»[164]։ Այս բնորոշումները ադրբեջանական կառավարողների կողմից գնահատվեցին որպես «վիրավորանք» մուսուլմանական Կովկասյան բանակի և օսմանյան կառավարության զորքերի նկատմամբ։

Թիֆլիսում մուսավաթական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Ջաֆարովի պահանջով այդ թերթերը փակվեցին վրացական կառավարության կողմից՝ «Կովկասի մուսուլմանական զորքերին և Ադրբեջանի հանրապետությանը հասցրած վիրավորանքի համար»[165]։

Չնայած սպառնալիքին և հոխորտանքներին, Անդրկովկասի դեմոկրատիան ամենուր բարձրացնում էր իր բողոքի ձայնը։ «Կավկազսկոյե սլովո» թերթը 1918 թ. սեպտեմբերի 26-ին գրում էր. «Այսպիսով, Բաքուն մտավ այն վայրերի թվի մեջ, որտեղ հայերի պարբերաբար ոչնչացումը հստակորեն դրվում է ցնծացող իշխողի գործողության ծրագրի մեջ»։ Թուրքերի կիսատ թողածը նույն թուրքերի օգնությամբ լրացրին մուսավաթականները։ «Բոլորիս հիշողության մեջ թարմ է Արեշի, Նուխիի, Նախիջևանի գավառների բազմահազար հայերի բռնագաղթը, սարսափելի վիճակը։ Ադրբեջանի կողմից նրանք պարբերաբար զինաթափվում են, թողնվում բախտի քմահաճույքին, բռնությամբ նրանցից խլում են ամեն ինչ՝ հարստություն, ընտանիքի պատիվ, կյանք»։ Դատապարտելով Խան-Խոյսկու կառավարության քաղաքականությունը,

թերթը պահանջում էր. 1) վերջ տալ հայերի նկատմամբ բռնություններին, 2) հետաքննել հայ բնակչության վիճակը Ադրբեջանի առավել հայաշատ վայրերում, 3) հատուցել մուսուլմանների կողմից հայերին պատճառած վնասը, 4) վերջ տալ ադրբեջանական կառավարության կողմից հայերի միակողմանի զինաթափմանը, զինաթափումը տարածել բոլոր ազգությունների վրա և ոչ միայն անպաշտպան հայերի։

Ընդհանրացնելով «հայերի գոյության» նկատմամբ չարագործությունների ամբողջ շղթան, թերթը հարց էր տալիս. «Ե՞րբ վերջ կտրվի բռնություններին, ո՞րն է սրբազանը գոյության համար՝ մարդկային իրավո՞ւնքը, թե՞ դիվանագիտական ծրագրերի ժամանակավոր տրամաբանությունը, պահի քաղաքական նպատակամղվածությունը»։ Խմբագրությունը ինքը պատասխանում էր. «Չէ՞ որ բացի քաղաքական բանաձևերից, գոյություն ունի կյանք և քաղաքակրթության պահանջ»։

Թերթը մերկացնում էր և մուսավաթականների կեղծիքը՝ Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջամալյանի և Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Ջաֆարովի հուշագրերի վերլուծությամբ։

Ջամալյանի փաստարկներին, որ Բաքվում տեղի ունեցած բռնությունների հետևանքով զոհվել է 30.000 հայ, որ իշխանությունները սկսեցին խափանել չարաննենգությունը միայն սպանդին երեք օր «ազատություն» տալուց հետո, որ շարունակվում են զանգվածային բռնությունները, բանտարկությունները, շանտաժը, դրամաշորթությունը և թալանը, Ջաֆարովը պատասխանում էր զրպարտչական և անհիմն հայտարարություններով։ Բացահայտելով Ջաֆարովի լարախաղացությունը, «Կավկազսկոյե սլովո» թերթը 1918 թ. սեպտեմբերի 29-ին գրում էր. «Կատարվել է անմարդկային արարք. զոհվել են տասնյակ հազարավոր մարդիկ։ Այդ ամենը սարսափով և զարհուրանքով տեսած՝ ներ ադրբեջանական կառավարությունից պահանջում են պաշտոնական քայլեր՝ մեղավորներին պատասխանատվության կանչելու համար։ Հայկական հանրապետությունը և ամբողջ քաղաքակիրթ աշխարհը իրավունք ունեն պահանջելու, որպեսզի, վերջապես, պաշտոնապես և փաստարկներով ասվի՝ ի՞նչ է տեղի ունեցել Բաքվում։ Ջաֆարովի պատասխանները միայն, հաստատում են, որ ադրբեջանական ղեկավարության քաղաքականությունը ուղղված է հասարակությանը հիմնական հարցից շեղելուն, իսկական, զայրացուցիչ վիճակը թաքցնելուն։ Մենք պահանջում ենք, վերջապես, տալ ուղղակի պատասխան մեզ բոլորիս հուզող հարցերին»։

Ջաֆարովի մերկապարանոց հայտարարությունը ժխտում էր նաև սոցիալիստ-հեղափոխականների Անդրկովկասյան մարզային կոմիտեի «Ջնամյա նարոդա» պաշտոնաթերթը։ Ջաֆարովի հայտարարությունը բնորոշելով որպես ցինիզմ, թերթը հոկտեմբերի 23-ի համարում գրում է. «Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը չկարողացավ վեր

բարձրանալ Բաքվի քաղաքային դումայի անդամ Կասում Կասումովի գազանային հոգեբանությունից, որը հայտարարում էր. «սեպտեմբերը՝ պատասխան է մարտին»։ Բերելով սարսռեցուցիչ փաստեր, թերթը Բաքվի կոտորածները բնութագրեց որպես «արյունալի հոգեհաց»։

Բաքվի կոտորածների հարցում իրենց «բացատրությունն» ունեն էնվեր, Թալեաթ փաշաները, Բեհաէդդին Շաքիրը, Նազըմը և երիտթուրքերի այլ պարագլուխներ։ Մեղքը գցելով միայն տեղական թաթարների վրա, նրանք միաժամանակ ժխտում էին 30.000 թիվը, խոսում ինչ-որ 300-ի մասին՝ այն էլ սպանված փողոցային կռիվների ժամանակ։ Մյուս կողմից, նրանք մեղադրում էին հայերին հակաթուրքական գործունեության մեջ։ «Թուրքին մահացու վտանգ մը կսպառնար հայերեն, անոնց սպանությունը հավասարազոր է թշնամիներու սպանության՝ պատերազմի մեջ», սա էր էնվերի «փիլիսոփայությունը»։ Ահա և Շաքիրի «բացատրությունը»։ «Դուք ամեն տեղ մեր դեմ կգործեք, կզինեք ամբողջ Եվրոպան և Ամերիկան մեր դեմ։ Եվ եթե մենք ֆիզիկապես կոչնչացնենք, դուք ալ կսպանեք մեզ բարոյապես, բան մը, որ ավելի ծանր է մեզ համար»[166]։

Իր բացատրությունն ուներ և Թիֆլիսում գերմանական կայզերական առաքելության առընթեր տեղեկատվական բյուրոյի պետ դոկտոր Յուգմայերը, որը Բաքվի սպանդը համարեց «ուևանշ», փաստորեն արդարացնելով թուրքերի և թաթարների չարաննենգությունը և գազանությունը։ Թուրքերի Բաքու մտնելու պահին «թաթարները որպես ուևանշ կոտորեցին շատ հայերի»,— գրում է Յուգմայերը, «Բաքվում սպանված հայերի թիվը շատ ավելի է, քան մարտին սպանված մուսուլմանների թիվը»[167]։

Այսպես գրում էր Յուգմայերը, որին քաջ հայտնի էր թուրքերի իսկական նպատակը և կոտորածների պատճառը։ Այդ նպատակների մասին գրում էին ոչ միայն թուրքական և կովկասյան թերթերը, հաղորդում հեռագրական գործակալությունները, այլև բուլղարական, իտալական, գերմանական պարբերականներ, որոնց բովանդակությունը արտատպվում էր և անդրկովկասյան թերթերում, մասնավորապես «Կավկազսկոյե սլովոյում»։ Արտասահմանյան մամուլից «Կավկազսկոյե սլովոյի» արտատպած հատվածներից հետևում է, որ թուրքական քաղաքականությունը նպատակ էր դրել Սև ծովի հարավ-արևելյան ափերից նետվել մինչև Կասպից ծով։ Թուրքիան զավթողական նպատակներով այնտեղ էր բերել իր զինված ուժերի զգալի մասը, թողնելով Սիրիան և Միջագետքը։

«Եթե մենք, որպես Թուրքիայի պաշտպաններ, դիմադրեցինք Օսմանյան կայսրության բաժանմանը, ապա դա արեցինք հանուն բաղդադյան երկաթգծի նկատմամբ ունեցած մեր շահերի։ Թուրքական պետական գործիչները պետք է իմանան՝ Թուրքիայի համար վտանգավոր ճակատը Պաղեստինի և Միջագետքի ճակատն է և որ անհրաժեշտ է նորից հետ վերցնել Տրիպոլին, Եգիպտոսը, Բասրայի ծովածոցը։ Սա-

կայն, դժբախտաբար, Թուրքիան իր հայացքը գցել է Կովկասի և Սև ծովի վրա և այժմ, անդրկովկասյան հանրապետությունների հողերը գրավելուց հետո, նոր պահանջներ է ներկայացնում Ղրիմի, Թավրիզի, Ուրմիա լճի շրջակայքի նկատմամբ»,— գրում էր «Շաուտագոտ տագեբլատ» թերթը[168]։

Բացահայտելով Յուգմայերի թուրք-թաթարական վարկածի սնանկությունը, Թիֆլիսի հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները գերմանական կայզերական առաքելության ղեկավարին ուղղված հուշագրում նշում էին. «Այս պայմաններում ի՞նչ ռեվանշի մասին կարող է խոսք լինել, որը արդարացումն է այն դաժանությունների ու գազանությունների, որ գործադրվել է բնակչության, կանանց, երեխաների նկատմամբ։ ովքե՞ր կրել են հայի անուն»։ «Սանձազերծված զորամասերը և գազանացած ավազակախմբերը ներխուժում էին հայերի տները, բռնաբարում, թալանում և ոչնչացնում։ Ականատեսները պատմում են այնպիսի սարսափների մասին, որոնցից երակներում սառչում է արյունը, պատմում են սպանված մոր կուրծքը երեք օր ծծող և ճչացող երեխայի մասին, գաղթականների, որբանոցից մանկական դիակներ տեղափոխող բեռնատար մեքենայի մասին, ծնողների աչքերի առջև աղջիկներին և ամուսինների աչքերի առաջ՝ կանանց բռնաբարման, որից հետո նրանց ոչնչացման մասին, կուտակված դիակներից փչող հոտի, կանանցով և երեխաներով լեցուն նավերի՝ արկերով ջրասույզ անելու մասին»։

Այդ բոլորը Ադրբեջանում թուրք իշխանություններին թվում էր քիչ։ «Դերի վերցրած զինվորները խմբերով ուղարկվում են Բաքվի նահանգի թաթարական գյուղերը, որտեղ ծաղրուծանակի ենթարկվելուց և տանջվելուց հետո ոչնչացվում են։ Քաղաքում անցկացվեց և անցկացվում է մտավորականների զանգվածային բանտարկություն, նրանց բանտարկության մեջ պահում են կյանքի համար ակնհայտ կործանարար պայմաններում»[169]։

Յուգմայերի պատասխանը եղել է. «Թուրքերը Անդրկովկաս հրավիրված են մուսուլմանների կողմից, գերմանացիները՝ վրացիների։ Դուք՝ հայերդ, ոչ մեկին չեք հրավիրել օգնության, այդ պատճառով էլ ձեզ չեն օգնում»։ Ջօգնեցին նաև անգլիացիները։

Անգլիացիների ձգտումների մասին կապիտան Ն. Աբազովին դեռևս 1918 թ. մայիսին ասել էր Կովկասյան ճակատի գլխավոր հրամանատարության աոընթեր անգլիական բանակի ներկայացուցիչ, գլխավոր շտաբի գնդապետ Պեյկը՝ զինվորական առաքելությամբ Թիֆլիսից Վլադիկավկազ մեկնելուց առաջ։ «Այստեղ Անդրկովկասում, մենք Ձեզ համարել ենք մեր զինակիցը։ Դժբախտաբար, ստեղծված իրադրության պայմաններում, մենք Ձեզ ժամանակավորապես պետք է թողնենք մենակ։ Օգնել չենք կարող, քանի որ Ձեզանից կտրված ենք։ Ամենաուշը մեկ տարուց հետո մենք կվերադառնանք։ Արևմտյան ճակատում վիճակն այնպիսին է, որ մեր հաղթանակն ապահովված է։ Թուրքերը

շուտով կգրավեն Ձեր բոլոր հողերը, իսկ գերմանացիները կգան Թիֆլիս։ Խնդրում եմ Ձեզ՝ հայերիդ, Ձեր հարաբերությունները թուրքերի հետ լավացրեք, որպեսզի հնարավորություն չտաք Ձեզ ամբողջովին ոչնչացնել։ Հաղորդեցեք բոլոր հայերին, որ մեկ տարի հետո մենք կգանք և այդ ժամանակ հայերի համար կանենք այն ամենը, ինչ հնարավոր է։ Մեզանից ամենամեծ օգնությունը կստանաք դուք՝ հայերդ, քանի որ դուք մեր դաշնակիցներն եք»[170]։

Անգլիական խոստումները գործով չամրապնդվեցին։ Ավելին, լքելով ճակատը, Բաքվում գտնվող հայ բնակչությանը և փախստականներին թողնելով թուրք ասկյարների և խաժամուժի հոշոտմանը, Դենստերվիլը, հասնելով Էնզելի, հանդես եկավ հայերին վարկաբեկող ոտգիրհաղորդմամբ։ Հաղորդագրությունը տպագրվեց «Թայմս» թերթի սեպտեմբերի 20-ի համարում։ «Շուտով փաստ դարձավ, որ չէր կարելի հայկական զորքի վրա հույս դնել։ Նրանք հրաժարվեցին կռվել և տուն վերադարձան։ Թուրքերը սեպտեմբերի 14-ին մեծ ուժերով հարձակման անցան և 16-ժամյա կռվից հետո, որի գլխավոր հարվածը անգլիացիների դեմ էր ուղղված, մեր զորքերը էվակուացիայի ենթարկվեցին»,— ասված էր հաղորդագրությունում։

Դենստերվիլի տարածած վարկաբեկիչ լուրը, որը նպատակ ուներ նաև խուսափել պատասխանատվությունից, առաջացրեց հակահայկական սադրանք Եվրոպայում և Անդրկասպյան երկրներում։ Անգլիական սադրանքի մասին Բագրատունին, Ռոստոմը, Գյուլխանդանյանը տեղեկացան Էնզելի ժամանելուն պես։ Նրանք հղեցին Փարիզ՝ Պողոս Նուբար փաշային երկու հեռագիր, որտեղ բացահայտված էին Բաքվի հանձնման իսկական պատճառները, անգլիացիների դավաճանությունը, թուրքերի գազանությունները, փախստականների նկատմամբ անգլիացիների տմարդի վերաբերմունքը։ Դենստերվիլի հետ հանդիպման ժամանակ Բագրատունին, ոչ առանց հեգնանքի, ասաց. «անգլիական բանակը, իհարկե, երիտասարդ է և նրանում դեռ չեն հասցրել ըստ էության հաստատվել զինվորական պարտքի և պատվի ավանդույթները», այդ պատճառով էլ առանց զգուշացնելու դուք լքեցիք դիրքերը[171]։

Փարիզի հայկական տեղեկատու գրասենյակը հաղորդում էր. «Հայկական ազգային պատվիրակությունը Պարսկաստանի Էնզելի քաղաքից հեռագիր է ստացել՝ ստորագրված Կերենսկու նախարարության ժամանակ ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Բագրատունու կողմից, որը հայտնում է. Բաքվի հայկական զորքերի խոշոր մասը, որը 4 ամիս դիմադրել էր Թուրք-թաթարների հարձակմանը, քառասունութ ժամվա հուսահատ կռվից հետո կարողացել է Կասպից ծովի վրայով հեռանալ և հասել է այժմ Պարսկաստանի Էնզելի քաղաքը։ Ժողովրդի մի մասը նույնպես փրկվել է։ Գեներալ Բագրատունին իր ուժերը կազմակերպում է, որպեսզի նորից սկսի պայքարը և օգնության հասնի հայկական այն միավորումներին, որոնք դեռ դիմադրում են Կով-

կասում։ Այդ նպատակով նա ինքը իրեն դրել է բրիտանական հրամատարության տրամադրության տակ»[172]։

Ծանր պայմաններում Բագրատունին ձեռնամուխ եղավ հայկական զորամասերի կազմակերպման գործին, նպատակ ունենալով կազմավորել առնվազն մեկ դիվիզիա, Լենքորան-Մուղան-Ջուլֆա գծով դուրս գալ Երևան։ Գնդապետ Հարությունյանը հայերից կազմակերպեց մեկ հետևակ գունդ, մեկ էսկադրոն և գնդացրային ջոկատ։ Հայերին սկզբնական շրջանում սնդամթերքով օգնող անգլիացիները Բագրատունուն ասում էին. «Մեզ զարմացնում են հայերի քաջությունն ու վճռականությունը։ Դուք չեք կորցնում հույսներդ և պայքարում եք, երբ կորած է թվում ամեն ինչ»։ Նրանք ավելացնում էին, որ օգտակար կլիներ թուրքերին հարված հասցնել ոչ թե Անդրկովկասում, այլ ուրիշ ռազմաճակատում, հասկացնելով, որ հայերը այլևս իրենց պետք չեն։

Այդ վերաբերմունքը ցայտուն երևաց Բագրատունու նախաձեռնությամբ կազմակերպված խորհրդակցությունում, որին մասնակցում էին գեներալ Թոմսոնը, անգլիական բանակի արևելյան շտաբի պետ գեներալ Բալը, գեներալ Էնդրյուսը, գնդապետ Շատելվորտը։ Նրանք Բագրատունուն տեղեկացրին անգլիական հրամանատարության որոշումը՝ Հյուսիսային Պարսկաստանում ռազմական գործողությունները դադարեցնելու և հայկական բրիգադի կազմակերպման վերաբերյալ իրենց մերժողական մոտեցման մասին[173]։ Զասացին, սակայն, որ անգլիական հրամանատարությունը բանակցություններ է վարում Ադրբեջանի կառավարության հետ, որն ավարտվեց բրիտանական բանակի՝ Բաքու մտնելով։ «Բաքվի անկումից հետո անգլիացիները հայերի օգնության կարիքը չէին զգում, դրա համար էլ չէին մտածում ցույց տալ ինչ-որ օգնություն։ Գեներալ Դենստերվիլի տեղակալ Շատելվորտը հայերի, հատկապես երևանյան հայերի նկատմամբ առանձնակի հետաքրքրություն չցուցաբերեց»։ Տեղեկացնելով այս մասին, Կալմանյանցը խորհուրդ էր տալիս անգլիացիների վրա այլևս հույս չդնել. «Հայկական հարցում անգլիացիները դրսևորում են «հնդկական» քաղաքականություն, այդ «հնդկական» ձգտումներում անգլիացիներից պետք է զգուշանալ, այդ նպատակով հարկավոր է խուսափել ամեն տեսակ հրահանգիչներ, խորհրդականներ և համանման անգլիական գործակալներ հրավիրելուց։ Ընդհանրապես, անգլիացիներին պետք է հեռու պահել մեր ներքին գործերից»։ Սկզբնական շրջանում անգլիացիները պետք է հենվեին «բարեհույս» հայերի վրա, «մինչև այն ժամանակ, քանի դեռ նրանք իրենց հարաբերությունները չէին կարգավորել Ադրբեջանի և Վրաստանի հետ»[174],— նկատում է Կալմանյանցը։

Անգլիական հրամանատարության հակահայկական սադրանքի դեմ եռանդուն բողոքը տվեց իր արդյունքը. զրպարտությանը տրվեց հակահարված։ Բաքվում կատարվածի ճիշտ գնահատականը տվեցին անգլիական պետական, հասարակական գործիչներ, զինվորականներ, մամուլը։

Ժխտելով հայերի դեմ հորինված մեղադրանքը և մերկացնելով հանուն անգլիական զինվորական համազգեստի պատվարժանության բարձրացված հակահայկական վայնասունը, «Մանչեստր գարդիան» ազդեցիկ թերթը սեպտեմբերի 23-ի առաջնորդող հոդվածում գրում էր. «Բաքու ուղարկված մեր էքսպեդիցիայի մասին իսկական ճշմարտությունն այն է, որ նա շատ թույլ էր թվով և հանդերձանքով և շատ հեռու օգնական ուժերից, որ կարողանար նույնիսկ ամենանպաստավոր պայմաններում վճռական գործողություններ կատարել։ Որպես զինվորական միջոցառում, անշուշտ, նա դատապարտված էր ձախողման։ Հետևաբար, ճիշտ չէ և անազնվություն է մեր անհաջողությունների պատասխանատվությունը Բաքվի հայերի վրա բարդել, և այդ միջոցներով չէ, որ ռազմական նախարարությունը կարող է իրենից չեզոքել պատասխանատվությունը։ Հայերի տեղական պայմանները և նրանց ցույց տված դիմադրությունը այս պատերազմի ընթացքում պետք էր, որ նրանց ապահովեր և պաշտպաներ այդպիսի հարվածներից։ Բաքվում 60 հազար հայերի՝ տղամարդ, կին, երեխա, կյանքը վտանգի տակ էր։ Մենք շատ ուժ չուղարկեցինք, որպեսզի նրանց որևէ կերպ պաշտպանեինք։

Հայերը այս պատերազմի ընթացքում բավական փորձ ունեին թուրքերի «գթասրտության» և դաշնակիցների այնքան քիչ ազդեցիկ պաշտպանության հարցում։ 800 հազար հայեր՝ տղամարդ, կին և երեխա, սպանվեցին այս երեք-չորս տարվա ընթացքում, թուրքական կառավարության ուղղակի կարգադրությամբ։ Դա ժամանակակից պատմության ամենաարհավիրքի կոտորածն էր, որը տեղի ունեցավ մեր աչքերի առաջ։ Ամբողջ ազգը բեկորների վերածվեց։ Նույնիսկ այս բոլորից հետո հայերը համառությամբ շարունակեցին կռիվը Կովկասում»[175]։

Բաքվի պաշտպանության գործում հայերի համբավը արատավորող պաշտոնական հաղորդագրության վերաբերյալ իր խոսքն ասաց լորդ Ռոբերտ Սեսիլը. «Ինչ էլ որ եղած լինի, Բաքվում տեղի ունեցած եղելությունների պատասխանատվությունը չի կարող ընկնել հայ ազգի վրա։ Նրանց բոլորը սկզբից իսկ պատրաստ էին դառնալ այստեղ տիրող անկազմակերպվածության հետևանքով։ Թուրքերին էր հանձնվել Անդրկովկասի երկաթուղին, որը նրանց առաջնորդում էր Բաքու։ Հայկական ուժերը Կովկասի պաշտպանության գործը իրենց ուսերին վերցրին և հինգ ամիս ուշացրին թուրքերի առաջխաղացումը»[176]։

Բաքուն գրավված էր, առաջին խնդիրը՝ կատարված։ Թուրքերի նպատակն էր, ինչպես գրում էր «Իկդամ» թերթը 1918 թ. սեպտեմբերի 23-ին, տիրել ամբողջ Կովկասին, պարսկական Ադրբեջանին, Թուրքեստանին, «առասպելական թռչնի թևին թառած» գնալ մինչև Չինաստան, կիրգիզների բուն երկիրը, մոնղոլների ու սարթերի աշխարհը, «Թուրք-թաթարական Կասպից ծովի ափին ստեղծել թաթարական

Ադրբեջան պետությունը՝ Բաքու մայրաքաղաքով» և «Հայաստանը խեղդել իր անձուկ օղակում»[177]։

Դա երևում է նաև Բաքվի տակ բռնագրավված՝ թուրք սպայի 1918 թ. օգոստոսի 5-ին հորը գրած, բայց չուղարկված նամակից։ Այնտեղ խոսվում է և համաթուրքիզմի նպատակների, Անդրկասպյան երկրամասը նվաճելու մասին։ «Բաքուն գրավելուց հետո մենք այստեղ չենք մնալու,— գրում է թուրքական սպան,— այլ պետք է շարժվենք առաջ, դեպի Սամարղանդ և Տաշքենդ, դեպի մեր եղբայրները»[178]։

Հայերի ֆիզիկական ընաջնջումը համարելով համաթրքության հիմնական խնդիրներից մեկը, երիտթուրքերը մուսավաթականների հետ ղրան պատրաստվում էին նաև թուրքական բանակի՝ Ադրբեջանից հեռանալուց հետո։ Կենտրոնական տերությունների պարտությունից հետո ստիպված հեռանալով Բաքվից և Ադրբեջանից, թուրքերը այնտեղ թողեցին մեծ թվով սպաներ, զենք ու զինամթերք։ «Թուրքական կառավարությունը չի անտեսի ոչ մի միջոց, որպեսզի եղբայրական ադրբեջանական կառավարության ծառայության մեջ նրանք մնան այնքան ժամանակ, որքան նրանց կարիքը կզգացվի»։ Այդպիսին էր մուսուլմանական բանակի կոմիսար Ջավադ բեյի հավաստիացումը, որը տպագրվեց «Ադրբեջան» թերթում, 1918 թ. նոյեմբերի 1-ին[179]։ Հաստատելով նույն միտքը, Թուրքիայի ռազմական նախարար Իզզեթը Ադրբեջանի կառավարության ղեկավար Խան-Խոյսկուն գրած նամակում հույս էր հայտնում, որ թուրքերի հեռանալուց հետո ադրբեջանական կառավարությունը «կջանա ստեղծել մուսուլմանական պետություն»[180]։ Դրան պետք է նպաստեր թուրքական բանակի օրինակով ստեղծվող մուսուլմանական բանակը։ «Մեզ եղբայրակից Օսմանյան կայսրությունը ամբողջ աշխարհով մեկ փառաբանված բանակով, լավագույն զորահրամանատարների գլխավորությամբ հանդես գալով մեր երկրի պաշտպանության գործի համար, իր առջև առաջին խնդիրը է դրել նպաստել Ադրբեջանի համար բավականաչափ ուժեղ բանակ ստեղծելուն։ Նա մեզ տալիս է ուժեղ բանակի համար ամենաանհրաժեշտը՝ զենք, ռազմամթերք, փորձված սպաներ և գլխավորը՝ ազգային ինքնագիտակցության այն ոգին, որ թագավորում է ամբողջ թուրքական բանակում։ Մեզանից պահանջվում է միայն կենդանի ուժ՝ մեր հայրենիքի պաշտպանության համար»,— գրում է «Ադրբեջան» թերթը։ Նա ընդգծում էր, որ «պատմությունը չի կրկնվում» և պետք է անհապաղ օգտվել ստեղծված իրավիճակից, «երիտասարդ պետության» քաղաքական և տնտեսական շահերը պաշտպանելու համար ստեղծել ուժեղ բանակ[181]։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Արդեն զգացվում էր Համաձայնության երկրների հաղթանակի շունչը Բալկանյան, Միջագետքի և Սիրիա-պաղեստինյան ճակատներում։ Ակնհայտ էր թուրքական զորքերի պարտությունը։ Թուրքերը, մի կողմից, փոխելով իրենց ռազմաքաղաքական կողմնորոշումը և տակտիկան, փորձում էին կնքել զինադադար դեպի Մոսուլի նավթահանքները շտապող անգլիական բանակի հրամանատարության հետ, մյուս կողմից՝ ընդարձակում իրենց նվաճումները Կովկասում, ամրապնդում կապերը Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի մահմեդականների հետ։ Դերբենդը գրավելուց հետո, հոկտեմբերի 25-ին թուրքական զորաջոկատները դուրս էկան Թեմիր-խան-շուրա (Բույնակսկ)։ Կառավարական ծրագրերին քաջատեղյակ «Վաքթ» թերթը գրում էր. «Մեր գլխավոր խնդիրն է պաշտպանել Անդրկովկասի սահմանները, ստեղծել մեր և Իրանստանի միջև այնպիսի ամուր պատնեշ, որը իրականացվեր ի դեմս նոր կազմակերպվող անկախ պետությունների։ Եթե մեր դաշնակից Գերմանիան չուղղի իր թույլ տված սխալները, ապա, այդ դեպքում, նրա՝ մեզ տված երաշխիքները՝ Թուրքիան ուժեղագույն պետության վերածելու մասին, կմնան դատարկ խոսքեր»[182]։ «Հիասթափված» պատերազմում պարտվող Գերմանիայից, Թուրքիան փնտրում էր նոր հովանավորներ։

Այդ քաղաքականությունը հասկանում էին Հայաստանի Հանրապետության բնակչության պատվիրակները, որոնց միացել էին նաև Ուկրաինայում Հայաստանի ներկայացուցիչ Ջամոյանը և Ռուսաստանի պետական դումայի նախկին անդամ Մ. Ադամյանը, որը փոխարինում էր Ա. Ջուրաբյանին։ Նրանք, գիտակցելով համաթրքության գաղափարախոսության խարդախ գործելակերպի վնասակարությունը հայ ժողովրդի համար, կանխեցին Կոստանդնուպոլսի հայկական պատվիրակության՝ Թուրքիայի հետ «արտակից համաձայնություն» ստորագրելը[183]։

Համո Օհանջանյանը 1918 թ. հոկտեմբերի 14-ին գրում էր Կոստանդնուպոլիս՝ հայկական պատվիրակությանը. «Մեր գլխավոր նպատակը պետք է լինի հիմա ստիպելու Տաճկաստանին հրաժարվել մեզ համար կորստաբեր համաթուրանիզմից։ Քանի կմնան տաճիկների մեջ այդ համաթուրանական ոգին և ձգտումները, մենք միշտ լինելու ենք ենթակա վտանգին, որովհետև մենք նրա ճանապարհի վրա ենք գտնվում։ Մեր բոլոր ուժերն ու ջանքերը պետք է գործադրենք նրա վրա, որ համոզենք Ամերիկային ու Եվրոպային, որ հարկավոր է մեկընդմիշտ փշրել տաճկական համաթուրանական զենքերը, հակառակ դեպքում, մեր ամբողջ ապագան կլինի ենթակա կոտորածների վտանգին»[184]։

Մեկ այլ նամակում Օհանջանյանը Վիեննայից գրում էր. հարկավոր է բոլոր ազդեցությունները գործադրել հաշտության պայմաններում

Հայ դատը մոռացության չմատնելու համար. «Ամերիկան և առհասարակ Անտանտը, գոնե այս անգամ պետք է մեր դատին տան իրենց պատշաճ տեղը և կարևորագույն նախապայմանների շարքին դասեն նաև Հայաստանի անկախության ու վերաշինության խնդիրը, իր պատշաճ սահմաններում»[185]:

Նոր դիրքորոշման հարցում իր խոսքն ասաց 1918 թ. հոկտեմբերի 31-ին Բեռլինում Համո Օհանջանյանի նախագահությամբ կայացած խորհրդակցությունը, որին մասնակցում էին Մ. Աճեմյանը, դոկտոր Գրինֆելդը, արևմտահայ գործիչ Ավետիսյանը, Գ. Զամոյանը: Վերջինս հրավիրվել էր Բեռլին՝ հատկապես նախատեսվող հարցերի քննարկմանը մասնակցելու համար: Խորհրդակցությունը քննարկեց. 1) Թուրքահայաստանի և Ռուսահայաստանի հարցի լուծման ցանկալի ձևը, 2) Հաշտության վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմավորումը, 3) Եվրոպայում բարոզչության կազմակերպումը և վեհաժողովի համար նյութերի հավաքումը, 4) ինչպես Թուրքահայաստանի, այնպես էլ Ռուսահայաստանի վերակառուցման հարցերը: Խորհրդակցության մասնակիցների կարծիքն այն էր, որ Թուրքահայաստանը պետք է միավորվի Ռուսահայաստանի հետ՝ անկախ, ինքնուրույն պետության ձևով, հայտարարելով հավերժ չեզոքություն: Այդ իդեալի իրականացման անհնարինության դեպքում, պաշտպանել Հայաստանի անկախությունը՝ ելքով դեպի Միջերկրական ծով՝ Կիլիկիայով, և Սև ծով՝ Տրապիզոնով: Ապագա Հայաստանը պետք է մտներ ժողովուրդների միության մեջ, որպես լիիրավ անդամ:

Խորհրդակցության բոլոր մասնակիցները միահամուռ էին Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքի հարցում. Հայկական հարցի լուծման բոլոր տարբերակներում «Հայաստանը վերջնական և անվերադարձ պետք է դուրս գա Թուրքական ոլորտից և նրա ազդեցությունից»: Հաշվի առնելով, որ հարցերի լուծումը կախված է «Համաձայնության երկրների կամքից», խորհրդակցությունը որոշեց Հ. Օհանջանյանին անհապաղ գործուղել Շվեյցարիա, Համաձայնության երկրների հետ կապեր հաստատելու և Հայկական հարցը առաջ մղելու համար[186]:

Եվ այսպես, հինգ ամիս Բեռլինում մնալուց, դռներ թակելուց, շատ հանդիպումներ ունենալուց, խոստումներ լսելուց հետո Հայաստանի պատվիրակությունը Հայ դատի սատարումը արդեն փնտրում էր Ամերիկայում և եվրոպական այլ երկրներում, հուսալով այն տեղափոխել Հաշտության համաշխարհային վեհաժողով:

Փարիզում նախատեսվող վեհաժողովին մասնակցելու համար 1918 թ. դեկտեմբերի 5-ին հաստատվեց Հայաստանի Հանրապետության պատվիրակություն, որի մեջ մտան Ա. Ահարոնյանը (նախագահ), Հ. Օհանջանյանը և Մ. Պապաջանյանը[187]: Հայաստանի կառավարությունը դեկտեմբերի 7-ին հաստատեց Փարիզ ուղարկվող պատվիրակության գործունեության հրահանգը: Դրա հիմնական դրույթներն էին 1. նախկին ռուսահայ և տաճկահայ նահանգներից կազմվելու է մեկ պետական

մարմին՝ Միացյալ Հայաստան, 2. Հայաստանի մեջ մտնելու են Անդրկովկասից բոլոր հողամասերը՝ ծրագրված վերաբաժանման սահմաններում, Տաճկաստանից հայկական վեց վիլայեթները՝ առանց ոչ հայաբնակ ծայրագավառների, բայց սեփական ելքով դեպի ծով, 3. Հայաստանի մշտական չեզոքությունն ապահովվելու էր միջազգային երաշխիքներով: 4. Հայաստանի անկախության ապահովումը պետք է որոնել մեկ կամ մի քանի պետությունների դիվանագիտական և ռազմական պաշտպանության մեջ: Մեծ պետությունների շարքում նախընտրելի է այն մեկի հովանավորությունը, որն իր աշխարհագրական դիրքի և քաղաքական միտումների որպիսությամբ ազատ է տարածքային ձգտումներից և մեր երկրի ներքին քաղաքական կյանքին միջամտելու հակումներից: 5. Այժմ ևեթ պարտավորեցնել Թուրքիային՝ հետ քաշվել մինչև Անդրկովկասի 1914 թ. սահմանները, հանձնելով Հայաստանին իրեն պատկանող հողերը՝ բոլոր ամրություններով ու ռազմամթերքով, հաղորդակցության բոլոր միջոցներով: 6. Աշխատել, որ Հայաստանի բարեկամ մեծ պետություններից մեկի զորքը մտնի Տաճկահայաստան, մինչև հայոց սեփական զինական ուժերի կազմակերպելը և հնարավորություն տալ տաճկահայ փախստականներին՝ վերադառնալ իրենց տեղերը: 7. Տաճկահայաստանում կատարված բարբարոսությունների համար պատասխանատու անել իթթիհատական կառավարության անդամներին և երկրի բարձրաստիճան պաշտոնյաներին: Տարագրված տաճկահայերի վերադարձի և հայրենիքում տնտեսությունը վերականգնելու ծախսերը դնել Թուրքիայի վրա. վերադարձը և տեղավորումը կատարվելու է Հայաստանի և Համաձայնության պետությունների հսկողության տակ:

Նախարար-նախագահ Հովհ. Քաջազնունու ստորագրած հրահանգում պատվիրակությանը առաջարկվում էր պահպանել մշտական կապ և սերտ համաձայնություն Պողոս Նուբար փաշայի հետ, որը պետք է նկատվեր իբրև արևմտահայության ներկայացուցիչ և պետք է աջակցեր պատվիրակությանը Միացյալ Հայաստանի գաղափարն իրագործելուն[188]:

Հայաստանի խորհրդի և կառավարության որոշման մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդը տեղեկացրեց Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին՝ հորդորելով համախոհ գործողությունների[189]:

Հայաստանի Հանրապետության և Ազգային պատվիրակությունների գործունեությամբ Եվրոպայում սկսվեցին Հայ դատի պաշտպանության նոր փորձեր[190]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Կոստանդնուպոլսում նախատեսված կոնֆերանսն այդպես էլ չկայացավ։ Թալեաթի կառավարությունը հեռացավ՝ իր տեղը զիջելով գեներալ Իզզեթ փաշայի կառավարությանը։ Համաձայնության երկրների զորքերի՝ Հալեպը գրավելուց հետո, 1918 թ. հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզում՝ Մուդրոսում, կնքվեց զինադադար Համաձայնության երկրների ու Թուրքիայի միջև։ Լուծվեց նաև թուրքական զորքերի կողմից Կովկասը դատարկելու հարցը։ Մուդրոսում դիվանագիտական նուրբ խաղ խաղաց Թուրքիայի մեծ վեզիր Իզզեթ փաշան։ Նա առաջ քաշեց Թուրքիայի և Կովկասյան ժողովուրդների դաշնություն ստեղծելու հարցը՝ դաշնակիցների հովանու ներքո։ Մեծ վեզիրը հայտարարեց. «Մենք ամեն ինչ ունենք ռուսական արշավանքի դեմ պատվար կառուցելու, ամուր դիրք ստեղծելու համար, որին զարնվելով ջարդ ու փշուր կլինեն Միջագետքի և Հնդկաստանի վրա ուղղված հարվածները»[1]։ Նա ոգևորված էր ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերի» 1918 թ. հոկտեմբերի 14-ին հրապարակված պաշտոնական մեկնարանություններից, որի 12-րդ հոդվածը ներառում էր Կովկասի և Թուրքիայի հարցերը։ «Կովկասը, հավանաբար, պետք է դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մաս, Անատոլիան պետք է թողնել Թուրքիային»[2],— ասված էր մեկնաբանություններում։

Նախագահ Վիլսոնի «14 կետերի» մեկնաբանությունները դարձան կովան թուրքական նոր քաղաքականության համար։ Համաթրքության գաղափարախոսները հատկապես առանձնացնում էին 12-րդ հոդվածը, դրսևորելով իրենց գոհունակությունը Թուրքիայի «ինքնիշխանության իրավունքի» վիլսոնյան ձևակերպման համար։ «Վիլսոնը ճանաչում է դրանով մեր տարածքային ամբողջականությունը և չի ճանաչում օտարների անհիմն պահանջները՝ այս նույն երկրի նկատմամբ։ Վիլսոնի ծրագրի 12-րդ հոդվածը մեկընդմիշտ մերժում է Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի պահանջները, որոնք իրենց մեջ արդեն բաժանել են Անատոլիան։ Թուրքիան ոչ միայն չի կորցնում այն, այլև ազատվում է կապիտուլյացիայից»։ Վիլսոնի ծրագրով «Հայկական հարցը հին պատմություն է դարձել։ Թուրք-հունական դատը անցել է միջնադար»[3],— տարփոդում էին համաթրքության գաղափարախոսները։

Պատերազմում պարտված Թուրքիան չէր հրաժարվում իր համաթուրանական ծրագրից։ Զգձգելով զորքերի հետքաշումը մինչև Բրեստի սահմանները, թուրքերը Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում ստեղծեցին իրենց հենարանը՝ այստեղ թողնելով մեծ թվով սպաներ, հրահանգիչներ և գործակալներ։

Համաթրքության նկրտումները բացահայտում են ֆրանսիական զինվորական առաքելության ղեկավարներ գնդապետ Շարդինեն և կապիտան Պուադեբարը։ «Հենվելով կրոնի վրա, թուրքերը նախատեսել են Լեռնականների միության և Ադրբեջանի միավորումը։ Այդ դաշինքը կնքվել է 1918 թ. հոկտեմբերին»,— զեկուցում էր գնդապետ Շարդինեն, առանձնացնելով համաթրքական շարժման զարգացումը, որը վերածվել էր «թուրք-մահմեդական ազգայնական և կրոնական շարժման»։ 1919 թ. փետրվարին իր մեջ ամփոփած Դաղստանը, Ջեչնիայի, Ինգուշեթիայի, Օսեթիայի, Կաբարդայի մի մասը, կումիկների տարածքը, Լեռնականների հանրապետությունը պահանջում էր ամբողջ Կաբարդան, Թերեքի կազակների տարածքը, նկրտումներ ուներ Հարավային Օսեթիայի, Աբխազիայի, Զաքաթալայի նկատմամբ[4]։ Հյուսիսային Կովկասի մահմեդականների շրջանում 1918 թ. հոկտեմբերից սկսած համաթուրքական քարոզչություն էր ծավալում հատուկ գործուղված թուրքական սպա Իզզեթը իր օգնականներով։

Թուրքական զորքերի հեռանալուց հետո Բաքու մտան անգլիական զորամասերը, որոնք գրավեցին Բաթում-Թիֆլիս-Բաքու-Թեհրան երկաթուղին։ Սակայն Նուրի փաշայի թուրքական բանակը մնաց Օլիզավետպոլում, Շևքի փաշայի բանակը՝ Կարսում, Հալիլինը՝ Նախիջևանում։ Նրանք, կապիտան Պուադեբարի վերլուծությամբ, «պատրաստվում էին Արևելքում հետագա նվաճումների», այդ նպատակով զինում էին մուսուլմաններին, արգելակում հայերին վերադառնալ իրենց բնակավայրերը, հայկական իշխանությունների վերականգնմանը[5]։ «Կովկասում մենք ունենք երկու դիվիզիա։ Վերջին ժամանակները զենք բաժանվից Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի մուսուլմաններին։ Էնվեր փաշան պլանավորում էր կովկասյան կամավորներով մեր դիվիզիաների ուժեղացումից հետո ջախջախել Հայաստանը և Կարսում, ուր չեն կարող հասնել Համաձայնության պետությունները, ստեղծել ժամանակավոր կառավարություն։ Հասնելով իր նպատակին, նա պետք է մնար այստեղ և սպասեր քաղաքական իրադրության զարգացմանը»[6],— գրել է թուրքական քաղաքական գործիչ Ջելալ Բայարը։

Հիրավի, չհանդիպելով անգլիացիների արգելքներին, թուրքերը ստեղծեցին այսպես կոչված «Կարսի Ազգային խորհրդի կառավարությունը» և «Արաքսի հանրապետության կառավարությունը», որոնք միավորվեցին և կազմավորեցին այսպես կոչված «Հարավ-արևմտյան կովկասյան հանրապետությունը»։ «Հանրապետությունը» ընդգրկում էր Բաթումից մինչև Նախիջևան ընկած տարածքը. նա հարաբերությունների մեջ մտավ «Արևելյան Անատոլիայի իրավունքների պաշտպանության կենտրոնության» հետ[7]։

Անգլիական թուրքամետ քաղաքականությունը գոտեպնդում էր Ադրբեջանի կառավարողներին, որոնք բացառելով Հայաստանի գոյությունը, Փարիզի հաշտության վեհաժողովին ներկայացրած փաստաթղթում հանրապետության սահմանները հասցնում էին մինչև Կարս, Արդվին, Ախալցխա՝ արևմուտքում, Երևան՝ հարավում, Կազբեկ՝ հյուսիսում, ադրբեջանցիների թիվը ուռճացնելով և հասցնելով 2 միլիոն 900 հազարի։ Ադրբեջանում բնակվող հայերի թիվը նշվում էր 798812 և արվում անհիմն եզրակացություն. «հայերի մեջ Ադրբեջանի թուրքերը շատ է տարածված», դա «ավելի է ապացուցում Ադրբեջանի դեղերի միասնությունը» և «գալիս է ասելու, որ Ադրբեջանում չկան ուրիշ ազգությունների ներկայացուցիչներ, որոնք ապրեին կոմպակտում»[8]։

Հենվելով թուրքական աղբյուրների վրա, Պուադեբարը նշում էր «թուրքերի բացարձակ կամքը» իրենց միացնելու ամբողջ տարածքը՝ Էրզրումից մինչև Դաղստան։ Անդրադառնալով Թուրքիային Թուրքեստանը միացնելու նկրտումներին, անգլիացիների թուրքամետ քաղաքականությանը, նա շեշտում էր. որ «նույնիսկ Ղարաբաղ՝ Հայաստանի նեցուկը, անգլիացիները հանձնեցին Ադրբեջանին», և «եթե մուսուլմանները հաղթեն Հայաստանում, Էրզրումի միավորումը Թուրքեստանի հետ կիրականանա»[9]։

Կովկասում ֆրանսիական զինվորական առաքելության դեկավար գնդապետ Շարդինեն Ֆրանսիայի գլխավոր շտաբին տեղեկացնում էր Ադրբեջանի քաղաքականության բնորոշ գործոնների մասին. 1. Ռուսաստանից անկախության գաղափարը, 2. Ադրբեջանի հյուսիսում պատնեշային պետության ստեղծումը, այդ նպատակով Լեռնականների հանրապետությանը օգնություն ցույց տալը, այդ պետության հետ դաշինքի նախագիծը, 3. Ղարաբաղի և Զանգեզուրի վրայով կապը Թուրքիայի հետ, այսինքն մինչև Ջուլֆա և Նախիջևանի շրջանը, Արաբսի միջին հոսանքի բռնազավթումը՝ Հայաստանի հաշվին։

Շարդինեն բնորոշում էր և մեծ տերությունների վերաբերմունքն ու շահերը։ Ըստ նրա, անգլիական բաղաքականությունը առաջնորդվում էր երկու սկզբունքով. 1. Ռուսաստանին դուրս մղել Հյուսիսային Կովկասից, այդպիսով նպաստել Վրաստանի և Ադրբեջանի անկախությանը և նրանց անգլիական շահերի ոլորտ ներգրավելուն, 2. Շահել ամեն կերպ մուսուլմանների համակրանքը և այդպիսով ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանի հակառակորդների համար։ Կարճ ասած, Անգլիան շարունակում է գերմանական քաղաքականություն, հետապնդում է Վրաստանի նկատմամբ հովանավորի նպատակ, ձգտում է նվաճել ադրբեջանական թաթարների համակրանքը։ Հետևաբար, նա շահագրգռված չի վերածնվող Ռուսաստանին դաշնակից հանդիսացող պետության ստեղծման մեջ[10]։

«Համաձրքության շարժման մասին» զեկուցագրում կապիտան Պուադեբարը արձանագրում էր. Կովկասը դա ճանապարհ է, որը Բաքվի և Բաթումի վրայով կապում է մուսուլմանական աշխարհը Կոստանդնուպոլսից մինչև Բոմբեյ. դա ճանապարհ է դեպի Հնդկաստան, Հարավային Սիբիր, Չինաստան։ Համաթուրանականների կողմից ընտրված այդ ճանապարհը ոգևորում էր երիտթուրքերին, որոնց շարժումը վերածվել է ազգային շարժման։ Թուրքերի համար շարժման նպատակ է՝ կապը ցեղերի արմատների հետ և նրա ընդարձակման ձգտումը։ Օգրակացությունն էր. «Տիրել ռուսական Հայաստանին, որը հանդիսանում է միակ պատնեշը համաթրքական շարժման ճանապարհին»։ Շարդինեն գրում էր. Հայկական հարցի լուծումը «կապված է Վրաստան-Հայաստան քրիստոնեական բլոկի ստեղծման հետ, որը կկազմի պատնեշ համաթրքական շարժման դեմ», իսկ «թուրքերի թուլացումը կնպաստի ֆրանսիական տնտեսական զարգացմանը Ադրբեջանում»։

«Ֆրանսիան միշտ համակրել է Հայաստանին, նա հաճույքով կընկալի մուսուլմանների մեջ քրիստոնեական նեցուկի ստեղծումը, սակայն իր վրա նման խնդիր վերցնել չի կարող։ Բացի դրանից, նա շահագրգռված է բարեկամական կապերում թուրք ժողովրդի հետ՝ ի հակակշիռ Թուրքիայի մանդատը փնտրող Անգլիայի և դրան անվճռակատորեն նայող Ամերիկայի»։ Պատճառը՝ օտար մանդատը Թուրքիայի նկատմամբ կթուլացնի Ֆրանսիայի ազդեցությունը։ Ֆրանսիական սպան ելքը տեսնելով Վրաստանի հետ Հայաստանի քրիստոնեական բլոկի ստեղծման մեջ, գտնում էր, որ «դա անհրաժեշտ է Թուրքեստանը, Չինաստանը և Հնդկաստանը իրեն ենթարկել ձգտող մուսուլմանական մեծ շարժումը կոտրելու համար»։

Նույն Շարդինեի և Համաձայնության երկրների՝ Թիֆլիսում գտնվող ներկայացուցիչների կարծիքով, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը առանձին գոյություն ունենալ չեն կարող. Կովկասը պետք է լիներ միասնական օրգանիզմ։ Նրանց համոզմամբ, վճռական դեր պետք է խաղար Անդրկովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիան, որի ստեղծման նախապատրաստական աշխատանքները սկսվել էին 1918 թ. հոկտեմբերից՝ Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ։ Շարդինեի եզրակացությունն էր. «պետք է օգնել կովկասյան հանրապետությունների նախատեսվող կոնֆեդերացիայի ստեղծմանը, որը կարող է ծառայել որպես պատնեշ բոլշևիկների և Թուրքիայի միջև»[11]։

Վրաստանի կառավարության կարծիքով, բացի անդրկովկասյան երեք հանրապետություններից, կոնֆերանսի աշխատանքներին պետք է մասնակցեր նաև Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության պատվիրակությունը[12]։ Ադրբեջանը պնդում էր նաև հինգերորդ՝ «Հարավ-արևմտյան կովկասյան Հանրապետության» ներկայացուցչի մասնակցության վրա։ Դա «հիմնավորում» էր նրանով, որ Հարավ-արևմտյան հանրապետության շահերը «սերտորեն շաղկապված են կովկասյան մյուս հանրապետությունների շահերի հետ»։ Հետևապես, «անհրաժեշտ է և նրանց բնականոն քաղաքական-տնտեսական ծրագրի կոորդինացիան»[13]։

Վրաստանի կառավարությունը Ադրբեջանի կառավարության այդ առաջարկությունը կտրուկ մերժել էր դեռևս մարտի 9-ի հուշագրով։ Վրաստանի կառավարության դիրքորոշումն էր. «Առանձին մարդկանց քայլերը՝ կազմավորել «Կովկասի Հարավ-արևմտյան հանրապետություն, ոչ մի ընդհանուր բան չունեն ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի հետ և բացառապես ուղղված են նրան, որպեսզի բարդացնեն իրադրությունը Անդրկովկասում, առանձին ժողովուրդների միջև ավելի խճճեն առանց այդ էլ բարդ փոխհարաբերությունները։ Վրաստանի կառավարության համար կասկած չկա, որ Հարավ-արևմտյան հանրապետության կազմակերպմամբ անդրկովկասյան ժողովուրդների անկախությանը հասցվում է հարված նրանց կողմից, ովքեր չեն կարող հաշտվել Անդրկովկասի անկախ հանրապետությունների գոյության հետ, և հաշվի չեն եկող այդ սպառնալիքը պետք է հավասարապես զգան Անդրկովկասի ժողովուրդների համերաշխության բոլոր անկեղծ կողմնակիցները»[14]։

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Ս. Տիգրանյանի՝ ապրիլի 4-ի պատասխանը կտրուկ էր. «Այսպես կոչված՝ Կովկասյան Հարավ-արևմտյան հանրապետության մասնակցությունը կոնֆերանսին Հայաստանի կառավարությունը համարում է անընդունելի»։ Հայաստանի կառավարությունը, միաժամանակ, գտնում էր, որ կոնֆերանսի աշխատանքներին պետք է մասնակցեն նաև Կուբանի, Թերեքի և Ռուսաստանի հարավում կազմավորված մյուս պետական միավորումների ներկայացուցիչները։ Հստակեցվում էր Հայաստանի կառավարության մոտեցումը առաջարկվող քաղաքական հարցերին[15]։ Փարիզի հաշտության վեհաժողովում համախոհ և միաբան հանդես գալու ադրբեջանական առաջարկը կարելի է ընդունել միայն սահմանավեճերը հարթելուց հետո, իսկ այդ հարթումը պետք էր կատարել ոչ թե ընդհանուր անդրկովկասյան կոնֆերանսում, այլ զույգ-զույգ բանակցություններում։ Ախալքալաք-Բորչալու վեճը պետք է լուծվի Վրաստանի հետ, Գանձակ-Ղարաբաղ վեճը՝ Ադրբեջանի հետ։ Տիգրանյանը, հայտնելով այդ մասին Ահարոնյանին՝ Փարիզ, հույս էր հայտնում, թե «Փարիզի կոնֆերանսում սահմանների որոշման խնդիրը ավելի նպաստավոր կերպով կլուծվի» հայերի համար[16]։

Այդ ժամանակ Փարիզում մշակվում էր արևելյան նոր քաղաքականություն, Ֆրանսիան և Անգլիան առաջ էին քաշում Թուրքիայի և Անդրկովկասի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու հարցը։ Ծնվել էր Կոստանդնուպոլիս-Անատոլիա-Հայաստան-Անդրկովկաս ամերիկյան միասնական մանդատի գաղափարը։ «Անգլիացիներն ու ֆրանսիացիները մայրսի կեսերին Թուրքիան բաժանելու որոշում կայացրին և զարգացրին Ամերիկայի կողմից Հայաստանի և Դարդանելի մանդատը վերցնելու գաղափարը,— գրում է Հերբերտ Հուվերը «Ամերիկյան առաջին խաչակրաց արշավանքը» գրքում։— Այս նոր միավորումը պետք է ընդգրկեր Թուրքական և ռուսական Հայաստանները, ամբողջ պատմական Հայաստանի թագավորության հողերը, որը ներառում էր Արևելյան Թուրքիա-

յում բնակվող այլ ժողովուրդների շատ ընդարձակ տարածքներ։ Այն պետք է ընդգրկեր նաև Կոստանդնուպոլիսը և Դարդանելը։ Նախագահ Վիլսոնին այդ միտքը դուր էր եկել[17]։ Ես այդ մասին իմացա, երբ գընդապետ Հաուզը ասաց, որ պետք է նահանգապետ նշանակվեմ»[18]։ Մանդատային համակարգը ընդունվեց 1919 թ. մայիսի 13—14-ին, Չորսի խորհրդում Վուդրո Վիլսոնի հայտարարությունից հետո՝ «Հայաստանի և Կոնստանդնուպոլսի» մանդատը վերցնելու մասին։ Այդ տարածքը ընդգրկում էր նեղուցների և «Թուրքական, պարսկական, ռուսական Հայաստանի միավորման» ամբողջ գոտին՝ Սև ծովից մինչև Միջերկրական ծով, գրում է գնդապետ Հաուզը[19]։

Օգտագործելով Վիլսոնի Թուրքամետությունը, նորաթուխ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան 10-ի խորհրդին ներկայացրած հուշագրում ձգտում էր կայսրության ամբողջականության պահպանմանը, մոռանալով կառավարության Թույլ տված ոճիրները[20]։ Հաշտության վեհաժողովի նախագահ Կլեմանսոյի հունիսի 25-ի պատասխանը քաղաքական մեղադրանք էր՝ ուղղված ընդդեմ երիտթուրքերի գործունեության, մեծ վեզիրի հավաստումների և նպատակների։ Նշելով, որ մեծ վեզիրը «բոլորովին չի որոնում ներողության խոսքեր կառավարության գործած ոճիրների» համար, Կլեմանսոն մերժում էր նրա պնդումը, «Քե Թուրքիան միշտ լավ է վարվել իր հպատակ ազգերի նկատմամբ, որ օսմանյան կայսրության պահպանումը հարկավոր է աշխարհի կրոնական հավասարակշռության համար, որ քաղաքակրթությունը և արդարությունը պահանջում են լրիվ վերականգնել Օսմանյան կայսրության տարածքները, ինչպես կային պատերազմից առաջ»։ «Անհնար է գտնել մի երկիր՝ ոչ Եվրոպայում, ոչ Ասիայում, որտեղ Թուրքական կայսրության տիրապետության ընթացքում նրա նյութական բարեկեցությունը չպակասեր և նրա մշակութային մակարդակը ամբողջովին անկման չենթարկվեր։ Թուրքիայի նորագույն պատմությունը չի կարելի համարել ուրախության և հպարտության ակունք»[21]։

Սակայն համաթուրանական նկրտումները պաշտպանություն գտան Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի նախագծում, որը մարմնավորվեց գեներալ Հարբորդի գլխավորած ռազմական առաքելության՝ 1919 թ. հոկտեմբերի 16-ին սենատին ներկայացրած զեկուցագրում[22]։ Միասնական մանդատի նախագիծը ներառում էր Կոստանդնուպոլիսը, Անատոլիան, Հայաստանը, Անդրկովկասը։ Վերջինս պետք է անջատվեր Ռուսաստանից, առանց ժողովրդի կամքը հաշվի առնելու և միացվեր Թուրքիային։ Միասնական մանդատով կազմավորվող պետությունների ժողովուրդները պետք է լինեին թուրքերը, թաթարները, հայերը, վրացիները։ Ընդ որում, Հարբորդի առաքելության կարծիքով, «միասնական մանդատի իրացման ժամանակ հայերը և Թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ»։ Նրանք պնդում էին, որ միասնական մանդատը, Թուրքահայաստանի և Անդրկովկասի համար կլիներ ամենաճիշտ տըն-

տեսական որոշումը՝ թուրքական կայսրության ամբողջ տարածքի ընդգրկումով։ «Հայկական հարցը չի կարող լուծվել Հայաստանում։ Նա չի կարող լուծվել առանց երկու հարցի վերջնական պատասխան տալու. «ի՞նչ պետք է արվի Թուրքիայի հետ, ի՞նչ է պատրաստվում անել Ռուսաստանը»։ Մինչ այդ հարցերի վերջնական լուծումը, առաքելությունը կարծում էր, որ Հայաստանի մանդատը վերցնող տերությունը պետք է իրականացնի մանդատ նաև Ռումելիայի, Կոստանդնուպոլսի, Անդրկովկասի, Թուրքիայի հայկական կուսակալությունների և Անատոլիայի նկատմամբ։ Առաքելությունը «հենվելով շատ ամերիկացիների» կարծիքի վրա, գտնում էր, որ «Հայաստանի, Անատոլիայի, Կոստանդնուպոլսի և Անդրկովկասի հիմնահարցերը պետք է քննարկվեն որպես անբաժանելի ամբողջություն»։

Այս նախագիծը փաստորեն թուրքանպաստ էր. Հայաստանի «վերացումով» կապ կհաստատվեր Կովկասի և Անդրկասպյան երկրների թուրք-թաթարների միջև, կստեղծվեր ուժեղ և միասնական թուրանական պետություն։ Այստեղ թուրք ղեկավարները փնտրում էին Ամերիկայի օգնությունը։ Այսպես էլ 1919 թ. հոկտեմբերի 15-ին հայտարարեց գեներալ Մուստաֆա Քեմալը. «Ծլնելով մեր ամբողջ փորձից, մենք համոզված ենք, որ Ամերիկան միակ երկիրն է, որն ի վիճակի է օգնել մեզ»[23]։

Հակառակ Հարբորդի առաքելության պնդմանը, միասնական մանդատի դեմ հանդես եկան շատ հեղինակավոր և ճանաչված ամերիկացիներ։ 1919 թ. դեկտեմբերի 18-ին Ջեյմս Ջերալդը, Ջաուլզ Հյուզը, Էլիոթ Ռութը, Էլհոն Փարկերը, Նիքոլաս Բարթլը և ուրիշներ ուղերձով զգուշացնում էին նախագահ Վիլսոնին, որ նման մանդատով թուրքերը կլինեն երկրի գլխավոր տերերը և «մանդատի ժամկետի ավարտով կվերսկսեն մարդասպանության ու թալանի իրենց ազգային ժամանցը», «որպես առաջին քայլ կձեռնարկեն հայ ժողովրդի ոչնչացմանը»։ Շեշտվում էր, որ միասնական մանդատը կապ է ապահովում Կոստանդնուպոլսի և Անատոլիայի թուրքերի, Կովկասի թաթարների և թուրքմենների, Կասպիականի մյուս կողմում եղած թուրանական ժողովուրդների միջև և ձեռք է տալիս երիտասարդ թուրքերին, նրանց համաթուրանական քաղաքականությանը։

Գերմանիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ջեյմս Ջերալդը, Կոստանդնուպոլսում աղջիկների ամերիկյան կոլեջի հոգեբանության և փիլիսոփայության պրոֆեսոր Լ. Փ. Ջեմբրզը, դոկտոր Վ. Պ. Բլիսսը, Հենրի Ջեսափը, Էդվարդ Լիթլը, Վահան Քարդաշյանը, գեներալ Հակոբ Իագրատունին, որը այդ ժամանակ գտնվում էր ԱՄՆ-ում, որպես Հայաստանի պատվիրակության զինվորական առաքելության ղեկավար և ուրիշներ, 1919 թ. դեկտեմբերին հրատարակած «Միասնական մանդատի նախագիծը. Թուրքական կայսրությունը ամերիկյան հովանավորության ներքո» հոդվածների ժողովածուում, աներկբայորեն հանգում էին այն եզրակացության, որ Կոստանդնուպոլսի, Անատոլիայի, Հայաստանի և

Ադրբեջանի միասնական ամերիկյան մանդատը կծառայի Թուրքիայի գերիշխանությունը ընդարձակելուն, համախմբելուն և առաջ մղելուն, հայ ազգը ոչնչացնելուն, Մերձավոր Արևելքում քրիստոնեությունը խեղդելուն, 24 միլիոն մահմեդականներին թուրանական իշխանության մեջ միավորելուն։ Համաթուրանիզմը բնորոշվում էր որպես աշխարհի խաղաղությանը լուրջ սպառնալիք։ «Համաթուրանիզմից, այնպես, ինչպես երիտթուրքերն են հասկանում, ազատվելու միայն մի ճանապարհ կա, դրա համար անհրաժեշտ է Անատոլիայի թուրքերին բաժանել Կովկասից և Կասպիականից այն կողմ բնակվող թուրանականներից», այդ բաժանող արգելքը կարող է լինել Հայաստանը։ Այդպիսին էր եզրակացությունը։ Այդպես էլ վերնագրել էր իր հոդվածը Լ. Ջեմբրզը. «Հայաստանը որպես պատնեշ համաթուրանիզմի ճանապարհին»։ «Նա, ով կարծում է, թե հայերը պաշտպանություն կգտնեն թուրքական իշխանության տակ, ուրեմն լավ չեն յուրացրել 600 տարվա դասը։ Թուրքերի կառավարման սկզբունքը նվաճված ազգերին բացարձակապես իրենց ենթարկելն է»,— արձանագրեց Ջեմբրզը։

Մատնանշելով թուրքերի չափազանց շահագրգռվածությունը ամերիկյան մանդատի մեջ և նրանց ունեցած հույսը ամերիկյան կապիտալի և «կազմակերպչական տաղանդի» շնորհիվ ոտքի կանգնելու և քրիստոնեական աշխարհին մարտահրավեր նետելու հարցում, Ջեյմս Ջերալդը «Թուրքական մանդատը. պանթուրքիզմն ու պանիսլամիզմն ամերիկյան հովանավորության տակ» հոդվածում շեշտում էր, որ ամերիկյան միասնական մանդատը բացարձակորեն ու հստակորեն թուրքերի և միմիայն թուրքերի օգտին ծառայող նախագիծ է, որը «պարզապես վտանգավոր է աշխարհի խաղաղության համար»։ Մեկ հետևություն ևս. «Հայաստանը, տարածվելով Սև ծովից մինչև Միջերկրական, Անատոլիայի թուրքերին բաժանում է Կովկասի և Անդրկասպյանի իրենց համաթուրանական շարժմանը և «եթե ազգականներից», վերջ դնում համաթուրանական քաղաքակրթության շահերը կապահանջեին, որպեսզի այդպիսին ստեղծվեր»[24]։

Մինչ քննարկվում էր ամերիկյան մանդատի հարցը, Հայաստանի կառավարությունը ճշտում էր իր հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ, որոնց միջև 1919 թ. հունիսի 16-ին կնքվել էր «պայմանական» համաձայնագիր՝ Դենիկինի կամավորական բանակի առաջխաղացման դեպքում համատեղ հանդես գալու համար։ Նրանց հորդորանքը Հայաստանի կառավարությանը՝ միանալ այդ համաձայնագրին, հաջողություն չունեցավ։ Պաուդերարը Հայաստանի այդ քայլը բացատրեց «Թուրքիայի և Ադրբեջանի կապերին չնպաստելու ցանկությամբ»[25]։

Միջամտեցին նաև դաշնակիցները։ Հայաստանի կառավարության փարիզյան ներկայացուցիչների պատասխանը հստակ էր. «Հայաստանը չի կարող և չպետք է այդ հարցում կովկասյան ժողովուրդների կողմնորոշում ունենա», «հակառուսական կողմնորոշումը չի բխում հայ

ժողովրդի շահերից»[26]։ Այդ նույն ժամանակ Ադրբեջանը կնքեց գաղտնի պայմանագիր Թուրքիայի հետ, միաժամանակ հետևողականորեն շարունակելով հանդես գալ անհապաղ անդրկովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու առաջարկությամբ։ Ադրբեջանական կողմը նման առաջարկությամբ հանդես եկավ և 1919 թ. նոյեմբերի 23-ին՝ Թիֆլիսում Հայաստանի և Ադրբեջանի վարչապետների հանդիպման ժամանակ, դեկտեմբերի 15—22-ը Բաքվում կայացած հայ-ադրբեջանական կոնֆերանսում։ Ադրբեջանի կառավարությունը հանդես էր գալիս չունենալով կոնկրետ սկզբունքներ և սահմանումներ, միայն ունենալով նպատակ՝ հաճախ հենվելով գնդապետ Հասկելի և գնդապետ Ռեյի կարծիքների վրա, խուսանավելով սահմանային հարցերի և պատերազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ հայկական պատվիրակության առաջարկությունների քննարկումից[27]։

Կոնֆեդերացիայի հարցը առաջնային էր և 1920 թ. ապրիլի 9—22-ը Թիֆլիսում կայացած երեք հանրապետությունների կառավարական պատվիրակությունների կոնֆերանսում։

Հայաստանի կառավարությունը պնդում էր իր դրույթները. առաջին հերթին, Ղարաբաղի ստատուս-քվոյի ճանաչումը՝ Ադրբեջանի կողմից Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի հետ կնքած համաձայնության պահպանումով, Զանգեզուրի ստատուս-քվոն, Երևան-Ջուլֆա երկաթգծի բացումը, Շարուր-Նախիջևանի շրջանը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս ճանաչելը[28]։

Հայաստանի պատվիրակությունը շեշտում էր, որ ընդհանրապես խոսք չի կարող լինել կոորդինացված քայլերի մասին, մինչև չեն հարթվել ներքին վեճերը, քանի կան ներքին ճակատներ և Ադրբեջանը հասցնում է հարված Հայաստանի ներսում՝ տարբեր կետերում։ Հայաստանի պատվիրակության առաջարկած բանաձևի հետ Ադրբեջանի և Վրաստանի պատվիրակները չհամաձայնվեցին։ Նրանք պահանջում էին անհապաղ համախոհ գործողություն՝ միջազգային ճակատում[29]։

Չհասնելով իր մտահղացումների կատարմանը, Ադրբեջանի կառավարության նախագահ Խան-Խոյսկին ցանկանում էր, որպեսզի ազգային հարաբերությունների գործընթացին մասնակից դարձվեն նաև հանձնաժողովներ դաշնակիցների գլխավոր կոմիսարիատի կողմից (դա ցանկանում էին նաև անգլիական դիվանագետները), լավ իմանալով իր լրտեսության սնուցված լորդ Քերզոնի և գեներալ Ուորտրոպի կարծիքը՝ «մուսուլմանների նկատմամբ հայերի «դաժանության» հարցում»։ Հայաստանի պատվիրակության կարծիքով, նման հանձնաժողովի անհրաժեշտություն չկար, և դա ուներ իր հիմնավորումը։ «Դաշնակիցներից անգլիացիները մեր նկատմամբ տրամադրված են ակնհայտ անբարյացակամ, ֆրանսիացիները՝ անօգնական, բայց կարեկցանքով թափահարում են ձեռքերը, իտալացին՝ անընդհատ հեռագրում է իր կառավարությանը, սակայն բացահայտ ասում է, որ իր կառավարությունը տանում է թուրքասիրական քաղաքականություն, վախենալով բարդություններից Կոնիայում և Ադանայում»,— Թիֆլիսից գրում էր Հ. Օհանջանյանը Ալ. Խատիսյանին՝ 1920 թ. ապրիլի 12-ին,— ահա մեր միջազգային դրությունը, հույսը պետք է դնենք միայն մեր վրա, չդադարելով ձգտել նրանցից օգնության[30]։

Դաշնակիցների վերաբերմունքը և միջամտությունը կովկասյան գործերին, զգացվում էր ոչ միայն Անդրկովկասում, այլև Լոնդոնում, Փարիզում, Սան-Ռեմոյում, 1920 թ. փետրվար-ապրիլ ամիսներին կայացած հաշտության վեհաժողովի նիստերում և անգլիական դիվանագիտության նախաձեռնությամբ հրավիրված Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի կառավարությունների պատվիրակությունների անդամների հանդիպումներում[31]։

Ակնհայտ էր թուրքական և ադրբեջանական լրատվության և գեներալներ Թոմսոնի, Ուորտրոպի, իտալական ներկայացուցիչների հաղորդումների ազդեցությունը Լլոյդ Ջորջի, լորդ Քերզոնի, Նիտտիի գործունեության և քաղաքականության վրա։

Անգլիական կառավարությունը հաշվի չէր նստում իրերի իրական վիճակի հետ, անտեսում էր Ղարաբաղում Հալիլ փաշայի և թուրքական սպաների ղեկավարությամբ թուրք-ադրբեջանական զինված ուժերի կուտակումը, դեպի Զանգեզուր նրանց առաջխաժումը, Զանգեզուրի գրավման և դրա շնորհիվ «թուրքական տարածքները ադրբեջանական տիրապետությանը մոտեցնելու» թուրք-ադրբեջանական պլանի առկայությունը։ Հայաստանի կառավարության վճռական հայտարարությունը իտալական զինվորական միսիայի ղեկավար Գաբբային, ֆրանսիականին՝ Նոնակուրին, անգլիական գլխավոր կոմիսար Ուորտրոպին, դաշնակիցների գլխավոր կոմիսար Հասկելին՝ հանրապետության սահմանները պաշտպանելու և Ղարաբաղի կոտորածը խափանելու համար միջոցներ ձեռք առնելու մասին[32], անգլիացիների կողմից դիտվում էր որպես հայերի ագրեսիա։

Դաշնակիցները հաշվի չէին նստում ոչ միայն Հայաստանի կառավարության դիմումների, այլև իրենց իսկ հետախուզության տվյալների հետ, հետապնդում էին միայն իրենց նպատակը։ «1919 թ. նոյեմբերին ադրբեջանական կանոնավոր բանակը երեք կողմից հարձակվում էր հայկական Զանգեզուրի վրա, սակայն կրում է պարտություն։ Դա թուրքերի հետ մշտական կապի ժամանակավոր ձախողում էր,— գրում է Պուադեբարը,— դեկտեմբերին Թուրքիայի գործունեությունը ուժեղանում է»[33]։

Անգլիացիների թուրքամետ քաղաքականությունը Ահարոնյանը բացատրում էր նրանց ձգտումով Ադրբեջանը ջերմ պահել ռուսական և պարսկական ազդեցությունից, համոզված լինելով, որ «Երիտասարդ Թուրքերի կրոնաքաղաքական վարդապետությունը՝ պանթուրքիզմը, սոսկ դարձվածք չէ», և այդ գաղափարը «կարող է հուզել Ասիան և հետևապես, անգլիական մուսուլմանական տիրապետությունները, անշուշտ և Արաբիան»։

Ահարոնյանը խորհուրդ էր տալիս Հայաստանի կառավարությանը «զրույց սկսել բոլշևիկների հետ, որպեսզի Կովկաս մտնելիս մեր նկատմամբ բարյացակամ լինեն։ Ֆորմուլան պարզ է, մենք ոչ բոլշևիկ ենք, և ոչ էլ հակաբոլշևիկ։ Մեր թափած ահագին արյունը և մեր անխախտ բարեկամությունը դեպի Լուսիան պետք է որ ներկայացվի սովետների առաջ»[34]։

Մեծ տերությունների քաղաքական և զինվորական գործիչների մոտեցումը իր կնիքն էր դնում եվրոպայում գտնվող Վրաստանի ու Ադրբեջանի պաշտոնական պատվիրակությունների գործելակերպի վրա. նրանք խույս էին տալիս հարցերին հստակ պատասխանելուց։ «Ըստ երևույթին, չեն ցանկանում այդ կարևոր հարցը այստեղ փոխադրել, քանի որ կարողանում են տեղում խեղդել։ Ես մտադիր չեմ հրաժարվել ո՛չ Վրաբաղից, ո՛չ Զանգեզուրից, ո՛չ Նախիջևանից։ Ինձ համար մահացու է ստորագրել մի ակտ, որը մեզանից պետք է խլի Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը կամ նրանցից մեկն ու մեկը։ Ես մնում եմ համոզման, որ այդ գավառներից որն էլ խլեն մեզանից, մեր պետության ապագան կվտանգվի»[35],— գրում էր Ահարոնյանը Խատիսյանին՝ 1920 թ. մարտի 23-ին, Լոնդոնից։

Լոնդոնում 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին սկսված քննարկումները շարունակվեցին Փարիզում՝ ապրիլի 13—16-ը կայացած երեք նիստերում։ Այստեղ ևս լրիվ պարզվեց, որ Ադրբեջանի և Վրաստանի պատվիրակները հետամուտ են ձգձգումների մեթոդին և Հայաստանի պատվիրակությունը հավատ չունենալով, թե բանավիճային կուվում կարելի է արդյունքի հասնել, հարցը փորձում էր տեղափոխել միջնորդ դատարան։ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի պատվիրակությունները համաձայնության չհասան և Սան-Ռեմոյում՝ ապրիլի 21—25-ին կայացած հանդիպումներում[36]։ Ավարտվեցին քննարկումները Հայաստանի մանդատի կապակցությամբ նաև ամերիկյան կոնգրեսում։ Այն սկսվեց մայիսի 29-ին՝ նախագահ Վիլսոնի մայիսի 25-ի ուղերձի հրապարակումով և ավարտվեց հունիսի 1-ին։ Հայաստանի նկատմամբ Ամերիկայի մանդատը ընդունելու մասին Վիլսոնի առաջարկությունը չընդունվեց։ Կողմ քվեարկեց 52 սենատոր, դեմ 23, 21-ը մնաց ձեռնպահ։ Ստացվող օգուտը, ըստ հաշվարկների, քիչ էր, քան արվելիք ծախսը[37]։

Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսի գնահատմամբ, ԱՄՆ-ը հրաժարվեց Հայաստանի մանդատից, քանի որ «Հայաստանի ընդերքը չի պարունակում ոչ նավթ, ոչ պլատին»[38]։ այլ ոչ նրա համար, ինչպես գրում էր Լլոյդ Ջորջը, թե «մանդատի գաղափարը անսովոր էր և այդքան հակասական ամերիկյան ավանդույթներին»[39]։ Իր դերը կատարեց և Խորհրդային Ռուսաստանի հետ զինված ընդհարման վտանգից խուսափելու գործոնը[40]։

Արևելքում խորհրդային կարգերի տարածման հենակետ դարձավ 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդայնացված Ադրբեջանը, որն իր արտաքին քաղաքական գործունեությունը սկսեց Ղարաբաղի, Զանգեզուրի, Նախիջևանի հայոց հինավուրց հողերի նկատմամբ ոտնձգություններով, նրանց տիրելու ակնկալությամբ։ «Ադրբեջանի արագ վերափոխվելը խորհրդային հանրապետության, ցույց է տալիս մարտնչող պանթուրքիզմի օջախ դարձած Ադրբեջանի որոշ տակտիկական առանձնահատկությունը և ուղղվածությունը։ Ադրբեջանի մտավորականներն ավելի ֆանատիկ պանթուրքիստներ են, քան նույնիսկ երիտթուրքերը»,— գրում էր 1920 թ. մայիսի 27-ին Սևաստոպոլում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Սաղաթելյանը Լուսաստանի հարավում զինված ուժերի գլխավոր հրամանատարության առընթեր բրիտանական զինվորական առաքելության պետ գեներալ Պերսին։ Արձանագրելով, որ նման որոշումը ընդունվել է Մուստաֆա Քեմալի գլխավորած անատոլիական «միլլիի» հետ համագործակցված, Հայաստանի ներկայացուցիչը նշում էր նաև դրա պատճառը. «Միակ ժողովուրդը, որ կանգնած է ծավալվող պանթուրքիզմի առաջ, հայ ժողովուրդն է։ Հայաստանի նվաճումը և ժողովրդի ոչնչացումը կլինի բոլշևիկյան դիմակ հագած թուրք մուսուլմանների գլխավոր խնդիրը, քանզի հայ ժողովուրդը սեպ է թուրք-մուսուլմանական աշխարհում և վտանգավոր արգելք՝ իր կապերով եվրոպական քրիստոնեական աշխարհի հետ՝ Արևելքում պանթուրքիզմի լրիվ գերիշխանության համար»[41]։

Հակաիմպերիալիստական պայքարի նշանաբանով էին սկզբնավորվում թուրք-խորհրդային հարաբերությունները։ Օգտվելով խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականությունից, Արևելքի «ճնշված ու կեղեքված ժողովուրդների» գաղութատիրական լծից ազատագրվելու կարգախոսից, Անկարայում ձևավորված Մուստաֆա Քեմալի կառավարությունը 1920 թ. ապրիլի 26-ին ոտքի եկավ Ռուսաստանի կառավարության՝ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և ռազմական դաշինք կնքելու առաջարկությամբ։ Քեմալը խնդրեց խորհրդային կառավարությանը՝ օգնություն ցույց տալ «իմպերիալիզմի դեմ մարտնչող» «միլլիի» կառավարությանը, ընդ որում, իմպերիալիստական տերությունն հորջորջելով և Հայաստանի Հանրապետությունը։ Հունիսի 4-ին խորհրդային կառավարության հղած նամակում արտաքին գործերի նախարար Բեքիր Սամի բեյը համոզմունք էր հայտնում, որ իրենց ցանկությունը կգտնի լայն աջակցություն «Մեծ Ռուսաստանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կողմից, որն իրեն հայտարարել է ճնշվածների ազատարար և կապիտալիստների ու իմպերիալիստների անհաշտ թշնամի»։

Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարության ցանկությունը կատարվեց։ Չիչերինը հայտնեց Քեմալ փաշային, որ «Թուրքիայի համար այդ ծանր օրերին խորհրդային կառավարությունը իրեն երջանիկ է համարում դնել բարեկամության ամուր հիմքը, որը պետք է միավորի թուրք և ռուս ժողովուրդներին»[42]։ Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի պատվիրակությունը Բեքիր Սամիի ղեկավարությամբ ժամանեց Մոսկ-

վա։ Այդ ժամանակ արդեն Մոսկվայում էր Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Լևոն Շանթի գլխավորությամբ։

Թուրք-ադրբեջանական «նվիրվածությունը» Ռուսաստանի նկատմամբ ավելի ակտիվացավ Մոսկվայում սկսված հայ-խորհրդային բանակցությունների օրերին։ Ադրբեջանի Հեղկոմին և քեմալականներին ոտքի էր հանել մասնավորապես այն հանգամանքը, որ այնտեղ քննարկվում էր նաև Զանգեզուրի և Ղարաբաղի Հայաստանին անցնելու հարցը։ Մոսկվան ոչ միայն գնդակոծվում էր հեռագրերով, այլև մեկը մյուսի հետևից այնտեղ էին ուղարկվում պաշտոնական պատվիրակություններ։ Առաջ էր քաշվում Թուրքիայի հետ միանալու համար Նախիջևանի, Շարուրի և Սուրմալուի վրայով կամուրջ ստեղծելու պանթուրքական ծրագիրը։ «Այս ծրագիրը հարություն է առել հսկայական ծավալով և շատ մեծ թափով։ Մոսկվայում և սոցիալիստական շրջաններում այդ ծրագրի իրագործումը, անշուշտ, պարզաբանվում է «կարմիր» Անատոլիայի հետ միանալու անհրաժեշտությամբ։ Այստեղ օժանդակում է նաև Ռուսաստանի և Տաճկաստանի դաշնը։ Գործողությունների համար նեցուկ է հանդիսանում հայ կոմունիստների մի բավականին ուժեղ հոսանք, որ տնտեսական նկատառումներով անհրաժեշտ է համարում Զանգեզուրի և Ղարաբաղի միացումը Ադրբեջանին»,— կառավարությանը հայտնում էին Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը և քարտուղար Տեր-Հակոբյանը 1920 թ. հուլիսի 31-ին։

Մինչ այդ, 1920 թ. հունիսի 2-ին, Օրջոնիկիձեին հայտնելով Վարաքաղի և Զանգեզուրի հարցում Հայաստանի կառավարության հետ կոմպրոմիսի հասնելու անհրաժեշտության առթիվ խորհրդային Ռուսաստանի կառավարության դիրքորոշման և Ադրբեջանի կառավարության մոտեցումների մասին, որը ադրբեջանական էր համարում նաև Շարուր-Դարալագյազի գավառը, որը «ոչ մեկի կողմից վիճելի չի համարվել և նույնիսկ մուսավաթական կառավարությունը միշտ ճանաչել է հօգուտ Հայաստանի», Չիչերինը ընդգծում էր. «առանց դրան, Հայաստանին գրեթե ոչինչ չի մնա»։ Չիչերինը խնդրում էր Օրջոնիկիձեին օգտագործել «Բաքվում իր հսկայական ազդեցությունը» Ադրբեջանի կառավարության վրա՝ «վիճաբանական համարել Ղարաբաղը և Զանգեզուրը, բայց ոչ Շարուր-Դարալագյազի գավառը», չգրավել Նախիջևանը և Հայաստանի Հանրապետության և ոչ մի տարածք, սահմանափակվել զինվորական ստատուս-քվոյով[43]։

Պատասխանելով Չիչերինին, Օրջոնիկիձեն 1920 թ. հունիսի 19-ին Վլադիկավկազից հեռագրում էր. «Ադրբեջանը հավակնում է Վարաքաղին, Զանգեզուրին, Նախիջևանին և Շարուր-Դարալագյազի գավառին։ Ղարաբաղում և Զանգեզուրում հռչակվել է խորհրդային իշխանության և վերը նշված տարածքը իրեն համարում է Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության մաս։ Նախիջևանը արդեն մի քանի ամիս է՝ ապստամբած մուսուլմանների ձեռքում է։ Շարուր-Դարալագյազի կապակցությամբ ես տեղեկություններ չունեմ։ Ադրբեջանը առանց Ղարաբաղի և Զանգեզուրի երբեք մնալ չի կարող։ Ընդհանրապես, իմ կարծիքով, անհրաժեշտ է Մոսկվա կանչել Ադրբեջանի ներկայացուցչին և նրա հետ լուծել Ադրբեջանին և Հայաստանին վերաբերող բոլոր հարցերը։ Դա պետք է արվի մինչև Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը։ Զաքաթալլչինայի կրկնությունը և հայերի հետ, այստեղ մեզ վերջնականապես կձախողի»[44]։

Օրջոնիկիձեի հեռագիրը ունեցավ իր ազդեցությունը Ռուսաստանի կառավարության դիրքորոշման վրա։

Տեղեկացնելով, որ իրենց տեսակետները պաշտպանելու նպատակով Մոսկվա են ուղարկվել Օրջոնիկիձեն և արտաքին գործերի ժողկոմ Հուսեյնովը և մեկ այլ պատվիրակություն՝ «բաղկացած գլխավորապես ոչ կոմունիստ ուժերից» Մահմեդ-Հասան Հաջինսկու գլխավորությամբ, Մ. Հարությունյանը և Տեր-Հակոբյանը գրում էին. «Մահմեդ-Հասանի պատվիրակությունը հրահանգ ունի Մոսկվայում պահանջել իրենց տարածքային ծրագրի իրականացումը հետևյալ պատճառաբանությամբ՝ Ադրբեջանի մուսուլմանության համակրանքը գրավելու միակ միջոցն այն է, որ Ադրբեջանին տրվեն ոչ միայն Ղարաբաղը և Զանգեզուրը, այլև Նախիջևանը, Շարուրն ու Սուրմալուն։ Այդ տիպի քարտեզները ներկայումս զարդարում են Հեղկոմի նախագահի և քարտուղարի սենյակների պատերը»։ Օգոստոսի 8-ին Նարիմանովի հետ հանդիպումից հետո, Մ. Հարությունյանը գրել է Երևան. «Նարիմանովը չունի նույնիսկ թուրք ցեղին հատուկ վարվեցողության եղանակը՝ այսինքն՝ արտաքին սիրալիրությունը և շատ ակտիվորեն երևան է բերում իր հակահայկական տրամադրությունը»[45]։

Հայ-խորհրդային բանակցությունները Մոսկվայում ձախողվեցին, սակայն օգոստոսի 10-ին, ճիշտ այն օրը, երբ կնքվեց Սևրի պայմանագիրը, Թիֆլիսում համաձայնագիր ստորագրվեց Հայաստանի և Ռուսաստանի պատվիրակությունների միջև։ Համաձայնագրով նախատեսվում էր, որ Խորհրդային Ռուսաստանի գործերը գրավելու են «վիճելի» մարզերը՝ Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը։ Այդ ժամանակավոր գրավումով Ռուսաստանը ենթադրում էր «ստեղծել բարենպաստ պայմաններ Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած տարածքային վեճերի խաղաղ լուծման համար», որոնք սահմանվելու էին Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև կնքվելիք պայմանագրով։ Շահթախթի-Ջուլֆա երկաթգծի շահագործումը դրվում էր Հայաստանի երկաթուղային վարչության վրա։ Համաձայնագիրը ստորագրել էին Բորիս Լեգրանը (ՌՍՖՍՀ), Ա. Բաբալյանը և Ա. Ջամալյանը»[46]։

Համաձայնագիրը հակահայկական, պրոթուրքական ճամբարում առաջ բերեց իրարանցում, «իմպերիալիստական Հայաստանի» դեմ բողոքի և սպրանքի նոր ալիք։ Առաջինը բողոքի ձայն բարձրացրեց թուրքական պատվիրակությունը, որից օգոստոսի 13-ին պաշտոնական

ընդունելության ժամանակ Գ. Չիչերինը պահանջեց «հաշիվ չնչող» Հայաստանին տալ Բիթլիսի, Վանի, Մուշի հայկական նահանգների մի մասը, կատարել բնակիչների տեղափոխություն։ Բեքիր Սամիի պատասխանն էր. «Թուրքիայում երբևիցե հայկական նահանգ գոյություն չի ունեցել»։

Օգոստոսի 14-ին թուրքական պատվիրակությանը ընդունեց Վ. Ի. Լենինը։ Թուրքերը դժգոհեցին, որ հակառակ Ռուսաստանի տված խոստումներին, «Հայաստանի սահմանները դեռ չեն բացվել», ավելին, «Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցություն հաստատող միակ ճանապարհը Նախիջևան-Շահթախթի երկաթուղին, խորհրդային կառավարության կողմից Հայաստանին տալը զարմանք և ցավ է պատճառել»։ Առաջ քաշելով երկաթուղին Թուրքիային հատկացնելու հարցը, նա ասել է. «ազգայնականների (քեմալականների— Հ. Ա.) ծանր դրությունը թույլ չի տալիս նույնիսկ երկու շաբաթ սպասել»։ Անկարա հղած հեռագրում Բեքիր Սամին գրել է. «ի նպաստ Հայաստանի՝ Կարախանի խաղացած դերը հստակ գիտակցելով հանդերձ, հավատացած եմ, որ կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը կցանկանան հալածել դաշնակցական կառավարությանը»[47]։

Օգոստոսի 13-ին Լենինին դիմեց Մոսկվայում Ադրբեջանի կառավարության և կոմկուսի կենտկոմի ներկայացուցիչ Ա. Շահթախթինսկին։ Նա մատնացույց էր անում Շահթախթի-Մակու, Շահթախթի-Երևան, Ջուլֆա-Թավրիզ երկաթգիծը և Ուրմիայի նավագնացությունը դաշնակներին (ոչ թե Հայաստանի Հանրապետությանը) հանձնելու հետևանքով Հայաստանի տնտեսական և քաղաքական օգուտները, մյուս կողմից Ռուսաստանի և Ադրբեջանի վնասները, հանգամանք, որին ձգտում են «դաշնակները, պարսկական կապիտալիստները և Անգլիան»։ Բացի դրանից, գրում էր Շահթախթինսկին, երկաթուղին իր շարժակազմով Հայաստանին անցնելը «դաշնակների ձեռքն է տալիս ամբողջ պարսկական Ադրբեջանը, նրանց կապում է Պարսկաստանում անգլիական ուժերի հետ», իսկ Ռուսաստանին և Ադրբեջանին զրկում «թուրքական հեղափոխական շարժման հետ» ամեն մի կապից, զրկում Նախիջևանից, որը նրանց կապում է «Թուրքիայի և Պարսկաստանի հարուստ տարածքների հետ»։ Նախիջևանում, որտեղ չկա ոչ մի հայ, ժողովուրդը մտցրել է խորհրդային կարգեր, նա «ի դեմս կոմունիստների, տեսնում է իր ազատարարներին և փրկիչներին և չի կարող մտածել, որ Խորհրդային Ռուսաստանը, ամբողջ ժողովրդի կամքին հակառակ, նրան կհանձնի դաշնակներին, երբ նրանց իշխանության տակ ոչնչացվում են ոչ միայն խորհրդային կարգերը, այլև սպառնում է ժողովրդի ֆիզիկական ոչնչացման իրական վտանգ, ինչպես դա եղել է հարյուրավոր մուսուլմանական գյուղերի նկատմամբ»[48]։

Փաստաթղթի հակահայկական բնույթը, սադրիչ ուղղվածությունը, փաստերի նենգափոխումը և փարիսեցիությունը ակնհայտ է։ Դա միայն Շահթախթինսկու դիրքորոշումը չէր։ Խորհրդային Ռուսաստանի և կոմու-

նիստական կուսակցության շահերի պաշտպանության քողի տակ ադրբեջանական-պանթուրքական զավթողական նպատակներ էին անցկացնում Ադրբեջանի կոմկուսի և հեղկոմի ղեկավարները՝ Նարիմանովի գլխավորությամբ։ «Հեղափոխական» Թուրքիային օգնելու նրանց գիծը պաշտպանում էին ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի, կովկասյան Կարմիր բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի առանձին անդամներ։

Ադրբեջանի ղեկավարության պահանջով 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհուրդն արդեն օգոստոսի 10-ին հրաման էր արձակել չճանաչել հայ-խորհրդային համաձայնագիրը, գրավել Հայաստանին անցած տարածքները։ Դրա դեմ վճռապես հանդես եկավ Բորիս Լեգրանը։ Ս. Օրջոնիկիձեին օգոստոսի 11-ին հղած հեռագրում (պատճենը՝ Չիչերինին) նա խնդրում էր դադարեցնել Շահթախթիի և Նախիջևանի տեղամասը գրավելու մասին 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի հրամանի կատարումը։ Լեգրանը համոզված գրում էր, որ «Բաքվի պլանները կարող են հասցնել անցանկալի հետևանքների։ Եթե Դուք անվերապահ պնդում եք Ձեր պլանը, անմիջապես տեղեկացրեք ինձ, այդ ժամանակ ես իմ առաքելությունը կհայտարարեմ ավարտված»[49]։

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Մոսկվայում կայացած խորհրդա-թուրքական բանակցությունների հետևանքով ծնվեց երկու կառավարությունների միջև պայմանագրի նախագիծ, որը նախատորագրվեց հետագայում վավերացվելու համար[50]։ Այդ բանակցությունները, որի ընթացքում Չիչերինը և Կարախանը դնում էին Վանը, Մուշը, Բիթլիսը Հայաստանին վերադարձնելու հարցը, ընդհատվեցին՝ թուրքական պատվիրակության առաջարկությամբ, Անկարայի կառավարության հետ խորհրդակցելու պատրվակով։ Չբավարարվելով Մոսկվայի համաձայնագրի պայմաններով, Թուրքիայի Ազգային մեծ ժողովը սեպտեմբերի 4-ին որոշեց. «Ադրբեջանի հետ կապ հաստատելու և Հայաստանին կատարված փաստի առջև դնելու հանգամանքը չպետք է կապել Մոսկվայի համաձայնության հետ։ Պետք է օգտվել ներկայացվող առաջին իսկ առիթից»[51]։

Բեքիր Սամիի ծայրահեղ պահանջները Չիչերինին ստիպեցին սեպտեմբերի 4-ին դիմել Կիրովին՝ հետևյալ հեռագրով. «Եթե Դուք կամ Լեգրանը հարաբերություններ ունեք ձախ քեմալականների հետ, ասացեք, որ աջ քեմալական Բեքիր Սամիի ընտրությունը մեզ հետ բանակցելու համար չափազանց անհաջող է։ Նա պահպանում է թուրքական բյուրոկրատների հին հոգեբանությունը, պնդում է խալիֆաթի սահմանների անձեռնմխելիության վրա, մինչդեռ մենք անհրաժեշտ ենք համարում համապատասխան տարածքով Հայաստանի ինքնությունը՝ Ռուսաստանին միանալու իրավունքով։ Բեքիրի անվերապահ պայքարը ինքնորոշման իրավունքի սկզբունքի դեմ տվյալ դեպքում Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները ենթարկում է վտանգի։ Մենք

չենք կարող պաշտպանել կեղեքվող ազգությունների վրա Թուրքիայի իշխանությունը»։ Չիչերինը խնդրում էր Կիրովին՝ հայտնել Լեգրանին, որ Հայաստանի կառավարության և իրենց միակ լուրջ տարաձայնությունը Ադրբեջանի հետ նրա ունեցած սահմանային հարցն է, որի «ժամանակավոր լուծումը հնարավորություն կտա Հայաստանի հետ հաստատել խաղաղ հարաբերություններ»[52]։

Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական նկրտումների նեցուկ դարձան սեպտեմբերի 1—8-ը Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը և այնտեղ ընտրված Քարոզչության և գործողության խորհուրդը։

Պատմությանը անտեղյակ մարդկանց մտքի և պոլիտիկանության արգասիք էր համագումարի հրավիրման կապակցությամբ Մոսկվա, Կոմունիստական ինտերնացիոնալի 2-րդ կոնգրես ժամանած բրիտանական, ֆրանսիական, իտալական, ամերիկյան կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների կողմից «Պարսկաստանի, Հայաստանի, Թուրքիայի կեղեքված ժողովուրդներին» հղած կոչը, որը ստորագրել էին նաև Կոմինտերնի գործկոմի նախագահ Գ. Զինովևը և քարտուղար Կ. Ռադեկը։ «Հայաստանի բանվորներին և գյուղացիներին» բաժնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը գնահատվում էր որպես արևմտյան կապիտալիզմի սադրանք. հայերը դիտվում էին որպես այդ սադրանքի զոհ։ Այդ կոչի հեղինակները պնդում էին, որ արևմտյան իմպերիալիստները իրենց շահերի համար հայերին խոստացան ոչ միայն անկախություն, այլև հրահրեցին նրանց հարստահարիչ տերտերներին ու վաճառականներին՝ հայերի համար պահանջել թուրք գյուղացիներին պատկանող հողերը, «որպեսզի թագավորի հափերժ պայքարը թուրք և հայ ժողովուրդների միջև»[53]։ Ոչ մի խոսք չէր ասվում Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության, հայերի ազգային ինքնորոշման իրավունքի մասին։ Եվ պատահական չէ համագումարում Մ. Պավլովիչի զեկուցման ուղղվածությունը. «Հայաստանը ներկայացնում է Ղարաբաղի և Զանգեզուրի պահանջը, հայ իմպերիալիստները առաջ են քաշում հիրավի մագերմանական (Բալանչիական— Հ. Ա.) պլան՝ վանի, էրզրումի, Տրապիզոնի, Բիթլիսի, Դիարբեքիրի նկատմամբ՝ ելքով ծով։ Հայաստանը ցանկանում է դառնալ Միջերկրական ծովով մեծ տերություն՝ մի տարածքով, որտեղ հայերը կազմում են բնակչության ընդամենը 50 տոկոսը։ Հունաստանի հայկական թերթերը հրահրում են վենիզելոսին՝ գրավել Տրապիզոնը։ Դա սադրանք է»[54]։

«Ադրբեջանը՝ ադրբեջանցիներին» կարգախոսը գոռալով հայտարարությունում առաջ քաշեց Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում 1920 թ. սեպտեմբերի 4-ին, Զինովևի և Ռադեկի հոգածությամբ Բաքվում գտնվող էնվեր փաշան։ Նա իրեն հորջորջում էր Այժիրի, Մոսկվայի, Տրիպոլիի, մուսուլմանական աշխարհի բոլոր ժողովուրդների լիազոր ներկայացուցիչ[55]։ Հայտարարությունում անտեսվում էր այն փաստը, որ Ադրբեջանի ազգաբնակչության մոտ կեսը այլազգիներ էին,

այդ թվում հայեր։ Իսկ դա նշանակում էր նոր ցեղասպանություն, նոր բռնագաղթ։ Ավելի ուշ, դրա վկաները եղան Սումգայիթը, Բաքուն, Կանձակը, Նախիջևանը՝ Ադրբեջանի խորհրդային Հանրապետության բոլոր հայաբնակ վայրերը, Լեռնային Ղարաբաղի դեմ արյունահեղ պատերազմը, Հայաստանի տնտեսական շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից։

Բաքվում մշակվեցին հակահայկական նոր դավեր, Հայաստանի համաթուրանական պլանները արգելակող պատվարի վերացման ծրագիր։ Կիսելով Քեմալի կարծիքը «իսլամական աշխարհում Թուրքիայի հատուկ դերի մասին», և հայտնելով գոհունակություն Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի արդյունքների վերաբերյալ, էնվերը, Ադրբեջանում և մուսուլմանական Արևելքում իրադրությունը պարզելուց և Կոմունիստական ինտերնացիոնալի ու Ադրբեջանի ղեկավարների հետ հարցերը քննարկելուց հետո, 1920 թ. սեպտեմբերի 7-ին գրում էր Անկարա. «մինչև ձմռան սկսելը հավանական է, կսկսվեն գործողությունները Հայաստանի դեմ։ Սակայն, իմ կարծիքով, դուք պետք է սկսեք այդ գործողություններն արդեն այսօր և հայերին չտաք ամրապնդվելու հնարավորություն։ Աստված տա, Ադրբեջանը ուժ հավաքի և հարձակման անցնի՝ մինչև հայերի, վրացիների, իրանցիների հարձակման անցնելը։ Ամեն դեպքում, դուք, եթե նույնիսկ Կարմիր բանակն այդ չցանկանա, պետք է անցնեք հարձակման և հասնեք 1878 թ. սահմանները»։ Էնվերը պատրաստակամություն էր հայտնում անատոլիական ճակատներ ուղարկել ադրբեջանական թուրքերից կազմավորված երկու դիվիզիա[56]։

Բաքվից հայտնվում էր նաև Արևելքի ժողովուրդների համագումարի որոշման մասին՝ Հյուսիսային Կովկասի մահմեդականների, Ադրբեջանի և Անատոլիայի միջև անմիջական կապ հաստատելու վերաբերյալ։ Այդ նպատակով կասպիական տարածաշրջանում գտնվող թաթարական և կիրգիզական ռազմական միավորումները Ադրբեջանի և Պարսկաստանի ազերիների հետ պետք է ուղարկվեին հայկական ճակատ։ «Ամեն դեպքում լավ նպատակներ են,— գրում էր Քյազիմ Կարաբեքիրը,— համենայն դեպս, ոչ թե բոլշևիզմի հիման վրա, այլ բոլոր մուսուլմանների փրկության հիման վրա»[57]։

Հակահայկական գործունեության կենտրոն դարձավ Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում 49 հոգուց ընտրված Քարոզչության և գործողությունների խորհուրդը, որի նախագահությունը տարբեր ժամանակներում ղեկավարել են Ե. Ստասովան, Մ. Պավլովիչը, Շ. Օկուջավան, Ա. Աբիլովը՝ փոխարինելով մեկը մյուսին։ Խորհրդի բյուրոն ղեկավարում էր Նարիմանովը։ Օգտվելով ղեկավարության հաճախակի բացակայությունից, խորհրդի ղեկը իր ձեռքն էր վերցրել բախտախնդիր Ա. Սկաչկոն, որը մինչև այդ երեք անգամ եղել էր Թուրքիայում, հանդիպել ազգայնականների ղեկավարների հետ, մասնակցել «Կանաչ բանակի» կազմակերպմանը, նրանում ընդգրկելով նաև Հյուսիսային Կովկասի

մուսուլմաններին։ Խորհրդի աշխատակիցներ Կոնստանտին Տրոյանովսկու և Լև Լիֆշիցի վկայությամբ, Սկաչկոն «խորհուրդն օգտագործում էր պանէսլամիզմի և նրա մարգարե Մուսաֆա Քեմալի շահերի համար», «Սկաչկոյի դեկավարած ինֆորմացիոն բյուրոն ծառայում է Թուրքիային, որպես քեմալականների հետ կապի միջոց»։ Զինովևին, Օրջոնիկիձեին և Ռ(բ)Կ վերատուիչ հանձնաժողովին ուղղված հայտարարության մեջ նրանք շեշտում էին, որ «Սկաչկոն օգտագործում է իր կապերը Թուրքիայի օգտին քարոզչության համար», խորհրդում կա մի ամբողջ խումբ, կլիկ, որը համախմբվում է Սկաչկոյի շուրջը, «Սկաչկոն խորհրդի խոցն է, այդ խոցը պետք է արմատախիլ անել»[58]։

Օգտվելով Կոմինտերնի հռչակած սկզբունքներից, թե հանուն համաշխարհային հեղափոխության, «Ռուսաստանի և Արևելյան երկրների միջև տարածքային ոչ մի վեճ չի կարող լինել», Սկաչկոն առաջ էր բերում իր հակահայկական դավերը. «Խորհրդային Ռուսաստանի կողմից Անկարայի Թուրքական կառավարությանը ներկայացրած պահանջը՝ Վանի և Բիթլիսի վիլայեթները Հայաստանին զիջելու մասին, վճռական ճնշման արդյունք է, վտանգ համաշխարհային հեղափոխության զարգացմանը, Թուրքիային և նրա համախոհներին հետ է մղում խորհրդային Ռուսաստանի հետ դաշինքից. նրանց հետ բաժում Անտանտի դեմ պայքարից»։ Նա գտնում էր. «Թե՛ Ռուսաստանը, թե՛ Հայաստանը պետք է իրագործեն ազգային մեծագույն զոհաբերությունների սկզբունքը՝ հանուն հաշտարարային հեղափոխության շահերի, բանզի Թուրքիան անպայման խաղում է դեկավար դեր արևմտյան իմպերիալիզմի դեմ արևելյան ժողովուրդների պայքարում»[59]։

Սկաչկոն իր դավերը «Հիմնավորելու» «Մերձավոր Արևելքում քաղաքական իրավիճակի մասին» 1920 թ. սեպտեմբերի 17-ին ներկայացրած զեկուցագրում, որը սեպտեմբերի 18-ին ստացավ Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության հավանություն և որպես խորհրդի եզրակացություն, սեպտեմբերի 19-ին ուղարկվեց Կոմինտերնի գործկոմի նախագահություն, Ռ(բ)Կ Կենտկոմ և Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատ «Եզրակացություններ» Մոսկվա տարան Ստասովան և Էլիավան՝ Թուրքիայում և Պարսկաստանում ՌՍՖՍՀ առաջին լիազոր ներկայացուցիչը, որը միաժամանակ 11-րդ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ էր[60]։

Որո՞նք էին «Եզրակացության» ուղեկիցները, ինչո՞վ էին սարսափեցնում Մոսկվային Բարվի «բազարագետները»։

Հայաստանի հետ գինադադարի մասին 1920 թ. օգոստոսի 10-ի կնքած համաձայնագիրը Ռուսաստանի բացահայտ թոլության ապացույց է, որը դաշնակցական կառավարություններ հնարավորություն տվեց ամրապնդել իր դիրքերը և պաշտպանողական պատնեշից անցնել հարձակողականի։ Դաշնակցական կառավարությունները ներկա պահին ոչ միայն պատրաստվում է պատերազմել Ռուսաստանի դեմ, այլև

նամանալով ռազմական մատակարարում Անգլիայից՝ փորձում է գինված ուժով զավթել Երկաթուղին, նպատակ ունենալով դրանով ապահովել պարսկական Ադրբեջանից մթերքի տեղափոխումը և կապը անգլիական զորերի հետ, որոնք պետք է շարժվեն Թեհրանից։ Ադրբեջանում, հատկապես Ղարաբաղում, Ջանգեզուրում և Ղազախում դաշնակցական կառավարության գործակալները, կոմունիստների դիմակի տակ, գործնական քայլեր են անում հարձակման համար հող նախապատրաստելու ուղղությամբ, գինաթափում են մուսուլման բնակչությանը, տեղերում զավթում են խորհրդային իշխանությունը։

Ազգային-հեղափոխական շարժումը Թուրքիայում մանանում է ուժերի հյուծման և միջոցների բացակայության պատճառով, Մուստաֆա Քեմալի կառավարությունը զենք և զինամթերք չունենալու պատճառով դժվարությամբ է շարունակում մարտական գործողությունները։ Հունական զորերը առաջ են շարժվում Փոքր Ասիայի խորերը, հասել են Աֆիոն-Կարահիսար։

Անգլիական կառավարությունը Փոքր Ասիայում զարգացնում է լայն հարոզչություն ազգայնականների դեմ, օգտվում է սուլթանի անունից, փող չի խնայում։ Ազգայնական կառավարությունը պահանջում է շուտափույթ կապ խորհրդային Ռուսաստանի հետ և ակնկալում է անհապաղ օգնություն բոլշևիկներից։ Ռուսաստանի օգնության բացակայության պատճառով ժողովուրդը հիասթափվում է Քեմալից։ Քեմալը Հալիլի միջոցով հայտնում է, որ եթե Ռուսաստանը անհապաղ չօգնի, ազգայնականները մեկ ամսվա ընթացքում կպարտվեն, շարժումը կճնշվի, կառավարությունը կտապալվի և դեկավարները փրկություն կգտնեն միայն Ռուսաստան փախուստով։

Անգլիացիները, պարսկական և հայկական միավորված ուժերով պատրաստվում են հարվածել խորհրդային Ադրբեջանին՝ Բաքուն գրավելու, Ադրբեջանը «բոլշևիկյան հալածանքից» ազատելու համար։ Հայկական զորերի հետ Բաքու կմտնի մուսավաթական կառավարությունը, Բաքուն կայրվի և կոչնչացվի։ Թուրքական ազգայնական շարժման ճնշումը Արևելքում կառաջացնի ամբողջ հեղափոխական շարժման ձախողում։ Թուրքիան նորից կդնդնի անգլիացիների և նրանց կամակատար սուլթանի ազդեցության տակ։ Անգլիայի դեմ ուղղված պանիսլամական շարժումը կուղղվի Ռուսաստանի դեմ, բանզի Անգլիան Թուրքիային կմատնանշի նրանց պատմական իրավունքը Կովկասի և Թուրքեստանի նկատմամբ։ Կսկսվի «սրբազան պատերազմ» Ռուսաստանի դեմ, Կովկասում և Թուրքեստանում կբացվի մի նոր ճակատ, որը Ռուսաստանին կզրկի նավթի և բամբակի պաշարներից։

«Համաշխարհային հեղափոխության և խորհրդային Ռուսաստանին սպառնացող կործանարար փոթորիկից» ազատելու համար սադրիչները անհրաժեշտ էին համարում ամեն կերպ նպաստել Թուրքիայում հանգչող ազգայնական շարժման զարգացմանը, թուրքական ազգայնականների հետ միասին Հայաստանի վրա գինված հարձակումով թո-

թափել դաշնակների լուծը, միավորվել հեղափոխական թուրքերի հետ: Ըստ նրանց, դա հնարավորություն կտար ա) Հայաստանի սահմաններից հանել էրզրումյան կորպուսը և տեղափոխել Արևմուտք. բ) ազգայնականների թիկունքում վերացնել հայկական սպառնալիքը, գ) բարձրացնել Քեմալի կառավարության հեղինակությունը, ամրապնդել նրա դրությունը, թոթափել անգլիացիներին հնազանդ սուլթանի իշխանությունը: Մյուս կողմից՝ դաշնակցական Հայաստանի դեմ պատերազմը կամրապնդի խորհուրդների դրությունը Ադրբեջանում, մուսավաթական հակահեղափոխությանը կզրկի ամեն մի հենարանից»:

Սադրանքն ավելի էր խորացվում «եզրակացության» վերջում. «Ռուսաստանի բերված մտերից ամենագլխավորն այն է, որ պատերազմը անխուսափելի է, և եթե մենք չձեռնարկենք հարձակում Հայաստանի վրա, ապա երկու ամիս հետո նա կհարձակվի Խորհրդային Ադրբեջանի վրա, իսկ այդ հարձակումը մեզ համար կնշանակի Բաքվի կորուստ: Մեր վիճակը Մերձավոր Արևելքում այնքան վատ է, որ չենք կարող կանգ առնել տեղում, որպեսզի հետ չվազենք, մենք պետք է առաջ գնանք անմիջապես, հանգի՛ր ևս մեկ ամիս ուշացում, և հեղափոխությունը Արևելքում լրիվ կձախողվի: Արևելքում հեղափոխության փրկության համար անհրաժեշտ է խորհրդային զորքերի անհապաղ հարձակում Հայաստանի վրա և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատում, հանուն Թուրքիայի և Ադրբեջանի»[61]:

Իրենց տեսակետները հայտնեցին Նարիմանովը և էլիավան, որոնց թեզիսները ստացան Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և ՒԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի հավանությունը: Նրանց, ինչպես և Սկաչկոյի գրվածքները, ոչնչով չէին տարբերվում Շահթախթինսկու՝ Լենինին հղած ամբաստանագրից:

Հայաստանի նկատմամբ «մեղադրական վճիռը» Պարսկաստանում և Թուրքիայում ՌՍՖՍՀ արտակարգ լիազոր ներկայացուցիչ էլիավան ուղարկեց Մոսկվա՝ Չիչերինին, պատճենը՝ Լենինին և Տրոցկուն: Հեղինակների «կովաններն» էին. Անգլիայի կողմից համախմբվում է հակախորհրդային ճակատ Փոքր Ասիայից Թուրքիա, Հյուսիս-արևելյան Պարսկաստան, Խորասան, Բելուջիստան, Ավղանստան, Բուխարա, Ֆերգանա, Հնդկաստան: Անգլիայի ամբողջ ուշադրությունը կենտրոնացված է Անատոլիայի, դրան հարող կետերի՝ Պարսկաստանի, Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի վրա: Հիմնական նպատակը Բաքվի զավթումն է, քեմալականների ջախջախումը Անատոլիայում: Հույները գրավել են Սվասը, հարձակվում են Աֆիոն-Կարահիսարի վրա, Ադանայում կենտրոնացված է Հայկական կորպուս՝ Անատոլիայի խորքերը ներխուժելու համար: Նախատեսվում է զորքերի ափհանում Տրապիզոնում: Մակուի սարդարը բանակցություններ է վարում դաշնակների հետ՝ խորհուրդների դեմ համատեղ գործելու համար: Քեմալին տապալելու

համար սուլթանը խոստանում էր անգլիացիներին տրամադրել 200 հազար զինվոր:

Գլխավոր խնդիրը «հակահեղափոխության զզվելի օջախ» Հայաստանի վերացումն էր: Փաստաթղթի հեղինակները շեշտում էին, որ «Ռուսաստանի կողմից դաշնակցական կառավարության ամեն մի պաշտպանություն, այդ թվում և նախնական համաձայնության կնքումը, աններելի սխալ է», նրանք անցկացնում էին դաշնակցական կառավարությունը պաշտպանելուց հրաժարվելու, Հայաստանը խորհրդայնացնելու և խորհրդայնացված Հայաստանի միջոցով քեմալականների հետ սերտ կապ հաստատելու գիծ: Ոչ մի խոսք չէր ասվում հայ ժողովրդի վիճակի, նպատակների և շահերի մասին[62]:

Թուրքական զորքի միջոցով Հայաստանի խորհրդայնացումը Լեգրանը՝ Չիչերինին գրած նամակում բնորոշեց որպես խորհրդային իշխանության գաղափարի վարկաբեկում: «Խորհրդայնացումը թուրքական բանակի օգնությամբ կլինի անհեթեթ», ընդգծեց Լեգրանը[63]: Մինչ այդ, սեպտեմբերի 24-ին, Չիչերինը էլիավային հիշեցնում էր օգոստոսի 10-ի համաձայնագրի հանդեպ կենտրոնի մոտեցումը, շեշտելով, որ «այն կնքելը Ռուսաստանի համար անհրաժեշտ էր»[64]:

1920 թ. սեպտեմբերին Հայաստանի դեմ սանձազերծված պատերազմում հասնելով հաջողությունների, թուրքական զորքերը գավթեցին Սարիղամիշը, Կարսը, Ալեքսանդրապոլը: Խորհրդային Ռուսաստանի միջնորդական առաքելությունը մերժվեց թուրքերի կողմից: Խորհրդային կառավարության առաջարկություններում Մուստաֆա Քեմալից պահանջվում էր «Երևանի հանրապետության վրա հարձակումը դադարեցնել և հայերին վատ չվերաբերվել: Թուրքերը պետք է ճանաչեն Խորհրդային Ռուսաստանի ստորագրած բոլոր պայմանները»[65]:

Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարության՝ Հայաստանի հետ հաշտության պատվիրակության ղեկավար գեներալ Քյազիմ Կարաբեքիրը 1920 թ. նոյեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում ներկայացրած հուշագրում «հաստատեց» Արևմտյան Հայաստանի և Կարսի նահանգի՝ ի սկզբանե թուրանական լինելը: Թուրանական ցեղեր հիմարելով նաև ուրարտացիներին, նա բացառեց հայերի իրավունքը այդ տարածքների նկատմամբ և «վերացրեց» Հայկական հարցը: «Հայերի այդ հերկրամաս գալուց քանի դար առաջ, այդ տեղերում, թուրանցի ուրարտացիները հիմնել են մի փայլուն քաղաքակրթություն, ստեղծված նյութական արժեքները հայերինը չեն, այլ միմիայն այդ թուրանական ցեղերինը», — գրում էր Կարաբեքիրը: Պնդելով, որ «հնախոսությամբ ևս թուրքերի այս երկրում ունեցած իրավունքներն ակներև են և ապացուցված», նա պահանջում էր այդ «իրավունքները» տարածել նաև Նախիջևանի, Շահթախթիի, Շարուրի և կից հողամասերի վրա, «որտեղ թուրքերի պաշտպանության ներքո պետք է հիմնվի մի ինքնավար վարչություն»[66]:

Մուստաֆա Քեմալը նույն օրերին Հայաստանի վարչապետ Ս. Վրացյանին հղած հեռագրում հույս էր հայտնում, որ «Ալեքսանդրա-

պոլում սկսված բանակցությունները կհանգեն երկու կողմերի փոխադարձ շահերը ապահովող մի ելքի», հնարավորություն կտան «Հայաստանին ազատվել վնասակար ազդեցությունից»[67], այսինքն՝ Ռուսաստանից։ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Թուրքիայի և Հայաստանի Հանրապետության միջև Ալեքսանդրապոլում կնքված պայմանագրով Թուրքերը հասան տարածքային նոր բռնազավթման՝ Հայաստանի համար ավելի խայտառակ, քան Բաթումի պայմանագրով։ Հայաստանին մնաց Երևանը և Սևանի լճի շրջանը[68]։ Վերացվեց 1920 թ. օգոստոսի 10 ին Սևրում կնքված պայմանագիրը, որի տակ դրված էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանի ստորագրությունը։

Մինչ այդ, Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը, ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների պատճառով երկրում ստեղծված կացությունը, որոշել էր հրաժարվել իշխանությունից և զորաբանակի ընդհանուր հրամանատարին հանձնել զինվորական և քաղաքացիական բովանդակ իշխանությունը՝ այդպիսի պաշտոնում նշանակելով ռազմական նախարար Դրոյին։ Փաստաթուղթը ստորագրել էին նախարարների խորհրդի նախագահ Ս. Վրացյանը, նախարարներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Խոնդկարյանը, Ա. Տերտերյանը, Դ. Կանայանը[69]։ Դեկտեմբերի 1-ին Ս. Վրացյանը հեռագրել էր Ալեքսանդրապոլ՝ Թուրքերի հետ բանակցությունների հայկական պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանին՝ Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ բյուրոյի, կառավարության, խմբակցությունների որոշման մասին։ «Մենք դրել ենք մի քանի պայման. ճանաչել Հայաստանի անկախությունը, զինադադար կնքել Թուրքերի հետ, Թույլ չտալ քաղաքացիական կռիվներ, կառավարության մեջ մտցնել մեր մարդկանց»[70]։ Դրոն և Տերտերյանը Հայաստանի կառավարության լիազորությամբ դեկտեմբերի 2-ին ստորագրել էին համաձայնագիր Բորիս Լեգրանի հետ, որը ուներ Ռուսաստանի խորհրդային կառավարությունից լիազորություններ։ Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների լիազոր ներկայացուցիչների ստորագրած համաձայնագրով Հայաստանը հռչակվում էր անկախ ընկերվարական խորհրդային հանրապետություն, մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի գումարումը կազմվելու էր ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին փոխանցվելու էր բովանդակ իշխանությունը հանրապետությունում։ Հեղկոմի մեջ մտնելու էին կոմունիստական կուսակցության և դաշնակցական կուսակցության անդամները. բանակի հրամանատարական կազմը չպետք է ենթարկվեր ոչ մի պատասխանատվության՝ մինչև խորհրդային կարգերի հաստատումը կատարած գործունեության համար, դաշնակցության և այլ կուսակցությունների անդամները չպետք է ենթարկվեին ոչ մի հալածանքի՝ կուսակցական պատկանելության համար։ Իշխանությունը ժամանակավորապես, մինչև Հեղկոմի ժամանումը, անցնում էր զինվորական հրամանատարությանը, որի գլուխ էր կանգնում Դրոն։ ՌՍՖՍՀ-ի կողմից Հայաստանի

զինվորական հրամանատարությանը կից կոմիսար էր նշանակվում Սիլինը։

Համաձայնագրի 3-րդ կետով Ռուսաստանի խորհրդային կառավարությունը ընդունում էր, որ «անհերքելիորեն Հայաստանի ընկերվար խորհրդային հանրապետության մասն են կազմում Երևանի նահանգը իր մեջ մտնող բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որը պետք է նրան ապահովի ռազմական տեսակետից. երկաթուղին Ջաջուռից մինչև Արաքս կայարան, Գանձակի նահանգի Ջանգեզուրի գավառը, նույն նահանգի Ղազախի գավառի մի մասը, 1920 թ. օգոստոսի 10-ի պայմանների սահմանով և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տրամադրության տակ են եղել մինչև 1920 թ. հոկտեմբերի 28-ը՝[71] ՌՍՖՍՀ-ի և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված արձանագրությունը[72]։

Այդ համաձայնագիրը Թուրքիայի «հավանությանը» չարժանացավ։ Նա շարունակում էր իր քաղաքականությունը Հայաստանի զինագրավված շրջաններում։

Հայաստանի խորհրդայնացումից երեք շաբաթ հետո, 1920 թ. դեկտեմբերի 22-ին, արձանագրելով հանրապետության զինագրավված շրջաններում Թուրքերի ազգային ճնշման քաղաքականությունը, Լեգրանը Չիչերինի ուշադրությունը հրավիրում էր հայերի նկատմամբ քեմալական ների անհաշտ վերաբերմունքի վրա։ «Ներկայումս մենք շփվում ենք այն փաստի հետ, որ Հայաստանում խորհրդային հեղաշրջումը Թուրքերի քաղաքականության մեջ չառաջացրեց ոչ մի շրջադարձ Հայաստանի անկախության նկատմամբ։ Նրանք պահպանում են թշնամական դիրք, համառորեն կառչում են խորհրդային իշխանության կողմից կնքված հաշտության պայմանագրի վերացմանը, չեն ցանկանում մտնել պաշտոնական որևէ հարաբերությունների մեջ Հայաստանի խորհրդային Հանրապետության հետ, ցուցադրում են իրենց անվստահությունը նրա նկատմամբ։ Դրանով նրանք արտահայտում են իրենց պատմական ազգային գաղափարախոսությունը, թաքցնում իրենց սեփական անվստահությունը խորհրդային Ռուսաստանի կովկասյան քաղաքականության նկատմամբ։ Ինձ թվում է, թե Թուրքերը մեզ ուզում են մեկուսացնել Արևելքում անմիջական գործունեությունից, մեզ Թողնելով հեղափոխության զարգացումը Արևմուտքում»[73],— գրում էր Լեգրանը։

Թաքցնելով իր բուն մտադրությունը, Քեմալը 1920 թ. դեկտեմբերի 18-ին Լենինին հղած ռադիոհեռագրում հայտարարեց «հաստատ համոզմունք», թե միայն Ռուսաստանի և Թուրքիայի «սերտ համագործակցությունը մեզ կհասցնի ցանկալի նպատակին» և «հետագա բարեկամական կապերի ամրապնդմանը»։ Նա իր հիացմունքն էր հայտնում «հեռատես քաղաքականության համար», որը իրականացնում է խորհրդային Ռուսաստանը՝ «ինչպես Արևելքում, այնպես էլ ամբողջ աշխարհում»[74]։ Շողոքորթության մեջ ավելի առաջ գնաց արտաքին գործե-

րի նախարար Յուսուֆ Քեմալը. «Աշխարհագրական, պատմական, տրնտեսական և քաղաքական պայմանները մեզ ճանապարհ ցույց տվին դեպի Ռուսաստան։ Նոր Ռուսաստանի ներկայացուցիչների առաջ Թուրքիան հատուկ անկեղծությամբ ասում եմ. հավատացեք մեզ»[75]։ Եվ հավատացին, ինչպես հավատում էին Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի, Արևելքի ժողովուրդների Բաքվում կայացած առաջին համագումարում ընտրված Քարոզչության և գործողությունների խորհրդի նախագահության սադրիչ «փաստարկներին»։

Նարիմանովի, Սկաչկոյի, Էլիավայի, Պավլովիչի հակահայկական սադրիչ գործողությունների դրդող՝ Մոսկվա ներկայացրած «փաստաթղթերի» պատճենները կցելով Վ. Ի. Լենինին 1921 թ. ապրիլի 19-ին հղած նամակին, Կոմունիստական կուսակցության ճանաչված գործիչներ Սահակ Տեր- Գաբրիելյանը և Վահան Տեր-Վահանյանը կուսակցության և Խորհրդային կառավարության ղեկավարի ուշադրությունը հրավիրում էին հայերի դեմ Թուրքական ոճրագործությունների և դրանում Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի առանձին ներկայացուցիչների խաղացած դերի վրա։

«Մեծարգո Վլադիմիր Իլյիչ. հավանաբար Դուք էլ եք պատկերացնում Անդրկովկասում և Արևելյան Անատոլիայում ազգամիջյան հարաբերությունների սրությունը, սակայն Դուք այդ մասին գիտեք գրքերից, իսկ մենք ապրել ենք այդ մթնոլորտում, մեզ վրա զգացել հակամարտության կործանարարությունը։ Բնական է, փաստերը, որոնց մասին մենք խոսում ենք, կարող են Ձեզ համար մնալ աննկատ (Ձեզ հասցեագրված մեկ հեռագիրը և պատճենները), սակայն նրանց կողքով անցնել մենք չենք կարող, չնկատելով դրանք։ Նրանցից յուրաքանչյուրի տողի տակ մենք տեսնում ենք հարյուրավոր դիակներ, հազարավոր անօթևան փախստականներ, տասնյակ տարիների նոր արհավիրքներ»։ Հայ գործիչները ցանկանում էին պարզաբանել, թե ինչումն է կայանում ՌԿ(բ)Կ կենտկոմի պատասխանատվությունը հայ ժողովրդին պատճառած ծանր տանջանքների գործում, ինչ բաժին ունեն դրանում կուսակցության անդամները։

Ընդգծելով, որ ներկայացվող փաստաթղթերը «մենք չունեինք և այդ պատճառով էլ լռել էինք, իսկ հիմա չենք կարող լռել, Հայաստանի աշխատավորությունը պետք է իմանա ճշմարտությունը», Ս. Տեր-Գաբրիելյանը և Վ. Տեր-Վահանյանը պահանջում էին, որ հարցը քննվի քաղբյուրոյում, կուսակցությունը ասի իր ծանրակշիռ խոսքը այն սադրանքների մասին, որոնք հայ ժողովրդի դեմ են նյութել էլիավան, Սկաչկոն, Նարիմանովը, Պավլովիչը, Ստասովան, «որոնք պատասխանատու աշխատանքում իրենց անարժան դրսևորեցին, խաղալիք դարձան, ինչպես «Միության և առաջադիմության», այնպես էլ կոմունիստական մի քանի դարձվածքներով ծպտված «Քեմալի գործակալների, բեկերի և փաշաների ձեռքին»։ Պահանջելով կուսակցական բաց դատ նրանց նկատմամբ և քաղաքական աշխատանքից հեռացում, նամակի հեղի-

նակները վճռապես գրում էին. «Օգնել Թուրքիային Հայաստանի դեմ (դաշնակցական, թե խորհրդային՝ միևնույնն է), նշանակում է հայ ժողովրդին գլխովին կոտորելու և բնաջնջելու փաստացի սադրանք»։

Իրադարձությունները, սակայն, շարունակվում էին իրենց ընթացքով և թուրք-ադրբեջանական ճնշումը Խորհրդային Ռուսաստանի վրա կրում էր մեթոդական ու հետևողական բնույթ։

Ադրբեջանի օգտին Նախիջևանի բռնակցմանը Թուրքերը հասան Մոսկվայի կոնֆերանսում։ 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրով Թուրքիային անցան ամբողջ Կարսի մարզը, Կաղզվանը, Սուրմալուն, Իգդիրը։

Բողոքելով Հայաստանի տարածքները Թուրքիային բռնակցելու, քննարկվող հարցերին հանրապետության պատվիրակությանը նույնիսկ մասնակից չդարձնելու դեմ, Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ և Լենինին գրած նամակում ցավով նշում էր, որ «կոնֆերանսի սրձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պաշտպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն նորատասարդ ու փոքր Խորհրդային Հայաստանի համար»։

Կատարված փաստը բացատրելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի կողմից խորհրդային պատվիրակությանը տված «որոշակիորեն մտածված քաղաքականության և հրահանգների բացակայությամբ» և պատվիրակության կազմով (Թուրքական կողմի պահանջով Կարախանը հանվել էր խորհրդային պատվիրակության կազմից և փոխարինվել Կորկմազովով), Բեկզադյանը ընդգծում էր պատվիրակության թեթևամիտ մոտեցումը, որը հնարավորություն տվեց «վճռել Խորհրդային Հայաստանի կյանքի և մահվան հարցերը»։

Արձանագրելով, որ Հայաստանի այդ սահմանները անհնարին են դարձնում հանրապետության կենսագործունեությունը, Ա. Բեկզադյանը ընդգծում էր Կարսի, Սարիղամիշի, Կաղզվանի անջատումով Հայաստանին հասցվող տնտեսական հարվածը, ոպառնալիքը նրա անվտանգությանը՝ ռազմավարական առումով և գաղթականների տունդարձը՝ նաև հեռանկարների կորստի տեսակետից։ Հայկական տարածքի բռնակցումը Թուրքիային՝ Հայաստանին զրկում է վառելիքի, հացահատիկի, աղի կարևորագույն շրջաններից, կարևոր կենտրոններ. Երևանը, Ալեքսանդրապոլը ընկնում են թուրքերի անմիջական հարվածի տակ։ Արդեն իսկ Թուրքիայի հայաբնակ վայրերից Հայաստան են գաղթել 400 հազար հայեր։ Նշվում էր մի հանգամանք ևս. Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի շրջանները Ադրբեջանին հանձնելը Հայաստանին զրկում է իրեն պատկանող Զանգեզուրի հետ նորմալ կապի հնարավորությունից[77]։

Թույլ տված սխալը ուղղելու փորձերն, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի հինգ անդամի վճիռով «Արևել-

քում խորհրդային իշխանության առաջապահիկ» Ադրբեջանին մատուցվեց Լեռնային Ղարաբաղը։

Կավբյուրոյի վճիռը փաստորեն Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի 1921 թ. հունիսի 27-ի որոշման հաստատումն էր։ Այնտեղ ասված էր. 1) Ադրբեջանի և Հայաստանի սահմանների հարցը պետք է լուծել անպայման՝ նկատի ունենալով Վարաքա-ղի տնտեսական հակումը դեպի Ադրբեջան, 2) Այդ պատճառով հայերով և թաթարներով բնակեցված վայրերի անջատումը տնտեսական ու վարչական առումով համարել անընդունելի[78]։

Ինչպես կարսի մարզը Թուրքիային, այնպես էլ Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին մատուցելու հարցում Անկարայի պատվիրակությունը և Ադրբեջանի ղեկավարությունը ստացան Ստալինի սատարումը։ Նա այն ժամանակ ՌԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի անդամ էր, ազգությունների գծով ժողովրդական կոմիսար, ջանվորագյուղացիական տեսչության պետ։ Ինչպես գրում է Մոսկվայում Թուրքիայի առաջին դեսպան գեներալ Ալի Ֆուադ Ջեբեսոյը, թուրքական պատվիրակությունը կրկին այցելեց Ստալինին՝ հայտնեց հատուկ շնորհակալություն օժանդակության համար[79]։

Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հանձնման մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոյի որոշման գործում քիչ դեր չխաղաց և նավթի խնդիրը, տնտեսական քայքայման մեջ գտնվող Ռուսաստանին նավթամթերքներով օգնելու ադրբեջանական քարոզչական աղմուկ-աղաղակը։

Նման առաջին իսկ օգնության մասին Ադրբեջանի կառավարությունը շրջաբերական հեռագրով, վերամբարձ տոնով 1921 թ. ապրիլի 5-ին հայտնել էր Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի ղեկավարներին, Ռուսաստանի բոլոր նահանգների գործկոմներին և կուսակցական կոմիտեներին՝ Լենինին, Ստալինին, Կալինինին, Ռիկովին, Չիչերինին, Տոմսկուն (Մոսկվա), Օրջոնիկիձեին, Օրախելաշվիլուն, (Թիֆլիս), Կասյանին, Մռավյանին (Երևան), Ահմեդ Մուխտարին, Կարաբեքիրին (Թուրքիա)։

Հեռագրում հայտնվում էր. «Այսօր, ապրիլի 5-ին, ժամը 1-ին, Ադրբեջանի խորհրդային Հանրապետության ղեկավար ընկ. Նարիմանովը Բաքվի շրջանի բանվորների և քաղաքացիների հսկայական զանգվածի, Բաքվի կայազորի զորքի, նավաստիների ներկայությամբ հայտարարեց նավագնացության բացումը, որից հետո Բաքվի նավահանգստից դեպի Աստրախան շարժվեց 3,5 միլիոն փութ նավթամթերքով բեռնված՝ 33 նավից բաղկացած քարավան։ Ազատ Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները, դեռևս չտոնած իրենց հեղափոխական հաղթանակի մեկ տարին... այժմ շտապում են կասպից ծովում սկսել երկրորդ նավագնացությունը։ Գիտենալով, թե որքան սուր է զգում խորհրդային Ռուսաստանը վառելիքի կարիք և հաշվի առնելով նավթի հսկայական նշանակությունը տնտեսական քայքայվածության դեմ պայքարում՝ Բաքվի պրոլետարիատը, որպես հեղափոխական Ադրբեջա-

նի և ամբողջ Արևելքի առաջապահիկ, տալիս է սրբազան երդում, որ իր ամբողջ ուժերի լարումով կձգտի, որպեսզի առաջիկա կամպանիան պսակվի հաջողությամբ և խորհրդային Ռուսաստանին տա հնարավորին չափ ավելի նավթ։ Ռուսական հանրապետությունը... կարող է հենվել Բաքվի պրոլետարիատի, նրա աննկուն հավատարմության վրա։ Նավթը կհոսի խորհրդային Ռուսաստան՝ նրան բուժելով տնտեսական քայքայվածությունից, հզորացնելով նրա հեղափոխական զորությունը»։ Ստորագրված է. «Ադրբեջանի խորհրդային Սոցիալիստական Հանրապետության արտաքին գործերի ժողկոմ ընկեր Հուսեյնով»[80]։

Հիշենք, որ Կավբյուրոյի նիստում Նարիմանովը սպառնում էր Լեռնային Ղարաբաղի հարցը հօգուտ Հայաստանի լուծելու դեպքում «կերոսին չտալ»։

Մոսկվայի պայմանագրից հետո էլ թուրքական զորքերի հրամանատարությունը շարունակում էր իր ձեռքում պահել Ալեքսանդրապոլը և Շիրակի դաշտը։ Դրանք խորհրդային Հայաստանին վերադարձվեցին միայն խորհրդային Ռուսաստանի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների խզման մասին սպառնալիքից հետո։ Խորհրդային Հայաստանին անցավ «չեզոք գոտում» գտնվող Լոռին իր 54 գյուղերով։ Վրաստանում այդ ժամանակ դեռ խորհրդային կարգեր չէին հաստատվել։ 1921 թ. կեսերին լուծվեց նաև Զանգեզուրի հարցը։ Խորհրդային Հայաստանի տարածքի զինագրավված շրջաններից թուրքական զորքերի հետքաշումից հետո վերջ տրվեց հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջմանը և թուրքական սպառնալիքին։ Սատար էր Ռուսաստանը։

1921 թ. կորցրած հողերի վերադարձման հարցը խորհրդային կառավարությունը առաջ քաշեց Պոտսդամի կոնֆերանսի օրերին՝ 1945 թ. հուլիսին։ Դա արծարծվեց Անգլիայի վարչապետ Ու. Չերչիլի, արտաքին գործերի նախարար Ա. Իդենի, ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենի հետ Ի. Ստալինի և Վ. Մոլոտովի հանդիպումների ժամանակ։ Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Վ. Մոլոտովը հուլիսի 16-ին Ա. Իռնին ասել է. «1921 թ. թուրքերը, օգտվելով խորհրդային պետության թուլությունից, խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը։ Խորհրդային Միության հայերը իրենց զգում են վիրավորված։ Այդ պատճառներից ելնելով, խորհրդային կառավարությունը բարձրացրեց Խորհրդային Միության օրինական պատկանած տարածքների վերադարձման հարցը»[81]։ Հուլիսի 22-ին կառավարությունների ղեկավարների կոնֆերանսի վեցերորդ նիստում Մոլոտովը ասել է. «Իսկապես, 1921 թ. Խորհրդային Հայաստանից և Խորհրդային Վրաստանից Թուրքիան պոկեց տարածք. դա Կարսի, Արդվինի և Արդահանի մարզերի հայտնի տարածքն է։ Պետք է կարգավորել Վրաստանից և Հայաստանից պոկած տարածքների հարցը. նրանց վերադարձնել այդ տարածքը»[82]։

Իր խոսքն ասաց Ստալինը՝ 1945 թ. հուլիսի 23-ին Տրումենի և Չերչիլի հետ զրույցի ժամանակ. «Խոսքս գնում է մինչև առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցած սահմանների վերա-

կանգնման մասին։ Ես նկատի ունեմ Կարսի շրջանը, որը պատերազմից առաջ գտնվել է Հայաստանի կազմի մեջ և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը եղել է Վրաստանի կազմում։ Մենք գտնում ենք, որ Կարսի և Արդահանի շրջաններում սահմանը ճիշտ չէ, և մենք հայտարարեցինք Թուրքիային՝ եթե նա ուզում է մեզ հետ դաշն կնքել, հարկավոր է շտկել այդ սահմանը, եթե նա չի ուզում շտկել սահմանը, ապա դաշինքի հարցը վերանում է»[83]*։ Այս հարցադրումները Պոտսդամում լուծում չստացան։*

1953 թ. մայիսի 30-ին Մոլոտովը արեց նոր հայտարարություն. «Բարիդրացիական հարաբերությունները պահպանելու և անվտանգությունն ու խաղաղությունը ամրապնդելու համար Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից»[84]*։*

Բոնազավթման «օրինականացումը» նոր վերահաստատում ստացավ խորհրդա-թուրքական պայմանագրի ստորագրման 70-ամյակի օրերին՝ 1991 թ. մարտի 16-ին՝ Դորբաչով-Օզալ բանակցությունների ժամանակ։

Պատմությունը մեր հիշողությունն է և ազգապահպան հզոր զենքը։ Ազգերը մեռնում են այն օրից, երբ կորցնում են պատմական հիշողությունը, զգացումը արդարի և հավատը՝ նրա հաղթանակի նկատմամբ։

Պատմական հիշողության ամրապնդման խթան հանդիսացավ 1995 թ. ապրիլի 21—23-ը Երևանում կայացած ցեղասպանության հարցերին նվիրված միջազգային գիտաժողովը, որը կազմակերպել էր Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ ստեղծված Հայերի ցեղասպանության 80-ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպման պետական հանձնաժողովը։

Գիտաժողովին մասնակցում էին մասնագետներ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, Կանադայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, Կիպրոսից, Շվեյցարիայից, Թուրքիայից, Լիբանանից։

Զեկուցումներում վեր հանվեցին հայկական, ռուսական, եվրոպական, ամերիկյան, արաբական, թուրքական պատմագրության մոտեցումները Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հիմնահարցին։ Բերված փաստերը հերքեցին թուրք քաղաքագետների, դիվանագետների, պատմաբանների Եվրոպայում և Ամերիկայում տարածած սուտը՝ «Եղել է արդյոք ցեղասպանություն»[85]*։*

Հիմնահարցին համակողմանի մոտեցումը հաստատում է, որ հայերի պատմական հիշողությունը մեռած չէ, որ **երկիր** *հասկացողությունը պահվում է վառ, արմատավորվում նոր սերունդների սրտում։*

Երկիր-Հայրենիք հասկացությունը իրենց սրտերում վառ են պահում Կիլիկիայից, Արևմտյան Հայաստանից, Կարսից, Մարիղամիշից, Կաղզվանից, Իգդիրից՝ թուրքական կուտորածներից մազապուրծ փրկված և Արևելյան Հայաստանում բուն, տուն դրած մոտ 400 հազար գաղթականների սերունդները, որոնց ավագները կյանքից հեռացան երկիր վերադառնալու կարոտով։

Պատմական հիշողության վառ ջահեր են Հայաստանով մեկ սփռված Ալաշկերտ, Այնթապ, Արաբկիր, Էրզրում, Զեյթուն, Ջմյուռնիա, Խարբերդ, Կարս, Կյուրին, Հաճըն, Մուսալեռ, Սասուն, Սեբաստիա, Սուրմալու, Վասպուրական հայրենակցական միությունները, որոնք իրենց գոյությամբ ժխտում են նաև երբևէ հնչող, մեր ժողովրդի համար վնասակար թեզը՝ «Եվրոպան մոռանում է, Արևելքը հիշում չեղածը»։

Դարերի խորխորատներից ելած և դաժան փորձություններով անցած, 21-րդ դարի նախաշեմը արժանավայել հասած, համաշխարհային քաղաքակրթության մեջ իր տեղը նվաճած հայ ժողովուրդը հիշում է եղածը՝ և հերոսականը, և ողբերգականը։

Հայ ժողովուրդը հավատով դեպի ապագան և Արդարության հաղթանակը, այսօր դժվարին պայմաններում կառուցում է իր նորանկախ ազգային պետականությունը՝ Երրորդ Հանրապետությունը, ընթանում իրավական սոցիալական պետություն ստեղծելու ճանապարհով, ձգտում է ստեղծագործ աշխատանքի և խաղաղության։

Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգության համեմատականը է համարում՝ բոլոր հարևան երկրների հետ բնականոն հարաբերությունների հաստատումը, տարածաշրջանում խաղաղության, սահմանների պահպանության հիմնահարցերի արդարացի լուծումը, միջազգային հեղինակավոր կազմակերպություններում արդյունավետ աշխատանքը։ Առաջընթացի հուսալի երաշխիքը Հայաստանի Հանրապետության բազմակողմանի ամրապնդումն է և հզորացումը, ազգային ուժերի միասնությունը և համերաշխությունը, սեփական պետության զորացման պատասխանատվությունը, Ռուսաստանի հետ դաշինքը և ԱՊՀ երկրների հետ կոլեկտիվ անվտանգության ու պաշտպանության բնագավառում համագործակցության ինտեգրացիոն գործընթացի ընդլայնումը։ Տարածաշրջանում խաղաղության կայունացման և ամրապնդման նպատակին են ծառայում Հայաստանի տարածքում Ռուսաստանի ռազմական հենակետերի առկայությունը, պետական սահմանների համատեղ ուժերով պաշտպանությունը։

Այդ է հուշում պատմական փորձը։ Այդ են պահանջում Հայրենիքի և Անկախության շահերը։ Պետք է միշտ հիշել մեծ հայրենասեր Լաֆֆու խոսքերը. «Պատմությունը մի վարդապետարան է, մի դասարան է, որի մեջ ապագա սերունդը կրթվում է, զգուշանալով իր նախնյաց սխալներից և հետևելով նրանց լավ գործերի օրինակին»[86]*։*

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. **Մ. Գ. Ներսիսյան**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—1870, Երևան, 1955։ Աշխատությունը որպես դոկտորական դիսերտացիա Մ. Գ. Ներսիսյանը պաշտպանել է դեռևս 1946 թ.։ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Երևան, 1974, էջ 347—382, հ. VI, Երևան, 1981, էջ 93—145, 230—290։ Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, Երևան, 1969։ Նույնի Սասունի պատմությունը, Երևան, 1985։*

2. **В. В. Готлиб.** Тайная дипломатия во время первой мировой войны. М., *1961*, с. *153—154.*

3. «Փորձ», Թիֆլիս, 1879, թ. 7—8, էջ 204—205։

4. **Гаспринский Исмаил**-бей. Русское мусульманство. Мысли, заметки и наблюдения мусульманина. Симферополь. *1881*, с. *5.* **С. М. Червонная**. Идея национального соглашения в сочинениях **Исмаила Гаспринского**.— Отечественная история, *1992,2*, с, *31—32.*

5. Աբդուլհամիդյան վարչակարգի կազմակերպած ցեղասպանությունից հետո էլ հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը Վանում՝ 74 տոկոս, Բուլանըխում՝ 67, Մոկսում՝ 63, Արեշում՝ 64, Մուշում՝ 62։ Տես Записки Кавказского отдела Императорского русского географического общества, книга *XVIII*, Тифлис, *1896*, Приложение, с *18—19*, *Հայ ժողովրդի պատմություն. հ. VI, Երևան, 1981, էջ 22։* **Е. К. Саркисян.** Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти *19*-го начале *20*-го вв., Ереван, *1972*; **Кочар М.** Армяно-турецкое общественно-политические отношения и Армянский вопрос. Ереван, *1988*. *Հ. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Երևան, 1986։ Ա. Ս. Համբարյան, Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (19-րդ դարի վերջ—20-րդ դարի սկիզբ), Երևան, 1990։*

6. The Joint Mandate Scheme. A Turkish Empire Under American Protection N. Y., *1919*, p. *6.*

7. Голос Москвы, *14* января, *1914*. Зареванд, Турция и пантуранизм. Париж, *1930*. *Զ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914—1916, Երևան, 1965։ Նույնի Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983։ Հայաստանը միջազգային դիվանագիտության և Սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1829—1923), (կազմողներ. Զ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան), Երևան, 1972։* **Մ. Վ. Ազրումանյան**, *Հայաստանը 1914—1917 թթ., Երևան, 1969։* **Ա. Ս. Համբարյան**, *Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1979։*

8. Tekin Alp (Levi Kohen), Türkismus und Pantürkismus Weimar, *1915*, S. *50—52*, A. S. Toynbee, Turkey, a Past and a Future. New York, *1917*, S. *30—36*. **В. В. Готлиб.** Указ. cor., c. *51*. **Е. Ф. Лудшувейт.** Турция в годы первой мировой войны. М., *1966*, с. *25—33.*

9. Ömer Seyfeddin. Yaıuın Turanı. Istanbul *1958*, s. *21—22. Թարգմանությունը Ա. Ռոգուշինի և Ն. Պլուզյանի։ Առաջին անգամ լույս է տեսել 1914 թ. «Թուրանի վաղվա պետությունը» վերնագրով։*

10. Ziya Sakir. *1914—1918*. Cihan harbini nasıl idare Ettik. Istanbul. *1944*, s. *127։ (Ինչպես մենք վարեցինք պատերազմը)։ Թարգմանությունը Ա. Ռոգուշինի և Ն. Պլուզյանի։*

11. Sevket Sürreyya Aydemir. Suyu arayan adam, Istanbul, *1967*, s. *160։ (Ջուր փնտրող մարդը)։ Թարգմանությունը Ա. Ռոգուշինի և Ն. Պլուզյանի։*

12. Kâzim Karabekir. Cihan harbine neden girdik, nasıl girdik, nasıl idare Ettik? Ikinci kısım, Istanbul., *1938*, s. *26—30, 487. (Ինչու՞, ինչպե՞ս մենք մտանք համաշխարհային պատերազմի մեջ, ինչպե՞ս մղեցինք), Թարգմանությունը Ա. Ռոգուշինի և Ն. Պլուզյանի։*

13. Նույն տեղում։

14. **П. Рорбах**. Война и Германская политика. М. *1915*, с. *62.*

15. Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского правительства. *1873—1917*. Серия *3*, т. *1*, М., *1931*. с. *117—119.*

16. **М. Павлович (Вельтман)**. Борьба за Азию и Африку. Л, *1924*, с. *78.*

17. **А. Ключников и А. Сабинин.** Международная политика новейшего времени в договорах, нотах и документах, ч. *2*, М. *1926*, с. *8—9.*

18. Հայոց մեծ եղեռնի վերաբերյալ 1915—1995 թվականների ընթացքում հրատարակվել է 1500-ից ավելի աշխատություն՝ գիտական հետազոտություններ, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, հուշեր։ Նրանցից՝ 540-ը հայերեն, 400-ը՝ ֆրանսերեն, մոտավորապես՝ այդքան էլ գերմաներեն, 141-ը՝ ռուսերեն, 103-ը՝ անգլերեն լեզուներով (տես **Մ. Ս. Կարապետյան**, *Հայոց մեծ եղեռնը պատմագրության մեջ, Երևան 1993)։ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրության մեջ (1984—1923). մատենագիտություն, կազմողներ* **Ա. Հարությունյան, Գ. Մկրտչյան**), *Երևան, 1983։*

1966 և 1982 թթ. (ռուսերեն) և 1991 թ. հայերեն լեզուներով ակադեմիկոս **Մ. Գ. Ներսիսյանի** *առաջաբանով և խմբագրությամբ հրատարակվել է «Геноцид армян в Османской империи» «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում) փաստաթղթերի ժողովածուն*

(կազմողներ Մ. Գ. Ներսիսյան և Ռ. Գ. Սահակյան)։ Այնուհետև, հրատարակվել են Ս. Աստիանյանի, Վ. Միքայելյանի, Ռ. Սահակյանի, Հ. Աբրահամյանի և Տ. Խաչատրյանի կազմած ժողովածուները։ Փարիզում և Բուենոս-Այրեսում լույս են տեսել Ա. Բեյլերյանի և Պ. Օհանյանի կազմած ժողովածուները՝ ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով։

19. **Е. Тарле.** Европа в период империализма М., *1928*, т. *II*, с. *182*.

20. The Joint Mandate Scheme: A Turkish Empire under American Protection. N. Y., *1919*, p. *7*.

21. Magyar Orszâgos Levêltâr Budapest. Österrei chishes Staats archiv Wien (*Հունգարիայի պետական արխիվ, Բուդապեշտ։ Վիեննայի պետական արքունական արխիվ։ Հավաքածու՝ Այսուհետև՝* OLFT-W)։ W-*1110*, K-*157*, *Նո. 84*, *թ. 380—381*, *1918 թ.*, *հոկտեմբերի 5-ի հաղորդման շարունակությունը*։

22. Georgia and war. Zurich, *1916*, *թ. 33—34*, *40—41*, *47—49*։ *Գրքի հիմնական դրույթները պրոֆ. Ա. Հակոբյանի թարգմանությամբ և մեկնաբանությամբ տպագրվել են «Մշակ» թերթի 1917 թ. սեպտեմբերյան 10 համարներում։ Այդ գիրքը Կովկասին վերաբերող հատվածների մեջբերումներով մեկնաբանել է Նիկողոս Ադոնցը «Հայկական հարցը և գերմանական քաղաքականությունը» հոդվածում. Տես* Международная политика и мировое хозяйство, *1918*, М. *3*, с. *3—17*.

23. Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. под редакцией **Е. Адамова.** м., *1924*։ *«Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան։ Վավերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշ. Հովհաննիսյանի առաջաբանով, Երևան, 1926, էջ 91—93*։

24. Լեո, *Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 347*։

25. *Տես Վ. Հ. Մելիքյան, Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը և Հայկական հարցը 1917 թ.— Պատմա-բանասիրական հանդես, 1994, 1—2, էջ 115—131*։

26. Вестник Временного правительства. Пгр *30* марта, *1917*.

27. *Մշակ, 1917, ապրիլի 10*։

28. *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 14*։

29. *Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 111, թ. 103—108*։

30. *Նույն տեղում, ֆ. 57, ց. 1, գ. 151, թ. 1—2*։

31. *Նույն տեղում, թ. 3—4*։

32. *Նույն տեղում, թ. 24*։

33. *Նույն տեղում, թ. 12—13, 20—21*։

34. *Նույն տեղում, թ. 7—9, 20—21*։

35. *Նույն տեղում, թ. 17—18*։

36. Архив внешней политики Российской Федерации, оп. Канцелярия, *1913*, д. *152*, папка *11*, л. *26*.

37. Центральный Государственный архив Новой истории РФ,

ф. *1779*, сп. *1*, д. *1470*, л. *8—9*, д. *1473*, л. *2*, оп. *1*, ф. *1778*, д. *285*, л. *142*.

38. *Նույն տեղում, ֆ. 1778, оп. 1, д. 285, л. 142.*

39. *Նույն տեղում, ֆ. 1779, оп. 2, д. 4, л. 13.*

40. *«Հայաստանի ավտոնոմիան», էջ 35*։

41. *Արևմտահայ համագումարի պատվիրակներից 15-ը ընտրվել էր Թուրքահայաստանից, 27-ը՝ Կովկաս ապաստանած գաղթականներից, 14-ը՝ ընկերություններից ու միություններից, 8-ը՝ կուսակցություններից, 3-ը՝ Թուրքահայ մամուլի գործիչներից։ 11 պատվիրակ ընտրվել էր խորհրդակցական ձայնով։ Ընտրվեց 15 հոգուց. բաղկացած կենտրոնական խորհուրդ. Անդրանիկ, Սմբատ Բարոյան, Հրանտ Գալիկյան, Արտակ Խարբինյան, Զապել Եսայան, Ավետիս Թեզգիբաշյան, Գուրգեն Հայկունի, Համայակ Մանուկյան, Լեոն Շանթ, Վարդան Պապիկյան, գնդապետ Ռոնաապարտյան, Կարո Սասունի, Սեպուհ, Հակոբ Տեր-Զաքարյան, Վահան Փափազյան (նախագահ)։ Ստեղծվեց բյուրո, որը աշխատանք տարավ գաղթականների օգնության գործով զբաղվող մարմինների համախմբման ուղղությամբ, դրանք էին՝ Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, Քաղաքների միությունը, Մոսկվայի կոմիտեն, Հայոց գյուղատնտեսական ընկերությունը, Եղբայրական օգնության կոմիտեն, Կենտրոնական նպաստամատույցը, հայրենակցական միությունները (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Բեյրութ, 1958, էջ 28—30)։*

42. *Տես Հայաստանի Հանրապետության Նորագույն պատմության արխիվների ուսումնասիրման կենտրոն, ֆ. 4038, ց. 3, գ. 141, նաև «Հորիզոն» և «Մշակի» 1917 թ. մայիս և հունիս ամիսների համարները*։

43. *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, մաս 1-ին, գ. գ. 482, 484*։

44. *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 32, էջ 359*։

45. Известия Петроградского Совета рабочих и солдатских депутатов, *10* июня, *1917*. **А. Ф. Керенский.** Жизнь, политическая деятельность и речи. Пгр. *1917*.

46. Единство, *14*, *20* августа *1917*, Новая жизнь, *14* августа. *1917. Արտատպվել է «Մշակ»-ի 1917 թ. օգոստոսի 26-ի և սեպտեմբերի 8-ի համարներում*։

47. *ՀՀ ՊՊԿԱ ֆ. 121, ց. 1, գ. 34, թ. 10։ Հայ հասարակական գործիչների՝ հայկական զորամասեր կազմակերպելու վերաբերյալ խնդրագրի վրա ռազմական նախարար Կերենսկին մակագրել է. «Հայկական հրաձգային գումարտակների գնդերի վերածումը և նրանցից դիվիզիաների անհապաղ կազմավորումը գտնում եմ ժամանակին»։*

48. ЦГВИА РФ, ф. *1343*, оп. *10*, д. *6631*а, л. *26—50*.

49. The Joint Mandate Scheme. A Turkish Empire Under American Protection. N. Y, *1919*, p. *13—15*.

50. ЦГВИА РФ, ф. *1343*, оп. *10*, д. *6631* а, л. *39*.

51. *Բանվոր, Թիֆլիս, 1917 թ. հունիսի 18*։

52. *Հորիզոն, 1918 թ. հունվարի 2։ «Հորիզոն» թերթի 1917 թ. հուն-*

վարի 1-ի համարում բերված տվյալներով Վան-Մուշ-Բասեն տարածությունում մնացել էր ընդամենը 142425 հայ։ Ըստ շրջանների, բնակչությունը ներկայացնում էր հետևյալ պատկերը. Բայազետ՝ 10 հազար, Դիադին՝ 5 հազար, Ալաշկերտ՝ 30 հազար, Բասեն՝ 22 հազար, Խնուս՝ 28 հազար, Կարին՝ 6 հազար, Դերջան՝ 4 հազար, Երզնկա՝ 3 հազար, Ճորոխի հովիտ՝ 3 հազար, Բուլանըխ-Մանազկերտ՝ 4 հազար հինգ հարյուր, Տրապիզոն՝ 1500, Վանի նահանգ՝ 25425 (տես նաև Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 96)։

53. Տես Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 119։

54. Հորիզոն, 1918 թ. հունվարի 11։ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 22—24։

55. Հայրենիք, Բոստոն, 1924, թիվ 3, էջ 96։

56. Տես «Հորիզոն» և «Մշակ» թերթերի 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարները։ Արևելահայ համագումարը հրավիրվեց 1917 թ. մարտի 7-ից հունիսի 5-ը՝ Թիֆլիսում կայացած հայ քաղաքական հոսանքների ներկայացուցիչների խորհրդակցության որոշումով։ Խորհրդակցությանը մասնակցում էին Ազգային Բյուրոյի և կամավորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամները, նախկին հրամանատարները, Թիֆլիսի միջկուսակցական մարմնի, արևմտահայ խորհրդի անդամները, գավառային բյուրոների և կոմիտեների ներկայացուցիչները՝ 95 հոգի։ Քննարկվեցին քաղաքական դրության, գավառների և ռազմաճակատի վիճակի հարցերը (տես ՀՀ ՊՊԿԱ ֆ. 222, ց. 1, գ. 4)։ Միջկուսակցական խորհրդակցությունից հետո 1917 թ. հունիսի 29-ից հուլիսի 6-ը Թիֆլիսում կայացավ «Հայ պատգամավորական ժողով»՝ Կովկասի և արևմտահայության 50 պատգամավորի մասնակցությամբ։ Ժողովը քննեց սովի, ռազմաճակատի, ներքին դրության, համերաշխության հարցերը (Հայաստանի Նորագույն պատմության արխիվների ուսումնասիրման կենտրոն, ֆ. 4053, ց. 5, գ. 327, թ. 1—47)։

Արևելահայերի համագումարը բացվեց 1917 թ. սեպտեմբերի 29-ին։ Մասնակցում էին 205 պատվիրակներ, 113-ը՝ դաշնակցություն կուսակցությունից, 43-ը՝ ժողովրդական, 23-ը՝ սոցիալ-հեղափոխական, 9-ը՝ սոցիալ-դեմոկրատ, պատվիրակներից 7-ը՝ անկուսակցականներ էին։

Մինչև հոկտեմբերի կեսերը տևած 10 նիստերում քննարկվեցին. «Քաղաքական պահի մասին», «Վերաբերմունքը Անդրկովկասի հատուկ կոմիտեի նկատմամբ», «Վարչական բաժանումների», «Դպրոցական խնդիրները» հարցերը։ Ընդունված բանաձևում արևելահայ ազգային համագումարը հայտնեց իր բացարձակ վստահությունը ժամանակավոր նոր կառավարությանը և իր կատարյալ աջակցությունը բոլոր հնարավոր միջոցներով։

Բոլշևիկները համագումարին չէին մասնակցում և հանդես եկան գրավոր հայտարարությամբ։ Մենշևիկները ներկայացրին իրենց բանաձևը։ Ընտրվեց Ազգային խորհուրդ հետևյալ կազմով՝ Ա. Մանուկյան, Ա. Ահարոնյան, Ն. Աղբալյան, Խ. Կարճիկյան, Մ. Տեր-Միհայան, Ա. Բաբալյան (դաշնակցություն կուսակցությունից), Ա. Ստամբոլցյան, Հ. Տեր-Հարությունյան (սոցիալիստ-հեղափոխական), Մ. Վարաբեկյան, Վ. Տեր-Վազարյան (սոցիալ-դեմոկրատ), Ս. Հարությունյան, Մ. Պապաջանյան (ժողովրդական կուսակցություն), Ս. Մամիկոնյան, Տ. Բեգզադյան, Պ. Ջամարյան (անկուսակցական) (Հորիզոն, 18 հոկտեմբերի, 1917 թ.)։ Հետագայում Ազգային խորհրդի կազմի մեջ մտան նաև Ս. Վրացյանը, Սև. Երզնկյանը և ուրիշներ (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 33—47)։

57. Հորիզոն, 1917 թ. հոկտեմբերի 26։

58. Նույն տեղում։

59. **Шахатунян А.** Административный передел Закавказского края. Тифлись, 1918, с. 150—151. Գանձակի նահանգում բնակվում էր 556 հազար մարդ, որից հայեր՝ 383 հազար (68 տոկոս), մուսուլմաններ՝ 162 հազար (28 տոկոս), այլ ազգեր՝ 21 հազար (4 տոկոս)։ Երևանի նահանգում բնակվում էր 810 հազար մարդ, որից 448 հազար հայեր (55 տոկոս), 341 հազար մուսուլմաններ (42 տոկոս), 21 հազար այլազգիներ (3 տոկոս), Ալեքսանդրապոլի նահանգում՝ 771 հազար մարդ, հայեր էին 484 հազարը (63 տոկոս), մուսուլմաններ՝ 107 հազարը (14 տոկոս), այլ ազգեր՝ 180 հազարը (23 տոկոս)։

60. Программа партий и их отношения к важнейшим вопросам Составление и дополнение по последним резолюциям партийных съездов и конференций **А. Ставровский.** Тифлис, 1917, с. 205—212.

61. Кавказский вестник. ОЗАКОМа, 14 ноября, 1917.

62. ЦГА НИ РФ, ф. 1778, оп. 1, д. 254, л. 3, ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 80։

63. Նույն տեղում, ф. 1779, оп. 1, д. 527, л. 2.

64. Նույն տեղում։

65. Georgia and war, s. 40—41.

66. **Мирза Давуд Гусейнов.** Тюркская демократическая партия федералистов «Мусават» в прошлом и настоящем. Программа и тактика, вып. 1, 1927, с. 71—76.

67. **С. Сеф.** Борьба за Октябрь в Закавказье, Тифлис, 1932, с. 127—132.

68. Հորիզոն, 1918 թ., հունվարի 3։

69. ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 457, Գ. Մելիք-Վարագյոզյանի հավաքածու. Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության նյութեր։

70. Երկիր, 1993 թ. մարտի 10։

71. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1958, էջ 317—318։

72. Գ. Ջանշիյան, Հայոց հարցը Թուրքիայում, Մոսկվա, 1891, թարգմանություն ռուսերենից, ձեռագիր (ՀՀ Նորագույն պատմության արխիվների ուսումնասիրության կենտրոն, ֆ. 1022, ց. 2, գ. 1244)։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1. Документы внешней политики СССР, т. *1*, М., *1957*, с. *15*,

2. **Л. Каменев.** Борьба за мир (отчет о мирных переговорах в Бресте). С приложением договора о перемирии, германских и русских условий мира, деклараций и этнографической, политической и военной карты, предложенный германцами границ. Пгр. *1918*.

3. **Ю. В. Ключников** и **А. В. Сабинин**, указ, сборник, т. *2*, с. *26*.

4. Известия Тифлисского Совета рабочих и солдатских депутатов, *31* октября, *1917*, Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, *1919*, с. *2*, док. *3*.

5. *Նույն տեղում։*

6. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 14։*

7. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. *5—6*, док. *5*, Голос Краевого совета, *14* (*27*) ноября, *1917*.

8. **С. Сеф.** Революция *1917* г. в Закавказье, с. *283—285*.

9. *Նույն տեղում, էջ 300—301։*

10. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 7։*

11. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 14։*

12. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. *7—8*, док. *6*, Кавказское слово, *17* ноября, *1917*, *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 18*։

13. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 19։* **С. Сеф.** Революция *1917* г. в Закавказье, с. *301—302*.

14. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. *68*, док. *44*.

15. *Ազատամարտ, 1917 թ., նոյեմբերի 26։ Աշխատավոր, 1917 թ., նոյեմբերի 29։*

16. *Տես՝* Известия Бакинского Совета рабочих и солдатских депутатов, *1917*. N. *177*.

17. **Я. Ратгаузер.** Революция и гражданская война в Баку, ч. *1*. *1917—1918*. Баку. *1927*, с. *78—79*.

18. *Քաղաքային Դումայի ընտրություններին ժամանակ Բաքու քաղաքում, հոկտեմբեր ամսին, մուսավաթ կուսակցության օգտին քվեարկել էին 9297, սոցիալիստ-հեղափոխականների օգտին՝ 6405, դաշնակների՝ 5299, բոլշևիկների՝ 3883, մենշևիկների՝ 387 ընտրող։*

19. **Я. Ратгаузер.** *Նշվ. աշխ., էջ 81—82*, Известия революционного комитета общественной безопасности Баку, *1*, *1917*.

20. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. *10*, док. *7*.

21. *Նույն տեղում, էջ 10—12, փաստաթուղթ 7—8։*

22. *Աշխատավոր, 1917 թ. նոյեմբերի 25։ ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 1, գ. 50, թ. 30։*

23. *Հայրենիք, 1923, 3, էջ 124։*

24. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 25։*

25. *Աշխատավոր, 1917 թ., նոյեմբերի 29։*

26. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 26։*

27. *1917 թ. ամռանը ստեղծված հայ ռազմիկների միությունը համագումարի նախօրյակին իր բաժանմունքներն ուներ Մոսկվայում, Պետրոգրադում, Անդրկասպյան երկրներում, Պարսկաստանում տեղակայված զորամասերում, Արևմտյան ռազմաճակատի 10 կորպուսներում և դիվիզիաներում, Անդրկովկասի բոլոր հայաշատ վայրերում, որոնց ներկայացուցիչները մասնակցում էին համագումարի աշխատանքներին։ Միությունը սերտ կապերի մեջ էր Անդրկովկասում գործող ուկրաինական և վրացական զինվորական միությունների հետ (Հորիզոն, 1918 թ. հունվարի 3)։*

28. *Հորիզոն, 1917 թ., նոյեմբերի 23։*

29. Народная свобода, *23* ноября *1917*.

30. Документы и материалы, с, *18—23*, *48—52*.

31. *Հորիզոն, 1917 թ., դեկտեմբերի 12։*

32. *Հորիզոն, 1917 թ., դեկտեմբերի 13։*

33. *Հորիզոն, 1917 թ., դեկտեմբերի 24։*

34. *Նույն տեղում։*

35. *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 41—42։*

36. *Ժողովրդական կոմիսար Անտոնովի հրամանում ասված էր. «Պետրոգրադում կարգ ու կանոն հաստատող լիազորի հոկտեմբերի 25-ի N 2 հրամանով օկրուգի շտաբի պետ գեներալ մայոր Բագրատունին նշանակված է Պետրոգրադի զինվորական օկրուգի զորքերի գերագույն հրամանատար։ Քանի որ Բագրատունին գերագույն հրամանատարի պաշտոնը չի ստանձնել և հոկտեմբերի 25-ից շտաբում ծառայություն փաստորեն չի տանում, նրան ազատում եմ օկրուգի շտաբի պետի պաշտոնից՝ ուղարկելով գլխավոր շտաբի տրամադրության տակ։ Ազատումը պետք է համարել նոյեմբերի 1-ից» (*ЦГВИА РФ, ф. *1343*, оп. *10*, д. *6631* а)։ *Այդ ժամանակ Բագրատունին գտնվում էր Շլիսելբուրգյան բանտում։*

37. *ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 121, ց. 2, գ. 105, թ. 1—4։*

38. Армянский вестник, *1917*, М., *43—44*, с. *3—5*.

39. **А. В. Панцов.** Брестский мир.— Вопросы истории. М., *1990*, *2*, с. *60—79*. **Л. Каменев.** Борьба за мир (отчет о мирных переговорах в Бресте), с. *20*.

40. Известия ЦИК, *23* декабря, *1917*.

41. **И. Н. Ксенофонтов.** Мир, которого хотели и который ненавидели. Документальный репортаж. М., *1991*, с. *5—6*.

42. Мирные переговоры в Брест-Литовске с *22/9* декабря, *1917* г, по. *3* марта (*18* февраля), т. *1*. Пленарные заседания политической комиссии. Полный текст стенограммы под редакцией и с приложениями **А. А. Иоффе (В. Крымского)**, с предисловием **Л. Д. Троцкого**. М., *1920*, с. *242*.

43. **А. А. Иоффе.** Брест-Литовск.— Новый мир, июнь, *1927*, с. *139*.

44. Русские ведомости, *24* декабря, *1917* (*6* января, *1918*), Известия ЦИК, *23* декабря *1917* (*5* января, *1918*).

45. Русские ведомости, *24* декабря, *1917*.

46. Мирные переговоры в Брест-Литовске, с. *5*.

47. Там же, с. *5—6*.

48. Русские ведомости, *24* декабря, *1917*.

49. Мирные переговоры в Брест-Литовске, с. III.

50. **А. А. Иоффе.** Брест-Литовск.— Новый мир, июнь, *1927*, с. *142*.

51. *Նույն տեղում։*

52. *Նույն տեղում, 143։*

53. Мирные переговоры в Брест-Литовске, с. *342*. *Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և «իթթիհատի» մյուս պարագլուխները Գերմանիայում հանդես էին գալիս որպես «բոլշևիկներ». 1919 թ. ապրիլի 27-ին «Լյա տրիբյուն դը ժնև» թերթը գրում էր. «Հավաստի աղբյուրներից իմացել ենք, որ երիտասարդ Թուրք շարժում է նկատվում արտասահմանի միութենական շրջաններում՝ թաքնված բոլշևիկյան դիմակի տակ։ Էնվեր փաշան սպարտակյան զինվորական խմբի գլուխ է անցել ու գտնվում է Մյունխենում, Ջեմալը, նույնպես խմբի գլուխ անցած՝ Համբուրգում է։ Թալեաթը՝ Բեռլինի առողջարաններից մեկում հանգստանալու պատրվակի տակ ղեկավարում է ամբողջ գործունեությունը»։ Փարիզից ստացված մեկ այլ հաղորդագրության մեջ ասված էր. «Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ժամանակ, երբ կնքվեց պայմանագիր Գերմանիայի և Լենինի բոլշևիկ ներկայացուցիչների միջև, Թալեաթը ուսումնասիրել է բոլշևիզմի հարցը՝ բոլշևիկների հետ և գտել, որ կարող է նրանցից մեծ օգուտ քաղել։ Թալեաթի հետ կան հրեա բոլշևիկներ։ Նրանք աշխատում են, որպեսզի բոլշևիզմը տարածեն ամբողջ իսլամական աշխարհում, մանավանդ, Թուրքիայում։ Նրանց նպատակը պարզ է՝ բոլշևիզմի անունով ամենուրեք անկարգություններ գրգռել, որպեսզի, եթե հնարավոր է, նորից իշխանության գլուխ անցնեն և Թուրքիայում քրիստոնյաներին կոտորեն։ «Թալեաթ և ընկերություն», և «Միություն և առաջադիմություն» կոչված կոմիտեի մասնակիցները, որոնք դեռ Թուրքական գավառներում են գտնվում, բանակի գաղափարների միջոցով*

լավ զինված հրոսակախմբեր են կազմակերպում հայերին ու հույներին կոտորելու համար։ Այդ խաղը թաքցնելու համար նրանք այդ խմբերին «սովետ» են անվանում»։ Աշխատանքը կազմակերպվում էր Բեռնի Թուրքական դեսպանության միջոցով։ «Բեռնի Թուրքական դեսպանության ղեկավարությունը քարոզչության օջախ է դարձել. Բեռնի, Մյունխենի և Բեռլինի միջև շարունակ Թուրքերի երթևեկություն է տեղի ունենում։ Վերջերս Ջեմալ փաշան Բեռն է ուղարկել հրահանգներ տալու համար։ (ՀՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 66, 67, գ. 355, թ. 423—425)։

Երիտթուրքերի աշխուժացման մասին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին 1919 թ. ապրիլի 24-ին տեղեկացնում էր Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը. «Այժմ էլ Բերլինում հաղորդում են, որ Բեռնի երիտասարդ Թուրքերի կոմիտեն, ինչպես և Թալեաթ, Բահաէդդին Շաքիր, գոկ. Նազիմ՝ իրենց ընկերներով Գերմանիա ապաստանած, աշխատում են բոլշևիկյան շարժում առաջ բերել Թուրքիայում և այդպիսով շահել ռուսների և մնացած բոլշևիկ երկրների համակրանքը՝ սպառնալով Անտանտին հայերի նոր ջարդերով» (ՀՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 12)։

54. «Թանին» թերթից հարցազրույցը արտատպվել է «Մշակ» թերթի *1917* թ. մարտի *25*-ի համարում։

55. Թուրքական փաստաթղթերը բերվում են ըստ **Հիմմեթ Բայուրի** «Մեր պայմանագրերը և համաձայնագրերը՝ կնքված առաջին համաշխարհային պատերազմից հետո» հոդվածի՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարարության արխիվի հղումով (Hikmet Bayur. Birinci Genel Savastan Sonra Yapılan Baris ve Anlasmalarımız. Türk Tarih kurumu Belleten, *1965*, Temmuz, *1965*, s. *499—516* (բերվում է **Ա. Սաֆրաստյանի** թարգմանությամբ). այսուհետև Belleten.

56. **О. Чернин.** В дни мировой войны. Воспоминания австрийского министра иностранных дел. М., *1922*, с. *251—252*.

57. **Людендорф.** Мои воспоминания о войне. *1914—1918*. Т. *1*, М., *1924*, с. *207*.

58. Carl Mühlmann. Das Deutsch-Türkische Waffenbündnis in Weltkrieges, Leipzig, *1940*. S. *190—191*.

59. **Людендорф.** Указ. соч. т. II, с. *126*.

60. Pomiankowsky J. Der Zusammenbruch des Ottomanischen Reicheserinnerungen an die Turkei ans der Zeit des Weltkrieges, Zurich-Leipzig-Wien, *1938*.

61. Советско германские отношения от переговоров в Брест-Литовске до подписания Раппальского договора. Сборник документов министерства иностранных дел СССР и министерства иностранных дел ГДР. Т. *1*. *1917—1918*. М., *1968* с. *42*.

62. Там же, с. *326—327*.

63. Мирные переговоры в Брест-Литовске, предисловие, с. III.

64. *Նույն տեղում, էջ 5—6։*

65 Նույն տեղում, էջ 7—8։

66. Վ. Ի. Լենին, Երկ, հ. 32, էջ 41, 277, հ. 34, էջ 379։

67. Նույն տեղում, հ. 32, էջ 41։

68. Նույն տեղում, 34, էջ 232։

69. Նույն տեղում, էջ 290։

70. Նույն տեղում։

71. Նույն տեղում, հ. 35, էջ 140—141։

72. Мирные переговоры в Брест-Литовске, с. *12—14.*

73. Русские ведомости, *21* декабря, *1917* (*3* января, *1918*).

74. «День» թերթի հոդվածը բերվում է ըստ «Հորիզոն» թերթի 1918 թ. հունվարի 4-ի համարում վերատպված տեքստի։

75. Belleten, *1965*, Temmuz, s. *507—508.*

76. Советско-германские отношения от переговоров в Брест-Литовске до Раппальского договора, т. *1*, с. *30—46*, док. *20*, *21.*

77. Նույն տեղում, էջ 81—82, փաստ. նո. 36։

78. **А. А. Иоффе.** Указ. соч., с. *143.*

79. Мирные переговоры в Брест-Литовске. с. III.

80. Տես **Ս. Ալիխանյան.** *Իլյիչի ստորագրությամբ, Երևան, 1969։ Դաշնակցություն կուսակցության ճանաչված անդամ, ժամանակավոր կառավարությունում Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ Լիպարիտ Նազարյանցը գրել է. «Խորհրդային իշխանությունը առաջին անգամ պատվիրակություն կուղարկեր Բրեստ, նկատի ունենալով, որ Հայկական հարցն ալ քննության առարկա պիտի լիներ, Վահան Տեր-Յանը, կական հարցն ալ քննության առարկա պիտի լիներ։ Վահան Տեր-Յանը, դիմեց մեզ՝ խնդրելով տալ իրեն պետք եղած նյութերը և ցուցումները։ Առաջին խորհրդակցությունը տեղի ունեցավ Տեր-Յանի, Ռոստոմի (որը նոր էր վերադարձել Ստոկհոլմի ընկերվարական խորհրդաժողովեն) և իմ մասնակցությամբ։ Որոշվեց կազմել ընդարձակ տեղեկագիր մը Հայկական հարցի մասին։ Գործը ստանձնեցինք Ռոստոմը և ես։ Հետագայում աշխատանքի հրավիրվեցան պրոֆ. Ն. Ադոնցը և զորավար Լ. Տիգրանյանը, իսկ վերջին նիստին ներկա էր նաև Մովսես Աճեմյանը։ Տեղեկագիրը հանձնվեցավ Տեր-Յանին, սակայն, Բրեստի մեջ ան խոսելու իսկ առիթ չէր ունեցած» (Լ. Նազարյանց, Հայ հեղափոխական դաշնակցության և խորհրդային իշխանության միջև համաձայնության փորձեր, «Դրոշակ», Փարիզ, 1928, նո. 8—9, էջ 231)։*

81. Мирные переговоры, с. *56—57*, АВП РФ, ф. *413*, оп. *1*, папка *4*, д. *44*, л. *36—39. Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի 1917 թ. դեկտեմբերի 4 (17)-ի որոշումով խորհրդային կառավարությունը ճանաչում էր Ուկրաինայի Ժողովրդական Հանրապետությունը և «Ռուսաստանից անջատման կամ դաշնակցային սկզբունքով նրա հետ հարաբերություններ հաստատելու իրավունքը»։ Ժողկոմխորհը 1917 թ. դեկտեմբերի 18 (31)-ի որոշումով ճանաչել էր Ֆինլանդիայի պետական անկախությունը։*

82. АВП РФ, ф. *413*, оп. *1*, папка *4*, д. *46*, л. *2—4.* Мирные переговоры в Брест-Литовске, с. *62*, *63.*

83. Мирные переговоры в Брест-Литовске, с. *127.*

84. Նույն տեղում։

85. Նույն տեղում, էջ 40, 147։

86. Նույն տեղում։

87. Նույն տեղում։

88. Ռուս-թուրքական բանակցությունների առաջին և երկրորդ նիստերի արձանագրությունները չեն հայտնաբերվել։ Սույն աշխատությունում նրանք օգտագործվել են ըստ թուրք պատմաբան Հեմմեթ Բայուրի հրատարակած նյութերի. Belleten, *1965*, Temmuz, s. *508։*

89. Belleten, *1965*, s. *509—511.*

90. АВП РФ, ф. *413*, оп. *1*, папка *6*, д. *87*, л. *6—10.*

91. Там же, л. *5.*

92. Նույն տեղում, թղթապանակ 5, գ. 70։

93. Նույն տեղում, թղթապանակ 6, գ. 7, թ. 10։

94. Նույն տեղում, թ. 4։

95. Նույն տեղում, թղթապանակ 5, ց. 1, գ. 70, թ. 35—36։

96. Նույն տեղում, գ. 70, թ. 2։

97. Նույն տեղում, թ. 3—4։

98. Նույն տեղում, թ. 17։

99. Նույն տեղում, թ. 8։

100. Նույն տեղում, թ. 10։

101. Նույն տեղում, թ. 10—11։

102. Նույն տեղում, թ. 11։

103. Նույն տեղում, թ. 11—12։

104. Նույն տեղում, թ. 12—13։

105. Նույն տեղում, թ. 13։

106. Նույն տեղում, թ. 14։

107. Նույն տեղում, թ. 35—49։

108. Նույն տեղում, թ. 35—36։

109. Նույն տեղում, թ. 37—38։

110. Նույն տեղում, թ. 38։

111. Շրջանցելով ռուսական կողմի մեղադրանքը թուրքական ծովահենների ավազակային հարձակումների կապակցությամբ, Հագգր փաշան նորից ակնարկեց հայկական «ելուզակախմբերին» ուսների պաշտպանությունը, հիշեցնելով այն հանգամանքը, ինչպիսին մզկիթի պայթեցումն էր էրզինջանում (Երզնկա), որը «նահանգապետի նստավայրն ու այդ մարզի կենտրոնն է» (նույն տեղում, թ. 38)։

112. Նույն տեղում, թ. 39։

113. Նույն տեղում, թ. 40։

114. Նույն տեղում, թ. 40—41։

115. Նույն տեղում, թ. 41—44։

116. Նույն տեղում, թ. 44—45։
117. Նույն տեղում, թ. 46—47։
118. Նույն տեղում, թ. 48։
